

ՀՀ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՏԻՏՈՒՏ

ԱՆԻ ԱԻՏԻՄԻ ՖԻՇԵԼԿԱԵԱՆ

**ՍՈՒՐԻՈՅ  
ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ**

**1946 - 1970 թթ.**

ԵՐԵՎԱՆ 2018

9(569)

Ք-59

հշ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա/հրով՝

ԱՆԻ ԱԻԵՏԻՍԻ ՖԻԾԵԼԿԶԵԱՆ - 5<sup>հ</sup>  
(ՖԶԼԿԶԵԱՆ)



ՀՀ ԳԱՀԿ Ընդունելության հիշակամ Գրադարանի  
Գրադարանին :

6. Իսկյանբեր - 2018  
Երևան

Հարգանքով  
Սեդրիկ Ֆելեկյան

ԵՐԵՒԱՆ  
Հեղինակային չրատարակություն  
2018





ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3  
Ֆ 591

Կը տպագրուի ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի  
գիտական խորհուրդի որոշումով

Պատասխանատու խմբագիր՝  
պատմական գիտութիւններու թեկնածու, փրոֆեսոր

**Պետրոս Յովհաննէսի Յովհաննիսեան**

Խմբագիր՝ պատմական գիտութիւններու դոկտոր  
**Ռուբէն Օնիկի Սահակեան**

Գրախօս՝ բանասիրական գիտութիւններու թեկնածու  
**Արծվի Հենրիկի Բախչինեան**

**Ֆիշենկճեան /Ֆչնկջեան/ Անի**

Ֆ 591 «Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը (1946-1970 թթ.)», Ա. Ֆիշենկճեան.- Եր.:  
Հեղ. հրատ., 2018- 344 էջ (37 նկար, 6 փաստաթուղթ, 2 քարտէս):

Մենագրութիւնը նուիրուած է Սուրիոյ անկախացումէն ետք, 1946-1970 թթ., ինկած  
ժամանակաշրջանի հայ համայնքի պատմութեան: 1946-1970 թթ. ընդգրկող  
ժամանակահատուածը Սուրիոյ Արաբական Հանրապետութեան նոր պատմութեան  
ամենախնդրահարոյց, ամենահանգուցային շրջաններէն է, եւ տուեալ թուականներու  
Սուրիոյ հայ համայնքի պատմութեան ուսումնասիրութիւնը ունի գիտական,  
քաղաքական մեծ կարեւորութիւն եւ այժմեականութիւն:

Գիրքին մէջ կը ներկայացուին 1946-էն ետք Սուրիոյ պետական կառոյցներու նոր  
գործառոյթներու ձեւաւորման նախադրեալները, պետական նոր վարչակարգի  
ձեւաւորումը, պետական սահմանափակումները, Սուրիոյ ժողովուրդի ազգային  
ազատագրական համաարաբական պայքարը եւ Սուրիոյ հայ համայնքի ազդեցիկ  
դերը՝ տուեալ երկրի հասարակական-քաղաքական, տնտեսական, կրթամշակութային  
կեանքէն ներս:

Մենագրութիւնը նախատեսուած է պատմաբաններու եւ ընթերցող լայն հասարակութեան համար:

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-0-2676-3

© Ֆիշենկճեան Ա., 2018

Կը նուիրեմ իմ  
Աւետիս Ֆիշենկճեանի յիշատակին

Խորին շնորհակալութիւն կը յայտնենք  
տիկին Հերմինէ Պարսումեանին եւ զաւակներուն  
իրենց նիւթական օժանդակութեան  
ի յիշատակ ամուանոյն եւ իմ  
Ներսէս Պարսումեանի

Լոյս կը տեսնէ Պարսումեան եւ Ֆիշենկճեան  
ընտանիքներու միջոցներով

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ ..... 7

## ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

**ՍՈՒՐԻԱԶԱՅՈՒԹԻՒՆԸ Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ** ..... 27

ա. ՍՈՒՐԻԱԶԱՅ ՆԱՄԱՅՆՔԸ Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ..... 27

բ. Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ  
ՄՂՈՒՈՂ ՊԱՅՋԱՐԻ ԱԻՄՐՏԸ ..... 37

գ. ՀԱՅԵՐԸ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ ՄԷՋ ..... 46

դ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵԱՆՔ ..... 50

ե. ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԵՐՆ ՈՒ ՅԱՐԱՆՈՒԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ..... 60

## ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

**ՍՈՒՐԻԱԶԱՅԵՐԸ ԵՐԿՐԻ ԱՆԿԱԽՈՒԹԵՆԷՆ ԵՏԸ**

**(1946-1970 թթ.)** ..... 79

ա. ԱՆԿԱԽԱՅԱԾ ՍՈՒՐԻԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ  
ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ, ՍՈՒՐԻԱԶԱՅՈՒԹԻՒՆԸ  
ԱՆԿԱԽԱՅՈՒՄԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ (1946-1958 թթ.) ..... 79

բ. ՍՈՒՐԻԱԶԱՅՈՒԹԻՒՆԸ 1958-1965 թթ. .... 98

գ. ՍՈՒՐԻԱԶԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՁԵՒԱՌՈՐՄԱՆ ՇԵՄԻՆ 1965-1970 թթ. .... 107

դ. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ..... 110

ե. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԵՒ  
ԱՐՉԵՍԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ..... 118

զ. ՍՈՒՐԻԱ-ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՏՆՏԵՍԱ-  
ԱՐԴԻՆԱՔԵՐԱԿԱՆ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԵԱՆՅ ԱՄՐԱՊԵՐՈՒՄ  
ՈՒ ՍՈՒՐԻԱ-ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԿԱՊԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ..... 133

## ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

**ՍՈՒՐԻԱԶԱՅԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ 1946-1970 թթ.** ..... 141

ա. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ 1946-1948 ԹՈՒԿԱԿԱՆՆԵՐՈՒՆ ..... 141

բ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ 1962-1970 թթ. .... 170

գ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐՈՒՆ ՆՊԱՍՏԸ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ..... 178

## ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

**ՍՈՒՐԻԱԶԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ** ..... 183

ա. ԴՊՐՈՑՆԵՐ (ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐՋ) ..... 183

բ. ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ ..... 224

գ. ԿԻՐԱԿԼՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ  
1945-1950 թթ. .... 230

դ. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ ..... 233

ե. ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ ..... 241

զ. ՍՈՒՐԻԱԶԱՅ ՄԱՄՈՒՆ ..... 248

է. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ ..... 259

ը. ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ, ՄԱՐՋԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ ..... 261

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԲԸՄ) ..... 261

2. ՍՈՒՐԻԱԶԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉ (ՍՕԽ) ..... 265

3. ՀԱԼԷՊԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՍՏՊԱՐԱՆԸ ԵՒ ՔԵՍԱՊԻ ԿԱԶԴՈՒՐՄԱՆ  
ԿԱՅԱՆԸ ..... 277

4. ՀԱՅ ՄԱՐՄԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀՄԸՄ) ..... 278

5. ՀԱՅ ՄԱՐՄԱՄԱՐՋԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀՄՄ) ..... 284

6. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԻՒՆ (ՀՀԿՍԸ) ..... 285

7. ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԸՆԿԵՐԱԿՅՈՒԹԻՒՆ (ՀԵԸ) ..... 279

8. ՆՈՐՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ՆՍՄՍ) ..... 292

9. ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ԱՄՄ) ..... 292

10. ՈՒՐՅԱՅԻ ԿԵՐԱՇՆՈՒՆԴ ՄԻՈՒԹԻՒՆ ..... 293

թ. ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ԵՒ ՅԱՐԱՆՈՒԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ ..... 294

**ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ** ..... 299

**ՅԱԽԵԼՈՒԱԾ** ..... 304

**ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՍԿԶԲԱՂԲԻՒՆԵՐՈՒ ԵՒ**

**ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ** ..... 306

**ԱՆՁԱՆՈՒՆՆԵՐ** ..... 322

**ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ** ..... 329

**SUMMARY** ..... 334

**الخلاصة** ..... 339





## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ



Հայկական գաղթավայրի պատմութիւնը հայ ժողովուրդի պատմութեան անբաժանելի մասն է: Հետեւաբար, ինչպէս ճիշդ նկատած է հայկական գաղթավայրերու պատմութեան բազմավաստակ ուսումնասիրող՝ ՀՀ ԳԱԱ ակադէմիկոս Վ. Բ. Բարխուդարեան, հայ ժողովուրդի ամբողջական պատմութիւնը անհնարին է ներկայացնել առանց հայկական գաղթավայրերու<sup>1</sup>: Յայտնի է նաեւ, որ հայկական գաղթավայրերը կարեւոր դեր խաղացած են եւ այսօր ալ կը խաղան հիւրընկալ երկիրներու տնտեսական, մշակութային, հասարակական եւ քաղաքական ոլորտներէն ներս: Միեւնոյն ժամանակ հայկական գաղթավայրերը իրենց կարեւոր դերը ունեցած են եւ կը շարունակեն ունենալ հայկական մշակոյթի, հասարակական, քաղաքական մտքի եւ այդ բնագաւառներու զարգացման:

Ակնյայտ է, որ հայկական գաղթավայրերը յաճախ վճռական նշանակութիւն ունեցած են շարք մը դէպքերու, յատկապէս Զ. դարէն սկսեալ<sup>2</sup>, հայ ժողովուրդի կեանքի մէջ: Հակառակ այս ակնյայտ նշանակութեան, ցաւով, հայկական գաղթավայրերու պատմութեան համապարփակ գիտական ուսումնասիրութիւնը հեռու է բաւարար համարուելէ: Կան գաղթավայրեր, Միջին եւ Մերձատուր Արեւելքի եւ Եւրոպայի շարք մը գաղթավայրեր, որոնք առ այսօր կը կարօտին ուսումնասիրութեան: Գաղթավայրեր ալ կան, որոնք թէեւ ուսումնասիրուած են եւ

<sup>1</sup> **Բարխուդարյան Վ. Բ.**, Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1967, էջ 5:

<sup>2</sup> **Ազէզեան Ն.**, Հայերը Սուրիոյ մէջ. «Հասկ հայագիտական տարեգիրք» Թ. տարի 1997-2001, Լիբանան, 2001, էջ 377:

անոնց պատմության ամանձին հարցերը դարձած են հետազոտության առարկայ, սակայն մեծ թիվ կը կազմեն այն հարցերը եւ ժամանակահատուածը, որոնք չեն արժանացած անելի խոր ուսումնասիրության՝ արխիւներու անհասանելիութեան, գրականութեան սակաւութեան եւ այլ պատճառներով: Գաղթավայրերու այս վերջինի թիւին կը պատկանի Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը: Թեւեւ Սուրիոյ հայկական գաղթավայրի պատմութեան հարցերը վաղուց ուսումնասիրուած են եւ հայրենի, եւ սփիւռքահայ պատմաբաններու կողմէ, այնուհանդերձ, այնպիսի կարեւոր շրջան մը, ինչպիսին է 1946-էն առ այսօր չէ դարձած ամանձին ուսումնասիրութեան նիւթ:

Անհրաժեշտ է, քանի որ 1946-1970 թթ. ընդգրկող ժամանակահատուածը Սուրիոյ Արաբական Նանրապետութեան (յետայսու՝ ՍԱՆ) նոր պատմութեան ամենախնդրահարոյց, ամենահանգուցային շրջաններէն է: Այդ շրջանի Սուրիոյ պատմութեան հետազոտութիւնը ունի եւ տարածաշրջանային, միջազգային, եւ հայ համայնքի առկայութեան ու նպաստը երկրի բարգաւաճման, եւ վերջապէս հայ-սուրիական յարաբերութեան առումներով կարեւոր նշանակութիւն:

Ժամանակակից Սուրիոյ տարածքը մարդկային քաղաքակրթութեան բնօրրաններէն է, որ ունի հազարամեակներու պատմութիւն: Երկար ժամանակահատուած ան յայտնուած է ամենատարբեր մշակոյթներու ազդեցութեան, ինչպէս նաեւ տարբեր ժամանակներու հզօրագոյն տերութիւններու գերիշխանութեան տակ՝ եգիպտացիներ, ասորիներ, բաբելոնացիներ, պարսիկներ, յոյներ, հայեր, հռոմէացիներ, քիզանդացիներ, արաբներ, խաչակիրներ եւ այլն<sup>3</sup>:

Սուրիան գտնուելով Արեւմտեան Ասիոյ, Միջերկրականի արեւելեան ափին, պատմական շայաստանի դրացի այն երկիրներէն է, ուր հայերը տարբեր ժամանակներու, այս կամ այն պատճառով հարկադրուած էին ապաստան փնտռելու հիւրասեր այդ երկրին մէջ, որ պայմանաւորուած էր քաղաքական հանգամանքներով եւ կամ առեւտրատնտեսական կապերով եւ այնտեղ ձգած՝ պատմական բազմաթիւ յիշատակներ (յիշատակարաններ): Պատմական տարբեր ժամանակահատուածներուն Սուրիոյ տարածքին կայք հաստատուած հայերու մասին կը վկայեն շալէպի, Անտիոքի, Եղեսիոյ ու Պաղտատի մէջ գրչագրուած այն ձեռագիր յիշատակարանները, որոնք կարեւորագոյն աղբիւրներ համարուելով, հաւաստի տեղեկութիւններ կը փոխանցեն այդ շրջանի հայկական գաղութներու մասին<sup>4</sup>:

3 Hitti P. K., History of Syria, including Lebanon and Palestine, New Jersey, USA, 2004, p. 29:  
 4 Մանասէրյան Ռ., Տիգրան Մեծ. Նայաստանի պայքարը շոմոյի ու Պարթևաստանի դեմ մ. թ.ա. 94-64 թթ., Երևան., 1987, էջ 63:  
 5 Աբրահամյան Ա. Գ., Նամառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա. Երևան, 1964, էջ 425:

Սուրիոյ տարածքին հայկական հնագոյն բնակավայրերու գոյութեան վերաբերեալ բազմաթիւ վկայութիւններ կան: Նոմեական աղբիւրները կը հաղորդեն, որ առաջին դարու կեսերուն Խառանէն ոչ հեռու, դաշտային եւ լեռնային վայրերու մէջ կային բազմաթիւ հայաբնակ գիւղեր: Այդ մասին եւս վկայութիւններ կան շատ մը հայ պատմիչներու մօտ<sup>6</sup>:

Նայերու գաղթը դէպի Սուրիա, առաւելաբար, տեղի կ'ունենայ Բիզանդական կայսրութեան, Արաբական տիրապետութեան, թուրք սելճուքներու (1064-1220 թթ.), մոնկոլական ու թաթարական (1220-1468 թթ.) արշաւանքներու շրջանին<sup>7</sup>:

ԺԶ-րդ դարէն Սուրիոյ տարածքը կը գտնուէր Օսմանեան կայսրութեան տիրապետութեան տակ<sup>8</sup>:

Առ այդ, դէպի Սուրիա հայկական զանգուածային մեծագոյն գաղթերը կը կատարուին Օսմանեան կայսրութեան հայահալած քաղաքականութեան պատճառով՝ 1876 թ., 1894-1896 թթ. համիտեան կոտորածներուն, 1909 թ. Ատանայի աղէտին, 1915 թ. Մեծ Եղեռնին եւ 1922 թ. Կիլիկիոյ պատահարին: «Ասորիք եւ յատկապէս Դամասկոս քաղաքը ոչ միայն սոսկալի ջարդէն ազատուցան, այլեւ դարձան Նայաստանէն, Փոքր Ասիայէն եւ Կիլիկիայէն տարագրուած հայութեան կայանը: Մինչեւ 30.000 հայ Դամասկոսէն շարունակ եկան ու անցան դէպի Տէր Զօրի անապատը՝ կոտորուելու եւ ջարդուելու»<sup>9</sup>: Անոնք օսմանցի կեղեքիչներուն կողմէ կը քշուէին դէպի սուրիական անապատ, ուր Տէր Զօր, Շէտտէտի, Մարկատ, Էնթէլի, Ռաս Ռու Այն կը դառնան անոնց մեծ հաւաքական գերեզմանափոսերը:

Մեծ Եղեռնի օրերուն, 1915 թ. Մայիս 5-էն մինչեւ Յուլիս 24, հայ գաղթականներու նոր ալիք մը կը հասնի շալէպ եւ շրջակայքը: Թիւով շուրջ (915) ընտանիք ապաստան կը գտնէ Պապի, Մունպուճի, Իտլիպի, Բիհայի, Մաարայի եւ Նամայի շրջանները: Անոնք մեծ մասամբ կու գային Զէթունէն, Նասան Պէլէն, Նասան Պէլէն, Նաճընէն, Չորք Մարզպանէն, Շարէն, Նարոնիկն եւ այլ բնակավայրեր<sup>10</sup>:

Սուրիոյ ամենահայախոճ քաղաքը շալէպն է: Շալէպ նախապէս եղած է ընդարձակ կուսակալութիւն մը իր մէջ ընդգրկելով Այնթէպը, որպէս սանձագիսկ Քիլիս, Պապ, Մունպուճ (Մենպիճ), Ճէպէլ Սաման (Սիմէոնի լեռ) կամ Մէրքէզ գազա (Կեդրոն գաւառակ), Իտլիպ, Մաարա, Ճիսր Շուղուր, Նարիմ, Անտիոք,

6 Թովուզյան Ն. Խ., Սիրիա եւ Լիբանան, Նայ ժողովուրդի պատմություն, հատոր VI, Երևան, 1981, էջ 11- 12: Տե՛ս, Եղիայեան Բ., Նայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, «Նայաստանի կոչնակ» ամսագիր, ԽՇ. տարի, թիւ 27, 3 Յուլիս 1948, Նիւ Եորք, էջ 629-630:  
 7 Տե՛ս, العظري. أبو جعفر محمد بن جرير تاريخ الطبري. تاريخ الرسل والملوك. تحقيق محمد أبو الفضل إبراهيم. دار المعارف مصر. الجزء التاسع. 1918م. ص 101- 107.  
 8 حافظ. المستشار فؤاد حسن. تاريخ الشعب الأرميني منذ البداية حتى اليوم. القاهرة- 1918 م. ص 93:  
 9 Բայբերոյյան Վ., Օսմանեան կայսրութեան պատմություն, Երևան., 2011, էջ 202:  
 10 Աճառյան Ն., Նայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 410-412:  
 10 Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի արխիւ (յետայսու՝ ԲԹ ԱԱԱ), դարան Զ., գ. 41:



Պէլյան եւ Իսկէնտէրուն (Ալեքսանտրէթ) որպէս գազա՝ (գաւառակ):

Առաջին Աշխարհամարտէն ետք երկրամասին խնամակալութիւնը կը յանձնուի Ֆրանսայի<sup>12</sup>: 1918 թ. Նոյեմբեր 27-ին ֆրանսական ռազմական իշխանութիւնները ձեռնարկելով գրաւած երկրամասերու վերակազմակերպումը, կը ստեղծեն վարչատարածքային ուրոյն միատուր «Ալեքսանտրէթի Ինքնավար Սանճագ» իր մէջ ընդգրկելով Հալէպի վիլայէթի (Նահանգի) մաս կազմող չորս գազաները կամ գաւառները՝ Ալեքսանտրէթ (Սուրիոյ հիւսիսային ծովափնեայ հայաիհոծ շրջաններէն), Անտիոք, Պէլյան եւ Հարիմ (Հարեմ)<sup>13</sup>:

Փաստօրէն, Կիլիկիոյ աղէտէն ետք, հայ գաղթականներու հիմնական զանգուածը կը տեղաբաշխուի հիւսիսային Սուրիոյ՝ Ներառեալ Ալեքսանտրէթի գաւառի (սանճագի) քաղաքներու մէջ<sup>14</sup>: 1923-1924 թթ. հին եւ նոր գաղթականներու թուաքանակը՝ 95.905 հոգի<sup>15</sup>: Միայն Հալէպ քաղաքի հայ գաղթականներուն թիւը միջգաւառային միութեան կողմէ կատարուած մարդահամարին համաձայն՝ 37.897 անձ<sup>16</sup>: Բացի այդ, Հալէպի մերձակայ գիւղերուն եւ ասաններուն մէջ ապաստան գտած էին աւելի քան երեք հազար գաղթականներ՝ Ազէզ 450, Մունպուճ 350, Պապ 600, Աֆրին, Արաբ Փունար եւ այլ վայրերու մէջ:

Այսպիսով, Ա. Աշխարհամարտէն եւ յատկապէս Կիլիկիոյ վերջնական պարպումի հետեւանքով կը բազմապատկուի հայերու թուաքանակը: Պատմական տուեալներու համաձայն, 1921 թ. Դեկտեմբերի սկիզբէն մինչեւ 1922 թ. Յունուարի 4-ը հայրենի բնօրրանէն կը տեղահանուին շուրջ 44.800 հայ<sup>17</sup>: Բերիոյ թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Յարութիւն քինյ. Եսայեանի տեղեկագիրին համաձայն, մինչեւ Կիլիկիոյ պարպումը, 26 Սեպտեմբեր 1921 թ. Հալէպ Նահանգի մէջ կը գտնուէր 21.600 հայ<sup>18</sup>: Սակայն 1922 թ. Փետրուար 4-ին Կիլիկիայէն Սուրիա

անցնող գաղթականներուն թիւը կը հաշուէր 45.000<sup>19</sup> անձ՝ (Դամասկոս՝ 6.000, Իսկէնտէրուն՝ 15.000, Լաթաքիա՝ 2.000, Սուրիոյ այլ քաղաքներ՝ 6.700):

Կիլիկիոյ պարպումով Սիւի կաթողիկոսն ալ վերջնականապէս կը փոխադրուի Սուրիա եւ պաշտօնապէս կը ճանչցուի սուրիական տեղական կառավարութեան կողմէ (1924 թ.)<sup>20</sup>, որպէս սուրիահայերու հոգեւոր առաջնորդ (Սուրիա, Լիբանան), Նստավայր ունենալով Անթիլիասը (Լիբանան՝ 1930 թ.):

Ժամանակակից Սուրիոյ համայնքը կը համալրուի 1915 թ. հայոց ցեղասպանութենէն ետք Արեւմտեան Հայաստանէն եւ Կիլիկիայէն գաղթած հայերով:

Երջանկայիշատակ Տ. Սահակ Բ. կաթողիկոս զօրավար Կուրոյի՝ Սուրիոյ հայութեան թիւի անճշդութիւնը նկատելով, Աղեքսանդրիոյ «Արեւ»-ի թղթակիցին հետ ունեցած հանդիպման ընթացքին կը պարզէ հետեւեալ թիւերը. «Հալէպ 33.000, Իսկէնտէրուն 15.000, Պէյրութ 10.000, Դամասկոս 6.000, Թրիփոլի եւ Լաթաքիա 3.000: Գումար 67.000»<sup>21</sup>:

Հայ գաղթականներու հոսքը դէպի Սուրիա ժամանակաւոր էր, որովհետեւ անոնց մէկ հատուածը կարճ ժամանակ մնալէ ետք, պիտի դիմէր արտագաղթի: Այնպէս որ արտագաղթը ստացած էր զանգուածային բնոյթ<sup>22</sup>: Թոփուզեան կը նշէ, որ Սուրիա հաստատուած հայերու արտագաղթը պայմանաւորուած էր շարք մը գործօններով: Բացի երկրէն ներս տիրող իրավիճակի, անգործութեան եւ թշուառութեան, անվստահութիւնն էր, որ «հայերը տածում էին ֆրանսիական իմպերիալիստների նկատմամբ», զոր ճաշակած էին Կիլիկիոյ արհաւիրքի օրերուն<sup>23</sup>:

Թոփուզեանի համաձայն, մինչեւ 1924 թ. Սուրիա հանգրուանած 225.000 հայ գաղթականներէն մնացած էր 150.000 անձ<sup>24</sup>, որ պայմանաւորուած էր Սուրիոյ քաղաքական իրադրութեան, հասարակական, տնտեսական կարգ մը գործօններով: Ինչպէս նաեւ 1920-1924 թթ. Սուրիոյ մէջ բռնկած համազարու-թատիրական տրամադրութիւններով:

Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի տեղեկագիրին համաձայն, 1922-1923 թթ. քեմալական արշաւանքներու հետեւանքով Կիլիկիայէն զանգուածաբար Սուրիա հաստատուած հայ ազգաբնակչութեան թիւը կը հաշուէր շուրջ 111.250<sup>25</sup>

11 ԲԹ ԱԱԱ, Նոյն տեղը, տեղեկագիր. «Գաղթականներու զետեղման տեսակետէն Հալէպի կուսակալութեան զանազան "գազաներու" (գաւառակ) մասին հակիրճ տեսութիւններ ու համառօտ ակնարկ»:

12 Թոփուզեան Ն. Ի., Նշ. աշխ. Հայ ժողովուրդի պատմություն, հատոր VI, էջ 726:

13 البشاش بايراميان قضية لواء للاسكندرون والديلمواسمية الدولية (1929-1931) م. ترجمة هزانت حيشيان دمشق 1993, ص 21-21. Նաեւ՝ Բայրամյան Ա. Ա., Ալեքսանդրեոսի սանջաքի հարցը և միջազգային դիվանագիտությունը (1936-1939), Երևան, 1998, էջ 18-19: Հովհաննիսյան Ն. Հ., Սարգսյան Հ. Ա., Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946 թթ.), Երևան, 1975, էջ 181-182: Նաեւ Չոլպաքեան Յ., Բեսապ, հ. Ա., Հալէպ, 1995, էջ 127:

14 جريدته، «التقدم» الخليليه، عام 1924، العدد 1433، العدد 1513، العدد 1570، العدد 1734، عام 1927، العدد 2800، عام 1928، العدد 1875 Նաեւ՝ Թոփուզեան Ն. Ի., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմությունը (1841-1946) Երևան, 1986, էջ 168:

15 Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ, 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 249:

16 Եղիայեան Բ., Նշ. աշխ. Նոյն տեղը:

17 Տեմիրճեան Վ. եպս., Գաւազանագիրք, Լիբանանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, հ. Ա., Անթիլիաս, 1980, էջ 362:

18 Եղիայեան Բ., Նշ. աշխ., էջ 246:

19 جريدته «التقدم» الخليليه، عام 1924، العدد 1513

20 «1924 թ. հունիսի 12-ին Ազգերի լիկայի կողմից տրամադրված ինքնության վկայագրերը և ապա Նույն թվականի ամրան Սիրիայի քաղաքացիության տրամադրումը Սիրիայում ապրող հայերի սոցիալ-քաղաքական կյանքում մեծ առաջընթաց էր»: Տե՛ս Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան 2010, էջ 11:

21 «Հայաստանի կոչնակ», թիւ 32, 12 Օգոստոս, 1922, Նիւ Եորք, էջ 1056:

22 Թոփուզեան Ն. Ի., Նշ. աշխ., էջ 167:

23 Նոյն տեղը:

24 Նոյն տեղը:

25 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 25:







ֆրանսական ուժերու եւ տրուզներու առաջնորդութեամբ ընդհանուր ըմբոստութեան միջոցին, զոհ կ'իյնան 50 հայեր եւ կողոպուտի կ'ենթարկուին ուրիշներուն տուներն ու խանութները<sup>39</sup>: Այսպիսով ի սպառ պիտի վերանային Հաուրանի եւ Տարաայի ձեւատրուած նոր համայնքները, իսկ արտագաղթի պատճառով պիտի նօսրանար հայ ազգաբնակչութեան թիւը` 7.000, այնուհետեւ 1.500<sup>40</sup>:

1923 թ., Լօզանի պայմանագիրով Թուրքիա փոքրամասնութիւններուն նկատմամբ առաւել կը շարունակէր թրջացման քաղաքականութիւնը: Այս բախտորոշ պիտի ըլլար Թուրքիոյ հանրապետութեան մէջ ապրող փոքրամասնութիւններուն համար<sup>41</sup>: Մարդկային կեանքը սպառնացող այս պայմանագիրը ահազանգ էր հայկական գիւղերու մէջ տակաւին գոյատեւող հայերուն տնօրինելով շարունակելու եւ շարունակելու խնդիրը: Կը կազմակերպուի երկրին հարաւ-արեւելքը ապրող քրիստոնէայ փոքրամասնութիւններու մնացորդացին գաղթը դէպի Իրաք եւ Սուրիա<sup>42</sup>: «Թուրքիոյ արեւելեան գաւառներէն (Արեւմտեան Հայաստանէն - Ա.Ֆ.) Սուրիա ապաստանողներու թիւը հասած է 2.500-ի, որոնց մէկ մասը գաղթած է կամովին, մինչեւ Օգոստոսի վերջերը, իսկ մեծագոյն մասը, Սեպտեմբերէն սկսեալ, ապաստան խնդրած է որպէս բռնագաղթի զոհ: Այս թիւին մէջ են Հասիչէ (Հասաքէ), Գամիշլի, Գարամանիէ եւ Ռաս Ուլ Այն հասնող գաղթականները, որոնք նիւթական չգոյութեան պատճառով չեն կրցած մինչեւ Հալէպ տեղափոխուիլ»<sup>43</sup>:

Արդէն 1930 թ. Հասիչի մէջ կար 200 տուն հայ (100 հայ առաքելական, 100 հայ կաթողիկէ), Գամիշլիի մէջ` 400 հայ առաքելական եւ 30 հայ կաթողիկէ, Գարամանիէի մէջ` 15 տուն առաքելական եւ կաթողիկէ հայեր, Ամուտայի մէջ` 40-50 տուն հայեր եւ 20-ը կաթողիկէ հայեր<sup>44</sup>:

1927-1930 թթ. պշերիկցի (քրտախօս հայեր<sup>45</sup>) փախստականներու հոսքը, դէպի

39 **Թովուզյան Ն. Խ.**, Հայերի մասնակցութիւնը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին, էջ 47:

40 **Եղիայեան Բ.**, Նշ. աշխ., էջ 265-267:

41 Հայոց Պատմություն, հատոր IV, գիրք առաջին, Նորագոյն ժամանակաշրջան (1918-1945 թթ.), Երևան 2000, էջ 648:

42 Տե՛ս Հայոց Պատմություն, հատոր IV, էջ 650-651:

43 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, Հալէպ, 1996, էջ 106: Նաեւ «Եփրատ» օրաթերթ, թիւ 251, 28 Դեկտեմբեր 1929, Հալէպ:

44 «Գեղարդ», Ե. գիրք, էջ 106:

45 Ժք. դարու երկրորդ կիսուն Պշերիկը եւ շրջանի հայերը` պշերիկցիներ, ընդհանուր անունով կը սկսին պարբերաբար յիշատակուիլ: Պշերիկի շրջանի գիւղերը եղած են քրտախօս, իսկ տիրող լեզուն` քրտերէն: Քրտական աշիրթական բռնակալ կամայականութիւններուն ենթակայ շրջանի հայերը թիւով խիստ կը նուազին (ոմանք ալ տուժած, ջարդուած, մեծ մասով իսլամացած իրավիճակով):

Մինչեւ 1915 թ., Պշերիկի գիւղերուն գերիշխողները եղած են քիւրտ աղաները: Հայ բնակչութիւնը քիւրտերուն կողմէ կոչուած է «Ֆըլա»: Քեմալական շարժման յաջողութենէն ետք, Թուրքիոյ նոր վարչակազմը հետամուտ եղաւ` ինչպէս հայաբնակ այլ շրջաններուն, Նոյնպէս

Ճեզիրէ եւ Հալէպ կ'ունենայ զանգուածային բնոյթ, ընդհանրապէս գերդաստանային համախմբումով: 1930 թ. Յունուարին մեծագոյն խումբը կը հասնի Սուրիա, շուրջ 450 ընտանիք: Աւելի ուշ, պարբերաբար կը շարունակուի գաղթը դէպի Սուրիա փոքր խումբերով:

Սահակ Բ. կաթողիկոսի կռահումը ճիշդ էր կը գրէ Թովուզեան<sup>46</sup>, վերբացուած էին գաղթականներու վերաբնակեցման ծրագրի ներքին ծալքերը: Թէեւ «հայ թերթերը» կը հրապարակէին, թէ գրեթէ բոլոր հայ նորահաստատ գիւղերու բնակիչները ինքնաբաւ դարձած էին, սակայն «ՍՈՒՏ Ե և հայ գաղթականները հեռու են ինքնաբաւ ըլլալէ»<sup>47</sup> կը գրէ Վ. Թէքեեան: Ուստի երկրագործներու համար նոր գիւղերու հիմնումը օգտակար կրնար ըլլալ, եթէ այդ գիւղերը իրարմէ շատ հեռու չըլլային: Թրջական եւ կամ արաբական հոծ բնակչութեան մէջ հայ գիւղի մը կամ երկուքի տեղադրումը կը կատարուէր այլ նկատառումներով<sup>48</sup>:

Դժբախտաբար, այդ գիւղերը երկար կեանք չունեցան, քանի որ հողերը անմշակ էին, գիւղերը անկազմակերպ վիճակի մէջ ու այդտեղ ապաստանած գաղթականութեան որոշ հատուածը հողագործութեամբ չէր զբաղէր: Շրջաններու գաղթականները վերստին իրենց բնակութիւնը հաստատեցին քաղաքներուն մէջ:

Գաղթականներու դէպի Սուրիա արտօնութիւնը, տեղատրումն ու պարենատրումը օրըստօրէ սկսած էր առաւել կարեւորութիւն ստանալ: Գաղթականաց խնամատարական Կեդրոնական յանձնախումբի կազմութիւնը 1929-ին<sup>49</sup> պիտի

Պշերիկի շրջանի հայաթափութեան քաղաքականութեան: Քաղաքականութիւն մը, որ կը միտէր Արեւմտահայաստանը պարպել հայերէն, թէկուզ մնացորդացներէն:

1925-ին կը բռնկի քրտական ապստամբութիւնը, յատկապէս Տիգրանակերտի եւ Բաղէշի նահանգներուն մէջ: Հայոց մնացորդացը կ'ապրէր քիւրտ մեծաւորներու հովանաւորութեան տակ` իրաւազրկուած իր ամբողջ իրաւունքներէն: Հետեւաբար չէր կրնար բողոքել թուրք կառավարութեան մօտ կամ զլուխ ցցել քիւրտերուն դէմ:

1927-էն սկսեալ Պշերիկի շրջանի հայութիւնը բռնագաղթի ենթարկուելով` հետիոտն կ'ողորուի դէպի Գամիշլի: Ճամբան չէթեներէն կողոպտուելով` կ'անցնի Տարսուսէն լեռները ու կայք կը հաստատէ Գամիշլի եւ շրջակայքի ճահճահուտ վայրերը, ճաղճաղ գետի ափերուն, պատմական Սժբին քաղաքի աւերակներուն շունչին տակ: Տե՛ս **Մակարեան Կ.**, Պշերիկցի քրտախօս հայերը Սուրիոյ տարածքին, անտիպ, (Հալէպի Համազգային հայագիտական կեդրոն), էջ 1-9:

46 **Թովուզյան Ն. Խ.**, Հայերի մասնակցութիւնը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական շարժումներին, էջ 53: Տե՛ս **Նոյնի**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմությունը, էջ 173:

47 **Թովուզյան Ն. Խ.**, Հայերի մասնակցութիւնը Սիրիայի և Լիբանանի Ազգային-Ազատագրական շարժումներին, էջ 54:

48 Տե՛ս **Թովուզյան Ն. Խ.**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմությունը, էջ 173-174:

49 1929 թ. Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն Սուրիա սկսած էին ապաստանիլ Արաբկիրի, Բալուխ, Խարբերդի եւ Պշերիկի շրջաններէն տարագրուած հայեր: Արաբկիրէն, Բալուխէն եւ Խարբերդէն եկողները կ'ապաստանէին Հալէպ: Իսկ Պշերիկի կողմէն եկողները` Գամիշլիի



Նպաստեր գաղթականներու վիճակի բարելաման:

Հայ գաղթականաց խնամատարութեան կեդրոնական յանձնախումբը 1927-էն ի վեր Սուրիա հասնող գաղթականներու կեցութեան եւ տեղաւորման հարցերը կարգաւորելու համար առաջացուցած էր գաղթականներու տեղաւորման ենթայանձնախումբ հետեւեալները՝ վեր. Ահարոն Շիրաճեան, բժ. Թորոս Պասմաճեան, Մ. Մելքոնեան (իրբեր հողագետ), Տ. Ռշտունի, Ճ. Տիլենճի, Մ. Թերճանեան, Ե. Մանկալօ<sup>50</sup>:

Առ այդ կարելի է եզրակացնել, որ Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը սկիզբէն մինչեւ 1946 թ. լայնօրէն ուսումնասիրուած է պատմագրութեան մէջ: Այդ շրջանի վերաբերեալ լոյս տեսած են բազմաթիւ ուսումնասիրութիւններ: 1946 թուականներէն ետք ինկած ժամանակահատուածի վերաբերեալ որեւէ ընդհանրացնող ուսումնասիրութիւն կը բացակայի: Մենք նպատակայարմար համարեցինք համայնքի պատմութիւնը հասցնել մինչեւ 1970 թ., քանզի այդ թուականէն մինչեւ նշուած ժամանակաշրջանը, որ կը համընկնի երկրի վաղեմի նախագահ՝ Հաֆէզ ալ-Ասատի իշխանութեան ժամանակաշրջանին, կրնայ առանձին ուսումնասիրութեան առարկայ դառնալ, որ միանգամայն կը տարբերի 1946-1970 թթ. պատմափուլի հիմնական խնդիրներէն:

Սուրիոյ համայնքի այս ժամանակաշրջանի պատմութիւնը ունի արդիական նշանակութիւն, նաեւ այն իմաստով, որ մինչեւ 2011 թուական շուրջ 80.000<sup>51</sup> հայ կ'ապրէր Սուրիոյ տարածքին եւ համայնքի պատմութեան ուսումնասիրութիւնը ունի ոչ միայն ճանաչողական եւ գիտական, այլեւ՝ քաղաքական մեծ կարեւորութիւն եւ այժմեականութիւն:

շրջանները: 19 Դեկտեմբեր 1929 թ. Հալեպի մէջ Գաղթականաց Խնամատարական մարմին մը կ'ընտրուի Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին հովանաւորութեամբ հետեւեալները՝ բժ. Ասատուր Ալթունեան, բժ. Յարութիւն Տէր Ղազարեան, Հայր Գարիբէլ ծ. վրդ. Գասպարեան, Արմէն Մազլումեան եւ Գրիգոր Ազիրեան՝ օժանդակելու Տիգրանակերտի շրջաններէն «Պշտիկի եւ Բաշկոտանի քրտախօս հայերու»: Նորակազմ Հալեպի Գաղթականաց Խնամատարութեան կողմէ, Դեկտեմբերի կէտրոն Սուրիոյ Օգնութեան Խաչի Շրջանային (Կեդրոնական) առժամեայ վարչութեան ատենապետ Թորոս Պասմաճեան կը մեկնի Գամիշլի եւ շրջանները, անհրաժեշտ դեղորայքով ծանրաբեռնուած, ուսումնասիրելու Նորեկ գաղթականներու կացութիւնը, այնտեղ ծաւալած տարափոխիկ հիւանդութիւնները եւ կազմակերպուած աշխատանք տանելու: Տէն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արխիւ: «Տեղեկագիր Հալեպի Գաղթականաց Խնամատարութեան 1 Յուլիս 1930 թ.», Բերիոյ թեմի, հաւաքածոյ 3, ցուցակ (ց.) 1, թղթածրար 82, էջ 16/1: Նաեւ **Ֆիլէնկճեան Ա.**, Յուշամատեն սուրիահայ օգնութեան խաչի 1919-2009, Հալեպ, 2010, էջ 55-56:

50 «Հայաստանի կոչնակ», թիւ 9, 1930, Նիւ Եորք, էջ 282: Հայ գաղթականաց Խնամատարութեան կեդրոնական յանձնախումբի թղթածրար, 12 Փետրուար 1930, Հալեպ, հայերէն մեքենագրուած, անտիպ (ուսումնասիրութիւնը՝ Մակարեան Կ.-ի (Հալեպի Հայագիտականի շրջանաւարտներէն):

51 Կարելի է ըսել, որ վերջին տարիներուն վիճակագրութիւն տեղի չէ ունեցած. սուրիահայերու թուաքանակը գրաւոր եւ բանաւոր աղբիւրներու մէջ կը նշուի 80.000-էն մինչեւ 100.000 եւ ատելի:

Մենագրութեան մէջ կը ներկայացուին՝

\* Սուրիոյ հայ համայնքի ձեւաւորման, հայերու տեղաբաշխման գործընթացը: Թ. Աշխարհամարտի նախօրեակին երկիրէն ներս տիրող իրավիճակը եւ անոր անդրադարձը համայնքի կեանքին: Բ. Աշխարհամարտի տարիներու տեղական քնակչութեան կողմէ մղուած պայքարը:

\* 1946 թ. Ապրիլ 17-ի Սուրիոյ տարածքին անգլո-ֆրանսական զօրքերու վերջնական դուրս գալէն ետք, նորանկախ սուրիական կառավարութեան առջեւ ծառածաց խոչընդոտները, նոր բանակի ձեւաւորումը, հայոց դերը բանակի կազմութեան, սպայական վերնախաւի, քաղաքական հասարակական եւ տնտեսա-արդիւնաբերական ոլորտէն ներս:

\* Ինչպէս նաեւ 1949-1970 թթ. տեղի ունեցած ռազմական յեղաշրջումները եւ այդ պատճառով տեղի բնակիչներու, եւ յատկապէս հայերու անորոշութիւնն ու տեղաշարժը, պետական սահմանափակումները 1946-1958 թթ., 1958-1961 թթ. Արաբական Միացեալ Հանրապետութեան եւ անոր փլուզումէն ետք՝ 1961-1970 թթ., Նոյեմբերին Հաֆէզ ալ-Ասատի իշխանութեան հաստատումը /1971-2000 թթ./, հայրենադարձութիւնը 1946-1948 թթ., եւ վաթսունական թուականներուն, Հայրենիք-Սփիւռք, Սուրիա-Խորհրդային Միութիւն յարաբերութիւնները:

\* Եւ վերջապէս Սուրիոյ կրթամշակութային կեանքն ու մշակութային, բարեսիրական, մարզական, հայրենասիրական միութիւններու գործունեութիւնը, նաեւ համայնքային եւ կուսակցական կեանքը:

Պատմամշակութագիտական ուսումնասիրութեան ենթարկելով Սուրիոյ հայ համայնքի պատմութեան 1946-1970 թթ., ինկած ժամանակահատուածը, գերազնահատած կ'ըլլանք սուրիահայերու դերը հայապահպանման, ազգային ինքնազգիտակցութեան ոգի սերմանելու, ձուլման վտանգէ գերծ պահելու ազգաշահ եւ չափազանց պատասխանատու գործին:

Հետազօտութեան թեմայի կարեւորութիւնը կը յատկանշուի նաեւ անով, որ 1946-1970 թթ., հակառակ տիրող իրադրութեան, Սուրիոյ հայ համայնքը առաւել ազդեցիկ դեր ունեցած է երկրի հասարակական-քաղաքական կեանքին եւ վայելած տեղացիներուն համակրանքը: Բացի այդ, Սուրիա-Խորհրդային Միութիւն 1940-ական թուականներէն սկսեալ որդեգրած արդիւնատնտեսական համագործակցութիւնը պիտի նպաստէր Սուրիոյ նորանկախ պետութեան վերելքին:

Այս առաջադրանքներէն թելադրուած նպատակայարմար նկատեցինք բնութագրել եւ անդրադառնալ այն խնդիրներուն, որոնք կը հաստատեն համայնքի կեանքին կառավարման ձեւը, բնոյթը եւ հայկական, եւ պետական կառոյցներէն ներս՝ նպաստելով քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային եւ ընկերային ոլորտներուն:



Սուրիոյ հայ համայնքի այս ժամանակաշրջանի՝ 1946-1970 թթ., պատմութեան ուսումնասիրութեան համար աղբիւրագիտական հիմք ծառայեցին Հայաստանի ազգային արխիւի (յետայսու՝ ՀԱԱ)<sup>52</sup> փաստաթուղթերը, յատկապէս Ափիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի, Արտաքին գործոց նախարարութեան եւ Ամերիկահայ ազգային խորհուրդի ֆոնտերը: Օգտագործուած փաստաթուղթերուն մէջ (առաջինի եւ երկրորդի) զգալի տեղ կը գրաւեն Սուրիոյ եւ առաւելապէս Հալէպի հայ համայնքի վերաբերեալ տեղեկանքներ, տեղացի պետական այրերու եւ համայնքի հայ երեւելիներու հետ կատարուած զրոյցներու գրառումները, ուշագրաւ տեղեկութիւններ 1946-1948 թթ. եւ 1964-1966 թթ. հայրենադարձութեան կազմակերպչական աշխատանքներու վերաբերեալ, վիճակագրական ցուցակներ եւ Սուրիոյ պետական այրերու դիրքորոշումն ու վերաբերմունքը հայրենադարձուողներու նկատմամբ. ընդ որում արխիւային զգալի վաւերագրեր առաջին անգամ մեր կողմէ շրջանառութեան մէջ դրուեցան:

Սկզբնաղբիւրի դեր կատարեցին նաեւ մեր կողմէ առաջին անգամ օգտագործուած Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի արխիւի (յետայսու՝ ԲԹ ԱԱԱ)<sup>53</sup> քաղաքական ժողովի եւ ուսումնական խորհուրդի տոմարները (դարան), Սուրիահայ Օգնութեան Խաչի (ՍՕԽ) Շրջանային վարչութեան եւ մասնաճիւղերէն ստացած եւ անոնց առաքուած նամակները, տեղեկագիրները եւ ատենագրութեան տոմարները (տէն մատենագիտութեան ցանկը), Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Բերիոյ թեմի արխիւի հաւաքածոյ 3, ցուցակ 1, նամակները եւ տեղեկագիրները<sup>54</sup>, ինչպէս նաեւ Գամիշլիի փոխառաջնորդական առաջին տոմարը<sup>55</sup>, որ օգտուած էմ Կարինէ Մակարեանի «Պշերկիցի հայերը» ուսումնասիրութենէ (անտիպ): Առաջինի մէջ տեղադրուած փաստաթուղթերն ու տեղեկագիրները հարուստ նիւթ կը տրամադրեն ուսումնասիրողին՝ կապուած կրթութեան համակարգի, Սուրիոյ Արաբական Հանրապետութեան եւ Հալէպի Կրթութեան եւ Գիտութեան նախարարութեան կողմէ առաքուած հրամա-

52 Հայաստանի ազգային արխիւ (յետայսու՝ ՀԱԱ) ֆոնտ 875, ցուցակ 1, գործ 31; գ. 32; գ. 6; ֆ. 875, գ. 2, գ. 575; գ. 578; գ. 585; գ. 592; գ. 201; գ. 586; ֆ. 875, գ. 16, գ. 170; ֆ. 326, գ. 1, գ. 104; գ. 147; գ. 149; գ. 196; գ. 283; գ. 342; գ. 441; ֆ. 326, գ. 2, գ. 75; ֆ. 426, գ. 1, գ. 3956; գ. 3786;

ֆ. 439, գ. 3, գ. 78; գ. 79: Փաստաթուղթերը թարգմանուած են ռուսերէն: Թարգմանած են պատմական գիտութիւններու Դոկտոր Ռ. Սահակեան, արուեստաբան՝ Յ. Գինոյեանը (Երեւան) եւ բժ. Մ. Չավուշեան (Հալէպ):

53 Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի արխիւ (յետայսու՝ ԲԹ ԱԱԱ) Դարան Դ., գ. 25; Դարան Զ., գ. 41; Դարան Բ., գ. 62; Դարան Դ., գ. 69; Դարան Բ., գ. 55:

54 Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն (յետայսու՝ ՄՏԿԿ) հաւաքածոյ 3 (հ.), ցուցակ 1 (գ.) թղթածրար (թ.), 82:

55 Գամիշլիի փոխ-առաջնորդական ատենագրութեան Ա. տոմար (1998 թ. ուսումնասիրած էմ), Բերիոյ թեմի առաջնորդարանի դիւան: Օգտուած էմ նաեւ Կ. Մակարեանի ուսումնասիրութենէ (անտիպ):

նագիրերու, հայերու տեղաբաշխումի (վիճակագրական ցուցակներ) եւ մասամբ՝ համայնքի կեանքին: Մեզի հնարատրութիւն չընձեռուեցաւ ուսումնասիրել հայ համայնքին առնչուող այլ (յարանուանութեանց, կուսակցական, միութենական եւ այլն) արխիւային նիւթերը՝ տուեալ կառոյցներու կողմէ չտրամադրուելու պատճառով: Հետեւաբար, այդ կառոյցներու գործունէութեան գրառումները ուսումնասիրած ենք իրենց կողմէ հրապարակուած Յուշամատեններու, մամուլի եւ Հայաստանի ազգային արխիւի ֆոնտերուն պահպանուած տեղեկանքներու հիման վրայ:

Յաւով, բացի Հայաստանի ազգային եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արխիւներէն, միւս երկուքը կարգատրուած վիճակի մէջ չեն յայտնուած: Բաւարարուած էմ միայն Նշել՝ ԲԹ ԱԱԱ, դարանն ու թղթածրարի թուանշանը, որպէս գործ, իսկ ՍՕԽ-ի արխիւներու պարագային Նշել տոմարի տարեթիւը, որ մասնաճիւղէն առաքուած ըլլալը եւ այլն: Նոյնիսկ նամակաթերթերու կարգատրման ու թուարկման հնարատրութիւն չեն ստեղծուած այնտեղ: Բայց եւ այնպէս կարեւոր սկզբնաղբիւրներ են խնդրոյ աշխատութեան շարադրման համար:

Սկզբնաղբիւրի դերով հանդէս կու գայ, Հալէպի երբեմնի առաջնորդ Արտաւազդ արք. Սիւրմէեանի «Պատմութիւն Հալէպի Հայոց» եռահատոր աշխատութիւնը, ուր հեղինակը առաջինի եւ երրորդի մէջ<sup>56</sup> սոսկ պատմական տեղեկութիւններով կը ներկայացնէ վաղ ժամանակներէն մինչեւ Ի. դարու քառասունական թուականներուն (1940-ական) Սուրիա ապաստանած ազգաբնակչութեան, պատմամշակութային վայրերու, հնադարեան պետութիւններու եւ պարբերաբար հայերու՝ Հայաստանէն արտագաղթի վերաբերեալ հարցեր: Ոչ պակաս արժեքաւոր աղբիւր է նաեւ Ռ. Ճեպեճեանի «Ինքնակենսագրութիւն, յուշեր եւ գործունէութիւն» աշխատութիւնը<sup>57</sup>, ուր հեղինակը ականատեսի վկայութեամբ տեղեկութիւններ կը փոխանցէ քննարկուող ժամանակաշրջանի Սուրիոյ հայ-արաբ համագործակցութեան (առաւելաբար՝ հայութեան) եւ Հայրենիք-Սփիւռք առնչութիւններու մասին:

Արխիւային նիւթերէն բացի, սոյն ուսումնասիրութեան համար կարեւոր աղբիւրագիտական հիմք հանդիսացած են «Գեղարդ» սուրիահայ տարեգիրքի

56 Սիւրմէեան Ա. արք., Պատմութիւն Հալէպի հայոց, հ. Ա., Սուրիա, Հալէպ, 1940: Տէն նաեւ Նոյնի՝ «Պատմութիւն Հալէպի հայոց», հ. Գ., Փարիզ, 1950:

57 Ճեպեճեան Ռ., Ինքնակենսագրութիւն, յուշեր եւ գործունէութիւն, Հալէպ, 1999:



վեց հատորները՝ Ա.<sup>58</sup>, Բ.<sup>59</sup>, Գ.<sup>60</sup>, Դ.<sup>61</sup>, Ե.<sup>62</sup>, Զ.<sup>63</sup>, եւ համանուն տարեգիրքի արաբերէն տարբերակը (Զ. հատոր)<sup>64</sup>, նուրիում հայ-արաբ դարաւոր բարեկամութեան: Այս առումով աղբիւրագիտական հիմք կը հանդիսանայ նաեւ պարբերական մամուլը, այդ թուին սուրիահայ՝ «Եփրատ», «Արեւելք», «Սուրիա», «Նայիրի», «Արեւելք մարզական», «Դէպի Երկիր», «Երկիր», «Նոր Մարաշ», «Սուրիահայ տարեգիրք», «Տաթեւ» տարեցոյց, «Ծիլեր», «Հայկազն», «Պարբերաթերթ», «Օշական» պաշտօնաթերթ, «Գանձասար» բացառիկ, «Գանձասար» երկշաբաթաթերթ, «Գանձասար» շաբաթաթերթ, «Նոր Ապրիլ»: Ծառայութիւն մատուցած են նաեւ Սփիւռքի եւ հայրենի մամուլի օրկաններէն՝ «Ազդակ», «Ազդակ շաբաթօրեակ», «Ազդակ» բացառիկ, «Զարթօնք», «Հասկ», «Հասկ հայագիտական Հանդէս», «Հայկազեան հայագիտական հանդէս», «Մշակոյթ», «Հայաստանի կոչնակ», «Բագին», «Սիոն», հայրենի՝ «Հ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների», «Սովետական Հայաստան» հանդէս, «Սովետական Հայաստան» օրաթերթ, «Էջմիածին», «Պատմա-բանասիրական հանդէս» եւ այլն:

Բացի յիշուած արաբերէն գրականութենէ, օգտակար եղած են՝ սուրիական պաշտօնաթերթ «Ալ Ճարիտա ալ-Ռասմիէ» (պաշտօնական թերթ՝ քանի մը թիւ) եւ տեղական պարբերական մամուլը՝ «Ալ-Նասըր» (Յաղթանակ), «Թիշրին», «Ալ-Ճամահիր» (Զանգուած), «Ալ-Պասս», «Ալ-Նազիր» (համանման) եւ «Ալ-Թագատտոմ» (Յառաջադիմութիւն) թերթերն ու «Ալ-Ղատ» (Վաղը) պարբերականը: Նշենք, որ չյիշատակուած անուններուն կարելի է ծանօթանալ մատենագիտութեան մէջ:

Վարեւոր է նշել, որ մամուլի էջերու եւ տարեգիրքերու մէջ եղած տեղեկութիւնները չենք կրնար բաւարար համարել, որովհետեւ միշտ չէ որ վաւերական են: Նիւթերը, հեղինակներու հետաքրքրութեան շրջանակները, սովորաբար սահմանափակ են եւ ամբողջական գաղափար չեն արտացոլել տուեալ համայնքի կեանքի բոլոր կողմերու մասին: Համայնքներու պառակտուածութիւնը, ներքին պայքարն ու հակամարտութիւնները զանազան կուսակցութիւններու ու խմբաւորումներու միջեւ անխուսափելիօրէն իրենց կնիքը կը դնեն, որոնք յաճախ հեռու են գիտական նշանակութիւն ունենալէ:

58 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Ա. գիրք, Հալէպ, 1975:

59 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Բ. գիրք, Հալէպ, 1976-1978:

60 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Գ. գիրք, Հալէպ, 1985:

61 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Դ. գիրք, Հալէպ, 1991:

62 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, Հալէպ, 1996:

63 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Զ. գիրք, Հալէպ, 2000:

64 2002. كىغارت. النشرة السنوية - الكتاب السادس. حلب. «Գեղարդ», արաբերէն տարբերակը՝ «Ալ-Նաշրա ալ-սանաուիէ, ալ-գիդապ ալ-սատես», Հալէպ, 2002:

Մեր կողմէ առաւել օգտագործուած են նաեւ հրատարակուած պատմական տեղեկագիրներ, մենագրութիւններ եւ գիտական յօդուածներ<sup>65</sup>:

Մեր թեմայի վերաբերեալ գոյութիւն ունեցած գրականութեան մէջ կ'առանձնանան, յատկապէս, Հ. Թոփուզեանի մենագրութիւնները<sup>66</sup>: Հ. Թոփուզեան «Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946)» մենագրութեան մէջ արխիւային հարուստ փաստաթուղթերով շարադրած է Սուրիոյ եւ Լիբանանի հայ համայնքներու պատմական, քաղաքական, տնտեսական, ընկերային եւ մշակութային բնագաւառներու պատմութիւնը: Աւելի քան մէկ դարեայ պատմութեան շարադրութեան ընթացքին ներկայացուցած է նաեւ, արաբ ժողովուրդի ազգային-ազատագրական պայքարի մանրամասները՝ անդրադառնալով միաժամանակ Սուրիոյ հայ համայնքի տնտեսական, հասարակական եւ մշակութային բնագաւառներու պատմութեան շատ հարցերուն: Զուտ պատմական բնոյթ կրելէ անկախ, Թոփուզեան փորձած է որոշ հարցեր քննական լուսարձակի տակ առնել եւ վերլուծել զանոնք իր հայեցակարգով: Բայց եւ այնպէս կարեւոր սկզբնաղբիւր է 1841-1946 թթ. Սուրիոյ եւ Լիբանանի հայկական գաղթօճախներու պատմութեան ուսումնասիրութեան:

Հայրենադարձութիւնը, այդ թուին՝ նաեւ սուրիահայերու հայրենադարձութեան հարցերը, քննարկուած են Հ. Մելիքսեթեանի մենագրութեան<sup>67</sup> մէջ, որ նոյնպէս շարադրուած է արխիւային հարուստ փաստաթուղթերու եւ մամուլի նիւթերու հիման վրայ: Աշխատութեան մէջ Մելիքսեթեան կը լուսաբանէ Սփիւռքի յառաջացման պատճառները Ա. Աշխարհամարտի տարիներուն: Հարուստ փաստերով կը լուսաբանէ Ազգերու Լիկայի մէջ հայ գաղթականութեան հարցի քննարկումը, մեծ հայրենասէր ու առաջադէմ գործիչ Ֆ. Նանսէնի յանձնաժողովի գործունեութիւնը եւ յետպատերազմեան շրջանի հարցերը: Կը վերլուծէ այն պատճառներն ու հանգամանքները, որոնցմով պայմանաւորուած էր հայրենադարձութեան այդպիսի աննախադէպ վերելքը:

Մելիքսեթեան մանրամասնօրէն կը ներկայացնէ հայրենադարձութեան կազմակերպման ու նախապատրաստական այն բոլոր աշխատանքները, որոնք ձեռնարկեցին այս կամ այն որոշումները իրականացնելու: Քննութեան

65 «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. Գ., Երևան, 1967; հ.Զ., Երևան, 1974; հ. Թ., Երևան, 1978: Նաեւ՝ «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 1967, N 9; Երևան, 1983, N 7, N 8; Երևան, 1990, N 10, եւ այլն:

66 Թոփուզեան Հ. Խ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1946), Երևան, 1986: Տե՛ս Նոյնի «Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժումներին», Երևան, 1968: Նաեւ՝ «Սիրիա-Միջագետք, Լիբանան» բաժինը «Հայ գաղթաշխարհի պատմության» եռհատորյակի հ. Բ., Երևան, 2003, էջ 318-342:

67 Մելիքսեթեան Հ. Ու., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձություն, Երևան, 1985:



առարկայ կը դարձնէ սփիւռքահայ ոչ միայն կուսակցութիւններու, այլեւ հասարակական կազմակերպութիւններու դիրքորոշումը հայրենադարձութեան վերաբերեալ:

Յետպատերազմեան շրջանի սփիւռքահայ կուսակցութիւններու վարած քաղաքականութեան եւ գաղափարախօսութեան հիմնական հարցերու վերաբերեալ Նոյնպէս անհրաժեշտ կը համարենք Լ. Խուրշուդեանի<sup>68</sup> եւ Ն. Սիմոնեանի<sup>69</sup> մենագրութիւնները: Խուրշուդեան համառօտ ակնարկով կ'անդրադառնայ կուսակցութիւններու պատմական անցեալին, գաղափարախօսութեան ու մանրամասն կը վերլուծէ դաշնակցութեան, հնչակ եւ ռամկավար ազատական կուսակցութիւններու յետպատերազմեան ժամանակաշրջանի որդեգրած ուղին: Մենագրութեան մէջ առաւելաբար անդրադարձած է դաշնակցութեան վարած քաղաքականութեան՝ օգտուելով հնչակ եւ ռամկավար կուսակցութիւններու կողմէ դաշնակցականներու դէմ գրուած նիւթերէն եւ քննադատած անոնց վարած գործելաճը: Իսկ Սփիւռքի դաշնակցականներու պաշտօնաթերթերու տեղադրուած հարցերուն քննադատաբար մօտեցած է:

Այս թեմային կ'առնչուի նաեւ Ն. Սիմոնեանի աշխատութիւնը<sup>70</sup>: Շարադրանքը կատարուած է ոչ միայն մեծ մասամբ հայերէն եւ օտար գրականութեան հիման վրայ, այլեւ՝ փաստաթուղթերու, վաւերագիրերու, սփիւռքեան մամուլի եւ արխիւային նիւթերու: Աշխատութեան մէջ հեղինակը անդրադարձած է աշխարհով մէկ սփռուած հայութեան դիմագրաւած դժուարութիւններուն, անոնց ապաստանած երկիրներու քաղաքական վերիվայրումներուն, եւ օտար պետութիւններու որդեգրած քաղաքականութեան: Երրորդ բաժինը ամբողջութեամբ նուիրած է «Ժողովուրդներու ազգային-ազատագրական շարժումներու պաշտպանութեան դիրքերուն» խնդիրին. ուր հեղինակը մանրամասնօրէն կը ներկայացնէ Մերձատր Արեւելքէն Ներս տիրող անբարենպաստ իրավիճակը, որոնք պատճառ պիտի հանդիսանային տեղաշարժերու եւ արտագաղթի: Ազգային կուսակցութիւններու դիրքորոշումին անդրադառնալով, հեղինակը առաւելաբար ծանրացած է ՀՅԴ-ի գործունեութեան՝ քննադատական մօտեցում ցուցաբերելով:

Լշէնք, որ սուրիահայերու գործելակերպի գաղափարական հիմքերն ու անոնց ուսումնասիրութիւնը, որ առ այսօր դուրս մնացած է գիտական հետազոտութիւններու տեսադաշտէն, կը բովանդակէ բազմաթիւ հակասական հարցադրումներ, որոնք հնարատու չէ լուծել միանգամայն, պատրաստի այս կամ այն մեկնաբանութեանց միջոցով: Ինչպէս՝ կուսակցութիւններու գործելակերպին

ու տեսակէտներուն առհասարակ մօտեցած են կտրուկ որակումներով եւ միանշանակ եզրակացութիւններով, որոնց ուսումնասիրութիւնը հետազօտողին կը պարտադրէ իրողութիւններուն մօտենալ վերապահութեամբ եւ հաւասարակշռուած, հիմնատու նախադրեալներով, որոնք անաչառ հետազօտութեան երաշխիք կու տան: Որպէս առաջին փորձ իր տեսակի մէջ՝ սոյն աշխատութիւնը այս պատճառով չի կրնար հասկնիլ արդէն պատրաստի եզրակացութիւններու: Այս առումով մեր հիմնական նպատակը եղած է լուսարձակի տակ առնել կուսակցութիւններու գործունեութիւնը համայնքի կեանքէն Ներս՝ հայապահպանման գործընթացի ոլորտներուն: Մենք իրատունք չունինք քննադատելու անոնց գործունեութիւնը, մղուած այս կամ այն կուսակցականի գործելակերպին պատճառով, որովհետեւ հակառակ տիրող վերիվայրումներուն, Սփիւռքի համայնքները առ այսօր պահողը եղած են չայ եկեղեցին եւ կուսակցութիւնները՝ իրենց կառոյցներով:

Սփիւռքահայութեան, ի մասնաւորի սուրիահայութեան, հասարակական-քաղաքական պատմութեան հետ ուղղակի կ'առնչուի 1962 թ. լոյս տեսած Ս. Գասպարեանի «Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր» աշխատութիւնը<sup>71</sup>, որ Սփիւռքի պատմութեան քննարկուող ժամանակաշրջանի իրավիճակը լուսաբանող հանրամատչելի ուղեցոյց կարելի է համարել: Այնտեղ արժեքատու տեղեկութիւններ կան, նաեւ Սուրիոյ հայ ազգային կուսակցութիւններու եւ կազմակերպութիւններու, ՀԲԸՄ, հայրենակցական միութիւններու, մամուլի, դպրոցներու եւ մշակութային կեանքի մասին (համառօտ):

Սփիւռքահայութեան պատմութեան տարբեր բնագաւառներու լուսաբանութեամբ հանդէս եկած է Կ. Դալլաքեան իր երեք աշխատութիւններու մէջ<sup>72</sup>: Ինչպէս առաջինը, այնպէս ալ Կ. Դալլաքեանի «Ռամկավար ազատական կուսակցության պատմություն» մենագրութիւնները<sup>73</sup> կառուցուած են արխիւային հարուստ փաստաթուղթերու եւ կուսակցութեան ընդհանուր ժողովներու նիստերէն քաղուած նիւթերու հիման վրայ: Երկրորդ գիրքին մէջ ՌԱԿ-ի գործունեութեան մասին խօսելով առաւել տեղ կը յատկացնէ ազգահաւաքման, պահանջատիրութեան, Սփիւռք-Հայաստան կապերու զարգացման եւ ընդլայնումին, Ներքաղաքական պայքարի սրման տուն տուող պատճառներու վերլուծման,

71 **Գասպարյան Ս.**, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, (Մշակութային կյանքի ուրվագիծ, Երևան, 1962:

72 **Դալլաքյան Կ. Լ.**, Սփյուռքահայ առաջդիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում, Երևան, 1968: Տե՛ս **Նոյնի՝** չայ սփյուռքի պատմություն, Երևան, 1999:

73 **Դալլաքյան Կ. Լ.**, Ռամկավար ազատական կուսակցության պատմություն (1921-1940), գիրք առաջին, Երևան, 1999: **Նոյնի՝** Ռամկավար ազատական կուսակցության պատմություն, գիրք երկրորդ, 1930-ականների վերջերից-1990-ականների սկիզբը, Երևան 2007:

68 **Խուրշուդյան Լ. Ա.**, Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից ետպոլմ, Երևան, 1964:

69 **Սիմոնյան Ն.**, Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, 1968:

70 **Սիմոնյան Ն.**, նշ. աշխ.:



սփիռքահայության պառակտումին՝ Մայր եկեղեցույ ներսը ծայր առած ճգնաժամին զուգահեռ:

Ժողովուրդներու ազգային-ազատագրական պայքարի ուղիները եւ սփիռքահայության մասնակցութիւնը տուեալ երկրի անկախութեան ճանապարհին մղուած պայքարը համեմատաբար արտացոլուած ու լուսաբանուած են շարք մը հայրենի պատմաբաններու աշխատութիւններու մէջ, յիշենք՝ Զ. Կիրակոսեան եւ Ն. Յակոբեանի գործակները<sup>74</sup>, Ն. Յովհաննիսեանի<sup>75</sup> մենագրութիւնը: Հեղինակները հայկական, արաբական, օտարերկրեայ եւ այլ աղբիւրներու հիման վրայ, մանրամասնած են յետպատերազմեան ժամանակաշրջանի արաբական Արեւելքի, մասնատրապէս Լիբանանի եւ Սուրիոյ ժողովուրդներու հակազաղութային, ազգային-ազատագրական շարժումներու ընթացքը, նաեւ հայերու մասնակցութիւնը արաբ ժողովուրդի երկրի անկախութեան համար մղած պայքարին: Հեղինակները պայքարի լոյսին տակ բացայայտած են ազգային կուսակցութիւններու դիրքորոշումը ազատագրական շարժումի վերաբերեալ:

Ֆրանսական մանդատի դէմ մղուած պայքարի ընթացքին արաբները ուզ համոզուեցան, որ պայքարի յաջողութիւնը կախուած էր արաբական ժողովուրդներու միասնութենէն եւ այնուհետեւ միասնութեան գաղափարը առաւել սկսաւ տիրապետող դառնալ Արաբական Արեւելքի ժողովուրդներու գիտակցութեան մէջ: Մեր ուսումնասիրութեան համար յատկապէս արժեքատու եղած են վերոնշեալ հեղինակներու վերլուծութիւնները համայնքի պատմութեան վերաբերեալ:

Ուսումնակրթական հաստատութիւններու գործունէութեան պատմութեան նուիրուած է Յ. Չոլաքեանի «Յուշամատեն Բարէն Եփփէ Ազգային Ճեմարանի», «Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի 1927-2007» եւ «Տարեգրութիւն Հայ Աւետարանական Բեթէլ վարժարանի» աշխատութիւնները<sup>76</sup>: Առաջինին մէջ հեղինակը ճեմարանի կէս դարու պատմութիւնը շարադրելէ անկախ, մանրամասնօրէն կ'անդրադառնայ Սուրիոյ կրթական համակարգի վերիվայրումներուն, նախարարութեան սահմանափակումներուն եւ այլ հարցերու: Ոչ պակաս արժեքատու աշխատութիւն է նաեւ Նազիկ Յարութիւնեանի Սուրիոյ եւ Լիբանանի կրթօճախներուն վերաբերեալ մենագրութիւնը<sup>77</sup>:

Սոյն աշխատանքը գրելու ժամանակ յատկապէս կարեւոր տեղեկութիւններ քաղած ենք Բ. Եղիայեանի (1914-1972) աշխատութենէն<sup>78</sup> եւ Սոյն հեղինակի «Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ» յօդուածաշարքէն<sup>79</sup>:

Սփիռքի համայնքներէն ներս հայութեան տեղաբաշխումի, որբահաւաքման, ազգահաւաքման եւ կազմակերպութիւններու առաջ առաջադրուած բազմապիսի հարցերու վերաբերեալ հարուստ նիւթ կը տրամադրեն Էդուարդ Լ. Մելքոնեանի, «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն»<sup>80</sup> մենագրութիւնը, «Դար մը պատմութիւն, հայ բարեգործական ընդհանուր միութիւն» աշխատութեան, առաջին եւ երկրորդ հատորները<sup>81</sup>, եւ Ա. Ֆիշենկեանի «Յուշամատեն Սուրիահայ Օգնութեան խաչի 90 ամեակի»<sup>82</sup> աշխատութիւնը:

Այնուամենայնիւ, հաւանութիւն չունինք այս աշխատութիւնը ամբողջական համարելու, սակայն, ան կրնայ կարեւոր սկզբնաղբիւր հանդիսանալ յետագային Սուրիոյ հայ համայնքի Նորագոյն շրջանի պատմութեան ուսումնասիրութեան համար: Ի մտի ունենալով, որ Սուրիոյ հայ համայնքի պատմութեան ուսումնասիրութիւնը կրնայ հիմք հանդիսանալ, ընդհանրապէս, հայ ժողովուրդի Նորագոյն շրջանի պատմութեան, նաեւ, Սփիռքահայ համայնքներու ամբողջական պատմութեան ուսումնասիրութեան:

78 **Եղիայեան Բ.**, ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ (1914-1972), Անթիլիաս, 1975:  
 79 **Եղիայեան Բ.**, Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ. «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 1948, թիւ 27; 28; 29; 30; 31; 32; 35; 36; 37; 38; 39; 40; 43; 47; 48:  
 80 **Մելքոնեան Է. Լ.**, Հայկական Բարեգործական Ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005:  
 81 «Դար մը պատմութիւն, հայ բարեգործական ընդհանուր միութիւն», հատոր առաջին, 1906-1940, Գահիրէ-Փարիզ, Նիւ Եորք, 2006: «Դար մը պատմութիւն, հայ բարեգործական ընդհանուր միութիւն, հատոր երկրորդ, 1941-2006», Գահիրէ-Փարիզ, Նիւ Եորք, 2006:  
 82 **Ֆիշենկեան Ա.**, Յուշամատեն սուրիահայ օգնութեան խաչի 90 ամեակի, Հալէպ, 2010:

74 **Կիրակոսյան Զ., Հակոբյան Ն.**, Դաշնակները իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր Արեւելքի երկրներում, Երևան, 1960:  
 75 **Նովհաննիսյան Ն. Հ.**, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958 թթ.), Երևան, 1967:  
 76 **Չոլաքեան Յ.**, Յուշամատեն Բարէն Եփփէ Ազգային Ճեմարանի, Հալէպ, 1997: **Նոյնի**, Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի 1927-2007, Հալէպ, 2007: **Նոյնի**, Տարեգրութիւն Հայ աւետարանական Բեթէլ վարժարանի, Հալէպ, 2016:  
 77 **Նարութիւնյան Ն.**, Լիբանանի եւ Սիրիայի հայկական դպրոցները, Երևան, 2002:



## ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ



# ՍՈՒՐԻԱՅԱՅՈՒԹԻՒՆԸ Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ



## ա. ՍՈՒՐԻԱՅԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

Ա. Աշխարհամարտի աարտեն ետք, Ազգերու Լիկայի ստեղծած յատուկ յանձնաժողովով մշակուած է 1921 թ. Օգոստոսին հրատարակուած մանդատի նախագիծով վերջնականապէս հաստատուած՝ Սուրիոյ եւ Լիբանանի ամբողջ տնօրինումը յանձնուեցաւ ֆրանսական իշխանութեան 24 Յուլիս 1922 թ., Ֆրանսայի ձեռքին կեդրոնացաւ «կառավարման ու ղեկավարման բոլոր համակարգերը, յատկապէս արտաքին քաղաքականություն վարելու իրավունքը»<sup>1</sup>: Աւելին, Ազգերու Լիկայի կողմէ 12 Յունիս 1924 թ. տրամադրուած ինքնութեան վաւերագիրերը եւ Նոյն թուականի ամրան սուրիական քաղաքացիութեան տրամադրումը՝ Սուրիա ապրող հայերու հասարակական-քաղաքական կեանքին մէջ մեծ առաջընթաց էր: Հայերուն թոյլատրուեցաւ մասնակցիլ ընտրութիւններուն, որ արաբներու կողմէ սկզբնական շրջանին միանշանակ չընդունուեցաւ<sup>2</sup>:

Չորս հարիւր տարուան օսմանեան բռնակալներու ստրկութեան ժամանակահատուածին Սուրիան կորսնցուցած էր քաղաքական, պետական կառավարման ամեն իրաւունք եւ կամ զանոնք ձգուած էին գաղութարար թուրք պաշ-

<sup>1</sup> Հովհաննիսյան Ն. Ն., Արաբական երկրների պատմություն, IV, անկախության և ինքնիշխանության դարաշրջան 1918-2005 թթ., Երևան, 2007, էջ 436-438:

<sup>2</sup> Տէս Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2011, էջ 11:



տօնեաներու քմահաճոյքին: Ֆրանսական մանդատի տարիներուն՝ ռազմական, պետական, քաղաքական, դատական, «Սուրիական օրէնսդրութիւն» հասկացութիւնները ամրագրուեցան: Ստեղծուեցան ջուրի, էլեկտրականութեան ընկերութիւններ, առողջապահական, կրթական եւ այլ մարմիններ: Սուրիոյ եւ Լիբանանի մէջ պաշտօնական լեզուներ համարուեցան ֆրանսերէնն ու արաբերէնը:

Լիկայի որոշումով Ֆրանսան պարտաւոր էր ներքին որոշ բարենորոգումներ կատարել, իսկ ներքին կառավարման համակարգի կարգ մը ոլորտներէն ներս միայն կրնային ներգրաւուիլ տեղացիները, որոնց առաջին տեղը վերապահուած էր հայերուն, որպէս ղեկավար, միջնորդ եւ թարգման: Բայց եւ այնպէս արտաքին, ռազմական եւ այլ կարեւոր պաշտօնները վերապահուած էին միայն ֆրանսացի պաշտօնեաներուն:

Սուրիան դուրս գալով օսմանցիներու լուծէն չկրցաւ քաղաքական անկախութիւն ձեռք բերել, որովհետեւ այդ ժամանակահատուածը եւս ոչինչով տարբերեց նախորդէն, հակառակ տեղի ունեցած կարգ մը բարեփոխումներուն, որոնց իրականացումը կախեալ էր այս պարագային շրջանի ֆրանսացի յանձնակատարներու (կոմիսարներու) քմահաճոյքէն:

Այս ժամանակաշրջանին ֆրանսական իշխանութեան ներքոյ, Սուրիոյ տարածքին կը ստեղծուին հինգ պետութիւններ՝ Լիբանանի, Դամասկոսի, Նալէպի, Ալաուիներու եւ Ճէպէլ Տրուզի (Տրուզներու լեռ) եւ Ալեքսանտրէի ինքնավար մարզ<sup>5</sup>:

Ֆրանսական մանդատի օրով Սուրիան ուներ ֆրանսական մէկ բանակ, ուր ներգրաւուած էր հայ տարրը, որպէս զինուոր, սպայ եւ հրամանատար: Ան երբեք չդաւաճանեց տեղացիին եւ 1945 թ. Սուրիոյ անկախութենէն ետք, որպէս լիիրաւ քաղաքացի անցաւ սուրիական բանակ, որպէս մարզուած եւ փորձառու բանակային եւ մեծ դեր խաղաց սուրիական պետական բանակի կազմաւորման մէջ<sup>6</sup>:

Այնուամենայնիւ, պէտք է ըսել, որ Սուրիոյ մէջ քաղաքական կեանքը ձեւաւորուեցաւ (սկիզբ առաւ) ֆրանսական մանդատի տարիներուն: Այդ ժամանակահատուածին զգալի թիւով տեղական կուսակցութիւններ ծնունդ առին, որոնցմէ ամենանշանաւորը «Ազգային Դաշինքը»-ն էր (كتلة الوطنية)- Քութլա ալ-վաթանիա), որ հակադրուած էր ոչ միայն ասանդական ուժերուն, անկախ դաշ-

3 Տե՛ս, **Սամսոնյան Ն.**, Բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում, ռազմական հեղաշրջումների ֆեյնոմենը, Երևան, 2013, էջ 27-28: Նաեւ՝ **Նոյնի**, Հայ ռազմական գործիչների դերը սիրիական բանակում (1946-1970 թթ.), «Մերձավոր Արևելք պատմություն, քաղաքականություն, մշակույթ», հոդվածների ժողովածու, Երևան, 2009, էջ 245:

4 **Սամսոնյան Ն.**, Բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում, էջ 27-30:

նակից գործիչներուն, այլ նաեւ մանդատի իշխանութիւններուն: Դաշինքի ստեղծումն ու հակադրութիւնը ինքնաճանաչման ու ինքնահաստատման ճանապարհով, որպէս ներքին պոռթկում, ձեւաւորուած էր այդ շրջանին չորս հարիւր տարուան ստրկութենէն ետք: Այդ սաղմնաւորուելու սկսաւ մանդատի շրջանին եւ շարունակուեցաւ ֆրանսացիներու հեռացումէն ետք եւս:

Ֆրանսայի կողմէ նախաձեռնուած միջոցները սուրիացիներուն բորբոքած տրամադրութիւնները հանդարտեցնելու՝ յանգեցան սուրիական հանրապետութեան նախաստեղծումին, որուն որպէս արդիւնք 7 Յունիս 1932 թ. խորհրդարանի նիստին Սուրիոյ նախագահ ընտրուեցաւ Մուհամմադ Ալի ալ-Ատիպը<sup>7</sup>:

1930-ական թուականներու առաջին կէսը անցաւ քաղաքական ու վարչական վերիվայրումներով, յատկապէս ֆրանսական մանդատի ներքոյ գտնուող երկիրներուն համար: Ֆրանսական իշխանութիւնները կը ցանկային տեղական ուժերու հետ ամրապնդել իրենց յարաբերութիւնները բանակցութիւններու եւ կառավարական «լծակներով». սակայն անհնար էր, որովհետեւ մէկ կողմէ Սուրիոյ անդամահատուած (մասնատուած) ըլլալը փոքր պետութիւններու եւ մէկ ամբողջութիւն չներկայացնելը, իսկ միւս կողմէ նոր ձեւաւորուած քաղաքական կուսակցութիւններու ըմբոստութիւնը խոչընդոտ կը հանդիսանային ֆրանս-սուրիական բանակցութիւններուն<sup>8</sup>: Ֆրանսան բանակցութիւններու ճամբով կ'ուզէր կնքել այնպիսի պայմանագիր մը, որով ապահովէր Ֆրանսայի «քաղաքական, ռազմական եւ տնտեսական տիրապետութեան դիրքերը» Սուրիոյ մէջ, նոյնիսկ մանդատի վերացումէն ետք ալ<sup>9</sup>: Ֆրանսան չէր ձգտեր տարածքային միաւորման գաղափարին:

1934-էն 1936 թ.-ի սկիզբը անցաւ համընդհանուր ցոյցերով եւ գործադուլներով, շարժումը տարածուած էր՝ Դամասկոսի, Նալէպի, Համայի եւ Հոմսի մէջ<sup>10</sup>:

20 Փետրուար 1936 թ. սուրիական պատուիրակութեան կողմէ ֆրանսացի զլխաւոր կոմիսարին (յանձնակատարին)՝ Տը Մարթէլին, յանձնուած յուշագիրին մէջ նշուած էր սուրիական կողմի պահանջները, սակայն կոմիսարը (յանձնակատարը)՝ մերժեց եւ կառավարութեան հրաժարականը պահանջեց ու կազմեց ժամանակաւոր կառավարութիւն Մուհամմատ Աթա ալ-Այուպի զլխա-

5 **Հովհաննիսյան Ն. Ն., Սարգսյան Ն. Ս.**, Սիրիան անկախության համար մղված պայքարում (1917-1946 թթ.), Երևան, 1975, էջ 167-171:

6 **Հովհաննիսյան Ն. Ն.**, նշ. աշխ., էջ 452-453:

7 Ֆրանսայի կողմէ առաջադրուած պայմանագրի նախագիծին դէմ էին «Քութլա ալ-վաթանիա» կուսակցութեան ներկայացուցիչներն ու ժողովուրդի զգալի մասը: «Սակայն վարչապետ Նակի ալ-Ազմի զլխավորած սուրիական կառավարության կողմէ պայմանագրի ստորագրությունը համարվեց դավաճանություն և առաջ բերեց ժողովրդի ցատումը»: Այլ խօսքով՝ «Ֆրանսիական իշխանությունները վճռականորեն դեմ էին միասնական Սիրիա ստեղծելու գաղափարին»: Տե՛ս **Հովհաննիսյան Ն. Ն.**, նշ. աշխ., էջ 453:



տրոթեամբ, որուն դեմ հակադրուեցաւ «Քուբլա ալ-վաթանիա» կուսակցութիւնը: Ի վերջոյ Ֆրանսան հասկցաւ, որ անհնար է բռնութեան ճամբով Սուրիոյ մէջ տեղի ունեցած յուզումներուն վերջ տալ, ուստի համաձայնեցաւ զիջումներ կատարել եւ բանակցիլ «վաթանի»-ներուն հետ: Նոյն թուականի Մարտի 2-ի, «Քուբլա ալ-վաթանիա»-ն կը հրապարակէ չորս կետերէ բաղկացած եւ Տը Սարթէլին ու Հաշիմ ալ-Աթասիի կողմէ ստորագրուած համաձայնութեան բնագիր: Փարիզի մէջ կայացած ֆրանս-սուրիական բանակցութիւնները չէին բաարարեր Սուրիոյ կողմին եւ այդ իսկ պատճառով առաջընթաց չարձանագրեցին:

1936 թ. Յունիսին Ֆրանսայի մէջ փոփոխութիւն տեղի կ'ունենայ: Խորհրդարանական ընտրութիւններուն ընթացքին իշխանութեան գլուխ կ'անցնի Ֆրանսայի ժողովրդական ճակատը, որուն մաս կը կազմէին ընկերվարականները (սոցիալիստական), համայնավարականները եւ արմատականները: Նոր խորհրդարանական իշխանութեան յաղթանակը կ'ոգտորէ Սուրիոյ «վաթանի»-ները, եւ բանակցութիւններու որպէս արդիւնք 9 Սեպտեմբեր 1936 թ. Սուրիոյ եւ Ֆրանսայի միջեւ նախնական քայլեր կը ձեռնարկուին «բարեկամութեան եւ օգնութեան» պայմանագիրի ստորագրութեան գծով, որով Ֆրանսան պիտի ճանչնար Սուրիոյ անկախութիւնը եւ երեք տարուան ընթացքին՝ 1939 թ. պիտի պարտաւորուէր հրաժարիլ մանդատէն եւ օգնել անկախ Սուրիոյ անդամակցելու Ազգերու Լիկային եւ ճանչնալ Սուրիան, որպէս միասնութիւն՝ Ալաուիթներու պետութեան (Լաթաքիա) եւ Ճեպէլ Տրուզի միաւորումով<sup>8</sup>:

Ֆրանս-սուրիական բանակցութիւնները մեծ ոգետրութիւն ստեղծած էին նաեւ Սուրիոյ հայկական շրջանակներէն ներս, որոնք իրենց լուման դրած էին ազգային-ազատագրական պայքարի ճանապարհին: Ֆրանս-սուրիական պայմանագիրի իրականացումը պիտի նպաստէր Սուրիոյ տարածքային ամբողջականութեան պահպանումին ու վերջապէս անկախութեան:

Սակայն Սուրիոյ նորանկախ պետութեան ծրագիրը չիրականացաւ, որովհետեւ Սուրիոյ նախագահն ու խորհրդարանը բացայայտեցին Ֆրանսայի վարած երկդիմի քաղաքականութիւնը՝ ֆրանս-թուրքական համաձայնագիրի վերաբերեալ, եւ Ալեքսանտրէի սանճագը<sup>9</sup> Թուրքիոյ կցումով, 1939 թ. Յունուարի Փարիզի խորհրդաժողովով, Սուրիան անդամահատուեցաւ, իսկ այդտեղ

8 **Հովհաննիսյան Ն. Ն.**, նշ. աշխ., էջ 457:

9 20 Հոկտեմբեր 1921 թ. Անգարայի ֆրանսա-թուրքական պայմանագիրով Ալեքսանտրէի ինքնավար սանճագը հաստատուած էր Հալէպի պետութեան իրաստութեան ծիրէն ներս, որու 7-րդ յօդուածով Ալեքսանտրէի շրջանին կը հաստատուէր յատուկ կանոնակարգ (ռեժիմ), որով թուրք բնակիչները պիտի օգտուէին իրենց ցեղին ընձեռած անհրաժեշտ առանձնաշնորհումներէն: Տես **Թովուզյան Ն. Խ.**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների

ապրող հայերը անգամ մը եւս գաղթականի ցուպը իրենց ձեռքը դուրս եկան տարածքէն՝ Նոր ջարդերէն խուսափելու:

Սուրիոյ մէջ տիրող տնտեսական եւ քաղաքական կացութեան մասին Սուրիահայ Օգնութեան Խաչի Շրջանային վարչութիւնը նամակով կը տեղեկացնէ Ամերիկայի Հայ Կարմիր Խաչի Կեդրոնական վարչութեան, ուր կ'անդրադառնայ Ալեքսանտրէի սանճագի հարցին նաեւ: Կը շեշտէ թուրքերու եւ հովանաւորող պետութեան ընդհանուր ձգտումները՝ շարունակ խռովութիւններու մէջ պահել շրջանը եւ բնակչութիւնը մատնել անգործութեան ու թշուառութեան: Ան կը յայտնէ, որ սանճագի արաբ-թուրք եւ ֆրանսական մրցակցութիւնը ճզնաժամային եւ վտանգաւոր կացութիւն ստեղծեր էր եւ խուճապի մատնած ժողովուրդը, որու հետեանքով քրիստոնէայ ընտանիքները սկսած էին հեռանալ այդ շրջաններէն՝ դէպի Սուրիա կամ Լիբանան: Խօսելով Սուրիոյ հայ գիւղախումբերուն ողբալի վիճակի մասին կը նկարագրէ հայ գիւղացիութեան վիճակը «լքուած եւ օրական հացի կարօտ: ...հողագործական աշխատանքներու բացարձակ քանդումին հետեանքով, առնուազն Նորութիւնը մօտալուտ եւ ամենաստոյգ վտանգն է այդ երկու գիւղախումբերու հայ ժողովուրդի համար»<sup>10</sup>:

1939 թ. Ապրիլ ամսուն սանճագի ճակատագիրը արեւի ակնյայտ ու մտահոգիչ կը դառնայ: Դէպքերը շատ արագ կը զարգանան եւ «ամէն Նոր օր, Նոր անակնկալի ու կացութեան առջեւ կը դնէ»<sup>11</sup>: «Սանճագի Թուրքիոյ կցումը աքթ մըն էր, ուր անկարելի կը դարձնէին հայերու բնակչութիւնը Հաթայի սահմաններէն ներս եւ տարերային կամ զանգուածային արտագաղթ մը անխուսափելի է, թէեւ որեւ (իմա՝ որեւէ) ձեւի արտագաղթ հնարաւոր պիտի չըլլայ առանց հովանաւոր պետութեան օժանդակութեան: Արգիլուած է 18-30 տարեկաններու որեւէ ձեւով դուրս գալը հաթայէն»<sup>12</sup>:

պատմություն (1841-1946), Երևան, 1986, էջ 234: Նաեւ՝ **Քայրամյան Ա. Ա.**, Միջազգային դիվանագիտությունը և իրավաքաղաքական դրությունը Ալեքսանտրէի սանճագում (Հաթայ) (1938 թ), սեպտեմբեր-1939 թ. հոկտեմբեր, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 9., Երևան, 1967, էջ 62:

1924 թ., սուրիական պետութեան հիմնումով սանճագը վարչականօրէն կը կապուի Սուրիոյ, իբրեւ անոր մէկ մասնիկը: 1930 թ. Մայիս 30-ին գերագոյն կոմիսարի հրամանագիրով Ալեքսանտրէի յատուկ վարչական վիճակ կը հաստատուի Սուրիոյ պետութեան կազմին մէջ: Տես **Հովհաննիսյան Ն. Ն., Սարգսյան Ն. Ս.**, նշ., աշխ., էջ 181-182: Տես նաեւ **Չուլաքեան Յ.**, Քեսապ, հ. Ա., Հալէպ, 1995, էջ 127:

1923-1924 թթ. այնտեղ հաստատուած հայերու մեծ մասը գաղթած էին Կիլիկիայէն՝ Ալեքսանտրէի շրջաններէն 6.500, Մուսա լեռան գիւղերէն՝ 300, Պելլան եւ գիւղերէն՝ 1.800, Գըրը խան եւ գիւղերէն՝ 1.500, Անտիոք եւ քաղաքի մէջ՝ 400, ընդամենը 17.800 հայեր:

10 Տես ՍՕԽ-ի Կեդրոնական (Շրջանային) վարչութեան արխիւ, Նամականիի տետրակ 1938-1940 տարեշրջան, 7 Յուլիս 1938 թուականի նամակ, թերթ 19-20:

11 ՍՕԽ-ի Կեդրոնական (Շրջանային) վարչութեան արխիւ, Նոյն տեղը:

12 Նոյն տեղը:



Շուրջ 27.000 հայ կը բռնէ արտագաղթի ճամբան եւ կը նախընտրեն ապաստան գտնել Սուրիա եւ Լիբանան<sup>13</sup>: Սուրիոյ մէջ անոնք մեծ մասամբ բնակութիւն կը հաստատեն՝ Նալէպ (3.000 անձ), Լաթաքիոյ ծովեզերեայ՝ Պասիթ (6.000 անձ), Թարթուս (3.500 անձ), Նաեւ Ռաս Ուլ Այն եւ Մանթար (Լիբանան)<sup>14</sup>:

Արդարեւ, Ֆրանսան այս քայլով ոչ միայն հրաժարած էր վաւերացնել 1936 թ. ֆրանս-սուրիական պայմանագիրը, այլեւ խախտած Ազգերու Լիկայի որոշումը, որով «կ'արգիլուէր Սուրիոյ տարածքը կամ անոր մէկ մասը զիջիլ կամ յանձնել որեւէ օտար պետութեան»<sup>15</sup>: Աւելին, Ֆրանսան կը ցանկար թիկունքին ունենալ դաշնակից մը ընդդէմ Գերմանիոյ, որ կը սպառնար Ֆրանսայի գոյութիւնը:

Ֆրանսայի պայմանագիրի խախտումով երկրի նախագահն ու կառավարութիւնը կը հրաժարին, խորհրդարանը կը լուծուի եւ իշխանութիւնը կրկին կ'անցնի մանդատի իշխանութեան ձեռքը: Վերջինս երկրի կառավարութեան փոխարէն կը նշանակէ (կը ստեղծէ) տնօրէններու խորհուրդ:

Սակայն ֆրանս-թուրքական պայմանագիրով սանճագի վերջնական յանձնումը Թուրքիոյ ոչ միայն արաբական, այլեւ հայկական շրջանակներէն ներս լուրջ մտահոգութիւն կ'առաջացնէ: Ինչպէս Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, այնպէս ալ Բերիոյ թեմի Առաջնորդ՝ Տ. Արտաւազդ արք. կը զբաղի Նալէպ հաստատումը գաղթականներով:

Այստեղ կարեւորութեամբ նշենք, որ մինչեւ 1939 թ. սանճագի պարպումը, Ալեքսանտրէթը մաս կը կազմէր Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերէն Անտիոքին (Ալեքսանտրէթի շրջան, Պէլլանի լեռնային գիւղերը, Գըրգ Խանի դաշտային գիւղերը, Անտիոք, Մուսա Տաղ՝ վեց գիւղեր). միա թեմերն էին՝ Նալէպի (Բերիոյ), Լիբանանի, Դամասկոսի, Քեսապի եւ Լաթաքիոյ շրջանը, Կիպրոսի:<sup>16</sup>

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութենէն ներս այս առնչութեամբ, 4-5 Ապրիլ 1938 թ., ժողով կը գումարուի, որուն ընթացքին օրակարգի նիւթ կը դառնայ Լաթաքիոյ Անտիոքի եպիսկոպոսական աթոռի վարչական գոյավիճակը: Բայց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսական տեղապահ Տ. Պետրոս արք. Սարաճեանի հրաւերով կայացած 1939 թ., 18-20 Դեկտեմբերին, Կիլիկիոյ կաթողիկոսութեան եպիսկոպոսական ժողովը կ'որոշէ Լաթաքիա-Քեսապ շրջանը առժամապէս կցել Բերիոյ թեմին՝ Դամասկոսի թեմի փոխարէն<sup>17</sup>:

Այսպիսով 1939-էն ետք, Բերիոյ թեմը իր չորս գլխատու շրջաններով՝ բաժնուած 39 քաղաքներու եւ ամաններու, կը պարզէր հետեւեալ պատկերը.

Բերիոյ թեմ 1939թ. <sup>18</sup>	հայ առաքելական	հայ կաթողիկէ	հայ աւետարանական	ընդհ.
Նալէպ քաղաքը արտարձաններով	50.000	2.000	3.000	55.000
Նալէպ քաղաքի ամանները (Ազէզ, Արաբ Փունար, Ճարապլուս, Աֆրին, Այն էլ Արուս, Ամուտա, Պապ, Մունպուճ, Այն Տիլար):	5.000	-	-	5.000
Հիւսիսային Սուրիա-Ճեզիրէի նահանգ (Գամիշլի, Նասիլէ (Նասաթէ), Ռաս Ուլ Այն, Տեր Ձօր, Տերպէսիէ):	12.500	-	-	12.500
Քեսապ եւ Լաթաքիոյ շրջանը	6.250	-	-	6.250

Դամասկոսի թեմ 1939թ. <sup>19</sup>	թրապակներ
Դամասկոս քաղաք	12.000
Հոմս	1.250
Համա	1.000
Դամասկոսի հիւսիս (Ճեպէ Տրոզի՝ Սուեիա)	1.000
ընդհ	15.250

Վարդան եպս. Տեմիրճեան կը նշէ, որ 1939 թ. Բերիոյ թեմը «կը հաշուէր 65.176 մարդ (53.739 եւ 11.437 շունչ սանճագէն): Թեմին մաս կը կազմէին՝  
-Նալէպ, Ազէզ, Աֆրին, Արաբ Փունար.

տարի, թիւ 30, 24 Յուլիս 1948, Նիւ Եորք, էջ 703:  
17 **Տեմիրճեան Վ. եպս.**, նշ. աշխ., էջ 327-328: 1938 թ. սանճագի դէպքերու զարգացման խնդիրով մտահոգուած Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը 4-5 Ապրիլ 1938 թ. Անթիլիասի մէջ կայացած ժողովին ընթացքին, ուր այլ հարցերու կողքին կը քննարկուէր Լաթաքիոյ եւ շրջակայ գիւղերու հարցը, կ'անդրադառնայ Նաեւ այդ թեմի իրավիճակի մասին եւ ժողովը կ'որոշէ Լաթաքիան եւ շրջակայ քանի մը գիւղերը կցել Դամասկոսի առաջնորդական վիճակին: Տե՛ս **Տեմիրճեան Վ. եպս.**, նշ. աշխ., էջ 322, եւ «ձասկ» ամսագիր, Մայիս 1938, Անթիլիաս, էջ 73:  
18 «Նայաստանի կոչնակ», ԽՇ. տարի, թիւ 30, 24 Յուլիս 1948, Նիւ Եորք, էջ 703:  
19 «Նայաստանի կոչնակ», ԽՇ. տարի, թիւ 31, 31 Յուլիս 1948, Նիւ Եորք, էջ 729:

13 **Տեմիրճեան Վ. եպս.**, Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, Ա. հատոր, Անթիլիաս, 1980, էջ 320-322: «Ազգակ» օրաթերթ, թիւ 176 (12.9.52), 30 Սեպտեմբեր 1974, Պէյրութ:

14 **Տեմիրճեան Վ. եպս.**, նշ. աշխ., էջ 325: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու բաշխումն ու անոնց կառավարման գործը երջանկայիշատակ Սահակ վշտակիր կաթողիկոսի մտահոգութիւններէն կարեւորագոյնը եղած էր: Այս իսկ պատճառով 1932 թ. Մարտի 8-14 կայացած Եպիսկոպոսական բ. ժողովի որոշումով Լաթաքիոյ կամ Լաուղիկէի թեմին կը միացուին Բերիոյ թեմին պատկանող Ալեքսանտրէթի, Անտիոքի եւ Սուեիոյ-Քեսապի բոլոր շրջանները եւ թեմը կ'անուանուի պատմական հին անունով՝ «Առաջնորդարան Անտիոքի թեմին»: Դամասկոսի թեմին կը միացուին Բերիոյ թեմին ենթակայ Հոմսի եւ Սելեմիէի շրջանները: Իսկ Բերիոյ թեմը ընդարձակուելով անոր իրաւասութեան սահմաններու մէջ կը ներգրատուի ողջ Հիւսիսային Սուրիոյ Եփրատ գետի հովիտի շրջանը. Տե՛ս, **Եղիայեան Բ.**, Ժամանակակից Պատմութիւն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ (1914-1972), Անթիլիաս, 1975, էջ 391 եւ **Տեմիրճեան Վ. եպս.**, նշ., աշխ., էջ 319, 475:

15 **Նովիաննիսյան Ն. Ն.**, նշ. աշխ., էջ 437:

16 **Եղիայեան Բ.**, Նայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Դ. մաս, «Նայաստանի կոչնակ», ԽՇ.



Աղյուսակ 1<sup>23</sup>

քաղաք	1932	1933	1934
Հայկա եւ շրջանները	35.700	35.811	37.160
Ալեքսանտրեթ	4.400	-	-
Ազգ	1.246	1.350	1.415
Արար Փոնար	1.240	1.317	872
Աֆրին	184	210	267
Ապտալ շէօյիկ	236	-	-
Այնտիվար	182	180	183
Գամիշլի եւ շրջանները	2.985	3.800	3.900
Գըրգ խան	2.028	-	-
Աթըզ	158	-	-
Եագուպիե	426	381	376
Ճըսր Շուղուր (Ճիսր-Շուղուր)	102	90	53
Թէլ Ապիաթ	380	440	431
Համա	113	-	-
Հոմա	570	-	-
Սելեսիե	124	-	-
Մենպիճ (Մունպուճ)	188	157	157
Նարկիզիկ	133	-	-
Թինա	52	55	57
Տերիք	243	551	649
Րազգա	327	280	338
Ճարապլուս	1.350	868	785
Տեր Զօր	344	868	455
Իհիանիե	195	-	-
Հայաշէն	220	-	-
Համամ	78(ս)	-	-
Հասիչէ	410	450	330
Պապ	110	82	69
Այն էլ Արուս (Այն ալ-Արուս)	-	209	193
Պէլյան	523	-	-
Սովուզ Օլուզ	480	-	-
Սովուզ Սու	176	-	-
Չաթալ Թէփե	67	-	-
Ռասս էլ Այն (Ռասս Ուլ Այն)	276	288	298
Մէլտան Էքպէզ	-	-	113
Թէլ Պրագ	-	-	-
Թէլ Սեմէն	-	-	-
Գուպր պիթ	-	-	-
Վանիկ	-	-	-
Տէրպէսիե	-	-	-
Ամուտա	-	-	-
Րաճօ	-	-	-
Ընդհանուր	55.246 (3)	47.387	48.101

23 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 25:

-Ամուտա, Գամիշլի, Այն Տիվար, Գուպըր պիթ, Հասիչէ, Թէլ Ապիատ.  
 -Եագուպիե, Ճըսր եւ Ընկեզիկ (Այն Արուս, Թէլ Պրագ, Ճարապլուս, Լաթաքիա եւ շրջակայքը՝ Արամօ, Դընեսիե, Քեսապ, Մէլտան Էքպէզ, Տէրպէսիե, Տերիք (եւ շրջակայք), Տեր Զօր, Ռասս Ուլ Այն եւ Րազգա<sup>20</sup>։

1940 թ. Յուլիսին Հայկաի Գաւառական ժողովն ու Ազգային իշխանութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կը տեղեկացնեն Բերիոյ թեմի առաջնորդ Արտաւազդ արք. Սիրմէանի հրաժարականի մասին: Յուլիսին կաթողիկոսութենէն ներս գումարուած նիստին թեմի Առաջնորդական տեղապահ կ'ընտրեն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբաններէն հոգեշնորհ Տ. Զարեհ վրդ. Փայասլեանը (1940-1956 թթ.): 8 Օգոստոս 1940 թուակիր եւ թիւ 2 թուահամար սրբատառ կոնդակով կը վաւերացուի ընտրութիւնը: 1943 թ., թեմէն ներս իր ունեցած ծառայութեան համար Գաւառական ժողովը զայն կ'ընտրէ թեմի առաջնորդ<sup>21</sup>, որուն առաջնորդական տարիները Բերիոյ թեմէն ներս պիտի ըլլային եւ արդիւնաւետ, եւ միաժամանակ բարդ՝ տիրող քաղաքական, հասարակական-տնտեսական լարուած ու դժուարին պայմաններու պատճառով: Քառասունական թուականներուն Թեմը կը հաշուէր 66.173 անձ, ունէր 16 եկեղեցի, 4 մատուո եւ 29 քահանայ: Իսկ Դամասկոսի թեմը՝ 12.785 անձ, մէկ եկեղեցի, 3 մատուո եւ 5 քահանայ<sup>22</sup>:

Ստորեւ կը ներկայացնենք 1932-1938 թթ. սուրիահայ համայնքի տեղաբաշխումը: (Տէն աղիւսակ 1)

20 Տեմիրճեան Վ. Եպս., նշ. աշխ., էջ 328:  
 21 Տեմիրճեան Վ. Եպս., նշ. աշխ., էջ 332-344:  
 22 «Հասկ», Մայիս, 1950, Լիբանան, էջ 135: «Հասկ», Նոյեմբեր, 1950, Լիբանան, էջ 352:



Աղիասակ 1

քաղաք	1935	1936	1937	1938
Հալեպ եւ շրջանները	37.890	38.768	39.512	40.858
Ալեքսանտրեթ	-	-	-	-
Ազեզ	1.553	1.579	1.493	1.351
Արաբ Փունար	1.200	665	695	1.413
Աֆրին	280	260	250	305
Ապտալ շտյոկ	-	-	-	-
Այնտիվար	177	155	-	-
Գամիշլի եւ շրջանները	3.915	3.900	3.920	4.310
Գըրզ խան	-	-	-	-
Աթըզ	-	-	-	-
Եագուպիե	365	383	460	460
Ճըսր Շուղուր	98	54	101	92
Թէ Ապիաթ	441	436	436	412
Համա	-	-	-	-
Հոմա	-	-	-	-
Սելեմիե	-	-	-	-
Մենայիճ (Մունալուճ)	157	123	130	121
Նարկիզլիկ	-	-	-	-
Թինա	-	51	-	-
Տերիք	453	451	785	753
Րազգա	303	339	239	290
Ճարապլուս	741	809	1060	1048
Տեր Ջօր	350	433	483	477
Րիհանիե	-	-	-	-
Հայաշէն	-	-	-	-
Համամ	-	-	24	-
Հասիչե	363	362	313	360
Պապ	70	75	65	60
Այն էլ Արուս	200	192	207	84
Պէյլան	-	-	-	-
Սովուզ Օլուզ	-	-	-	-
Սովուզ Սու	-	-	-	-
Չաթալ Թեփե	-	-	-	-
Ռաս էլ Այն (Ռաս Ռու Այն)	289	324	320	374
Մէյտան էրպեզ	166	147	156	187
Թէլ Պրազ	94	80	50	147
Թէլ Սեմէն	43	-	-	-
Գուպր պիթ	30	-	160	235
Վանիկ	97	98	-	-
Տերպէսիե	-	-	79	157
Ամուտա	-	-	-	120
Րաճօ	-	-	25	25
Ընդհանուր	49.275	49.684	50.963	53.639

**բ. Բ. ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՈՒՈՂ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՐՏԸ**

1939 թ., Բ. Աշխարհամարտի սկիզբը ֆրանսական իշխանությունները, որոնք կորսնցուցած էին իրենց հեղինակությունը տարածաշրջանի մէջ, Սուրիա կը մտցնեն արտակարգ դրութիւն: Անոնք կը դիմեն շարք մը սահմանափակումներու, իրենց կողմէ նորանշանակ տնօրէններու խորհուրդի՝ Պահիճ Խաթիպի միջոցով կը ցրեն խորհրդարանը, կը հեռացնեն բոլոր նախարարները եւ կառավարութեան փոխարէն կը ստեղծեն պետական քարտուղարութիւն: Բացի այս, կը կատարուին շարք մը հակաժողովրդական քայլեր՝ կ'արգիլուի առաջադեմ կազմակերպութիւններու գործունէութիւնը, կը լուծուի կուսակցութիւններու գործունէութիւնը եւ աշխատանքէ կը դարձեցնեն ու կը ձերբակալեն անոնց ղեկավարները, նաեւ մեծ վնաս կը հասցնեն երկրի տնտեսութեան եւ այլն:

1940 թ. Յունիս 14-ին Ֆրանսան պատերազմի ընթացքին պարտութիւն կը կրէ եւ մասնակիօրէն կը գրաւուի հիթլերական Գերմանիոյ կողմէ: 1940 թ. Օգոստոսին Սուրիա եւ Լիբանան կը ժամանէ զինադադարի գծով իտալական յանձնաժողովը՝ անձնատիրութեան պայմաններուն հետեւելու եւ ռազմական գոյքի ցուցակագրումը կատարելու, միաժամանակ հող նախապատրաստելու Սուրիոյ եւ Լիբանանի մէջ Ֆրանսային փոխարինելու համար: Այդ, Գերմանիոյ եւ Իտալիոյ Մերձաւոր Արեւելք թափանցելու լայն հնարարութիւն պիտի տար, ինչ որ լրջօրէն կ'անհանգստացներ Անգլիան: Ֆրանսայի գրաւումը Գերմանիոյ կողմէ մտավախութիւն կը ստեղծէ Սուրիոյ մէջ գտնուող ֆրանսական զօրքերուն նաեւ: Իսկ ֆրանսական զօրքերու դուրս գալով Անգլիան կը ցանկար փոխարինել ֆրանսացիներուն: Այսպիսով, ֆաշիստներու ներթափանցումը Սուրիա եւ Լիբանան, կը սպառնար Անգլիոյ դիրքերը Մերձաւոր եւ Միջին Արեւելքի մէջ:

Միաժամանակ ետք Անգլիան կը ճանչնայ Ֆրանսայի յատուկ շահերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, եւ 1941 թ. Յունիսի 8-ին Անգլիոյ եւ «Ազատ Ֆրանսա»-ի զօրքերը միատեղ կ'անցնին յարձակման եւ Լեանտ մտնելով՝ կ'ուզին կանխել ֆաշիստական Գերմանիոյ կողմէ Մերձաւոր Արեւելքը գերմանական յենակետ դարձնելու ճամբուն ընթացքին Սուրիոյ եւ Լիբանանի նուաճման յառաջխաղացքը: Անոնք Սուրիա եւ Լիբանան մտնելով կը խոստանային միջոցներ ձեռնարկել՝ Սուրիոյ եւ Լիբանանի ֆրանսական իշխանութեան (մանդատի) վարչակարգի վերացման. «Սիրիացիներ և լիբանանցիներ, ես գալիս եմ վերջ դնելու մանդատին: ... Դուք այս պահից անկախ և սուվերեն ժողովուրդ եք»:

1 **Նովհաննիսյան Ն. Ն.**, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում, (1939-1958 թթ.), Երևան, 1967, էջ 96-97:  
 2 «Եփրատ», օրաթերթ, թիւ 261, 20 Ապրիլ 1946, Հալեպ:  
 3 **Թովուզ յան Ն. Ն.**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, էջ 241: **Նովհաննիսյան Ն. Ն.**, Արաբական երկիրների պատմություն, IV, Նշ. աշխ., էջ 465:



Միացեալ բանակը, սակայն չէր շտապեր գործնական քայլերու դիմել: Դեռ աւելին, «Ազատ Ֆրանսա»-ն՝ լրիւ իր վրայ կը վերցնէ մանդատային իշխանութեան «գործառնութիւն»-ը: Ֆրանսացիները իրենց ձեռքը կը կեդրոնացնեն ողջ քաղաքական իշխանութիւնը, Սուրիոյ եւ Լիբանանի մաքսերու գանձումը, որոշ տնտեսական եւ նիւթական հարցերը, տեղական բանակը (նաեւ իրենց տնօրինութեան տակ կը պահեն «յատուկ զօրամասեր»<sup>4</sup>), ներքին անվտանգութիւնը, գրաքննութիւնը եւ այլն:

Հակառակ Ֆրանսայի վիշիական զօրքերու դիմադրութեան, դաշնակից բանակները տեղական ժողովուրդի աջակցութեամբ յաղթանակ կը տանին եւ 1941 թ. Յուլիսի 14-ին Ակկրայի մէջ կը կնքեն հաշտութեան համաձայնագիր, որուն համաձայն դաշնակից զօրքերը կը նուաճեն Լիբանանը, իսկ վիշիական զօրքերը կը հեռանան այնտեղէն: «Ազատ Ֆրանսա»-ի բանակին կը միանան վիշիական բանակին ծառայող սպաներէն ու զինուորներէն մաս մը, ինչպէս նաեւ սուրիացի երիտասարդներէն շատեր<sup>5</sup>:

Թէեւ Նոյն թուի Սեպտեմբեր 27-ին Սուրիան ձեւականօրէն հռչակուած էր անկախ պետութիւն, սակայն Սուրիոյ ազգային-ազատագրական ուժերը շատ լաւ կը հասկնային, որ տրուած անկախութիւնը անուանական էր, եւ բնակչութեան ճնշող մեծամասնութիւնը կը ձգտէր ազատիլ օտար տիրապետութենէ, ինչ որ խիստ դժգոհութիւն կրնար յառաջացնել երկիրէն ներս:

Իրօք, ժողովրդական ուժերը կը պահանջէին վերականգնել 1930-ական թուականներու սահմանադրութիւնը եւ կատարել խորհրդարանական ընտրութիւններ այդ համարելով Սուրիոյ ձեւական անկախութիւնը իրական դարձնելու քայլերէն մէկը: Ֆրանսական իշխանութիւնները շուտափոյթ ընտրութիւններ կատարելու եւ սահմանադրութիւնը վերականգնելու վերաբերեալ առաջարկներ լսել անգամ չէին ուզեր: Նոյնիսկ զօրավար Շարլ Տը Կոլ<sup>6</sup>, այցելելով Լեանտի երկիրներ եւ տեսնելով այնտեղ, Սուրիոյ մէջ, կուտակուած դժգոհութիւնները՝ բացայայտօրէն կը յայտարարէ, «որ Սիրիայում եւ Լիբանանում ընտրութիւններ տեղի չեն ունենա»<sup>7</sup>:

Երկիրի մէջ կուտակուած դժգոհութիւնը, հակաֆրանսական եւ հակաանգլիական գաղութարարներու դէմ, կը շարունակուի ողջ 1942 թ. եւ 1943 թ. սկիզբը: Հայերը անմասն չեն մնար եւ Սուրիոյ տարբեր շրջաններու մէջ, արաբներու հետ հանրահաւասար կը կազմակերպեն, որ կը բխէր երկու ժողովուրդներու

4 Սամսոնյան Ն., Բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում, ռազմական հեղաշրջումների ֆեյնոմենը, էջ 34:

5 Հովհաննիսյան Ն. Ն., Նշ. աշխ., էջ 465:

6 1940 թ. Յունիսին Անգլիան զօրավար Շարլ Տը Կոլը կը ճանչնայ Ազատ Ֆրանսայի դեկավար խոստանալով անոր քաղաքական աջակցութիւն եւ ռազմական օգնութիւն:

7 Հովհաննիսյան Ն. Ն., Սարգսյան Ն. Ս., Սիրիան անկախութեան համար մղված պայքարում, Նշ. աշխ., էջ 234:

ազատ ապրելու ձգտումէն:

Այսպիսով, Սուրիոյ մէջ կրկին սկիզբ կ'առնէ համազգային շարժում յանուն Սուրիոյ անկախութեան, եւ 1942 թ. Սուրիոյ գլխատար քաղաքներու մէջ ընդհարումներ տեղի կ'ունենան բնակչութեան եւ «Ազատ Ֆրանսա»-ի զօրքերու միջեւ. «Սիրիայի արաբ բնակչութիւնը բացահայտ կերպով իր դժգոհութիւնն է հայտնում անգլիական օկուպանտների վարքագծից: Շատ քաղաքներում տեղի ունեցան արաբների ցույցեր բրիտանական զորքերը Սիրիայից հեռացնելու պահանջով: Բրիտանական իշխանութիւնները դրան պատասխանում են արաբների դէմ տեռորը ուժեղացնելով»<sup>8</sup>:

Ֆրանսան կարգ մը զիջումներ կատարելով սուրիական եւ լիբանանեան կիսանկախ կառավարութիւններուն, յոյս ուներ, որ անոնք կը հրաժարէին մանդատի վերջնական վերացման խնդրի պահանջէն: Սակայն, ան սխալած էր: Առաել Սուրիոյ եւ Լիբանանի կառավարութիւնները հանդէս եկած էին մանդատի վերջնական ու լիակատար վերացման ու բանակը իրենց յանձնելու պահանջքով, որ դարձած էր ազգային-ազատագրական ուժերու գլխատար պահանջքներէն մէկը:

1943 թ. Լիբանանի ժողովուրդի ազգային անկախութեան համար տարիներ տեսած պայքարը յաջողութեամբ կը պսակուի: Քաղաքական բարդ իրադրութեան պայմաններուն, պայքարի գրեթէ բոլոր փուլերուն, հայերը իրենց երկրորդ հայրենիքի նկատմամբ, կը ցուցաբերեն քաղաքացիական պատշաճ գիտակցութիւն: Հայ ժողովրդավարականները կը համարէին, որ հայերու տնտեսական եւ քաղաքական զարգացումը համընդհանուր կապուած է Սուրիոյ հետ, եւ անոնց սուրբ պարտականութիւնն է արաբներու հետ միասին պայքարիլ: Հայերու դիրքը բարձր գնահատանքի կ'արժանանայ Սուրիոյ եւ Լիբանանի տեղական համայնավարական կուսակցութեան առաջնորդներէն Ֆարաժալլա Նելուի կողմէ. «Այս հավաքոյթները, որ տեղի են ունենում Սիրիայի եւ Լիբանանի բոլոր շրջանների մէջ եւ որոնց մասնակցում են արաբ եւ հայ դեմոկրատները, լավագոյն փաստն են արաբ եւ հայ ժողովուրդներին իրար միացնող նպատակների նույնութեան»<sup>9</sup>:

Ստեղծուած պայմաններու բերումով «Ազատ Ֆրանսա»-ն հարկադրուած զիջման քայլերու կը ձեռնարկէ, մանաւանդ որ Մեծ Բրիտանիան (Անգլիան) եւս համաձայն էր սահմանադրութեան վերականգնման, ընտրութիւններու կատարման եւ արդար իրականացումին: 1943 թ. Մարտի 25-ին Ֆրանսան կ'որոշէ վերականգնել 1930 թ. Մայիս 14-ի սահմանադրութիւնը եւ կ'արտօնէ խորհրդարանական ընտրութեանց կատարումը: Կը ստեղծուի ժամանակատար կառավարութիւն Աթա ալ-Այյուպիի գլխատարութեամբ: Ընտրութիւնները կը

8 Նոյն տեղը, էջ 235:

9 Նոյն տեղը, էջ 237-238:



կատարուին երկու փուլով: Երկրորդին կը յաղթե «Քուբլա ալ-վաթանիա» («Ազգային դաշինք») կուսակցութիւնը Շուքրի Քուաթլիի գլխատարութեամբ: Խորհրդարանի անդամ կ'ընտրուին նաեւ չորս հայ երեսփոխաններ, որոնցմէ մէկը Դամասկոսէն՝ Նազարեթ Եագուպեան, իսկ երեքը՝ Մովսէս Սալաթեան, Հրաչ Փափագեան եւ Ա. Սապէթ (Թագպագեան) չալէպէն<sup>10</sup>:

Նոյն թուականի Օգոստոս 17-ին Սուրիոյ խորհրդարանական Ա. նիստը կը գումարուի, ուր նախագահ կ'ընտրուի Շ. Քուաթլին՝ «ալ-վաթանիա» խմբատրման ղեկավարը, իսկ Ֆարես ալ-Խուրին խորհրդարանի նախագահ եւ Սաստ Ալլահ Ճապիրին կը կազմէ անկախ Սուրիոյ առաջին ազգային կառավարութիւնը<sup>11</sup>: Սակայն Սուրիոյ նորաստեղծ կառավարութեան առջեւ կանգնած էին կարգ մը բարդ խնդիրներ, որոնք անմիջապէս կախեալ էին Սուրիոյ իրական եւ իրական անկախութենէն: Սուրիոյ անկախութիւնը ձեւական բնոյթ կը կրէր, որովհետեւ Ֆրանսան ոչ մէկ ձեռով հրաժարած էր իր իրաւունքներէն եւ չէր ուզեր մանդատի վերացումը:

Այսպիսով, Ֆրանսան ոչինչ պիտի փոխէր Սուրիոյ իրադրութենէն եւ կը միտէր նախկինի նման երկիրը կախման մէջ պահել:

Նակառակ Ֆրանսային յարուցած դժուարութիւններուն եւ դիմադրութեան, Սուրիոյ կառավարութիւնը ձեռնամուխ կ'ըլլայ երկիրի սահմանադրական օրէնքներէն վերացնել այն յօդուածները, որոնք կը վերաբերէին Ֆրանսայի իրաւունքներուն եւ մանդատի վերացման: Ֆրանսան կը մերժէ այդ բոլորը, որուն փոխարէն կը հրապարակէ երեք կէտերէ բաղկացած յայտարարութիւն: Այդ յայտարարութեամբ ան կը սահմանէր ու կը ճշդէր իր եւ Սուրիոյ, Լիբանանի միջեւ յարաբերութիւններու առաւել պարզեցում, յստակացում եւ այլն<sup>12</sup>: Այդ կը նշանակէր Ֆրանսական մանդատի պահպանում, սակայն որոշ չափով բարեփոխում:

1944թ. Յունուարի մէկէն սկսեալ Սուրիոյ եւ Լիբանանի կառավարութիւններուն փոխանցումը էին օրէնսդրական եւ կառավարական այն բոլոր իրաւասութիւնները, զորս կ'իրականացնէին Ֆրանսական իշխանութիւնները Ֆրանսայի անունով: Սակայն յատուկ զօրքերը (զօրամասերը)<sup>13</sup> եւ ազգային բանակի յանձնումը կը ձգձգուէր: Դէպքերու զարգացման զուգահեռ, Սուրիոյ ղեկավարութիւնը հասկցած էր, որ առանց ազգային բանակի առկայութեան կարելի չէր հասնիլ ամբողջական անկախութեան: Առ այդ սուրիական կառավարութիւնը

10 Նոյն տեղը, էջ 241:

11 **Նովհաննիսյան Ն. Ն.**, նշ., աշխ., էջ 468:

12 **Նովհաննիսյան Ն. Ն., Սարգսյան Յ. Ս.**, նշ. աշխ., էջ 243-245:

13 Յատուկ զօրամասեր (զօրքեր) Սուրիոյ ազգային բանակն էր, որ կ'անուանուէր Troupes Speciales, որուն կը հաստատարմագրուէին արաբներէն, քիւրտներէն ու չէրքէզներէն բացի, նաեւ հայերը: Եւ մինչեւ 1944 թուական բանակը ենթակայ էր Ֆրանսական ռազմական ուժերու հրամանատարութեան: Տե՛ս **Սամոնյան Ն.**, չայ ռազմական գործիչների դերը սիրիական բանա-

Պրանսական իշխանութեան առաջ կը դնէ յատուկ զօրքերը (զօրամասերը) իրեն յանձնելու յոյժ կարեւոր պահանջը<sup>14</sup>:

Դժբախտաբար, 1945թ. իրավիճակը առաւել կը լարուի եւ իր գագաթնակէտին կը հասնի նոյն տարուան կիսուն, երբ Ֆրանսական իշխանութիւններու անօրինակ գործողութիւններն ու Ֆրանսայէն նոր զօրքի ժամանման լուրը առաւել սպառնալիք կը դառնան սուրիական կառավարութեան համար: Սուրիոյ քնակչութեան զգալի հատուածը ցոյցերով ու զինուած բախումներով հանդէս կու գայ՝ ամէնուրեք իր դժգոհութիւնը յայտնելու Ֆրանսական իշխանութիւններու նորորդեգրած քաղաքականութեան դէմ, նոյնիսկ սուրիական կառավարութիւնը տեղեակ կը պահէ միջազգային հանրութիւնը նաեւ, որոնք իրենց կարգին դատապարտելով Ֆրանսան՝ հանդէս կու գան պաշտպանողի դերով: «Ֆրանսական հոգատար իշխանութեան դէմ Սուրիոյ ժողովուրդեան անկախութեան պայքարը իր գագաթնակէտին հասաւ 20 Մայիս 1945 թ., երբ քաղաքը ամբողջովին զոցուեցաւ եւ արհմալի դէպքեր պատահեցան ամբողջ երկիրն մէջ»<sup>15</sup>: Այս դէպքերու լոյսին տակ չալէպի կառավարիչ Իհսան պէյ ալ-Շէրիֆ, յետմիջօրէին հանդիպում կը կազակերպէ քաղաքի քրիստոնեայ համայնքներու հոգեւոր պետերուն հետ եւ կը թելադրէ, որ համայնքներու հոգեւոր պետերը քանք շինայեն ժողովուրդը հանդարտութեան մէջ պահելու, որպէսզի տեղի չտան աւելորդ թիրիմացութիւններու եւ բարդութիւններու<sup>16</sup>:

1945թ. Մայիսի 19-ին սուրիական խորհրդարանի կողմէ ազգային պաշտպանութեան մասին ընդունուած օրէնքին համաձայն կը յայտարարուի զօրահաւաք, որով կը նախատեսուէր երկրի պաշտպանութեան միջոցներու կազմակերպում եւ ազգային սպայական կազմի կազմաւորում, ուր արտօնուած էր նաեւ կամաւորներու ցուցակագրումը<sup>17</sup>: Այսպիսով, ազգային զինուած ուժերու յառաջացումով, Սուրիոյ ազգային ազատագրական պայքարը նոր երանգ կը ստանայ: Տեղի կ'ունենան զինուած ապստամբութիւն, արհմալի դէպքեր. Ֆրանսական բանակին նախկին ծառայողները կը լքեն իրենց շարքերը եւ կ'անցնին տեղացի ապստամբներուն կողմը:

Շայերը եւս անմասն չէն մնար եւ կողք կողքի սուրիացի իրենց հայրենակիցներու հետ յամառ պայքար կը մղեն. «Ստեղծուած այս կացութեան մէջ, Ֆրանսական իշխանութիւնները բազմիցս եւ զանազան միջոցներով փորձեցին այնպէս մը կարգադրել, որ սուրիական ճակատը ներքին պառակտումներ ունենայ եւ քանակին ցեղային եւ կրօնական հիմունքներով տարրերը իրարու

կում (1946-1970 թթ.), «Արեւմտեւոր Արեւելք պատմություն, քաղաքականություն, մշակույթ», էջ 245:

14 **Նովհաննիսյան Ն. Ն.**, նշ. աշխ., էջ 471-472:

15 «Արեւելք», օրաթերթ, թիւ 146, 15 Դեկտեմբեր 1946, չալէպ (չայ Կեանք «չալէպի Գաառական ժողովը»):

16 «Արեւելք», Նոյն տեղը:

17 **Նովհաննիսյան Ն. Ն.**, նշ. աշխ., էջ 473:



դեմ հանել: Սակայն Առաջնորդն ու տեղական կառավարությունը, ինչպես նաև արաբ ղեկավարությունը, մասնաւորաբար, կրցան առաջըր առնել այս մեքենա-յութեանը»<sup>18</sup>: Նոյնիսկ օտար մամուլի մէջ սուրիական դէպքերու կապակցութեամբ անյարիր գրութիւններ կը հրատարակուին, որոնց կանխելու անպատեհութենէն է թիրիմացութենէն զերծ մնալու համար թեմը կը յայտարարէ, որ հայ ժողովուրդը, որպէս գիտակից իր պարտականութեան, անկախութեան պայքարին Սուրիոյ կառավարութեան կողքին կանգնած է, առանց որեւէ միջադէպ տեղի ունենալու երկու բարեկամ ժողովուրդներու միջեւ: Ընդհակառակը առաւել զօրավիճ կանգնած են եւ հոգածութեան առարկայ դարձած:

1945 թ., Բերիոյ թեմի առաջնորդ Ջարեհ եպս. Փայասլեան հայրական կոչ կ'ուղղէ ֆրանսական բանակի հայ զինուորներուն՝ ռազմական միջոցներով (տեխնիկայով) միանալու սուրիական բանակին: Այս առիթով սուրիական կառավարութիւնը թիւ 381, 2 Ապրիլ 1946 թուակիր հրամանագիրով «Սուրիական առաջին կարգի արժանեաց» շքանշանով կը պարգեատրէ հայոց առաջնորդը (23 Սեպտեմբեր 1946 թ.): Շքանշանի տուչութիւնը կը կատարուի Հալէպի Նահանգապետի ձեռամբ: Նահանգապետը կը գնահատէ Բերիոյ թեմի Առաջնորդի դերն ու նուիրումը եւ սուրիական հայրենիքին, եւ համայնքի զաւակներուն: Ան իր խօսքով կ'անդրադառնայ Հալէպի հայ համայնքի ազգայիններէն ունեց կատարած աշխատանքին, որոնք Սուրիան իրենց երկրորդ հայրենիքը համարելով մերժեցին օտարներու սին խոստումները եւ բաժնեկից դարձան արաբ ժողովուրդին ցաւերուն եւ ուրախութիւններուն՝ հաւատարմօրէն ծառայելով Սուրիոյ<sup>19</sup>: Սուրիական հանրապետութեան Նախագահը՝ Ը. Քուաթի, խոր համակրանքով Դամասկոսի աւագանիին ներկայութեամբ արտայայտուած է. «Ջարեհ Սրբազանը հիսիսային Սիւ(ու)րիոյ մէջ իմ աջ բազուկս է»<sup>20</sup>: Իսկ Դամասկոսի կաթողիկոսական փոխանորդ արք. Տոմմունին Սուրիոյ ներքին գործերու Նախարարի հետ հանդիպումի ընթացքին յայտարարած է, որ համայնքը պատրաստ է ամեն տեսակի զոհողութիւններու եւ ինք որպէս հոգետր հովի պատրաստ է առաջնորդել զանոնք դէպի երկրի շահերն ու պաշտպանութիւնը տանող ապահով ճանապարհ<sup>21</sup>:

Ոչ պակաս դերակատարութիւն մատուցեց Ճեզիրէի Առաջնորդական փոխանորդութիւնը յանձին՝ Տ. Խորէն վոյ. Բարոյեանին: Ան իր վարած հայանպաստ քաղաքականութեան շնորհիւ ձեռնհասութեամբ վարեց իր պաշտօնը եւ հայութեան վարկը բարձրացուց «յաչս սուրիական բարեխնամ կառավարութեան եւ իսլամ ու քրիստոնէայ համայնքներուն»<sup>22</sup>:

18 «Արեւելք», Նոյն տեղը:

19 «Հասկ», թիւ 2-3-4, 1963, Լիբանան, էջ 64:

20 د. الكسندر كشيحيان. المصدر نفسه. ص. 1-2-3-4. Տե՛ս նաեւ «Հասկ», Նոյն տեղը, էջ 65-66:

21 **Հովհաննիսյան Ն. Հ.**, նշ. աշխ., էջ 475-476:

22 **Տէմիրճեան Վ. եպս.**, նշ., աշխ., էջ 481:

Այս առնչութեամբ Հաւորանի երեսփոխան Ֆարես պէյ Ջողպի կը յայտարարէ, որ «Ճիշդ է, որ Սուրիոյ մէջ անհատական եւ կրօնական ազատութիւնները նուազագոյն հալածանքի ենթակայ են», սակայն «Սուրիոյ հայերը մեր երիտասարդութեան հետ իրենց գործակցութեամբ ցոյց տուին, որ սուրիական լաւ տարր մըն են»<sup>23</sup>:

Պատմական այս ժամանակահատուածին վերջ գտած էր Բ. Աշխարհամարտը: Աշխարհամարտի ատարտը եւ Խորհրդային Միութեան տարած յաղթանակի թուականը կը զուգահիւսէր Մերձատր Արեւելքի, այդ թուին՝ Սուրիոյ ժողովուրդի կողմէ մղուած ազգային-ազատագրական պայքարին: Պայքար, որ յանգեցաւ անկախութեան ձեռքբերումին:

Սուրիոյ ժողովրդական ճակատի ներկայացուցիչները առաջ երթալով հետզհետէ բարենորոգումներու ծրագիրներով խանդավառութիւն ստեղծեցին երկիրէն ներս: Սուրիահայ համայնքի ժողովրդական խմբակը եւս աշխուժանալով միացաւ երկիրէն ներս կատարուող միջոցառումներուն՝ յօգուտ Խորհրդային Միութեան:

Դաշնակից երկիրներու յաղթանակի հեռանկարը սփիւռքահայերու մէջ հայկական հողերու վերադարձման խնդրի շուրջ յոյսեր արթնցուցին<sup>24</sup>: Սփիւռքահայութիւնը կը խորհէր, որ հայրենի հողին վրայ համախմբուելու իրենց երազանքը իրականանալու ճանապարհին է, եւ այդ նպատակով ամերիկաբնակ հայերու անունով ՄԱԿ-ին կը ներկայացուի Արեւմտեան Հայաստանը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու պատմական յուշագիր մը<sup>25</sup>:

Համայնքի բոլոր զաւակները մեծ ոգետրութեամբ իրենց մասնակցութիւնը կը բերեն «Սասունցի Դաւիթ» հրասայլային զօրասիւնի օգտին կազմակերպուած հանգանակութեան: Կարլեն Դալլաքեան «Ռամկավար ազատական կուսակցութեան պատմություն» մենագրութեան մէջ կը յիշէ, որ ՌԱԿ-ի կեդրոնական վարչութիւնը 1944 թուականի Մարտի 1-ի նիստին կը ստեղծէ «Սասունցի Դաւիթ» հիմնադրամ. Լիբանանի մէջ գործին կը ձեռնարկէ հայոց առաջնորդարանը տեղի Շրջանային վարչութեան միջամտութեամբ եւ կը յառաջացնէ զօրախումբի յանձնախումբ: Միջոցառման ընթացքին առանց յարանուանական եւ ազգային քաղաքական հոսանքներու խտրականութեան բոլորը խօսք կ'արտասանեն: Այս շրջանին ընկերային եւ միութենական աշխոյժ գործունէութիւն կը ծաալի Հալէպի, ինչպէս նաեւ այլ համայնքներուն մէջ եւ իրարու ետեւէ ծնունդ կ'առնեն զանազան նորաստեղծ կազմակերպութիւններ<sup>26</sup>:

23 «Ազգակ» օրաթերթ, Ժթ. տարի, թիւ 4231, 28 Յունիս 1945, Պէյրուս, էջ 1:

24 **Մելքոնյան Բ.**, ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները: Հայկական հարցը, Սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947), Երևան, 2013, էջ 152:

25 **Մելքոնյան Բ.**, նշ. աշխ., էջ 155:

26 **Դալլաքեան Վ. Լ.**, «Ռամկավար ազատական կուսակցութեան պատմություն», Բ. գիրք, Երևան, 2009, էջ 100-101:



1942 թ. Հրանդ Տելեճեանի նախաձեռնությամբ Լիբանանի մէջ ծնունդ կ'առնէ «Սովետական Հայաստանի բարեկամներու միութիւն»-ը, որուն առաջին միջոցառումը կ'ըլլայ կազմակերպել Հայաստանի խորհրդայնացման 22-րդ տարեդարձը: Մասնաճիւղեր կ'ունենայ Սուրիոյ (Հալէպ, Դամասկոս) եւ Լիբանանի մէջ: Միութիւնը չորս տարի ունեցած է բեղուն գործունեութիւն: Հրապարակային ելոյթներու կողքին իր մասնակցութիւնը բերած է կազմակերպուած «Սասունցի Դափթ» զօրասիւնին, Երեւանի կօշիկի գործարանին հիմնումին եւ հայրենասպաստ այլ ձեռնարկներու:

1943 թ. կը կազմուի «Հայաստանի պաշտպանութեան լիկա»-ի Հալէպի մասնաճիւղը: Նոյն թուականին Կարմիր բանակի տարած յաղթանակէն ետք, մեծ հետաքրքրութիւն կը սկսէր դէպի խորհրդային Հայաստան: Երիտասարդութիւնը կը ցանկար վերակազմակերպուի, որուն շնորհիւ պիտի ստեղծուէր «Հայրենաբաղձ հայերու միութիւն»-ը 1944 թ. Հոկտեմբերին: Այդ կը պարտէին Ն. Յովհաննէսեանին<sup>27</sup>, որ ծանօթ ըլլալով «հայրենիքի անցեալի անցուդարձերուն եւ հայրենի կեանքի յետագայ նուաճումներուն, յանձն առած էր սփիւռքահայութեան զայն պատգամելու առաքելութիւնը»<sup>28</sup>:

«Հայրենաբաղձ հայերու ընդհանուր միութիւն»-ը կ'ունենայ երկարամեայ գործունեութիւն: 1945 թ. Հոկտեմբերին կը միանայ «Երեւան մարմնակրթական միութեան» (հիմնուած՝ 1944 թ.): Ան իր շուրջ կը համախմբէ երիտասարդ գրիչներ՝ ստեղծելով «Դէպի երկիր» պարբերականն ու գրական նոր շարժում: Մինչեւ 1948 թ. պարբերականը լոյս կը տեսնէ. գործակիցներու հեռացումով կը դադրի: Միութիւնը գրադարան հիմնելու մտադրութեամբ սերտ կապեր կը հաստատէ Երեւանի նորաստեղծ «Արտասահմանի հետ մշակութային կապի ընկերութեան» հետ:

Սուրիոյ եւ Լիբանանի հայկական համայնքներու հայրենասիրութեան դրսեւորման դափնին կը հանդիսանայ խորհրդային Հայաստանի բարեկամ կազմակերպութիւններու միասնական ճակատի՝ Ազգային խորհուրդի ստեղծումը՝ 15 Օգոստոս 1945 թ. Լիբանանի մէջ Ադամ Մանուէլեանի նախագահութեամբ: 23 Սեպտեմբեր 1945 թ. կը ստեղծուի ԱՄՆ-ի Հայ ազգային խորհուրդի Հալէպի մասնաճիւղը, որուն աջակցութիւն կը յայտնեն հայ համայնավարները, ռամկավարները, հնչակեանները եւ բազմաթիւ այլ միութիւններ ու կազմակեր-

պութիւններ: Խորհուրդի հիմնական նպատակներէն էր հետապնդել հայ ազգային դատը ՄԱԿ-էն ներս<sup>29</sup>:

Փրոֆ. Ա. Աբրահամեանի առաքելութիւնը դէպի Սուրիա եւ Լիբանան (1946 թ.), նաեւ զանգածային հայրենադարձութեան անտիսը, ազդանշան էր ուժերու միաւորման եւ համախմբման մէկ ուժեղ կազմակերպութեան մէջ: Ծագած վեճերն ու հարցերը պիտի յանգէին բարուք լուծման:

14 Փետրուար 1946 թ. «Հայրենաբաղձ հայերու միութիւն»-ը (1944 թ. Հոկտեմբեր), «Սովետական Հայաստանի բարեկամներու միութիւն»-ը (1942 թ. Հոկտեմբեր), «Երեւան մարզական միութիւն»-ը (Փետրուար 1944 թ.) եւ «Հալէպահայ մշակութային շրջանակ»-ը (1944 թ.) կը միաւորուին՝ կազմելու «Սովետական Հայաստանի հետ մշակութային կապի ընկերակցութիւն»-ը, որուն նախագահութիւնը կը վստահուի հալէպահայ հանրածանօթ ակնաբոյժ, մտաւորական, բժ. Ռոպէր Ընկելեանին: Նորաստեղծ ընկերութեան շուրջ կը բուրդուին «Երեւան մարզական միութեան» մարզիկները եւ 1946 թ. Հոկտեմբերին կը կազմեն «Սուրիահայ մարզական միութիւն»-ը<sup>30</sup>: Կերչիս 1947 թ. արդէն ուներ իր մասնաճիւղերը Սուրիոյ հայաշատ կեդրոններէն ներս՝ Գամիշլի, Թէլ Պրագ, Հըլքօ, Ղըզըլճա, Կուֆ-Կուֆ, Տուպ-պանա, Հարպա, Մլուքսարա, Թէլ Քէշէք, Ճարապլուս եւ այլն<sup>31</sup>:

Այնուամենայնիւ, վերոնշեալ կազմակերպութիւնները ընդամենը քանի մը տարուան գործունեութիւն ունենալէ ետք կը դադրին: Անոնց անդամ կրնային դառնալ միայն «Յառաջդիմական»<sup>32</sup> ճակատին անդամակցող անձեր:

Այսպիսով, քննարկուող ժամանակահատուածին հայերը Սուրիոյ մէջ բնակութիւն հաստատելով որոշ ժամանակ անց կը դառնան տուեալ երկրի լիիրաւ քաղաքացիներ. անոնք մաս կը կազմեն երկրի քաղաքական, զինուորական, մշակութային, մարզական, բարեսիրական, առողջապահական, բժշկական, կրթական, գրական եւ այլ բնագաւառներուն՝ միաժամանակ վարելով բարձրաստիճան պաշտօններ:

29 Մելքոնյան Բ., Սփիւռքահայութիւնը և հայկական հարցի (լուծման խնդիրը (1945-1947), «Պատմաբանասիրական հանդէս», N 2, Երևան, 2010, էջ 41-52:

30 Ընկելեան Ռ., նշ. աշխ., էջ 226:

31 Նոյն տեղը:

32 Իրենց քաղաքական կողմնորոշման համաձայն, համայնքի յառաջդիմականները՝ համայնավար, հնչակեան եւ ռամկավար կուսակցականներն ու անոնց համակիրներն են, այլ խօսքով՝ «խորհրդային Հայաստանի հետ մերձեցման կողմնակիցները եւ էջմիածինս իբրեւ Ամենայն Հայոց հոգեւոր կեդրոն ընդունողները» (Տէն Եսաղճեան Գ., Սփիւռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթղթերու մէջ (1945-1991), ընտրանի, Երեւան, 2016, էջ 197:

27 Յովհաննէսեան Նշանը վանեցի պատկառելի մտաւորական. քառասունական թուականներուն գտնուելով Հալէպ կը վարէ պատասխանատու պաշտօններ: Եղած է կրթական քննիչ, ասագ դաստիարակ ու դասախօս, բազմաթիւ ելոյթներ կ'ունենայ նորաստեղծ կազմակերպութիւններու մէջ՝ դառնալով Հայրենիքի ջատագովը: Տէն «Գեղարդ», Ե. գիրք, էջ 313: Յովհաննէսեան 1944 թ. Հալէպի Բեթլ վարժարանի նորակազմ հոգաբարձութեան կողմէ տնօրէնութեան պաշտօնի կը հրաւիրուի: Տէն Չոլաքեան Յ., 1923-2013 Տարեգրութիւն Հայ անտարա-նական Բեթլ վարժարանի, Հալէպ, 2016, էջ 145:

28 Ընկելեան Ռ., Ինքնակենսագրութիւն, յուշեր եւ գործունեութիւն, Հալէպ, 1999, էջ 219:



### Գ. ՀԱՅԵՐԸ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ ՄԷՋ

1945 թ. Մայիսին Ֆրանսան արդեն նահանջած էր եւ խոստացած՝ որոշ զորամասեր յանձնել Սուրիոյ եւ Լիբանանի: Այդ կ'իրականանայ 1 Օգոստոս 1945 թ., երբ զինուորական ոստիկանական ուժերը կը յանձնուին Սուրիոյ կառավարութեան, որ յետագային պիտի ներկայացնէին Սուրիոյ ազգային բանակը:

Սուրիոյ բանակի ստեղծման, ազգային բանակի զարգացման եւ կայացման մէջ մեծ դեր խաղացին հայազգի զինուորականներ, որպէս բարձրաստիճան պաշտօնեաներ, որոնք իրենց հմտութեամբ, փորձառութեամբ եւ գործունեութեամբ ամրապնդեցին երկրի ներքաղաքական կեանքը:

Սուրիոյ ազգային բանակի կազմատրման ու կայացման մէջ մեծ ասանդ ունեցաւ հայազգի զօրավար՝ (գեներալ-լեյտենանտ) (عبد) Արամ Գարամանուկեան<sup>1</sup>: 1949-1957 թթ. կը զբաղեցնէ սուրիական բանակի հրետանիի ընդհանուր հրամանատարի պաշտօն: 1957 թ. պաշտպանութեան նախարարի կողմէն կ'արժանանայ զօրավարի (գեներալ-մայոր) տիտղոսին: Անկէ ետք ան կը նշանակուի իբրեւ Ուաշինկթընի մէջ սուրիական դեսպանատան ռազմական կցորդ: 1972 թ. Փարիզի մէջ կը պաշտպանէ ատենախօսութիւնը՝ ստանալով իրաւաբանութեան դոկտորի գիտական աստիճան<sup>2</sup>:

Արամ Գարամանուկեան սուրիական կառավարութեան կողմէ արժանացած է պատուոյ շքանշաններու, ինչպէս նաեւ Ֆրանսայի կառավարութեան կողմէ «Պատուոյ Սպայ» եւ Լիբանանի կառավարութեան կողմէ «Ասպետ» շքանշաններու<sup>3</sup>: Իր մատուցած ծառայութիւններու շնորհիւ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. կաթողիկոսի ձեռամբ կ'արժանանայ «Ներսէ Շնորհալի» շքա-

1 Ան անկուսակցական էր. ազգապահպանման գործին մէջ կը գերադասէր կրթական, գեղարուեստական, բարեգործական ու բարեսիրական հաստատութիւններու գործունեութիւնը: Սուրիական սպայական կազմի երկրորդ դասին կը պատկանէր: Արամ Յակոբի Գարամանուկեան ծնած է Այնթապ 1910 թ.: 1915 թ. Մեծ եղեռնէն ետք կը հաստատուի Հալէպ: 1934 թ. կ'աւարտէ ֆրանսական բանակի սուրիական գունդերու համար սպաներ պատրաստող Դամասկոսի զինուորական դպրոցի հրետանային բաժինը: 1948 թ. եղած է սուրիական բանակի հրետանային գունդի հրամանատար եւ նոյն թուին մասնակցած արաբ-իսրայէլեան պատերազմին: Իսրայէլեան բանակի հրամանատարութիւնը մեծ պարգէտ կը խոստանայ անոր, որ կը սպանէ եւ կամ գերի կը վերցնէ Արամ Գարամանուկեանը՝ մասնելով անոր հրետանային համակարգը: Տես **Սամսոնյան Ն.**, Բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում. Նշ., աշխ., էջ 154-157: **Նոյնի**, Սիրիայի եւ Լիբանանի բանակների հայ ռազմական գործիչները, Նշ., աշխ., էջ 492-494:

2 **Գարամանուկյան Ա. Ն.**, Հայկական լեզունը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսին տակ, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդէս, 2. 1996, Երևան, էջ 14: Տես նաեւ **Սամսոնյան Ն.**, Սիրիայի եւ Լիբանանի բանակների հայ ռազմական գործիչները, էջ 494:

3 **Սամսոնյան Ն.** նոյն տեղը:

նշանին:

Մահացած է Նիւ Եորք 1996 թ.: Ան մահէն առաջ կտակած է, որ իր աճիւններէն մաս մը տեղափոխեն Երեւան, իսկ միւս մասը Հալէպ<sup>4</sup>... Եւ այդպէս ալ եղած է:

Բացի Գարամանուկեանէն, Սուրիոյ ազգային բանակի կայացման մէջ մեծ ասանդ ունեցած է հայազգի գեներալ մայոր (عميد) Հրանդ պէյ Մալոյեան<sup>5</sup>:

Մալոյեան ծնած է Մուշ 1895 թ.<sup>6</sup>: 1905-1907 թթ. ուսումը ստացած է Վենետիկի Սխիթարեան միաբանութեան Սուրբ Ղազար վանքէն եւ 1913-1914 թթ. ընդունուած է իրաւագիտական համալսարան: 1914 թ. Հրանդ Մալոյեան բանակ կը զօրակոչուի որպէս սպայ: Ա. Աշխարհամարտի զինադադարի նախօրեակին՝ թրքական բանակի նահանջի օրերուն, գերի կ'իյնայ Տարաայի արաբական գունդերու կողմէ: Գերութենէն ազատելով՝ կ'անդամակցի Նորակազմ Հայկական լեզոնին եւ աչքի կ'իյնայ ուշիմութեամբ եւ լեզուներու իմացութեամբ, որոնց շնորհիւ Կիլիկիոյ զինուորական կառավարիչի կողմէ կը նշանակուի ժանտարմերիայի օգնական (քաղաքապահական զինուորական): 1946-1950 թթ. Հրանդ Մալոյեանը Սուրիոյ ժանտարմերիայի գլխաւոր հրամանատար կը նշանակուի: Գեներալ-մայոր Հրանդ Մալոյեան կը պարգեատրուի սուրիական, լիբանանեան, եգիպտական, ֆրանսական շարք մը շքանշաններով<sup>7</sup>:

Հայազգի բարձրաստիճան սպաներէն էր նաեւ գնդապետ (عقيد) Ժոզէֆ Պայրամեան<sup>8</sup> (հրետանիի ստորաբաժանումի հրամանատար): Գնդապետ Ժոզէֆ Պայրամեան ծնած է 1915 թ. Հալէպ: Նախնական կրթութիւնը ստացած է Հալէպի Ազգային Հայկազեան վարժարանէն, իսկ 1939 թ. ընդունուած՝ Նոմսի ռազմական ակադեմիա եւ 1941 թ. կ'աւարտէ անոր հրետանիի բաժինը, ապա կը նշանակուի հրետանիի ստորաբաժանման հրամանատար. 1958 թ. կը ստանայ գնդապետի աստիճան եւ կը պարգեատրուի շարք մը շքանշաններով<sup>9</sup>:

Սուրիական բանակի սպաներէն գնդապետ Վռամշապուհ (Աֆրամ) Սալաթեան կը պատկանէր սուրիական սպայակազմի երրորդ դասին: Նախնական

4 Արամ Գարամանուկեանի եղբորորդին՝ Շահէն Գարամանուկեանը, **“Հայերն Այսօր”-ի** հետ զոյոցի ընթացքին հաւաստիացուցած է, որ Արամ Գարամանուկեանի գերեզմանը եւ Երեւանի, եւ Հալէպի մէջ կը գտնուի: Այդ կտակով Գարամանուկեան ըսել ուզած է՝ «Ինչքան Հայ եմ, նոյն շահով ալ Սուրիացի եմ»: Տես [www.hayernaysor.am/cl/archives/115317](http://www.hayernaysor.am/cl/archives/115317):

5 «Մասիս» հանդէս, Հայ Կաթողիկէ Մեսրոպեան բարձրագոյն վարժարանի, թիւ 39, Դեկտեմբեր 2008, Պէյրուք, էջ 26-27: Տես նաեւ **Սամսոնյան Ն.**, Նշ. աշխ., էջ 495-496:

6 Հրանդ պէյ Մալոյեանի ծննդեան այլ թուական կը յիշատակուի՝ 1887. տես «Մասիս», նոյն տեղը, էջ 27:

7 **Սամսոնյան Ն.**, Նշ. աշխ., էջ 495-496:

8 «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, Ա. գիրք. Հալէպ, 1975, էջ 408: **Սամսոնյան Ն.**, Բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում, Նշ., աշխ., էջ 160: **Նոյնի**, Սիրիայի եւ Լիբանանի բանակների հայ ռազմական գործիչները, էջ 497-498:

9 **Սամսոնյան Ն.**, Սիրիայի եւ Լիբանանի բանակների հայ ռազմական գործիչները, էջ 496-497:



կրթությունը ստանալն էտք Հալեպի Կիլիկեան եւ արաբական Սուլթանիէ երկրորդական վարժարաններն, ընդունուած է Հոմսի ռազմական ակադեմիան: Աւարտելէն էտք Սալաթեանը կ'ուղարկեն Եգիպտոս՝ մասնագիտանալու նպատակով: 1947-1948 թթ. Լաթաքիոյ մէջ կը նշանակուի զինուորական (պատասխանատու): Մասնակցած է արաբ-խորայէլեան պատերազմին: Սալաթեան իր ենթակայութեան տակ եղող 8 զինուորականներու հետ կը զոհուի Քունէթրայի մէջ (Սուրիա)<sup>10</sup>:

Սուրիական բանակի մէջ իր ուրոյն տեղը ունէր զօրավար (ضابط) Ալպէռ Քիլէճեանը. ծնած է 1920 թ. Համա: Ան Նոյնպէս կը պատկանէր սուրիական սպայական կազմի երրորդ դասին: Ռազմական ուսումը ստացած է Հոմսի ռազմական ակադեմիայէն, այնուհետեւ 1948 թ. կը մասնակցի արաբ-խորայէլեան պատերազմին: 1957 թ., մասնագիտութիւնը կատարելագործելու նպատակով կը մեկնի Գահիրէ եւ կը մասնակցի բարձրաստիճան սպաներու դասընթացքներուն, որմէ էտք կը նշանակուի ենթասպաներու դպրոցի եւ պահեստային սպաներու վարժարանի հրամանատար: 1959 թ. կ'աւարտէ զինուորական ծառայութիւնը գէներալլէյտենանտի աստիճանով եւ կը պարգեւատրուի սուրիական, իրանական եւ այլ շքանշաններով<sup>11</sup>:

Գէներալ-մայոր Աւետիս Արսլանեան, սուրիական բանակին օդային պաշտպանութեան ծառայած է Դամասկոսի մէջ: Ծնած է 1944 թ. Մարտի 8-ին: Գէներալը 1963 թ. կ'ընդունուի Դամասկոսի համալսարան եւ կ'աւարտէ 1968 թ.: Նոյն թուականի Դեկտեմբերին ան լէյտենանտի աստիճանով ծառայութիւն կը մատուցէ սուրիական բանակին:

1973 թ. կը մասնակցի արաբ-խորայէլեան պատերազմին եւ կը պարգեւատրուի քանի մը շքանշաններով<sup>12</sup>:

Փոխգնդապետ (مقدم)՝ Գրիգոր Հինտոյեան Նոյնպէս կը պատկանէր սուրիական սպայական կազմի երկրորդ դասին<sup>13</sup>: Փոխգնդապետը ծնած է Այնթապ: 1921 թ. կը կամաւորագրուի կապի գումարտակին, 1932 թ. կը ստանայ աւագ լէյտենանտի աստիճան (ملازم أول): 1948 թ. կը մասնակցի արաբ-խորայէլեան պատերազմին եւ 1949 թ. կը ստանայ փոխգնդապետի աստիճան: Սուրիական բանակին մէջ

10 **Սամսոնյան Ն.**, Բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում, էջ 160: Տես նաեւ **Նոյնի**, Սիրիայի և Լիբանանի բանակների հայ ռազմական գործիչները, էջ 498:

11 **Սամսոնյան Ն.**, Սիրիայի և Լիբանանի բանակների հայ ռազմական գործիչները, էջ 498:

12 **Նոյնի**, նշ. աշխ., էջ 497: Աւետիս Արսլանեան 1974 թ. ստացած է մայորի աստիճան: 1981-1985 թթ. ան սորված է Անգլիա եւ պաշտպանած է «Թուային ազդանշանի մշակում» թեմայով ատենախօսութիւն: 1985 թ. վերջը կը վերադառնայ Սուրիա, իսկ 1986 թ. կը շնորհուի գէներալ-մայորի աստիճան: 1986-2002 թթ. Աւետիս Արսլանեան եղած է Դամասկոսի օդային պաշտպանութեան գէներալ:

13 **Նոյնի**, Բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում, էջ 161:

ծառայած են նաեւ Անթուան Գուշակչի<sup>14</sup>, Հիքմէթ Գուշակչի (բանակին մէջ ծառայած են պարենաւորման եւ հաշուապահական բնագաւառներէն ներս), Լեւոն Դարաղուպեան, Մմբատ Կուտիշինեան, Արշակ Սարաֆ, Նատիմ Թարաճեան, Վազգէն փաշայ Պազեան, Լեւոն Երանոսեան, Գրիգոր Վարդանեան, Աւետիս Արապեան եւ ուրիշներ<sup>15</sup>:

Այնուամենայնիւ բացի բանակի ծառայութենէն, Սուրիոյ հայերը յետագայ տարիներուն եւս մաս կազմած են երկրի քաղաքական, պետական<sup>16</sup> կեանքին:

14 Գուշակչի ծնած է Հալեպ: 1932 թ., ընդունուած է Հոմսի Ռազմական ակադեմիան, իսկ 1949 թ. կը ստանայ փոխգնդապետի աստիճան: Տես **Սամսոնյան Նայկ**, նշ. աշխ., էջ 160:

15 **Սամսոնյան Նայկ**, նշ., աշխ., 161:

16 «Սուրիոյ հայերը մաս կազմած են երկրի պետական կառոյցին: Երկրին տուած են պետական բազմաթիւ բարձրաստիճան ներկայացուցիչներ՝ Նախարարներ, Երեսփոխաններ եւ այլ քաղաքական պաշտօններ զբաղեցուցած են: Սուրիոյ կառավարութեան մաս կազմած են հայ նախարարներնէր՝ յաջորդաբար Հանրի Հընտիէ (Պալապանեան, 1934), Ֆաթիալլահ Ասիուն (1936, 1943 եւ 1949) եւ դոկտ. Նազիրէ Ֆարահ Սարգիսը (2012 եւ 2014): 1983 թ. Նախօրէին, Երբ գոյութիւն չունէին Նահանգապետական եւ Քաղաքապետական խորհուրդները, կը գործէր Նահանգներու Տեղական ինքնակառավարման մարմինը. Տեղական ինքնակառավարման մարմիններու պաշտօնավարած են՝ բժիշկ Տիգրան Չափանեան, մէթր Նազար Նազարեան, Մովսէս Գ. Քեռլէրեան, Զաւէն Սապունճեան եւ Յարութ Նալլաճեան, որոնք գործած են 1977-1983 տարիներուն:

Սուրիոյ Նահանգապետական խորհուրդներու անդամներ ընտրուած են: Յարութին (Արթին) Պարտունեան (Հալեպ, երկու Նստաշրջան՝ 1983 եւ 1987 թթ.), Յարութ (Արթին) Ասատուրեան (Հալեպ, 1987 թ.), մէթր Նազար Նազարեան (Հալեպ, երկու Նստաշրջան՝ 1983 թ. եւ 1987- թթ.), Հրանդ Աթթարեան (Հալեպ, երեք Նստաշրջան՝ 1983 թ., 1987 թ. եւ 1991 թ.), Ստեփան Բալուբեան (Հալեպ, 1987 թ.), Յասմիկ Խաչատուրեան (Հալեպ, 1987 թ.), Քրիստափոր Իֆատեան (Հալեպ), Ճորճ Պապեան (Հալեպ, երկու Նստաշրջան՝ 1993 թ. եւ 1997 թ.), Ասիա Պետրոսեան (Հասաքէ), Յովհաննէս Մուշեղեան (Հալեպ), Լեւոն Խսիաք (Սահակեան, Հալեպ), Պօղոս Թաշճեան (Հալեպ), Թագուիի Սկրտիչ Նազարեան (Դազգա), մէթր Կարօ Շուշանեան, Նուրի Ապահունիս (Հալեպ), Ճորճ Թիւֆէնքճեան (Հալեպ), Նորա Գրաճեան (Հալեպ) եւ այլն:

Քաղաքապետական խորհուրդներու անդամ ընտրուած են՝ Նշան Օղիկեան (Հալեպ, երեք Նստաշրջան՝ 1983 թ., 1987 թ. եւ 1991 թ.), Սիմոն Իպրահիմ (Լիպարեան, Հալեպ, 1983 թ., Գործադիր մարմինի անդամ), Ճորճ Տառլեան (Հալեպ, 1983 թ.), Կարպիս Թովմասեան (Հալեպ), Սարգիս Չերչեան (Հալեպ), Ստեփան Եագուպեան (Լաթաքիա), Յակոբ Եագուպեան (Թարթուս), Պօղոս Թաշճեան (Հալեպ), Աւետիս (Ատիս) Մուրատեան (Հալեպ)»: Տես **Պաթըրճեան Ա.**, «Հայերը Սուրիոյ Պատմութեան Մէջ», <http://hairenikweekly.com/2016/08/10/28930>:



## դ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵԱԼՔ

Սփիւռքի համայնքներուն ձեւաւորման առանցքը Հայ Եկեղեցին է՝ մշակութային միութիւններու, ազգային ասանդական կուսակցութիւններու եւ հասարակական-բարեսիրական կազմակերպութիւններու գործունէութեան կողքին: Անգնահատելի է անոր դերը ազգային դիմագիծի պահպանման, հոգեմտաւոր արթնութեան եւ ուժացման վտանգէն զերծ պահելու մտահոգութեամբ տարած բազմաբնոյթ գործունէութեամբ:

Յայտնի է, որ Լօզանի պայմանագիրի 42-րդ յօդուածով Թուրքիան պարտաւոր էր «առաջվա պէս ճանաչել կրօնադավանական համայնքների ներքին ինքնավարությունը և ամբողջությամբ պահպանել եկեղեցական, դպրոցական, դատաստանական բնույթի այն բոլոր իրավունքներն ու արտոնությունները, որ նրանց շնորհվել էին սուլթանական հրովարտականերով»: Թէեւ «Թուրքիան հետագայում իրաժարվեց այդ պարտավորություններից, սակայն դրանք պահպանվեցին մանդատի փաստաթղթում, այստեղից էլ անցան Սիրիայի և Լիբանանի հիմնական օրէնքների՝ սահմանադրության մէջ»<sup>1</sup>:

Փաստաթուղթի 6-րդ, 8-րդ եւ 9-րդ յօդուածներով ֆրանսական իշխանութիւնները պարտաւոր էին հաստատել այնպիսի դատական դրութիւն, որ կ'երաշխատէր են տեղաբնիկներու, են օտարականներու իրաւունքները, են տարբեր համայնքներու անձնական իրաւունքներու գոյավիճակը, անոնց կրօնական շահերը, խղճի ու կրօնական ազատութիւնը, առանց ազգի, լեզուի ու կրօնի խտրութեան, նաեւ չմիջամտել համայնքներու ներքին գործերը: Այս բոլորը ներգործուեցան Սուրիոյ հիմնական օրէնքներով:

1928 թ. Սուրիոյ Սահմանադրութեան մէջ կրօնադաւանական համայնքներու գոյավիճակին վերաբերող շարք մը յօդուածներ շարունակուեցան ուժի մէջ մնալ մինչեւ 1938 թ. Նոյեմբեր 18, երբ Սուրիոյ համայնքներու վերաբերեալ Նոր վաւերագիրներ իրապարակուեցան, որոնցմով Սուրիոյ համայնքները պիտի զրկուէին «բոլոր նախընթաց օրէնքներէն», սակայն անոր փոխարէն հաշուի կ'առնուէին՝ կրօնական, վարչական, տնտեսական եւ կրթական բոլոր արտօնութիւնները, որոնք նախօրօք արտօնուած էին համայնքներուն<sup>2</sup>:

Այս մտահոգութենէն թելադրուած էր, որ Վահան Նաւասարդեան Նիկոլ Աղբալեանի ուղղած իր նամակին մէջ կը շեշտէր հետեւեալ միտքը. «Մեր գլխավոր մտահոգությունը պիտի լինի յուրաքանչյուր գաղութի հայություն իբրև համայնք, իբրև մեկ ուրույն ազգային միավոր խմբել և համաձայն ժամանակակից պետական իրավունքի և ըմբռնումների օժտել նրան իր ներքին ազգա-

յին-կուլտուրական գործերը վարելու անհրաժեշտ իրավունքներով»<sup>4</sup>:

Թէեւ այս գաղափարը ոմանց կողմէ կը բացատրուի իշխանութիւն գործելու միջոց, բայց եւ այնպէս իրաւացի էր Նաւասարդեան, որովհետեւ Սփիւռքը պետութիւն չէր: Սփիւռքահայը ապրեցաւ աշխարհով մէկ սփռուած հին եւ Նոր ձեւաւորուած պետութիւններու տարածքներուն եւ իշխանութեանց ներքոյ՝ ընդելուզուելով անոնց բարքերուն, պետական արժեհամակարգին եւ, ինչո՞ւն է, երկրի ներքաղաքական կեանքին:

Արդ, 1938 թ. օրէնքի համաձայն, պետական ճանաչման արժանացած անձնական իրաւունքի գոյավիճակ ունեցող քրիստոնեայ համայնքներ կը համարուէին՝ մարոնականները, յոյն ուղղափառ, հայ առաքելական, հայ կաթողիկէ, ասորի կաթողիկէ, մելքիտ կաթողիկէ, ասիրո-խալդէական եւ լատինադաւանները, ինչպէս նաեւ անտարանականները: Իսկ մահմէտական ուրոյն համայնքները՝ սուննիներ, շիաներ, ալաուիներ, ճաֆարիներ եւ իսմայէլական, տրուզներ: Ինքնուրոյն համայնք կը համարուէր հրեան՝ Հալէպի, Դամասկոսի եւ Պէրտի մէջ<sup>5</sup>:

1943 եւ 1946 թթ. Հալէպի ընդհանուր բնակչութեան թիւը քաղուած պաշտօնական աղբիւրներէ, հետեւեալ պատկերը կը պարզէր<sup>6</sup>:

Համայնք	1943թ.	1946թ.
Իսլամներ	185.000	221.908
Հայ առաքելականներ	65.000	64.165
Հայ կաթողիկէ	9.000	8.000
Յոյն կաթողիկէ	11.600	12.000
Յոյն ուղղափառ	5.600	5.700
Ասորի կաթողիկէ	5.900	6.100
Ասորի ուղղափառ	5.300	5.700
Մարոնիներ (մարոնականներ)	3.700	3.850
Լատիններ	2.540	2.900
Քաղղէացիներ	2.220	2.350
Բողոքական (անտարանական)	2.800	2.700
Հրեաներ	14.000	13.800
Ընդհ. գումար	312.660	349.173

1 **Թովուդյան Ն. Խ.**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն էջ 176:

2 Նոյն տեղը:

3 **Թովուդյան Ն. Խ.**, նոյն տեղը:

4 **Թովուդյան Ն. Խ.**, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Երևան, 1978, էջ 250:

5 **Թովուդյան Ն. Խ.**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, էջ 178:

6 «Արեւելք», օրաթերթ, Ա. տարի, թիւ 25, 24 Յուլիս 1946, Հալէպ:



Իսկ 1943 թ. տուեալներով, ֆրանսացիներու կողմէ կատարուած վիճակագրութեան համաձայն, Սուրիոյ բնակչութեան ընդհանուր թիւը եղած է 2.860.000 մարդ:<sup>7</sup>

Համայնք	1943թ.
Սիւնի (Սուննի)	1,971,000
Ալաուիթ	325,300
Քրիստոնեայ	403,000
Տրուզ	87,200
Իսմայիլիէր	28,000
Իսնա աշարիէր	12,700 ելլն.
ընդամենը	2,860,000

Բացի վերելիչուած օրէնքներէն, արդէն 1924 թ. Օզոստոսիս հրապարակուած օրէնքով քաղաքացիութիւն կը շնորհուի «հինգ տարի անընդմէջ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ բնակող քաղաքացիներուն»: Այսպիսով, 1925 թ. ֆրանսական կառավարութիւնը Սուրիոյ հայութիւնը պաշտօնապէս սուրիահպատակ կը ճանչնայ եւ վերջ կը դրուի գաղթականի մտայնութեան<sup>8</sup>:

Պետութեան հետ համայնքային կապը կը պահպանուի տուեալ համայնքի կրօնապետի միջոցով, որպէս հայութեան ներկայացուցիչ եւ համայնքի բոլոր գործերը կը կարգաւորուի չայ Եկեղեցոյ եւ համայնքապետի միջոցով:

Քննարկուող ժամանակահատուածին Սուրիոյ մէջ կը գոյատեւին քրիստոնեայ տասնմէկ համայնքներ, որոնցմէ երեքը հայ յարանուանութիւններն էին՝ հայ առաքելական, հայ կաթողիկէ եւ հայ աւետարանական, որոնք օժտուած էին գործելու լայն հնարաւորութիւններով:

Համայնքային կեանքի կազմակերպական դրութիւնը համահունչ էր 1863 թ. Պոլսոյ մէջ ընդունուած Ազգային Սահմանադրութեան սկզբունքներուն. որուն համաձայն, Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանը պաշտօնական ներկայացուցիչ կը հանդիսանայ հայ համայնքին, յաջս պետութեան: Իսկ անոր թեմակալ Առաջնորդը եւ հոգեւոր պետն է, եւ միաժամանակ համայնքի պատասխանատուն:

Ազգային առաջնորդարանի վարչամեքենան իր օրէնսդիր Գաւառական (Երեսփոխանական) ժողովով, անկէ բխած քաղաքական ու կրօնական ժողովներով (գործադիր մարմիններ), ուսումնական, դատաստանական, տնտեսական, կրօնաբարոյական դաստիարակութեան, ընկերային ծառայութեան խոր-

հուրդներով, կալուածոց յանձնախումբով, պետական կառոյց մը կարելի է համարել:

Գաւառական ժողովը կը բաղկանայ 35 անդամէ, Հալէպի եւ շրջանի ներկայացուցիչներէ: Ժողովին նպատակը՝ ընթացիկ հարցերու լուծում տալ: Ժողովի անդամները 2 տարին անգամ մը ենթակայ են փոփոխութեան: Քաղաքական ժողովն ալ բաղկացած է 7 (երբեմն 9-ը) անդամէ, որ անմիջական գաւառական ժողովի հսկողութեան ներքոյ է: Բայց պէտք է ըսել, որ հովանատրի դերով հանդէս կու գայ թեմի առաջնորդը, որպէս նախագահ:

Քաղաքական ժողովը, իբրեւ գերագոյն մարմին, կը գործէ եւ հետզհետէ համայնքը կը ներկայացնէ տեղական իշխանութեան մօտ, որովհետեւ կառավարութիւնը, ինչպէս Նշեցինք, չայ Եկեղեցին կը ճանչնայ որպէս հայութեան ներկայացուցիչ եւ իբրեւ այդպիսին իր բոլոր գործերը համայնքին հետ կը կարգաւորէ եկեղեցոյ միջոցով: Այդ իսկ պատճառով եկեղեցոյ տիրելը ազգային քաղաքական հոսանքներու մշտական ձգտումը եղած է եւ տեղիք տուած համայնքային անախորժութիւններու: Ի դէպ յայտնենք, որ վերոյիշեալ ժողովներուն պէտք է ներգրաւուին համայնքի տարբեր խաւերու եւ կուսակցութիւններու ներկայացուցիչներ: Սակայն գտնուելով ՀՅԴ հովանիի ներքոյ՝ կուսակցութիւններու միջեւ յաճախ ստեղծուած են հարցեր եւ տեղիք տուած անախորժութիւններու: Այս շրջանին կը սկսի պայքարը ՀՅԴ-ի դեմ, որովհետեւ «իր ձեռքերուն մէջ կեդրոնացուցած ըլլալով ազգային մարմինները, որոնց մէջ միայն Ռամկավարները Հայաստանեան ճակատէն ունէին ներկայացուցիչներ»<sup>9</sup>. Ուստի ՌԱԿ-ը կ'որոշէ կազմել «հակադաշնակ միջկուսակցական մարմին», որպէսզի «ձնչակեաններ եւ համայնավարներ եւս մտնեն ազգային իշխանութեանց մէջ ու բոլորը՝ հաւասար ձայներով»<sup>10</sup>: Միջկուսակցական պայքարին իրենց մասնակցութիւնը կը բերեն նաեւ «չէզոք»-ները:

Սուրիոյ հայ համայնքը համախմբուած ըլլալով կրօնական երեք յարանուանութիւններուն շուրջ, համայնքային պատշաճ կեանք կը վարէ համաձայն երկրի սահմանած օրէնքներուն, սակայն գերծ չէր կրնար մնալ ու չազդուիլ արտաքին ազդակներու ներթափանցումէն: Երանուանութիւններէն ամենէն ստուարը, թուաքանակի առումով, եղած է հայ առաքելականը՝ հովանատրուած Բերիոյ թեմի կողմէ, որուն առաջնորդական կեդրոնը Հալէպն էր, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան աթոռին հովանատրութիւնը վայելող երկրորդ մեծագոյն շրջանը՝ իր Սրբոց Քառասնից Մանկանց մայր եկեղեցիով, Սուրբ


9 **Պալաքյան Կ. Լ.**, «Ռամկավար ազատական կուսակցության պատմություն», Բ. գիրք, Երևան, 2009, էջ 103-104:

10 **Պալաքյան Կ. Լ.**, նոյն տեղը:

11 Պատմականօրէն առաել հին եւ առաջինը կը հանդիսանայ Բերիոյ թեմը, քանի որ դատար անցեալ ունի մեր ազգային-եկեղեցական պատմութեան մէջ: Մինչդեռ Լիբանանի թեմը անելի ուշ ծնունդ առած է:

7 «ما هو العدد الحقيقي للعلويين في سوريا» 11 يوليو 2013.  
8 «Տաթեւ» տարեգիրք, 1926, Հալէպ, էջ 295-296:






Սրբոց Քառասնից Մանկանց առաջնորդանիստ մայր եկեղեցի-Հալեպ:



Դամասկոսի հայոց Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի:




Ս. Աստուածածին եկեղեցի- Հալեպ:





Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի-Նոր Գիւղ, շալեպ:



Ազգային Սահակեան վարժարանի նախկին մանկապարտեզը- շալեպ:

Գեորգ, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Սուրբ Մարիամ Աստուածածին եւ թեմի այլ շրջաններու եկեղեցիներով եւ մատուռներով<sup>12</sup> ու իր հովանավորութիւնը վայելող Ազգային վարժարաններով: Բացի շալեպէն, թեմը կը հովանավորէր տասնեակ քաղաքներ եւ գաւառակներ<sup>13</sup>: Սակայն 1950 թ. աւարտին եւ վաթսունական թուականներուն տիրող անբարենպաստ պայմաններու պատճառով, քաղաքական վերիվայրումներուն եւ զանգուածային հայրենադարձութեան օրերուն կուսակցական սուր պայքարի հետեանքով, Բերիոյ թեմի հովանիի տակ պիտի մնային շալեպ, Գամիշլի, Լաթաքիա, Քեսապ, Հասիչէ, Տէր Ջօր, Րազգա, Արաբ Փունար (Այն ալ-Արաբ), Ռաս Ուլ Այն եւ այլն:

Արդարեւ, 1944 թ., Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերէն՝ Բերիոյ եւ Դամասկոսի ընդհանուր վիճակագրութիւնը հետեւեալ պատկերը կը ներկայացնէր<sup>14</sup>

Բերիա՝ շալեպ	69.738
Դամասկոս	9.910
ընդամենը՝	79.648
<b>հայ առաքելական</b>	

Իսկ Բերիոյ թեմի դպրոցներու վիճակագրութիւնը 1944-1945 տարեշրջանին կը պարզեր հետեւեալը<sup>15</sup>

Քաղաք	դպրոց	աշակերտ	մանչ	աղջիկ	պաշտօնէութիւն
շալեպ	12 դպրոց	5.030	2.574	2.456	179 հոգի
Թեմերը (շրջանները)	24 դպրոց	7.789	4.221	3.577	292 հոգի
	36	12.819	6.795	6.033	471

12 **Գարաճեան Յ.**, Նայ աւետարանական եմմանուէլ եկեղեցին, «Գեղարդ», Ա. գիրք, շալեպ, 1976, էջ 469:

13 **Գեորգեան Կ.**, «Ամենուն տարեգիրք», 1953, Պէյրութ, էջ 358:

14 «Եթէ Նկատի ունենանք հայ կաթողիկէ եւ հայ աւետարանական համայնքի թիւը, կարելի է ենթադրել Սուրիոյ մէջ տեղակայուած հայ բնակչութեան թիւը շուրջ 90-100 հազար»: Տես **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ, 1975, էջ 588: **Լոյնի**, Նայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, ԺԱ. մաս, «Նայաստանի կոչնակ», Խը. տարի, թիւ 40, Լիւ Երոք, 1948, էջ 945:

15 Տես «Նասկ», ԺԴ. տարի, թիւ 1-2, Յունուար-Փետրուար, 1945, Լիբանան, էջ 32:




ՏՄՐԵԿԱՆ ՎԻՃԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԲԵՐԻՈՑ ԹԵՄԻՆ

1944 - 1945 տարեշրջան

Բ. ՆՐՈՍԵԼՈՒ

ԳՐԱՌՈՒՄ ԹՈՒՄՆԱՆ ՈՒ Վ. Ա. Բ. Ը	ԱՇՏԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ԲԻՆԻՐ			ԳԱՏՏՈՒՆՆԻՐՈՒԹՅԱՆ			ՏՄՐԵԿ. ԳԻՆԻՏՃԵՆ
	Մանչ	Աղջ.	Գուճաք	ԱԼԸ	ՆԵՆ	Գուճաք	
<b>ՀԱՆՔ</b>							
ՀԱՅԿԱՐՁԵԱՆ, Սալիպէ	412	430	842	10	22	32	48300
ԳՐԹԱՐԻՐԱՅ, Վերիլիէ	336	306	642	8	15	23	27200
ԿԻԼԻԿԵԱՆ, Միսի	378	357	735	13	17	30	28837
ՍԱՀԱԿԵԱՆ, Մէյսան	201	206	407	6	10	16	18500
ՋՈՒՄՐԵԱՆ, Մէյսան	276	260	536	10	12	22	24900
ՄԵՍՐՈՒՅԵԱՆ, Մէյսան	226	237	463	3	9	12	11500
ԿԻԼԻԿԵԱՆ, Մէյսան	219	191	410	3	8	11	9850
ԿԻԼԻԿԵԱՆ, Զ. ԳՂՂՈՐ	181	142	323	3	6	9	11800
ԳԵՐՄԱՆԻԿԵԱՆ, Զ. ԳՂՂՈՐ	62	77	139	.	4	4	2500
ԱՐՄԵՆԵԱՆ, Ե. ՄԱԳՍԷՍ	43	50	93	.	4	4	2150
ՎԱՐՉՈՒՆԵԱՆ, Տաղուտի	193	167	360	2	10	12	7150
ԱՐՄԵԱՆ, Սէպիլ	47	33	80	2	2	4	3573
	<b>2574</b>	<b>2456</b>	<b>5030</b>	<b>60</b>	<b>189</b>	<b>179</b>	<b>195760</b>
<b>ԹԵՄԵՐԸ</b>							
ԱԶԱՐ	122	113	235	6	5	11	5600
ԱՅՐԻՆ	96	72	168	4	3	7	5200
ԱՐԱԳ-ԲՈՒԿԱՐ	128	89	217	4	3	7	7700
ԱՅՆ ԷԼ-ԱՐՈՒՄ	41	25	66	1	1	2	2500
ԱՍՈՒՏԱ	30	19	49	.	1	1	700
ԳԱՄԻՏԵԼԻ	247	89	336	5	5	10	14000
ԳԱՐԱՏՈՒՐԱՆ	67	56	123	2	3	5	2100
ՇԱԳՈՒԳԻՅԷ	55	35	90	3	1	4	1500
ԹԷԼ-ԱԳԻՍՏ	53	40	93	1	1	2	2200
ԹԷԼ-ԳՐԱԳ	34	21	55	2	.	2	2000
ԹԷԼ-ՔՕՉԷՔ	17	16	33	.	1	1	700
ԹՐԹՈՒՄ	17	10	27	1	1	2	1500
ԼԱԹԱՔԻԱ	122	111	233	4	6	10	9500
ՀԱՄԻՉԷ	45	55	100	4	2	6	5800
ՂՇԱՆՄԻՅԷ	15	5	20	1	1	2	800
ՏԱՐԱԳՂՈՒՄ	128	89	217	5	5	10	6700
ՀԷԼԻԿՔՕ	25	5	30	.	1	1	850
ՃՈՒՌԱ	34	6	40	.	1	1	900
ՈՍՄ-ԷԼ-ԱՅՆ	62	8	70	1	1	2	2900
ՏԷՐԳ-ՔՕՐ	67	53	120	4	2	6	5500
ՏԷՐԳ-ՄԻՅԷ	30	20	50	.	2	2	2500
ՐԱԳԱՍ	53	29	82	1	2	3	2750
ՔԷՍԱԳ, ազգային	57	53	110	2	3	5	3800
,, Միացեալ վրձ.	102	102	204	5	6	11	5600
<b>Գուճաք -</b>	<b>4221</b>	<b>3577</b>	<b>7798</b>	<b>116</b>	<b>176</b>	<b>202</b>	<b>287550</b>

Հալէպ, 20 փետր. 1945  
Գիւան Ազգ. Առաջնորդարանի



37  
50

1944/45 եւ 1945/46 վերջին երկու  
գարեցական տարեշրջաններուն, Հալէպի Թեմի Ազգին ընծայած է  
531 ընթացաւարաներ, հետեւեալ նախադրարաններէն.-

Վարժարանի Թուանը եւ վայրը	1944/1945			1945/1946			ԳՐԱՌՈՒ ՐԱՄԱՆԱՐԱՆՆԵՐ
	Մանչ	Աղջ.	Գուճ.	Մանչ	Աղջ.	Գուճ.	
Հայկազեան, Դաշէյի	25	27	52	26	29	54	107
Սրբասիրաց, Վերիլիյէ	20	27	51	24	31	55	106
Մասալեան, Մէյսան	9	12	20	6	11	17	77
Կիլիկեան, Միսի	18	34	52	.	.	.	52
Ջաւարեան, Մէյսան	8	15	23	13	7	20	12
Կիլիկեան, Գլղուր	6	2	8	5	9	14	32
Մարտարեան, Մէյսան	3	10	13	5	7	12	25
Վարդանեան, Տաղուտիյէ	4	8	12	4	12	16	29
Ռատուսախրաց, Տաղուտի	6	7	13	5	9	14	27
Դաւալեան, Ազազ	7	6	13	7	3	10	22
Մ. Տակարեանց, Համբարձ	4	1	5	5	7	12	17
Ազգ. Վարժարան, Գարաուր.	4	3	9	4	2	6	15
Ռատուսախր, Քէւաղ	2	4	6	4	6	10	16
Գամբշիի Ազգ. վրձ.	-	-	-	6	7	13	13
<b>Գուճաք</b>	<b>123</b>	<b>155</b>	<b>278</b>	<b>114</b>	<b>139</b>	<b>253</b>	<b>531</b>

Քաղաքի Կիլիկեան Վարժարան վերջացող /1945-46/ տարեշրջանին գարեցա-  
կան վիճակացոյց չէ ներկայացուցած, որով կանգիտանանք Նոյն վարժարանէն  
1945/46 տարեշրջանին ընթացաւարտ էրող աշակերտներու թիւը, այդ իսկ տա-  
նաւով ալ զանց ըրած ենք :

Գիւան Ռատուսախր խորհրդոյ



## Ե. ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅՈՅ ԹԵՄԵՐՆ ՈՒ ՅԱՐԱՆՈՒԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես նախօրոք նշած էինք, որ Բերիոյ թեմի Առաջնորդ Զարեհ Ծ. վրդ. Փայասլեանի (1940-1956 թթ.) հովուական առաջին տարիները կը զուգահեռակապին Բ. Աշխարհամարտի, հայրենադարձութեան եւ Սուրիոյ անկախութեան ճանապարհին մղուող պայքարի օրերուն: Բայց եւ այնպէս թեմը վերագարթօնք ապրեցաւ տնտեսական, մշակութային եւ կրթական ոլորտներէն ներս: Վերակարգաւորուեցաւ ժողովական կեանքը, զարկ տրուեցաւ կալուածաշինարարական աշխատանքներուն: Կրթական բազմապիսի նորարարական ծրագիրներու կողքին գնահատուեցաւ ուսուցիչի վարկը, յատկապէս նիւթաբարոյական գետնի վրայ: Սրբազանը շրջահայեաց քաղաքականութեամբ զօրավիճ կանգնեցաւ բարեխնամ պետութեան եւ արաբ ժողովուրդի կողքին: Վարչական, հոգեւորկրօնական գործունեութեան կողքին, առաւել կարեւոր անդաստան համարեց կրթական բնագաւառը՝ հաստատելով, որ լուսաւորութեան ճամբով միայն կարելի է դաստիարակել նորահաս սերունդը՝ զայն թրծելով հոգեւոր եւ ազգային-գաղափարական սկզբունքներով:

1947 թ. Բերիոյ թեմի Գաւառական ժողովի խնդրանքով, Զարեհ Ծ. վրդ. Անթիլիասի մէջ եպիսկոպոս կը ձեռնադրուի: Սրբազանը իր հովուապետական առաքելութեան ընթացքին կ'այցելէ Ճըսր Շուղուրի գայմագամութեան (գաւառակի) մէջ գտնուող Եագուպիէ եւ Գնիէ (Ղընէիէ) գիւղերու բնակիչներուն, որոնց թիւը կը հասնէր 150 ընտանիքի՝ մեծ մասամբ արաբախօս: Ան կը ծրագրէ եկեղեցի եւ դպրոց կառուցել՝ այդ գիւղերու բնակիչները վերադարձնելու առաքելական եկեղեցւոյ գիրկը: Սրբազանի խնդրագիրին համաձայն, չԲԸՄ-ը 4.000 տողարի յատկացում կատարելով 1950 թ. հայաբնակ գիւղի՝ Եագուպիէի, եկեղեցւոյ կառուցումը կը սկսի: 1951 թ. արդէն պատրաստ էր գործելու:

Տ. Զարեհ եպս.-ի առաջնորդութեան օրերուն կը հրապարակուի պետական նոր հրամանագիր մը, որով ծայրայեղ սեղմումներու կ'երթարկուին Սուրիոյ մէջ գտնուող հայկական դպրոցները, մշակութային եւ մարզական միութիւնները: Սահմանուած օրէնքին համաձայն հայերէնը նաեւ կը դասուէր օտար լեզուներու շարքին, որով կը սահմանափակուէր կրթական գործունեութիւնը եւ ազգային պատմութեան ուսուցումը կը վտանգուէր:

Այդ տագնապալից օրերուն սրբազանը չի զլանար որեւէ աշխատանք կատարելու: «Ան իր դիմումները կրկնեց ու վերակրկնեց եւ ուժեղացուց իր գործակցութիւնը քոյր համայնքներուն հետ եւ յաջողեցաւ նախագահական կարգադրութեամբ ապահովել հրապարակուած օրէնքի առկայութիւնը եւ վարժա-

րաններն ու միութիւնները փրկեց մեր ինքնութիւնը սպառնացող վտանգէն»<sup>1</sup>: Օրէնքի առկայումով, 175 օրէնքին որպէս կցորդ մշակուեցաւ եւ վաւերացուեցաւ նորը, որուն հիման վրայ հայերէնը կը նկատուէր «բնիկ լեզու սուրիահայ քաղաքացիներու»<sup>2</sup>: Այսպէս հայերէն լեզուի ուսուցումը գերծ մնաց ամէն կաշկանդումէ:

Տ. Զարեհ եպս. հանգամանքներու բերումով 1956 թ. պիտի ձեռնադրուէր Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս եւ Բերիոյ թեմի Գաւառական ժողովի անդամներուն միաձայնութեան Տ. Ղեւոնդ արք. Չեպէյեան, որ Կիպրոսի թեմի առաջնորդ էր, 30 Հոկտեմբեր 1956 թ. Նորընտիր կաթողիկոսի սրբատառ կոնդակով եւ սուրիական կառավարութեան կողմէ պաշտօնապէս ճանաչուէն Ետք, 16 Նոյեմբեր 1956 թ. կը ժամանէ Հալէպ:

Ղեւոնդ սրբազան շարունակելով իր նախորդի աշխատանքը, թեմէն ներս յառաջ կը տանի ազգային-եկեղեցական կեանքը, թեմի եկեղեցական տօնացոյցէն դուրս մնացած տօները առաւել կը կազմակերպուին եւ համայնքէն ներս սովորութիւն կը դարձնէ անոնց նշումը:

Սրբազանը իր հովուապետական շրջագայութեան ընթացքին կ'այցելէ՝ ճարապլուս, Աֆրին, Լաթաքիա, Թեսապ: Իր ջանքերով 1958 թ. անգամ մը եւս կը դադանջէ Արամոյի Ս. Ստեփանոս մատրան զանգը: Կ'այցելէ Ճէզիրէի հայաբնակ վայրերը՝ Ամուտա, Թէլ Պրագ, Հասիչէ, Տերպէսիէ, Տերիք: 1958 թ. կ'այցելէ Ղընէսիէ եւ 1960 թ. վերաշինուած եկեղեցւոյ օծումը կը կատարէ: Մէկ տարի անց՝ 1959 թ. Տէր Զօրի Ս. Նիփսիսմեանց եկեղեցւոյ մէջ կը տեղադրէ Եղեռնի նահատակներու յիշատակը անմահացնող խորանաձեւ յուշակոթող մը: Ազգապատկան կառուցողական աշխատանքներու կողքին իր օրով թեմը օժտուած է Առաջնորդական փոխանորդութեամբ յանձնիս՝ Տ. Մեսրոպ վրդ. Աշճեանի «քարոզչական եւ ուսուցչական պաշտօնով»: Բայց կը գործէ միայն մէկ տարի՝ 1965-1966 թթ.: 29 Սեպտեմբեր 1966 թ. Երանաշնորհ Տ. Բարբէն կաթողիկոս Կիլիկիայի աճիւնները կը փոխադրուին Անթիլիաս<sup>4</sup>:

Սրբազանի պաշտօնավարութեան վերջին տարիներուն կրթական նախարարութեան կողմէ սահմանուած նոր օրէնքը լուրջ մտահոգութեան առաջ կը կանգնեցնէ համայնքի ղեկավարութիւնը: Շնորհիւ Սրբազանի եւ սրտցաւ ազգայիններու անմիջական քայլեր կը ձեռնարկուին եւ կը յաջողին վերաբանալ հայկական վարժարանները (տէն դպրոցներու բաժինը):

Սրբազանի հրաժարականով թեմը 1967-1968 թթ. կ'ունենայ Առաջնորդական

1 **Տեմիրճեան Վարդան եպս.**, նշ., աշխ., էջ 359:

2 Նոյն տեղը:

3 Նոյն տեղը:

4 Նոյն տեղը, էջ 365-412:



տեղապահ յանձին՝ Ս. Առոմ առագ քահանայ Քեհեաեանի:

6 Յուլիս 1968 թ. թեմի Առաջնորդական տեղապահ կը կարգուի Ս. Տաթև վրդ. Սարգիսեան (1968-1977 թթ.): Սրբազանի օրով իրականութիւն կը դառնայ Հալեպի Ս. Աստուածածին Նորակառոյց եկեղեցոյ եւ անոր կից Ազգային Կրթասիրաց վարժարանի կառուցումը: (Աւելի ուշ պիտի կոչուէր Սարգիս Զեմպերճեան երկրորդական վարժարան): 1969 թ. կ'ընտրուի Բերիոյ թեմի Առաջնորդ: Սրբազանը Քոյր յարանուանութիւններու հանդէպ կ'ունենայ յատուկ ակնածանք:

Ս. Տաթև անհրաժեշտ կը նկատէ թեմէն ներս վարդապետի մը գոյութեան, եւ 1969 թ. Հալեպ կը ժամանէ Ս. Օշական արդ. Չոլոյեան, որպէս Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանի հայերէն լեզուի եւ կրօնի դասատու, Ս. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցոյ քարոզիչ եւ Ազգային Սահակեան վարժարանի տնօրէն:

1971 թ. Սրբազանը Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին հետ կ'այցելէ Սուրիական Արաբական Հանրապետութեան Նորընտիր Նախագահ զօրավար Հաֆէզ ալ-Ասատին<sup>5</sup>:

Բացի Բերիոյ թեմէն, Սուրիոյ տարածքին գոյութիւն ունի Առաջնորդական Տեղապահ Դամասկոսի թեմը: Թեմը Սուրիոյ Արաբական Հանրապետութեան հարաւային հատուածին վրայ կը գտնուի եւ կ'ընդգրկէր Դամասկոս (Հաուրանի եւ Ճէպէլ Տրուզի), Համա, Հոմս քաղաքները իրենց արուարձաններով: Դամասկոսի Ս. Գնէլ արք. Ճէրճեան «Դամասկոսի Սբ. Սարգիս եկեղեցին» անտիպ աշխատասիրութեան մէջ կը նշէ, որ «Կիլիկիոյ վերջնական պարպումին հետեւանքով, Սիսի կաթողիկոսը, Սահակ Բ. Խապայեանն ալ իր ժողովուրդի հետ Սիսէն կը փոխադրուի Հալեպ, որ միակ Թեմն էր Սիսի Կաթողիկոսութեան»<sup>6</sup>: Կաթողիկոսը բազմիցս կը դիմէ «Ս. Յակոբեանց Աթոռին խնդրելով որ Սիւրիոյ երուսաղէմական կալուածներուն յանձնումը Սիւրիոյ թեմէն պահուելով՝ եկեղեցիները, դպրոցները ու վանատունները իրեն տրամադրութեան տակ դրուին Կիլիկիոյ կաթողիկոսութեան Նորոգ կազմակերպութիւնը դիրացնելու համար»<sup>7</sup>: Ս. Յակոբեանց վանքին «Տնօրէն ժողով»-ը խորհրդակցութիւններէ ետք, 26 Մարտ 1929 թ. Միաբանութեան ժողովը «միաձայնութեամբ որոշեց գոհացում տալ կթղ.-ի (կաթողիկոսի) առաջարկին եւ յետո կոչել Սիւրիոյ իր տեսուչները՝ Ս. Աթոռ հրապիրելով զանոնք»<sup>8</sup>: Որոշման համաձայն «Ս. Աթոռոյ

պատկանող Սիւրիոյ եկեղեցիները, դպրոցները ու վանատունները յանձնուեցան Կիլիկիոյ կաթողիկոսութեան, եւ միայն կազմուածները ըստ առաջնոյն մնացին Ս. Աթոռին»<sup>9</sup>:

1946 թ. Նոյեմբերին կը վախճանի Դամասկոսի թեմի կաթողիկոսական փոխանորդ Եփրեմ արք. Ասիլեանը (Տոհմունին, 1937-1946 Նոյեմբեր 27)<sup>10</sup>: Կիլիկիոյ կաթողիկոսը իր թեմերու հովուապետական այցելութեան ժամանակ, կ'այցելէ Դամասկոս եւ Կիլիկիոյ կաթողիկոսական փոխանորդ կը նշանակէ Ս. Ռուբէն արք. Մանասեան (1946-1948 թթ.)<sup>11</sup>:

Դամասկոսի թեմի թաղման տոմարներու տուեալներուն համաձայն, 4 Սեպտեմբեր 1949 թ. թեմի առաջնորդ կը նշանակուի Շաւարշ վրդ. Գոյումճեանը (1949-1968 թթ.): Արխիներու անհասանելիութեան պատճառով եւ չապափնելով բանաւոր խօսքին՝ յստակ չէ, թէ ինչ - ինչ պատճառներով 1949 թ., դամասկոսահայութիւնը կ'ընդունէ թեմը Բերիոյ թեմին միացնելու եւ վերջ տալու անախորժութեան. «Երկար տարիներէ ի վեր Դամասկոսի թեմը կը ներկայացնէ անկազմակերպ վիճակ մը: Յաճախ, Վեհափառ Հայրապետը իր կամքն է պարտադրած թեմիս ժողովուրդին, հակառակ ժողովուրդի եւ գոյութիւն ունեցող ժողովներու ցանկութեան: Նշանակովի առաջնորդ, նշանակովի մարմիններ, եւ այլ քմահաճ կարգադրութիւններ պատճառ դարձան, որ դամասկահայ ժողովուրդը հեռու մնայ եկեղեցիէն: Գրաւոր եւ բանաւոր, պաշտօնական եւ անպաշտօն խնդրանքները, յիշեցումները եւ թելադրանքները՝ օրէնքի գործադրութեան համար մնացին ապարդիւն եւ անխելի»<sup>12</sup>: 2 Օգոստոս 1949 թ. խումբ մը ազգայիններու խորհրդակցութեամբ կ'որոշուի կարգաւորել Դամասկոսի թեմի ազգային գործերը. «նկատի ունենալով թեմի ժողովուրդի թիւի նուազումը, անոր տնտեսական վիճակը եւ այն մեծ դժուարութիւնը, որոնց կը բախի դամասկոսահայութիւնը, որպէս առանձին թեմ, իր առաջնորդով եւ առաջնորդարանով»<sup>13</sup>: Բացի այդ, ազգայինները կը մտածէին, որ «սուրիահայ իրակա-

9 Նոյն տեղը:

10 «Հայաստանի կոչնակ»-ի 1930 թ., թիւ 39 համարին մէջ կը նշուի, որ «Կիլիկիոյ Սահակ Բ. կաթողիկոսը, Դամասկոսի մէջ, Օգոստոս 3-ին եպիսկոպոս ձեռնադրեց Եփրեմ Ժ. վրդ. Տոհմունին: Ձեռնադրութեան հանդէսին ներկայ եղան Նաեւ յարանուանութեանց պետերը»: «Հայաստանի կոչնակ», Լ. տարի, թիւ 39, 27 Սեպտեմբեր 1930, Նիւ Եորք, էջ 1242:

11 1947 թ. սկիզբը, «բոսն դժգոհութիւններու տեղի տուաւ Դամասկոսի թեմի «Կաթողիկոսական փոխանորդ» անուանումը Ռուբէն արք. Մանասեանի, որ կը վարէր Նախապէս Պաղատի առաջնորդութիւնը (1929-1944 թթ.): «Կիլիկիոյ կաթողիկոս Գարեգին Ա. Յովսէփեանց պարտադրեց զինք դամասկոսահայութեան եւ սակայն այս վերջինը չմարսեց զայն», (ՏԵՍ «Արեւելք», տարեգիրք, Հալեպ, 1948, էջ 164):

12 «Արեւելք» օրաթերթ, Դ. տարի, թիւ 56 (981), 27 Օգոստոս 1949, Հալեպ, էջ Բ., «Դամասկոսահայութիւնը որոշեց միանալ Հալեպի թեմին»:

13 «Արեւելք», Նոյն տեղը:

5 Նոյն տեղը, էջ 422-433:

6 **Աղանունի Սկրտիչ եպս.**, Միաբանք եւ Այցելութ Նայ Երուսաղէմ, Երուսաղէմ, 1929, էջ 439-440:

7 **Ճէրճեան Գ. արք. Դամասկոսի թեմի Առաջնորդական Տեղապահ** (ուսումնասիրութիւն) «Դամասկոսի Սբ. Սարգիս եկեղեցին», 30 Ապրիլ 1997 (անտիպ), թ. 5: Այս անտիպ էջերը տրամադրուած են Դամասկոսի թեմի առաջնորդ Ս. Արմաշ եպս. Նալպանտեանի կողմէ:

8 **Ճէրճեան Գ. արք.**, նշ. աշխ.:



նութեան մէջ երկու Առաջնորդներու գոյութիւնը կրնայ դժուարութիւններու դուռ բանալ արտաքին յարաբերութիւններու ճակատին վրայ, ինչ որ կրնայ վնասել մեր ազգային շահերուն»<sup>14</sup>, կ'որոշուի Սուրիոյ մէջ գոյութիւն ունեցող երկու թեմերը միացնել, եւ ունենալ «մէկ առաջնորդ» եւ Սուրիոյ «արտաքին եւ ներքին ճակատներու վրայ» ներկայանալ «մէկ գլուխով»<sup>15</sup>: Այս առաջադրանքէն թելադրուած կ'ընտրուի յանձնախումբ մը՝ որ կը ձեռնարկէ հանրագրութեան, որուն միջոցով ժողովուրդի ճնշիչ մեծամասնութիւնը (ուրբ տասներորդը) կը յայտնէ իր կամքը՝ լսելի դարձնելու իրենց ձայնը ազգի ղեկավարներուն:

29 Օգոստոս 1949 թ. Բերիոյ թեմի ազգային Գաւառական ընդհանուր ժողովի ԿԸ. նիստին կը քննարկուի Դամասկոսի թեմի պարագան՝ նախագահութեամբ Բերիոյ թեմի առաջնորդ Տ. Զարեհ եպս.-ի, ատենապետութեամբ Միհրան շերարտեանի եւ ժողովի մասնակից 18 երեսփոխաններու ներկայութեամբ: Կարծիքներու փոխանակութենէ եւ թեր ու դեմ վիճաբանութենէ ետք, կը բանաձեւուի հետեւեալը, որ ժողովը «սկզբունքով կ'որոշէ ընթացք տալ եղած դիմումին եւ գործարդութիւնը կը թողու քաղաքական ժողովին, յարմար եղանակով եւ յարմար ժամանակին»<sup>16</sup>: Ահա թէ ինչ կը գրէ նորանշանակ Շաւարշ սրբազանը ՆՍՕՏՏ Գեորգ Զ. Զեօրեքճեանին ուղղած իր նամակին մէջ. «1949 թ. Դամասկոսի թեմի ժողովրդին որոշ հատուած մը ժպրհած (յանդգնած) էր հանրագրութիւնով, զոր ստորագրած էին նաեւ բողոքական եւ կաթողիկէ եկեղեցեաց զաւակներ, կարգադրել որ Դամասկոսի թեմը ջնջուի իբր անկախ եւ ինքնուրոյն թեմ եւ կցուի Բերիոյ՝ քաղաքական անխոստովանելի նպատակով, ինչ որ իրագործած էին տեղւոյն վրայ: Թեմի հաւատարիմ եւ հաւատարոք զանգուածի ընտրանին, սակայն, խնդրամատոյց եղած ըլլալով առ Շնորհագարոյ Գարեգին կաթողիկոսն որ ան արժանայ նշանակել կաթողիկոսական փոխանորդ իրենց թեմին իբր միակ դարան բաղձալի կացութեան, իմ կարգին տեղի տուի Նորին Ս. Օծուծեան փափաքանց ...»<sup>17</sup>: Մեզի յստակ չէ թէ հրաժարած է կամ ո՛չ: Բայց եւ այնպէս, ինչպէս պատմութիւնը կ'ապացուցէ, որ Շաւարշ եպս. Գոյումճեան (Երուսաղէմի միաբանութենէ) հովուած է Դամասկոսի թեմը կաթողիկոսական փոխանորդի հանգամանքով: Յատուկ դիրքորոշում որդեգրած է ընդդէմ դաշնակցականներուն եւ Անթիլիասի կաթողիկոսութեան<sup>18</sup>: Ան յաջողած է «իր ազդեցութեան

14 Նոյն տեղը:

15 Նոյն տեղը

16 «Արեւելք», օրաթերթ, Դ. տարի, թիւ 61 (986), 1 Սեպտեմբեր 1949, չափաքան:

17 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4763, թ. 1-2 (Էջմիածին Գերագոյն շոգեւոր խորհուրդի ֆոնտ, «Դամասկոսի թեմի առաջնորդ Շաւարշ վրդ. Գոյումճեանի գրութիւնները՝ եկեղեցական, թեմական գործերի մասին»:

18 Եազըճեան Գ., Սփիւռքահայ քաղաքական հոսանքներն ու զաղութները նորհրդային

ենթարկել շոմսի եւ Հաուրանի հայկական եկեղեցիները եւ բարձրացնել Դամասկոսի թեմի նշանակութիւնը»<sup>19</sup>: Պատմական տեղեկութիւններու համաձայն, 1967 թ. Յունուարին Շաւարշ եպս. Գոյումճեան սուրիական նոր կառավարութեան կողմէ պաշտօնապէս կը ճանչցուի իբրեւ Դամասկոսի թեմի պետ (առաջնորդ) (1949-1968)<sup>20</sup>:

Սակայն համայնքէն ներս կեանքը այնքան ալ հեզասահ չէ ընթացած: Եթէ սրբազանի յարաբերութիւնները հաշտ չեն եղած դաշնակցականներու հետ, հապա ինչն էր խնդիրը, որ «ինչակ ղեկավարները» կոպիտ սխալներ կատարէին սրբազանի անձին. «ինչակ ղեկավարները քաղաքականապէս կատարած շարք մը սպրդումներու կողքին կոպիտ սխալ մը եւս կը գործեն եպիսկոպոսի եւ եկեղեցական խորհուրդի նկատմամբ». «Իրօք, Շաւարշ եպս. Գոյումճեանը ունի առանձին լուրջ թերութիւններ, սակայն ինչակները այս թերութիւններու խիստ եւ պաշտօնական քննադատութեամբ, բացայայտօրէն հանդէս կու գան Շաւարշ եպս. Գոյումճեանի դէմ եւ իբրեւ այդպիսին ճակատի միասնութեան քայքայման»<sup>21</sup>: Այդ ստեղծուած իրավիճակը պատճառ պիտի հանդիսանար հայկական երկու հատուածներու յարաբերութիւններու առաւել սրումին, ինչ որ տեղի պիտի տար երկարամեայ վէճերու:

Ինչպէս նշեցինք, 1967 թ. Յունուարին Շաւարշ եպս. սուրիական իշխանութեանց կողմէ պաշտօնապէս կը ճանչցուի իբրեւ Դամասկոսի թեմի եւ եկեղեցւոյ Առաջնորդ: Սակայն 1969 թ. կեսերուն, Շաւարշ եպս. Գոյումճեան առողջական պատճառներով կը մեկնի Ուրուկուէյ, Դամասկոսի թեմը կը մնայ առանց թեմակալ առաջնորդի: Եկեղեցւոյ գործերը ժամանակատրուապէս կը ղեկավարէ Տ. Պարգեւ աւագ քահանայ Պարտազճեանը, որ «քանի մը հանգամանքներու պատճառով, տատանողական դիրք բռնեց եւ քանի մը հարցերու պարագային հանդէս եկաւ դաշնակցականներուն պաշտպանութեամբ՝ ձգտելով պառակտում թոյլ չտալ թեմին մէջ»<sup>22</sup>: Բայց անգամ մը եւս, Դամասկոսի մէջ սկիզբ կ'առնէ ներհամայնքային խռովութիւններ. ինչակեանները եռանդուն աշխատանք կը կատարեն եւ կարճ ժամանակամիջոցին կը յաջողին իրենց շուրջ համախմբել բոլոր յառաջդիմական ուժերը, որոնց «նեցակցեցան հայ համայնավարները»՝ ուղղորդելով անոնց աշխատանքը եւ բարոյական, նիւթական

զաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի), էջ 298-301:

19 Եազըճեան Գ., նշ. աշխ., էջ 208: Տես նաեւ Բաղայ յան Ա., Սիրիայում ԽՍՀՄ-ի դեսպանատան տեղեկանքը սիրիահայ գաղթօջանի մասին, Հոկտեմբեր 17- 1963 թ. (Դամասկոս), «Բանբեր Հայաստանի արխիվներ», N 2, Երևան, 2009, էջ 215 (ոտաբերն):

20 Եազըճեան Գ., նշ. աշխ., էջ 221:

21 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 342, թ. 2, 6:

22 Եազըճեան Գ., նշ. աշխ., էջ 301:




Եւ քաղաքական օգնութիւն ցուցաբերելով<sup>23</sup>: Դամասկոսի Թեմական խորհուրդը, որ մեծ մասամբ յառաջդիմական ուժերէ կազմուած էր, ոչ նպատակաշարժար չհամարեց համայնքը առանց առաջնորդի պահել<sup>24</sup> եւ շարք մը անյաջող առաջարկութիւններէ եւ փնտռուքէ ետք, կանգ առաւ Ս. Տարօն վրդ. Ճերեճեանի թեկնածութեան վրայ: Հակառակ համայնքի փոքրաթիւութեան եւ այլ ներքին անհաղորդ վիճակին, Ս. Տարօն յօժարակամ իր հաւանութիւնը կը փոխանցէ՝ դառնալու Դամասկոսի թեմի Առաջնորդի պաշտօնակատար, եւ 1969 թ. Օգոստոսին կը ժամանէ Դամասկոս: Թեմական խորհուրդի կողմէ կ'ընտրուի այդ պաշտօնին, որպէս Տեղապահ<sup>25</sup> եւ տեղական իշխանութեանց կողմէ կը հաստատուի անոր պաշտօնավարութիւնը: Մինչդէռ դաշնակցականներու կողմէ Գամիշլիէն Դամասկոս ղրկուած էր Կիլիկիոյ միաբաններէն Ս. Վահան վրդ. Պերպերեանը:

Յետագայ տարիներուն, սակայն, առաւել պիտի խորանար այն վիճը, որ հետեանք էր Դամասկոսի թեմի եւ անոր աթոռին շուրջ ծագած ընտրապայքարին: Նորանշանակ թեմի Առաջնորդը, չդիմանալով ներհամայնքային վեճերուն եւ յարուցուած դժուարութիւններուն, անսպասելիօրէն կը հեռանայ երկրէն՝ կրկին աթոռը թափուր պահելով<sup>26</sup>: Ֆրանսայի հայոց թեմի Առաջնորդի աջակցութեամբ, Տիրան Ակինեանը մեծ դժուարութեամբ կը յաջողի Ս. Տարօնը «տարհամոզել եւ գայն Դամասկոս վերադարձնել»<sup>27</sup>: Ան կը պաշտօնավարէ 1969-1971 թթ., որմէ ետք թեմի առաջնորդական պաշտօնին կը նշանակուի Ս. Կորին եպս. Մանուէլեան:

Բացի երկու թեմերէն, Սուրիական Արաբական Հանրապետութեան հիւսիս արեւելեան կողմը գտնուող Ճեզիրէի մէջ եւս կը հաստատուի Բերիոյ թեմի Առաջնորդական փոխանորդական աթոռ:

Ճեզիրէն, սահմանակից Թուրքիոյ եւ Իրաքի, կարեւորագոյն նահանգներէն կը համարուէր: Հայերը կայք հաստատած էին այնտեղ (1922, 1927, 1930 եւ 1939 թթ.) Արեւմտեան Հայաստանի նահանգներու պարբերաբար պարպումով: Արդէն երեսունականն թուականներու աւարտը Գամիշլիի շրջանին քրտախօս պշերիկցիներու ձեռամբ ձեւաւորուիլ սկսած էին հայկական փոքր բնակավայրեր, այնտեղ կառուցուած էին շուրջ 25-է աւելի հայկական գիւղեր, իրենց եկեղեցիներով եւ ծխական դպրոցներով<sup>28</sup>

23 Նոյնի, նշ. աշխ., էջ 221 եւ 301:  
 24 Նոյնի, էջ 301 (տե՛ս պատճառները):  
 25 Նոյնի, էջ 302:  
 26 Նոյնի, էջ 298-307:  
 27 Նոյնի, էջ 306:  
 28 Այս գիւղերու մեծ մասի բնակչութիւնը ներգաղթած են Հայաստան (1946-1948 թթ.) եւ (1964-



- |                         |                   |                             |                 |
|-------------------------|-------------------|-----------------------------|-----------------|
| 1. Ուղղութիւտ (Վատ-Վատ) | 9. Սուրսարա       | 18. Հըլէլիտ                 | 26. Ռըշուանիտ   |
| 2. Հըլքօ                | 10. Շամասիտ       | 19. Տայօ (Տէյօ)             | 27. Ռեյէպիտ     |
| 3. Տալաուիտ (Տելավիտ)   | 11. Հըմերա        | 20. Հիմօ                    | 28. Թէլ Այիտ    |
| 4. Տըլպպանա             | 12. Շեյխաճիլ      | 21. Ճըմաքէ                  | 29. Սաֆիա       |
| 5. Սուեճա               | 13. Ճընետի (մեծ)  | 22. Ջանտա                   | 30. Սաֆիքա Ամրի |
| 6. Ապու ճալալ           | 14. Ճընետի (փոքր) | 23. Գըզըլճա (Բըզըլճա-Բըզլա) | 31. Թարթափ      |
| 7. Թյսում (Թէլ Թում)    | 15. Չըրգօ         | 24. Հալիսի                  |                 |
| 8. Ճուխա                | 16. Սըլա-մալէք    | 25. Ճումայիտ                |                 |
|                         | 17. Մասհատա       |                             |                 |

<sup>28</sup> Աստղանիշ կրող տեղանունները նշուած են՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւ, Բերիոյ թեմ (1945-1946 թթ.), հաւաքածոյ 3, ցուցակ 1, թղթածրար 101, թերթ 5, 6:



Ուղթուղթիտ	Թխում	Ճընետիտ (մեծ)	Տայօ	Նեքքօ
Հըլքօ	Ճուխա	Ճընետիտ (փոքր)	Հիմօ	Դըզըլճաղ
Տալաուիտ	Մլուքսարա	Չըրզօ	Ճըմաքե	Թարթափ
Տըլպանա	Շամասիտ	Սըլա-մալէք	Ջանտա	Վանիկ
Աուեճա	Հըմբրա	Մասիատա	Գըզըլճա	
Ապու ճալալ	Շեյխաճիկ	Հըլեյիտ	Ամրի	

Համայնքներ ձևաորոած էին՝ Ռաս Ու Այնի, Թէլ Քէօչէքի, Թէլ Պրագի<sup>29</sup> եւ Տերպետիի մէջ: Իսկ Սուրիոյ հիսիս-արեւելեան շրջաններուն մէջ՝<sup>30</sup>

Ճարապլուսի	2000
Բազգայի	600
Տեր Ջօր	550
Թէլ Սեմիրի	400
Եւ այլ գիւղերու մէջ	

Սակայն շրջանի բազմապիսի կարիքներուն կողքին անհրաժեշտ էր «վեղարար»-ի մը ներկայութիւնը, որպէս հովի: Հասած էր այն պահը, որ Բերիոյ թեմի առաջնորդի՝ Տ. Արտաազը արք.-ի եւ Ազգային իշխանութեան խնդրանքներուն ընդառաջելով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը 4 Սեպտեմբեր 1941 թ. կայացած միաբանական ընդհանուր ժողովի ընթացքին, Տ. Խորէն վրդ. Բարոյեան կը հրաւիրուի ու կը նշանակուի Առաջնորդական փոխանորդ Ճեզիրէ հայոց:

Այսպիսով, 2 Փետրուար 1942 թ. սկիզբ կ'առնէ Ճեզիրէի Առաջնորդական փոխանորդութեան պատմութիւնը, որ կը վայելէ Բերիոյ թեմի հովանաւորութիւնը, Տ. Խորէն վրդ. Բարոյեանի պաշտօնավարութեամբ:

Տ. Խորէն վրդ. Բարոյեանի առաջնորդութեան հինգ տարիները (1942-1947 Նոկտեմբեր) կ'անցնին քաղաքական խիստ լարուած, 1945 թ. ֆրանքօ-սուրիա-

1966 թթ.) կազմակերպուած հայրենադարձութեան օրերուն: Այսօր, այդ հողերու մեծ մասը կը ներկայացնէ հողագործութեան ընդարձակ տարածութիւն:  
 29 Թէլ Պրագի երկու հայ գիւղակները կը գոյատեւեն՝ բաւական բարուք պայմաններ ստեղծելով իրենց բնակիչներուն: 1946 թ. բնակչութիւնը կը ներգաղթէ Հայրենիք: Հայոց կալուածները կ'անցնին Ազգային իշխանութեան ու յետագային կը վաճառուին, երկարատեւ դատերէ ետք: Տէն **Ֆիշէնկճեան Ա.**, Գամիշլին, «Շափղ», պարբերաթերթ, Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի շրջանաւարտից վարչութեան, Գ. տարի, 2003, Հալէպ, էջ 24-29:  
 30 **Թոփուզյան Ն. Խ.**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, էջ 170:

կան հակամարտութեան պատճառով: Հակառակ տիրող իրավիճակին, Առաջնորդը շրջահայեաց քաղաքականութեամբ եւ անշահախնդիր գործունեութեամբ կը պահպանէ հայութեան վարկը եւ քրիստոնեայ, եւ իսլամ համայնքներու մէջ:

Ան իր ծառայութեան տարիներուն համայնքի կազմակերպման, ուսումնակրթական, կրօնական եւ շինարարական արդիւնաւի աշխատանքներ կը կատարէ: Կը խրախուսէ 1946-1947 թթ. դէպի Հայրենիք ներգաղթողները եւ սերտ յարաբերութիւն ու համագործակցութիւն կը մշակէ Բերիոյ թեմի Առաջնորդ Տ. Ջարեհ վրդ. Փայասլեանի հետ: 1947 թ. վրդ. Բարոյեանին կը շնորհեն Եպիսկոպոսի աստիճան<sup>31</sup>: 1942-1947 տարիներուն, Ճեզիրէի հայոց թիւը կը հաշուէր 35.000 շունչ:

Հիսիսային Սուրիոյ Ճեզիրէի շրջանի հայոց Առաջնորդական փոխանորդը ստանձնելով «Դրան եպս. պատասխանատու պաշտօն»-ը զինք կը փոխարինէ Տաճատ Ծ. վրդ. Ուրֆալեանը<sup>32</sup>:

Տ. Տաճատ արք. Ուրֆալեանի եւ Տ. Կորիւն վրդ. Պապեանի առաջնորդութեանց տարիներուն եւս առաջընթաց կ'արձանագրուի: Կրթական հաստատութիւններէն ներս կը դասաւանդուին կրօնագիտական եւ հայագիտական առարկաներ<sup>33</sup>:

1965-1966 թթ. Գամիշլիի եւ շրջակայ 30 հայաստեղծ գիւղերու բնակչութենէն 4.000 հայեր կը ներգաղթեն Հայրենիք: Տ. Կորիւն վրդ.-ի ջանքերով կեանքի կը կոչուի ներգաղթի յանձնախումբ, ՀՄԸՄ-ին կը վերադարձուի պետութեան կողմէ գրաւեալ շէնքը, եւ Կիլիկիական հիմնարկութեան նիւթական յատկացումով կրթական նորակառոյց շէնքերով կ'օժտուին Ռաս Ու Այնի, Հասիչէի եւ Տերիքի հայկական համայնքները<sup>34</sup>:

1966-1971 տարիներուն համայնքը կը հովուէ Տ. Պետրոս վրդ. Պերպերեանը:

Սուրիոյ Արաբական Հանրապետութեան /ՍԱՀ/ եւ Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը ուսումնասիրելով՝ անհնար է չանդրադառնալ Սուրիոյ հայ միւս յարանուանութիւններուն պատմութեան, որոնք թուաքանակով աւելի նուազ ըլլալով հանդերձ՝ իրենց ուրոյն տեղը ունեցած են համայնքային կեանքէն ներս, որպէս մէկ ամբողջութիւն:

Իր թուաքանակով Հալէպի հայ կաթողիկէները կը հանդիսանային երկրորդ հոգեւորական համայնքը<sup>35</sup>: Թեմեր կային նաեւ Դամասկոսի, Գամիշլիի եւ

31 **Տեմիրճեան Վ. եպս.**, Նշ. աշխ., էջ 479-481:  
 32 Ճեզիրէի հայոց Առաջնորդական փոխանորդութիւնը կը հիմնուի 1942 թ., ենթակայ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանին, նստավայր ունենալով Գամիշլին:  
 33 **Տեմիրճեան Վ. եպս.**, Նշ. աշխ., էջ 485-486:  
 34 Նոյն տեղը, էջ 491-492:  
 35 Հալէպի հայերուն պաշտօնական առաջին Հայ Կաթողիկէ Առաջնորդը եղած է Աբրահամ



Քեսապի մէջ:

1939 թ. գաղթականներու մեծ հոսք մը կը հասնի Հալեպ, որոնց մեծ մասը կը հաստատուի Հալեպի Սուլեյմանիէ, չեօլիք եւ Ճէպէլ Սէյսէ (Շէյխ Մագսուտ) արուարձաններուն մէջ<sup>36</sup>:

Հալեպի հայ կաթողիկէներու թիւը 1960-ական թուականներուն կը հաշուէր 6-8 հազար հոգի<sup>37</sup>: Համայնքը սերտ կապեր հաստատած է Վատիկանի հետ: Համայնքի Առաջնորդն էր Գեորգ եպս. Լայքեան (1959-1983 թթ.): Համայնքը 1960-ական թուականներուն ունէր երեք եկեղեցի եւ քանի մը դպրոց: Եկեղեցիները՝ Հալեպի մէջ «Կառվառա» (1925 թ.), Սրբուհի Թերեզա (1840 թ.) եւ «Հայ կաթողիկէ»<sup>38</sup>: Դպրոցներէն՝ Հալեպի մէջ՝ Զուարթնոց (1965 թ.), «Ս. Թերեզա» (1899 թ.), «Ս. Հռիփսիմեանց վարժարան», «Յովսէփեան» (Հալեպ- 1939 թ. փակուած), «Նահատակաց» (Րազգա 1975 թ.), «Հայ կաթողիկէ վարժարան» (Ճարապլուս), Հայ կաթողիկէ Փարոս ճեմարան (Դամասկոս 1925 թ.) եւ այլն: Հալեպի մէջ կար նաեւ Մխիթարեաններու վարժարան մը<sup>39</sup>: Համայնքի գործող դպրոցները 1967 թ. կ'ազգայնացուին պետութեան կողմէ, որովհետեւ այս յարանուանութիւններու ղեկավարները կը հրաժարին կատարել դպրոցներու վերաբերեալ պետական որոշումը<sup>40</sup>:

եպս. Արծիւեան (1710-1740 թթ.), որ եպիսկոպոս օծուած է Հալեպի Ս. Քառասնից Մանկաց եկեղեցոյ մէջ Հալեպի՝ Միսի Դուկաս Պատրիարքի ձեռամբ: 1899 թ. Հալեպի թեմը քահանայապետական տնօրինումով կը դառնայ Արքեպիսկոպոսական թեմ: Հալեպի իրաւասութեան տակ է Սուրիոյ հիսիս-Արեւմտեան շրջանը՝ Իտիլի, Լաթաքիա, Թարթուս, Համա, Հոմս եւ Րազգայի Նահանգները: Տես Բ. համագումար Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ Ձմմառ, 25-29 Օգոստոս 2003, **Հայր Օգոստինոս վրդ. Գուսան**, Հալեպի Հայ Կաթողիկէ թեմ (Տեղեկագիր), էջ 195-203: 36 «Գեղարդ», Ե. գիրք, Հալեպ, 1996, էջ 412:

37 **Բաղալյան Ա.**, Հալեպում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսութեան տեղեկանքը հալեպահայ համայնքի պատմական անցյալի եւ ժամանակակից իրադարձութեան մասին, 24 հուլիսի 1964, Բանբեր Հայաստանի արխիւների, N 2, Երևան, 2009, էջ 114 (ոուսերէն):

38 **Բաղալյան Ա.**, նոյն տեղը:

39 Հալեպի Մխիթարեան վարժարանը հիմնուած է 1936 թ. Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան կողմէ: 1936-1938 թթ. կոչուած է Հայ Կաթողիկէ վարժարան: 1938 թ. վերանուանուած է Մխիթարեան վարժարան:

40 1967 թ. Սեպտեմբեր 9-ին, Սուրիոյ նախագահ Նուր Էտ-Տին ալ-Աթասիէն ստորագրուած թիւ 127-րդ հրամանագիր օրէնքով, Սուրիոյ մէջ գտնուող անհատական բոլոր վարժարաններու տնօրէնները պաշտօնէ կը դադարին եւ անոնց տեղ կ'անցնէին Կրթական Նախարարութեան կողմէ նշանակուած Պետական տնօրէնները, միակ է բացարձակ պատասխանատու, ուսումնական եւ կրթական ամբողջ գործին: Վերոյիշեալ օրէնքին կ'ընդդիմանան քրիստոնէայ բոլոր համայնքները: Յետագային օրէնքին կ'ենթարկուին «Նախ Յոյն եւ Ասորի Ուղղափառ համայնքները, ապա՝ Հայ Առաքելական եւ Աւետարանական համայնքները»: Օրէնքին դէմ էին, իբրեւ համայնք, միայն կաթողիկէները: «Սուրիական պետութիւնը կը հակադարձէ եւ կ'որոշէ անոնց 50 վարժարաններէն մաս մը պետականացնել եւ մաս մըն ալ՝ փակել»: 1973 թ. կացութիւնը կը փոխուի եւ անյայտ միջոցներ կը ձեռնարկեն «Վանատունը գրաւում ազատելու գործին»: 1973 թ. Զօր. Հրանդ Մալոյեանի խորհուրդով եւ կարգ մը ազգայիններու կողմէ կատարուած բանակցութիւններու շնորհիւ 1974-1975 թթ. կը վերաբացուին համայնքի դպրոցները:

Դամասկոսի հայ կաթողիկէ համայնքը ծնունդ առած է 1763 թ.: Եղեռնի յաջորդող տարիներուն Դամասկոս հաստատուած հայ ընտանիքներու մէջ մեծ եղած է թիւը կաթողիկէներուն, որոնք իրենց սեփական միջոցներով ունեցած են դպրոց եւ եկեղեցի<sup>41</sup>: 1946 թ. ծնունդ կ'առնէ Պատրիարքական փոխանորդութիւնը, իսկ 1959 թ. կը հիմնադրուի եկեղեցին<sup>42</sup>: Իսկ Գամիշլիի թեմը կամ «Բարձր Ճեղիթ»-ի թեմը սկզբնական շրջանին յանձնուած էր Հալեպի թեմին: 1938 թ. կը դառնայ Պատրիարքական փոխանորդութիւն եւ կը յանձնուի Կիւրեղ եպս. Զոհրապեանին: 1954 թ. Գամիշլիին կը դառնայ Եպիսկոպոսական թեմ եւ առաջին թեմակալ Առաջնորդը կը հանդիսանայ Յովսէփ եպս. Ըննանճի 1954-1972 թթ., որմէ ետք հայր Գրիգոր եպս. Այվազեան. 1972-1988 թթ.<sup>43</sup>:

Այնուամենայնիւ, ինչպէս հայ կաթողիկէ համայնքը, այնպէս ալ հայ աւետարանականները եւս, հակառակ իրենց փոքրամասնութեան, որոշ չափով, կարեւոր դեր խաղացած են սուրիահայ համայնքի կեանքին ներս:

Դեռ ժթ. դարու կիսուն՝ 1852 թ.<sup>44</sup>, հայ աւետարանական համայնք գոյութիւն ունէր Հալեպի մէջ<sup>45</sup>: Ցեղասպանութենէն<sup>46</sup> առաջ Սուրիոյ հայ աւետարանական համայնքը տեղակայուած էր Հալեպ եւ Քեսապ: Համայնքի գործունէութիւնը, սկզբնական շրջանին, կ'ընդգրկէր եկեղեցական եւ կրթական ոլորտները: Յետցեղասպանութեան շրջանին Հալեպի հայ աւետարանական համայնքը կը վերակազմակերպուի<sup>47</sup> եւ կը ձեւաւորուին այլ համայնքներ նաեւ Դամասկոս եւ Սուրիոյ հայաշատ դարձած այլ վայրերու մէջ<sup>48</sup>: Այդ շրջանին գործունէութեան

Տես **Տէր Ղազարեան Ն. Եփրեմ վրդ.**, Յուշամատեն Նուիրուած Հալեպի Մխիթարեան վարժարանի յիսնամեակին 1936-1986, Վենետիկ, 1990, էջ 161-170:

41 «Օշական» պարբերաթերթ, Բ. տարի, թիւ 1-2 (35-36), 1989, Հալեպ, էջ 48:

42 Բ. Համագումար Հայ Կաթողիկէ Եկեղեցոյ Ձմմառ, «Դամասկոսի էքզարկութիւն», **Պոռնուսուգեան Ա.**, (Դամասկոսի Ն. Կ. եկեղեցոյ ներկայացուցիչ), էջ 209-214:

43 Բ. համագումար հայ Կաթողիկէ Եկեղեցոյ Ձմմառ, **Տոքթ. Ֆուատ Գոր**, (Բարձր Ճեղիթի Ն. Կ. թեմին ներկայացուցիչ Գամիշլիի), Գամիշլիի Հալեպի Հայ Կաթողիկէ թեմը, էջ 204-208:

44 Չղաքեանի համաձայն, 1855 թ. 50 հոգիներ հայ բողոքական համայնք մը կը կազմուի Հալեպի մէջ, որուն առաջին ձեռնադրեալ հովիւը կ'ըլլայ Այնթապի Աստուածաբանական դպրոցի առաջին շրջանաւարտներէն Նազար Մաքանեանը: Տես **Չղաքեան Յ.**, 1923-2013 Տարեգրութիւն Հայ աւետարանական Բեթլ վարժարանի, Հալեպ, 2016, էջ 24:

45 **Քատնի վրդ. Ե. Ա.**, Լուսաշափղ, Պատմութիւն Հայ աւետարանական շարժման, 1846-1946, Պէրոյթ, Լիբանան, 1947, էջ 474: **Պարսեան Յ.**, Հայ աւետարանական Եմմանուէլ եկեղեցին, «Գեղարդ», Ա. գիրք, Հալեպ, 1975, էջ 469: Չղաքեան կը գրէ, որ հիսիսային Սուրիոյ հայաբնակ շրջաններուն եւ յատկապէս Այնթապի մէջ բողոքականութիւնը տարածելու մտադրութեամբ Հալեպ դարձած էր կարեւոր կեդրոն մը Սուրիոյ մէջ գործող միսիոնարական ընկերութիւններու հայ եւ օտար գործիչներուն համար: Տես **Չղաքեան Յ.**, նշ. աշխ., էջ 24:

46 **Չղաքեան Յ.**, նշ. աշխ., էջ 24-26:

47 **Չղաքեան Յ.**, նշ. աշխ., էջ 24-32:

48 Դամասկոս 1922, Լաթաքիա 1932, Քեսապ, Ճարապլուս, Պապ, Միւնայիճ (Մունպուճ), Համա, Ալեքսանտրէթի սանճագ, Գըրգ Խսն եւ այլն. տես **Քատնի վրդ. Ե. Ա.**, նշ. աշխ., էջ 476, 477, 510-513:



շրջանակներն կ'ընդլայնուին եւ կ'ընդգրկեն հասարակական, մշակութային եւ այլ բնագաւառներ:

Հալէպի մէջ կը գտնուի հայ աւետարանական համայնքի հիմնական կառույցը՝ գրասենեակը որպէս ղեկավար կառույց, բացի գրասենեակէն գոյութիւն ունէր կրթական խորհուրդ: Երկու հաստատութիւններն ալ կը զբաղէին կազմակերպչական գործունէութեամբ, զորս կը գլխաւորէր Սուրիոյ հայ աւետարանականներու համայնքապետը (վերապատուելին):

1923-1925 թուականներէն Հալէպի մէջ կառուցուած էին երկու եկեղեցի, որոնց կից Նաեւ վարժարաններ:

1960-ականներուն Հալէպի մէջ հայ աւետարանական համայնքը կը ղեկավարուէր վերապատուելի Յովհաննէս Գարճեանի<sup>49</sup> կողմէ (Հալէպի աւետարանականներու թիւը՝ 400 ընտանիք): Համայնքը ունէր չորս եկեղեցի՝ Բեթել, Էմմանուէլ, Նահատակաց, Էշրէֆիէ Սիւրիան թաղամասի մէջ: Նաեւ՝ եկեղեցիներ՝ Դամասկոսի, Քեսապի, Քեօրքիւնէի, Էքիզօլուքի եւ Նոմսի (Նահատակաց) մէջ: Մինչեւ 1945 թ. Սուրիոյ եւ Լիբանանի մէջ առաւել հմայք ունեցողը Էմմանուէլ եկեղեցին եղած է<sup>50</sup>: Ընդհանրապէս հայ աւետարանական համայնքի թիւը տատանուած էր 2.000-3.000-ի միջեւ: Եկեղեցւոյ եւ դպրոցի կողքին ունեցած է կիրակնօրեայ վարժարան, Քջակ եւ Ջանից երիտասարդական եւ պատանեկան ընկերակցութիւն:

Սուրիոյ մէջ համայնքը ունէր կրթական հաստատութիւններ, որոնց գերակշիռ մասը կեդրոնացած էր Հալէպ՝ 4 հատ եւ դպրոցներ Դամասկոս եւ Քեսապի մէջ: Սուրիոյ հայ աւետարանական համայնքի հասարակական կառույցները՝ բարեգործական, առողջապահական, երիտասարդական եւ այլ բնոյթի հաստատութիւններ են: Ինչպէս՝ Ճինիշեան յիշատակի ձեռնարկի Սուրիոյ մասնաճիւղը, Հաուըրտ Գարակեօզեան հաստատութեան Սուրիոյ մասնաճիւղը, Քրիստոնէական ջանից երիտասարդական կեդրոնը եւ այլն: Հասարակական կառույցներու գլխաւորը Նաեւ կեդրոնացած էր Հալէպի մէջ, իսկ հայկական քրիստոնէական ջանից ամառնային բանակավայրը կը գտնուի Քեսապ:

Տաղանդաւոր հայ երիտասարդներու արտագաղթը կասեցնելու նպատակով կը մտադրեն Հալէպի մէջ հիմնել հայկական համալսարան՝ Ամերիկեան

49 1945-1948 թթ. եղած է քարոզիչ Քեսապի հայ աւետարանական Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ եւ ուսուցիչ՝ աւանի հայ աւետարանական Նահատակաց վարժարանին մէջ: 1953-1956 թթ. Գամիշլիի հայ աւետարանականներուն առաջին աւետարանիչը եղած է: 1960-1979 թթ. Հալէպի հայ աւետարանական Էմմանուէլ եկեղեցւոյ հոգեւոր հովիտ: (ՏՏԵ **Շաղըճեան Գ.**, նշ. աշխ., էջ 209):

50 **Գարաճեան Յ.**, նշ. աշխ., էջ 472:

Գոլէճ (ծանօթ Ալէփփօ Գոլէճ) եւ կեանքի կը կոչեն<sup>51</sup> 1930 թ.:

Արդարեւ, ուսումնասիրելով Սուրիոյ Հայ համայնքի յետ-եղեռնեան շրջանի եւ Բ. Ալխարհամարտի ժամանակահատուածի պատմութիւնը՝ կ'եզրակացնենք, այն որ ֆրանսական մանդատի տակ սկիզբ առած, ձեւաւորուած նորաստեղծ Սուրիական Արաբական Հանրապետութեան հետ համատեղ ձեւաւորուեցաւ Սուրիոյ ներկայի հայ համայնքը՝ մեծ մասամբ Կիլիկիայէն եւ Արեւմտեան Հայաստանի տարբեր շրջաններէն հաստատուած հայերով: Անոնք ներհամայնքային տարբեր բնոյթի խնդիրներուն, միասնական հանդէս եկան երկիրի բոլոր դժուարութիւններու դէմ, հակառակ անոր որ երբեմն տեղացիներուն կողմէ արհամարհուեցան, բայց եւ այնպէս երբեք չտարուեցան, շարունակեցին իրենց աւանդը փոխանցել նոր սերունդին, միաժամանակ երկիրը տնտեսապէս քայլ մը առաջ տարին: Վերընձիւղուած հայը կառուցեց, վերահաստատեց իր եկեղեցին եւ դպրոցը յանուն կեանքի յարատեւութեան:

Ստորեւ յաջորդաբար կը ներկայացնենք **1939-1945 թթ.** Բերիոյ թեմի Հալէպի եւ շրջաններու հայ բնակչութեան թուապատկերները: (ՏՏԵ աղիւսակ 2 եւ 3)

51 **Չոլաքեան Յ.**, նշ. աշխ., էջ 27-30:



Աղիասկ 2<sup>52</sup>  
Աղիասկ 3<sup>53</sup>

քաղաք	1939	1940	1941
Հալեպ	40.947	46000	27.284
Ազեզ	-	1372	1.409
Արաբ Փունար	1400	1440	1475
Աֆրին	346	615	544
Ամուտա	-	143	157
Այնտիվար	-	110	78
Գամիշլի եւ շրջանները	6800	7566	7000
Թել Բեռլեկ	-	80	66
Եագուպիե	445	412	433
Ճիսր Շուղուր	98	233	197
Թել Ապիաթ	450	440	150
Ընկզիկ	-	-	94
Լաթաքիա	-	1428	1448 (Ղնէիէ 133, Արամօ՝ 80)
Տերիք	461	434	649
Րազգա	375	305	264
Ճարապլուա	1.123	1.172	1.159
Տեր Զօր	495	525	514
Մենպիճ (Մունպուճ)	-	157	157
Կեմրիկ	-	73	49
Թարթուս	-	109	97
Հասիչէ	432	551	492
Պապ (Պապ- Մունպուճ)	-	194	69
Այն էլ Արուա (Այն ալ-Արուա)	223	244	239
Քեսապ	-	2300	1.264
Գարատուրան	-	-	1.049
Ռաս էլ Այն (Ռաս Ուլ Այն)	219	408	298
Մէյտան էքպէզ	37	34	109
Թել Պրազ	-	280	217
Գուպր պիթ	208	215	178
Տերպէսիե	200	208	210
Րաճօ	-	-	-
Ընդհանուր	54.259	67.048	47.349

52 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 25 (Քաղաքական ժողով, տարեկան վիճակագրութիւն Սուրիոյ գաղութին, 1932-1945 թթ.):  
53 ԲԹ ԱԱԱ, նոյն տեղը:

քաղաք	1942	1943	1944	1945
Հալեպ	46.952	49.000	30.777	31.46
Ազեզ	1.337	1.131	1306	1176
Արաբ Փունար	1400	1.315	1232	1225
Աֆրին	560	620	650	526
Ամուտա	233	167	170	107
Այնտիվար	282	97	85	-
Գամիշլի եւ շրջանները	9326	9651	9700	7.624
Թել Բեռլեկ	95	82	76	75
Եագուպիե	435	440	443	451
Ճիսր Շուղուր	125	120	190	125
Թել Ապիաթ	400	412	436	561
Ընկզիկ	95	93	87	75
Լաթաքիա	1325 Ղնէիէ- Արամօ՝ 217	1.487 Ղնէիէ- Արամօ՝ 200	1575	1334 Արամօ՝ 206
Տերիք	179	228	259	273
Րազգա	296	339	334	311
Ճարապլուա	1.242	809	1.15	960
Տեր Զօր	580	433	611	255
Մենպիճ (Մունպուճ)	-	210	130	-
Կեմրիկ	-	-	-	-
Թարթուս	101	100	95	113
Հասիչէ	529	620	595	262
Պապ (Պապ- Մունպուճ)	287	78	65	-
Այն էլ Արուա	260	256	207	256
Քեսապ	1.160	1.175	1.381	-
Գարատուրան	1.050	1.051	934	953
Ռաս էլ Այն (Ռաս Ուլ Այն)	372	370	300	302
Մէյտան էքպէզ	112	116	156	187
Թել Պրազ	577	280	263	255
Գուպր պիթ	128	120	91	47
Տերպէսիե	266	310	230	254
Րաճօ	-	13	-	-
Ընդհանուր	69.921	71.323	52.493	49.373





1933-1934 դպրոցական տարեշրջանի Կիլիկեան վարժարանի շրջանաարտները:



Հալեպի Մեսրոպեան վարժարանի աշակերտները, 1942 թ.: Աջին՝ Ռուբեն Տիրաբեան:



Թէլ Ապիատի Ազգային վարժարանի աշակերտութիւնը Բերիոյ թեմի առաջնորդ Ղեւոնդ արք. Չեպեանի հետ:



Թարթուսի հայկական վարժարանի աշակերտութեան խմբանկար:



## ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ



# ՍՈՒՐԻԱՆԱՅԵՐԸ ԵՐԿՐԻ ԱՆԿԱԽՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ (1946-1970 թթ.)



## ա. ԱՆԿԱԽԱՑԱԾ ՍՈՒՐԻԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՅԵՂԱՇՐՋՈՒՄՆԵՐՈՒ ԵՒ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԵՆԱՏԻՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ, ՍՈՒՐԻԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԻ ՏԱՐԻՆԵՐՈՒՆ (1946-1958 թթ.)

17 Ապրիլ 1946 թ., Սուրիոյ ազգային-ազատագրական պայքարը ընդդէմ ֆրանսական մանդատի, Սուրիոյ ժողովուրդի ձգտումը անկախ ու ամբողջական պետութիւն ստեղծելու եւ այդ իրականացման ճանապարհին մղուած յամառ պայքարը յաղթանակով պսակուեցաւ եւ ձեռք բերաւ լիակատար անկախութիւն<sup>1</sup>: Սուրիայէն վերջնականապէս վտարուեցան օտարերկրեայ զօրքերը:

Ֆրանսական բանակի հեռացումով, բանակին ծառայող սուրիահայ զինուորներու որոշ մասը եւս, իրենց ընտանիքներով հեռացաւ երկիրէն: Սուրիոյ նորանշանակ կառավարութիւնը պաշտօնապէս թոյլատրեց անոնց վերադարձը եւ ըստ այնմ անոնք զերծ մնացին իրենց ծառայութեան համար որեւէ պատասխանատուութեան ենթարկուելէ<sup>2</sup>:

Սուրիոյ անկախացումով երկիրը թեւակոխեց պատմական նոր փուլ, նոր ժամանակաշրջան: Սակայն նորանկախ պետութեան առաջ կանգնած էին բարդ խնդիրներ՝ ներքին եւ տարածաշրջանային առումով: Առաջին հերթին,

<sup>1</sup> **Fawcett L.**, International Relations of the Middle East, Third Edition, Oxford University Press 2013, p. 55-60:

<sup>2</sup> «Ազդակ շաբաթօրեակ», Ի. տարի, թիւ 62 (4471), 2 Յունիս 1946, Պէյրութ, «Սուրիացի հայ զինուորները», էջ 1:







ԱՄՆ-ը: Իրենց նպատակները իրագործելու համար անոնք կը փորձէին կենսագործել «Մեծ Սուրիա»-ի ծրագիրը, որուն մասին յայտարարած էր Անդրյորդանանի թագաւոր Ապտալլահ 1943 թ. Յունուարին: Այդ ծրագիրին համաձայն, Սուրիոյ, Լիբանանի, Անդրյորդանանի եւ Պաղեստինի միջեւ գոյութիւն ունեցող սահմանները արհեստական խոչընդոտներ են, որոնք պետք էր վերացնել եւ ստեղծել արաբական երկիրներու դաշնութիւն. այլ խօսքով՝ «Համաձայն անգլիական իմպերիալիստական եւ նրա արաբական գործակալների մտահղացման նրա մեջ պետք է մտնէին Անդրիորդանանը, Իրաքը, Սիրիան, Լիբանանը եւ Պաղեստինի մի մասը: Դա պետք է լինէր մի թագավորություն, որի գլուխ կանգնելու էր Իրաքում եւ Անդրիորդանանում իշխող Հաշիմիդների դինաստիայի որևէ (ոկէ) ներկայացուցիչը»<sup>5</sup>:

Արեւմտեան տէրութիւններու գաղութատիրական ծրագիրներու դէմ Սուրիոյ արաբ ժողովուրդի եւ համայնավարական ուժերու հետ կողք-կողքի հանդէս կու գան հայ աշխատատիրական զանգուածները եւ բոլոր համայնավարական հոսանքները: Անոնք կը գտնէին, որ այդ բոլոր ծրագիրները պատերազմի սպառնալիք կը ստեղծեն: Իսկ «հայ ժողովուրդը որեւէ շահ չ'ակնկալէր պատերազմէն, տեսած ու կրած ըլլալով անոր ծանրութիւնն ու դառնութիւնը համաշխարհային երկու պատերազմներու ընթացքին: Հայ ժողովուրդը կողմնակից էր առեւտրական, մշակութային այնպիսի դաշինքներու, որոնց ընթացքին առատորէն կը նպաստատուէին բոլոր ազգերը՝ առանց արեան հոսումի, պայմանաւ, որ այդ դաշնագիրերը կնքուին բոլոր ազգերու հետ եւ ոչ թէ միակողմանի եղանակով»<sup>6</sup>:

Հայ ժողովուրդի որդեգրած այդ դիրքը կը հասկնային եւ բարձր կը գնահատէին Լիբանանի թէ՛ «ժողովրդական» զանգուածները, եւ թէ պետական ու քաղաքական գործիչները: Հայերը կողք-կողքի կը կանգնին իրենց արաբ եղբայրներու ազգային ազատագրական պայքարի փուլերուն: Նորաստեղծ բանակի կամատուրութիւնը կու գան մեծ թիւով հայեր: Այս առնչութեամբ մեծ էր դերը Հալէպի Առաջնորդին: Ան կոչ կ'ուղղէ ֆրանսական բանակի մէջ ծառայող հայորդիներուն եւ պաշտօնեաներուն՝ հրաժարիլ եւ դուրս գալ ֆրանսական զօրամասերէն եւ մաս կազմել սուրիական ազգային ուժերուն<sup>7</sup>:

Այստեղ հարկ է նշել, որ Ճէզիրէի Առաջնորդական փոխանորդ Տ. Խորէն ծ. վրդ. Բարոյեան (յետագային՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս) առաջինը կը

5 Նոյնի, Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958 թթ.), Երևան, 1967, էջ 167:

6 «Արարատ» օրաթերթ, թիւ 3957, 25 Յունիս 1954, Պէյրուս:

7 **Հովհաննիսյան Ն. Շ., Սարգսյան Շ. Ս.**, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան, 1975, էջ 276-283:

հանդիսանայ, որ իր ձեռքով սուրիական դրօշը կը բարձրացնէ Գամիշլիի ֆրանսական նախկին զօրանոցին վրայ:

1948 թ. Ապրիլին կայացած խորհրդարանական ընտրութիւններու ժամանակ երկու կուսակցութիւններու, յետադիմական եւ ժողովրդական, ներկայացուցիչներէն կ'առաջանայ կառավարութիւն մը: Նոյն թուին կ'աւարտի երկիրի նախագահի նստաշրջանը եւ 1928 թ. սահմանադրական օրէնքի թիւ 68-րդ յօդուածի բարեփոխումի համաձայն, Քուաթի կը վերընտրուի նախագահ Նոր նստաշրջանի համար՝ խորհրդարանականներու մեծ մասի հաւանութեամբ:

Արդ, երկրի նախագահի պաշտօնին կը հրաւիրուի կրկին Շ. Քուաթին:

Երեք տարիներու քաղաքական, մասամբ կենսունակ կեանքէն ետք, կտրուկ պիտի փոխուէր իրադրութիւնը Սուրիոյ մէջ, որուն գլխաւոր պատճառը արաբ-խորայլէան (1948 թ.) պատերազմին Սուրիոյ կրած պարտութիւնն էր: Ատկէ բացի, կար նաեւ այլ հիմնաւոր պատճառ. հոգատար մեծ պետութիւնները թէեւ հարկադրուած էին ճանչնալու Սուրիոյ քաղաքական անկախութիւնը, սակայն անկախութենէն ետք իսկ անոնք չէին հրաժարած Սուրիան տնտեսաքաղաքական կախման մէջ պահելէ: Այլ խօսքով, անոնք, յատկապէս Մեծ Բրիտանիան, իրենց մշակած ծրագիրներով կը ձգտէին, ամրապնդել իրենց դիրքերը Սուրիոյ եւ արաբական միա երկիրներուն մէջ: Այս գաղափարի իրականացման համար Մեծ Բրիտանիան Բ. Աշխարհամարտի յաջորդած տարիներուն անգամ մը եւս կը վերահրահրէ ու կը վերարծարծէ «Մեծ Սուրիոյ» ստեղծման ծրագիրը:

Այլին, անկախացումէն ետք արաբական ազգային կուսակցութիւններէն բացի կային անհատներ, որոնք ֆրանսամետ կամ անգլիամետ քաղաքականութեան ջահակիրներ էին եւ անոնց կամակատարները, որպէս այդպիսին կը փորձէին անոնց միջոցով անկախացած երկիրը ներքաշել իրենց հակապայքարին մէջ: Այս առումով 1948 թ. արաբ-խորայլէան պատերազմի Սուրիոյ պարտութիւնը, Շ. Քուաթիի վերընտրութիւնները, արաբ քաղքենիացած դասակարգի հակաժողովրդավարական ձեռնարկները դժգոհութիւններու ալիքի նոր սկիզբ պիտի հանդիսանային: Դժգոհութիւններ ու անախորժութիւններ կային նաեւ բանակի շարքերէն ներս, որոնց գլխաւոր ղեկավարը ազգութեամբ քիւրտ Հուսնի ալ-Ջաաիմն էր, որ զինուորական գնդապետի կոչումին կ'արժանանայ (1948 թ.)<sup>8</sup> երկրի նախագահ Շ. Քուաթիի կողմէ:

1946-1949 թթ. բանակը ներգործող դեր կ'ունենայ Սուրիոյ ներքաղաքական կեանքին մէջ, որու հետեւանքով ստեղծուած ճգնաժամային իրավիճակը ծանր կ'անդրադառնայ ոչ միայն արաբ, այլ նաեւ հայ համայնքի տնտեսական կեանքին. «Այս շրջանին Սուրիոյ մէջ ստեղծուած քաղաքական կացութեան

8 <http://syrianleaders.com/presidents/92/>



հետեանքով, փոքրաթիվ գաղութները կը ցրուին եւ հոծ կեդրոններէն ալ բազմաթիվ տեղափոխութիւններ տեղի կ'ունենան դէպի Լիբանան»<sup>9</sup>:

Եւ այսպէս, 1940-1950-ական թուականներուն ինկած ժամանակահատուածին, Սուրիոյ ներքաղաքական իրադրութեան հետեանքով, աստիճանաբար անկում կ'ապրին Ազէզի, Ամուտայի, Այն Արուսի, Այն Տիվարի, Արաբ Փունարի, Աֆրինի, Պապի, Տերպետի, Թէլ Պրագի, Թէլ Քեօշէքի, Թինայի, Համայի, Հոմսի, Մունպուճի, Մէյտան Էքպէզի, Ջաթալ Թէփէի, Ճարապլուսի եւ Ճըսր Շոլլորի համայնքները, ուրկէ հայերը կը սկսին տեղափոխուիլ Սուրիոյ ալեւի մեծ հայկական կեդրոններ (Հալէպ, Լաթաքիա, Դամասկոս)<sup>10</sup> եւ կամ ալ կը հայրենադարձուին (1946-1948 թթ.):

Օգտուելով այս խառնակ վիճակէն՝ Հոսնի ալ-Ջաաիֆ կը փորձէ շահիլ սուրիացիներու մէկ հատուածի համակրանքը անհիմն խոստումներով, այն էր՝ կատարել բարենորոգումներ, պաշտպանել աշխատատուներու շահերը եւ սահմանափակել խոշոր հողատիրութիւնը<sup>11</sup>: Ալ-Ջաաիֆ վարած իր յեղեղով եւ ամերիկամետ քաղաքականութեամբ կը յաջողի Սուրիոյ քաղաքական պատմութեան մէջ իրականացնել առաջին անգամ ըլլալով պետական (ռազմական) յեղաշրջում՝ 30 Մարտ 1949 թ. երկիրէն ներս եւ հաստատել ռազմական «դիկտատուրա»-ի՝ մենատիրութեան, քաղաքական համակարգ:

Ընդամենը հինգ ամիս գոյատեւող գործող իշխանութեան՝ հակահարուած հասցուց գնդապետ Սամի Հիննաուի, որ անգլիամետ քաղաքականութեան կողմնակից էր, որուն կ'աջակցէր «ժողովրդական կուսակցութիւն»-ը: Սուրիոյ մէջ արձանագրուած երկրորդ պետական յեղաշրջումով մահապատիժի ենթարկուեցաւ ալ-Ջաաիֆ, բեկանուեցան այն համաձայնագիրերը, որոնք ստորագրուած էին ալ-Ջաաիֆի կողմէ, ամերիկեան ընկերութիւններուն եւ Ֆրանսայի միջեւ:

Հիննաուի իր դիրքերը առաւել ամրապնդելու համար ցրեց խորհրդարանը եւ Նոր խորհրդարանական ընտրութիւններ կատարեց, որուն ընթացքին յաջողութեան հասաւ, յաղթեց «ժողովուրդի կուսակցութիւն»-ը (حزب الشعب)՝ չըզպու ալ-Շաապ), եւ կուսակցութեան ղեկավար Հաշիֆ ալ-Աթասին ընտրուեցաւ Սուրիոյ նախագահ: Այս կուսակցութիւնը իշխանութեան գլուխ գալով՝ կը ձգտեր իրականացնել անցեալի կիսաարտ մնացած «Մեծ Սուրիա» գաղափարը եւ հասցնել իր ասարտին: Սակայն այս անգամ եւս չ'իրականանար, որովհետեւ

9 Սուրիահայ Օգնութեան Խաչի (ՍՕԽ-ի) Շրջանային վարչութեան տեղեկագիր 1944 թ. Ը. Պատգամաւորական ժողովի:

10 Ֆիշէնկճեան Ա., Յուշամատենան սուրիահայ օգնութեան խաչի 1919-2009, Հալէպ, 2010, էջ 143, 155, 186, 194:

11 Հովհաննիսյան Լ. Տ., Արաբական երկրների պատմություն, IV, էջ 481:

իրականացման ճանապարհին տեղի կ'ունենայ երրորդ ռազմական յեղաշրջումը փոխզնդապետ Ասիպ Շիշաքլիի եւ անոր հետեւորդներու կողմէ<sup>12</sup>:

Հիննաուի եւս կ'արժանանայ իր նախկինի չարաբախտին:

Շիշաքլի կ'որոշեգրէ նախորդի քաղաքականութիւնը<sup>13</sup>, ներքաղաքական կեանքէն ներս կ'ըլլայ առաւել զգոյշ՝ ժողովուրդին եւ միաներուն համակրանքը շահելու միտումով: Իր իշխանութեան օրով, 1950 թ. Ապրիլին հրապարակուած Ասահմանադրութեան նախագիծի 3-րդ յօդուածով իսլամը կը համարուէր պետական կրօնք: Շարք մը Նոր հրամանագիրներով լուծարքի կ'ենթարկուին բոլոր «Նոր քաղաքական» կուսակցութիւններն ու կազակերպութիւնները, կ'արգիլուի պետական ծառայողներու, արհմիութիւններու անդամներու, անգամ ուսանողներու եւ հասարակական այլ խաւերու քաղաքական գործունեութիւնը<sup>14</sup>:

12 Տե՛ս Սամսոնյան Ն., Բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում, ռազմական հեղաշրջումների ֆենոմենը, Երևան, 2013, էջ 65:

13 Շիշաքլի որոշեգրելով Հոսնի Ջաաիֆի վարած քաղաքականութիւնը, կը վերացնէ նախորդի՝ ֆրանսական եւ ամերիկեան ընկերութիւններու սահմանափակումները: Ներքաղաքական կեանքէն ներս կ'ըլլայ առաւել զգոյշ, սակայն միաժամանակ կը ձգտէր երկիրը կառավարել զինտուրական մենատիրական համակարգով:

14 1951 թ. Նոյեմբեր 29-ին Շիշաքլի նախագահի պաշտօնէն կը հեռացնէ Հաշիֆ ալ-Աթասին եւ երկրէն ներս կը հաստատէ ռազմական մենատիրական կարգ: 1954 թ. կը սկսի անակնկալ դէպքերով: Շիշաքլիի կառավարութիւնը կը դիմէ խմբական ձերբակալութիւններու, կ'արգելափակուին ժողովուրդի, սուրիական ազգայնական ընկերային կուսակցութիւն, ընկերվարական եւ այլ կուսակցութեանց պատկանող դէմքերու գործունեութիւնը, որոնք կ'ամբաստանուին կուսակցութեան լուծման օրէնքը «բռնաբարած» ըլլալու յանցանքով: Կառավարութեան որոշումով կը փակուին Սուրիոյ եւ Լիբանանի սահմանները: Սակայն յաջորդ օրն իսկ՝ Սեուտական Արաբիոյ միջամտութեամբ կը բացուին: Գրգռութիւններու այիջը կը բարձրանայ ու կը տարածուի ամենուրեք, մասնաւորաբար հիպիսային Սուրիոյ մէջ: 1954 թ. Փետրուարին 25-ին սկիզբ կ'առնէ բանակի զինեալ ապստամբութիւնը ու կը պահանջուի երկիրէն հեռանալ: Տե՛ս Սամսոնյան Ն., Նշ. աշխ., 71-72:

Փետրուար 27-(28)ին հանրապետութեան նախկին նախագահ Հաշիֆ ալ-Աթասին կը վերահաստատուի իր պաշտօնին, մինչեւ Նորի ընտրութիւնը, եւ երկիրը կը փրկուի ծայր առած (զինտուրական) ռազմական յեղաշրջումներէն: Կը լուծուի Նաեւ Շիշաքլիի կազմած խորհրդարանը: Կը կատարուի խորհրդարանական ընտրութիւններ, որոնք Մերձատու Արեւելքի մէջ կայացած ընտրութիւններուն ամենէն ժողովրդավարականը կը համարուէին»: (Հովհաննիսյան Լ. Տ., Նշ. աշխ., էջ 484): Նոր ընտրութիւններու լոյսին տակ կը վերանան նախկին սահմանափակումները, կը սկսին ազատ գործել ոչ միայն պետական քաղաքական կուսակցութիւններն ու մամուլը, այլ նաեւ՝ հայկականը:

Երկարատեւ պայքարէ ետք, վերջապէս Սուրիան համա-արաբական դիմագիծ ստանալով, 1955 թ. կը մերժէ միանալ թուրք-իրաքեան ուխտին (յետագային թուրք-իրաքեան պայմանագիրը վերածուեցաւ «Պաղտատի դաշինքի») եւ քայլեր կը ձեռնարկէ պայմանագիրներ ստորագրել եւ միանալ եւ Եգիպտոսի 20 ձեռնարկէր 1955 թ. եւ Սեուտական Արաբիոյ ռազմական պայմանագիրին՝ 27 (24) ձեռնարկէր 1955 թ.: Արդարեւ, 1956 թ. սկիզբը Դամասկոսի մէջ կը կնքուի զինտուրական դաշինք (ուխտ) Եգիպտոսի եւ Սուրիոյ միջեւ: Իր բնոյթով քաղաքական, տնտեսական եւ զինտուրական դաշինքը առաւել պաշտպանողական բնոյթ կը կրէր, ուր երկու երկիրներ յանձնառու պիտի ըլլային օգնելու իրարու Իսրայէլի պետութեան կողմէ՝ յարձակման ենթարկուելու պարագային:



Այսպես քննարկուող ժամանակահատուածին, Սուրիոյ ներքաղաքական անկայութիւնը, Մերձավոր Արեւելքի նկատմամբ գերտերութիւններու հակամարտութիւնն ու թուրք-խորալեւան դիրքորոշումները արգելք կրցած էին հանդիսանալ նորանկախ Սուրիոյ պետական կայունացման, տնտեսութեան զարգացման եւ ընկերային-հասարակական խաւերու ոչ հանդուրժողականութեան: Կացութիւնը կը յանգի անախորժութիւններու, ժողովրդական յուզումներու, համընդհանուր գործադուլներու եւ զանգուածային ցոյցերու: Այս բոլորը կանխելու միտումով Շիշաքլի կարգ մը բարեկարգումներ մտցուց երկրէն ներս՝ իշխանութեան սպառնացող վտանգը հեռացնելու նպատակով. սակայն՝ ապարդիւն:

Այս քաղաքական վերիվայրումներու յորձանուտին մէջ 1949-1954 տարիներուն սուրիահայութիւնը եւս ցնցումներ ապրեցաւ: Պետական սեղմումներ կիրառուեցան համայնքի կրթական, մշակութային եւ տնտեսական ոլորտներէն ներս:

Այսպէս, Սուրիոյ հայ համայնքի դէմ առաջին անբարեացակամ քայլերը կ'առնուին 1949 թ., Հունսի Զաաիմի ռազմական յեղաշրջումի օրերուն եւ անկէ ետք: Սուրիոյ Հանրապետութեան նախագահ՝ Ատիպ Շիշաքլիի օրերուն եւս կը շարունակուի ու կը խորանայ սուրիահայութեան տագնապը: Կ'արգիլուին ոչ միայն հայ ազգային կուսակցութիւններու, կազմակերպութիւններու գործունեութիւնները, այլեւ հայերէն թերթերու եւ միւս պարբերականներու, գիրքերու լոյս ընծայումը, կը փակուին կարգ մը շրջաններու հայկական վարժարանները, կ'արգիլուին հայոց պատմութեան դասագիրքերն ու դասաւանդութիւնը, եւ դպրոցական գործը կ'անցնի պետական հակակշիռին տակ<sup>15</sup>:

1951 թ. հրապարակուած հրամանագիրով նաեւ պետք էր վերանային վաճառատուներուն եւ արհեստավորներուն ցուցատախտակներէն հայերէն արձանագրութիւնները: Սուրիահայ գործարարները շատ լաւ կը հասկնային, որ յառաջիկային ատելի խիստ ու լուրջ տնտեսական ճնշումներ կը նախատեսուէին եւ իրենց դրամազուլմներու շահարկման համար կը սկսին ասպարեզ որոնել լիբանանեան հրապարակի վրայ: Այս շրջանին կարգ մը մարզական եւ երիտասարդական միութիւններ չեն կրնար վերստանալ իրենց արտօնութիւնները, իսկ թիւ 11954/22- 21 Յունուար 1952 թ. համարակալ եւ թիւ 7719/22 համարակալ 27 Օգոստոս 1953 թ. հրամանով կ'արգիլուին հայերէնով կատարուող դպրոցական միջոցառումները<sup>16</sup>, ուր նոր օրէնքներուն համաձայն Ազգային միջո-

ցառումները պետք է կատարուէին միայն ու միայն երկրի պաշտօնական լեզուով՝ արաբերէնով: Այս առնչութեամբ Ազգային առաջնորդարանէն 30 Օգոստոս 1953 թ. պատասխան նամակը ուղղուած Սուրիոյ ներքին գործոց նախարարին անգամ մը եւս կը հաստատէր, որ հայ ժողովուրդը, հիւրընկալուելով արաբական այս հողին վրայ, հաւատարմօրէն ծառայած է ու կը շարունակէ ծառայել, որպէս լիիրաւ քաղաքացի եւ նպաստը բերած է բոլոր մարզերէն ներս: Կրթական ոլորտէն ներս, համաձայն գիտութեան նախարարութեան պահանջներուն, բազմապատկած էին արաբերէն լեզուի դասաժամերը եւ յառաջընթաց քայլեր արձանագրած: Սակայն անդրադառնալով հայերէն լեզուով դպրոցական միջոցառումներու սահմանափակման մասին՝ կը շեշտէ, որ գիտութեան նախարարութեան 2451/7 եւ 29 Յուլիս 1952 թուակիր հրամանագիրով արտօնուած է ուսուցանել հայոց լեզուն եւ գրականութիւնը՝ զայն դասելով ոչ օտար լեզուներու կարգին. «Մեր լեզուի գործածութիւնը միջոցառումներուն ոչ մէկ քաղաքական նպատակ կը հետապնդէ, ընդհակառակը կը նպաստէ սուրիական հայրենիքի վերելքին եւ բարգաւաճման.....»<sup>17</sup>: (Տէս դպրոցները բաժինը)

1940-1950-ական թուականներէն սկսեալ Սուրիոյ հայ համայնքի ժողովրդագրական պատկերը սկսած էր փոփոխութիւն կրել երկրէն ներս տեղի ունեցած ներքին տեղաշարժերու եւ արտագաղթի պատճառով: Գործազրկութենէն, բնական աղէտներէն<sup>18</sup>, տնտեսական դժուարութենէն բացի, արտագաղթը պայմանաւորուած էր բարձրագոյն ուսման «հասնող պատանիներուն երկրորդական ուսման եւ արհեստներու անկարելիութիւն»-ով<sup>19</sup>: 1947-1948 ուսումնական տարեշրջանին, որպէս ուսանող Ազգային Պատասպարան (Որբանոց, ապաստանավայր, ուր տեղ տրամադրուած էր շրջաններէն եկող երիտասարդներու՝ իրենց ուսումը կատարելագործելու) ապաստանած են 7 սաներ՝ Թէլ Ապիատէն, Հասիչէն, Գամիշլիէն, որոնցմէ քանի մը հոգի չնչին գումար մը կրցած է վճարել, իսկ ուրիշներ՝ ոչ: Հակառակ կատարուած դիմումներուն՝ առաջարկները մնացած են անպատասխան<sup>20</sup>: Չուլաբեան եւս անդրադարձած է փոքր համայնքներէն դէպի Սուրիոյ մեծ քաղաքները, դէպի Լիբանան եւ այլուր ուսման պատճառով գաղթող ուսանողներուն մասին. «Բ. Աշխարհամարտէն

15 «Սուրիա» օրաթերթ, թիւ 2005, 28 Ապրիլ 1950, Հալէպ: Տէս նաեւ **Նաշարյան Ե. Հ.**, Հայ-արաբական մշակութային կապերը (Սիրիա և Լիբանան. 1945-1970 թթ.), «Մերձավոր և Միջին Արեւելքի երկրներ և ժողովուրդներ», VI, Երևան, 1974, էջ 319-321:

16 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 87, պատճէն արաբերէն նամակներու 1950-1955: **Դալլաքյան Կ. Լ.**

Ռամկավար ազատական կուսակցության պատմություն, գիրք երկրորդ, 1930-ականների վերջերից-1990-ականների սկիզբը, Երևան 2007, էջ 187:

17 ԲԹ ԱԱԱ, նոյն տեղը, թերթ 1:

18 **Ֆիշենկենան Ա.**, նշ. աշխ., էջ 200: **Չոլաքեան Յ.**, Անտիոքի մերձակալ Ռուճի հովիտի հայերը, Անթիլիաս, 2006, էջ 178, 179, 183:

19 **Դազարեան Ա.**, Հայկական փոքր գաղութներ. Ազգ, Աֆրիկ, Արաբ-Փունար, Պէյրութ, 1965, էջ 136:

20 **Ֆիշենկենան Ա.**, նշ. աշխ., էջ 158, 189:



ետք Քեսապի նախակրթարաններն էլ միջնակարգ վարժարաններն շրջանաարտ ու շրջանաարտուհիներ կը լեցունէին Սուրիոյ եւ Լիբանանի գիշերօթիկ վարժարանները՝ Հալէպի Գոլէճ, Քարէն Եփփէ Ճեմարան, Պէյրութի Ճեմարան, Լիբանանի Հայ Աւետ. Բարձրագոյն վարժարաններ, Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութիւն, այնուհետեւ մասնաւորի Լիբանանի, Մ. Նահանգներու, Ֆրանսայի, Սուրիոյ ու Երեւանի համալսարաններն վկայուելով իբրեւ բժիշկ, ատամնաբոյժ, դեղագործ, երկրաչափ, մեքենագէտ եւ մասնագէտ այլեայլ ուսմանց եւ գիտութիւններու»<sup>21</sup>:

Պետք է նշել, որ 1950-ական թուականներու առաջին կիսուն կը զուգահեռաբար մեծանուն գրականագէտ Ա. Չօպանեանի գրական գործունէութեան վաթսունամեակը, եւ այդ առթիւ Հալէպի մէջ նախատեսուած էր կազմակերպել յորելենական հանդիսութիւնը, սակայն երկրէն ներս տիրող յարափոփոխ վիճակը եւ հայերէնով հանդէսներու եւ հաւաքոյթներու դէմ յարուցուած խիստ արգելքը պատճառ հանդիսացան, որ Չօպանեանի նուիրուած միջոցառումը տեղի չ'ունենայ: «... համաձայն մեր 15 Նոկտեմբեր 1952 թ. որոշումին չկրցանք իրագործել, որովհետեւ միակ հրապարակային դասախօսութիւն մը կազմակերպուեցաւ Ազգային Ճեմարանի պարտեզին մէջ, 15 Մայիս 1954 թ. գրագէտներ Շաւարշ Նարդունիի եւ Կարօ Փօլատեանի, քաղաքս այցելութեան առիթով»<sup>22</sup>:

Իրաւաբան եւ Պէյրութի իրաւաբանական վարժարանի դասախօսներէն ժագ Հաքիմ հետեւեալ ձեւով կը բնութագրէ այդ ժամանակաշրջանը. «Պատմութիւնը կը սկսի Ատիպ Շիշաքլիի վարչակարգի օրերէն, երբ Սուրիոյ մէջ շատ վտանգաւոր կացութեան մատնուեցաւ հայութիւնը, երբ վախճանեցաւ Կիլիկիոյ կաթողիկոսը եւ համայնավարները ամեն ջանք ի գործ դրին արգիլելու համար Զարեհ Եպիսկոպոսի թեկնածութիւնը, որ կը պաշտպանուէր հայութեան մեծամասնութեան կողմէ»<sup>23</sup>: Վերջինիս վկայութեամբ, Զարեհ կաթողիկոսի ընտրութեան օրերուն, համայնավարները օգտուելով Ճեզիրէի փոխառաջնորդի բացակայութենէ՝ կը յարձակին առաջնորդարանի վրայ եւ կը գրաւեն ինչքերը: Այս երեսոյթը կը պղտորէ տեղի հայոց քաղաքական ու ընկերային կացութիւնը: Նման միջադէպեր կը պատահին նաեւ այլ վայրերու մէջ:

Այսպիսով, Բ. Աշխարհամարտի վաղորդայնին Մերձաւոր Արեւելքի բոլոր երկիրներուն մէջ յառաջացած փոփոխութիւնները, քաղաքական (տարածաշրջանային) վերիվայրումները, ներքաղաքական պայքարի սրումն ու անկայունութեան պատճառ հանդիսացող օտարերկրեայ ուժերու ներագդեցութիւնը Սուրիոյ վարչաքաղաքական, տնտեսական եւ ընկերային ոլորտներէ

րէն ներս, նորանկախ Սուրիոյ քաղաքական զարգացումը պիտի դնէր բարդ ու հակասական պայմաններու մէջ:

Կ. Դալլաքեան հանգամանալից կերպով կ'անդրադառնայ այդ ժամանակաշրջանի իրադարձութիւններուն, եւ յիշելով պետական սեղմումներու մասին՝ հետեւեալ մէջբերումը կ'ընէ. «Թէեւ յետագային մասամբ թուցան այս սեղմումները, բայց երկրին մէջ միշտ ալ մնաց ճնշումի ընդհանուր մթնոլորտ մը»<sup>24</sup>:

Այս ժամանակահատուածը լուրջ առաջադրանքներու առջեւ կը դնէ սփիտքահայ քաղաքական-գաղափարական ազգային հոսանքները՝ ճշդելու հայ տարրի տեղն ու դերը հիւրընկալ իրենց երկիրներու մէջ: Դալլաքեան անդրադառնալով այս հարցին, եւս, կը պարզէ, թէ «Համայնավարներն ու, որոշ ժամանակ, Հնչակյաններն, օրինակ, գտնուում էին որ հայ աշխատավորները պետք է ամբողջապէս ներգրավուէն տվյալ երկրի աշխատավորների հեղափոխական պայքարի մէջ: ՀՀ Դաշնակցությունը այդքան առաջ չէր գնում: Նա հնարավոր էր գտնում, որ հայ աշխատավորները մասնակցեն տվյալ երկրի աշխատավորների տնտեսական պայքարին՝ հանուն կյանքի միջոցների ու պայմանների բարելավման: (Իսկ) ՌԱ Կուսակցությունը ի սկզբանէ սահմանազատվեց՝ գտնելով, որ հայերը հյուր են տվյալ երկրում եւ ոչ մի իրավունք չունեն խառնվելու տանտերերի գործերին»<sup>25</sup>:

Եւ ահա նպատակային այս գործելաոճը անգամ մը եւս կը վերահրահրէր գաղափարական անձերու կիրքերը, հակառակ անոր, որ բոլորի տեսակետները կը հետապնդէին մէկ նպատակ՝ հայ մարդու տեղն ու դերը արաբական այս երկրի կամ երկիրներու մէջ: Անցեալի փորձը կը թելադրէր առաւել զգօն ըլլալու, բայց եւ այնպէս հայը իր ապաստանած երկրին մէջ չէր կրնար ձեռնածալ մնալ, որպէս անոր մէկ մասնիկը:

1954 թ. Սուրիոյ մէջ տեղի կ'ունենայ երեսփոխանական ընտրութիւններ, որուն ընթացքին Հալէպի մէջ երեսփոխան կ'ընտրուի հայազգի իրաւաբան Գրիգոր Էպլիղաթեան, իբրեւ «արաբ ազատագրական շարժման ներկայացուցիչ»<sup>26</sup>:

24 Դալլաքեան Կ. Լ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն, գիրք երկրորդ, էջ 187:

25 Դալլաքեան Կ. Լ., նշ. աշխ., էջ 187-188:

26 Սուրիոյ խորհրդարանէն ներս հայ երեսփոխանները. Ֆրանսական հոգատարութեան օրերուն, 1932 թ., Հալէպէն՝ Հրաչ Փափագեան եւ Ալեքսանտրէթէն՝ Մովսէս Տէր Գալուստեան, 1936 թ. Հալէպէն իրաւաբան Պետրոս Միլլէթպաշեան եւ Հրանդ Սիլահեան, Ալեքսանտրէթէն՝ Մովսէս Տէր Գալուստեան: 1943 թ. Դամասկոսէն՝ Նազարթ Եագուպեան, Հալէպէն՝ Մովսէս Սալաթեան եւ Հրաչ Փափագեան: 1947 թ.՝ Դամասկոսէն իրաւաբան Ֆրետ Արսլանեան, Հալէպէն՝ Տիգրան Չրաճեան եւ Ապտալլա Ֆէթթել: Եգիպտոս եւ Սուրիա Արաբական Միացեալ Հանրապետութեան լուծարումէն ետք, 1961 թ. միասնական ցանկով Հալէպէն ընտրուած են զօրավար Արամ Գարամանուկեան եւ իրաւաբան Գրիգոր Էպլիղաթեան, այս խորհրդարանը

21 Չոպանեան Յ., Քեսապ, Հալէպ, 1995, էջ 149:

22 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 69:

23 «Ազգակ», ԼԶ. տարի. թիւ (14) 9143, 12 Մարտ 1962, Պէյրութ:



Այսպես, յիսունական թուականներուն իրավիճակը Մերձաւոր Արեւելքի մէջ չափազանց լարուած էր:

1949-1952 թթ. Սուրիոյ մէջ տեղի ունեցած պետական յեղաշրջումները, ինչպէս նաեւ Եգիպտոսի մէջ արաբ ազգայնականներու, Նասերի գլխաւորութեամբ, Նասերի իշխանութեան գլուխ գալը, Եգիպտոսի Նոր վարչակարգի հողային բարեկարգումները եւ 1956 թ. սահմանափակումներն ու 1956 թ. վերջի եւ 1957 թ. սկիզբի Արեւմտեան Տէրութիւններու (ԱՄՆ) եւ անոր իրահանգով Թուրքիոյ ճնշումը Սուրիոյ վրայ, որ սպառնալիք էր Նորանկախ Սուրիոյ համար, Նասերի դիրքորոշումը «Պաղտատի դաշինք»-ին եւ աստիճանական մերձեցումը Խորհրդային Միութեան, 1958 թ. Սուրիոյ եւ Եգիպտոսի Միացեալ Հանրապետութիւնը, 1961 թ. Սուրիոյ մէջ «Պաաս»<sup>27</sup> կուսակցութեան իշխանութեան գլուխ գալը բարդ իրադրութիւն ստեղծած էին ոչ միայն տեղի կազմակերպութիւններու, այլեւ հայկական համայնքներու ղեկավարութեան միջեւ: Այլ խօսքով, շրջանը կ'ապրէր տարածաշրջանային յարատեւ անկայուն ժամանակահատուած մը՝ յատկանշուած վարչակարգերու տապալումով, շարունակական բախումներով, Նոր վարչակարգերու եւ Նոր պետութիւններու ձեւաւորումով, երկու գերտէրութիւններու՝ ԱՄՆ-ի եւ Խորհրդային Միութեան դաշնակիցներու, այդ հողին վրայ հակապայքարով, ինչ որ պատճառ դարձաւ, որ տարածաշրջանի որոշ երկիրներ, որոնց կարգին նաեւ Սուրիան, յայտնուին (ներգրաւուին) քաղաքական լուրջ տագնապներու առջեւ, որուն անմիջական ներազդեցութիւնը մենք կը տեսնենք Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը ուսումնասիրելու ընթացքին: Ներքաղաքական պայքարի ոլորտին մէջ, ուր ոչ միայն պիտի ներքաշուէին կուսակցութիւնները, կազմակերպութիւնները, այլեւ՝ Հայ Եկեղեցին:

ԱՄՆ-ի եւ Խորհրդային Միութեան միջեւ գերլարուածութիւնը, 1953 թ.-էն ետք դէպի Խորհրդային Հայաստան մեկնելու սահմանափակումի վերացումը համայնքի գաւակներու ոմանց մօտ պիտի յառաջացնէր Նոր հայրենադարձութեան

լուծարուած էր 8 Մարտ 1963 թ., «ՊԱԱՍ» ընկերվարական կուսակցութեան յեղափոխութեան օրը: 1970 թ. 16 Նոյեմբերի բարեկարգչական շարժումին առիթով, երբ վերահաստատուած է Խորհրդարանը եւ 1971 թ. երկամեայ Նշանակովի Խորհրդարանին մէջ ներառուած էին իրաւաբան Գրիգոր Էպիղաթեանը եւ Ռուբէն Տիրաբեանը: 1973 թ.-էն մինչեւ 2010 թուականներ, ինը քառամեայ Նաաշրջաններ, հայ համայնքը Սուրիոյ Խորհրդարանին մէջ ներկայացած է մէկ երեսփոխանով: Տե՛ս **Էպիղաթեան Մ.**, «Յիշեցման կարգով ... Պատմութեան համար», «Ազգակ», թիւ 292771, 29 Ապրիլ 2016 (<http://www.aztagdaily.com/archives/292771>):

<sup>27</sup> Արաբական վերածնունդի սոցիալիստական կուսակցութիւն (حزب البعث العربي الاشتراكي): Կուսակցութիւնը հիմնուած է 1954 թ. երկու քաղաքական կուսակցութիւններու՝ Արաբական վերածնունդ կուսակցութեան եւ Արաբական սոցիալիստական կուսակցութեան միաւորումով: Արաբական սոցիալիստական կուսակցութիւնը հիմնուած է 1950 թ. Ակրամ շարունակի կողմէ, որ հակաիմբերիալիստական եւ դեմոկրատական ուղղուածութիւն ուներ: Իսկ Արաբական վերածնունդի կուսակցութիւնը ստեղծուած էր 1941 թ.: Միշէլ Աֆլախի (ميشال علقان) եւ Սալահ ատ-Տիւն ալ-Պիթար (صلاح الدين البيطار) կողմէ:

ցանկութիւն, որ պիտի իրականանար միայն 1960-ական թուականներու կիսուն՝ Սուրիոյ պարագային:

Հակառակ ստեղծուած ներքաղաքական անբարենպաստ իրավիճակին՝ 1955 թ. Դամասկոսի մէջ Սուրիոյ եւ Խորհրդային Միութեան միջեւ տնտեսական համագործակցութեան համար կը կնքուի առեւտրական եւ վճարման համաձայնագիր: Կնքուած համաձայնագիրը ամրապնդելու միտումով, 1956 թ. Խորհրդային Միութիւն կ'այցելէ Սուրիոյ տարբեր ընկերութիւններու ներկայացուցիչները:

18 Օգոստոս 1956 թ., Սուրիոյ երեսփոխանական ժողովը հանրապետութեան Նախագահ կ'ընտրէ Շ. Քուաթլին: Արաբական Հանրապետութեան Նախագահի՝ Շ. Քուաթլիի այցը Խորհրդային Միութիւն Նոր դրսեւորում կրնար հանդիսանալ երկու երկիրներու միջեւ ամրացող բարեկամութեան: Նոյն թուականին Դամասկոսի մէջ կը կնքուի գինուորական դաշինք Եգիպտոսի եւ Սուրիոյ միջեւ: Պաշտպանողական բնոյթ կրող դաշինքով կողմերը յանձնառու պիտի ըլլային իրարու օգնելու արտաքին վտանգի պարագային:

Սակայն 1956 թ. կացութիւնը անելի կը վատթարանայ, երբ «դպրոցներ (խօսքը ֆրանսական դպրոցներու մասին է - Ա.Ֆ.) ու եկեղեցիներ այրեցին Հալէպի մէջ, իսկ 1957 թ. թուրք-սուրիական սահմանին վրայ, թրքական կեդրոնացումներ սկսան: Հայերը շատ լաւ գիտէին, թէ առաջին զոհերը պիտի ըլլային թրքական Նախայարձակումի մը, որովհետեւ պատմութեան մէջ միշտ հալածուած ու քարոզուած էին թուրքերու կողմէ»<sup>28</sup>: Այս մասին անդրադառնալով՝ «Ազգակ» օրաթերթը կը գրէ. «Թուրքերը գիտնալով, թէ հայերը Նոյն ատեն պիտի ըլլային դիմադրողները դէպի Սուրիա իրենց թափանցումներուն, այդ օրերուն, Ճէզիրէի մուհաֆըզէն (Նահանգապետէն - Ա. Ֆ.) պահանջած էին հայերու հեռացումը սահմանային շրջաններէն»<sup>29</sup>:

Այս ժամանակահատուածը Սուրիոյ եւ սփիւռքեան իրականութեան ողջ պատմական հոլովոյթին մէջ կը բնորոշուէր սփիւռքեան տեղաւորումին եւ սերնդական առաջին հերթափոխի ժամանակաշրջանով եւ տեղաշարժերով:

Եթէ առաջին երկու տասնամեակներուն համայնքի ազգայիններուն գերխնդիրը համայնքային կեանքի ձեւաւորումը, կրթական, առողջապահական, տեղաւորման, որբահաւաքի գործի կազակերպումն էր, ապա յառաջիկայ տասնամեակները, որպէս երկիրի քաղաքացի, դարձան ինքնագիտակցութեան, ինքնադոստորման տարիներ: Իրենց պապերէն ասանդաբար ժառանգած սուրիահայերը զանազան արիեստներով նպաստեցին երկրի տնտեսութեան զարգացման, տեղացիին կողքին իրենց մասնակցութիւնը բերին երկրէն ներս

<sup>28</sup> «Ազգակ», ԼԶ. տարի, թիւ (14) 9143, 12 Մարտ 1962, Պէյրութ:  
<sup>29</sup> Նոյն տեղը:



անկախության ձեռքբերման համար մղուած պայքարին՝ հակառակ ներհամայնքային անախորժութիւններուն: Նակառակ պետական զանազան սահմանափակումներուն՝ կարեւոր բարեփոխումներ իրականացուեցան, առաջացան ազգային-մշակութային ընկերութիւններ, փակուած կարգ մը վարժարաններու փոխարէն սկսան գործել բազմաթիւ նախակրթարաններ, միջնակարգ դպրոցներ եւ ւեյլի ուշ՝ երկրորդական ազգային եւ մասնաւոր վարժարաններ (յատկապէս քաղաքներուն մէջ): Դպրոցական եւ հայրենակցական միութիւններու յարկէն ներս ծիլ առին ու ծաղկեցան իրենց պարբերականներ, գրական եւ գիտական աշխատութիւններ, առաւել աշխուժացաւ թատերական կեանքը, հանդէս եկան երիտասարդ նկարիչներ, քանդակագործներ, ճարտարապետներ եւ ամենէն կարեւորը արաբերէնի իմացութիւնը նպաստեց մշակութապէս հայ-արաբ դարաւոր բարեկամութեան մերձեցման:

Պատմական այս շրջանին Բերիոյ թեմի շրջաններու հայութեան պատկերը՝ 1949-1950 թթ. հետեւեալն էր՝

**Աղիսակ 1<sup>30</sup>**

քաղաք	անձ	քաղաք	անձ
Նալէպ	32.500	Ամուտա	204
Գամիշլի	9.107	Թէլ Պրագ	70
Թէլ Ապիատ	560	Քեսապ	551
Ազէզ՝	644	Գարատուրան	341
Այն էլ Արապ՝ (Այն ալ-Արապ)	1.000	Թարթուս	92
Բազա՝	319	Եագուպիէ	426
Աֆրին՝ (շրջակայ գիւղերու մէջ՝ Ճինտէրէս 12, Չոլախան 5, Իքիախըր 2, Կեմրիկ 6, Բեճօ 30)	81	Ճըսր էլ Շուղուր	115
Մէյտան Եքպէզ	90	Գոպըրպիթ (Գոպր պիթ)	46
Թէլ Քեօչէք	73	Լաթաքիա	778
Ռաս Ուլ Այն	341	Ճարապլուս	633
Նասիշէ	350	Ընկզիկ	60
Տէր Զօր	270	Արաբ Փունար	990
Տէրիք	248	Մունպուճ (Մինպիճ)	60
Տէրպէսիէ	523	Էլ Ամրի (գիտ)	80
		ընդհանուր	50.552

30 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 25:

Դամասկոսը, որ առանձին թեմ էր, իր մէջ կ'ընդգրկէր Նաման, Նոմսը, Սելէ-միէն եւ Ճէպէլ Տրուզը: 1946 թ., ներգաղթի օրերուն, համեմատաբար հայ ազգաբնակչութեան թիւը հետզհետէ նահանջ կ'արձանագրէ. Ճէպէլ Տրուզի մէջ կը մնայ 10 տուն, Նամա՝ 3-4 տուն, Սելէմիէ գրեթէ կը պարպուի: Իսկ Նոմսի եւ Դամասկոսի հայութեան 50 առ հարիւրը կը ներգաղթէ:

1948 թ. տուեալներով (ոչ պաշտօնական մարդահամարի համաձայն) թեմի հայութեան թուական պատկերը հետեւեալն էր՝

**Աղիսակ 2<sup>31</sup>**

քաղաք	անձ
Դամասկոս	5.000 (5.500)
Նոմս	379
Նամա	40
Սելէմիէ	10
Նայաշէն	10
Ճէպէլ Տրուզ	(Սուէտիա 40 հոգի, Սալխաթ՝ 36)
Նաուրան	(Տարաա 20, Էզրա 58 հայեր)
Նաուրանի շրջաններու մէջ	154
ընդհանուր	5747 (6247)

1949 թ. Դամասկոս իր շրջաններով ուներ շուրջ 4.500-5.000 հայ, իսկ Նոմսը՝ 350-450 անձ<sup>32</sup>:

Բացի վերոնշեալներէն, ստորեւ կը ներկայացնենք 1946-1951 թթ. Բերիոյ թեմի Նալէպի եւ շրջաններու բնակչութեան թուապատկերը՝ քաղուած Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի արխիւներէն:

31 «Արեւելք», տարեգիրք, 1948, Նալէպ, էջ 164-165:

32 ԲԹ ԱԱԱ, դարան Բ., գ. 62:



Աղիաակ 3<sup>33</sup>

քաղաք	1946	1947
Հալեպ	29.022	30.389
Ազեզ	719	704
Արաբ Փունար	1.100	1.050
Աֆրին	545	88
Ամուտա	182	166
Այնտիվար	-	-
Գամիշլի (եւ շրջանները)	7.866	7.866
Թել Բեռչեկ	83	104
Եագուպիե	461	461
Ճիսր Շուղուր	118	135
Թել Ապիաթ	520	520
Ընկզիկ	67	80
Լաթաքիա	890	760
Տերիք	141	210
Բազզա	266	270
Ճարապլուս	1.024	714
Տեր Զոր	212	251
Մենպիճ (Մունպուճ)	104	64
Կեմրիկ	-	-
Թարթուս	100	90
Հասիչե	376	372
Պապ (Պապ-Մունպուճ)	-	-
Այն էլ Արուա (Այն ալ-Արուա)	202	213
Քեսապ	1.100	407
Գարատուրան	981	324
Ռաս էլ Այն (Ռաս Ուլ Այն)	320	267
Մէյտան էքպեզ	78	71
Թել Պրազ	278	40
Գուպր պիթ	64	65
Տերպեսիե	-	380
Բաճո	19	-
ընդհ. գումար	46.838	46.061

33 ԲԹ ԱԱԱ դարան Դ., գործ 26: (Քաղաքական ժողով, տարեկան վիճակագրություն Սուրիոյ գաղութին, 1946-1951 թթ.):

քաղաք	1948	1949	1950	1951
Հալեպ	32.401	40.655	31.208	33.500
Ազեզ	680	644	449	555
Արաբ Փունար	1.100	1.006	994	990
Աֆրին	82	81 (Ճինտերիս՝ 12, օլախան՝ 5, Իքիախըր՝ 2)	65	72
Ամուտա	205	204	212	207
Այնտիվար	-	-	-	-
Գամիշլի (եւ շրջանները)	7.866	9.107	9.148	9.317
Թել Բեռչեկ	67	73	66	65
Եագուպիե	456	426	-	363
Ճիսր Շուղուր (Ճըսր Շուղուր)	130	115	105	110
Թել Ապիաթ	-	560	-	550
Ընկզիկ	65	-	550	61
Լաթաքիա	942	-	778	798
Տերիք	147	248	243	197
Բազզա	304	319	322	362
Ճարապլուս	679	-	633	550
Տեր Զոր	-	266	271	297
Մենպիճ (Մունպուճ)	54	-	-	55
Կեմրիկ	-	6	-	-
Թարթուս	90	92	90	94
Հասիչե	347	287	352	412
Պապ (Պապ-Մունպուճ)	-	-	-	-
Այն էլ Արուա (Այն ալ-Արուա)	177	-	153	177
Քեսապ	411	551	560	530
Գարատուրան	335	341	343	335
Ռաս էլ Այն (Ռաս Ուլ Այն)	255	341	300	300
Մէյտան էքպեզ	67	90	87	68
Թել Պրազ	67	70	124	84
Գուպր պիթ	46	-	46	35
Տերպեսիե	330	523	-	330
Բաճո	-	30	9	-
ընդհ. գումար	47.303	56.054	47.108	50.414



Աղիասակ 4<sup>34</sup>

քաղաք	1952	1953
Հալեպ	32.883	33.240
Ազեզ	480	428
Արաբ Փունար	900	900
Աֆրին	75	98
Ամուտա	212	212
Այնտիվար	-	-
Գամիշլի (եւ շրջանները)	9.293	9.293
Թել Բեռլեկ	57	81
Եագուպիե	391	-
Ճիսր Շուղուր	112	96
Թել Ապիաթ	575	505
Ընկզիկ	63	75
Լաթաքիա	813	966
Տերիք	220	353
Բագգա	362	410
Ճարապլուս	-	230
Տեր Զօր	305	269
Մենպիճ (Մունպուճ)	53	-
Կեմրիկ	-	-
Թարթուս	94	94
Հասիչե	465	462
Պապ (Պապ- Մունպուճ)	-	-
Այն Էլ Արուս (Այն ալ-Արուս)	153	-
Քեսապ	362	353
Գարատուրան	279	323
Ռաս Էլ Այն (Ռաս Ուլ Այն)	309	309
Մեյտան Էքպեզ	78	-
Թել Պրազ	92	100
Գուպր պիթ	46	64
Տերպեսիե	347	411
Բաճօ	-	-
Էլ Ամրիի (Ալ-Ամրի)	81	82
Պանիաս	100	-
	49.200	49.354

34 ԲԹ ԱԱԱ դարան Դ., գործ 26: Քաղաքական ժողով, տարեկան վիճակագրություն Սուրիոյ գաղութին, 1952-1955 թթ. .:

քաղաք	1954	1955
Հալեպ	33.240	36.016
Ազեզ	350	264
Արաբ Փունար	897	763
Աֆրին	64	75
Ամուտա	212	276
Այնտիվար	-	-
Գամիշլի (եւ շրջանները)	9.552	-
Թել Բեռլեկ	-	-
Եագուպիե	394	349
Ճիսր Շուղուր (Ճըսր Շուղուր)	99	98
Թել Ապիաթ	541	560
Ընկզիկ	77	78
Լաթաքիա	1.059	1.248
Տերիք	+	310
Բագգա	413	469
Ճարապլուս	435	428
Տեր Զօր	255	256
Մենպիճ (Մունպուճ)	-	49
Կեմրիկ	-	-
Թարթուս	94	85
Հասիչե	432	427
Պապ (Պապ- Մունպուճ)	-	-
Այն Էլ Արուս (Այն ալ-Արուս)	32	-
Քեսապ	506	515
Գարատուրան	323	
Ռաս Էլ Այն (Ռաս Ուլ Այն)	314	314
Մեյտան Էքպեզ	-	-
Թել Պրազ	-	92
Գուպր պիթ	-	-
Տերպեսիե	-	349
Բաճօ	-	-
Էլ Ամրիի	-	-
Պանիաս	95	87
	49.384	43.108



## բ. ՍՈՒՐԻԱՆԱՅՈՒԹՅԱՆ 1958-1965 թթ.

Ինչպես նշեցինք, յիսունական թուականները Մերձատր Արեւելքի երկիրներու համար յղի էին անակնկալներով: Նորանկախ շարք մը արաբական երկիրներ չկրցան վայելել արեան գնով ձեռք բերած իրենց անկախութիւնը՝ տարածաշրջանի անկայունութեան պատճառով:

Այս ժամանակահատուածին, հակառակ տիրող իրավիճակին՝ Սուրիոյ հայ համայնքը շարունակեց գոյատեւել՝ յաղթահարելով իր առջեւ ծառայած խնդիրները: 1959 թ. տուեալներով՝ չալէպի հայկական համայնքը կը հաշուէր շուրջ 70.000 մարդ<sup>1</sup>: Իսկ 1960 թ. տուեալներով, չալէպի 400.000 բնակիչներու 80.000 հայեր եղած են<sup>2</sup>:

Սակայն քաղաքական եւ տնտեսական ոչ կայուն իրավիճակը, ինչպես նաեւ փոքրամասնութիւններու իրաւունքներու ոտնահարումը իրենց հետեանքները պիտի ունենային, ինչ որ զգալի թիւով գործարար հայեր պիտի ստիպուէին լքել ՍԱՀ-ը եւ տեղափոխուիլ Լիբանան, ԱՄՆ եւ Լատինական Ամերիկայի երկիրներ՝ այնտեղ բնակութիւն հաստատելու: «Այն բանէն ետք, երբ նախագահ (Ապտէ) Նասէրը արշաւ (կազմակերպեց) Համայնավար կուսակցութեան դէմ, տեղի հայկական գաղութին դրութիւնը կտրուկ կերպով փոխուեցաւ: Համայնավար կուսակցութեան՝ հայոց միջավայրին մէջ գործող ներկայացուցիչներն ստիպուած էին կամ Լիբանան ու այլ երկիրներ արտագաղթել, կամ պահուիլու, կամ ալ ձերբակալուեցան»<sup>3</sup>:

Այսպիսով, Սուրիայէն հայերու արտագաղթը զանգուածային բնոյթ կը ստանայ 1958-1961 թթ.: Եգիպտոսի եւ Սուրիոյ միացումով 1958-ին եւ 1961-ին ալ «տեղի հայ ազգային կեանքի առաջատար ուժի՝ ՀՅԴ-ի դէմ սանձազերծուած արշաւի»<sup>4</sup> հետեանքով: Ան մեղադրուեցաւ հակապետական գործունէութեան մէջ: Ատոր հիմնական պատճառը Նասէրի ոստիկանական վարչակարգն էր:

Ջանգուածային արտագաղթը դէպի Լիբանան նուազեցաւ միայն Սուրիոյ՝ Եգիպտոսէն անջատուելէն ետք:

Արաբական Միացեալ Հանրապետութիւնը (Եգիպտոս-Սուրիա), Նասէրի գլխաւորութեամբ, կ'որոնէր քաղաքական եւ ուժային նոր յենարան՝ Խորհրդային Միութիւնը: Այնուհետեւ որդեգրեց խորհրդային քաղաքականութեան ուղեգիծը: Սուրիոյ մէջ համայնավար կուսակցութիւնը նախաձեռնեց քաղաքական լայնածաւալ գործունէութիւն, դառնալով քաղաքական նկատառելի ուժ՝ Խա-

1 Եազըճեան Գ., նշ., աշխ., էջ 231:

2 Նոյն տեղը, էջ 197:

3 Նոյն տեղը, էջ 195:

4 Դանալանյան Տ., Սփյուռքի Ներքին տեղաշարժերը, 1950-1980-ական թուականներին, Երևան, 2016, էջ 121: Նաեւ <http://www.aztagdaily.com/archives/44040>:

լետ Պէքրաշտի գլխաւորութեամբ (որ կուսակցութեան ընդհանուր քարտուղարն էր): Փոխադարձ շահերու ծիրէն ներս հանրապետութենէն կը պահանջուէր ճնշամիջոցներ բանեցնել հակահամայնավարական ազգայնական բոլոր ուժերուն վրայ:

Նասէրի վարչակարգի տրամադրութիւններ էին՝

ա-«Ազգային փոքրամասնութիւններու, մասնաւորաբար հայերու, իրաւունքներու ոտնահարում:

բ-Իրականացուող «պանիսլամիզմի» քաղաքականութեամբ ոտնահարել հայերու կրօնական զգացումները, որոնց մեծամասնութիւնը հաւատացեալ քրիստոնեաներ էին:

գ-Տնտեսութեան բնագաւառէն ներս՝ երկիրին մէջ տիրող ճգնաժամային վիճակը, կրճատել ներքին առեւտուրն ու արտադրութիւնը, որ կը շօշափէր բոլոր քաղաքացիներու, մասնաւորապէս՝ հայերու նիւթական դրութիւնը»<sup>5</sup>:

Ինչպէս կը նկատենք, որ հակահամայնավարական արշաւի կողմին, 1959 թ. ԱՄՀանրապետութեան իշխանութիւնները ազգային փոքրամասնութիւններուն, «մասնաւորաբար հայոց իրաւունքները ոտնահարելուն ուղղուած միջոցներ» կը ձեռնարկէն<sup>6</sup>:

Առաջին հերթին՝ հայերու առջեւ կը փակուին պետական ու զինուորական լուրջ ծառայութեան դռները, բանակէն հանգստեան կը կոչուին Պաղեստինի պատերազմի հերոսներէն զօրավարներ (գէներալ) Ա. Գարամանուկեանը, Ն. Մալոյեանը եւ ուրիշ բարձրաստիճան սպաներ: Հայկական դպրոցներէն ներս կ'արգիլուի հայ ժողովուրդի պատմութեան դասաւանդումը: «1959 թուականին, հայկական դպրոցներ պարտադրաբար մտցուեցաւ արաբերէնի եւ իսլամի պատմութեան ուսումնասիրումը, արգիլուեցաւ Հայաստանի պատմութեան դասաւանդումը, կրճատուեցան հայոց լեզուի դասա(ժամ)երը»<sup>7</sup>: Շաբաթական

5 ՆԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 283, թ. 4-5: Տե՛ս նաեւ Եազըճեան Գ., նշ. աշխ., էջ 195-196:

6 Եազըճեան Գ., նշ. աշխ., էջ 197:

7 Նոյն տեղը, էջ 196: Այստեղ յոյժ կարեւոր կը համարենք անդրադառնալ եւ ճշգրտել «1959 թուականին, հայկական դպրոցներ պարտադրաբար մտցուեցաւ արաբերէնի եւ իսլամի պատմութեան ուսումնասիրումը ...» փաստաթուղթին մէջ տեղ գտած արտայայտութիւնը, իսկ նոյն աշխատասիրութեան այլ էջի վրայ կը կարդանք. «Չնայած, որ հայերը քրիստոնեայ են, հայկական դպրոցներուն մէջ իսլամութեան դասաւանդում մտցուեցաւ» (տե՛ս Եազըճեան Գ.-ի նշուած աշխատութեան, էջ 199): Պատմութենէն զիտենք, որ Սուրիոյ անկախացումէն ետք երկիրի նորաստեղծ վարչակարգի կողմէ արաբերէնը յայտարարուեցաւ որպէս պետական լեզու, եւ նախ արաբերէն լեզուի ուսուցման համար առաւել պահեր տրամադրուեցան, ապա արաբերէնով դասաւանդող առարկաներուն ուսուցումը եկաւ փոխարինելու հայերէն լեզուով ամենդոտղ առարկաներուն (հայագիտական առարկաներուն): Սակայն «պարտադրաբար մտցուեցաւ արաբերէնի եւ իսլամի պատմութեան ուսումնասիրումը» եւ «... հայկական դպրոցներուն մէջ իսլամութեան դասաւանդում մտցուեցաւ» արտայայտութիւնները, այս տեղեկանքներուն մէջ, խիստ ընտելի են եւ չեն համապատասխանէր իրականութեան, որովհետեւ որեւէ



45 դասաժամերու 33-էն` 38-ը կը պարտադրուի արաբերէն լեզուի դասաւանդման: Իսկ 7-12-ը` մայրենի եւ օտար լեզուներու ու կրօնի ուսուցման: Կ'արգիլուին նաեւ ազգային բոլոր ձեռնարկները (ասմունք, երգ ու երաժշտութիւն, թատրոն եւ այլն), յատկապէս հրատարակութիւնները<sup>8</sup>: (Ապտէլ) Նասէր բացայայտ համախլամական քաղաքականութիւն կը վարէ` իսլամը պետական կրօնի աստիճանի բարձրացնելով:

Պատմութիւնը կ'արձանագրէ, որ Արաբական Միացեալ Նահանգներու Նախագահ Կամալ Ապտէլ Նասէր կառավարման առաջի օրէն` 1952-էն սկսեալ, Եգիպտոսէն ներս չէ հանդուրժած համայնավարներու գոյութեան ու գործունեութեան, եւ անխնայ հարուածած զանոնք: Այս քաղաքականութիւնը կիրարկուեցաւ նաեւ Սուրիոյ մէջ, երբ ստեղծուեցաւ ԱՄՆ:

Հալէպի մէջ ԽՍՀՄ գլխաւոր հիւպատոսարանի բացման թուականէն մինչեւ ԱՄՆ հաստատումը, հայ համայնավար, հնչակ եւ ռամկավար ղեկավար գործիչներ, ինչպէս նաեւ համայնքի հարիւրաւոր ներկայացուցիչներ յաճախակի այցելութիւններ կու տային գլխաւոր հիւպատոսութիւն: Այցելութիւնը կը միտէր ամրապնդել եւ ընդլայնել հայ համայնքի եւ Խորհրդային Հայաստանի կապերը տարբեր բնագաւառներէ ներս: Այցելողներէն շատեր ցանկութիւն կը յայտնէին մշտական բնակութիւն հաստատելու Հայաստան. «Փետրուար-Մարտ (1959 թ. - Նշումը մեր կողմէ) ամիսներուն մենք 62 նման դիմումնագիր ձեւակերպեցինք ու կեդրոն ղրկեցինք»<sup>9</sup>: «Իսկ ոսանելու խնդրանքով աւելի քան 50 դիմումներ տրուեցան գլխաւոր հիւպատոսարան»<sup>10</sup>: Այս դրութիւնը կը տեսնուի մինչեւ 1959 թ. սկիզբը, Նասէրի յայտարարած արշաւը տեղական կոմկուսի դէմ<sup>11</sup>:

Ժամանակ սուրիական վարչակարգը, ինչ-ինչ պայմաններ թելադրուած կամ յանձնարարականներ ստացած բացարձակապէս չէ պարտադրած Սուրիոյ քրիստոնէայ բոլոր համայնքներու դպրոցներուն «իսլամի պատմութիւնը» եւ կամ «իսլամութեան դասաւանդումը»: Ծանօթ ըլլալով տարբեր ժամանակներու Սուրիոյ պետական ծրագիրներուն, դասագիրքներուն, ինչպէս նաեւ ուսումնասիրելով Բերիոյ թեմի Ազգային Առաջնորդարանի արխիւներն ու Յակոբ Զոլաբեանի զոյգ յուշամատենները` չենք հանդիպած նման բովանդակութեան ոչ արաբերէն, ոչ ալ հայերէն լեզուով հրամանագիրներու եւ կամ ստացուած-առաքուած պաշտօնական նամակներու, ատենագրութեանց մէջ: Յետագայ ուսումնասիրողներուն համար յարկ է պարզել իրավիճակը: Երբ Հայոց Պատմութիւն առարկայի դասաժամը վերացուեցաւ հայկական դպրոցներէն, պետական ծրագրի մէջ տեղ գտան արաբերէն լեզուով տարբեր դասարաններու համար պատմութեան դասագիրքեր, որոնց մէջ մանրամասն խօսուած էր իսլամի ծագման եւ Արաբական Խալիֆայութեան դարաշրջանի նուաճումներու եւ յետագայ տարիներու իրադարձութիւններու մասին: Այս դասագիրքը պետական ծրագիրով մուտք գործեց դպրոցներ եւ որպէս պատմութիւն ամառուեցաւ Սուրիոյ բոլոր աշակերտներուն:

8 **Նաջարյան Ե. Հ.**, Հայ-արաբական մշակութային կապերը (Սիրիա, Լիբանան) 1945-70 թթ., «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», VI, Արաբական երկրներ, Երևան, 1974, էջ 321:

9 **Եազըճեան Գ.**, Նշ. աշխ., էջ 201:

10 Նոյն տեղը, էջ 199-204:

11 ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 170, թ. 6, 25:

ԱՄ Նահանգներու շրջանին տեղի ունեցաւ համայնավարներու զանգուածային ձերբակալութիւններ, նահանջ արձանագրեց նաեւ տեղական հայ համայնքի կապը ԽՍՀՄ գլխաւոր հիւպատոսարանի հետ:

Տեղական անվտանգութեան մարմիններու կողմէ ձերբակալութիւն կատարուեցան նաեւ այն անձերուն, որոնք կ'այցելէին գլխաւոր հիւպատոսարան: Այս վիճակը խախտեց հայ համայնքի եւ գլխաւոր հիւպատոսարանի միջեւ հաստատուած կապերը:

Համայնքի գաւակները «անկախ իրենց քաղաքական համոզումներէն» չէին կրնար «համընդհանուր դժգոհութիւն չառաջացնել նասերական վարչակարգին նկատմամբ»<sup>12</sup>: Յառաջդիմական մասը դժգոհ էր համայնավար եւ առաջդիմական տարրերու դէմ իրականացուող բռնութիւններէն, որոնք կ'իրականացուէին ԱՄՆ իշխանութիւններու կողմէ: Իսկ դաշնակցականները Նոյնպէս դժգոհ էին իշխանութիւններէն իրենց նկատմամբ որդեգրուած սահմանափակումներէն:

Նասէրի եւ հետեւորդներուն վարած քաղաքականութիւնը փոքրամասնութիւններու, ի մասնաւորի քրիստոնէաներու նկատմամբ, կը միտէր արմատապէս տարածաշրջանէն հեռացնել բոլոր այն տարրերը, որոնք խոչընդոտ կը հանդիսանային իր ծրագիրներուն, ինչ որ պիտի խաթարէր արաբական երկիրներու անդորրութիւնը եւ նպաստէր մեծ թիով քրիստոնէաներու արտագաղթին:

Յիշենք, որ արտագաղթը միշտ ալ պայմանաւորուած եղած է երկիրէն ներս տիրող աննպաստ ընկերային, տնտեսական եւ քաղաքական պատճառներով: Երկրին տնտեսական ճգնաժամի, քաղաքական ոչ կայուն վիճակի հեռանկարի եւ տեղական իշխանութիւններու որոշ գործողութիւններու ընդդէմ ազգային փոքրամասնութիւններուն:

Բացի այդ, ԱՄՆ-ի թելադրանքով Թուրքիոյ եւ Իսրայէլի զինուած ուժերու կեդրոնացումը Սուրիոյ սահմաններու տարածքին, համաժողովրդական զայրոյթի ալիքը կը բարձրացնէ երկիրէն ներս: Առաջընթաց քայլեր առնուելով` կառավարութիւնը կը զինէ ժողովուրդը, որպէս բանակի թիկունք: Այս առումով Հրաչիկ Սիմոնեան հետեւեալը կը գրէ. «Ձեռք ստացալ նաև Սիրիայի հայութիւնը: Բայց կառավարութիւնը մերժեց զենք տալ դաշնակցականներին, որովհետև անոնք անվստահելի կը նկատուին»<sup>13</sup>:

1958 թ.-էն ետք, Եգիպտոս-Սուրիա միաւորումն ու ԱՄՆ-ի ստեղծումը կը խախտէ Սուրիոյ իրադրութիւնը եւ կտրուկ կը փոխուի հայ համայնքի դրութիւնը:

Նասէրէն բացի, Սուրիոյ անվտանգութեան գրասենեակի ընդհանուր պետ Ապտէլ Համիտ Սարրաճի (հակահայ պետական անձնատիրութիւն), որ Կամալ

12 **Եազըճեան Գ.**, Նշ. աշխ., էջ 199:

13 **Սիմոնյան Հ.**, Սփոյնտաշարժութիւնը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, 1968, էջ 281:



Ապտել Նասերի անմիջական բարեկամն էր, ամբողջ երկիրով մեկ հաշուեյարդարի կ'ենթարկե ազգային հակախորհրդայնամետ կուսակցությունները եւ հետետղական ճիգերով կը բացայայտե ՀՅԴ-ի ընդդատակեայ գործունեությունը:

Հայաստանի Ազգային Արխիվի (ՀԱԱ) Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի ֆոնտին մէջ ի յայտ եկած «Հայկական գաղութը Հայէպոմ»<sup>14</sup> տեղեկանքը որոշ չափով կը մեկնաբանէ կառավարութեան դիրքորոշումը դաշնակցութեան նկատմամբ. տեղեկանքը կը պարզէ.

«ՍԱՀ-ի հայկական գաղութի մէջ դաշնակցականներու դիրքերու թուլութիւնը՝ 1961 թ. բացայայտուած գաղտնի գործակալներով, որոնք հակաազգային քաղաքականութիւն կը վարէին օտարերկրեայ գաղութատիրական երկիրներու հետ կապուելով:

-Տեղական իշխանութիւններու կողմէ անոնց հետապնդումն ու հաշուեյարդարը:

-Դաշնակցական ղեկավարներու մէջ տեղի ունեցած տարաձայնութիւնները:

-Խորհրդային Հայաստանի նուաճումներու ու յաջողութիւններու գաղափարախօսութիւնը, որ կը տարուէր տեղի հայերու մէջ եւ կը փոխհատուցուէր դաշնակցականներու տարած հակախորհրդային զրպարտանքներու դէմ<sup>15</sup>:

Դաշնակցական կարգ մը ղեկավարներու արարքին, անոնց ընդդատակեայ գործունեութեան կ'անդրադառնայ Խ. Թիֆլինճեան՝ պատասխանելով Բ. Նասարդեանի ամբաստանագիրին. ան ափսոսանք կ'արտայայտե այդ դէպքերուն զոհ դարձած ընկերներուն մասին Նաեւ. «Սուրիոյ զանազան վայրերու մէջ, Դամասկոս, Հալէպ, Լաթաքիա, Ճեզիրէ, 1962 թ. երեւան հանուած պահեստները-ռատիոյ գործիքներ եւ զէնքեր, գործն են Նասարդեան Բիւրոյին, Դրոյի եւ իրեն գործակից Բիւրոյի անդամներ Հրաչին ու Մովսէսին եւ որոնց տխուր գործերու զոհեր դարձան մէկ քանի տասնեակ դաշնակցականներ, ոմանք բանտային տանջանքներէն մեռան զնտաններու մէջ. ուրիշներ կորսնցուցին իրենց առողջութիւնը եւ դատապարտուեցան զանազան պատիժներու, Սուրիոյ ամենաբարձր զինտորական ատենին կողմէ: Ի բացակայութեան մահուան դատապարտուեցան երեք երիտասարդներ, որոնցմէ մէկուն ինքնութիւնը անյայտ»<sup>16</sup>:

Գործունեութեան բացայայտումի հետեանքով երկիրէն ներս սկիզբ կ'առնեն

հետապնդումներ, ձերբակալութիւններ եւ կասկածեալներու դատավարութիւնը, ուր կը հնչեն տարբեր կարծիքներ երբեմն իրար հակասով, երբեմն զրպարտութիւնը բացայայտող եւ կամ ամբաստանեալները զրպարտող արտայայտութիւններ, որոնք բառացիօրէն տեղ գտած են Լիբանան հրատարկուող «Ազդակ» եւ «Զարթօնք» օրաթերթերու 1962 թ. էջերուն վրայ տարբեր խորագիրներով<sup>17</sup>:

Իրաւաբան (Մեթր) Գրիգոր Էպիղաթեան, որ համարեա դատավարութեան նիստերուն ներկայ եղած է որպէս համայնքի ներկայացուցիչ եւ իրաւաբան, հանգամանօրէն քննութեան կ'ենթարկե այն ապօրինի եւ անմարդկային միջոցները, որոնք ի գործ դրուեցան ողջ համայնքի մը պատկերը աղօտելու եւ բազմապիսի անմարդկային չարչարանքներու ենթարկելու համայնքի գաւակներէն ոմանք՝ զրպարտելով սուրիական հայրենիքին դէմ կատարած սադրանքներուն համար. «Սարսափի ալիքը սկսաւ տարածուիլ անցեալ տարուան (խօսքը 1961 թուականի մասին է) Յուլիսին, երբ Գամիշլիի, Հալէպի, Լաթաքիոյ եւ Դամասկոսի մէջ զանգուածային ձերբակալութիւններ տեղի ունեցան: Այդ ձերբակալութիւններու կրած չարչարանքները մարդկային խղճմտանքը թոյլ չի տար, որ պատմեմ այստեղ...»<sup>18</sup>:

Իրաւաբան (Մեթր) Ֆրէտ Արսլանեան եւս Սուրիոյ ընկերներու դատավարութեան ներկայ գտնուելով իր ցամն ու ափսոսանքը կ'արտայայտե պատահարին կապակցաբար. «Շատ կը ցաւիմ, որ պատասխանատուները ցարդ չկրցան թափանցել ճիշդ հարցին էութեան: Դժբախտաբար, Նախկին վարչաձեւի օրով, մապահէնները (զաղտնի ոստիկանները) չկրցան գնահատել հայերու կեցածքը սուրիական հայրենիքին արաբական դատին հանդէպ: Քանի մը զէնքերու եւ գործիքներու ներկայութիւնը պատրուակ ծառայեցնելով, ձեռնարկեցին հալածանքներու եւ խոշտանգումներու, ինչպէս Նաեւ կարգ մը չարամիտներու տուած տեղեկութիւնները հիմ ունենալով»<sup>19</sup>:

Կ. Դալլաքեան խօսելով սփիւռքահայ քաղաքական հոսանքներու եւ անոնց դիրքորոշումը իրենց հիւրընկալ երկիրներու նկատմամբ կը մէջբերէ ՌԱԿ-ի պաշտօնական գրութիւններէն մէկուն մէջ տեղ գտած հետեւեալ արտայայտութիւնը, ուր կ'ըսուէր. «Տարակոյս չկայ թէ որեւէ ատենէ աւելի հիմա՝ արաբական երկիրներու պարագային ճիշդ է այն սկզբունքը, որ հայ համայնքները իբրեւ քաղաքականութիւն պէտք է ըլլան ապաքաղաքական իրենց գործունեութեանց

14 Տե՛ս, ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 6, թ. 11:

15 Նոյն տեղը:

16 **Թէմիրեան Ա.**, շ. 3. Դաշնակցութիւն, Բեզլար Նասարդեան, Սովետական Հայաստան, Պէյրուֆ, 1967, էջ 135: Տե՛ս Նաեւ **Խուրշուդյան Լ. Ա.**, Սփիւռքահայ կուսակցութիւնները ժամանակակից ետապում, էջ 171-172: **Սիմոնեան Ն.**, նշ., աշխ., էջ 452: **Թադէտոյան Ա. Ե.**, Դամասկոսյան դատավարութեան հետքերով, Երևան, 1968, էջ 27-39, 43: <http://www.aztagdaily.com/archives/44040>:

17 «Ազդակ» օրաթերթ, ԼԶ. տարի, թիւ 5 (9134), 12 Մարտ 1962; թիւ 6 (9135), 13 Մարտ 1962, Պէյրուֆ, թիւ 12 (9141), 20 Մարտ 1962; թիւ 13 (9143), 21 Մարտ 1962; թիւ 15 (9144), 23 Մարտ 1962; թիւ 16 (9145), 25 Մարտ 1962; թիւ 17 (9146), 26 Մարտ 1962; թիւ 18 (9148), 28 Մարտ 1962: Տե՛ս Նաեւ «Զարթօնք» օրաթերթ, ԻԵ. տարի, թիւ 103 (7228), 26 Յունուար 1962; թիւ 104 (7229), 27 Յունուար 1962; թիւ 105 (7230), 28 Յունուար 1962; թիւ 118 (7234), 13 Փետրուար 1962:

18 «Ազդակ», ԼԶ. տարի, թիւ 5 (9134), 12 Մարտ 1962, Պէյրուֆ:

19 «Ազդակ», ԼԶ. տարի, թիւ 6 (9135), 13 Մարտ 1962, Պէյրուֆ:



մէջ, զգոյշ եւ շրջահայեաց...: Նայ քաղաքական միտքը միշտ նկատի պիտի ունենայ այն իրողութիւնը, որ արաբ ազգայնականութիւնը դիրքագրւած է եւ իր յախուռն յորձանքին մէջ կրնայ ճգմել որեւէ հաւաքականութիւն, որ կը փորձուի օտար պետութեանց հաշտոյն քաղաքական գործունէութեան լծուիլ արաբական երկիրներուն մէջ»<sup>20</sup>:

Այնուամենայնիւ, դաշնակցական ընտիր եւ անձնուէր տղաք, բարեմիտ եւ հաւատաւոր կուսակցականներ, անմարդկային չարչարանքներու ենթարկուեցան<sup>21</sup>:

1961 թ. Սեպտեմբեր 28-ին սուրիական բանակի սպայակազմը Դամասկոսի մէջ իշխանութիւնը վերցնելով իր ձեռքը՝ կը յայտարարէ Արաբական Միացեալ Նահրապետութեան կազմէն Սուրիոյ դուրս գալը եւ երկիրէն կ'արտաքսեն Նասէրի ներկայացուցիչը: Պէտք է ըսել, որ այս նորագոյն պատմութեան ընթացքին արաբական երկիրներու միաւորման առաջին ու վերջին փորձն էր: Միասնական պետութիւնը ի սկզբանէ չունէր հեռանկար, չունէր տնտեսապէս մշակուած ծրագիր, եւ Եգիպտոսը արաբական «սոցիալիզմի» բռնի ներդրում իրականացնելով, Սուրիոյ հանդէպ կը վարէր անհաշուենկատ եւ գաղութային քաղաքականութիւն: Սուրիական գործարար խաւը դժգոհ էր Կամալ Ապտէլ Նասէրի վարած սոցիալ-տնտեսական քաղաքականութենէն եւ Եգիպտական առետրաարդիւնաբերողներու՝ սուրիական շրջանին գերիշխանութիւն հաստատելու ձգտումէն<sup>22</sup>:

Միացեալ պետութեան անյաջող փորձը արձանագրեց արաբական աշխարհի համաարաբականութեան գաղափարախօսութեան ճգնաժամը: Պետութեան շահերը վեր դասուեցան արաբական միասնութեան գաղափարներէն, եւ Սուրիոյ պետութիւնը թեւակոխեց նոր փուլ: Այդ ժամանակ Սուրիոյ առաջատար քաղաքական ուժը դարձաւ «Պաաս» կուսակցութիւնը<sup>23</sup>, որ 1963 թ. յեղաշրջում իրականացնելով, սկսաւ նոր ժամանակաշրջան Սուրիոյ քաղաքական կեանքին մէջ: Սակայն որոշ ժամանակ անց «Պաաս» կուսակցութիւնը չկրցաւ պահպանել միասնականութիւնը եւ պառակտուեցաւ՝ բաժնուելով աջ եւ ձախ թեւերու: Անոնց միջեւ պայքարը անելի խորանալով՝ վերջ ի վերջոյ աւարտեցաւ,

20 **Դալարյան Կ. Լ.**, Ռամկավար ազատական կուսակցութեան պատմություն, գիրք երկրորդ, էջ 188-189:

21 **Ղանալանյան Տ.**, Նշ. աշխ., էջ 121:

22 Տե՛ս **Փիր-Բուդաղովա Է.**, Քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումները Սիրիայում (1962-1970 թթ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. IX, Երևան, 1978, էջ 27:

23 **Van Dam N.**, The struggle for power in Syria, politics and society under Asad and the Ba'th party, London 2011, p. 9: «في سبيل البعث. بيروت, 1969, 102 ص. نضال حزب البعث 1968-1970. دمشق 1978»:

եւ 1966 թ. իշխանութիւնը ամբողջութեամբ անցաւ ձախապասականներու ձեռքը<sup>24</sup>:

Վաթսունական թուականներու սկիզբը ոստիկանական իշխանութեան կողմէ կ'արգիլուի յատկապէս հալէպաբնակներու՝ Սուրիայէն գաղթելու թոյլտուութիւնը, «Նաշուի ամնելով այն հանգամանքը, ինչպէս նաեւ Սուրիայէն արտագաղթելու շատ հայոց ձգտումը»<sup>25</sup>, որովհետեւ արիեստագործութեան հիմնական ոլորտները հալէպահայերու ձեռքն էին եւ Նալէպի մեծ առետրականներու կէսը հայեր էին. սուրիական իշխանութիւնները այս արգելքով նպատակադրած էր կասեցնել հալէպահայերու արտագաղթը դէպի Լիբանան եւ այլուր:

1963 թ., կարգ մը այլ սահմանափակումներու կողքին, պետական հրամանագիրով կը դադրին բոլոր թերթերը, երկիրէն ներս մէկ պետական թերթ հրատարակելու նպատակով: Այսպիսով համայնքը չ'ունենար իր օրաթերթը. հայ հասարակութիւնը կը զրկուի իր մտաւոր սնունդէն, բայց փոխարինելու կու գան Լիբանանի հայկական օրաթերթերը՝ «Ազդակ», «Ջարթօնք», «Արարատ», որոնք մեծ դժուարութեամբ կը հասնէին հայ համայնքին: Ցաւով արձանագրենք, որ Լիբանանի հայկական մամուլը, որ սկսած էր փոխարինել տեղականին, նոյն թուականի երկրորդ կիսուն կ'արգիլուի մուտքը Սուրիա: Աշխատանք կը տարուի ներքին ձեռնարկներու: Նախակրթարաններն ու երկրորդական վարժարանները պարբերաբար կը հրատարակէն աշակերտական կեանքը ցոլացնող գրութիւններ: Այդ պարբերականները եղան այն դաշտը, ուր բազմաթիւ գրողներ գրական առաջին նախափորձերը կատարեցին»<sup>26</sup>:

1963 թ. Փետրուարին Իրաքի եւ Մարտին Սուրիոյ մէջ տեղի ունեցած պետական յեղաշրջումներու որպէս հետեւանք երկիրի իշխանութիւնը անցնելով եւ հաստատուելով «Պաաս» կուսակցութեան ձեռքը, պայմաններ պիտի ստեղծէին երկու երկիրներու փոխարաբերութեան զարգացման եւ ընդլայնման: «Պաաս»-ի հաստատումով քաղաքական ասպարեզ պիտի գային Սուրիոյ հասարակութեան այն խաւերը, որոնք նախորդող ժամանակաշրջաններուն հեռացած էին պետական կառավարման համակարգէն:

Սուրիոյ մէջ կը կազմուի նոր կառավարութիւն: Այս կառավարութեան հիմնական առաջադրանքներէն էր կառուցել արաբական «ընկերվարական» հասա-

24 Տե՛ս **Pierret T.**, Religion and State in Syria, The Sunni Ulama Under the Ba'th, p. 20: **Նովհաննիսյան Լ. Ն.**, Նեղափոխական պրոցեսը արաբական աշխարհում, Երևան, 1990, էջ 59:

25 ՆԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 342, թ. 1: Տե՛ս նաեւ **Գեորգեան Կ.**, «Ամենուն տարեգիրք», Զ. տարի, 1959, Պէյրութ, էջ 519: **Եազըճեան Գ.**, Նշ. աշխ., էջ 207-208:

26 Ձեռագիր եւ տպագիր թերթերէն ու պաշտօնաթերթերէն՝ «Սուրիական մամուլ», «Կեանք», «Փարոս», «Քրիստափոր», «Քրիստոնէայ գործարար», «Մենք», «Մուրճ» եւ այլն: Նալէպի գրական որակատր հանդէսներէն են նաեւ «Դէպի երկիր», «Սեան», «Մշակոյթ»:



րակութիւն՝ առաջնահերթ խնդիր համարելով Սուրիան միաւորել Իրաքի եւ Եգիպտոսի հետ: Երկարատեւ բանակցութիւններէ, խորհրդածութենէ եւ փոխզիջումներէ ետք, 1963 թ. Ապրիլի 17-ին Գահիրէի մէջ կը ստորագրուի դաշնակցային պետութիւն մը ստեղծելու մասին համաձայնագիր: Այդ համաձայնագիրով Սուրիա, Իրաք եւ Եգիպտոս կը կազմէին դաշնակցային պետութիւն, որ պիտի անուանուէր Արաբական Միացեալ Նահանգներ: Այդ հանրապետութեան գոյատեւումը չ'իրականանար, որովհետեւ սկիզբ կ'առնէ անհամաձայնութիւն Սուրիոյ, Իրաքի պաասիստներու եւ Եգիպտոսի ղեկավար շրջաններու միջեւ եւ դաշնակցային միութիւնը կը ձայնողի<sup>27</sup>:

1963 թ. «Պաաս» կուսակցութիւնը իշխանութեան գլուխ գալով, ինչ որ չափով տեղական իշխանութիւններու վերաբերմունքը կը փոխուի հայերու նկատմամբ՝ հաշուի առնելով տեղացի հայերու դերը երկրի տնտեսական ու քաղաքական կեանքէն ներս: Իրականութեան մէջ անոնք միաժամանակ կը ձգտէին իրենց դիրքերը ամրապնդել քրիստոնէաներու մօտ: Տեղական կուսակցական առաջնորդները կը փորձէին կապեր հաստատել, յատկապէս ռամկավար եւ հնչակեան կուսակցութիւններու հետ:

1964 թ. Ապրիլին, չալէպի «Պաաս» կուսակցութեան ղեկավարութիւնը կ'որոշէ եւ կ'առաջարկէ սերտ համագործակցութիւն մշակել հնչակեան եւ ռամկավար կուսակցութիւններու ղեկավարներու հետ. «Հաշուի առնելով քաղաքի տնտեսական եւ քաղաքական կեանքին մէջ հայոց որոշակի նշանակութիւնը, ինչպէս նաեւ չալէպի բնակչութեան քրիստոնէայ հատուածին մէջ իր դիրքերն ամրապնդելու ձգտելով, կուսակցութեան տեղացի առաջնորդները հայկական յառաջդիմական քաղաքական կուսակցութեանց հետ համագործակցութիւն եւ գործնական շփումներ հաստատելու քանի մը քայլեր կատարեցին»<sup>28</sup>:

Այս կը բացատրուի անով, որ «Պաաս» կուսակցութեան առաջնորդները նշեցնելու կուսակցութեանց ղեկավարներուն դիմելով կը միտէին գործնական սերտ շփումներ հաստատել կուսակցութեան քաղաքական ուղեգիծը իրականացնելու եւ տեղական իշխանութեանց անհրաժեշտ օժանդակութիւն ցոյց տալու եւ «Ազգային Պահակագունդին շարքերը հայ յառաջդիմական երիտասարդներով համալրելու»<sup>29</sup> համար: Սակայն հնչակեան եւ ռամկավար ներկայացուցիչները կ'անտեսեն այդ առաջարկութիւնը՝ պատճառաբանելով որ իրենց կուսակցութիւնները կը համարուին լուծարուած եւ անգործունէայ: Եւ այդ առումով ոչ մէկ կազմակերպչական հիմք կը գոյանայ պաաս կուսակցութեան հետ փոխադարձ համագործակցութեան համար<sup>30</sup>:

27 Չալըմյան Լ. Տ., Սիրիա-իրաքյան փոխհարաբերությունների պատմությունից. (1963 թ.), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», IX, Երևան, 1978, էջ 279-285:

28 Եազըճեան Գ., նշ., աշխ., էջ 233:

29 Նոյն տեղը:

30 Նոյն տեղը:

#### Գ. ՍՈՒՐԻԱՆԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՆԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՒԱԻՈՐՄԱՆ ԾԵՄԻՆ՝ 1965-1970 թթ.

Խորհրդային Միութենէն ներս սկսած էր «Ձնհալի» շրջան մը, բազմապատկուած էին կապերը Սփիւռքի հետ, հիմնովին վերանայուած էր անցեալէն եկող արգելքներուն վրայ: 1961 թ. գարնան, առաջին անգամ երկարատեւ ընդմիջումէ ետք, Սփիւռքի համայնքներու ներկայացուցիչներէն, որոնց կարգին նաեւ Սուրիայէն, չայրենիք կ'այցելէին: 1964 թ.-էն կը սկսի գործել Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէն: Կ'իրականացուին բազմաթիւ ձեռնարկումներ, կը հրատարակուին Սփիւռքահայ գրողներուն ստեղծագործութիւնները, կը կազմակերպուին Սփիւռքահայ ուսուցիչներու վերապատրաստում, հայրենի եւ սփիւռքահայ մտաւորականներու հանդիպում եւ այլ մարզական, մշակութային եւ գրական միջոցառումներ:

Եղեռնը արդէն բոլորած էր յիսնամեակը: Չայրենիք եւ Սփիւռք միասնաբար ուղի կանգնած կը պատրաստուէին Եղեռնի ՅԻՄՆԱՄԵԱՅ ոգեկոչման: Այլ խօսքով՝ վաթսունական թուականները յատկանշուած էր հայ դատի «քաղաքականացումով»: Առաջին անգամ 1965 թ. Հայաստանի իշխանութեան կողմէ կը նշուի Մեծ Եղեռնի յիսնամեակը: Արմատական փոփոխութիւններ կը կրեն չայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները: Սփիւռքահայութեան ազգային հայապահպանութեան խնդիրը Հայաստանի իշխանութեանց եւ հասարակութեան հիմնական մտահոգութիւնը կը դառնայ:

Արդէն երկրորդ հայրենադարձութեան անտիսը չայրենիքէն հասած էր Սուրիա:

1964-1966 թթ. Սուրիայէն Խորհրդային Հայաստան տեղափոխուելու եւ մշտական բնակութիւն հաստատելու մտադրութեամբ միայն չալէպէն կը մեկնին 2.500-էն անէլի սուրիահայեր<sup>31</sup>: Սուրիայէն դէպի Խորհրդային Հայաստան մըշտական բնակութեան դիմումները կը կատարուին նաեւ յետագայ տարիներուն: Այդ մասին կը վկայեն Խորհրդային Հայաստանի համապատասխան մարմիններուն բազմաթիւ դիմումները՝ ուղղուած գլխաւոր դեսպանատան:

Ներգաղթի կողքին չէր դադարած հոսքը դէպի Արեւմուտք: Արտագաղթի համապատասխան կազմակերպչական աշխատանքը դէպի Գանատա տեղափոխուելու առաջարկութեամբ ոչ միայն կը կատարուէր հայ ներկայացուցիչներու կողմէ, այլ գանատական իշխանութիւններու, որոնք շահագրգռուած էին երկրէն ներս աշխատունակ բնակչութեան վերաբնակեցման հարցով: Գանատական իշխանութեան հիմնական նպատակն էր Սուրիոյ Արաբական Նահանգներէն աշխատունակ բնակչութեամբ բնակեցնել երկիրին չբնակուած

31 ՆԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 441, թ. 1:



հիսախային շրջանները: Գանատական դեսպանատան ներկայացուցիչը իր յայտարարութեամբ հանդէս կու գայ, որ «այդ շրջաններում վերաբնակողների համար նախապատրաստվել են հատուկ ճամբարներ, որտեղ նրանք բնակություն են հաստատում: Վերաբնակիչների մի մասը ծառայելու են նոր ավանների և քաղաքների շինարարության, իսկ հիմնական զանգվածը՝ գյուղատնտեսությունում, խոպան հողերը յուրացնելու համար»: «Դեպի Գանատա մշտական բնակություն հաստատելու ցանկացողների ցուցակագրությունը կկատարվի: Ընդհանրապես ցուցակներում տեղ են գտել հայ ընտանիքների անուններ, ենթադրվում է շուրջ 30 հայ ընտանիքներ, որոնցից ոմանք ստացել են արդեն երկիր մտնելու թույլտվությունը»:

Գանատական իշխանութան կողմէ տարուած աշխատանքները նաեւ կը վերաբերէին ոչ միայն հայերու, այլեւ տեղացի արաբներուն: Սակայն այդ թուականներուն սակաւ թիւով մարդիկ կ'ընդառաջէն այդ նախաձեռնութեան:

1964 թ. Յուլիս ամսուան ընթացքին, դեպի Գանատա եւ Աւստրալիա մշտական բնակութիւն հաստատել ցանկացողներէն «36 հայերի ուղեվորության փաստաթղթերը ձեւակերպվել են, որոնք մեկնել են Գանատա, ավելի սակավ թվով փաստաթղթեր տվել են Ավստրալիա մեկնելու համար»:

Պետք է նշել, որ Դամասկոսէն եւս, Նոյն թուականներու, արտագաղթողներուն թիւը մեծ եղած է դեպի Արաբական թերակղզիի՝ Ապու Ջապի (Տապի) քաղաքը:

Իսկ 1967-1968 թթ. Մերձաւոր Արեւելքի մէջ տիրող իրավիճակի պատճառով, որ պայմանաւորուած էր Իսրայէլի սանձազերծուած Նուաճողական քաղաքականութեամբ, հայերու դեպի Հայաստան տեղափոխութիւնը կը վերագտնէ իր հեղինակութիւնը եւ կը սկսի գործել իր կառոյցներու շնորհիւ:

1969-էն ետք դաշնակցութիւնը կը վերագտնէ իր հեղինակութիւնը եւ կը սկսի գործել իր կառոյցներու շնորհիւ:

Այնուամենայնիւ, թէեւ մէկ կողմէ քայլեր կը ձեռնարկուէին միասնական ոգիով թիավարելու համայնքային կեանքը Սփիւռքէն ներս, բայց այլ բան էր այն, որ անհատական կիրքերը կը փորձէին անգամ մը եւս հրահրել ներհամայնքային խնդիրները, յատկապէս այս կամ այն կողմին ձեռքը պահելու եկեղեցու իշխանութիւնը:

Հալէպի հնչակեան կուսակցութեան ղեկավարներէն Ժ. Տէր Գեորգեան 1967 թ. Երեւանի մէջ գտնուած օրերուն, գրոյցի ընթացքին կը պարզէ, թէ Սուրիոյ մէջ «ստեղծուած քաղաքական փոփոխութիւնը, նպաստաւոր բոլոր պայմանները

2 ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 75, թ. 8:

3 Նոյն տեղը:

4 Նոյն տեղը, թ. 8, 22: Կը պատմուի, թէ այդ օրերուն, 60-ական թուականներու, դաշնակցականներու հալածանքի պատճառով մեծ եղած է վերջիններու մեկնումը Հալէպէն դեպի Պէյրութ: Սակայն կարճ ժամանակամիջոցին անոնք Պէյրութէն կ'անցնին Ամերիկա, Աւստրալիա եւ Ֆրանսա՝ աշխուժացնելու կամ հիմը դնելու նոր համայնքներու:

ինարարող կը դարձնեն գրոհելու դաշնակցական դիրքերը»<sup>5</sup>: Նշենք, նաեւ, որ հակադաշնակցական խմբակին հիմնական խնդիրը ազգային իշխանութիւնը եւ եկեղեցական վարչութիւնը իր ձեռքին պահելն էր: Ժանի խօսքերով, «Կառավարութիւնը համաձայն էր լուծելու գաւառական ժողովը եւ անոր փոխարէն կատարուի նորի ընտրութիւն: Առաել կառավարութիւնը պատրաստակամութիւն յայտնած է աջակցելու եւ նշանակովի հաստատելու: Այս առումով թեկնածուներու ցուցակը կազմուած, ներկայացուցած են ներքին գործերու նախարարութեան եւ ստացած անոնց հաւանութիւնը»<sup>6</sup>: Ըստ Ժանի՝ Հալէպի գաւառականի եւ ազգային եկեղեցական իշխանութեան գրաւումը ամենամեծ հարուածը պիտի հանդիսանար Անթիլիասի դիրքին ու հեղինակութեան<sup>7</sup>:

Արդ, «Պաաս» կուսակցութեան ձախակողմեանները եւս չկրցան երկիրը կատարելու գծով յաջողութիւններու հասնիլ, աւելին՝ 1966-1970 թթ. անոնց կատարման ժամանակահատուածին թոյլ տուած ներքին եւ արտաքին քաղաքական, ինչպէս նաեւ սոցիալ-տնտեսական շարք մը սխալներն ու բացթողումները ծանր հետեւանքներ ունեցան Սուրիոյ, այդ թուին՝ նաեւ հայ համայնքի համար: Այս ժամանակահատուածին էր, որ տեղի ունեցաւ արաբա-իսրայէլեան վեցօրեայ պատերազմը (1967 թ.): Ատոր պատճառով Սուրիան կորսնցուց Կուլսի բարձունքները: Այս պարտութեան պատճառը կը դիտարկուէր որպէս ձախպասականներու կողմէ կուսակցութեան ծրագիրներէն ու գաղափարախօսութենէ շեղման ու սխալ եւ անհետեւողական քաղաքականութեան հետեւեանք:

Հաֆէզ ալ-Ասատը, որ պաասական յեղափոխութիւնը ղեկավարած հինգ հոգիէ բաղկացած ընդատակեայ ռազմական կոմիտէի գլխատոր առաջնորդներէն էր<sup>8</sup>, իսկ պատերազմի ժամանակ՝ պաշտպանութեան նախարարը, եւս կը գտնէր, որ ձախպասականները շեղած են կուսակցութեան հիմնական սկզբունքներէն եւ ծրագրային դրոյթներէն: Նման պայմաններու մէջ երկիրը քաղաքական ու տնտեսական ճիշտ ուղիի վրայ դնելու եւ իր հակաճգնաժամային ծրագիրը իրականացնելու համար պաշտպանութեան նախարար Հ. ալ-Ասատը 1970 թ. Նոյեմբերի 13-ին անարիւն յեղաշրջում իրականացուց: Ան իր ձեռքը կ'եղրոնացնելով իշխանութիւնը՝ յայտարարեց «ուղիչ շարժման» իրականացման մասին:

5 ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 201, թ. 39

6 Նոյն տեղը:

7 Նոյն տեղը:

8 لوسيان بيزران، حافظ الاسد، مسيرة مناضل، الطبعة الثالثة، 1994، ص 97.



### դ. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՒԹԻՒՆԸ

1915 թ. Մեծ Եղեռնի հետեանքով Արեւմտեան Հայաստանէն եւ Կիլիկիայէն աննախադէպ տեղահանումի, սպանդի, արտագաղթի հետեանքով հայերը դարձեալ սփռուեցան աշխարհով մէկ՝ զրկուելով իրենց պատմական Հայրենիքէն:

ԺՁ. դարու վերջը եւ Ի. դարու սկիզբը կեանքի կոչուած հայ ազգային կուսակցութիւնները (ՀՅԴ, ՀՌԱԿ, ՍԴՀԿ) Հայաստանի մէջ խորհրդային վարչակարգի հաստատումէն ետք պարտաւորուած հեռացան հայրենիքէն եւ սկսան գործել յատկապէս Մերձատր Արեւելքի, Արեւմտեան Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ, ուր կայք հաստատուած էին ցեղասպանութենէն վերապրած հայերու առաւել հոծ զանգուածներ:

Ինչպէս պատմական հայրենիքի, այնպէս ալ արտասահմանի մէջ անզնահատելի դերակատարութիւն ունեցան Սփիւռքի հայապահպանութեան, հայկական համայնքներու կեանքի ձեւաւորման եւ կազմակերպչական աշխատանքներու գոյերթին:

Այս առումով, խիստ կարեւոր կը համարենք համառօտակի անդրադառնալ հայ ազգային կուսակցութիւններու գործունեութեան եւ անոնց որդեգրած քաղաքական ուղիին Սուրիոյ հայ համայնքի ձեւաւորման, տեղական եւ համահայկական հարցերու շուրջ՝ ներկայացնելով միմեանց հետ ունեցած յարաբերութիւններու դրական եւ բացասական կեցուածքները եւ անոնց հետեանքները արաբական շրջանակներու մէջ եւ համայնքի կեանքի առաւել կայունացման ու բարգաւաճման վերաբերեալ:

Եւ կուսակցականներու, եւ համակիրներու թուական պատկերին համաձայն առաջինը կը հանդիսանար Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: Ուսումնասիրութիւնները ցոյց կու տան, որ կուսակցութիւնը Հալէպի մէջ ունեցած է իր կեդրոնական, տեղական կոմիտէները եւ ենթակոմիտէ Դամասկոսի մէջ:

Քննարկուած ժամանակահատուածին (1946-1970 թթ.) Սուրիոյ Արաբական Հանրապետութեան (յետայսու՝ ՍԱՀ) տարածքին գործելով՝ ան կեդրոնի՝ բիւրոյի, կողմէ ստացած էր «Լեռնավայր»<sup>1</sup> անուանումը: Կեդրոնական կոմիտէն

1 ՀՌԱԿ, ապա ՌԱԿ, այս մասին անելի մանրամասն տես **Դալլաքյան Կ. Լ.**, Ռամկավար ազատական կուսակցութեան պատմություն, Երևան, 1999, էջ 5-13:

2 ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 6, թ. 11: Եզրըձեան կը նշէ, որ դաշնակցական գրականութեան մէջ «Լեռնավայր» տեղանունական կեղծանունը սկիզբը կը գործածուէր Կիլիկիոյ համար, յետագային՝ Սուրիոյ համար. տես **Եազըձեան Գ.**, նշ., աշխ., էջ 191: Մեր ուսումնասիրութիւններու ընթացքին Պոսթընի «Հայրենիք» ամսագիրին (ԽԳ. տարի, թիւ 6), 1965 թ. Յունիսի համարի էջ 72-ի տողատակին կը կարդանք «Լեռնավայր-Հալէպի շրջան»: Կուսակցութեան Կեդրոնական կոմիտէի ղեկավար մարմինը, գտնուելով Հալէպ, կարելի է ենթադրել, որ «Լեռնավայր»-ը սկիզբը գոր-

ղեկավար մարմինն էր եւ կը գտնուէր Հալէպի մէջ: Կեդրոնական կոմիտէի ենթակայութեան տակ կը գտնուէին ՍԱՀ-ի բոլոր դաշնակցական կազմակերպութիւնները: ՍԱՀ-ի դաշնակցութեան կորիզը կը համարուէին խումբերը, որոնք կը միաւորուէին ենթակոմիտէի մէջ: Հալէպի մէջ գոյութիւն ունէր երկու ենթակոմիտէ: Ենթակոմիտէի «Նայիրի» գաղտնագրուած անուան տակ մաս կը կազմէին այն դաշնակցականները, որոնք կ'ապրէին Հալէպ քաղաքի կեդրոնը, իսկ «Զաւարեան» ենթակոմիտէի մէջ՝ Նոր Գիւղի շրջանի դաշնակցականները<sup>3</sup>: Դժբախտաբար, արխիւները մեզի չտրամադրելու պատճառով, յստակ չէ, թէ ինչ հիմքերով պայմանաւորուած էր ենթակոմիտէներու անուանական կոչումն ու կուսակցական յատուկ խիստ կարգապահութիւնն ու զաղտնապահութիւնը: Միայն կարելի է ըսել, որ Սուրիոյ մէջ տարբեր վարչակարգերու իշխանութեան գլուխ գալով, երբ արգիլուեցաւ երկիրէն ներս գործող տեղական կուսակցութիւններու գործունեութիւնը, այդ սահմանափակման հրահանգը նաեւ տարածուեցաւ հայկականներուն: Անոնք որոշ ժամանակ դադրելէ ետք սկսան գործել երիտասարդական եւ կամ մշակութային ու մարզական միութիւններու անունով:

ՀՅԴ-ի համարատու էր Հայ Երիտասարդական Միութիւնը (ՀԵՄ): Միութեան անդամները, որոնք կ'ապրէին քաղաքի շրջանը, կը միաւորուէին «Քրիստափոր» ենթակոմիտէի կազմին մէջ, իսկ Նոր Գիւղի ենթակոմիտէն՝ «Վարանդեան»: Անոնք կը կատարէին կուսակցութեան համապատասխան աշխատանք:

Սուրիոյ կեդրոնական կոմիտէն հաշուետու էր դաշնակցութեան «Արտասահմանեան բիւրոյին», որ տեղակայուած էր Պէյրութի մէջ: Կոմիտէի աշխատանքները կը ղեկավարուէին Լիբանանի «Արտասահմանեան բիւրոյ»-էն՝ անկէ ստանալով իր ցուցմունքները (1960 թ.-էն ետք): Կուսակցութիւնը անդամներ կ'ընտրէր իր միութենական շարքերէն: Սուրիոյ մարմինը մինչեւ 1961 թ. ունեցած է իր պաշտօնաթերթը՝ «Արեւելք» օրաթերթը, որուն հրատակարարութիւնը կ'արգիլուի սուրիական իշխանութեան կողմէ: Անդամները միջոցներ կը ձեռնարկեն թոյլտուութիւն ստանալու թերթի վերահրատարակման վերաբերեալ: Սակայն ապարդիւն, 1963 թ. հրապարակուած Նոր օրէնքով վերջնականապէս կը խափանուի «Արեւելք»-ի հրատարակութիւնը՝ Սուրիոյ մէջ լոյս տեսնող այլ թերթերու կողքին: Այդ թուականէն ետք «Արեւելք»-ին կը փոխարինէ Լիբանանի մէջ տպագրուող «Ազդակ» օրաթերթը<sup>4</sup>, որ պարբերաբար խոչընդոտներու հանդիպելով Սուրիոյ կառավարութեան կողմէ՝ կ'արտօնուէր թերթի մուտքը Սուրիա

ծածուած է Կիլիկիոյ, ապա՝ Հալէպ շրջանին համար: Դժբախտաբար համայնքի տուեալ կուսակցութեան արխիւի բացակայութեան պատճառով չենք կրնար հաստատել, թէ արդեօք յետագային Սուրիոյ շրջանին կ'ակնարկէր:

3 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 277, թ. 4:

4 ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 6, թ. 12: Տես նաեւ ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 342, թ. 4:



որոշ գրաքննության ենթարկուել է տը:

Բացի ՀԵՄ-էն, Սուրիոյ տարածքին կուսակցութիւնը կը հովանաւորէր եւ կ'օժանդակէր շՄԸՄ-ը, Սուրիահայ Օգնութեան Խաչը եւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային միութիւն հասարակական կազմակերպութիւններուն եւ սատար կը հանդիսանար անոնց ծրագիրներու իրականացման: Վերոյիշեալ կազմակերպութիւններու աշխատանքներուն կ'անդամակցէին դաշնակցականներու եւ անոնց համակիրներու կիներն ու դուստրերը:

«Հալէպի ոսանողներու միութիւն»-ը պաշտօնապէս չէր գրանցուած կառավարութեան կողմէ. անոր նպատակն էր, ինչպէս Նոյնն էր պարագան միա կուսակցութիւններուն, մատաղ սերունդը գաղափարապէս թրծել:

Սուրիոյ հայ ազգային կուսակցութիւններու երկրորդը իր անդամներով կը հանդիսանար Սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութիւնը, որ իր մէջ կը միաւորէր, ինչպէս ՅՅԴ-ն, մանր «պուրժուազիա»-ի՝ մտաւորականներու եւ արհեստաւորներու ներկայացուցիչները: Կուսակցութիւնը ուներ յստակ քաղաքական գիծ: Ան հայ ժողովուրդի գոյատեւման եւ հայրենիքի բնականոն զարգացման յոյսը կը կապէր Հայաստանի Հանրապետութեան խորհրդայնացման, Խորհրդային Միութեան հետ սերտ համագործակցելու հետ: Այս տեսակէտը խիստ ձեռով դրսեւորուեցաւ 1946-1948 թթ. իրականացած հայրենադարձութեան ժամանակ եւ, եւ կուսակցութիւնը դարձաւ Խորհրդային Հայաստանի դաշնակիցը եւ նեցուկը Սփիւռքի մէջ:

Այս էր պատճառը, որ համայնքի ձեւաւորման առաջին օրէն ներկուսակցական պայքար ծնունդ առած էր Սուրիոյ հայ համայնքէն ներս:

Պէտք է խոստովանիլ, որ գաղափարական սկզբունքներու շուրջ կուսակցութիւններու միջեւ պայքարը ի սկզբանէ (հիմնադրութեան ատենէն) գոյութիւն ուներ: 1923-1924 թթ. Խորհրդային Հայաստանի կողմէ կատարուած յայտարարութիւնը այն մասին, որ «պատրաստ է ապրելու միջոցներ ունեցող գաղթական հայերին ընդունել և տեղավորել հայրենիքում»<sup>5</sup>, բեւեռացուց համայնքային կեանքն ու անոր կազմակերպչական աշխատանքները՝ յառաջացնելով երկու հակադիր ճակատներ, որոնք իրենց բացասական դերակատարութեամբ պիտի չնպաստէին առողջ մտածելակերպով գործող սերունդներու պատրաստութեան:

Յայտարարութիւնը անարձագանգ չմնաց ՌԱԿ եւ ՍԴԿ կուսակցութեանը կողմէ, որոնք իրենց գործելաձեւով, յորդորներով հայ հասարակութեան մէկ հատուածի հայեացքը կրցան ուղղել դէպի Խորհրդային Հայաստան: Իշխան

5 **Սաղաթելյան Ի.**, 1946-1948 թթ. Հայրենադարձութիւնը և հայ շեղափոխական Դաշնակցութիւնը 1946-1948 թթ. «Հայրենադարձութիւնը և դրա դասերը. հայրենադարձութեան հիմնախնդիրները այսօր» համահայկական գիտաժողով գեկուցումների ժողովածու, Երևան, 2008, էջ 86:

Սաղաթելեան իր «Հայրենադարձութիւնը և Հայ շեղափոխական Դաշնակցութիւնը 1946-1948 թթ.» յօդուածին մէջ անդրադառնալով Հայրենադարձութեան եւ կուսակցութիւններու դիրքորոշման մասին՝ կը գրէ, թէ դաշնակցութիւնը ի սկզբանէ (խօսքը 1920-ական թուականներու մասին է) կը քննադատէր ներգաղթի ծրագիրը, որովհետեւ այդ յայտարարութիւնը կը համարէր ոչ թէ ազգահաւաքման ծրագրի իրականացում մայր հողի վրայ, այլ կը մտահոգէր զայն, որպէս միջոց «դրամական վարկեր և օգնություն կորզել դրսից՝ այն քուղարկելով ներգաղթի և գաղթականների հոգսերի լուծման կեղծ կարգախոսներով»:<sup>6</sup>

Ներհայկական լարուածութիւնը, առճակատումը, առաւել խորացաւ եւ Նոյնիսկ արտայայտուեցաւ խորհրդարանական ընտրութիւններու ժամանակ մինչեւ թափանցեց կրթական հաստատութիւններէն ներս, ուր իւրաքանչիւր ազգային հոսանք իր քարոզչութեան միջոցով փորձեց համակիրներ ապահովել Նոր սերունդէն:

Այնպէս որ քսանական թուականներուն սկսած բեւեռացումը առաւել պիտի խորանար Բ. Աշխարհամարտի օրերուն, յատկապէս 1945 թ., երբ անգամ մը եւս օրակարգի հարց պիտի դառնար հայերու զանգուածային ներգաղթը դէպի Հայրենիք:

ԻՍՆՄ ժողովմարտի 1945 թ. Նոյեմբերի 21-ին սփիւռքահայերու ներգաղթ կազմակերպելու մասին որոշում կը կայացնէ: Սկզբնական շրջանին այդ որոշումը կ'ողջունեն սփիւռքահայ բոլոր կուսակցութիւնները, այդ թուին Նաեւ՝ դաշնակցութիւնը, որովհետեւ զանգուածային ներգաղթի կազմակերպման ծրագիրը սերտօրէն կ'առնչուէր Թուրքիայէն հայկական տարածքներու ազատագրման իրական թուացող հեռանկարին, այդ հարցը միջազգայնօրէն արդէն ներկայացուած էր 1945 թ. Ապրիլին 25-էն Յուլիսի 26 Սան Ֆրանսիսկոյի մէջ գումարուած Միաւորած ազգերու կազմակերպութեան առաջին համաժողովի ուշադրութեան, որով կը պահանջուէր հայկական հողերու միացումը Հայաստանին եւ հայերու՝ Հայրենիք վերադարձը<sup>7</sup>:

Դաշնակցութիւնը ողջունեց ազգահաւաքման եւ բռնագրաւուած հողերու վերադարձի որոշումները: Ան դէմ չկանգնեցաւ հայրենադարձութեան գաղափարին, աւելին՝ ան ցանկաց գլխաւորել այդ շարժումը. «Սփիւռքահայերի զանգվածային հայրենադարձութեան մասին խորհրդային կառավարության

6 Նոյն տեղը, էջ 87:

7 **Մելքոնյան Ք.**, Սփիւռքահայութիւնը և հայկական հարցի լուծման խնդիրը (1945-1947), «Պատմաբանասիրական հանդես», N 2, Երևան, 2010, էջ 44: Տե՛ս նաեւ **Վիրաբեյան Ա.**, 1946-1948 թթ. Մեծ Հայրենադարձութիւնը. Հիմնահարցեր և խնդիրներ. «Հայրենադարձութիւնը և դրա դասերը. Հայրենադարձութեան հիմնախնդիրները այսօր» համահայկական գիտաժողով գեկուցումների ժողովածու, Երևան, 2008, էջ 12:

8 **Մելքոնյան Ք.**, նշ. աշխ., էջ 44: Տե՛ս **Վիրաբեյան Ա.**, նշ. աշխ., էջ 12:



որոշումը խանդավառությամբ ընդունեց համայն հայությունը: Հայրենադարձության մասին որոշումը դրականորեն ընդունեցին գաղութահայության քաղաքական բոլոր ուժերը՝ կոմունիստները (համայնավարները - Ա.Ֆ.), հնչակյանները, ռամկավարները եւ նույնիսկ դաշնակցականները<sup>9</sup>. այս մասին կը վկայեն «նույնիսկ արտասահման գործողված Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչները», կը գրէ Ամատունի Վիրաբեան իր յօդուածին մէջ<sup>10</sup>:

Ինչպէս միա կուսակցութիւնները, այնպէս ալ դաշնակցութիւնը, դէպի Հայաստան ներգաղթի առաջի օրերուն հրահանգած էր իր շարքերուն եւ համակիրներուն «արձանագրուիլ առանց որեւէ վերապահութեան եւ ակնկալութեան»<sup>11</sup>: Խ. Թիֆլինձեանի վկայութեամբ՝ «Հալէպի մէջ, Սուրիոյ Կ. կոմիտէն, որ փաստօրէն կը ղեկավարուէր Գապագեան-Օռնուկեան-Թիսփիզեան խմբակին կողմէ, առաջին օրինակը տուաւ արձանագրուելով ներգաղթի եւ հրահանգելով ընկերներուն որ Նոյնը ընեն»<sup>12</sup>:

Սակայն հողերու վերադարձի հարցը մերժուեցաւ: Իրավիճակը կտրուկ փոփոխութեան ենթարկուեցաւ, որուն յաջորդեց ԽՍՀՄ-ի կառավարութեան հրահանգով Սփիւռքի համայնքներու մէջ կազմակերպուած ներգաղթին աջակցող կոմիտէներուն մէջ ընդգրկել տեղի բոլոր կազմակերպութիւններու ներկայացուցիչները՝ բացի դաշնակցականներէն<sup>13</sup>:

Ազգահաւաքման պատմական այդ մեծ իրադարձութեան օրերուն, որ կը նպատակադրէր հայերու միատեղ համախմբումը, կոմիտէի ցանկերէն դուրս կը մնան դաշնակցականներն ու համակիրները<sup>14</sup>:

Այնուամենայնիւ, հակառակ իրենց հակախորհրդային տրամադրութեանց, օրուան դաշնակցական ղեկավարները չէին կրնար իրենց քարոզչութեամբ արգելք հանդիսանալ հայերու մեկնումին դէպի Խորհրդային Հայաստան:

Սակայն այդ օրերուն այն ինչ կատարուեցաւ համայնքէն ներս այլ խմբակներու կողմէ, պարզապէս սահմանուած էր ներգաղթը շահադիտական նպատակներու ծառայեցնելու: Այս առումով հետաքրքիր է Կ. Դալլաքեանի խօսքը. «Ալեքսանդր Միասնիկյանի և Աշոտ հովհաննիսյանի կողմից Սփիւռքի մասին աշխատություններ գրվեցին: Այդ երկու աշխատությունները երկար տարիներ մեր հասարակության գիտակցության խարխիսներն էին»<sup>15</sup>: «Այդ աշխատությունների մէջ շատ անընդունելի էջեր կան, ահավոր անընդունելի էջեր: Այդ-

9 Վիրաբեան Ա., Նոյն տեղը:

10 Նոյն տեղը:

11 Թեմիտեան Ա., Նշ., աշխ., էջ 163:

12 Նոյն տեղը:

13 Սաղաթելյան Ի., Նշ., աշխ., էջ 88-89: Տե՛ս նաեւ Վիրաբեան Ա., Նոյն տեղը:

14 Այս մասին անելի մանրամասն կրնաք տեսնել սոյն աշխատութեան երրորդ գլխուն՝ սուրիահայերը ու հայրենադարձութիւնը, 1946-1970 թթ. բաժինին մէջ:

15 «Իրավունք» պաշտօնաթերթ, թիւ (37) 622, Մայիս 17-23, 2002, Երևան:

տեղ սարսափելի պատնէշներ էին դրվում Սփիւռքի գանազան ուժերի միջև՝ ում հետ կարող է համագործակցել, ում հետ՝ ոչ: Այդտեղ խոսքը վերաբերում է ոչ միայն դաշնակցությանը<sup>16</sup>: Իրօք որ, «Եփրատ» թերթի 1946 թ. հրաժարականներու անունացանկերուն մէջ դաշնակցականներու կողքին տեղադրուած էին ՍԴՀԿ-ի շարքերէն հրաժարող անձնանուններ:

Պատմական փաստերը կ'ապացուցեն, որ ոչ միայն դաշնակցութիւնը, այլեւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը կը յայտնուի այս ծրագիրէն դուրս: Դաշնակցութիւնը, անելի ուշ, փոխելով իր դիրքորոշումը պիտի սկսէր արթնութեան կոչ ուղղել եւ հակաքարոզչական աշխատանքով դէմ գալ հայրենադարձութեան ծրագիրին, «...մանավանդ որ ձեռքի տակ լուրջ կողմաներ ունէր (պատերազմից ժառանգած աղքատ ու քայքայված տնտեսություն, ստալինյան ճնշումների, խոսքի և գործի հակասության բազմաթիվ փաստեր և այլն)»<sup>17</sup>:

Անդրադառնալով Նչալկեան կուսակցութեան գործունէութեան՝ ան Սուրիոյ տարածքին ունէր երկու ղեկավար կառոյց՝ հիսիսային Սուրիոյ կոմիտէն Հալէպի մէջ եւ հարաւային Սուրիոյ կոմիտէն՝ Դամասկոս: Նշուած զոյգ կոմիտէները ենթակալ էին Պէլրոյթ գտնուող Մերձատր Արեւելքի հնչակեան կուսակցութեան կեդրոնական վարչութեան<sup>18</sup>:

Բացի Հալէպէն եւ Դամասկոսէն, հնչակեան ղեկավարներ եւ կուսակցական կազմակերպութիւններ կը գտնուէին նաեւ Լաթաքիոյ, Հոմսի, Գամիշլիի եւ Տերպէսիէի մէջ: Կուսակցութիւնը չունէր իր պաշտօնաթերթը. ամէն օր Հալէպ կը հասներ «Արարատ» թերթը, որ Լիբանանի հնչակեաններու պաշտօնաթերթն էր:

ՍԴՀԿ-ը Հալէպի մէջ կ'իրագործէր կազմակերպչական, մշակութային, դաստիարակչական աշխատանք՝ ջատագովը հանդիսանալով Խորհրդային Հայաստանի յաջողութիւններուն եւ սերտ կապեր հաստատելու նախաձեռնութեամբ: Անոնք կը փորձէին իրենց հեղինակութիւնը ամրապնդել տեղի հայ համայնքէն ներս: Իրենց գործունէութեամբ կ'ուզէին համայնքի հիմնական շարժիչ ուժը դառնալ ի դէմ դաշնակցութեան, սակայն չունենալով բաւականաչափ միջոցներ եւ ներկայացուցիչներ՝ գործը յաջող ընթացք չէր ունենար: Կուսակցութիւնը չունէր տեւական «գիտելիքներով պատրաստված ղեկավար աշխատողներ»<sup>19</sup>: Գործունէայ աշխատողները իրականութեան մէջ կը հանդիսանային արհեստաւորներ, մանր վաճառականներ, քանի մը ուսուցիչներ եւ բժիշկներ: Նաեւ չունէին նիւթական եւ հովանաւորութեան հիմքեր<sup>20</sup>:

Նչալկեաններու հովանաւորութեամբ կը գործէին հետեւեալ մշակութային

16 Նոյն տեղը:

17 Սաղաթելյան Ի., Նշ., աշխ., էջ 89:

18 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 342, թ. 4-5:

19 Նոյն տեղը, թ. 6:

20 Նոյն տեղը:



Եւ հայրենակցական, մարզական միութիւնները՝ «Նոր սերունդ մշակութային միութիւն» (ՆՍՄ) եւ «Հայկական մարզական միութիւն» (ՀՄՄ): Անոնց խնամակալութեամբ Հալէպի մէջ կը գործէր 3 դպրոց՝ Կիլիկեան (քաղաքի եւ Նոր Գիւղի), Նաեւ «Վարդանանեան»-ը: Կուսակցութիւնը նիւթական ոչ բարենպաստ պայմաններու մէջ գտնուած էր, Նոյնիսկ դպրոցներու նիւթական աջակցութեան մէջ՝ թերացած: Կազմակերպութեան ղեկավարները կ'իմացնէն այդ մասին Պէյրութի հնչակեաններու կեդրոնին. հակառակ բազմաթիւ խոստումներուն եւ ունենալով զգալի միջոցներ, կը խուսափին Նշանակալից օգնութիւն ցուցաբերելէ<sup>21</sup>:

Ռամկավար ազատական կուսակցութիւնը, որ հիմնուած էր հայ հարուստ վերնախնայի ու անկէ ծնունդ առած մտաւորականութենէն, կազմուած էր 1921 թ. եւ իր շրջանակը ունեցած է նաեւ Սուրիոյ տարածքին: Սկզբնական շրջանին գտնուելով նիւթական լուրջ դժուարութեան առաջ՝ որոշ առաջընթաց քայլեր չեն կատարուած: 1929 թ. կ'աշխուժանայ Սուրիոյ Շրջանակը Սեդրակ Կեպէլեանի, «Եփրատ» թերթի խմբագրի, գալուստէն ետք: Բացի Հալէպէն, Պէյրութէն, Դամասկոսէն, ակումբներ կը գտնուէին նաեւ Ալեքսանտրէթի եւ Գըրգ Խանի մէջ: Հակառակ նիւթական դժուարութեանց՝ կուսակցութիւնը կը յաջողի համակիր անկուսակցականներու աջակցութեամբ Հալէպի մէջ հրատարակել «Եփրատ» եռօրեայ թերթը: «Կը հաւատանք, թէ ապագային «Եփրատ»-ը պիտի կրնայ (պիտի կարենայ - Ա.Ֆ.) կուսակցութեանս սեփականութիւնը դառնալ: Այժմ ալ արդէն թերթին ծանրութիւնը մեր ընկերները կը կրեն»<sup>22</sup>:

ՌԱԿ-ի համար միշտ առաջնակարգ հարց եղած է Հայ Եկեղեցւոյ միասնութեան պահպանումը, որպէս ազգի գոյապահպանութեան խարխիսներէն մէկը: Յատկանշական է, որ սկզբնական շրջանին ռամկավարները զբաղեցուցած են չէզոք դիրք չէմփածինի եւ Անթիլիասի բարեկամանալու գործընթացի մէջ<sup>23</sup>: Սակայն ամէլի ուշ սուր պայթար կը ծաւալին Եկեղեցւոյ շուրջ:

Ռամկավարներու սկզբունքն էր. - կ'ըսէ Լ. Խուրշուդեան- «Ժողովրդային կամքի գերիշխանության և ռամկավար ազատական սկզբունքների կիրարկումը հայ պետական և հանրային կյանքի մէջ»<sup>24</sup>: Հետաքրքիր էր Խուրշուդեանի աշխատութեան մէջ տեղ գտած, ռամկավարներու քաղաքականութեան էութեան մասին հետեւեալը՝ «Այս քաղաքականութեան էութիւնը պետք է ճիշդ հասկանալ. ռամկավարները չեն փոխում իրենց գաղափարախոսությունը և անշուշտ, Սովետական Հայաստանի փոխարեն մեծ որպիսութեամբ կցանկա-

21 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 441, թ. 6:

22 Նոյն տեղը:

23 ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 6, թ. 4: Տե՛ս նաեւ **Դալլաքեան Կ. Լ.**, Նշ. աշխ., էջ 166:

24 **Խուրշուդեան Լ. Ա.**, Նշ., աշխ., էջ 344:

նային տեսնել ռամկավարական Հայաստանը»<sup>25</sup>:

Այս ինքնին բաւարար է հաստատել, որ ոչ միայն դաշնակցութիւնը, այլ՝ Սփիւռքի իւրաքանչիւր ազգային կազմակերպութիւն, ըստ կարգին, իր գաղափարախոսութեամբ «ծաղկած» կը ցանկար տեսնել Հայաստանը, ինչպէս այսօր: Ահաասիկ այստեղէն կը բխէր անոնց տարակարծութիւնները «ռամկավարների և հնչակյանների միջև պայթարը շարունակվում է, սակայն չնայած դրան, նրանք գտնում են, որ կան ազգային խնդիրներ, որոնց նկատմամբ մյուս բոլոր հարցերը մղվում են հետին պլան»<sup>26</sup>:

Սուրիոյ ՌԱԿ-ը անմիջականօրէն կը ղեկավարուէր Պէյրութի կեդրոնական մարմինէն: Հակառակ իր անդամներու յարաբերական փոքրաթիւ ըլլալուն, Հալէպի ռամկավարները Նշանակալի դեր կը խաղային համայնքի կեանքին մէջ: Սուրիոյ տեղական իշխանութեան հետ լաւ եղած են յարաբերութիւնները:

1960-ական թուականներու երկրորդ կիսուն զգալիօրէն հակասութիւններ առաջացան ռամկավարներու եւ դաշնակցականներու միջեւ:

Ռամկավարներու ազդեցութեան տակ կը գտնուէր «Հայկական բարեգործական ընդհանուր միութեան» (ՀԲԸՄ) Սուրիոյ մասնաճիւղը, որ կը միաւորէր թէ՛ քաղաքական եւ թէ՛ շրջանային 12 բաժամունք (Հալէպ, Դամասկոս, Հոմս, Լաթաքիա, Գամիշլի եւ այլն): Բարեգործականի ղեկավարութեամբ Հալէպի մէջ կը գործէ «Հայ երիտասարդներու միութիւնը (ՀԵԸ)»: «Թէքէեան մշակութային միութիւն»-ը (ԹՄՄ) եւս կը գտնուի ռամկավարներու հովանիին ներքոյ:

Քաղաքական կազմակերպութիւններու կարգին զգալիօրէն ուժեղ կը հանդիսանար Ազգային Ճակատը, որուն մաս կը կազմէին բոլոր հայկական ազգային եւ հասարակական կազմակերպութիւնները, բացի դաշնակցականներէն:

1966 թ. Յունիսին կը ստեղծուի «ՍԱՀ-ի հայ առաջընթացական ճակատը», որու ղեկավար կազմին մէջ կը մտնէն 5 ներկայացուցիչներ (2 ռամկավար, 2 հնչակեան եւ 1 Վասպուրական ակումբի ներկայացուցիչ) եւ Դամասկոսէն՝ երկու<sup>27</sup>: «Ազգային ճակատ»-ը իր մէջ կը միաւորէ ռամկավարներն ու հովանաւորութիւնը վայելող «Թէքէեան մշակութային միութիւն», «ՀԵԸ», հնչակեանները եւ «Նոր սերունդ մշակութային միութիւն», «ՀՄՄ», «Վասպուրական»-ը, «Ուրֆային վերածնունդ հայրենասիրական միութիւն»-ը, ինչպէս նաեւ «Ազգային մշակութային միութիւն»-ը:

Այնուամենայնիւ, իւրաքանչիւր իր վարած ազգային-գաղափարական ուղեգիծով փորձեց մեծ մասամբ համայնքը փրկել ուժացման վտանգէն:

25 Նոյն տեղը, էջ 341:

26 Նոյն տեղը, 386:

27 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 441, թ. 11-12:



## Ե. ՆԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ԵՒ ԱՐՆՏԵՍԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

Օսմանեան կայսրութեան իշխանութեան օրերուն եւ յատկապէս Ա. Աշխարհամարտի յաջորդող տարիներուն Սուրիոյ տնտեսութիւնը ճգնաժամային վիճակի մէջ էր:

Տանջահար հայ տարագիրները Սուրիա եւ ի մասնաւորի Հալէպ քաղաք հաստատուելով՝ պէտք էր սկսէին Նոր կեանք, պետական իշխանութեան ի սպառ բացակայութեան պայմաններուն. առաւել՝ համայնքի ձեւաւորման առաջին օրերուն անոնք ի վիճակի չէին նպաստել երկրի տնտեսութեան զարգացման:

Ֆրանսական իշխանութիւններն ալ մանդատի առաջին տարիներուն Սուրիոյ ազգային արդիւնաբերութեան համար նպաստատու պայմաններ չստեղծեցին: Իշխանութիւնը չէր խրախուսեր յետագայ զարգացման, եւ վարած մաքսային քաղաքականութեամբ կործանարար ազդեցութիւն կ'ունենար տեղական արդիւնաբերութեան եւ արհեստագործութեան համար: Անոնք Սուրիան կը դիտէին իբրեւ հումքի ամենահարուստ երկիրը եւ որպէս այդպիսին երկրի տնտեսութիւնը զարգացնելու քայլեր կատարելու փոխարէն, կը փորձէին Սուրիան վերածել եւ ֆրանսական արդիւնաբերա-արտադրութեան սպառման կարելոր շուկայի, եւ միաժամանակ ֆրանսական արդիւնաբերութեան հումքի գլխաւոր յենակետի, ուր ազատ կրնային գործել ֆրանսական բոլոր ընկերութիւնները:

Օրինակ, Սուրիան որ նշանաւոր եղած էր տնայնագործութեան եւ արհեստագործութեան արտադրութեամբ, մանդատի տարիներուն զրկուեցաւ ապրանքը արտաքին շուկայ արտահանելէ, որովհետեւ Սուրիոյ շուկաները ողողուած էին ֆրանսական ապրանքներով: Այս մնաս հասցուց Սուրիոյ նման երկրի տնտեսութեան եւ պատճառ դարձաւ հազարաւոր մարդոց անգործութեան: Անել կացութեան մատնուեցաւ եւ գիւղացին, եւ բանուորը: Առաւել ծանր էր բանուորներուն կացութիւնը, որովհետեւ զիրենք պաշտպանող ոչ մէկ օրէնք սահմանուած էր, եւ ծանր աշխատանքը կը գնահատուէր նուազ աշխատավարձով:

Արդ, հասարակա-տնտեսական անբարենպաստ պայմանները տեղաշարժի պատճառ կրնային հանդիսանալ եւ աւելի ուշ՝ արտագաղթի:

Այս բոլորը բարեյաջող ընթացք ունենալու առումով ֆրանսան կ'ընդարձակէր ցանքատարածութիւնները եւ զարկ կու տար հացահատիկի՝ ցորենի ու գարիի մշակումին:

Թէեւ Սուրիան գլխաւորապէս գիւղատնտեսական երկիր էր, սակայն այնտեղ

գոյութիւն ունեցող հողային յարաբերութիւնները, ոռոգման ձեւերու անբաւարար զարգացած ըլլալը եւ պարարտանիւթերու անբաւարար կիրառումը լուրջ արգելքներ կը յարուցէին ո՛չ միայն գիւղատնտեսութեան, այլեւ անասնապահութեան զարգացման: Աւելին, ֆրանսական իշխանութիւնները իրենց որդեգրած Նոր քաղաքականութեան մէջ պահպանեցին ասատատիրական ցեղային համակարգը, այսինքն՝ անտեսեցին փոքր հողատէրերը, փոխարէնը խրախուսեցին խոշոր հողատիրութեան եղանակը: Ֆրանսացիներուն կողմէ կատարուած «հողային բարենորոգում»-ը յանգեցաւ գիւղացիութեան մեծ մասի հողազրկումին եւ միա հողամասերու բռնագրաւումին<sup>2</sup>:

Այսպիսով, Սուրիոյ գիւղացիութեան երկու երրորդը դարձաւ հողազուրկ: Ուստի վարձակալման ձեւերը տարածուած գտած էին: Գիւղացիութիւնը կը շահագործուէր թէ՛ կալուածատէրերու եւ թէ՛ վաշխառուներու կողմէ:

1929-1933 թթ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը առաւել մեծ հարուած կը հասցնէ Սուրիոյ ժողովրդական տնտեսութեան: Առաջին հերթին՝ գիւղատնտեսութեան անասնապահութեան ճիւղին:

Նակառակ տիրող իրավիճակին, պէտք է ըսել, որ հայ աշխատողներէն շատեր իրենց թուրքերէնի եւ արաբերէնի իմացութեան շնորհիւ ներգրաւուած էին ֆրանսական իշխանութեան կողմէ հրաք-Սուրիա սահմանի վերջին կայարանի երկաթուղագիծի երկարաձգման աշխատանքին<sup>3</sup>: Սուրիոյ անկախացումէն ետք, այդ երկաթուղագիծի տնօրինումը եւս պիտի անցնէր Սուրիոյ նորանկախ պետութեան հսկողութեան:

Յետագայ տարիներուն (1947-1974 թթ.) սուրիական կառավարութեան կողմէ իրականացուող բոլոր ճանապարհներու կառուցումով եւ կամ երկարաձգումով պիտի դիւրանար ճամբորդական եւ ապրանքափոխադրութեան բոլոր միջոցները, եւ ժողովուրդը պիտի փրկուէր անապահով ճանապարհներ երթելէկէլէ: Դէպի Սուրիա զաղթող հայերու մէկ մասը ունենալով մասնագիտական որակաւորում համաձայն էին կատարելու որեւէ աշխատանք, թէկուզ ցած վարկատրութեամբ՝ ապահովելու իրենց օրապահիկը: Անոնք կ'աշխատէին, որպէս որակեալ բանուորներ ու արհեստագործներ, երբեմն նաեւ՝ մանր առետրականներ. «Մերձավոր Արևելքում "հայ" հասկացությունը վաղուց ձուլվել է «արհեստագործ» հասկացության հետ, այնպես, ինչպես իրեան վաշխառուի և

1 **Սարգսյան Ն. Ս.**, Սիրիայի սոցիալ-տնտեսական դրությունը ֆրանսիական մանդատային ռեժիմի տարիներին (1920-1936 թթ.), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. III, Երևան, 1967, էջ 90-93:

2 **Նովիաննիսյան Ն. Ն.**, Արաբական երկիրների պատմություն, IV, էջ 438-439:

3 «Գեղարդ», Գ. գիրք, Հալէպ, 1985, էջ 387:

4 Նոյն տեղը, էջ 395-401:



չերքեզը ոստիկանի հետ»<sup>5</sup>:

Հայերը Սուրիա (Հալեպ, Դամասկոս, Հոմս եւ Համա) հաստատուելով՝ կը հիմնեն շարք մը հիմնարկություններ, որոնք կը զբաղէին մեծ գորգերու, մետաքսի հիսուածեղէնի արտադրութեան, մորթեղէնի վերամշակումով եւ այլն: Հայերուն կը պատկանէր «ալաջա»<sup>6</sup> գործուածքի արտադրութիւնը: Միայն Հալեպի մէջ այդ գործով կը զբաղէին չորս հազար մարդ: Գորգագործութեամբ կը զբաղէին միայն հայերը: Սեբաստիայէն, Կեսարիայէն, Արաբկիրէն, Խարբերդէն եւ հայկական այլ բնակավայրերէն Հալեպ հաստատուող հայ վարպետներու անմիջական ազդեցութեան տակ վերելք կ'ապրէր գորգագործութիւնը՝ ծնունդ տալով արհեստանոցներուն<sup>7</sup>:

Հայերու մէկ մասը, որ երկրագործութեամբ կը զբաղէր, կեդրոնացած էր գիւղական շրջաններուն, յատկապէս Ճէզիրէ, Դամասկոս ու Հալեպ քաղաքներուն մերձակայքը եւ արուարձաններուն մէջ: Հայերու հիմնական զբաղմունքը քաղաքներու մէջ առեւտուրն ու արհեստներն էին: Քաղաքի մանր առեւտրականներն ու արհեստաւորները, որոնք կը կազմէին 30 առ հարիւր տոկոսը, ունէին բաւարար կենսամակարդակ: Սակայն քաղաքներու բնակչութեան մեծ մասը գործազուրկ էր եւ կ'ապրէր թշուառութեան մէջ: Աւելի լաւ պայմաններ չէին ստեղծուած գիւղացիներուն, որոնց գերակշիռ մասը հող չունէր եւ վարձակալ կը համարուէր:

Բ. Աշխարհամարտին, յատկապէս Սուրիոյ անկախութեան տարիներուն եւ, զգալի վերելք կ'ապրի արդիւնաբերութիւնը: Մեծ քաղաքներու մէջ կը ստեղծուին ազգային եւ օտարերկրեայ բազմաթիւ ձեռնարկութիւններ, որոնք կը նպաստեն բանուոր դասակարգի թուական եւ որակական աճին: Այս կարելի էր հիմնաւորել անով, որ 1943 թ. անգլիական բանակի մուտքը Սուրիա եւ անգլիական զինուորական կեդրոններէն ներս աշխատանոցներու բացումը, աշխատանքի հնարաւորութիւն պիտի ընձեռէր ո՛չ միայն տեղացի եւ հայ արհեստաւորներուն, այլեւ գործի ասպարէզ տակաւին նոր մտնող երիտասարդներու՝ ներգրաւուելու գործին մէջ: Սուրիան, որ այդ ժամանակահատուածին պատերազմի չէր ներգրաւուած, տնտեսական բնագաւառէն ներս վերելք կ'ապրի, որովհետեւ դուրսէն ներածում չկար, այսինքն՝ «ապրանքային պատերազմ» կար: Այլ խօսքով՝ շնորհիւ բացուած աշխատանոցներուն անհրաժեշտ ապրանքներու արտադրութիւնը կը կատարուէր երկիրէն ներս, հսկայ գործի շուկայ բացուած էր:

5 **Սուրադյան Ս. Մ.**, Սիրիական բուրժուազիայի հայկական հատվածի դիրքերը երկրի եկոնոմիկայում (1945-1960- ական թվականներ), «Լրաբեր հասարակական գիտությունների», N 10 (574), Երևան, 1990, էջ 44:

6 Մետաքսեայ կամ կիսամետաքսեայ խայտաբլետ գոյներով հաստ գործուածք:

7 Տե՛ս **Սուրադյան Ս. Մ.**, Նշուած յօդուածը, էջ 44: Նաեւ՝ **Քէշիշեան Վ.**, Գորգագործութիւնը Սուրիոյ մէջ, «Գեղարդ», Զ. գիրք, Հալեպ, 2000, էջ 175: -

Հալեպահայ յայտնի պղնձագործ Ռ. Պարսումեան ականատեսի վկայութեամբ, հետեւեալ ձեւով կը բնութագրէ այդ ժամանակաշրջանը. «Սուրիան Բ. Աշխարհամարտի տարիներուն իր ամենէն լաւ, ինքնաբաւ եւ աւելի լաւ վիճակին հասած էր: Դուրսէն ներածում չկար: Անգլիացիներու ներկայութիւնը Սուրիոյ մէջ հսկայ գործի շուկայ բացաւ: ... Պէտք չէ մոռնալ, որ անգլիական բանակի մէջ կային նաեւ հայ ծառայողներ»<sup>8</sup>:

Արդարեւ, Սուրիոյ անկախացումով երկիրէն ներս պիտի ձեւաւորուէին պետական կառոյցներ: Բանակը պիտի անցնէր սուրիացիներու ձեռքը: Բնականաբար, հայերը իրենց նպաստը պիտի բերէին՝ այս անգամ Հարունակելով սուրիական պետական աշխատանոցներէն ներս: Սակայն հայերու կողքին նորանկախ պետութիւնը կարիքը զգաց արաբ մասնագէտներու առկայութեան: Կամաց-կամաց արաբ ժողովուրդն ալ սկսաւ ներգրաւուիլ այդ աշխատանքային բնագաւառին:

Դամասկոսի, Հալեպի եւ Սուրիոյ միւս քաղաքներուն մէջ կ'աշխատէին ամենալաւ հայ արհեստաւորները, ոսկերիչներն ու ժամագործները:

1940-1950-ական թուականներուն արդէն Սուրիոյ մէջ գոյութիւն ունէին հայկական հաստատութիւններ, Յովհաննէս Տապպաղի կաշեգործարանը (խաղախորդարանը)<sup>9</sup>, որ կը մրցէր եւրոպական նմանօրինակ արտադրութիւններու հետ: Բազմիցս վարձատրուած է միջազգային ցուցահանդէսներուն: Ան իր նպաստը բերած է 1948 թ. Պաղեստինի օգնութեան յանձնախումբին:

Սուրիոյ անկախացումով եւ մանդատի բանակի հեռացումով արդէն ձեւաւորուած էր Սուրիոյ ազգային բանակը: 1955 թ. Տապպաղ բանակին կ'ընծայաբերէ կօշիկի գործարան մը, որ յետագային կորիզը պիտի հանդիսանար Հոմսի մէջ ծառայող խոշոր գործարանին<sup>10</sup>:

Գարկայեան-Պարսումեան գործարանը, օժտուած էր արդիական մեքենաներով (տպածոյ, ներկի եւ արդուկի բաժանումներ): Աշխատողները մեծ մասամբ իզական սեռին կը պատկանէին: 1961 թ. կը պետականացուի. 1964 թ. կը վերադարձուի սեփականատէրերուն<sup>11</sup>: Նշարթվա (մետաքսեայ հիսուածեղէնի կանխահաս արդիւնաբերական ձեռնարկ) հիսուածեղէնի գործարանը

8 Մեր հարցազրոյցը Ռուբէն Պարսումեանի հետ, Հալեպ: Ռ. Պարսումեանը հալեպահայ յայտնի պղնձագործ, ինչպէս նաեւ Հալեպի Յ. Պարոնեան թատերախումբի հիմնադիրներէն եւ դերակատար: Շուրջ երկու տասնամեակէ ի վեր սկսած է պղինձէ իրերու հաւաքման, ուսումնասիրութեան: Գիրքը տակաւին անտիպ վիճակի մէջ է: Որպէս այդ ժամանակաշրջանը ապրող, 1999 թ. հարցազրոյց մը կատարեցի համայնքի հետ առնչուող հարցերու շուրջ, որու ընթացքին քաղցի անհրաժեշտ գիտելիքներ 1946-1970 թթ. վերաբերեալ:

9 Հիմնուած 1906 թ. օժտուած այն ժամանակուան համար արդիական սարքերով, ամեն տեսակ կաշիի արտադրութեամբ:

10 «Գեղարդ», Զ. գիրք, Հալեպ, 2000, էջ 156-163:

11 Նոյն տեղը, էջ 170:



հիմնուած է յանձինս Նշան Փալանճեանի, Յարութիւն Որբերեանի եւ Վահան Աճեմեանի, որ ծառայած էր տեղացիներուն, 1948 թ. փակուած<sup>12</sup>: Եաղսըզեաններու խալիի «Կարապետ» գործարանը կը զբաղէր երոպական որակով խալիի՝ անձեռոցի, արտադրութեամբ: Կը գործէին Նաե, Էքմէճեան, Մարեան եւ Ներսէսեան ներկի գործարանները, Գասպարեան, Սեմերճեան եւ Թիւսիւզեան ձեռքի գործարանը<sup>13</sup>: Վերջինս դրամի փոխանակման գործարքները կը համատեղէր արդիւնաբերական գործունեութեան հետ<sup>14</sup>: Նշանաւոր էր Նաե Գ. Ազիրեանի խաւաքարտի գործարանը:

Դամասկոս հրատարակուող «Ֆէյիա» թերթի 17 Օգոստոս 1953 թ. թիւին մէջ Հալէպի թղթակիցը «Անկեղծ հայրենասիրութեան գեղեցիկ օրինակ մը» խորագիրով եւ «Սուրիացի ամետրական մը Հալէպի ոստիկանութեան 15 ինքնաշարժ կը նուիրէ» ենթախորագիրով կը գրէ. «Հալէպահայ ծանօթ առետրական Ն. Նազարեան ոստիկանութեան եւ ապահովութեան տնօրէնութեան 15 ինքնաշարժ նուիրած է»: Նուիրատուն հետեւեալ յայտարարութիւնը ըրած է, որ իր պարգոյեամբ նոյնքան տպաւորիչ եւ գեղեցիկ է. «Հայրենիքէ՛ շայաստանէն Սուրիա գաղթեցի վրայի հագուստովս միայն: Այս գեղեցիկ երկրին մէջ ես գտայ ապահովութիւն՝ վախիս դէմ, ուժ՝ տկարին համար, մարդասիրութիւն՝ վայրագութեան դէմ, եւ յոյս՝ յուսահատութեան դէմ, եւ իմ երկրորդ հայրենիքիս իրաւունքն է օգտուիլ իմ հարստութենէս, ինչպէս անձը կ'օգտուի իր հոգիէն»<sup>15</sup>:

Հալէպի հայերու շնորհիւ քաղաք կը ներմուծուին այնպիսի արհեստներ, որոնք նախապէս գոյութիւն չունէին այնտեղ<sup>16</sup>: Հալէպի պետական թանգարանի տնօրէն դոկտ. Մ. Նրեթանի, «Հայերու կողմէ Հալէպ մուծուած արհեստներ» դասախօսութեան ընթացքին, զոր կարդացած էր Երեանի մէջ կայացած 21 Մայիս 1984 թ., արեւելագիտութեան նուիրուած համագումարի նիստին, կ'անդրադառնայ, թէ «պղինձի վրայ քանդակելը Այնթէպի հայերը բերին քաղաքս: Ոսկերչութիւնն ու արծաթագործութիւնը հայերու ձեռքով հասած է նուրբ գործերու մակարդակին, չիֆթէ կամ զուգաթէլ կոչուող ձեւը մանաւանդ, որ կը շահա-

գործուէր հրեաներու դրամագլուխով»<sup>17</sup>: Այլ խօսքով, որ հրեայ վաճառականներու՝ ձեռքով եւ ոչ դրամագլուխով:

Հայերու շնորհիւ է, որ գործածուած հագուստներ ներածելը (թրք. բառը՝ պալիաճիութիւն. պալիա կը նշանակէ՝ հակ), այսինքն՝ հակերով գործածուած հագուստներու արհեստը կը ներմուծուի Սուրիա<sup>18</sup>: Անշուշտ որ ներածուած ապրանքը յաճախ նորոգութեան կարիք կ'ունենար, հայ կիներն ու տղամարդիկ կը լծուէին այդ աշխատանքին: Անվարան կարելի է ըսել, որ այս գործը զուտ հայերու ձեռնարկութիւն էր, որ յետագային արգիւտեցաւ տեղական արտադրութիւնը քաջալերելու նպատակով, որովհետեւ Սուրիան ունեցաւ Նաե կերպասի արտադրութեան գործարաններ: Այդպիսի բախտի կ'արժանանան սանտրագործութիւնը եւ խոհանոցային փայտէ իրերու պատրաստութիւնը:

Այլ ուղի վիճակուած էր գորգագործութեան: Հայերու կողմէ ներմուծուելով, առ ժամանակ անց անոնք լքուած պիտի մնային, որովհետեւ գորգագործութեան նոր սարքերու յայտնուիլը եւ պարսկական գորգերու տարածուիլը շուկաներէն ներս պատճառ կը դառնար անոնց նահանջին:

Գորգագործութեամբ կը զբաղէին Ա. Քելլեանը, Ա. Ուզունեանը, Ն. Կիլլետրեանը, Վ. Մալճեանը, Յ. Նազգաշեանը, Սանոսեանը եւ ուրիշներ<sup>19</sup>:

1940-ական թուականներուն մեքենական ճարտարարուեստի պատրաստութիւնն ու նորոգութիւնը բացառաբար նոյնպէս հայերու ձեռքն էր: Հայերը շնորհիւ իրենց ընդունակութիւններուն Բ. Աշխարհամարտի տարիներուն կրցան պատրաստել գրեթէ անհրաժեշտ աշխատանքային սարքեր:

1940-1950-ական թուականներու սկիզբը երկրի մէջ արդէն կը գործէին Անթուան Օհանեանի, Խանժողեան եղբայրներու եւ Ազատ Բեդիկեանի (հաւանաբար Պետիկեան) հայկական արդիւնաբերական ձեռնարկութիւնները<sup>20</sup>:

Այսպիսով, հայերու կողմէ իրագործուած լուրջ միջոցառումներու շնորհիւ զարկ կը տրուի տնտեսական իրավիճակի բարելաման եւ վերջ կը դրուի անցեալէն ժառանգած յետամնացութեան եւ աղքատութեան: Այս հնարատրութիւն պիտի տար ապրելակերպի փոփոխութեան եւ բարելաման: Դեռ ամէկին, 1949 թ. սահմանուած օրէնքի համաձայն սուրիական կառավարութիւնը կ'երաշխարէր արդիւնաբերական ձեռնարկութիւններու զարգացման տրամա-

12 Նոյն տեղը, էջ 168: Տէն Նաե՛ Նազարեան Ս., Նշարթովա հիւստածեղէնի կանխահաս ընկերութիւն մը Հալէպ, «Գեղարդ», Ե. գիրք, Հալէպ, 1996, էջ 330-335:

13 ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 3956, թ. 1: Տէն Նաե՛ Սերբեան Յ. Ա., Գործնական առաջնորդ խարատներու եւ ֆրէզայի աշխատատեղերու համար, «Գեղարդ», Զ. գիրք, Հալէպ, 2000, էջ 162-166, 171: Տեղեկագրութիւն Հալէպի Ազգային խորհուրդի, «Գեղարդ», Ե. գիրք, Հալէպ, 1996, էջ 162-166:

14 **Սուրադյան Ս. Մ.**, նշ. աշխ., էջ 47:

15 «Ազգակ», թիւ 6204, 26 Օգոստոս 1953, Պէյրութ:

16 Արդէն 1880 թ. շնորհիւ Մարեանի, Հալէպ մուտք գործած էր լուսանկարչական գործիքը: Պղինձի վրայ քանդակելու արուեստը այնպէսցներու շնորհիւ թափանցած է Հալէպ: Իսկ ոսկերչութիւնն ու արծաթագործութիւնը հայերու ձեռքով կը հասնի նուրբ գործերու մակարդակին: Կը յիշատակուի, որ 1973 թ. արծաթագործութեան ամէկի քան 40 արհեստանոցներ եղած են Հալէպի մէջ, յետագային փոխուած է ոսկերչանոցներու:

17 «Արեւ» օրաթերթ, թիւ 19.820, 4 Սեպտեմբեր 1984, Եգիպտոս: Տէն Նաե՛ Նրեթանի Մ. (թարգմ. բժ. Զ. Պիլմեճեան), հայերու կողմէ Հալէպ մուծուած արհեստներ, «Գեղարդ», Զ. գիրք, Հալէպ, 2000, էջ 199:

18 Հակերով գործածուած հագուստներու արհեստը կը ներմուծուի Սուրիա 1940-ական թուականներէն ետք եւ պիտի շարունակուէր մինչեւ 1970-1980-ական թուականներ, որմէ ետք այդ արհեստը մեծ մասամբ պիտի անցնէր տեղացի արաբներուն:

19 Նրեթանի Մ., նշ. աշխ., էջ 179, 199-200:

20 **Սուրադյան Ս. Մ.**, նշ. աշխ., էջ 45:



դրուող վարկեր: 1950 թ. չեղելով կը համարուի մաքսային միութիւնը Լիբանանի հետ, ինչ որ հնարատրութիւն պիտի ընձեռէր առետրականներուն ազատ արտաքին առետուրի՝ առանց Լիբանանի միջնորդութեան<sup>21</sup>:

Թէեւ մեծ էր հայերու ներդրումը երկրի տնտեսական բնագաւառին, բայց անոնք ձեւականօրէն կ'օգտուէին այդ երկրին՝ Սուրիոյ, քաղաքացիական իրաւունքներէն, որովհետեւ հայերու համար փաստացիօրէն գոյութիւն ունէին շատ քաղաքական ու իրաւական սահմանափակումներ<sup>22</sup>:

1952-1954 թթ. կ'արգիլուին արտասահմանէն ներմուծուող բոլոր այն ապրանքները, որոնք հնարատր էին արտադրել Սուրիայէն ներս: 1952 թ. Սեպտեմբերին հրապարակուած նոր օրէնքով բարեկաստ պայմաններ կը ստեղծուին տեղական արդիւնաբերութեան զարգացման համար: Արդիւնաբերական ձեռնարկութիւններու զարգացումը կը նպաստէ առետրական աշխուժութեան եւ զգալի չափով՝ ներքին եւ արտաքին առետուրի զարգացման:

Այստեղ կարեւոր է նշել, որ մանր եւ միջին արդիւնաբերական եւ բաժնետիրական ընկերութիւններու գործունէութեան մէջ եւս, կ'ընդգրկուէին հայ ձեռնարկատէրերը: Արդէն 1950-ական թուականներուն 32 հայազգի ձեռնարկատէրեր կը զբաղէին արդիւնաբերական գործունէութեամբ:

1954 թ. Հալէպի մէջ Դաւիթ Կակաճեան եւ Արթին Շառոյեանը կը հիմնեն բամբակագոյիչ հաստոցներ արտադրող գործարան, Ա. Տէմիրճեան՝ մետաղամշակման գործարան, որ կ'արտադրէր մեքենաներու տարբեր հաստոցներու պահեստամասերը:

Խոշոր հայ գործարարներէն էր Արթուր Խոշմեթեանը, որ Դամասկոսի մէջ հիմնած էր ակնոցի արտադրութիւն եւ վաճառք: Իսկ 1956 թ. արդէն ուներ իր սեփական վաճառատունը<sup>23</sup>:

Բացի մեքենական ճարտարարուեստի, հիսուածեղէնի եւ գորգագործութեան բնագաւառներէն՝ հայերը կը նպաստեն երկրի երկրագործութեան: Հայերու ձեռամբ բրինձի մշակութիւնը կը ներմուծուի Սուրիոյ տարբեր շրջաններուն մէջ<sup>24</sup>:

Հարկ է նշել, որ երկրի ազգային փոքրամասնութիւններէն, տնտեսական կեանքի մէջ, ամենէն ուժեղ մասնակցութիւնը կը ցուցաբերեն հայերը: Արաբ-

21 Ֆրանսական մանդատի տարիներէն սկսեալ մինչեւ 1950 թ. Մարտ, Սուրիան եւ Լիբանանը տնտեսապէս սերտօրէն կապուած էին իրարու, գոյութիւն չունէին տնտեսական սահմաններ եւ տեղի կ'ունենար ապրանքներու ազատ շրջանառութիւն: Այլ խօսքով, Սուրիոյ եւ Լիբանանի արտաքին առետուրի վարչութիւնը կը գտնուէր «հասարակաց շահերու գերագոյն խորհուրդի ղեկավարութեան տակ»: Տէն **Սուրադյան Ս. Մ.**, նոյն տեղը:

22 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 149, թ. 3, 13:

23 **Սուրադյան Ս. Մ.**, նշ. աշխ., էջ 45-47:

24 ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 3956, թ. 4:

ները, արհեստներու եւ այլ աշխատանքի վերաբերեալ, գովեստով, հիացմունքով արտայայտած են ոեւէ մասնագետ արհեստատրի պատրաստուածութեան մասին:

1948-1981 թթ. սուրիական երկաթուղագիծի ընկերութեան տնօրէնութեան պաշտօն վարած 13 տնօրէններէն երկուքը հայեր եղած են՝ Գեղամ Երիցեան (Հալէպի երկաթուղագիծի վարչութեան պետի տեղակալ՝ 1958 թ. վերջաւորութեան) եւ Վարդգէս Մարտիրոսեան (1975 թ.): Երկաթուղագիծի կառուցողական աշխատանքներուն իրենց ներդրումը ունեցած են՝ երկրաչափներ Վարդգէս Մարտիրոսեան ու Համբարձում Գրիգորեան, կայարանապետներ Մկրտիչ Տօնոյեան, Ֆրանսուա Պեօճիպեան, Հանրի Մէտտերեան, Յակոբ Եիզպաշեան (Ճեզիրէի կայարանապետ), Կարապետ Նալճեան, Նմայեակ Տոլպագեան (Հալէպի Կեդրոնի կայարանապետ), Յարութիւն Կիտանեան (Թէլ Քեօչէքի գլխատր կայարանապետ) եւ ուրիշներ<sup>25</sup>:

Երթեւեկի տնօրէնութեան կեդրոնական գրասենեակին եւ անոր ենթակայ բոլոր կայարաններուն, մթերանոցներուն եւ այլ գրասենեակներուն մէջ եւս հայ աշխատատրներ եղած են՝ Ստեփան Իսճէեան, Մարտիրոս Գունտաքճեան, Յակոբ Ալէքսանեան, Շահնուր Ֆըստըզճեան, Հայկ Եագուպեան, Յովհաննէս Կոստանեան, Զաւէն Տիրացուեան, Կարապետ Արսլանեան, Սուրէն Նազարեան, Ֆրանսուա Նիւրիթեթեան, Լեւոն Գարակիւլեան, Ճորճ Սրապեան:

Երթեւեկի տնօրէնութեան կեդրոնական գրասենեակին մէջ աշխատած են՝ Կարապետ Ռագըճեան, Արթուր Ֆըսթըզճեան, Սերոբ Սապունճեան, Շարլ Վանլեան, Մկրտիչ Գաշըզճեան, Լեւոն Պաղտասարեան եւ Համբարձում Մագեան: Քննիչներու գրասենեակի մէջ աշխատած են երկրաչափ Գառնիկ Տէքպէգեան, Հայկ Պարիկեան եւ ուրիշներ:

Պետական ծառայողներու մէջ կարելի է նշել Գառնիկ Գարայեան (Հալէպի դրամատան մասնաճիւղի վարիչի տեղակալ), բժ. Յովհաննէս Հրեշտակեան (բժշկական եւ առողջապահական գրասենեակի պատասխանատու), Ազամ Պարոնեան (Հալէպի ջրմուղի վարչութեան պետի տեղակալ), Աբիկ Զօրեան (Հալէպի էլէկտրացանցի տնօրէնի տեղակալ) եւ ուրիշներ<sup>26</sup>:

1960-ական թուականներուն հայերը Հալէպի բնակչութեան մէկ հինգերորդ մասը կը կազմէին: Անոնց հիմնական զբաղմունքը՝ առետուրն ու արհեստներն էին: Լաւագոյն վաճառատուները, փականագործական, դարբնային եւ վերանորոգման արհեստանոցները, կօշիկի վաճառման վայրերը, վարսավիրա-

25 **Նազարեան Ս.**, Սուրիական երկաթուղագիծը եւ հայոց նպաստը՝ անոր վերելքին, «Գեղարք», Գ, հատր, Հալէպ, 1985, էջ 395-404:

26 ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 6, թ. 2: **Նազարեան Ս.**, Սուրիական երկաթուղագիծը եւ հայոց նպաստը՝ անոր վերելքին, էջ 381-411:



Նոցները կը գտնուէին հայերու ձեռքը: Սուրիոյ Նախկին Նախագահ Շուքրի Քուաթլի 1957 թ. հետեւեալ յայտարարութիւնը կ'ընէ. «Մենք հայերին սիրում ենք այն բանի համար, որ նրանք մեր երկրում զարգացրին արհեստներն ու արդիւնաբերութիւնը՝ դրանով իսկ նպաստելով մեր տնտեսական վերելքին»<sup>27</sup>:

1963 թ. տուեալներով, Սուրիոյ մէջ կ'ապրէր 100 հազար հայ, որոնց մեծ մասը տեղակայուած էր Հալէպի, Գամիշլիի, Դամասկոսի, Լաթաքիոյ եւ Հոմսի մէջ: Միայն Հալէպ քաղաքի հայ բնակչութեան թիւը կը հաշուէր 70<sup>28</sup> (այլ տեղեկութեամբ՝ 55) հազար մարդ: Արհեստագործութեան հիմնական ոլորտները (ինքնաշարժներու նորոգութեան, մեքենագիտութեան, ատաղձագործութեան, կոշկակարութեան, դերձակութեան, ոսկերչական արհեստանոցները եւ պղնձագործութիւնը) հայերու ձեռքը կեդրոնացած էին: Հալէպի առեւտրականներուն մէջ մեծ տեղ կը գրաւէին հայերը, ինչպէս Նաեւ բժիշկներ, երկրաչափներ, գործատուներ եւ գործարաններու սեփականատէրեր»<sup>29</sup>:

Իսկապէս, շնորհիւ իրենց ձեռնբերութեան եւ ուշիմութեան, հայերը Սուրիոյ մէջ նպաստեցին երկիրի արդիւնաբերատնտեսական վերելքին: Հայերու մէկ մասը պետական ձեռնարկութիւններուն մէջ ստանձնեց պատասխանատու պաշտօններ: Սակայն 1964 թ. ետք անոնց թիւը խիստ կը նուազի, որովհետեւ Նոյն թուի Դեկտեմբեր 22-ին, յատուկ հրամանագիրով կ'ազգայնացուին թէ՛ Նալթալի ու այլ օգտակար հանածոները<sup>30</sup>, թէ՛ գործատեղիները, որոնք կը խոչընդոտեն գործատէրերու համընդհանուր շահերը:

1964 թ. արդէն միայն Հալէպի մէջ շուրջ 55 հազար հայ կ'ապրէր: Հալէպահայութիւնը կարեւոր դեր խաղացած է ոչ միայն քաղաքի, այլեւ երկիրի տնտեսական կեանքին, յատկապէս արդիւնաբերական եւ տնայնագործական զանազան ձեռնարկութեանց մէջ, ուր կ'աշխատէին իբրեւ մեքենագետ, ելեկտրագետ, ձուլագործ, եռակցող, դերձակ, կոշկակար, ոսկերիչ եւ այլն<sup>31</sup>:

Սուրիոյ հայութիւնը ոչ միայն պատկառելի տեղ կը գրաւէր իր թիւով, այլ՝ իր որակով, ցուցաբերած տաղանդով եւ ընդունակութեամբ: Հայ բանուորներու, արհեստաւորներու, հողամշակներու ստեղծած բարիքները, արդիւնագործած ապրանքները, մէկը միայն ետեւէն բարձրացած շէնքերը դարձած էին Սուրիոյ եւ Լիբանանի հարստութիւնն ու հպարտանքը:

27 Սուրադյան Ս. Մ., նշ. աշխ., էջ 46:

28 Բաղալյան Ա., Սիրիայում ԽՍՀՄ-ի դեսպանատան տեղեկանքը Սիրիահայ գաղթօջախի մասին, 17 հոկտեմբեր 1963. (Դամասկոս), ԲՀԱ, N 2, 2009, էջ 215: Նաեւ Եազըճեան Գ., Սփիւռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները Խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ, էջ 207:

29 Բաղալյան Ա., նշ. աշխ., էջ 215: Նաեւ Եազըճեան Գ., նշ., աշխ., էջ 207:

30 Սարգսյան Ն. Ս., նշ. աշխ., էջ 91:

31 Եազըճեան Գ., նշ. աշխ., էջ 232:

Այստեղ կարեւոր կը համարենք նշել, թէ երբեմնի գաղթականներէն շատեր արժանացած են սուրիական բարձրագոյն շքանշաններու, արաբական հայրենիքին իրենց մատուցած ծառայութեան համար<sup>32</sup>: Սուրիական պետական գործիչ Ռ. Քեյսիան ըսած է. «Հայ տարրը եղած է մեր ամենասիրելի փոքրամասնութիւնը, զոր իր ազատամտութեամբ, աշխատասիրութեամբ եւ ուշիմութեամբ՝ մեծ ծառայութիւններ մատուցած է Սուրիոյ»<sup>33</sup>: Նազեմ Քուսսին<sup>34</sup> լրացնելով՝ «Հայերը շատ օգտակար տարրեր են այս երկիրներուն մէջ՝ իրենց աշխատասիրութեամբ եւ մանաւանդ իրենց մասնագիտութիւններով»<sup>35</sup>:

Անկասկած, հայ ժողովուրդը շնորհիւ իր աշխատանքին եւ բերած նպաստին, այս երկու երկիրներուն մէջ, վայելած է տեղացիներու համակրանքը: Անոր վարկի ու կշիռի մասին կը վկայէ հետեւեալ փաստը: Սուրիոյ մէջ 1956 թ. պաշտօնական հրամանագիրով կ'արգիլուին ցուցատախտակներու վրայ օտար լեզուներով արձանագրութիւնները, սակայն ջնջելու հրամանագիրը չի պարտադրուի հայերէնով ցուցատախտակներուն<sup>36</sup>:

Հայերը կարեւոր մասնակցութիւն ունեցած են Նաեւ Սուրիոյ եւ Լիբանանի կառուցապատման գործին:

Լիբանանի եւ ընդհանրապէս Մերձավոր Արեւելքի մեծագոյն ճարտարապետներէն Պ. Բապուճեանի նպաստը մեծ եղած է ոչ միայն Լիբանանի, այլեւ հայկական եւ օտար բազմատասնեակ եկեղեցական կոթողներու, հիւանդանոցներու, մզկիթներու եւ վիլլաներու (առանձնատուներ) կառուցման գործին Լիբանանի, Սուրիոյ եւ Եգիպտոսի մէջ:

1962 թ. Սուրիոյ խոշորագոյն 40 կապալառուներու թիւին կը նշուի 4 հայերու (Ճորճ Միքայէլեան, Մ. Տեմիրճեան, Ա. Եագուպեան եւ Ն. Եագուպեան) անունները: Սուրիահայ կապալառուներէն կարելի է յիշատակել՝ Թօփճեան եղբայրք<sup>37</sup>, Գ. Պապոյեան<sup>38</sup>, Ա. Սալաթեան<sup>39</sup>, Պօղոսեան եղբայրք, Դ. Մելքոնեան<sup>40</sup>, Տ. Նաճարեան<sup>41</sup>, Լ. Տէր Վարդանեան<sup>42</sup>, Ն. Գարամանուկեան<sup>43</sup>, Մ. Սիւքիթեան<sup>44</sup>,

32 «Գեղարդ», Ա. գիրք, Հալէպ, 1975, էջ 405-409:

33 «Արարատ» օրաթերթ, թիւ 1728, 6 Նոյեմբեր 1946, Պէյրութ:

34 Նազեմ ալ-Քուսսի ծնած է Հալէպ, եղած է «ժողովրդական» կուսակցութեան հիմնադիրներէն: 1961-1963 Մարտ 8 Սուրիոյ Նախագահ:

35 «Զարթօնք» օրաթերթ, թիւ 3686, 11 Նոյեմբեր 1949, Պէյրութ:

36 «Ազդակ», թիւ 7130, 17 Փետրուար 1956, Պէյրութ:

37 «Գեղարդ», Ե. գիրք, Հալէպ, 1996, էջ 475-483:

38 Նոյն տեղը, էջ 498:

39 Նոյն տեղը, էջ 500:

40 Նոյն տեղը, էջ 505-508:

41 Նոյն տեղը, էջ 509-513:

42 Նոյն տեղը, էջ 513:

43 Նոյն տեղը, էջ 514-515:

44 Նոյն տեղը, էջ 516:



Մ. Ֆաթիալլահ (հայ կաթողիկե)<sup>45</sup>, Յ. Ադամեան<sup>46</sup>, Տ. Ե. Ս. Տեր Մետրոպեաններ<sup>47</sup>, Մ. Մէյնազարեան, Խ. Տոնիկեան, Գ. Գանսպերեան, Գ. Ազկիլեան, Ա. Պալեան, Ա. Ե. Ե. Կարպուզեաններ (Քեսապ)<sup>48</sup>:

Կապալառու հայ ձեռնարկատեր ճորճ Միքայելեան Հալեպի, Լաթաքիոյ եւ Համայի մէջ ուներ բամպակի զտման գործարան: Նաեւ բաժնետոմսեր ուներ Լաթաքիոյ Ասֆալտի (կուպրի) քաղաքացիական ընկերութեան եւ Համայի «Չուգանի ձուլման ընկերութեան» մէջ: Անդամ էր նաեւ Հալեպի առետուրի պալատի<sup>49</sup>: Միքայելեանի անուան հետ կապուած է Եփրատ գետի ջուրերը Հալեպ քաղաքի մատակարարելու ծրագրի իրագործման աշխատանքները:

Մեծ եղած է դամասկոսահայ Ն. Եագուպեանի ու որդիներու նպաստը Սուրիոյ կառուցապատման ասպարեզէն ներս: Բաւական է ըսել, որ անոնք կազմակերպած ու ղեկավարած են սուրիական խորհրդարանի նոր շէնքի կառուցապատումը, առաւել՝ Դամասկոսի համալսարանի, երկրագործական նախարարութեան, արդարադատական պալատի, դպրոցներու, հիւանդանոցներու, մզկիթներու շինարարութիւնը, պատմական յուշարձաններու վերանորոգութիւնը (Պալմիրայի մզկիթի վերակառուցումը՝ 1928 թ.), ճանապարհներու, զօրանոցներու մէկ մասը եւ այլն<sup>50</sup>:

Քաղաքաշինութեան բնագաւառէն ներս կարեւոր ծառայութիւն մատուցած են նաեւ փրոֆ. Զ. Գաբլանը (Հալեպի մերձակայ Շահպա բարեկարգ ասանի եւ Դամասկոսի հռչակաւոր Ուզարիտ շէնքի գլխաւոր ճարտարապետը եղած է)<sup>51</sup>, Հնագիտութեան ոլորտէն ներս Ես Սուրիոյ եւ Լիբանանի հայերը կարեւոր մասնակցութիւն ունեցած են: Հիւսիսային Սուրիոյ մէջ, նախապատերազմեան ժամանակաշրջանին Յ. Վ. Մարըլեանը կատարած է հնագիտական պեղումներ՝ Ս. Թովմասի եւ Ս. Սիմոնի վանքերէն ներս: Պատմական յուշարձաններու հետազօտման աշխատանքներուն մեծ ներդրում ունեցած են Ժ. Գալեմբերեան, Յ. Քիրիշեան եւ Ա. Չետերեան<sup>52</sup>:

1965 թ. Յունուարէն Մայիս Սուրիոյ կառավարութեան հռչակած նոր օրէնքին համաձայն կ'ազգայնացուին արդիւնաբերական առաջատար ճիւղերու ձեռ-

նարկութիւնները: 108 արդիւնաբերական ձեռնարկութիւններէն 1965 թ. կ'ազգայնացուին հայ ձեռնարկատէրեր՝ Յովհաննէսեանին եւ Մահսէրէճեանին, Նիկողոսեանին, Կ. Շարպեանի, Մանուկեանի, Մ. Գաբրիէլեանի, ճորճ Միքայելեանի, Մ. Խաչատրեանի եւ ուրիշներու պատկանող խոշոր ձեռնարկութիւնները<sup>53</sup>:

Հալեպը, որ Սուրիոյ երկրորդ մեծ քաղաքն էր, հայ ազգաբնակչութեան մեծ զանգուած մը ապաստան գտած էր այդտեղ: Ուստի միայնգամայն հասկնալի էր այդ քաղաքի մէջ հայ ձեռնակատէրերու գրաւած դիրքերը: Հալեպահայութեան ձեռքն էր մեքենասիւսաքաղաքայաններու եւ մեքենաներու սպասարկման կայաններու մեծամասնութիւնը (Երուանդ Ալալեան՝ մեծ կառատան մը եւ ինքնաշարժերու խմբաքանակի սեփականատէր): 1962 թ. Հալեպի մէջ գրանցուած 14 ձեռնարկութիւններուն 9-ը կը պատկանէր հայերուն: 8 գորգագործական գործատեղիներէն 7-ը նաեւ հայերու էին (մինչ օրս ալ Հալեպի հայերուն կը պատկանէին 3-4 գորգագործական գործատեղիներ՝ Պոյաճեան, Թիթիւնճեան, Մահսէրէճեան եւ այլն)<sup>54</sup>: Առետուրի եւ արդիւնաբերութեան տարբեր ոլորտներու մէջ հայերը ունէին հաստատուն դիրքեր: Հ. Ե. Ս. Սանոսեաններու պատուէրով կը ներմուծուէր բոլոր անհրաժեշտ սարքաւորումները (գիւղատնտեսական մեքենաներ, շարժիչներ եւ այլն): Յիսունական թուականներուն, Սուրիոյ մէջ շուրջ 20 հայկական ձեռնարկութիւններ կը զբաղէին միջնորդութեամբ, մեծածախ առետուրով, ներմուծման եւ արտահանման գործարքներով: Աշխատողներ կային ներքին ոլորտներու մէջ<sup>55</sup>: Յիշենք հայ առետարականները, որոնք մեծ դեր ունէին Սուրիոյ, յատկապէս Հալեպի տնտեսութեան մէջ՝ Յովհաննէս Չագլանեան, Արամ Կեօվչէնեան, Երուանդ Թիմպալեան, Սուրէն Գալեանտըր, Արամ Մինասեան (կերպասեղէնի եւ գորգերու առետուր), ճորճ Ֆէթթելեան (Ֆէթթել), Յակոբ Զէյթունցեան, Արամ Զէյթունցեան, Գեորգ Մազլումեան, Ճանիկ Ոսկանեան, Կարապետ Եաղսըզեան, Յակոբ Ամալեան եւ այլն:

Ինչ կը վերաբերի մանր եւ միջին ձեռնարկատէրերուն, անոնք կը զբաղէին արդիւնաբերական գործունեութեան տարբեր ձեռնարկութիւններով (քիմիական, սնունդի, մետաղամշակման): Խօսելով համեմատաբար մանր ձեռնակատէրերու մասին՝ կարելի է նշել, որ Հալեպի մէջ գրանցուած 9-ը գրավաճառներէն 2-ը հայեր եղած են: Սուրիոյ մէջ լուսանկարչական գործը կեդրոնացած էր հայերու ձեռքը: ԺԹ. դարուն, արդէն, Հալեպի մէջ կային հայ լուսանկարիչներ: Քննարկուող շրջանին լուսանկարչական տաղաւարներն ու նկարահանման կեդրոնները գրեթէ կը պատկանէին հայերուն: 1962 թ. Հալեպի

45 Նոյն տեղը, էջ 517:

46 Նոյն տեղը, էջ 518-519:

47 Նոյն տեղը, էջ 520-522:

48 Նոյն տեղը, էջ 522-532:

49 الجديدة الرسمية. عام 1959. العدد 17

Նաեւ «Սուրիա» օրաթերթ, թիւ 2408, 20 Մայիս 1953, Հալեպ: Տէս «Գեղարդ», Ե. գիրք, Հալեպ, 1996, էջ 501-504:

50 «Գեղարդ», Ե. գիրք, Հալեպ, 1996, էջ 477, 488-497, 532:

51 «Բագին» ամսագիր, թիւ 4, 1964, Պէյրութ, էջ 80: Նաեւ «Գեղարդ», Զ. գիրք, Հալեպ, 2000, էջ 240-247:

52 **Նաքոյան Ե. Հ.**, նշ. աշխ., էջ 351:

53 **Սուրադյան Ս. Մ.**, նշ. աշխ., էջ 48:

54 «Գեղարդ», Զ. գիրք, Հալեպ, 2000, էջ 173-184:

55 **Սուրադյան Ս. Մ.**, նշ. աշխ., էջ 48-49:



մէջ 8 լուսանկարչական տաղաարներ կը պատկանէին հայերուն, Դամասկոսի մէջ՝ 10-էն 3-ը, Հոմս, Համա եւ Լաթաքիա՝ մէկական<sup>56</sup>:

Արաբական Միացեալ Հանրապետութեան ժամանակաշրջանին (1958-1961 թթ.) ինչպէս Եգիպտոսի, այնպէս ալ Սուրիոյ հայերը Նասերի ազգայնացման քաղաքականութեան հետեանքով լուրջ վնասներ կը կրեն: Բայց «անջատման ռեժիմ»-ի օրով (1961 թ. Սեպտեմբեր - 1962 թ. Փետրուար), Նասերի կողմէ ազգայնացուած դրամատուներն ու բազմաթիւ արդիւնաբերական ընկերութիւնները կրկին կը վերադարձուին մասնաւոր տէրերուն:

1960 թ. Հալէպի «առեւտրորի պալատ»-ի շարքերուն գրանցուած արդիւնաբերական ձեռնարկութեան 34-ը հայերուն կը պատկանէր: Մինչեւ 1963 թ. Սուրիոյ խոշոր քաղաքներու մէջ կային տնային կահոյքի պատրաստման 82 մանր ձեռնակատերեր, որոնցմէ 8-ը հայեր էին: Հայ ձեռնակատերեր ունէին Նաեւ 3 օճառի գործարան, 1 սողոցարան, 2 գորգագործական ձեռնարկութիւն, հացի փուռեր, կաշեգործական արհեստանոցներ եւ այլն<sup>57</sup>:

1960-ական թուականի սկիզբը, ապահովագրական ընկերութիւններէն մէկը կը պատկանէր հայազգի Ճ. Ալթունեանին<sup>58</sup>:

Նշենք, թէ համայնքի ձեւաւորման օրերուն Սուրիոյ եւ Լիբանանի մէջ կը գործէին անուանի բժիշկներ, ինչպիսիք են, Սուրիայէն, Ա. Ալթունեան, Ա. Ճեպեճեան, Է. Ալթունեան, Ֆ. Յովսէփեան, Զ. Արսլան, Ժ. Պապիկեան, Ահարոն Խաչատուրեան, Ժոզէֆ Գարայեան, Խաչիկ Թովսմանեան, (Թովսմանեան Մանուկ), Աբրահամ Երիցեան, Միշէլ Տիմիճեան, Պարգեւ Անտոնեան, Ճանիկ Երանոսեան, Արամ Պարսամեան, Յակոբ Չերչեան, Նուպար Թօփճեան, Գասպար Գասպարեան, Ալպեռտ Տայեան, Պետրոս Չազըրեան, Յարութիւն Տէր Ղազարեան, Գրիգոր Քասիս եւ ուրիշներ: Բժիշկներու կողքին կը գործէին դեղագործներ Սէլեան (Յակոբ Խաչատուրեանի «Արեւելք» սեփականութիւնն էր, իսկ Ներկայիս՝ վաճառուած), Լեւոն Ֆապրիքաճեան (դեղագործ), Հրանդ Սէրանեան (դեղագործ), Պապիկեանի դեղարան եւ ուրիշներ), ատամնաբոյժներ, որոնք կը գործէին Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Տէր Զօր, Անտիոք եւ այլուր: Անոնք համահաւասար կը սպասարկէին ո՛չ միայն հայերուն, այլ արաբազգի հիւանդներուն:

1925 թ. տուեալներուն համաձայն, Հալէպի մէջ գործած են հայ 32 բժիշկներ, 85 ատամնաբոյժներ եւ 15 դեղագործներ<sup>59</sup>: Մինչեւ 1940 թ. Հալէպ գործող բժիշկներու թիւն էր 260 անձ, որոնցմէ 80 հայեր էին, տարբեր մասնագիտութեամբ՝

56 «Գեղարդ», Զ. գիրք, 2000, Հալէպ, էջ 224-239:

57 Սուրադյան Ս. Մ., Նշ. աշխ., էջ 47:

58 Նոյն տեղը:

59 الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي تاريخ الطب والاطباء في حلب و اطباء الاسنان والصيدالنه. الجزء الاول. ص. 102-105, 108-109, 111, 112, 113.

5 ակնաբոյժ, 2 մորթալին, 3 տարրալուծարանի, 3 մանկաբարձներ, 9 վիրաբոյժներ, 18 ատամնաբոյժներ, 25 դեղագործներ եւ այլն<sup>60</sup>:

Հալէպի հնագոյն հիւանդանոցներէն էր «Ալթունեանը»: Հիմնադրուած՝ 1891 թ. եւ գործած է մինչեւ 1950 թ. ասարտը, որ կը համարուէր Նաեւ Արաբական Արեւելքի ամենահռչակաւոր հիւանդանոցը: Ասատուր Ալթունեան բժշկագիտութեան եւ առողջապահութեան բնագաւառէն Ներս Հալէպի մէջ կարեւոր ծառայութիւն մատուցած է: 1933 թ. ընտրուած է Հալէպի բժիշկներու միութեան Նախագահ: 1946 թ. Նոյն պաշտօնը ցմահ կը շնորհուի Ալթունեանին: 1939 թ., վիրաբոյժներու միջազգային խորհուրդի «պատուաւոր անդամ» կ'ընտրուի: Կ'արժանանայ «Սուրիական Արժանեաց» 3 քըանշաններով<sup>61</sup>:

Բժշկական բնագաւառէն Ներս ծառայութիւնները մատուցած են Աւետիս Ճեպեճեան եւ Ֆիլիպ Յովսէփեան: 1919 թ. երկուստք կը հիմնեն սեփական հիւանդանոց, որ հիւսիսային Սուրիոյ հայ եւ արաբ աղքատ հասարակութեան համար կարեւոր դեր կը կատարէ: 1942 թ. հիւանդանոցը մեծ հռչակ կ'ունենայ Ռոպէր Ճեպեճեանի ջանքերով բացուած ակնաբուժարանի բաժնի բացման շնորհիւ:

Ռ. Ճեպեճեան, որպէս ակնաբոյժ, մեծ ներդրում կ'ունենայ սուրիական բժշկագիտական բնագաւառէն Ներս: Տրախտմայի դէմ մեծ պայքարի կազմակերպիչն ու կուրութեան կանխարգիլման սուրիական ընկերութեան (1948 թ.) Նախաձեռնողը եղած է: Արաբական Արեւելքի մէջ ան օգտագործած է Խորիրդային Միութեան փրոֆ. Ֆիլատովի հիւսուածաբուծութեան ձեւերը կոյրերու տեսողութիւն պարզելու համար եւ 1952 թ. յատուկ օրէնքով՝ գործողութեան թոյլտուութիւնը: Նպաստած է կոյրերու սուրիական առաջին դպրոցի հիմնադրման, որու ուսուցիչներն ալ հայեր էին<sup>62</sup>:

191-192

1291-էն մինչեւ 1966 թ. Լաթաքիոյ մէջ ապրած եւ գործած են 3-4 բժիշկ, 3-4 ատամնաբոյժ եւ երկու դեղագործ: Բժիշկներ՝ Փաշայեփեան, Մ. Փորթուլեան եւ Կ. Մարկոսեան: Ատամնաբոյժներ՝ Ա. Պաիճեճեան, Կ. Կեօղեան, Ա. Չեքիմեան: Դեղագործներէն՝ Ա. Մարկոսեան եւ Ե. Նազարեան: 1966 թ. Լաթաքիոյ մէջ գործող բժիշկ՝ Գ. Մաթոսեան: Ատամնաբոյժ՝ Ա. Սարաֆեան: Ծարտարագետներ՝ Ա. Լիմոնճեան, Ե. Պարսումեան: Իսկ Կ. Կարպուզեան՝ ելէկտրագետ-շինարար: (ՏՆՆ ՀԱԱ, ֆ, 875, ց. 2, գ. 586, թ. 18): Այստեղ կարելի է հաստատում մը ընել, որ 2003 թ. տուեալներով դեղագործներուն թիւը քառապատկուած է: Միայն Հալէպ քաղաքին մէջ գործող եւ պետական ճանաչում ունեցող հայազգի դեղատուներու թիւը 28 է: Իսկ դեղագործներունը, համաձայն 50 եւ ատէլի, որոնցմէ շատերը տակալին գիւղական ծառայութեան մէջ են, իսկ ուրիշներ՝ կ'աշխատին քիմիական ընկերութիւններու հետ: ՏՆՆ «Շափղ» պարբերական, հ. Գ., 2005, Հալէպ, էջ 33-38:

60 الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي المصدر نفسه. ص. 102-105.

61 الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي المصدر نفسه. ص. 102-105, 111, 112, 113.

ՏՆՆ Նաեւ «Գեղարդ», Ե. գիրք, Հալէպ, 1996, էջ 420-424: **Նաջարյան Ն. Ե.**, Նշ. աշխ., էջ 369:

62 مجلة «الغد» دمشق 1991 العدد 37, ص. 102. الاستاذ الطبيب طه اسحاق الكيالي المصدر نفسه. ص. 105.

ՏՆՆ Նաեւ՝ **Ճեպեճեան Ռ.**, Նշ. աշխ., էջ 238-256: **Նաջարյան Ե. Ն.**, Նշ. աշխ., էջ 370:



Ռ. Ճեպեճեան ոչ միայն ջատագովն էր հայ-արաբ բարեկամական յարաբերութիւններու ամրապնդման, այլ եւ Հայրենիք-Սփիւռք, Սուրիա եւ Խորհրդային Հայաստանի մշակութային կապերու ամրապնդման ու մերձեցման:

Սուրիոյ մէջ հայ բժիշկներու ղեկավարութեամբ գործած են տասնեակ փոքր հիւանդանոցներ, բազմաթիւ հասարակական դարմանատուններ, ծերանոցանկելանոց եւ ծննդատուն: Օրինակ՝ Հալէպի «Ալ Քալիմէ» հիւանդանոցը 1954 թ. կը գործէր հայ բժիշկներու ղեկավարութեամբ: Հասկնալի է, որ հայ բժիշկներու գործունեութիւնը չէր կրնար սահմանափակուիլ հայկական բուժարաններու քանի մը հիմնարկներու մէջ: Առաւել, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ առողջապահութեան ու բժշկագիտութեան նոր երանգ տուող հայ բժիշկները իրենց երկրորդ հայրենիքի անունով (Սուրիա-Լիբանան) հնարատրութիւն ունեցան մասնակցելու միջազգային խորհրդաժողովներուն:

Ինչպէս հիւանդանոցներու, այնպէս ալ բուժքոյրերու դպրոցի եւ դեղագործական կեդրոնի անձնակազմը բաղկացած էր հայերէ, որոնք 1950-ականէն ետք համագործակցած են նաեւ արաբ եւ օտարազգի բուժաշխատողներու հետ:

Արդարեւ, քաղաքային կեանքի զարգացման շնորհիւ աստիճանաբար կեանքի կը կոչուին նոր արհեստներ ու հումքի վերամշակման ճիւղեր, որոնք նպաստած էին հայերը:

Հալէպի հայերուն կը պատկանէին ակնոցի վաճառատուններու գործող 4-ը: Իսկ Դամասկոսի մէջ՝ 6-էն 3-ը:

Ծանուցման գրասենեակներու եւ ոսկերչութեան բնագաւառէն ներս զգալի էր հայերու ներկայութիւնը:

Դրամատան ոլորտին մէջ բաւականին զգալի էր հայերու դերը: «Պանք Լաթաքիա»-ն (դրամատունը) գրանցուած էր որպէս բաժնետիրական ընկերութիւն եւ կը պատկանէր երկու ընտանիքներու՝ Մեքենաճեան եւ Կ. Կեօմէճեան անդամներուն<sup>63</sup>:

Այսպիսով, Սուրիոյ մէջ հայը երկիրէն ներս գոյութիւն ունեցող տնտեսական համակարգի անքակտելի օղակը հանդիսացաւ եւ երկիրի օրէնքներու ենթակայ տարրը:

Իրապէս, թէեւ հայ ձեռնակատերերը Սուրիոյ մէջ հարուստ էին, բայց եւ այնպէս ազգային փոքրամասնութեան ներկայացուցիչներ հանդիսանալով, միշտ ալ նկատի պէտք է առնէին տուեալ երկրի քաղաքական իրադրութիւնը, անոր կրած փոփոխութիւնները եւ ապա յարմարուէին տիրապետող ուժերուն:

63 الجريدة الرسمية، عام 1953، العدد 17، **Սուրադյան Ս. Մ.**, նշ. աշխ., էջ 50:

### Գ. ՍՈՒՐԻԱ-ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՏՆՏԵՍԱ-ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՊՆՈՒՄՆ ՈՒ ՍՈՒՐԻԱ-ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԵՐՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1944 թ. Յունիսիին Սուրիոյ եւ ԽՍՀՄ-ի միջեւ կը հաստատուին դիւանագիտական յարաբերութիւններ, որոնք յետագայ տարիներուն պիտի նպաստէին Սուրիոյ նորանկախ պետութեան տնտեսութեան վերելքին:

Նորանկախ Սուրիոյ ղեկավարութեան առաջ բարդացած էին շարք մը կարեւոր հարցեր, որոնց լուծումը անմիջապէս կապուած էր երկրի տնտեսութեան եւ արտաքին առեւտուրի հետ: Եւ իբրեւ այդպիսին, զայն փակուղիէն դուրս բերելու համար պէտք էր տնտեսական համագործակցութիւն հաստատել ընկերվարական երկիրներու հետ: Այս գծով առաջին բարեպատեհ առիթը կը հանդիսանայ 16 Նոյեմբեր 1955 թ. Դամասկոսի մէջ Սուրիոյ եւ Խորհրդային Միութեան միջեւ առեւտրական եւ վճարման համաձայնութեան կնքումը, որ պայմանաւորուած էր առեւտրական կապերու հաստատումով եւ փոխադարձ շահերու հիման վրայ: Սուրիոյ հասարակութեան կողմէ այս համաձայնութիւնը գնահատուեցաւ, որով կը նախատեսուէր Սուրիոյ անկախ տնտեսութեան կիրառում:

Խորհրդային Միութիւնը կը ցանկար աջակցիլ Սուրիոյ տնտեսական զարգացման եւ ընդառաջելով սուրիական կառավարութեան ցանկութիւններուն եւ սուրիական կառավարութեան հետ՝ համագործակցաբար առաջ պիտի տանէին ճանապարհային շինարարութեան, արդիւնաբերական ձեռնարկութիւններու, ոռոգման ձեւերու, երկաթուղայինի, հիտրո-էլեկտրակայաններու, հիւսիսային Սուրիոյ մէջ նոր յայտնաբերուած նաւթահողերու շահագործումը եւ այլ կառոյցներու շինարարութեան պահանջները<sup>64</sup>: Այս համագործակցութիւնը հաշտ աչքով չէր դիտուէր Սուրիոյ կարգ մը պետական շրջանակներու՝ կալուածատէրերու, «Մուսուլման եղբայրներու» եւ այլոց կողմէ: Առաւել կը կարծուէր, որ երկիրի անկայուն քաղաքական դրութիւնը եւ 1958 թ. Եգիպտոսի հետ միացումը հնարատրութիւններ պիտի չստեղծէին տնտեսութեան արագ զարգացման եւ լուրջ դժուարութեան առաջ պիտի դնէին երկիրի տնտեսութիւնը: Իսկ մշակուած տնտեսական զարգացման ծրագիրներու կենսագործումը պիտի դանդաղէր:

1 **Սարգսյան Ն. Ս.**, Սիրիայի սոցիալ-տնտեսական դրութիւնը ֆրանսիական մանդատային ռեժիմի տարիներին, էջ 85-86:  
2 **Կարապետյան, Ռ.** . Սիրիա-ամերիկյան յարաբերութիւնները (1967-1996), Երևան, 2000, էջ 16:  
3 **Սարգսյան Ն. Ս.**, նշ. աշխ., էջ 89:



Սակայն Սուրիա-Եգիպտոս միացումն անգամ արգելք չկրցաւ հանդիսանալ Սուրիա-Խորհրդային Միութիւն յարաբերութիւններուն: Ընդհակառակը, այդ օրերուն՝ 1961 թ., Դամասկոսի մէջ ստորագրուեցաւ համաձայնութիւն մը, որով Սուրիոյ մէջ ստեղծուեցան «գիւղատնտեսական գիտահետազօտական երեք կեդրոններ՝ Լաթաքիոյ, Բազաայի եւ Գամիշլիի մէջ»<sup>4</sup>:

Տնտեսութեան արագ զարգացման համար առաւել կարեւոր էր մասնագետ անձերու առկայութիւնը, որոնցմով կրնար գործը առաջընթաց արձանագրել: Առ այդ, տնտեսութեան զարգացման համար երկրէն ներս խորհրդային մասնագետներու կողքին իրաքական ընթացակարգի համար մասնագետներ կը պատրաստուին: Իրօք, խոշոր նուաճումներէն մէկը կը հանդիսանայ Եփրատի ամբարտակի կառուցումը, ուր Տապքա (Հալէպէն 150 քմ. հեռաւորութեան վրայ, Մեսքենէի եւ Բազաայի միջեւ) քաղաքին մէջ հիմը կը դրուի հիտրոկայանի առաջին հիմնաքարին, 1968 թ. Մարտի 6-ին<sup>5</sup>: Արաբ եւ օտար մասնագետներու եւ բանուորներու կողքին հայերը եւս կ'ունենան իրենց ներդրումը ամբարտակի կառուցման: Կարելի է հաստատել, որ մինչեւ վերջին տասնամեակներուն հայ բանուորներու եւ երկրաչափներու անուններ կը յիշատակուին:

Քառասունական թուականներուն Հայրենիք-Սփիւռք կապերը եւս սկսած էին նոր փուլ թեւակոխել 1944 թ. Փետրուարին վերստեղծուած հայկական ՍՍՀ արտաքին գործերու ժողովրդական կոմիսարիատի (1946 թ. Մարտ 15-էն՝ Նախարարութիւն) գործունեութեան շրջանակներու մէջ: Այդ գծով որոշակի աւանդ ներդրում կատարեց 1944 թ. Նոյեմբերին հիմնադրուած Արտասահմանեան երկիրներու հետ մշակութային կապի հայկական ընկերութիւնը (ԱՕԿՍ):

Բ. Աշխարհամարտէն ետք, 1945-1949 թթ., նոր ձեւ եւ բովանդակութիւն ստացաւ: Ներգաղթի կոմիտէի լուծարքէն ետք, 1949 թ., Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնները սահմանափակուեցան: Սակայն 1953 թ., Ստալինի մահէն ետք, անկասկած որ կացութիւնը պիտի փոխուէր:

Խրուշչովեան «Ձնհալի» շրջանին եւ անկէ ետք կապերը Սփիւռքի հետ աւելի գործնական, առարկայական դարձան: Սակայն Կ. Դալլաքեանի համաձայն, Հայրենիքը եւս կ'ապրէր խիստ մեկուսացման վիճակ եւ անհրաժեշտ էր դուրս գալ անկէ. «ԽՍՀՄ ինկած էր խիստ մեկուսացման վիճակի մէջ եւ հարկաւոր էր պատռել այդ մեկուսացուածութիւնը: "Ձնհալ"-ը վերաբերում էր նաեւ մեզ՝ հայերիս: Այդ շրջանը մենք կարողացանք ավելի լավ օգտագործել սփյուռքի հետ կապերի վերականգման եւ ընդլայնման համար: Մեր գործունեությունն այդ առումով սկսվեց Ջարոքյանի ԿԿ-ի առաջին քարտուղար դառնալով»<sup>6</sup>:

1957 թ. Շոկտեմբերին ԽՍՀԿԿ կենտկոմը որոշում կ'ընդունի սփյուռքահայերու

4 Նոյն տեղը, էջ 89-90:

5 Նոյն տեղը, էջ 87-89, 97:

6 «Իրավունք» պաշտօնաթերթ, թիւ 622, Մայիս 2002, Երևան, էջ 15:

շրջանին իրենց ազդեցութիւնը ուժեղացնելու ուղղութեամբ միջոցառումներ իրականացնելու մասին<sup>7</sup>, որուն համաձայն, ՀԿԿ կենտկոմը մշակած էր մանրամասն ծրագիր, ուր կը նախատեսուէր միջոցառումներ իրականացնել: Որպէս իրականացման անմիջական արդիւնք Մերձատր եւ Միջին Արեւելքի կարգ մը երկիրներու մէջ, ուր կը տիրէին քաղաքական-ընկերատնտեսական նպաստաւոր պայմաններ, ուղարկեցին հանրապետութեան մէջ շարք մը դերասանական խումբեր, երգի-պարի համոյթներ, մարզական խմբակներ, խմբավարներ, գիտնականներ, զբօսաշրջիկութեան խումբեր եւ այլն<sup>8</sup>:

2 Սեպտեմբեր 1956 թ., Անթիլիասի նորընտիր կաթողիկոսի ձեռնադրութեան օրերուն կը զուգահեյտէր Հալէպէն՝ առաջին խումբի երթը դէպի Հայրենիք:

1958 թ. Երեւանի համալսարան կ'ընդունուին արտասահմանեան առաջին ուսանողներ: 1959 թ. Մերձատր Արեւելք կը ժամանէ Թաթուլ Ալթունեանի երգի-պարի համոյթը: Իրենց համոյթներով հանդէս կու գան Պէրոյի եւ Հալէպի մէջ<sup>9</sup>: 1962 թ. սփյուռքահայ ուսուցիչներու առաջին խումբը կը հրաւիրուի Հայաստան: Կարեւորելով նշենք, որ 1953-1961 թթ. ուսումնառութեան համար արտօնուած էր միայն հնչակ կամ ռամկավար կուսակցութեանց գաղափարակիրներուն: Աւելի ուշ դաշնակցականներուն հնարաւորութիւն պիտի տրուէր մեկնելու: «1961 թ. կուսակցական համագումարում Յակով Ջարոքյանի ելույթի սփյուռքի վերաբերող մասում, խոսք էր գնում հնչակյանների, ռամկավարների եւ նույնիսկ դաշնակցության մասին»: «Վերջինիս մասին զեկուցողն ասում էր, որ մենք չենք կիսում դաշնակցության պարագլուխների գործունեությունը եւ քաղաքականությունը: Այսինքն՝ բացի պարագլուխներից, մնացածի համար ճանապարհը բաց էր»<sup>10</sup>:

1964 թ. Յունիսին կը հիմնադրուի Սփիւռքահայութեան հետ Մշակութային կապի կոմիտէն: Կոմիտէի հիմնական խնդիրներն էին՝ Հայրենիքի հետ սփյուռքահայութեան կապերու, առաջին հերթին՝ մշակութային կապերու հաստատումն ու ամրապնդումը, սփյուռքահայուն ծանօթացնել Հայրենիքի նուաճումները: Նպաստել հայապահպանման գործին՝ գիրքեր, մամուլ եւ այլն ուղարկելով:

Կոմիտէն բազմակողմանի օգնութիւն կը ցուցաբերէ Սփիւռքի համայնքներու կրթական կառոյցներուն եւ կազմակերպութիւններուն: 1964 թ. 21 երկիրներու, Սփիւռքահայերու 160 դպրոցներու հասցէներով կ'ուղարկէ մայրենի լեզուի, հայ

7 **Մեկիջութեան Ն. Ու.**, Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Երևան, 1985, էջ 361:

8 Նոյն տեղը:

9 «Գեղարդ», Ե. գիրք, Հալէպ, 1996, էջ 610-611:

10 «Իրավունք» պաշտօնաթերթ, թիւ 622, Մայիս 2002, Երևան:

11 Նոյն տեղը:



գրականութեան 10.000 դասագիրք, 1965 թ.՝ Ա.-Ը. կարգերու համար 48.500 դասագիրք<sup>12</sup>:

Սփիւռքի կոմիտէի ստեղծումը կարելի էր անկիւնադարձ էր համահայկական իմաստով: Անոր յառաջացման լուրը ջերմօրէն ողջունեցին թէ՛ Սփիւռքն ու թէ՛ Հայրենիքը: Գիրքերու, գոյքերու եւ մշակութային այլ իրերու առաքումը եղաւ ոչ միայն Հայրենիքէն, այլ Սփիւռքէն նաեւ<sup>13</sup>:

Բազմաթիւ սփիւռքահայ մտաւորականներու, հասարակական գործիչներու գործարար շրջաններու ներկայացուցիչներու եւ ուրիշներու այցելութիւնը Հայրենիք, Նոր զարթօնք էր միմեանց ճանաչման, ոգեշնչումին եւ վերածնունդին: Հայրենիք-Սփիւռք մերձեցման մէջ մեծ ներդրում ունեցան 1947 թ. սկսեալ Երեւանէն սփիւռքահայերու համար հաղորդուող՝ ամենօրեայ ռատիո-հաղորդումները<sup>14</sup>:

Ինչպէս նշեցինք, 1962 թ. սփիւռքահայ ուսուցիչներու առաջին խումբը կը հրաւիրուի Հայաստան: 1964 թ. արտասահմանէն Հայաստան կը հրաւիրուի պատանի դպրոցականներու առաջին խումբը, 1965 թ.՝ 100 երեխաներ, ընդ որում 20-ը՝ Սուրիայէն<sup>15</sup>: Իսկ 1966 թ. Օգոստոս-Սեպտեմբեր ամիսներուն, հինգերորդ անգամ, եօթը երկիրներէն, Սուրիայէն նաեւ, 29 սփիւռքահայ ուսուցիչներ եւ 30 օրով՝ սփիւռքահայ 80 երեխաներ այցելեցին Հայաստան<sup>16</sup>: Սփիւռքի կոմիտէի կողմէ որպէս հիւրեր Հայրենիք կը հրաւիրուին նաեւ հասարակական, մշակութային գործիչներ, գրողներ, լրագրողներ, որոնք վերադառնալէ ետք իրենց բանաւոր ու գրաւոր ելոյթներով Հայրենիքի գովքը հիւսեցին եւ խրախուսեցին սփիւռքահայ աշխատատեղերը սերտօրէն համախմբուիլ Խորհրդային Հայաստանի շուրջ: Բացի ստեղծուած հնարատրութիւններէն, կոմիտէի գործունեութեան մէջ առանձնայատուկ տեղ գրաւեց համայնքներու հայրենակցական, բարեգործական, բարեսիրական, մշակութային, եկեղեցական, մարզական ու երիտասարդական կազմակերպութիւններուն հետ մերձեցումը:

Սփիւռքի կոմիտէն իր գործունեութեամբ նպաստեց Հայրենիքէն ներս ուսումնառու սփիւռքահայ երիտասարդութեան համար տարուող աշխատանքներուն: 1962 թ. Խորհրդային Հայաստանի բուհերը տուին իրենց առաջին սփիւռքահայ շրջանաւարտները: Անոնք եկած էին արտասահմանի այլ երկիրներէն, որոնց կարգին նաեւ Սուրիայէն: «Սովետական Հայաստան» ամսագիրին համաձայն, 1958-1980 թթ. միայն Սուրիայէն ժամանած երիտասարդներու թիւը եղած է 324 ուսանող<sup>17</sup>: Սփիւռքահայ մասնագետներու հնարատրութիւն կը

<sup>12</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 41, թ. 36:

<sup>13</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 119, թ. 32:

<sup>14</sup> **Մելիքսեթյան Ն. Ու.**, Նշ. աշխ., էջ 377:

<sup>15</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 12, թ. 14:

<sup>16</sup> Նոյն տեղը, թ. 22:

<sup>17</sup> **Մելիքսեթյան Ն. Ու.**, Նշ. աշխ., էջ 428:

տրուէր Հայրենիքի մէջ 6-10 ամսուան ընթացքին կատարելագործուելու (վերապատրաստուիլ) որպէս «ստաժէորներ» կամ սորվելու ասպիրանտուրայի բաժանումը եւ ստանալ գիտական աստիճաններ: Գիտական կոչում ստացած առաջին սփիւռքահայը Հալեպէն բժիշկ Ռ. Ճեպեճեանն էր<sup>18</sup>:

Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւններու իրականացուող ճանապարհին յաճախ խոչընդոտներ կը յայտնուէին, որոնցմով կը թերագնահատուէր կոմիտէի գործունեութիւնը: Օրինակ՝ Հայրենիքէն ներս ուսուցիչներու վերաորակաւորման դասընթացքին ուսուցիչներու նշանակումը վստահուած էր Հալեպահայ ուսուցչաց միութեան: Վերջինս իր հայեցողութեամբ էր, որ Հայաստան կ'ուղարկէր հայ ուսուցիչը, ինչ որ համայնքէն ներս կը ստեղծէր անախորժութիւններ: Սփիւռքի կոմիտէի նախագահի տեղակալ Ա. Մարտիրոսեան հետեւեալը կը գրէ. «Յավալի է ձեզանից իմանալ, որ Հայաստան հրավիրվող սփյուռքահայ ուսուցիչների ընտրությունը երբեմն կատարվում է քմահաճորէն: Մեր նպատակն է, ամեն տարի հետեւվողականորեն Հայաստան հրավիրել սփյուռքահայ ուսուցիչներ և կարծում ենք, որ հերթը կհասնի բոլորին, մասնավանդ նրանց, ովքեր նրանց երկարամյա փորձով և հմտությամբ արժանի են դարձել մանկավարժի բարձր կոչմանը»<sup>19</sup>:

Սփիւռքահայ մշակութային կոմիտէի ստեղծումէն մէկ տարի անց, ներգաղթի օրերուն կը զուգահիւսէր եղեռնի յիսնամեակը:

Հայրենիք-Սփիւռք փոխ համագործակցութիւնը ոչ միայն նպաստեց հայկական հատուածի բարեկամական եւ բոլոր ոլորտներու բարգաւաճման, այլեւ հայ-արաբ կապերու զարգացման, մասնաւանդ մշակոյթի բնագաւառէն ներս:

Անկասկած հայ-արաբական մշակութային կապերը, անմիջապէս չթեւակոխեցին զարգացման ուղին: Տարագիր հայերու շփումը տեղացիներուն հետ համեմատաբար հազուադէպ էր: Սփիւռքի մէջ հայերը որդեգրեցին «գոց շրջապատ»-ի քաղաքականութիւնը սեփական գոյութիւնը պահպանելու համար:

Նախօրօք նշած էինք, որ 1944 թ. Յուլիսին Խորհրդային Միութեան եւ Սուրիոյ ու Լիբանանի միջեւ հաստատուած էր դիւանագիտական յարաբերութիւններ: Նոյն թուականներուն արդէն Սուրիոյ եւ Լիբանանի հայ աշխատատեղերու կողմէ կազմակերպուած էր «Սովետական Հայաստանի բարեկամներու ընկերութիւն»: Երեւանի մէջ հիմնադրուած էր «Արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերութիւնը», որ պիտի նպաստէր ոչ միայն սփիւռքահայութեան եւ Հայրենիքի յարաբերութիւններու սերտացման, այլեւ Սուրիոյ եւ Լիբանանի հետ Խորհրդային Հայաստանի մշակութային կապերու սաղմնաւորման: Այդ ընկերութիւններու միջոցառումներու ընթացքին, նւիրուած Խորհրդային Հայաստանի տարեդարձներու եւ համահայկական փառա-

<sup>18</sup> Նոյն տեղը, էջ 430:

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 303, թ. 1:



տուններուն, արաբ քաղաքական գործիչներու ներկայութիւնը ինքնին փաստ էր հայ-արաբ մշակութային կապերու ծնունդին, Սուրիոյ եւ Խորհրդային Հայաստանի միջեւ յարաբերութիւններու առաւել սերտացման, որ խթան հանդիսացաւ 1946-1948 թթ. տասնեակ հազարաւոր հայերու զանգուածային հայրենադարձութեան:

Սակայն 40-ական թուականներու աւարտին Սուրիոյ եւ Լիբանանի մէջ ստեղծուած ներքաղաքական իրավիճակը պիտի չթոյլատրէր մշակութային կապերու զարգացման: Բացի այդ, կ'արգիլուին բարեկամութեան եւ մշակութային կապի ընկերութիւնները:

Յիսունական թուականներու երկրորդ կիսուն հայ-արաբական մշակութային բնագաւառէն ներս շրջադարձ տեղի կ'ունենայ եւ յարաբերութիւնները վերագարթօնը կ'ապրին 1959-էն սկսեալ:

16 Նոյեմբեր 1955 թ., Դամասկոսի մէջ կը կնքուի առետրական եւ վճարման համաձայնագիր: 1956 թ. Խորհրդային Միութիւն կ'այցելեն Սուրիոյ մեծ ընկերութիւններու քանի մը ներկայացուցիչներ: Նոյն թուականին պաշտօնական այցով կը ժամանէ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան նախագահ Շիքրի Քուաթլին: Սուրիոյ նախագահի այցելութիւնը Խորհրդային Միութիւն նոր դրսեւորում մըն էր երկու երկիրներու միջեւ ամրացող բարեկամութեան, ինչ որ պիտի նպաստէր Սուրիա-Խորհրդային Հայաստան մշակութային մերձեցումին: 1959 թ. սկիզբը, Խորհրդային Հայաստանի մշակոյթի ու գիտութեան խումբ մը աշխատակիցներ, որոնց կարգին՝ Նաեւ դերասաններ, ակադեմիկոսներ եւ գրողներ հանդէս կու գան դիմումով մը, որ կը բխէր երկու երկիրներու միջեւ բարեկամութեան եւ մշակութային կապի ընկերութեան հայկական բաժանմունքի ստեղծման կարեւորութեան: Պետական համալսարանի արեւելագիտական բաժանմունքէն ներս զարկ կը տրուի արաբագիտական մասնագետներ պատրաստելու աշխատանքին:

Հայ եւ արաբ ժողովուրդներու մշակութային կապերու զարգացման եռանդուն մասնակցութիւնը բերաւ ԽՍՀՄ-ի Գիտութիւններու Ակադեմիայի՝ 1958 թ. ստեղծուած արեւելագիտական «սեկտորը», որ 1971 թ.-էն ետք կը վերակազմուի ինստիտուտի: 1963 թ., Հայաստանի բուհերը աւարտելէ ետք Սուրիա եւ Լիբանան կը դառնան մասնագետներու առաջին խումբը: Սուրիոյ Եագուպիէ գիտաբարդաբէն Գ. Քասիս աւարտելէ ետք կ'անդրադառնայ իր յետագայ ծրագիրներու մասին, ուր շեշտը կը դնէ նպաստելու Սուրիոյ մէջ հայ-արաբ կապերու մերձեցման եւ ամրապնդման<sup>20</sup>:

1956 թ. Սեպտեմբերին, Դամասկոսի Միջազգային տօնավաճառին Խորհրդային Միութեան մասնակցութիւնը առաւել փայլք կու տայ մշակութային յարաբերութիւններուն: 1965 թ. Սուրիոյ մշակոյթի նախարարի կողմէ ջերմ ընդու-

20 **Նաջարյան Ե. Ն.**, Հայ-արաբական մշակութային կապերը, էջ 382, 385:

նելութեան կ'արժանանայ նկարչուի Ա. Կալենցի այցելութիւնը: 1966 թ. Խորհրդային Հայաստանի մշակոյթի նախարարի՝ Յ. Պաղտասարեանի գլխաւորած խումբը Հալէպի մէջ 12 ներկայացումներ կ'ունենայ, Դամասկոսի մէջ՝ մէկ: Տեղական մամուլի թատերական քննադատներ եւ արուեստի գործիչներ բարձր կը գնահատեն թատրոնի ղեկավարներու գեղարուեստական վարպետութիւնը<sup>21</sup>:

Եւ վերջապէս Նիզար Խալիլի<sup>22</sup> պաշտօնական այցը Խորհրդային Հայաստան, հարազատ դրսեւորումն էր հայ-արաբ մշակութային կապի դրսեւորման: Հայ-արաբ գրական կապերու զարգացումը նոր փուլ թեւակոխեց: 1969 թ., Հայաստանի մէջ մեծ շուքով կազմակերպուեցան «ՍՈՒՐԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԵՐ»: Սուրիական պատուիրակութիւնը, բաղկացած քաղաքական եւ մշակութային գործիչներէ, Երեւան կը ժամանէ: Հանդիսութեան ընթացքին Խորհրդային Հայաստանի մշակոյթի նախարարի տեղակալ՝ Գ. Բորեան կ'անդրադառնայ հայ-արաբական քաղաքական, տնտեսական եւ մշակութային կապերու դարաւոր պատմութեան:

Հուսկ, վաթսունական թուականներու վերջը հայ-արաբ մշակութային կապերու առաւել ամրապնդման միտումով եւ հայ ժողովուրդի դարաւոր պատմութիւնը արաբական աշխարհի ծանօթացնելու նկատառումներով ՀԲԸՄ-ի մատենագիտական յանձնախումբի կողմէ խնդրագիր նամակ մը կ'առաջուի Երեւան հայ-արաբ մշակութային կապի եւ բարեկամութեան կոմիտէի նախագահ Ս. Ալաճաճեանի եւ Գիտութիւններու ակադեմիայի պատմութեան ինստիտուտին: Պաշտօնական նամակը դրուատանքով կը խօսէր արաբ ժողովուրդի որդեգրած եղբայրական կեցուածքին՝ հայ գաղթականներու բնակեցման խնդրով եւ կը խնդրէ բովանդակալից յօդուածով անդրադառնալ երկու ժողովուրդներու դարաւոր սիրալիք փոխյարաբերութեան տարբեր բնագաւառներուն:

Յետագայ տարիներուն, 1970-ական թուականներէն ետք, հետզհետէ առաջընթաց պիտի արձանագրէր հայ-արաբ մշակութային կապերը եւ պիտի նպաստէր գեղարուեստական թարգանսութեան զարթոնումին, թատրոնի, երաժշտութեան եւ այլ բնագաւառներու մասնագիտացման եւ Հայրենիքի հետ կապերու ամրապնդման:

21 **Նաջարյան Ե. Ն.**, Նշ. աշխ., էջ 396-399:

22 Արաբ թարգմանիչ, հայագետ, մանկավարժ: Բարձրագոյն կրթութիւնը ստացած է Պէյրութ: 1943-1946 թուականներուն դասաւանդած է Հալէպի Նոր Գիւղ հայկական թաղամասի Զաւարեան վարժարանի մէջ որպէս արաբերէնի ուսուցիչ: Հայերէնի մէջ հմտացած է մանկավարժական աշխատանքի ընթացքին: Սուրիացի մտաւորական, Մովսէս Խորենացի շքանշանակիր, մեծ հայասեր, թարգմանիչ Նիզար Խալիլին ժամանած է Հայաստան Ապրիլ 2012 թ.:



# ՍՈՒՐԻԱՆԱՅԵՐՈՒ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ 1946-1970 թթ.



## ԵՐՐՈՐԴ ՉԼՈՒՄ



### ա. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ 1946-1948 ԹՈՒԱԿԱՆՆԵՐՈՒՄ

Բ. Աշխարհամարտի նախօրեակին Մերձատր Արեւելքի բոլոր երկիրներուն մէջ ապրող տեղաբնիկ ժողովուրդներու մօտ հասունցած էր օտար` ֆրանսական եւ անգլիական, մանդատային իշխանութիւնները թօթափելու եւ անկախանալու գաղափարը, որուն հետեւանքով տարածաշրջանի մէջ ստեղծուած էին անախորժութիւններ, յուզումներ: Տարածաշրջանի քաղաքական լարուած իրադրութիւնը, միջազգային տնտեսական տագնապը եւ ընկերային յարաբերութիւններու միջեւ ոչ հանդուրժողականութիւնը, որոնք ներգործող ազդակներ հանդիսացած էին Միջին Արեւելքի համայնքներու պառակտումին, հարցականներ ստեղծած էին շրջանի հայ համայնքներու մօտ: Հայ տարրը կը նկատէր, որ այդ պետութիւններու զինուորական ու վարչական կազմերու բացակայութիւնը արաբական երկիրներէն` հարցականի տակ կը դնէր հայոյ գոյատեւելու, չգոյատեւելու խնդիրը, որովհետեւ զանոնք կը համարէր պաշտպանող ուժ, յատկապէս Սուրիոյ եւ Լիբանանի մէջ: Հայկական շրջանակներուն մօտ հիմնատրուած այս մտայնութիւնը լուրջ մտահոգութեան առաջ կանգնեցուցած էր տեղի հայ համայնքի որոշ հատուածը, ինչ որ զիրենք պիտի մղէր դիմումներ յղելու Խորհրդային Հայաստանի ղեկավարութեան` ներգաղթ սկսելու առաջադրանքով:

Դէպի Խորհրդային Հայաստան ներգաղթ կազմակերպելու առաջադրանքը ի գործ դրուեցաւ նաեւ, երբ Բ. Աշխարհամարտի տարիներուն վատթարացած



էին խորհրդա-թրքական յարաբերությունները, եւ այդ նպաստաւոր պայմաններ ստեղծեցին հայկական հարցի վերարծարծման: Արդէն 1942 թ. Սփիւռքի մէջ ձեւատրուած եւ տարածուած էր «ազգային ուժերու միասնութեան» գաղափարը: «1943-ին դրական տեղաշարժ էր նկատվել (Սփիւռքի) կազմակերպությունների և կուսակցությունների քաղաքական վարքագծում»: Ծնունդ առած էր «Ամերիկայի Ազգային Խորհուրդ»-ը, որուն նպատակն էր համերաշխութիւն եւ համագործակցութիւն ստեղծել համայնքէն ներս, ինչպէս նաեւ աշխատիլ հայ ժողովուրդի գերագոյն շահերու պաշտպանութեան համար: Խորհուրդներ կազմուած էին նաեւ Սփիւռքի տարբեր համայնքներէն ներս<sup>1</sup>:

Շտետողական աշխատանքներու շնորհիւ, 1945 թ. Յուլիս 17-ին Պեռլինի Պոստոյաւ քաղաքին մէջ կայացած խորհրդաժողովին, մեծ տերութիւններու կողմէ առաջին անգամ ըլլալով կը քննարկուի «տարածքային պահանջատիրութեան հարցը»: Պետք է խոստովանիլ, որ խորհրդաժողովի ղեկավարները տարածքային հարցով յաջողութիւն չարձանագրեցին, սակայն տարածքային հարցը երկու պետութիւններու (Թուրքիա-ԽՍՀՄ) քննարկման շրջանակներէն դուրս գալով յայտնուեցաւ: Մեծ պետութիւններու բանակցային սեղանին<sup>2</sup>:

Հայրենաբաղձ սփիւռքահայը եւ տոգորուած էր ջերմ հայրենասիրութեամբ, եւ տակաւին անոր մէջ վառ էր վերադարձի տենչը դէպի պապենական հողեր, դէպի բռնագրաւուած տարածքներ<sup>3</sup>: Շտետաբար, չէր ուզեր, չուզէր ըմբռնել եւ իրապաշտօրէն տեսնել տակաւին պատերազմէն նոր դուրս եկող Հայրենիքի մռայլ պատկերը, որ ան ի վիճակի չէր զինք հիւրընկալելու, որովհետեւ Հայրենիքը կանգնած էր բազմապիսի խոչընդոտներուն առջեւ: Այս մասին անդրադարձած է նաեւ փրոֆ. Աշոտ Աբրահամեան 10 Մայիս 1951 թ. Անթիլիաս այցելութեան ընթացքին, ուր որդունել էտք ներկաները անոնց տեղեկացուցած է 1946-1947 թթ. ներգաղթողներու կեանքի մասին: Ան հայրենադարձութեան երեւոյթը համարած է բացառիկ եւ գնահատած է հայրենադարձներու տարած աշխատանքը՝ ըսելով. «Ոչ ոք կարող էր կասկածիլ, որ ներգաղթող մեր հայրենակիցները չգիտէին մեր տնտեսական դժուարութիւնները: Նրանք գիտէին, որ

1 Մելքոնյան Բ., ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները. հայկական հարցը, Սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947) Երևան, 2013, էջ 152:

2 Մելքոնյան Բ., նշ. աշխ. էջ 152-154:

3 Մելքոնյան Բ., նշ. աշխ., էջ 64-71, 81:

4 Այս մասին արտայայտուած է Մելքոնյան Է. իր «1946-1948 թթ. Հայրենադարձությունը եւ դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» յօդուածին մէջ. «Համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու», Երևան, 2008 թ., էջ 22, ուր կը գրէ. «Սփյուռքի հայության ձգտումը՝ ներգաղթել խորհրդային Հայաստան սպասելի էր: 1921-1936 թթ. ավելի քան 40 հազ. գաղթական հայեր կամավոր ներգաղթել էին խորհրդային Հայաստան, նրանց թիվը կլինէր ավելի մեծ. եթէ 1937 թ. խորհրդային Միությունը չիսկզբ բոլոր հարաբերությունները հայ սփյուռքի հետ»:

դեռ չէն սպիացել պատերազմի պատճառով ստացած վերքերը: Ամբողջովին դեռ չէն յաղթահարել տնտեսական դժուարութիւնները, եւ գնում են Հայրենիք իրենց քրտինքը խառնելու իրենց եղբայրներին եւ քոյրերին...»<sup>5</sup>:

Սակայն ցանկացողներու կողքին կային ոմանք, որոնք ոչ թէ չէին մտածեր դուրս գալ իրենց երկրորդ հայրենիքէն՝ Սուրիայէն, այլ կառչած էին այդ հողին, հակառակ այնտեղ տիրող քաղաքական փոփոխութիւններուն:

Հայաստանի մէջ խորհրդային իշխանութեան հաստատման քսանհինգամեակին առթիւ, խորհրդային Միութեան ժողովրդական Կոմիսարներու խորհուրդը 21 Նոյեմբեր 1945 թ. սփիւռքահայութեան ներգաղթը խորհրդային Հայաստան իրականացնելու մասին որոշում կայացուցած էր, համաձայն տասնեակ սփիւռքահայերու խնդրանքին, որոնց բաղձանքի մասին հայրենի ղեկավարութեան կողմէ բազմիցս նամակներ առաքուած էին խորհրդային Միութեան ղեկավարներուն, յատկապէս Ստալինին, սակայն անհետեւանք մնացած էին: Արդարեւ, հայրենի ղեկավարութեան կողմէ խնդիրի հետապնդումին շնորհիւ եւ խորհրդային իշխանութեան կողմէ կատարուած բանակցութիւններու արդիւնք էր «Արտասահմանի հայերու ներգաղթ» սկսելու որոշումը<sup>6</sup>, որ կը բովանդակէր.

«1- Նկատի առնելով արտասահմանում ապրող հայերի դիմումները հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու թոյլտվության մասին եւ Հայաստանի ՍՍՀ ղեկավար մարմինների միջնորդությունը, թոյլատրել ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարների խորհրդին կազմակերպել արտասահմանյան երկրներում ապրող հայերի վերադարձը Հայրենիք, որոնք այդ մասին ցանկություն են հայտնել:

2- Ընդունել Սովետական Հայաստանի կառավարության առաջարկությունը՝ Հայաստանի ժողովրդի հին առընթեր արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման եւ տեղավորման կոմիտե ստեղծելու մասին:

3- Հանձնարարել Սովետական Հայաստանի ժողովրդի հին արտասահմանից Հայրենիք վերադարձող հայերի բնակարանային անհատական շինարարությունն ապահովել պետական վարկով՝ տան արժեքի 50% չափով:

4-Արտասահմանից ՍՍՀՄ վերադարձող հայ քաղաքացիներին ազատել մաքսային տուրքերից՝ իրենց պատկանող եւ բնակության նոր վայր տեղափոխվող գույքին համար»:

5 «Հասկ», ամսագիր, Ի. տարի, թիւ 5, Մայիս 1951, Լիբանան, էջ 161:

6 Վիրապյան Ա., «1946-1948 թթ. Մեծ հայրենադարձությունը. հիմնահարցեր եւ հիմնախնդիրներ», «1946-1948 թթ. Հայրենադարձությունը եւ դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր», համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Երևան, 2008 թ., էջ 9-11:

7 Մելքոնյան Է. Լ., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան,



Այդ որոշման համաձայն, Հայաստանի նախարարներու խորհուրդը եւ Հայաստանի կոմունիստական կուսակցութեան կեդրոնական կոմիտէն 1946 թ. ծրագրած էին հայրենադարձութիւնը կատարել վեց երկիրներէ՝ Սուրիա, Լիբանան, Իրան, Յունաստան, Պոլկարիա եւ Ռումինիա, շուրջ 30-35 հազար մարդ: Սակայն հաշտի առնելով Իրանի, Սուրիոյ, Լիբանանի եւ Յունաստանի հայութեան դժուարին կացութիւնը, 1946 թ. Մայիսի 10-ին ՀՍՍՀ նախարարներու խորհուրդի լրացուցիչ որոշումով հարկ կը համարուի ընդունիլ յաւելեալ թիւով Սփիւռքահայեր եւ այդ առնչութեամբ մշակել ճշգրիտ միջոցառումներ<sup>8</sup>: 1947 թ. Փետրուար 27-ի կ'որոշուի ընդունիլ 63 հազար մարդ, իսկ 1947 թ. Դեկտեմբեր 10-ի որոշումով, 1948 թ.՝ 10 հազար մարդ<sup>9</sup>:

1945 թ. Դեկտեմբեր 8-ին կը ստեղծուի արտասահմանէն ներգաղթող հայերու ընդունման եւ տեղաւորման կոմիտէ: Շուտով կը մշակուի ու կը հաստատուի ՀՍՍՀ ժողկոմխորհի ընդունուած հայրենադարձութեան կանոնադրութիւնը եւ կ'առաքուի արտասահման<sup>10</sup>:

25 Դեկտեմբեր 1945 թ. կոմիտէի պաշտօնական հաղորդագրութեամբ Լիբանանի Հայաստանի Բարեկամներու միութեան նախագահ Ն. Տէվէճեանին կը հրահանգուի՝

-Ստեղծել Սուրիոյ եւ Լիբանանի մէջ ապրող հայերու՝ Հայրենիք վերադառնալու գործի կազմակերպման կոմիտէ, որ իր վրայ պիտի վերցնէ Հայրենիք վերադարձող հայութեան նիւթական ապահովութեան կազմակերպման հետ կապուած բոլոր հարցերու լուծումը: Այդ կոմիտէն փաստօրէն պէտք է գործէ, որպէս ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարներու խորհուրդի կից արտասահմանէն ներգաղթող հայերու ընդունման եւ տեղաւորման կոմիտէ՝ տեղական մարմինի իրաւունքով:

-Գաղութահայութեան տեղեկացնել խորհրդային Միութեան եւ խորհրդային Հայաստանի կառավարութեան որոշումները:

-Հայրենաբաղձ հայերու՝ Հայրենիք վերադառնալու գործի կազմակերպման ու արագացման համար ստեղծուին տեղական կոմիտէներ, որոնք նոյնպէս

2005, էջ 360-361: «Հասկ», ԺԵ. տարի, թիւ 2, Փետրուար 1946, Լիբանան, էջ 60:

8 «كشيشيان الكسندر، صفحات وثائقية من جريدة «التقدم» الحليمية عن الأحوال الأرمينية والعربية في الدولة العثمانية والبلاد الشامية، حلب، 1997، ص 191-192»

Տես նաեւ՝ **Մելիքսեթյան Ն. Ու.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձություն, Երևան, 1985, էջ 80: Սարգսյան Ն., 244 գործունեությունը սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման և նրանց սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղղությամբ (1946-1948), «Լրաբեր հասարակական գիտությունների», N 8, 1983, Երևան, էջ 13-14: Տես **Հարությունյան Գ.**, Կյանքը և գործունեությունը, Երևան, 2000, էջ 119:

9 **Հարությունյան Գ.** Կյանքը և գործունեությունը, էջ 121:

10 «Բանբեր Հայաստանի արխիվների», թիւ 2, 1963, Երևան, էջ 62: Տես նաեւ **Մելիքսեթյան Ն. Ու.**, Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձություն, էջ 178:

իրենց վրայ պիտի վերցնեն Հայաստան վերադարձող հայութեան նիւթական ապահովութիւնը:

-Ձեռնարկել ցուցակագրման աշխատանքներուն եւ ըստ կարելոյն կարճ ժամանակամիջոցի ընթացքին:

-Ներգաղթի կոմիտէն կը թելադրէ արտասահմանի բարեգործական միութիւններուն՝ իրենց ամբողջ գործունեութիւնը կեդրոնացնել ներգաղթի գործին, ապահովելու մեկնողներու նիւթական կարիքները:

-Նպատակայարմար է, որ ներգաղթի կազմակերպման տեղական կոմիտէն գլխատրեն համայնքի հայկական բոլոր առաջդիմական կազմակերպութեան ղեկավարները, որոնք ֆաշիզմի դէմ մղուող պայքարի ընթացքին ցոյց տուին իրենց նուիրուածութիւնը Խ. հայրենիքին եւ կազմակերպչական կարողութիւնները, եւ հասցեն յայտնել մեզ<sup>11</sup>: Հաղորդագրութեան կ'ընկերանար նմուշ-հարցարան մը 12 հարցադրումներով եւ ներգաղթողներու մասին լրացուցիչ տեղեկություններով<sup>12</sup>:

1946 թ. Յունուարին Խորհրդային Հայաստանի ներգաղթի յանձնախումբը նամակ կ'ուղարկէ Լիբանանի Հայաստանի բարեկամներու ընկերակցութեան նախագահին՝ Ն. Տէվէճեանին, ուր կը հրահանգէր առանց յապաղումի սկսիլ Լիբանանի մէջ ներգաղթող հայերու արձանագրութիւնը: Ներգաղթ կազմակերպելու գծով, Յունուարի 31-ին նոյն բովանդակութեամբ նամակ մը կը ղրկուի Սուրիոյ Արաբական Հանրապետութեան ներգաղթող հայերու ընդունման եւ տեղաւորման կոմիտէին՝ Սուրիոյ բոլոր շրջաններուն մէջ, ուր կ'ըսուէր. «ուրախութեամբ կը հաղորդենք ձեզի, թէ Հալէպի Ս(Խ)ԶԲ վարչութիւնը լիազօրուած է կազմակերպել ներգաղթի կազմակերպման տեղական կոմիտէ, ինչպէս Լիբանանի մէջ, սկսիլ Հալէպի եւ շրջաններու մէջ, մէջն ըլլալով ձեզիդէի շրջանի, ներգաղթող հայերու արձանագրութիւնը»<sup>13</sup>:

19 Յունուար 1946 թ. Նորին Վեհափառութիւն Ս. Տ. Գեորգ Զ. կաթողիկոս նամակ կ'ուղղէ Անթիլիաս Գարեգին Ա.-ին, ուր գրուած է. «Բ. ներգաղթի առթիւ Արտասահմանի թեմերին ուղարկուած շրջաբերականի մի օրինակը, որպէսզի տնօրինէք նոյնպիսի կազմակերպութիւն ստեղծել ձեր թեմերում»<sup>14</sup>: Իսկ 13 Փետրուար 1946 թ. շրջաբերական հեռագիրով պաշտօնապէս կը տեղեկացնէր խորհրդային Ռուսաստանի կառավարութեան 21 Նոյեմբեր 1945 թ. արտա-

11 Թեմայի վերաբերեալ տես, էջ 4376, 19 Յունուար 1946, Պէյրութ: «Ազգակ շաբաթօրեակ», թիւ 100, 1 Փետրուար 1946, Պէյրութ: «Արեւելք» տարեգիրք, 1948, Հալէպ, էջ 37-38: «Եփրատ» օրաթերթ, թիւ 2543, 20 Յունուար 1946, Հալէպ: **Մելիքսեթյան Ն. Ու.**, Նշ. աշխ., էջ 180:

12 «Արեւելք» տարեգիրք, 1948, էջ 37-38: Նաեւ՝ «Եփրատ», թիւ 2557, 16 Փետրուար 1946, Հալէպ:

13 «Եփրատ», թիւ 2545, 2 Փետրուար 1946; թիւ 2547 5 Փետրուար 1946, Հալէպ:

14 «Հասկ», ԺԵ. տարի, թիւ 3, Մարտ 1946, Լիբանան, էջ 82:



սահման բնակող եւ հայրենիք վերադառնալ ցանկացող հայերուն որոշումին եւ Խորհրդային Ռուսաստանի կողմէ հրապարակուած արտօնութիւններուն մասին: Կը տեղեկացնէ նաեւ, որ «չայաստանի Խորհրդային կառավարութիւնը ներգաղթը կազմակերպելու համար նշանակած է մասնաւոր յանձնախումբ (կամ կոմիտէ): Յանձնախումբը Լիբանանի իր ներկայացուցիչին կը հրահանգէ անյապաղ գործի ձեռնարկել՝ կազմելու ներգաղթի յանձնախումբ մը արտասահման գործող հայկական բոլոր յառաջդիմական եւ բարեգործական կազմակերպութիւններու ղեկավար անձերէն, ստանձնելու ներգաղթի հետ կապ ունեցող բոլոր խնդիրներուն լուծումը: Լիբանանի յանձնախումբը ենթակայ պիտի ըլլայ Հայաստանի մէջ կազմուած վերոյիշեալ Կեդրոնական պետական յանձնախումբին, տեղական մարմիններու իրաւունքով»<sup>15</sup>: Եւ «Կը խնդրենք Ձեր լայն եւ ջերմ օժանդակութիւնը եւ ղեկավարութիւնը, գրով եւ գործով, Սիւրիոյ եւ Լիբանանի հայութեան ներգաղթը կազմակերպելու համար»<sup>16</sup>:

Վերոյիշեալ շրջաբերականները կը խօսին այն մասին, որ Հայաստանի ներգաղթի կոմիտէն կը փորձէր Սփիւռքի մէջ գործող թեմերը հեռու պահել ներգաղթի կազմակերպչական աշխատանքներէն եւ անոր փոխարէն գործը յանձնել իր կողմէ ճշդուած պատասխանատու անձերու: Հայ Եկեղեցին, որ իր տեղն ու դերը ունէր սփիւռքեան մեր իրականութեան մէջ, կը հեղինակագրուէր ներգաղթի գործը կազմակերպելու հովանաւորութենէն ու հնարաւորութենէն: Հայաստանի ներգաղթի կոմիտէն կը խուսափէր համագործակցիլ արտասահմանի հայութեան «կազմակերպեալ ազգային վարչութեանց» հետ, ուղղակի իր կողմէ տեղական կոմիտէներ կը յառաջացնէ՝ անկախ կաթողիկոսարանէն եւ ազգային թեմական վարչութենէն<sup>17</sup>:

Արդ, կարելի է եզրակացնել, որ Հայաստանի ղեկավարութիւնը չէր ուզեր գործ ունենալ դաշնակցական ղեկավարներու հետ, որոնց ոչ մէկ պարտականութիւն վերագրուած էր, այլ գործը յանձնուած էր առաջդիմական (ինչպէս, ռամկավար եւ համայնավար) մարմիններուն (կառոյցներուն):

Համայնքի ձեւաւորման օրերուն, գերազնահատելի եղած է ազգային, միութենական եւ յարանուանական համատեղ գործակցութիւնը՝ անկախ դաւանանքի ու գաղափարախօսութեան, որովհետեւ անոնց հիմնական մտահոգութիւնը եղած էր առաջին հերթին հայ բեկորներու կսկիծը ամոքելու համար անոնց օժանդակել՝ պատսպարելու եւ աշխատանք տրամադրելու: Սակայն

15 «Հասկ», ԺԵ. տարի, թիւ 2, Փետրուար, 1946, Լիբանան, էջ 60: «Եփրատ», թիւ 2545; թիւ 2547, Հալէպ:

16 **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ 1914-1972, Արթիլիաս, 1975, էջ 607:

17 **Եղիայեան Բ.**, նշ. աշխ., էջ 608:

քսանական թուականներու վերջը եւ երեսունական թուականներուն տիրող միջազգային իրավիճակը իր անդրադարձը պիտի ունենար համայնքի կեանքէն ներս եւ արեւի ուշ պիտի յանգէր լարուած պայքարի՝ խաթարելով նաեւ համայնքի դիմագիծը:

1946 թ. առաջին կէսը կ'անցնի լարուած նախապատրաստական աշխատանքներով: Կենտկոմի քարտուղար Գ. Յարութիւնեան երեք անգամ կը դիմէ Մոսկուա՝ գործնականօրէն անհրաժեշտ օգնութիւն հայցելու: Եւ 1946 թ. Փետրուարին կը քննարկուի ծրագիրը: 1946 թ. Փետրուար 22-ին եւ Յունիսի 21-ին ԽՍՀՄ Ժողովուրդի կ'ընդունի սփիւռքահայութեան ներգաղթի հետ կապուած գործնական միջոցառումներու մասին որոշումներ<sup>18</sup>:

Քաղաքական վերիվարումներու յորձանուտին մէջ ողջ սուրիահայ համայնքը կ'ապրի բարոյահոգեբանական մեծ վերելք: Խորհրդային Միութեան որոշումը հայրենադարձութեան թոյլտուութեան վերաբերեալ, տեղի հայերը կ'ընդունին մեծ ցնծութեամբ, որպէս պատմական իրողութիւն, որով պիտի բացուէր սփիւռքահայութեան ճանապարհը դէպի Հայրենիք եւ պիտի ձեռքազատէին փախստականի ու գաղթականի հոգեվիճակէն:

Տեղական մամուլն անգամ կ'արձագանգէ ներգաղթի վերսկսման յուսադրիչ լուրին: Տեղական «էլ Հաաստես» (դիպուածներ, արկածներ) թերթը իր թիւերէն մեկուն մէջ անդրադառնալով ներգաղթի խնդիրին ու հայերու պահաջներուն՝ կը յիշէ Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղարի Գ. Յարութիւնեանի ճառէն երկար հատուածներ: Պատմական ամփոփ ակնարկէ մը ետք, կը նշէ 25 տարիներէ ի վեր Հայաստանի մէջ իրագործուած նուաճումները եւ եւ կ'արդարացնէ Սփիւռքի հայութեան Հայրենիք վերադառնալու փափաքը<sup>19</sup>: Յարութիւնեան իր պատմական ճառով կ'ողջունէր ներգաղթի որոշումը եւ միաժամանակ մտահոգութիւն կը յայտնէր, որ Հայաստանը իր ներկայ տարածքով կրնար միայն ընդունիլ 350-400 հազար մարդ, մինչդեռ ցանկացողներու թիւը կը գերազանցէր 600 հազարը: Ուստի «Մնացած 500-600 հայերին ընդունելու համար, մենք հարց ենք դնում, որ Սովետական Հայաստանին վերադարձվեն Թուրքիայի կողմից զավթված հայկական մարզերը: Միայն այդ պայմանով մենք կկարողանանք ընդունել բոլոր ցանկացող հայերին: Իսկ նրանց մերժելու ոչ մի բարոյական իրավունք չունենք...»<sup>20</sup>:

ՀՍՍՀ Ժողովուրդի առընթեր արտասահմանէն ներգաղթող հայերու

18 د. الكسندر كشيبيان المصدر نفسه، ص. ٢١٢. Տե՛ս նաեւ **Հարութիւնեան Գ.**, Կյանքը և գործունեությունը, էջ 119: **Թովուգյան Ն. Խ.**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն, էջ 262:

19 «Եփրատ», թիւ 2602, 10 Ապրիլ 1946, Հալէպ:

20 **Մելքոնյան Է.**, նշ. աշխ., էջ 361:



ընդունման եւ տեղաւորման կոմիտէի հրահանգներու հիման վրայ շուտով Սուրիոյ եւ Լիբանանի ազգային խորհուրդը<sup>21</sup>, խորհրդակցաբար Սովետական Հայաստանի բարեկամներու միութեան հետ<sup>22</sup>, կը կազմէ Պէյրութի մէջ Սուրիոյ եւ Լիբանանի ներգաղթի կոմիտէ: Սուրիոյ մէջ ներգաղթի աշխատանքները իրագործելու եւ յաջող ընթացք ունենալու մտադրութեամբ Հալէպ կը ժամանէ իրաւաբան Ն. Սեդրակեան՝ լիազօր ներկայացուցիչ Սուրիոյ եւ Լիբանանի: Վերջինս ներգաղթի կոմիտէի, զանազան շրջանակներու եւ անձնաւորութեանց հետ խորհրդակցելէ ետք, 10 Փետրուար 1946 թ. կ'առաջացնէ Հալէպի եւ շրջաններու տեղական կոմիտէ: Այնուհետեւ՝ Դամասկոսի մէջ եւ ենթակոմիտէներ՝ Ըէզիրէի եւ Հոմսի մէջ<sup>23</sup>:

Պատմական այդ որոշումի հրապարակումէն ետք, համայնքէն ներս տեղի կ'ունենան «միթինկներ»: Ժողովներու ընթացքին ընտրուած կոմիտէները ձեռնամուխ կ'ըլլան հայրենադարձութեան կազմակերպման նախապատրաստական աշխատանքներուն: Կը սկսի Հայրենիք վերադառնալ ցանկացողներու ցուցակագրումը<sup>24</sup>: «Ցուցակագրումը անցնում է չտեսնված յաջողությամբ: Մի քանի ամսուա ընթացքում ցուցակագրվում են շուրջ 160 հազար մարդ: Կցուցակագրվեն բանվորներ, գյուղացիներ, արհեստավորներ, առևտրականներ, մտավորականներ և նույնիսկ որոշ թվով խոշոր ունեվորներ»<sup>25</sup>:

Տեղական կոմիտէներու նախապատրաստական աշխատանքներուն կը նպաստեն հպատակութեան փոփոխութեան, հանգանակիչ, արդիւնաբերական, կալուածական, առողջապահական, փոխադրական, գեղարուեստական եւ այլ յանձնախումբերու կողմէ տարուած քարոզչական աշխատանքները: Հազարաւոր ընտանիքներ կը դիմեն առաջին հերթին զիրենց ուղարկելու

21 1944 թ. Մարտ 19-ին ԱՄՆ-ի մէջ կը ստեղծուի Ամերիկահայ ազգային խորհուրդը՝ Առաջիկայի միութեան եւ Սոցիալ-Դեմոկրատ շնչակեան եւ Ռամկավար Ազատական կուսակցութեանց մասնակցութեամբ: Խորհուրդի նպատակն էր համերաշխութիւն եւ համագործակցութիւն ստեղծել եւ աշխատիլ հայ ժողովուրդի գերագոյն շահերու պաշտպանութեան համար: 1945 թ. Օգոստոս 31-ին Պէյրութի մէջ կը ստեղծուի Սուրիոյ եւ Լիբանանի հայ ազգային խորհուրդը: Իսկ 23 Սեպտեմբերին՝ Հալէպի մասնաճիւղը:  
22 Սովետական Հայաստանի բարեկամներու ընկերակցութիւնը հիմնուած է 1942 թ.: Բացի Հալէպէն՝ ան մասնաճիւղ ուներ նաեւ Դամասկոսի մէջ: Իր ստեղծումէն մինչեւ 1946 թ., ընդամենը չորս տարիներու ընթացքին ունեցաւ բեղուն գործունեութիւն: 14 Փետրուար 1946 թ.՝ 3 քոյր միութիւններու հետ միաձուլուելով, կը յառաջացնեն Սովետական Հայաստանի հետ մշակութային կապի ընկերակցութիւն: Տես **Ճեպեճեան Ռ.**, Ինքնակենսագրութիւն, յուշեր եւ գործունեութիւն, Հալէպ, 1999, էջ 224-227:  
23 **Մելիքսեթյան Ն. Ռ.**, նշ. աշխ., էջ 192-193:  
24 **د الكسندر كشيبيان المصدر نفسه**, ص 449:

Ցանկացողներու ցուցակագրման համար, ինչպէս Լիբանանի, այնպէս ալ Սուրիոյ հայաշատ բնակավայրերու մէջ կը բացուին ցուցակագրման բազմաթիւ գրասենեակներ: Միայն Հալէպի մէջ՝ 21 գրասենեակ: Տես «Եփրատ», թիւ 2555, 14 Փետրուար 1946, Հալէպ:  
25 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 149, թ. 17:

խնդրանքով: Կոմիտէն ցուցակագրուող անձերէն կը պահանջէր «ըջութիւն եւ փափկանկատութիւն այն ժողովուրդին հանդէպ, որ գրկաբաց ընդունեց հազարաւոր հայու բեկորներ»<sup>26</sup>: Դամասկոսի հայրենադարձութեան կոմիտէի նախագահ Ն. Գեորգեան, այսպէս կը ներկայացնէ այնտեղ տիրող երեւոյթը. «ամենամեծ դժուարութիւնը հայրենադարձութիւնը կազմակերպելու ժամանակ, մարդոց համոզելն է, որ անոնք համբերատար ըլլան եւ հանգիստ սպասեն իրենց հերթին՝ երթալու Խորհրդային Հայաստան: Համարեա բոլոր ցուցակագրուածները կը խնդրէին իրենց առաջին հերթին ուղարկել»: չետաքքիքի էր այն փաստը, որ ցուցակագրման աշխատանքներու ընթացքին կոմիտէն դիմումներ կը ստանար նաեւ ասորիներէ եւ արաբներէ, դէպի Խորհրդային Հայաստան տեղափոխուելու խնդրանքով<sup>27</sup>:

Սփիւռքահայութեան՝ դէպի Հայրենիք հայրենադարձութիւնը հնարաւորութիւն ընձեռեց Խորհրդային Հայաստանի մասին բազմակողմանի տեղեկութիւններ ունենալու եւ զանոնք տարածելու: Այս գծով կարեւոր դեր խաղացին Սփիւռքահայ բոլոր կազմակերպութիւններն ու մամուլը: Սփիւռքի բարեգործական հաստատութիւններու, կազմակերպութիւններու եւ միութիւններու նախաձեռնութեամբ, հայրենադարձութեան կապակցութեամբ լայն գործունեութիւն ծաւալեցաւ: Բայց զանգուածային ներգաղթի իրականացումը կը պահանջէր նիւթական հսկայական միջոցներ ու ջանքեր: Ուստի տեղին ու օրինական պիտի ըլլար մեծ նպատակ իրականացնելու համար օգտագործուէին բոլոր նիւթական միջոցներն ու աղբիւրները:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, ըլլալով սփիւռքահայ նիւթապէս ամենահարուստ կազմակերպութիւններէն, ՀՍՍՀ ժողկոմխորհի առընթեր ներգաղթի կոմիտէն 25 Դեկտեմբեր 1945 թ. պաշտօնական դիմում կը կատարէ ՀԲԸՄ-ի Նիւ Եորքի Կեդրոնական եւ Փարիզի Երոպական վարչութիւններուն եւ կ'առաջարկէր գործուն մասնակցութիւն ցուցաբերել զանգուածային հայրենադարձութեան իրականացման<sup>28</sup>: ՀԲԸՄ կեդրոնական վարչութեան նախագահ Արշակ Գարակեօզեան, որ 1942 թ. Մայիսի 20-ին, Փարիզի մէջ կայացած ժողովին ստանձնած էր ՀԲԸՄ-ի նախագահի պաշտօնը, կ'ողջունէ հայրենադարձութիւն վերսկսելու որոշումը եւ կը յայտնէ միութեան պատրաստակամութիւնը ներգաղթի աշխատանքներուն վերաբերեալ: Այս առնչութեամբ Բարեգործականի կեդրոնական վարչութեան ժողովի վարիչ-պատուիրակ Վ. Մալեզեան Սուրիոյ եւ Լիբանանի հայերու ներգաղթի կոմիտէի նախագահին

26 «Եփրատ», թիւ 2558, 17 Փետրուար 1946, Հալէպ:  
27 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 149, թ. 21, 17:  
28 «Եփրատ», թիւ 2609, 19 Ապրիլ 1946, Հալէպ: Տես նաեւ **Մելիքսեթյան Ն. Ռ.**, նշ. աշխ., էջ 207: «Հայաստանի կղնակ», թիւ 11, 16 Մարտ 1946, Նիւ Եորք, էջ 256:



ուղղած 8 Մարտ 1946 թուակիր նամակով կը տեղեկացնէ, որ ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութիւնը ստանձնած է՝

«-հոգալ ներգաղթողներու ճանապարհածախսը. եւ Հայրենիք վերադառնալէն ետք սկզբնական շրջանին պետքերը:

-օգնել ներգաղթողներու կարիքատր ընտանիքներու բնակարանի շինութեան:

-տրամադրել արդիւնաբերական, հիւանդանոցային եւ մանկական հիմնարկութիւններուն կահաւորումը, ինչպէս նաեւ հագուստ, կօշիկ եւ այլ նիւթեր»<sup>29</sup>:

ՀԲԸՄ-ը մէկ միլիոն տոլարի հանգանակութիւն սկսելու կոչ-շրջաբերականով հանդէս կու գայ ներգաղթի օգտին<sup>30</sup>:

ՀԲԸՄ-ը, համագործակցաբար ներգաղթի տեղական կոմիտէներուն եւ հովանաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ ՆՍՕՏՏ Գարեգին Ա. կաթողիկոսին, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ կը ձեռնարկէ համազգային հանգանակութեան. «Հայ Բարեգործական Ընդհ. Միութիւնը բարի և հայրենասիրական միտքն է յղացել մի միլիոն տոլարի հանգանակութիւն սկսել Սփիւռքի մէջ ներգաղթողների եղբայրական օգնութեան գործին: Կարգադրուած է իւր բոլոր ճիւղերին, որոնց թում և Լիբանանի ու Սիւրիոյ ճիւղերին, կազմակերպել այդ գործը...»: Շարունակելով՝ «...Մեր հայրական յորդորն է, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր Թեմերի մէջ նոյն նպատակով կատարուելիք հանգանակութիւնները հաւատալ Բարեգործականի ճիւղերին, որոնք ժողովրդական այլ և այլ խաւերի ներկայացուցիչների հետ յանձնախումբեր կազմելով, գործի կ'անցնին մեր Թեմերի մէջ»<sup>31</sup>:

Բերիոյ Ազգային առաջնորդարանի դահլիճէն ներս կը յառաջացնեն հանգանակիչ յանձնախումբ: Սակայն ներգաղթի Հալէպի կոմիտէին եւ հանգանակիչ մարմինին վերապահուած էր հանգանակելու իրաւունքը: Այլ խօսքով, անոնք ոչ միայն կը սահմանափակէին միութիւններու եւ կազմակերպութիւններու համագործակցութիւնը, այլեւ՝ դաշնակցականներու օժանդակութիւնը այս հարցին:

Ներգաղթել ցանկացողներուն ցուցակագրման առաջին երկու օրերուն Դամասկոս 1.800 հայ ընտանիքներէն շուրջ 1.000 կ'արձանագրուին: Իսկ Հալէպի շրջակայքը ապրող հայ ազգաբնակչութեան՝ 92 տոկոսը (15.500 ընտանիք, 75.000 մարդ): «Դէպի Երկիր» պարբերագիրքը, պատկերաւոր կը բնութագրէ

29 «Հասկ», ԺԵ. տարի, թիւ 3, Մարտ 1946, Լիբանան, էջ 95:

30 **Մելիքսեթյան Հ. Ու.**, Նշ. աշխ., էջ 208: Նաեւ՝ «Հայ ժողովուրդի պատմութիւն», ՀՀ ԳԱԱ իրատ., հ. 8, Երևան, 1970, էջ 251:

31 «Հասկ», ԺԵ. տարի, թիւ 6, Յունիս 1946, Լիբանան, էջ 166-167: «Պատճէն Հայրապետական կոնդակի», 1946, Յունիս 24:

եղելութիւնը<sup>32</sup>:

25 Փետրուարէն մինչեւ 2 Մարտ, Քեսապի մէջ սկիզբ կ'առնեն ներգաղթի ցուցակագրման աշխատանքները<sup>33</sup>: Փետրուար 26-ին պատուիրակութիւնը կը մեկնի Պապ, Մունպուճ եւ Ճարապլուս: Պապի հինգ ընտանիքները նախապէս արձանագրուած ըլլալով Հալէպի մէջ՝ պատուիրակութիւնը կ'անցնի Մունպուճ, ուր երկու օրուան ընթացքին կ'արձանագրուի 21 ընտանիք. այս շրջաններէն՝ շուրջ 260 ընտանիք<sup>34</sup>:

Մեծ էր ներգաղթելու ցանկութիւնը նաեւ Սուրիոյ արաբախօս Արամօ, Եագուպիէ, Ճըսր ալ-Շուդուր հայկական գիւղերու եւ հեռաւոր Գամիշլիի ու շրջակայքի քրտախօս գիւղերու հայ բնակչութեան:

Ճեզիրէն, որ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան հիւսիսային կողմը գտնուող կարբտրագոյն նահանգներէն կը համարուէր եւ սահմանակից՝ Թուրքիոյ եւ Իրաքի, իր մէջ կը պարփակէր մէկէ աւելի գաւառներ՝ Թէլ Քեօչէք, Այն Տիվար, Ամուտա, Արաբ Փունար, Այն Էլ Արուա, Ռաս Ռվ Այն, Տէր Ջօր, Հասիչէ, Գամիշլի, Տէրիք, Տէրպէսիէ, որոնցմէ ամէնէն բազմամարդը կը նկատուէր Գամիշլին: Իր շուրջ ունէր 25-30 հայկական գիւղեր՝ ծխական դպրոցներով: Հայրենիք վերադարձի կոչը իրաւանց հասած էր նաեւ հեռաւոր այս ափերը ու մեծ խանդավառութիւն ստեղծած:

Սուրիոյ եւ Լիբանանի մէջ ներգաղթողներու առնչուող նախապատրաստական աշխատանքները գործնական կը դառնան եւ առաւել կազմակերպուած հանդէս կու գան ՀՍՍՀ նախարարներու խորհուրդի ներկայացուցիչի, ՀՍՍՀ արդարադատութեան նախարարի՝ Գ. Նազարեանի Սուրիա ժամանումով: Ան Հալէպի, Դամասկոսի եւ Սուրիոյ այլ շրջաններու մէջ հանդէս կու գայ բազմաթիւ իրապարակային բանախօսութիւններով, զեկուցումներով եւ կը պատասխանէ իրեն ուղղուած հարցադրումներուն: Կ'աւետէ 1946 թ. Յունիս ամսուան, Սուրիայէն եւ Լիբանանէն իրականացուելիք հայրենադարձութեան մասին: Պր. Նազարեանին համաձայն, ցանկացող անձ կրնար Հայրենիք վերադառնալ անկախ դասակարգային նկատառումներէ եւ կը խոստանար կենսական անհրաժեշտ միջոցներով ապահովել հայրենադարձուող հայրենակիցներու կեանքը: Իր յորդորներու կողքին Նազարեան կը թելադրէր, որ ոչ ոք լքէ իր աշխատանքը, մինչեւ մեկնումի պահը: Ան կը շեշտէր կանխահաս կարգադրութենէ զգուշանալ եւ սպասել մեկնումի հաղորդման թուականը, որ պետք է հաղորդուէր մեկնումէն մէկ ամիս առաջ: Աւելին, թիրիմացութիւնները կանխելու համար կը

32 «Դէպի Երկիր», պարբերագիրք, թիւ 4-5, Ապրիլ 1946, Հալէպ, էջ 201: Նաեւ՝ **Մելիքսեթյան Հ. Ու.**, Նշ. աշխ., էջ 203-206:

33 «Եփրատ», թիւ 2579, 14 Մարտ 1946, Հալէպ:

34 «Եփրատ», թիւ 2580, 15 Մարտ 1946, Հալէպ:



թելադրել ստոյգ տեղեկությունները պաշտօնապես իմանալ միայն ներգաղթի կոմիտեի հաղորդմամբ<sup>35</sup>:

Պետք է նշել, որ Երեւանի կեդրոնական կոմիտեի լիազօր պատուիրակ Գ. Նազարեանի հիմնական առաքելությունն էր ուսումնասիրել տեղական պայմանները եւ ժողովուրդին գոյավիճակը, ներգաղթի առնչութեամբ, առ այդ կարգադրություններ նախաձեռնել, կապ հաստատել տեղական կառավարություններու հետ՝ դիրքացնելու ներգաղթողներու ինչքերու փոխադրման խնդիրը:

Գ. Նազարեան սփիւռքահայերու հայրենադարձութեան վերաբերեալ «Ճամբորդական հուշեր» իր յօդուածով հետաքրքիր փաստ կը նշէ տեղական իշխանութեանց եւ արաբ ազգաբնակչութեան կեցուածքին մասին. «Ինչ վերաբերում է տեղական իշխանությունների և արաբ ազգաբնակչության վերաբերմունքին դեպի հայերի գաղթը Հայաստան, պետք է ասել, որ ո՛չ իշխանությունները և ո՛չ էլ ազգաբնակչությունը բացարձակորէն արգելքներ չեն հարուցում: Նրանք գտնում են, որ հայերի Հայրենիք վերադառնալու ցանկությունը շատ բնական և արդարացի է, բայց մյուս կողմից նրանց անհանգստացնում է այն հանգամանքը, որ այնպիսի գործունյա և ձեռներեց մարդկանց մեկնելը երկրից, ինչպիսիք հայերն են, բացասաբար կ'ներգործի երկրի տնտեսական և մշակութային կյանքին վրա»<sup>36</sup>:

Այնուամենայնիւ, կանուխ ատենումը եւ ուշացած այցելությունը ոչինչ կրնար փոխել հազարաւոր հայրենակիցներու մեկնելու ցանկութենէն: «Կարծողներ կան, թէ դէպի Հայրենիք երթը տարագիր հայութեան, շատ դիրին գործ է եւ թէ Հայաստանի կառավարութեան կողմէ ըսուելիք «իրամեցէ՞ք» մը բաւական է ճամբայ հանելու կարաւաններու շարանը»<sup>37</sup>: Զանգուածային հայրենադարձութիւնը բազմաբովանդակ ձեռնակ մըն էր, հետեւաբար կը պահանջէր հսկայական աշխատանք եւ ժամանակ, ուստի պէտք էր համբերել:

Արդարեւ, Սփիւռքի տարածքին թրքական եաթաղանէն վերապրած ու Հայրենիքի կարօտով տոգորուած հայուն համար անսպասելի երազանք մըն էր, որ կ'իրականանար:

Ղեպի Հայրենիք «զանգուածային ներգաղթ»-ի յայտարարութիւնը, ցաւօք, ներգաղթի կոմիտեի կողմէ, բացայայտօրէն չկատարուեցաւ: Սփիւռքը «զանգուածային ներգաղթ»-ը բացատրեց Սփիւռքի ամբողջական տեղափոխումը դէպի Հայաստան: Սակայն հայրենիքի բառամթերքի մէջ «զանգուածային» կը բացատրուէր Սփիւռքի տարբեր շրջաններէ որոշ թիով հայերու մեկնումը

35 Նոյնը տեղը, թիւ 2586, 22 Մարտ 1946:

36 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 149, թ. 27-28: «Սովետական Հայաստան» ամսագիր, թիւ 14-15, 1946, Երևան, էջ 61:

37 «Եփրատ», թիւ 2592, 29 Ապրիլ 1946, Հալէպ:

Հայաստան: Զանգուածային բառի անիմացութիւնը պատճառ դարձաւ, որ սփիւռքահայութիւնը խուճապի մատնուի: Ներգաղթի արձանագրութեան եւ լրացուցիչ աշխատանքներու կողքին, մարդիկ, մղուած հայրենասիրութենէ, լքեցին իրենց միութենական եւ կուսակցական շարքերը: Իրարու յաջորդող հրաժարականներու շարան մը սկիզբ առաւ: Անոնց մեծ մասը տեղ գտած է ՌԱԿ-ի «Եփրատ» օրաթերթի 1946 թ. էջերուն մէջ: Հրաժարականներու հրապարակումը թէեւ անախորժ երեւոյթ կը ստեղծէր, բայց միաժամանակ ատով կ'ապացուցուէր, որ այս կամ այն կուսակցութիւնը ձախողած է իր առաքելութեան մէջ Սփիւռքի տարածքին:

Ինչպէս նախապէս նշած էինք, որ եւ Սփիւռքի, եւ Հայրենիքի պատասխանատուները լատենտեղեակ էին Հայրենիքէն ներս տիրող կացութեան եւ որ պատերազմէն տակափն նոր դուրս եկած Հայրենիքը անկարող էր գոհացնել հայրենադարձուող հայերու բոլոր պահանջները, իսկ կազմակերպումը թէեւ տարիներու երազանք էր, բայց եւ այնպէս կրնար բարիք դառնար հայրենիքին, իսկ պատուհաս՝ Սփիւռքին: Այս կը բացատրուէր անով, որ Սուրիոյ մէջ գործող հայ ասանդական կուսակցութիւնները տարբեր դիրքորոշումներով, քաղաքականօրէն տարբեր հարթակներու վրայ գտնուելով, հայրենադարձութեան հարցը կը մեկնաբանէին իրենց քաղաքական եւ գաղափարական համոզումներէն թելադրուած եւ ըստ այնմ քարոզչական աշխատանք կը վարէին:

Պատմագրութեան մէջ հնչակեաններն ու ռամկավարները անուանուեցան հայրենասէրներ, իսկ դաշնակցականները՝ հայրենադաւներ: Քաղաքական կուսակցութիւններու միջեւ յարաբերութիւններու սրման միջոց հանդիսացան մամուլը, տարբեր քաղաքական կուսակցութիւններէ որոշ անհատներ: «Անպատասխանատու, ամբոխային, պատահական քայլեր առնուեցան եւ Լիբանանի ու Սուրիոյ հազարաւոր հայեր տազնապի ու վնասի ենթարկուեցան: Շատեր ծախեցին ինչ որ ունէին, շատեր ձգեցին իրենց գործը, փակեցին իրենց խանութը, աղմուկէն տարուած, ու այսօր մատնուած են անձկութեան ու տազնապի: Չենք խօսիր այլեւս յարակից անախորժ ու անմիտ գրգռութեանց մասին, որոնք թունաւոր մթնոլորտ ստեղծեցին եւ եղբայր եղբօր դէմ հանեցին»<sup>38</sup>: Ոչ միայն եղբայր եղբօր, այլ՝ ընտանիքներու քայքայման<sup>39</sup>:

Այնուամենայնիւ, ներգաղթի տեղական կոմիտէն նախապատրաստական աշխատանքէ ետք, անմիջապէս լծուեցաւ քարոզչութեան: Կազմակերպեց գրական ասուլիսներ, դասախօսաշարքեր եւ յառաջացուց հայրենաբաղձ հանրու միութիւն:

Թէեւ դաշնակցականներու եւ համակիրներու արձանագրութիւնը այնքան

38 «Արեւելք», թիւ 51, 23 Օգոստոս 1946, Հալէպ:

39 «Արեւելք», թիւ 50, 22 Օգոստոս 1946, Հալէպ:



ալ բաղձալի չէր, բայց եւ այնպէս դաշնակցական որոշ հատուած եւս արձանագրուեցաւ՝ իմանալով որ Հայրենիք մեկնումը կրնար երազանք կամ իրակա-նութիւն մը ըլլալ: Անոնց, որոնց բախտ վիճակուեցաւ մեկնիլ Հայաստան, պատ-մութիւնը կը վկայէ, որ անոնք ենթարկուեցան զանազան դժուարութիւններու, նոյնիսկ հալածանքի եւ արքորի<sup>40</sup>:

Հայկական ՍՍՀ նախարարներու խորհուրդի յանձնարարութեամբ, 2 Յունիս 1946 թ., Երեւանէն Պէյրութ կը ժամանեն ներգաղթի կեդրոնական կոմիտէի լիազօր ներկայացուցիչներ՝ Ն. Յարութիւնեան, Քլիմով, Ն. Խաչատուրեան եւ Ն. Տէվէճեան՝ կազմակերպելու Լիբանանի եւ Սուրիոյ հայերու հայրենադարձու-թիւնը: Սուրիոյ ներկայացուցիչներ էին Ն. Յարութիւնեան եւ Ն. Խաչատուրեան:

Ներգաղթողներու Ա. կարաւանի ցուցակը պատրաստ էր: Կոմիտէի հաղոր-դած տեղեկութիւններուն համաձայն, Պէյրութէն պէտք էր մեկնէր 1.200, Դամաս-կոսէն՝ 500 մարդ:

20 Յունիս 1946 թ., Ա. կարաւանին մաս կազմելու Դամասկոսէն Պէյրութի կայարան կը ժամանէ 101 հայ ընտանիք (600 մարդ): Կը թելադրուէր շոգենաւ բարձրանալէ առաջ յանձնել ինքնութեան թուղթերն ու պարենատոմսերը:

23 Յունիս 1946 թ., Սուրիայէն եւ Լիբանանէն, «Թրանսիլվանիա» ռումանական փոխադրանաւով Հայրենիք կը մեկնի 1.802 մարդ: Պէյրութէն՝ 270 (1.268 մարդ) եւ Դամասկոսէն՝ 96 ընտանիք (534 մարդ), որոնց մէջ՝ 58 շինարար, 8 արդիւնա-բերութեան աշխատողներ եւ 56 արհեստատրներ:

Նախօրօք պայմանաւորուածութեան համաձայն, «Թրանսիլվանիա»-ի ժա-մանման թուական նախատեսուած էր Յունիս 20: «...արդէն չունիսի 20-ին Դամասկոսից բոլոր եկողները Բեյրութում էին: Բեյրութից եկողներին հավա-քեցին 22-ին, այսինքն՝ շոգենավը ուշացաւ 2 օր»<sup>41</sup>:

Ա. կարաւանի մեկնողներու հրաժեշտը կ'անցնի բարձր մակարդակով: ՆՍՕՏՏ Գարեգին Ա. վեհափառը, Խաղ արք. սրբազանի եւ վարդապետներու (Տ. Դեոնդ ծ. վրդ., Տ. Գնէլ եւ Տ. Տաճատ վարդապետներ) ընկերակցութեամբ, կ'այցելեն, կը խրատեն ու կը յորդորեն զանոնք բարի մաղթանքներով: «Մեկ-նողներու տեսարանը շատ յուզիչ եղաւ: Մեկնողներն ու ողջերթի եկողները հա-ասարապէս յուզուած էին, արցունք կար անոնց աչքերուն մէջ: Մեկնողները իրենց ետեւ կը ձգէին սիրելիներ եւ բազմաթիւ տարիներու յիշատակներ: Սա-կայն միա կողմէ Հայրենիքը տեսնելու երջանկութիւնը նոր յոյսերով կը լեցնէր անոնց հոգիները»<sup>42</sup>: Գնէլ վարդապետ «Ներգաղթի առաջին կարաւանը մեկ-նեցաւ» իր յօդուածին մէջ յուզումնախառն տողերով կը նկարագրէ մեկնումի

40 Տե՛ս **Հարութիւնյան Գ.**, նշ. աշխ., էջ 122-125:

41 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 104, թ. 1, 2, 3:

42 .: ٤٤٨-٤٤٩: المصدر نفسه. د. الڪسترد ڪشيشيان. المصدر نفسه. ص ٢٠١-٢٠٣: ՆԱԵԻ «Ազդակ», թիւ 4487, 25 Յունիս 1946, Պէյրութ:

պահը, որոնց օրհնելու եկած էին հոծ բազմութիւն, Վեհափառը եւ այլ հոգե-տորականներ: Վեհափառը իր խօսքը ուղղելով մեկնողներուն կ'ըսէ. «...Դուք մարմնով կը բաժնուիք...»: «...Երբ մեր պատմական Հայրենիքը կ'երթայ, կ'ուզեմ, որ նոր պայմաններու մէջ Հայաստանի հին քաղաքացիներու կողքին ձեր քանասիրութեամբ, պարտականութեան կատարմամբ ամենեւին յետ չմնաք անոնցմէ, ընդհակառակը արժանատի հանդիսանաք այն շնորհին ու բաղդին, որ ձեր բաժինը եղաւ»<sup>43</sup>:

Ա. կարաւանի մեկնումէն անմիջապէս ետք, կոմիտէն ձեռնամուկ կ'ըլլայ երկրորդ կարաւանի նախապատրաստական աշխատանքներու կազմա-կերպման: Բ. կարաւանով նախատեսուած էր Հալէպէն եւ շրջաններէն ուղարկել 250 ընտանիք: Իսկ Պէյրութ եւ շրջաններէն՝ 100 ընտանիք: Սուրիոյ հիսիսային շրջաններէն Պէյրութի նաւահանգիստ տեղափոխուող ներգաղթողներուն համար կը տրամադրուի Թրիփոլի-Պէյրութ գիւնտորական գիծը: Իսկ սուրիական ապահովութեան սպասարկութեան պաշտօնեաները իրաքանչիւր ներգաղ-թողի, մինչեւ Պէյրութ ճանապարհորդութեան համար, կը յանձնէ «լէտ բասէ»՝ սուրիական ինքնութեան թուղթերն ու պարենատոմսերը առնելէ ետք<sup>44</sup>:

Հարկ է նշել, որ Սուրիոյ կառավարութիւնն ու նախարարաց խորհուրդը հե-տաքրքրուած էր ներգաղթողներու վիճակով եւ օրէցօր ցուցակագրման թուա-քանակով: Անոնք շահագրգռուող մարմիններէն կը պահանջեն յետայսու ներ-կայացնել ներգաղթող հայրենակիցներու անուանացանկը մեկնումէն առ-նուազն 3 օր առաջ՝ պետական տուրքի հաշիւները կարգադրելու համար<sup>45</sup>: Իրականութեան մէջ Սուրիոյ կառավարութիւնը սկզբունքով համաձայն էր սուրիաբնակ հայերու հայրենադարձութեան որոշումին: Սակայն գաղթի հետե-անքով որեւէ անպատեհութիւն առաջը առնելու միտումով նախարարութիւնը որոշում կը կայացնէ իրաւական կամ նիւթական ամէն կապ խզել ներգաղթող հայերու եւ Սուրիոյ միջեւ: Ներգաղթող հայերու վերաբերեալ օրէնքը սահման-ուած էր 19 Յունուար 1925 թ. կայացած Նիստի 8-րդ հրամանագիրի 16-րդ յօդուածով<sup>46</sup>: Սուրիական դաւիճակն անգամ «օրակարգի նիւթ դարձուց Սուրիա-լէն դէպի Խորհրդային Հայաստան մեկնող հայերու խնդիրը, անոնց շարժում գոյքերու պարագան եւ զանոնք սուրիական հպատակութենէ զրկելու հարցը»<sup>47</sup>:

43 «Չասկ», ԺԵ. տարի, թիւ 5, Մայիս 1946, Լիբանան, էջ 170-171:

44 «Եփրատ», թիւ 2670, 1 Յուլիս 1946, Հալէպ:

45 .: ٤٥١, ٢٠٣-٢٠١: المصدر نفسه. د. الڪسترد ڪشيشيان. المصدر نفسه. ص ٢٠١-٢٠٣: ՆԱԵԻ «Արեւելք», թիւ 13, 10 Յուլիս 1946, Հալէպ:

46 «Տաթեւ» տարեգիրք, 1926, Հալէպ, էջ 295-296:

47 «Արեւելք», թիւ 10, 6 Յուլիս 1946, Հալէպ: «Սուրիոյ նախարարաց խորհուրդին որոշումը ներ-գաղթող հայերու մասին», պայմաններուն համաձայն՝ **1-** Սուրիայէն դուրս տեւական բնակու-թիւն հաստատելու: նպատակով մեկնող գաղթողները, կը կորսնցնեն իրենց սուրիական հպա-տակութիւնը: **2-** Մեկնողները պարտին հաշուեյարդարի ենթարկել սուրիական հողին վրայ գտնուող իրենց պատկանող անշարժ կալուածներուն հետ ամէն կարգի կապերը: Որովհետեւ



Սահմանուած օրէնքով, ներգաղթողները պիտի կորսցնէին սեփականութեան տիրանալու եւ շահակցութեան ամէն իրատունք սուրիական հողի վրայ: Եւ առ այդ Ներքին նախարարութեան կողմէ առաքուած պաշտօնական յայտարարութեամբ կը յանձնարարուէր՝ վերացնել գաղթողներու անուանացանկերը դիւան-տոմարներէն:

Սակայն պատահեցաւ անսպասելի: Ներգաղթողներէն ոմանք հաշուեյարդարի ենթարկելով իրենց կալուածները՝ հանդիպեցան խոչընդոտներու: Սուրիական «Էլ Թագատտոմ» (յառաջդիմութիւն) թերթը մանրամասն կը նկարագրէ իր էջերէն մէկուն մէջ «Սիւրիան Պարագան եւ Նոր Գիւղ» թաղամասի բնակչութեան շրջապատող պատուհասը<sup>48</sup>:

Բ. կարաւանի մեկնումը նախատեսուած էր Յուլիսի 10-ին «Թրանսիլվանիա»-ով: «...Առաջին շոգենավը ուղարկելուց հետո (23 հունիս սույն թուի) մենք պայմանավորված սկսեցինք Բ. կարավանի նախապատրաստումը հուլիսի 10-ին «Տրանսիլվանիա»-ի համար: Մի քանի օր հետո (այսինքն՝ Յունիսի 28-ին կամ 29-ին- Ա. Ֆ.) Մոսկվայից ստացանք հեռագիր, որտեղ ասված էր, որ հուլիսի 3-ին Բեյրութում կլինի «Ռոսիա» շոգենավը հայերին Պաթում փոխադրելու համար: Հարկ եղավ արագ պատրաստել երկրորդ խմբաքանակը «Ռոսիա»-ի համար 2.000 մարդ: Բայց «Ռոսիա»-ն եկաւ ոչ թէ 3-ին, այլ՝ 8-ին: Իսկ այդ օրը ըստ «Սովրոմ»-ի հետ պայմանագրի, ժամանեց նաև «Տրանսիլվանիա»-ն: Այսպիսով 2 շոգենավն էլ միաժամանակ եղան Պէյրութի նավահանգստում: Այնքանով որքանով, որ «Ռոսիա»-ն նշված ժամկետից ուշ ժամանեց, նրան մի քիչ պահեցին: Երկու օրում դասավորեցինք ու ուղարկեցինք «Տրանսիլվանիա»-ով (10 Յուլիս), իսկ 2 օր հետո «Ռոսիա»-ով<sup>49</sup>:

14 Յուլիս 1946 թ. «Թրանսիլվանիա»-ն Պաթում կը ժամանէ Սուրիայէն եւ Լիբանանէն՝ իրեն հետ փոխադրելով 1.831 հոգի: Շատ չանցած, 18 Յուլիսին, Պաթում կը ժամանէ Խորհրդային «Ռոսիա» շոգենավը՝ 2.250 մարդ<sup>50</sup>:

ՀՍՍՀ նախարարներու խորհուրդի յանձնարարութեամբ, 1946 թ. Յունիս-Յուլիս, Սուրիայէն եւ Լիբանանէն, Երեւան պիտի հայրենադարձուէր 1.130 հայ ընտանիք՝ շուրջ 4.520 մարդ: «Փաստորէն մենք ուղարկել ենք 1946 թ. հունիս-հուլիս ամիսներին 1.157 ընտանիք, 5.883 մարդ»<sup>51</sup>:

մեկնողները կը կորսնցնեն սեփականութեան տիրացումը եւ շահակցութեան ամէն իրատունք՝ սուրիական հողին վրայ»: Տէն «Եփրատ», թիւ 2678, 11 Յուլիս 1946, Հալէպ:

48 . كشيبيان الكستدر. المصدر نفسه. ص 1-2-3 .

49 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 104, թ. 17: (Ծանօթ.- Սփիւռքի մամուլի մէջ «Թրանսիլվանիա» ձեռով հանդէս եկած է):

50 «Սովետական Հայաստան», ամսագիր, թիւ 25, 1947, Երևան, էջ 5-8: «Եփրատ» կը նշէ, որ Գ. կարաւանով Երեւան ներգաղթողներուն թիւը բաղկացած է 2.300 հայերէ, որոնցմէ 1.202-ը՝ Հալէպէն: Տէն «Եփրատ», թիւ 2686, 15 Յուլիս 1946 թ., Հալէպ:

51 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 104, թ. 17-18:

**Աղիւսակ 1**

	Ա. կարաւան 23.6.1946 թ.	Բ. կարաւան 10. 7. 1946 թ.	Գ. կարաւան 12. 7. 1946 թ.	Ընդամենը 1946 թ.
<b>Պէյրութէն</b>				
ընտ.	270	163	207	640
հոգի	1.268	857	1.047	3.172
մեծահաս.	793	484	610	1.887
փոքր. մինչ 16 տ.	475	373	437	1.285
<b>Սուրիայէն</b>				
ընտ.	96	203	218	517
հոգի	534	977	1.2	2.711
մեծահաս.	289	614	711	1.614
փոքր	245	363	489	1.097
<b>ընդամենը</b>				
ընտ.	366	366	425	1.157
հոգի	1.802	1.834	2.247	5.883
մեծահաս.	1.082	1.098	1.421	3.601
փոքր	720	736	926	2.382

Ա.Բ.Գ. կարաւաններով Սուրիայէն Հայաստան ուղարկուած են 296 շինարար, 96 արդիւնաբերական աշխատող եւ 860 արհեստատէր<sup>52</sup>:

Ինչպէս սփիւռքահայ համայնքներու մէջ, այնպէս ալ Խորհրդային Հայաստանի տարածքին լայն գործունէութիւն կը ծաւալին պետական մակարդակով: Ներգաղթողներու համար կը պատրաստուին բնակարաններ, պայմաններ կը ստեղծուին աշխատանքով ու նիւթապէս ապահովելու: Կը կազմակերպուին ներգաղթողները ընդունող կայաններ Պաթումի, Ճուլֆայի եւ Պաքուի մէջ<sup>53</sup>: Արդէն ԽՍՀՄ նախարարներու խորհուրդի, 21 Յունիս 1946 թ. կայացուցած որոշումը, վերադարձող հայերու տեղաւորման նպատակով, ընթացքի մէջ էր: Միայն 1946 թ. պէտք էր կառուցուէր 135 հազար քառ. մետր բնակելի տարածք: Գոյութիւն ունեցող բնակարանային ֆոնտէն պիտի առանձնացուէր ու վերանորոգուէր 3 հազար քառ. քառ տարածութիւն: Պիտի կառուցուէր 3 ասան, իւրաքանչիւրը՝ 200 տնտեսութեան (ընտանիքի) համար<sup>54</sup>: Երեւանի ձայնասփիւռը յաճախակի սփռումներ կը կատարէր՝ տեղեկացնելով Հայրենիքէն ներս կատարուած աշխատանքներու մասին<sup>55</sup>:

Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը ոչ միայն հոգ տարաւ հայրենադարձներու աշխատանքով ու բնակարանային գործերով, այլեւ առաջին

52 Նոյն տեղը, թ. 18-19:

53 «Եփրատ», թիւ 2648, 5 Յունիս 1946, Հալէպ:

54 «Սովետական Հայաստան» օրաթերթ, թիւ 7698, 12 Յուլիս 1946, Երևան, էջ 4: Նաեւ **Մելիքսեթյան Հ. Ռ.**, նշ. աշխ., էջ 210:

55 «Եփրատ», թիւ 2631, 16 Մայիս 1946; թիւ 2635, 20 Մայիս 1946; թիւ 2641, 26 Մայիս 1946, Հալէպ:



օրէն յատուկ ուշադրութիւն դարձուց անոնց ուսուցման հարցին: Սուրիոյ գիւղական շրջաններէն եկողներու մէկ զգալի մասը մայրենի լեզուով կարողաւ ու գրել չէր գիտեր: Անկասկած որ կազմակերպելն ալ հեշտ գործ չէր: «Ուսանողներու համար նոյնպէս առանձին կարաւան պէտք չէ որ լինի: Նրանք կը մեկնին Հայաստան սովորական կարգով, սակայն ներգաղթի տեղական կոմիտէները հաշուի պէտք է առնեն նրանց ցանկութիւնը արագացնելու համար նրանց Հայաստան ժամանումը: Ինչ վերաբերում է չունեւոր ուսանողներին, ապա պէտք է ասել, որ Հայաստան չկան երիտասարդներ, որոնք չքատրութեան պատճառով չկարողանան, համալսարան ընդունել»<sup>56</sup>:

Այս առնչութեամբ Սուրիոյ եւ Լիբանանի ներգաղթի կոմիտէն Սուրիոյ եւ շրջաններէն, Հայրենիքէն ներս արհեստագիտական դպրոց հետեւիլ ցանկացողներու ուշադրութեան կը յանձնէր արձանագրութեան հարցին վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններ:

Դէպի Հայրենիք մեկնիլ ցանկացողներու հետզհետէ թիւի աճը մտահոգած էր ՀԽՍՀ նախարարներու խորհուրդի առընթեր արտասահմանէն ներգաղթող հայերու ընդունման եւ տեղաւորման կոմիտէն: Ամէն կերպ հասկնալի էր, որ երկիրը ի վիճակի չէր այնքան մարդ միանգամայն ընդունելու: Արդէն ծագած էին առաջին դժուարութիւնները: Գ. Յարութիւնեան, Հոկտեմբեր 8-ին Ստալինին գրած իր զեկուցագիրին մէջ կը ներկայացնէ՝

«Բնակարանների պակասի պատճառով ժամանողներին հաճախ տեղավորում էին բնակության համար ոչ պիտանի շինություններում, որը առաջ էր բերում արդարացի դժգոհություն, իսկ բնակարանների կառուցումը դանդաղում էր, որովհետև պակասում էր փայտը:

Ժամանող բնակչության հիմնական զանգվածը արհեստավորներ էին, և երբ նրանց տեղավորում են գյուղական վայրերում, նրանք դժգոհում են և ցանկանում բնակվել քաղաքներում:

Իրանից, Սիրիայից և Լիբանանից ժամանածները վատ են հագնված և մօտակա ձմռանը նրանք պատրաստ չեն, իսկ խանութներում հագուստ չկա և այլն»<sup>57</sup>:

Ուստի միանգամայն հասկնալի ու պարզ կը թուին վերեւ նշուած տողերը:

Գ. կարաւանի մեկնումէն անմիջապէս ետք, Սուրիոյ եւ Լիբանանի ներգաղթի կոմիտէն կը նկատէ, որ ազգայիններէն ոմանք շուտով ներգաղթելու «փութկոտութենէ» մղուած՝ ծախած են իրենց կալուածները: Կը հաստատուէ, որ «այս տարի ներգաղթողներուն թիւը սահմանափակ է եւ կը թելադրէ՝

-Գործ ունեցողը կամ ճարողը պէտք է շարունակէ իր ընթացքը:

56 «Եփրատ», թիւ 2622, 5 Մայիս 1946, Հալէպ:

57 **Հարությունյան Գ.**, Կյանքը և գործունեությունը, Նշ. աշխ., էջ 119-120:

-Տուն ունեցողները կրնան վաճառել միայն այն պարագային, երբ մեկնելու արտօնութիւն տրուած է: Հակառակ պարագային կոմիտէն որեւէ պատասխանատուութիւն չի ստանձներ:

-Ներգաղթողներու ընտրութիւնները պիտի կատարուէին թաղերու մէջ եւ ոչ թէ գրասենեակներու կամ կոմիտէ անդամներու տունները:

-Իրաքանչիւր ընտանիք պէտք է գիտնայ թէ պարտաւոր է վճարել իր ճանապարհածախսը...»<sup>58</sup>:

Ուստի ներգաղթի աջակցող տեղական կոմիտէները կը զգուշացնեն, որ աշխատանք ու նախապատուութիւն տրուի առաջին հերթի ծանր պայմաններու ներքեւ գտնուող հայ բնակչութեան: Հիասթափուած ժողովուրդը զգաստացած էր: «Տուն-տեղ ծախողները հիմա կ'ափսոսան իրենց շՅ տարուան չարչարանքին ու խնայողութեանց արդիւնքը օդին եւ ջուրին տուած եւ խաբուած ըլլալուն համար»<sup>59</sup>:

Սուրիոյ գիւղական շրջանակներու բնակիչները, յուսադրուած մօտալուտ մեկնումի ակնկալութենէ, աւելորդ կը նկատեն ներկայ տարուան վար ու ցանքի մասին մտածել եւ ստացած հունձքին արդիւնքը ծախելէ ետք, մեծ մասամբ ծախած էին նաեւ ստացուած լծկանները: Նիւթական կորուստի կողքին կար նաեւ բարոյականը. «Վերացած էր վարկը հայ առեւտրականին, նոյն վստահութիւնը չէն ներշնչէր հայ արհեստարարներն ու գործատորը: Գամիշլիի շրջանին մէջ հայ գործատուներուն կը զլացուէր որեւէ աշխատանք, որուն համար փնտռուած բազուկներ էին նախապէս»<sup>60</sup>:

4 Յուլիս 1946 թ. Հալէպէն ներգաղթողներու կարաւանը Պէյրութ մեկնելէն առաջ, կը կատարէ իր քաղաքացիական պարտականութիւնը՝ սուրիական հայրենիքին: Յատուկ պատուիրակութեամբ ծաղկեպսակ կը զետեղեն Սուրիոյ մեծ հայրենասէր, ազգային ազատագրական շարժման մեծ ղեկավարներէն Իպրահիմ Հանանոյի դամբարանին, իբրեւ յարգանքի տուրք եւ երախտագիտութիւն: «Անոնք զաւակներն են Սուրիոյ ու կը վերադառնան իրենց հնադարեան ու պատմական հայրենիք՝ որուն կապուած են կարօտի, արցունքի եւ արիւնի կապերով: Անոնք, բաժնուելէ առաջ այս հողէն, որմէ ստացան մնունդ իրենց ֆիզիքական ու հոգեկան, ուր կերտեցին լոյս երազներ հայրենական, յարգանքի իրենց տուրքը կու գան մատուցանելու դամբանի առջեւ այն մեծ մարդուն, որ խորհրդանիշն եղաւ ազգային-ազատագրական պայքարներու մեծ պաշտպանը հայրենիքին»<sup>61</sup>:

58 «Ազգակ», թիւ 4504, 20 Յուլիս 1946, Պէյրութ: «Արեւելք», թիւ 28, 27 Յուլիս 1946, Հալէպ:

59 «Ազգակ շաբաթօրեակ», թիւ 144, 6 Դեկտեմբեր 1946, Պէյրութ:

60 «Արեւելք», թիւ 137, 1 Դեկտեմբեր 1946, Հալէպ:

61 كشيبيان الكسندر المصدر نفسه، ص 44 Եւ «Եփրատ», թիւ 2791, 21 Նոյեմբեր 1946, Հալէպ:



հնչպես Ա. կարաանի, այնպես ալ Բ.-Գ. կարաաններու ընթացքին կոմիտեն եւ ներգաղթողները հանդիպած են բաւականին լուրջ դժուարութիւններու: Այս առնչութեամբ Մարաշի հայրենակցական վերաշինաց միութեան Հալէպի վարչութիւնը, Յուլիս 1946 թ., Ամերիկայի կեդրոնական վարչութենէն կը խնդրէ առնուազն երկու հազար տոլար նպաստ, միութեան պէտքերուն յատկացնելու համար: Պետք է ըսել, որ գումարը կ'առաքուի Ճշդուած ժամկետին: Իսկ Դամասկոսի մասնաճիւղը ներգաղթի Ա. կարաանի՝ Դամասկոսէն մեկնող 15 մարաշցի ընտանիքներէն իրաքանչիւրին կ'օժանդակէ 25 սուրիական ոսկիով:

Նաեւ յիշատակութեան արժանի են այն ազգայինները, որոնք իրենց սեփական միջոցներով ճանապարհի ծախսերը հոգացին եւ մաս կազմեցին Ե. կարաանին: Այսպէս, «Համայնէն, Հոմսէն եւ Սելէմիէն ներգաղթող 95 հայ ընտանիքներ 40.000 սուրիական ոսկի տրամադրեցին իրենց ճանապարհածախսին եւ մաս կազմեցին Ե. կարաանին: Նոյնանման ժեստ մը կատարած էր հոմսաբնակ Մ. Գըլըճեանը իր ընտանիքի 4 անդամի ճանապարհածախսը տրամադրելով»<sup>62</sup>:

1946 թ. Օգոստոս եւ Սեպտեմբեր ամիսներուն նախատեսուած ծրագիրով կը շարունակուի արտասահմանի հայերու վերադարձը Խորհրդային Հայաստան:

Օգոստոս 1-էն մինչեւ Սեպտեմբեր 15-ը, Սուրիայէն եւ Լիբանանէն Հայաստան կը գաղթէ 206 ընտանիք՝ 1.029 մարդ: Օգոստոսի սկիզբը Սուրիայէն եւ Լիբանանէն ներգաղթողներու Դ. կարաանը, բաղկացած 123 ընտանիք (600 հոգի) դամասկոսահայերէ՞<sup>63</sup>, կ'ուղեւորուի դէպի Հայրենիք: Այս առնչութեամբ կոմիտեն ներգաղթողներէն կը խնդրէ նախքան մեկնումը, ներկայանալ գրասենեակ՝ վճարելու ճանապարհածախսը եւ ստանալ համապատասխան տոմսեր:

Ե. կարաանի նախապատրաստական աշխատանքները արդէն սկսած էին: Լիազոր պատուիրակները՝ Հ. Խաչատուրեան եւ Քլիմով, Հալէպ կը դառնան, որոնց կ'ընկերակցեր Հ. Սեդրակեան: Իսկ Հ. Յարութիւնեան կը մեկնի Դամասկոս՝ կարգաւորելու Դամասկոսէն եւ շրջակայքէն ներգաղթողներու հարցերը:

12 Սեպտեմբեր 1946 թ. խորհրդային «Վիպչեսլաւ Մոլոթով» նաւի ուղերթը ընթացք կ'առնէ Պէյրութէն դէպի Հայրենիք՝ փոխադրելով Ե. կարաանը: Հալէպէն, Դամասկոսէն (185 ընտանիք, որոնցմէ 160-ը՝ Դամասկոսէն, իսկ 25-ը՝ Ճէպէլ

62 «Եփրատ», թիւ 2709, 16 Օգոստոս 1946, Հալէպ:

63 «Ազգակ շաբաթօրեակ», թիւ 127, 9 Օգոստոս 1946, Պէյրութ: «Երեկ, Չորեքշաբթի առտու, Պէյրութ հասաւ ռուսական «Պորբետա» (Փոպետա-Յաղական) նաւը, որ արդէն բեռնաւորուած ըլլալով պիտի կրնար Պաթում փոխադրել միայն 1.000 ներգաղթողներ: Այս կարաանով պիտի մեկնին 672 դամասկոսահայեր եւ մօտ 350 հոգի Պէյրութէն: Նաը ճամբայ պիտի ելլէ Ուրբաթ իրիկուն 9- Օգոստոս»:

Տրուզէն ընդամենը 885 հոգի)<sup>64</sup>, Համայնէն, Հոմսէն եւ Սելէմիէն մեծ թիւով հայրենակիցներ: «Այս կարաանով 2.500 սուրիահայ ներգաղթողներու խումբին մէջ էին Պէյրութի Սովետ հիւպատոս՝ Ռուբէն Ահարոնով, Յովհաննէս Աղապաշեան (խմբագիր «Ժողովուրդի Ձայն»-ի), Վահէ Վահեան<sup>65</sup> եւ Սմբատ Տէրունեան, մասնակցելու Երեանի մէջ կայանալիք գրողներու համագումարին»<sup>66</sup>:

Ե. կարաանի հայրենակիցները ճշդուած թուականէն քսան օր ուշ կը մեկնին ռուսական «Մոլոթով» շոգենաւի ուղացումին հետեւանքով<sup>67</sup> «Հալէպէն ներգաղթող չքատր ընտանիքներու բաշխած են հաց, գետնախնձոր եւ ոսպ: Իսկ 500 սուրիական ոսկի՝ Հոմսէն, Համայնէն եւ Սելէմիէն ներգաղթող չքատր ընտանիքներու համար»<sup>68</sup>:

Սեպտեմբեր ամսուան ընթացքին, յաջորդաբար, իրարու կը յաջորդեն՝ 17 Սեպտեմբեր 1946 թ., Զ. (2.720 հոգի)<sup>69</sup> եւ 28 Սեպտեմբեր 1946 թ., Է. (6.000 հոգի)<sup>70</sup> կարաանները: Յաջորդ կարաաններով «Ներգաղթի ներկայացուցիչներու հաւաստիացումով քեսապցիք պէտք է գաղթեն 1946 թ.: Լիազոր պատուիրակները՝ Յարութիւնեան եւ Խաչատուրեան երկէ՝ ուրբաթ առաւօտ Քեսապ մեկնեցան հայրենադարձներու Թ. կարաանը կազմակերպութեան գործով»<sup>71</sup>:

Այսպիսով, «Սուրիոյ, Լիբանանի եւ Պաղեստինի մէջ աշխատող քեսապցիներ գործ ու պաշտօն ձգած վերադարձան ծննդավայր՝ իրենց ընտանիքներուն հետ Հայրենիք գաղթելու համար: Սակայն ներգաղթը յետաձգուեցաւ յաջորդ տարուան»<sup>72</sup>:

Նոյն թուականի ձկտեմբերի սկիզբը Հայրենիք կը մեկնի Ը. կարաանը, մեծ մասամբ՝ պէյրութաբնակ հայերէ եւ Սուր-Պասի գաղթականութենէ: Ուղերթը պիտի կատարուէր ռուսական «Շրթկա» նաւով: Նախատեսուած էր այս կարաանով տեղափոխել 1.200 հոգի Սուրի շրջանէն<sup>73</sup>:

64 «Ազգակ շաբաթօրեակ», թիւ 132, 13 Սեպտեմբեր 1946, Պէյրութ: Դամասկոսի ներգաղթողներու թիւը կը նշէ 892 հոգի: «Ազգարար», թիւ 202, 14 Սեպտեմբեր 1946, Պէյրութ: Նաեւ «Ազգակ», թիւ 4526, Օգոստոս 1946, Պէյրութ:

65 Ա. Ապտալեան (Վահէ Վահեան հեղինակ «Արեւ անձրեւ» եւ «Ռակի կամուրջ» բանաստեղծական հատորներուն եւ խմբագիր «Անի» գրական գեղարուեստական ամսագրի): Տե՛ս «Եփրատ», թիւ 2733, 13 Սեպտեմբեր 1946, Հալէպ:

66 «Եփրատ», թիւ 2735, 15 Սեպտեմբեր 1946, Հալէպ: Նաեւ «Ազգակ», թիւ 4544, 16 Սեպտեմբեր 1946, Պէյրութ:

67 «Ազգակ շաբաթօրեակ», թիւ 132, 13 Սեպտեմբեր 1946, Պէյրութ: Նաեւ «Ազգակ», թիւ 4533, 29 Օգոստոս 1946, Պէյրութ:

68 «Եփրատ», թիւ 2735, 15 Սեպտեմբեր 1946, Հալէպ:

69 «Ազգակ», թիւ 4547, 18 Սեպտեմբեր 1946, Պէյրութ:

70 «Ազգակ», թիւ 4555, 29 Սեպտեմբեր 1946, Պէյրութ:

71 «Եփրատ», թիւ 2753, 6 ձկտեմբեր 1946, Հալէպ:

72 **Չոլաքեան Յ.**, Քեսապ, Խ. Ա., Հալէպ, 1995, էջ 136:

73 «Եփրատ», թիւ 2575, 7 ձկտեմբեր 1946, Հալէպ: Նաեւ «Ազգակ շաբաթօրեակ», թիւ 135, 4 ձկտեմբեր 1946, Պէյրութ: «Ազգակ», թիւ 4561, 8 ձկտեմբեր 1946, Պէյրութ:



Եօթներորդ կարաանին կապակցաբար «Ազդակ» կը հաղորդէ, որ գլխաւորաբար մեկնողները եղած են Այնճարէն (400 ընտանիք<sup>74</sup>), Ազեղէն, Համա-  
ձումսի (Նաեւ Սելեմիէն<sup>75</sup>) շրջաններէն, Պէյրութէն եւ «Ֆրանսական բանակէն  
արձակուող զինուորական ընտանիքները»<sup>76</sup>: Եօթներորդ կարաանին սուրիա-  
հայ (Սուրիայէն՝ 1500<sup>77</sup> մարդ) եւ լիբանանահայ ներգաղթողներու կողքին,  
«Ռոսիա» նաւով դէպի Պաթում տեղափոխուած են Նաեւ 2.385 յունահայ եւ 1.615  
պուլկարահայ<sup>78</sup>:

Ստորեւ կը ներկայացնենք 1946 թ. 23 Յունիսէն մինչեւ Սեպտեմբերի վերջը  
(Ա.-Է. կարաաններով) Սուրիայէն եւ Լիբանանէն ներգաղթողներուն թուական  
պատկերը.

**Աղիասակ 2<sup>79</sup>**

թուական			հոգի
23 Յունիս 1946	Թրանսիլվանիայով	Ա. կարաան	1.806
11 Յուլիս 1946	Թրանսիլվանիայով	Բ. կարաան	1.850
13 Յուլիս 1946	Ռոսիայով	Գ. Կարաան	2.243
7 Օգոստոս 1946	Փոպետայով	Դ. կարաան	1.030
12 Սեպտեմբեր 1946	Մոլդովով	Ե. կարաան	2.427
16 Սեպտեմբեր 1946	Թրանսիլվանիա	Զ. կարաան	2.720
27 Սեպտեմբեր 1946	Ռոսիայով	Է. կարաան	6.100

Ներգաղթը այնքան մեծ ոգեւորութիւն առաջ բերած էր, որ շատերն իրենց  
ուրախութիւնը սկսած էին արտայայտել ձօն-բանաստեղծութիւններով: Անոնց-  
մէ մէկը երգի վերածուելով, որպէս ներգաղթի հիմն սկսաւ երգուիլ<sup>80</sup>:

Ուսումնասիրելով ներգաղթողներու թուական պատկերը՝ կը նկատենք  
թուաքանակի կտրուկ նուազում, ինչ որ հետեւանք էր ծրագիրի ձախողութեան,

74 «Եփրատ», թիւ 2746, 28 Սեպտեմբեր 1946, Հալէպ:

75 Նոյն տեղը:

76 «Ազդակ», թիւ 4555, 29 Սեպտեմբեր 1946, Պէյրութ: Նաեւ «Ազդակ շաբաթօրեակ», թիւ 134, 27  
Սեպտեմբեր 1946: «Եփրատ», թիւ 2746, 28 Սեպտեմբեր 1946, Հալէպ:

77 «Եփրատ», թիւ 2748, 30 Սեպտեմբեր 1946, Հալէպ:

78 «Ազդակ», թիւ 4561, 8 Հոկտեմբեր 1946, Պէյրութ: «Եփրատ» կը գրէ. «Սովետական Հայաստան  
Ներգաղթող 10.000 հայեր Պաթում հասան: Անոնցմէ 6.100-ը "Ռոսիա" նաւով կու գան  
Սուրիայէն եւ Լիբանանէն, 2.350-ը Յունաստանէն, մնացեալը Պուլկարիայէն եւ Ռումանիայէն՝  
"Փոպետա" եւ "Մոլդով" նաւերով»: «Եփրատ», թիւ 2748, 30 Սեպտեմբեր 1946, Հալէպ:

79 «Եփրատ», թիւ 2749, 2 Հոկտեմբեր 1946, Հալէպ:

80 «Եփրատ», թիւ 2663, 22 Յունիս 1946, Հալէպ: «Զարթօնք», թիւ 2821, 24 Յունիս 1946, Պէյրութ:  
**Սելիքսեթյան Ն. Ու.**, նշ. աշխ., էջ 214-215:

որ անիմաստ սկսած էր դարձնել ներգաղթը: Աւելին, երկրին անբարենպաստ  
ըլլալը, պատերազմի պատճառով մննդամթերքի, բնակարաններու եւ հանդեր-  
ձանքի պակասը հիասթափութիւն եւ յուսալքութիւն պիտի առաջացնէր հասա-  
րակութեան մեծ մասին մօտ:

1946 թ. Հոկտեմբերին արդէն դադրած էր կարաաններու ուղերթը դէպի Հայ-  
րենիք: Սակայն ԽՍՀՄ Նախարարներու խորհուրդը հաշուի առնելով սփիւռ-  
քահայութեան ծանր կացութիւնն ու անոնց բուռն ցանկութիւնը, 1946 թ. Դեկ-  
տեմբեր 3-ին կը քննարկէ Հայկական ԽՍՀ կողմէ իրագործուելիք ներգաղթի  
հարցը եւ կ'որոշէ իրականացնել 1947-1948 թթ. հայրենադարձութիւնը: Սակայն  
«Սոտենում էր 1947 թվականը, միութենական կառավարություն է ներկայացվում  
հայրենադարձների հերթական խմբաբանակը ընդունելու մասին որոշման  
նախագիծ: Իսկ դժվարություններն ու դժգոհությունները աճում էին: Կենտկոմի  
քարտուղարը հայրենադարձների շրջանում աշխատանքները ուժեղացնելու  
համար կենտկոմը ստեղծում է հատուկ բաժին՝ հինգ աշխատողներից բաղ-  
կացած»<sup>81</sup>: Այդ որոշմամբ, պիտի ընդունէին 63 հազար սփիւռքահայ: Այս առա-  
ջադրանքն մեկնած ԽՍՀՄ Նախարարներու խորհուրդը կը մշակէ ծրագիր մը,  
ուր կը նախատեսուէր 1947 թ. Հայրենիք տեղափոխել, ինչպէս այլ շրջաններէ,  
այնպէս ալ Սուրիայէն եւ Լիբանանէն՝ 15 հազար մարդ: «1947 թ. գարնան առա-  
ջին կարաաններուն մաս պիտի կազմէն Սուրիոյ եւ Լիբանանի այն հայրե-  
նակիցները, որոնց մեկնելու ձեակերպութիւնները ասարտած են (Քեսապ,  
Լաթաքիա, Աֆրին, Պէյրութ, Սուր): Յառաջիկայ տարուան կարաաններուն  
մաս պիտի կազմէն Նաեւ գաւառային շրջաններու հայերը»<sup>82</sup>:

1946 թ. Յունիսէն մինչեւ Հոկտեմբեր, Սուրիայէն եւ Լիբանանէն Խորհրդային  
Հայաստան ներգաղթած էին 8 կարաան, 3.794 ընտանիք (19.253 մարդ)<sup>83</sup>: Իրա-  
կանութեան մէջ Սուրիոյ հայութեան 10 տոկոսը միայն կրցած էր մեկնիլ Հայրե-  
նիք: Մեծ էր թիւը անբարենպաստ պայմաններու մէջ գտնուող եւ անմխիթար  
հայրենակիցներու վիճակը: ԶԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան ժողովը ընդա-  
ռաջ երթալով Գահիրէի կեդրոնական յանձնաժողովի պատճառաբանեալ  
յանձնարարութեան կը քուէարկէ 40.000 տղարի նպաստ «յառաջիկայ ձմրան  
եղանակին օգնելու համար գլխատրաբար Սուրիոյ մէջ այն բազմաթիւ չքաւոր,  
անգործ եւ անապաստան գաղթականներուն, որոնց ներգաղթը յառաջիկայ  
տարուան յետաձգուած է»<sup>84</sup>:

7 Մարտ 1947 թ. Բարեգործականի ժողովատան մէջ տեղի կ'ունենայ ներ-

81 **Հարությունյան Գ.** Կյանքը և գործունեությունը, էջ 120:

82 «Եփրատ», թիւ 2770, 26 Հոկտեմբեր 1946, Հալէպ:

83 **Սելիքսեթյան Ն. Ու.**, նշ. աշխ., էջ 216:

84 «Զարթօնք», ժ. տարի, թիւ 42 (2927), 24 Նոյեմբեր 1946, Պէյրութ:



գաղթի ֆոնտի չալեպի հանգանակիչ կեդրոնական յանձնախումբի Զ. Նիստը՝ գլխավոր օրակարգ ունենալով ընդհանուր հանգանակութեան հաշուետուութիւն, որուն համաձայն, չալեպ քաղաքը ներգաղթի անունով եւ չԲԸՄ-ի կողմէ բացուած մէկ միլիոն տոլարի հանգանակութեամբ մասնակցութիւնը բերած էր 109.341.75 սուրիական ոսկի գումարով:

Սուրիոյ եւ Լիբանանի հայերու ներգաղթի կենտկոմի նախագահի տեղակալ Հ. Սեդրակեան եւ քարտուղար Յ. Մատեան, 1947 թ. սկիզբը ԽՍՀՄ ներգաղթի կոմիտէին հասցեագրած նամակին մէջ կը գրեն. «Վերջին շրջանին առաջ եկած և տակավ զարգացող մի շարք փոփոխություններ հետզհետե ծանրացող լուրջ կացություն մը ստեղծած են մեր երկրներու մէջ ապրող հայության համար»<sup>85</sup>:

Ներգաղթի գծով նախապատրաստական բազմաբնոյթ աշխատանքներէ ետք, 1947 թ. Յուլիսի 17-ին կը վերսկսի սփիւռքահայերու հայրենադարձութիւնը: Մինչեւ 1947 թ. Դեկտեմբեր 20-ը Հայրենիք ժամանած սփիւռքահայերու թիւը կը հասնի 7.834 ընտանիք՝ 33.302 մարդ: Այդ թուին Սուրիայէն եւ Լիբանանէն 2.525 ընտանիք՝ 12.985 մարդ:

**Աղիսակ 3<sup>86</sup>**

թուական	երկիրներ	ընտանիք	հոգի
17 Յուլիս 1947 թ.	Սուրիայէն եւ Լիբանանէն	471	2.323
7 Օգոստոս 1947 թ.	Սուրիայէն եւ Լիբանանէն	529	3.095
16 Օգոստոս 1947 թ.	Սուրիայէն եւ Լիբանանէն	650	3.166
22 Սեպտեմբեր 1947 թ.	Սուրիայէն եւ Լիբանանէն	512	2.603
21 Նոյեմբեր 1947 թ.	Սուրիայէն եւ Լիբանանէն	354	1.798
	ընդհանուր	2.519	12.985

Սուրիոյ եւ Լիբանանի հայերու ներգաղթի կենտկոմի եւ շրջանային կոմիտէներու միացեալ ժողովը, 20-21 Դեկտեմբեր 1947 թ. Պէյրութի մէջ ամփոփելով կատարուած աշխատանքը՝ կը հաղորդէ, որ Սուրիայէն եւ Լիբանանէն 1947 թ. Յուլիսի 4-էն մինչեւ 25 Նոյեմբեր, Պէյրութի Նաահանգիստէն մեկնած է հինգ կարաւան, 2.380 ընտանիք՝ 12.955 մարդ, որոնց կարգին Սուրիայէն չորս կարաւանով՝ 1.280 ընտանիք՝ 7.070 մարդ:

85 Մելիքսեթեան Հ., Ու., Նշ. աշխ., էջ 225-226:  
86 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 196, թ. 1:

**Աղիսակ 4<sup>87</sup>**

Կարաւան	թուական	ընդ. գումար		Լիբանանէն		Սուրիայէն	
		ընտ.	շունչ	ընտ.	շունչ	ընտ.	շունչ
Ա. կարաւան	4 Յուլիս 1947 թ.	410	2.321	410	2.321	-	-
Բ. կարաւան	25 Յուլիս 1947 թ.	509	3.108	23	125	486	2.983
Գ. կարաւան	11 Օգոստոս 1947 թ.	600	3.154	415	2.113	185	1.041
Դ. կարաւան	6 Սեպտեմբեր 1947 թ.	512	2.603	53	315	459	2.288
Ե. կարաւան	25 Նոյեմբեր 1947 թ.	349	1.769	199	1.011	150	758
		2.380	12.955	1.100	5.558	1.280	7.070

Իսկ չԲԸՄ Ամերիկայի մասնաճիւղի կեդրոնական դիւանէն ստացած տեղեկութեանց համաձայն, 1947 տարուան ընթացքին Հայաստան ներգաղթած են 34.549 անձ, որոնցէ 12.953 անձ՝ Սուրիայէն եւ Լիբանանէն<sup>88</sup>:

«Ազդակ» օրաթերթի տուեալներով, 1947 թ. Սուրիայէն հայրենադարձ 1.280 ընտանիքներու 350 ընտանիք ճեզիրէն են, 200 ընտանիք՝ չալեպէն, 260՝ Դամասկոսէն, Քեսապէն: Իսկ մնացեալը՝ Սուրիոյ այլ գաւառներէն:

Հակառակ 1946 թ. ներգաղթի անկազմակերպ աշխատանքներուն, 1947 թ. ներգաղթի կազմակերպումը յաջողութեամբ պսակուեցաւ Յունաստանի, Սուրիոյ եւ Լիբանանի մէջ: Նոյնը չէր պարագան Ֆրանսայի եւ ԱՄՆ-ի հայրենադարձներուն, որոնց գործընթացը հանդիպած էր կարգ մը խոչընդոտներու: Անդրադառնալով տեղ գտած դժուարութիւններուն՝ Սուրիոյ եւ Լիբանանի ներգաղթի կոմիտէն կանգնած է մեծածաւալ ծախսերու եւ զինք տազնապէցնող հարցերու առաջ: Ներգաղթը յաջող կերպով ընթացք ունենալու համար, բարոյականին կողքին անհրաժեշտ էր նիւթականը: Երկիրը տակաւին պատրաստ չէր այդ ծախսը ամբողջութեամբ իրականացնելու: Աւելին, սփիւռքահայերու մեծ մասն ալ կը գտնուէր նիւթապէս ոչ բարենպաստ պայմաններու մէջ. ուստի պէտք էր որոնել միջոցներ՝ գործը յաջող ընթացք ունենալու համար: Բացի Բարեգործականին ցուցաբերած նիւթական նպաստէն, հանգանակիչ յանձնախումբեր պէտք էր կազմուէին բոլոր համայնքներէն ներս, տեղական կոմիտէներու հովանիին ներքոյ: Առաւել, Երեւանի ներգաղթի կոմիտէի որոշումներուն համաձայն, ներգաղթողները նիւթապէս պէտք էր իրենց մասնակցութիւնը բերէին այս գործի յաջողութեան: Սակայն «ձաշվի առնելով, որ այստեղի հայերի մեծ մասը գտնվում է ծանր վիճակում (գործազրկություն ու տազնապէս), պէտք է հաշվի առնել, որ ոչ բոլոր մեկնողներն են ի վիճակի նրանց ճանապարհորդության ծախսերը հոգալու: Հայերին չեն ընդունում աշխատանքի և հիմնական մասը այստեղ ահալոր վիճակում է: Ինչպէս արդէն նշած եմ, յուրաքանչյուր ընտանիք պէտք է մուծի մինիմում 400 լիբանանյան ֆունտ: Այդ գումարը

87 Մելիքսեթեան Հ., Ու., Նշ. աշխ., էջ 230:  
88 «Հայաստանի կղնակ», ԽԸ. տարի, թիւ 2, 10 Յունուար 1948, Նիւ Եորք, էջ 40:



մատչելի չէ նրանց համար, ովքեր պետք է առաջին հերթին տեղափոխվեն և շաբաթական ստանում են 10-20 ֆունտ (եթե ի հարկ է որևէ աշխատանք գտնեն): Ուրիշ կողմից սխալ կլինի ուղարկել միայն նրանց, ովքեր ի վիճակի են վճարել նրան ծախսերը: Չնայած այդ վիճակին, նախքան մեր գալը այստեղ չի կազմակերպվել տեղափոխման օգնության ֆոնդ: Բայց այժմ դա կազմակերպված է եւ կարծում ենք, որ շուտով հասարակում է մօտ 350-400 սիրիա-լիբանանյան ֆունտ (մօտ 160-180 հազար ԱՄՆ տոլար), որը կապահովի 2.500-3.000 մարդու ծախսերը (խօսքը կը վերաբերի 1946 թ. երկրորդ կարաանին - Ա. Ֆ.)<sup>89</sup>: Արտայայտուած գաղափարները կը պարզեն, որ ներգաղթի կոմիտեներու եկամուտի միակ աղբիւրը եղած է ներգաղթողներէն զանձնող գումարը: Բայց քանի որ ներգաղթողներու մեծ մասը իրենց ճանապարհածախսը չէր կրցած մուծել, ներգաղթի կենտկոմը հայրենադարձներու փոխադրող նաւերուն պարտական էր 855.700 լիբանանեան ոսկի: Բացի Լիբանանէն, 1947 թ. «Սիրիայից ներգաղթած ընտանիքներից անվճար Հայրենիք են մեկնել 400-ը, ճանապարհածախսը լրիվ մուծել են 143-ը, մասնակիորէն՝ 591-ը, որով կոմիտէի գանձարկը մուտք է եղել 248.596 լիբ. ոսկի. մինչդէռ, եթէ բոլոր չափահասները վճարէին ճանապարհածախսը, կստացվեր 768.250 լիբանանյան ոսկի»<sup>90</sup>: Հասկնալի է, որ ճանապարհավարձի ամբողջ գումարը վճարած է խորհրդային կառավարութիւնը:

Արաբական «էլ Եագգա» (مغتظة-զգօնութիւն) թերթի թղթակիցը, «Նայկական ներգաղթը եւ արաբ բարեկամները» խորագրին ներքոյ հետեւեալը կը գրէ. «Հայ գաղթականներու զանգուածային մեկնումը Սուրիայէն եւ Լիբանանէն՝ հոս ու հոն որոշ, ժամանակաւոր անպատեհութիւն կը ստեղծէ տեղացիներու համար: Հայերու ճնշող մեծամասնութիւնը գործաւոր եւ արհեստաւոր մարդիկ են, որոնք կ'աշխատին արաբ պետական եւ մասնաւոր ձեռնարկներու մէջ: Հայ գործաւորներու, արհեստաւորներու եւ պետական պաշտօնեաներու մեկնումը կրնայ, երբեմն, ժամանակաւոր դժուարութիւններու մատնել Սուրիոյ եւ Լիբանանի պետական հանրային եւ անհատական հիմնարկութիւնները եւ ճարտարարուեստական ձեռնարկները: Ատիկա պատճառ մը չէ սակայն, որ մեր արաբ եղբայրները խեթ աչքերով նային ներգաղթող հայերու վրայ»<sup>91</sup>: Իսկ Նալէպի «էլ Թագատտում» (յառաջդիմութիւն-اتقدم) թերթը կը գրէ. «Ընդհանրապէս ներգաղթի առաջին կարաաններով Հայաստան մեկնեցան այնպիսի անձիք, որոնք Միջին Արեւելքի երկիրներու մէջ յարմար գործեր չունենալով՝ պիտի

փորձէին իրենց բաղը որոնել Հայրենիքի մէջ»<sup>92</sup>: Ուստի, միանգամայն պարզ կը դառնայ այն երեւոյթը, որ Բարեգործականն ու տեղական հայկական կազմակերպութիւններն անգամ օժանդակէին ներգաղթողներու փոխադրութեան ծախսերուն, անբաւարար պիտի համարուէր, եթէ ներգաղթողները չնչին գումարներով իրենց մասնակցութիւնը չբերէին:

1947 թ., ներգաղթի Բ. կարաանին մաս կազմած են «Առաւօտ» թերթի խմբագիր Հ. Տէվէճեան, «Զարթօնք»-ի խմբագիր Պ. Գ. Պէքերճեան<sup>93</sup>, Գարատուրան գիւղի Ս. Աստուածածնայ եկեղեցւոյ ծերունագարդ Տ. Պետրոս քահանան<sup>94</sup>: Գ. կարաանով կը մեկնին Թ. Մարաճեան, «Եփրատ» օրաթերթի խմբագիր Ա. Շաքլեան եւ երաժիշտ՝ Հ. Գեորգեան, որ գրած է. «Ես ալ դիմած էի հայրենիք երթալու համար: Սակայն մեկնիլ փափաքողներուն թիւը, այնքան շատ էր, որ կը տարակուսէին թէ կարգը ինծի ալ կրնայ գալ»: Շարունակելով՝ «1947 թ. Յունիսին բոլոր ճիգերս ի գործ դրի կարենալ մտնելու համար ներգաղթի կոմիտէի շէնքէն ներս: Պատուիրակ Կարապետեան կտրուկ ձեռով մերժեց ինծի տալ ներգաղթելու յատուկ քարթ, զոր ստանալու համար, այդ օրերուն, կարելի էր պարզապէս խելագարուիլ, կաշուից դուրս գալ, դրամական մեծ ծախսերու ենթարկուիլ»: «Վերջապէս 1947 թ. Օգոստոս 24-ին էր, որ ոտք դրինք հայրենի հողին վրայ»<sup>95</sup>:

1947 թ. հայրենադարձութեան համար նախատեսուած 63 հազար մարդու փոխարէն կը յաջողի ընդունիլ ընդամենը 35 հազար հայրենադարձ: Ուստի պատահական չէր, որ ԽՍՀՄ կառավարութիւնը 1947 թ. Դեկտեմբերի 10-ին կ'որոշէ 1948 թ. ընդունիլ ընդամենը 10 հազար հայրենադարձ: «Գ. Յարութիւնեան հասկցաւ, թէ ինչ դժուար կացութեան առաջ կանգնած է, եւ երբ միութենական կառավարութիւնը 1948 թ. դադարեցուց հայրենադարձութիւնը, ան ոչ մէկ անգամ այլեւս չդիմեց կեդրոն, անհրաժեշտ էր հոգալ ժամանածներու մասին»<sup>96</sup>:

Սուրիոյ եւ Լիբանանի ներգաղթի կեդրոնական կոմիտէի շԲԸՄ-ի նախագահի ուղղուած նամակին համաձայն, 1946-1947 թթ. Սուրիայէն եւ Լիբանանէն դէպի Հայրենիք ներգաղթած են 5.934 ընտանիք, այսինքն՝ 31.319 մարդ, ընդ որուն 1.189 ընտանիք (6.347 մարդ) Հալէպէն ու 490 ընտանիք (2.598 մարդ) Դամասկոսէն<sup>97</sup>:

92 د. الكسندر كشيبيان. المصدر نفسه، ص ٢٠٠

93 «Ազդակ», թիւ 4778, 13 Օգոստոս, 1947, Պէյրութ:

94 Չոլաքեան Յ., Քեսապ, հ. Ա., նշ. աշխ., էջ 138:

95 Գեորգեան Հ. (Հացիկեան), Կեանքիս պատկերագրող ժապաւնը, ինքնակենսագրութիւն, Հալէպ, 1983, էջ 84-87:

96 «Եփրատ», թիւ 3088, 23 Նոյեմբեր 1947, Հալէպ: Նաեւ Հարությունյան Գ. Կյանքը և գործունեւորութիւնը, էջ 121-122:

97 Արամոյէն եւ Լաթաքիայէն 67 ընտանիք (359 մարդ): Ճեզիրէն 301 ընտանիք (1602 մարդ), Աֆրիկէն 95 ընտանիք (463 մարդ), Քեսապէն 446 ընտանիք (2738 մարդ): Ներգաղթող

89 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 104, թ. 7-8:

90 Մելիքսեթյան Հ. Ռ., նշ. աշխ., էջ 231:

91 «Արեւելք», թիւ 84, 1946, Նոյեմբեր 1, Հալէպ:



Կոմիտեի ներկայացուցած տեղեկագիրեն կ'իմանանք, թե Սուրիայեն եւ Լիբանանէն ներգաղթած 5.934 ընտանիքէն 3.120ը անվճար ճամբորդած են, 2.105 ընտանիք մասամբ եւ չնչին չափով. միայն 700 ընտանիք վճարած է իր ճանապարհածախսը<sup>98</sup>:

Այնուամենայնիւ, 1946-1947 թթ. կարաւաններու Հայրենիք մեկնելէն ետք, սուրիահայերը կը շարունակեն ապրիլ հայրենադարձութեան վերսկսման յոյսով: Բայց եւ այնպէս Սուրիոյ մէջ առաջացած նոր իրադրութեան հետեւանքով հայերը պիտի սկսէի աստիճանաբար արտագաղթել այլ երկիրներ:

Սփիւռքահայութեան բուռն փափաքին եւ դիմումներուն համաձայն, 10 Դեկտեմբեր 1947 թ. ԽՍՀՄ-ի Նախարարներու խորհուրդին կայացած նիստին՝ որոշում կ'ընդունուի 1948 թ. «արտասահմանեան հայերին հայկական ՍՍՀ ընդունելու եւ տեղաւորելու միջոցառումներու մասին»: Այդ որոշումին համաձայն կը Նախատեսուէր 1948 թ. եւս ընդունիլ մօտ 15.000 հայրենադարձ, այդ թուին Սուրիայէն եւ Լիբանանէն՝ միայն 5.000 մարդ<sup>99</sup>: Սակայն ՀԿ(Բ)Կ Կենտկոմի Բիւրօն «1947 թ. Դեկտեմբեր 23-ին քննարկելով ՍՍՀՄ Մինիստրների խորհուրդի վերոյիշեալ որոշման կենսագործման հարցը» առաւել նպատակայարմար կը նկատէ 1948 թ. ընդունիլ միայն «10.000-էն ոչ ամէլի սփիւռքահայեր»<sup>100</sup>:

15 Յունիս 1948 թ. Սուրիոյ եւ Լիբանանի հայերու ներգաղթի կեդրոնական կոմիտեն Հնորհակալական Նամակ կը յղէ «ՀՍՍՐ Մինիստրների սովետի կից հայրենադարձ հայերի ընդունման եւ տեղաւորման կոմիտէին», ուր կը յայտնէր իր երախտագիտութիւնը անոնց «այնքան մեծ անձնագոհութեանց», զոր կատարած էին՝ ընդունելու եւ տեղաւորելու համար արտասահմանէն ներգաղթողներուն: Միաժամանակ խնդրելով, որ 1948 թ. ներգաղթը լաւ կազմակերպուի եւ ներգաղթող հայերու թիւը աւելցուի<sup>101</sup>: Կոմիտեի յատուկ ուշադրութեան կը յանձնէ հիմնական նշանակութիւն ունեցող կարգ մը առաջադրանքներ՝ ամռնչուող 1948 թ. տարեշրջանի ներգաղթին: Նամակին համաձայն, ներգաղթի կեդրոնական կոմիտեն «ջերմապէս» կը խնդէր, «Սուրիայէն, Լիբանանէն, Պաղեստինէն և Կիպրոսէն 1948 թ. տարեշրջանին ներգաղթելու կոչված հայերուն թիւը ըլլան (ըլլայ –Ա.Ֆ.) նվազագոյն քառասուն հազար (-40.000) շունչ, հետևյալ կերպով բաժանված. Ճիզիրէի շրջանը՝ 6.000, Հալեպ քաղաք և մոտիկ գյուղեր՝ 13.000, Քեսապ՝ 500, Դամասկոս և շրջան՝ 1.000, Բեյրութ քաղաք և

մոտիկ գիւղեր՝ 12.000, Այնճար՝ 100, Թրիփոլի և շրջակայք՝ 500, Զահլէ եւ Ռայաք՝ 500, Պաղեստին՝ 300, Կիպրոս՝ 1.000»<sup>102</sup>: Սուրիոյ եւ Լիբանանի հայերու ներգաղթի կեդրոնական կոմիտեն կը տեղեկացնէ ՀԽՍՀ Մինիստրների սովետի կից հայրենադարձ հայերի ընդունման եւ տեղաւորման կոմիտէին, որ 1948 տարեշրջանի համար Սուրիայէն եւ Լիբանանէն արձանագրուած հայերուն թիւը 144.199-ն է, «սակայն անցնող երկու տարիներուն ընթացքին 32.192 շունչերուն միայն ներգաղթելու կարելիություն տրված է: Արդ տակավին հերթի կսպասեն 26.107 տնտեսություն կամ 112.007 շունչ հայեր: Այս վերջիններուն 34.849 (95 առ հարյուր տոկոսով՝ արական) աշխատողներ են, որոնց(ից) 10.159 գյուղական կամ շենքի շինությանց վրա աշխատողներ»<sup>103</sup>:

Թէեւ 1948 թ. ներգաղթը շարունակուեցաւ, բայց Սուրիայէն Նախատեսուած 10.000-ին չէր վիճակուած հասնիլ այնտեղ, որ տարիներու իրենց երազանքն էր: Այսպիսով անոնք, որոնք լքած էին իրենց գործը, վաճառած էին իրենց կալուածները եւ կը սպասէին իրենց հերթին, յուսախաբութիւն ապրեցան: Անոնցէ ոմանք կեանքը շարունակեցին քաղաքին մէջ, իսկ ուրիշներ վերադարձան իրենց լքած հողերը, բայց այնտեղ տանտերի փոխարէն դարձան վարձկան մշակներ, ոմանք ալ գաղթեցին օտար երկիրներ՝ նոր երկնակամարներու տակ իրենց բախտը որոնելու:

Հակառակ տարուած աշխատանքներուն, սուրիահայերը իրենց երկիրներու պետական կառոյցներու որոշակի ու բացայայտ արգելքներու յարուցումով, դիմագրաւեցին բազմապիսի դժոհարութիւններ: Կառոյցները կը փորձէին ամեն կերպ խոչընդոտել ոչ թէ կասեցնելու սուրիահայերու ներգաղթը դէպի Հայրենիք, այլ Սուրիոյ իշխանութիւնները չէին ցանկար հայերու նման աշխատունակ, ստեղծագործ ու շինարար ազգի մը բացակայութիւնը երկիրէն: Ինչ որ զանազան առիթներով ու բազմիցս արտայայտուած են այդ մասին բարձրաստիճան պաշտօնեաները:

ազգացիներու թիւը 100 ընտանիք: Տե՛ս **Ղազարեան Ս.**, Հայկական փոքր գաղութներ Ազգ Աֆրիկն Արաբ Փունար, Պէյրութ, 1965:

98 «Եփրատ», թիւ 3088, 23 Նոյեմբեր 1947, Հալեպ:

99 **Մելիքսեթյան Ն. Ու.**, նշ. աշխ., էջ 236:

100 Նոյն տեղը, էջ 236-237:

101 **Ալեքսանյան Ա. Վ., Թումանյան Մ. Ս.**, Հայրենադարձության Էջերից (1946-1948 թթ.), փաստաթղթեր Ռուս., հայ., «Բանբեր Հայաստանի արխիվների», N 2, 1963, Երևան, էջ 79:

102 Նոյն տեղը:

103 Նոյն տեղը:



## բ. ՀԱՅՐԵԼԱԴԱՐԱՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1962-1970 թթ.

1948 թ. Խորալելեան պետութեան ստեղծումը, արաբ իսրայելեան առաջին պատերազմը, յիսունական թուականներու սուրիական կառավարութեան կողմէ մշակութային ոլորտէն ներս սահմանափակումները, Սուրիա-Եգիպտոս Արաբական Միացեալ Հանրապետութեան (ԱՄՀ) ստեղծումը, Լիբանանի քաղաքացիական պատերազմը, Սուրիոյ 1961 թ. հարցերը պատճառ հանդիսացան, որ Սուրիոյ մէջ ծայր առնէ արտագաղթի այլք մը դէպի Լիբանան, ԱՄՆ եւ Լատինական Ամերիկայի երկիրները: Յատկապէս, Հալէպի մէջ զգալիօրէն ուժեղացած էր հայերու՝ Գանատա եւ Աստրալիա տեղափոխուելու համապատասխան աշխատանքը: Այս պայմանաւորումները էր 1958-1961 թթ. Սուրիոյ մէջ Կամալ Ապտէլ Նասերի հաստատած ոստիկանական կանոնադրութեամբ եւ 1963 թ. Մարտ 8-ի յեղաշրջումով: Տնտեսական տեսանկիւնէն հայերու դժգոհութիւնը ամբողջութեամբ հիմնաւոր էր բացայայտ էր, որովհետեւ առկայ տնտեսական կեանքը կամ ճզնաժամը կ'ոտնահարէր միջին եւ մանր արհեստարներու եւ վաճառականներու շահերը: Շատ հայեր իրենց ունեցուածքը փրկելու համար մտադիր էին Սուրիայէն մեկնիլ: Սակայն Պաաս կուսակցութիւնը, որպէս ուժ կը սահմանափակէր հայերու իրատունքները, որուն պատճառով հայերը չէին կրնար իրագործել իրենց մտադրածը:

Հակառակ ԱՄՀ ներս տիրող անբարենպաստ ներքաղաքական իրադրութեան, այնուամենայնիւ, կը բազմանար խորհրդային Հայաստանի հետ մերձենալու կողմնակիցներու թիւը: Յատկապէս 1958 թ. Յունուարին, գլխաւոր հիւպատոսարանի պաշտօնական բացումը քաղաքական մեծ ազդեցութիւն կ'ունենայ տեղի հայերու վրայ: Ըստ էութեան, տեղի հայկական համայնքը կը դառնայ Հայաստանի հետ կամրջողը: Գլխաւոր հիւպատոսութիւն կ'այցելէին տասնեակ հայեր, որոնք ցանկութիւն կը յայտնէին մշտական բնակութիւն հաստատել խորհրդային Հայաստան: Հայերու ճնշող մեծամասնութիւնը Հայաստանը կը համարէին իրենց հայրենիքը եւ յատկապէս իրենց երեխաներու ապագան կը կապէին անոր հետ: Բայց պէտք է ըսել, որ «Հայրենադարձութեան հարցը միշտ էլ այժմեական եղել է հայերի համար և դա է պատճառը, որ օրից օր ավելանում է դիմումների թիվը, որոնցում հայերը ցանկություն են հայտնում տեղափոխուել Սովետական Հայաստան և ստանալ քաղաքացիության իրա-

վունք»<sup>4</sup>: Վերջի ամիսներու ընթացքին շնորհիւ հայաստանեան մամուլին եւ լայնասփիւռ յաճախակի հաղորդումներուն որոշ հատուած մը ցանկութիւն կը յայտնէ տեղափոխուելու խորհրդային Հայաստան:

Գլխաւոր հիւպատոսութեան եւ տեղական համայնքի կապերու աշխուժացման նոր ազդակ կը հանդիսանան Երեւանեան ոտնագնդակի «Սպարտակ» խումբի եւ 1959 թ. Նոյեմբերին երգի եւ պարի հայկական համոյթի ժամանումը Հալէպ: Հետզհետէ բազմացող դիմումագիրներուն՝ հարց կ'առաջանայ Սուրիայէն խորհրդային Հայաստան հայերու զանգուածային հայրենադարձութեան մասին: Այս առնչութեամբ խորհրդակցելէ ետք «տեղացի հայոց բացարեցիկ, որ ներկայիս խօսք չկայ հայոց զանգուածային հայրենադարձութեան մասին, եւ սկսանք ընդունիլ դիմումները միայն այն հայոց, որոնք զիրենք բնակարանային տարածութեամբ ապահովուելու եւ նիւթական օժանդակութիւն ցուցաբերելու պատրաստակամութիւն յայտնող ազգականներ ունին խորհրդային Հայաստանի մէջ»<sup>5</sup>: Այս յայտարարութենէ ետք նուազեցան մշտական բնակութիւն հաստատողներու դիմումները գլխաւոր հիւպատոսութիւն: Հաւաքական դիմումներու կողքին կային նաեւ ունեւոր հայերու դիմումները, իրենց միջոցներով Հայաստան տեղափոխուելու խնդրանքով: Անոնք նպատակ ունէին այնտեղ կառուցել իրենց տունները: Բացի այդ, երիտասարդ տարրերու կողմէ եւս դիմումներ կը կատարուէին, դէպի խորհրդային Հայաստան ուսանելու ցանկութեամբ: «Մենք տեղի հայկական յառաջդիմական կազմակերպութիւններն ու առանձին անձիք կը ներգրաւենք ուսանողներու ընտրութեան մէջ: 1959 թուականին հայկական ԽՍՀ-ի մէջ ուսանելու խնդրանքով աւելի քան 50 դիմումներ տրուեցան գլխաւոր հիւպատոսութիւն, մինչդեռ Երեւանի համալսարանին մէջ տեղացի հայոց (Սուրիոյ - Ա.Ֆ.) համար ընդամենը 6 տեղ յատկացուած է»<sup>6</sup>:

Յովիկ Մելքիսեթեանի համաձայն, 1950-ական թուականներուն անհատական հայրենադարձութեան միջոցով Հայրենիք կը ներգաղթեն աւելի քան 4.000 սփիւռքահայեր<sup>7</sup>:

Սակայն յետագայ տարիներուն եւս ՀԽՍՀ արտաքին գործերու նախարարութիւնը յաճախակի դիմումներ կը ստանայ Սփիւռքի տարբեր հատուածներու հայորդիներէն՝ ներգաղթ վերսկսելու առաջադրանքով:

խորհրդային Հայաստանի կառավարութիւնը, հաշուի առնելով բազմաթիւ սփիւռքահայերու՝ հայրենադարձուելու բուռն ցանկութիւնը, ՀԽՍՀ նախարարներու խորհուրդի որոշմամբ 1958 թ. աշնան կը ստեղծէ ՀԽՍՀ նախարարներու

1 «Մինչեւ 1959 թ. Հալէպում ապրում էին 70 հազար հայ, սակայն քաղաքական և տնտեսական անկայունության հետևանքով, ինչպէս նաև քաղաքացիների իրավունքների սահմանափակման պատճառով, վերջին տարիներին ունեւոր հայերի զգալի մասը լքեց ՍԱՀ և բնակություն հաստատեց Լիբանանում, ԱՄՆ-ում և Լատինական Ամերիկայում»: (Բաղայան Ա., Հալէպի հայ համայնքը 1964-1985, «Բանբեր Հայաստանի արխիվներին», N 1, 2009, (24-Յուլիս-1964 թ.) Երեւան, էջ 102:

2 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 283, թ. 1: Նաեւ Եազըճեան Գ., նշ., աշխ., էջ 198:

3 ՀԱԱ, ֆ., Նոյն տեղը:

4 Բաղայան Ա., «Բանբեր Հայաստանի արխիվներին», նշ. աշխ., էջ 102:

5 Նոյն տեղը:

6 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 283, թ. 2 (ոտտերէն): Տե՛ս Եազըճեան Գ., նշ., աշխ., էջ 198:

7 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 283, թ. 4 (ոտտերէն): Տե՛ս Եազըճեան Գ., նշ., աշխ., էջ 199:

8 Մելքիսեթեան Ն., Սփիւռքահայերի հայրենադարձութիւնը (1962-1982), «Լրաբեր հասարակական գիտությունների», N 7 (487), 1983, Երևան, էջ 3:



խորհուրդի առընթեր արտասահմանէն վերադարձող հայերու ընդունման կառավարական յանձնաժողով, որուն խնդիրն էր քննարկել Հայրենիք վերադառնալ ցանկացողներէն ստացուած դիմումները եւ անհատական կարգով որոշել անոնց թոյլատրելու կամ մերժելու հարցը:

Սփիւռքահայերու զանգուածային նոր հայրենադարձութիւն կազմակերպելու հարցը կը բարձրացուի նաեւ Հայաստանի խորհրդային իշխանութեան հաստատման 40-ամեակի միջոցառումներու ընթացքին, Սփիւռքէն Հայրենիք ժամանած պատուիրակութեան կողմէ:

ԽՍՀՄ նախարարներու խորհուրդը, ընդառաջելով Խորհրդային Հայաստանի կառավարութեան եւ սփիւռքահայ աշխատատիրներու ցանկութիւններուն, 1961 թ. Օգոստոս 12-ին կ'որոշէն ստեղծել զանգուածային նոր հայրենադարձող հայերու ընդունման եւ տեղաւորման կոմիտէ (Հայրենադարձութեան կոմիտէ): Զանգուածային նոր հայրենադարձութեան մասին խորհրդային կառավարութեան որոշումը, սփիւռքահայ աշխատատիր դասակարգի շրջանակներու մէջ կ'առաջացնէ մեծ խանդավառութիւն: Անմիջապէս սկիզբ կ'առնէ ցանկացողներու ցուցակագրումը:

Սուրիոյ հայերը տեղեկ էին այլ երկիրներէ ներգաղթ սկսելու որոշման մասին եւ անհամբեր կը սպասէին իրենց հերթին: Մեծամասնութիւնը լաւ կը հասկնար, թէ Սուրիայէն 1962-1963 թթ. ներգաղթ տեղի պիտի չունենայ՝ երկրի առկայ անկայուն վիճակի հետեանքով: Այսինքն՝ շարք մը երկիրներու պարագային, որոնց կարգին նաեւ Սուրիոյ մէջ ստեղծուած քաղաքական իրադրութիւնը, 1962 թ., ուղղակի աննպաստ կը դարձնէր զանգուածային հայրենադարձութեան հարցը: Այդ էր հիմնական պատճառը, որ ԽՍՀՄ դեսպանութիւնները նպատակայարմար չգտան այդ երկիրներու կառավարութեանց առաջ տուելու պահուն դնել զանգուածային հայրենադարձութեան վերաբերեալ հարցը: Այս կարծիքին համաձայնեցան հանրապետութեան համապատասխան օրկանները, ուստի 1962 թ. հայրենադարձութիւն կատարուեցաւ միայն Կիպրոսէն, Եգիպտոսէն եւ Իրանէն:

Ինչպէս սփիւռքահայերու, այնպէս ալ սուրիահայերու համար լուրջ նշանակութիւն ունէր Հայրենիքի մէջ վերաբնակեցման հարցը: Նշանակալից թիւով հայեր պատրաստ էին առաջին հնարատրութեան մշտական բնակութիւն հաստատել Հայաստան: Անոր մէջ կը տեսնէին միակ փրկութիւնը իրենց պանդխտութեան ասարտին:

Վերաբնակիչ փափաքողներու մէջ մեծ թիւ կը կազմէին վարորդներ, փականագործներ, խառատներ, ատաղձագործներ, մեքանիկներ, հողագործներ, դերձակներ, կօշկակարներ, մտաւորականներն ու մանր առէտրականներ<sup>10</sup>:

Հայրենիք վերադառնալու թոյլտուութիւն ստացողներու ցուցակները կ'ուղարկուէին ԽՍՀՄ արտաքին գործերու նախարարութիւն, ուր համապատասխան

երկրի դեսպանութեան կամ հիպատոսութեան միջոցով կ'իրականացուէր անոր հայրենադարձութիւնը: Աւելի քան մէկ տասնամեակ (1950-1961 թթ.) իրականացուած անհատական հայրենադարձութեան փորձերը կը պարզէն այն, որ հնարաւոր չէ այդ եղանակով բաւարարել ստացող բազմաթիւ խնդրանքներ:

1961 թ. երկրորդ կիսուն կը պատրաստուի տեղեկանք ցուցմունք, արտասահմանէն երկիրներէն հայերու հայրենադարձութեան կազմակերպման մասին, որպէս ուղեցոյց արտասահմանէն երկիր գացող ներկայացուցիչի, ուսումնասիրելու տուելու համայնքի հայերու վիճակի (քաղաքական, տնտեսական եւ ընկերային) եւ նախապատրաստել ու կազմակերպել հայերու հայրենադարձութիւնը:

Այդ տեղեկանքին համաձայն, ներկայացուցիչները խորհրդային դեսպանատան եւ զլխաւոր հիպատոսարանի միջոցով պիտի օգնէին հայրենադարձներուն իրենց փաստաթուղթերու վաւերացման, անշարժ գոյքի իւրացման կեդրոնական կոմիտէի եւ տեղական ներգաղթի կոմիտէի միջոցով: Հայրենադարձները պէտք է ընդգրկուէին կամ խմբաւորուէին խմբային վիզաներով եւ ըստ այնմ պէտք է հայրենադարձուէին առաջին հերթին, յատկապէս անոնք որոնք ունէին Հայաստանի տնտեսութեան համար կարելի կամ անհրաժեշտ արտադրական մասնագիտութիւն:

Այսպիսով, շահագրգռուած կազմակերպութիւններու հետ միասին ՀԽՍՀ արտաքին գործերու նախարարութիւնը կը մշակէր հայրենադարձութեան կազմակերպման վերաբերեալ մանրամասն իրաւանքներ, որոնք հանրապետութեան ղեկավար մարմիններու (օրկաններու) կողմէ հաստատուելէ ետք պիտի ուղարկուէին ԽՍՀՄ ԱԳՄ եւ այն երկիրներու մեր դեսպանութիւնները, որոնցմէ նախատեսուած էր հայերու հայրենադարձութիւնը կատարել:

1962 թ. Չոկտեմբեր 7-ին Պաթում կը հասնի հայրենադարձներու առաջին խումբը Կիպրոսէն:

1963 թ. Սփիւռքի 16 համայնքներէն, խմբակային եւ անհատական վիզաներով, Խորհրդային Հայաստան կը գաղթէ 619 ընտանիք (2.304 մարդ), որոնց կարգին՝ նաեւ Սուրիայէն:

1964 թ. տեղի ունենալիք հայրենադարձութեան նախապատրաստման հարցը կը քննարկուի ՀԽՍՀ նախարարներու խորհուրդի Մարտի 6-ի նիստին, ուր կ'որոշուի ընդունիլ 2.500 մարդ եւ զանոնք տեղաւորել Հայաստանի տարբեր շրջաններու եւ քաղաքներու մէջ: Նախապատրաստական աշխատանքները կատարելէ ետք, կը սկսի հայրենադարձներու ընդունումը: 1964 թ. խմբակային վիզայով Հայրենիք կը ժամանէ 251 ընտանիք (1.005 մարդ), որոնցմէ 187 ընտանիք (836 մարդ)՝ Սուրիայէն<sup>10</sup>:

21 Չոկտեմբեր 1964 թ. Լաթաքիոյ նաւահանգիստէն կը մեկնի հայրենադարձ-

9 ՆԱՍ, ֆ. 326, ց. 1, գ. 342, թ. 12:

10 **Մելիքութեան Ն.**, Սփյուռքահայերի հայրենադարձութիւնը (1962-1982), «Լրաբեր», Նոյն տեղը, էջ 6:



ներու առաջին կարաւանը: «Հայրենադարձների հետևից երկրորդ շոգենավը հավանաբար Լաթաքիա նավահանգիստը կժամանի հոկտեմբերի 30-31-ին և այս տարի վերջին շոգենավը կժամանի Նոյեմբերի 9-11-ին»<sup>11</sup>:

1964 թ. երկրորդ շոգենավով նախատեսուած էր հայրենադարձել 50 հայկական գիւղացիական ընտանիք Սուրիոյ Հասիչէի (Հասաքէ) նահանգէն, որոնք վերջնականապէս լքելով իրենց շրջանը՝ հաստատուած էին Հալէպի մէջ եւ կը սպասէին իրենց մեկնումին:

Այնուամենայնիւ, «1964-1966 թթ. Հալէպից Հայաստան տեղափոխվեցին 2.5 հազար հայեր»<sup>12</sup>:

Սակայն պէտք է ըսել, որ հայրենադարձներու՝ Լաթաքիոյ նահանգիստէն շոգենաւ բարձրանալու հետ կապուած էր անոնց ուղեբեռի մաքսային գնման եւ անհատական ելքի վիզայի վերաբերեալ հարցեր, որոնց ստուգումը Խորհրդային Միութեան դեսպանութիւնը կը համարէր ժամանակի կորուստ: Ուստի կը խնդրէ Հալէպի նահանգապետէն՝ Մամուտի Ջուլպիէն, առաջի հերթին անհատական վիզաներու փոխարէն, տրուի համապատասխան հաւաքական ելքի վիզա՝ ստուգելէ ետք անոնց հետ կապուած այլ հարցեր: «Քանի որ սիրիական սահմանապահ իշխանութիւնները հայրենադարձ հայերին շոգենավ նստեցնելուց վերջնում են նրանց մոտից ինքնութիւնը հաստատող տեղական վկայականները, անհրաժեշտութիւն է առաջանում հայրենադարձներին տալ կոլեկտիվ (հաւաքական - Ա.Ֆ.) անձնագրեր, որտեղ կարելի կլինի դնել ելքի սիրիական վիզա»<sup>13</sup>: Հալէպի նահանգապետը հարցը համարելով զուտ մասնագիտական, կարգաւորելու միտումով կը դիմէ Դամասկոս՝ Կեդրոնական իշխանութեան: Բայց միաժամանակ իր աջակցութեամբ ուղեբեռներու հարցը լուծում կը ստանայ, սակայն մէկ պայմանաւ, որ մաքսային ստուգման պարագային, մաքսատուրքը պիտի վճարուէր տուեալ նահանգի մաքսատան»<sup>14</sup>:

Հայերու՝ 1964 թ. հաւաքական հայրենադարձութիւնը դէպի Խորհրդային Հայաստան արաբ ժողովուրդի եւ արաբական պաշտօնատար անձերու անհանգստութիւն պատճառած էր: «Արաբները շատ են վիրավորված, որ հայերը ցանկանում են լքել Սիրիան: Արաբական պաշտօնական անձիք, ասաց ան (Մազլումեան), որոնք հաճախ են այցելում նրան հյուրանոցը (Պարոն հիւրանոց-Ա.Ֆ.) նրան են դիմում հետևյալ հարցով: Ինչո՞ւ են հայերը հեռանում Սիրիայից, միթէ՞ նրանք այստեղ վատ են ապրում»<sup>15</sup>: Սուրիահայերու հայրենադարձութիւնը անհանգստացուցած էր նաեւ արեւմտեան դիւանագետները,

11 ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 75, թ. 36 (Ռուսերէն):

12 **Բաղայան Ա.**, (23 Հոկտեմբեր 1968) Հալէպում ԽՍՀՄ-ի գլխավոր հյուպատոսութեան տեղեկանքը հալէպահայ համայնքի մասին, «Բանբեր Հայաստանի արխիվներին», N 2, Երևան, 2009, էջ 221:

13 ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 75, էջ 36-37 (Ռուսերէն):

14 Նոյն տեղը (Ռուսերէն):

15 Նոյն տեղը, թ. 25-26 (Ռուսերէն):

որոնք հաւատարմագրուած էին Հալէպի մէջ<sup>16</sup>:

Սակայն հայրենադարձներու ցուցակներու ուշացման պատճառը, համաձայն ՍԱՀ նախարարներու խորհուրդի նախագահ Սալա(հ)խ Պիթարի յայտարարութեան, այն էր, որ «...պարզվի, թէ նրանցից որեւէ մեկը պարտք չէ պետությանը, չի գտնվում դատի տակ: Նման ստուգումը Դամասկոսյան, Հոմսյան և Լաթաքիայի մուհաֆազէներում ավարտվել է եւ նրանք բոլորը կարող են հայրենադարձվել»<sup>17</sup>: Ան կը յայտնէ, որ Հալէպի ստուգման աշխատանքները դեռ չեն ավարտած եւ կրնան մեկնիլ միայն անոնք, որոնց ստուգումը կատարուած է<sup>18</sup>:

16 Յունիս 1965 թ. Հալէպ կը ժամանեն ներգաղթի լիազօր պատուիրակներ յանձնիս Ա. Նանագիլեանի եւ Գ. Փեհլեանեանի: Պատուիրակները կ'այցելեն Գամիշլի, Բագգա, Տեր Զօր քաղաքները եւ 12 գիւղական բնակավայրեր, Սուրիոյ Ճեզիրէի շրջանը, ուր կ'ապրէին հայեր: Նախապատրաստական աշխատանքներ կատարելէ ետք կը սկսի հայրենադարձներու ընդունումը: Ըստ 20 Յուլիս 1965 թ. դրութեան, հայ պատուիրակներու կողմէ ընդունուած էր տեղափոխել 1.364 ընտանիք, 7.700 հոգի 10 քաղաքներէ եւ քաղաքատիպ բնակավայրերէ եւ 350 ընտանիք, 2.500 հոգի՝ երկրի գիւղական շրջաններէ: «Սակայն հանձնարարված քանակից կարող են հայրենադարձվել ընդամենը 220 ընտանիք, 1.000 մարդ: Մնացյալը 1.144 ընտանիք 6.600 մարդ եւ որոշ մեծ ընտանիքներ նոյնպէս պատրաստվում են հայրենադարձվելու այս տարի կամ ալ 1966 թ. սկիզբը»<sup>19</sup>:

Այս կարելի է հիմնաւորել անով, որ հայերու հայրենադարձութեան ցուցակները սուրիական իշխանութեան պէտք էր փոխանցուէր 14 Օգոստոս 1965 թ.: Սակայն ԽՍՀՄ դեսպանատան կողմէ կրկնակի հարցումներէն ետք ցուցակները տեղական իշխանութեան կը յանձնուին 14 Սեպտեմբեր 1965 թ.:

Սուրիական իշխանութիւնը իւրաքանչիւր հայրենադարձէ կը պահանջէր անձնապէս ներկայանալ եւ գրաւոր յայտարարութիւն ներկայացնել սուրիական քաղաքացիութենէ դուրս գալու: Մեծ դժուարութիւն կը ստեղծուի նաեւ զօրակոչիկներու եւ զինուորներու համար: «Անոնցմէ կը պահանջուէր ծանրակշիռ գումար: Իւրաքանչիւր անձի համար 2.000 ս.ո. զինուորական ծառայութենէ ազատելու համար»<sup>20</sup>:

Անկասկած որ այսպիսի սահմանափակումներ արգելք պիտի հանդիսանային մեկնումի փաստաթուղթերու ձեւակերպման եւ գործնական հայրենադարձութեան իրագործումի ուշացման:

Սուրիոյ հայերու՝ Խորհրդային Հայաստան մեկնելու առնչութեամբ իր դժգո-

16 Նոյն տեղը, թ. 26 (Ռուսերէն):

17 Նոյն տեղը, թ. 27 (Ռուսերէն):

18 Նոյն տեղը:

19 ՀԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 575, թ. 2, 40:

20 ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 378, թ. 8:





1965-1966 թթ. հայրենադարձություն Գամիշլիէն:

հուրիւնը կը յայտնէ Լաթաքիոյ նահանգապետ Նասիփ Սաֆարճալին. «Սուրիոյ հայերու մեկնումը Խորհրդային Միութիւն հաւասարազօր է իւրաքանչիւր սուրիացիի մարմինէն մաս մը պոկելուն: Հայերը Սուրիոյ մէջ ապրած են մօտ 50 տարի, անոնց ճշող մեծամասնութիւնը ծնած է այստեղ: Անոնք բոլորն ալ սուրիական քաղաքացիներ են, սուրիացիներու եղբայրներն ու քոյրերը»<sup>21</sup>:

Տեղական իշխանութիւններու կարգ մը սահմանափակումներն ու Սաֆարճալիին խօսքերը պէտք չէ բացատրել իշխանութեան բացասական կեցուածքի որդեգրումով, այլ՝ հայրենադարձող հայերու ցանկութիւնը, անոնք կը գտնէին բնական ու իրաւացի: Բայց միւս կողմէ անոնց կ'անհանգստացնէր այն, որ երկրէն այնքան գործունեայ է ձեռներեց մարդոց դուրս գալը կ'ազդէր երկրի տնտեսական ու մշակութային կեանքի բնականոն ընթացքին: Առաւել «բաւական բնութագրական է հետեւեալ փաստը, որ երկու օր առաջ տեղական իշխանութիւնները մերժած են ելքի վիզա տալ Գանատա հայկական ընտանիքի մը եւ անոնց ուղղակիօրէն յայտարարած են, որ անոնք պէտք է մշտական բնակութիւն հաստատեն ՍԱՀ կամ ալ հայրենադարձուին Խորհրդային Հաստատան»<sup>22</sup>:

1965 թ. տեղական իշխանութեանց կողմէ սահմանափակումները վերացնելու մտադրութեամբ, Սուրիոյ մէջ ԽՍՀՄ դեսպանի խորհուրդով պատուիրակութիւն մը կ'առաջացնեն համայնքի՝ Դամասկոսի, Հալէպի եւ Գամիշլիի երեւելի անձերէ, որոնք սրբազանի գլխաւորութեամբ 20 Սեպտեմբեր 1965 թ. կ'այցելեն ներքին գործերու նախարարին: Վերջինիս պատրաստակամութեամբ հարցերը կը ստանան դրական լուծում, բացի զինապարտներու հարցէն, զոր լուրջ ուսումնասիրութեան կարիք կ'ենթադրէր: Նաեւ «չթելադրեց կանչել նաեւրը, մինչեւ վերջնականապէս ցուցակներու ընդունիլը»<sup>23</sup>:

Այսուհանդերձ, կ'ենթադրուէր երթեւեկութեան հարցի կարգաւորումը, ոչ աւելի շուտ, քան ձկտեմբեր 1-ին, եթէ վերացուին բոլոր սահմանափակումները: Միայն վերջին երեք տարիներու ընթացքին Հայրենիք կու գան 7 հազար հայեր, որոնց ընդունումն ու աշխատանքի տեղաւորումը աւելի կազմակերպուած էր, քան նախորդ տարիներուն: Սակայն ցաւալի փաստը այն է, որ Սուրիայէն եկած խումբ մը հայեր, հայերէն խօսիլ չէին գիտէր: Անոնց ընտանիքի խօսակցական հիմնական լեզուն քրտերէն էր: Անոնք մեծ մասամբ գաղթած էին Գամիշլիէն:

Մեր քաղաժ տեղեկութիւններուն համաձայն, 1967-1968 թթ. կանգ կ'առնէ սուրիահայերու Հայաստան տեղափոխուիլը՝ Սուրիա-Իսրայէլեան պատերազմի հետեւանքով. «սա անհանգստություն առաջ բերեց հայերի մոտ, քանի որ ներգաղթը դեպի Հայրենիք դադարեց անորոշ ժամանակով»<sup>24</sup>:

21 ՀԱԱ, ֆ. 326, ց. 2, գ. 75, թ. 35:

22 Նոյն տեղը, թ. 22:

23 Նոյն տեղը: Նաեւ ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 378, թ. 8:

24 **Բաղալյան Արմեն**, (23 Նոյտեմբեր 1968) «Բանբեր Հայաստանի արխիվներին», թիւ 2, 2009, Երևան, էջ 222:



#### Գ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐՈՒՆ ԼՊԱՍՏ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ

1964-1965 թթ. Սուրիայեն Հայրենիք վերադարձած 1.571 հայրենադարձներուն որոշ մասը կու գար Սուրիոյ գիւղական տարբեր հայկական բնակավայրերէն, ուր կը գործէին ծխական դպրոցներ՝ մէկ կամ աւելի ուսուցիչներով, որոնց վըստահուած էր բոլոր առարկաներու դասաւանդումը: Չոն չկային բարձրագոյն ուսման հայկական հաստատութիւններ, որոնք հնարաւորութիւն պիտի տային կատարելագործելու իրենց ուսումը: Այս իսկ պատճառով գիւղական շրջաններէն կը տեղափոխուէին քաղաք՝ ուսանելու եւ վերապատրաստուելու յետագային ուսուցչական պաշտօն վարելու համար իրենց շրջաններու վարժարաններէն ներս: Անոնցմէ ոմանք կու գային արաբախօս կամ քրտախօս շրջաններէն, ուր գերիշխողը, հայերէնի կողքին, պիտի ըլլար քրտերէնը ու յատկապէս արաբերէնը: Ուստի, վերոյիշեալ շրջաններէն գաղթողները, ոչ թէ բոլորովին հայերէն խօսիլ չէին գիտեր, այլ անոնք արեւելահայերէնով արտայայտուելու դժուարութեան առաջ կանգնած էին:

1964 թ. ներգաղթողներէն Մ. Ոսկերիչեան Հասիչէն, հետեւեալը կը պատմէ. «1964 թ. Նոյեմբերին հասանք Պաթում: Մեր Նալին մէջ, բացի մեր ընտանիքէն կային քրտախօս պշերիկցիներ, Տերպետիէն եւ այլ վայրերէն հայեր: Իմ ամուսինը՝ Յ. Ոսկերիչեան, որ արհեստով ձուլագործ էր, թարգման հանդիսացաւ այդ հայերուն եւ Պաթումի ներկայացուցիչներուն միջեւ: Մեզի, բացի դրամէն տուին մտեղէն եւ չորեղէն. ապահովելու մեր ճանապարհի սնունդը, դէպի Երեւան»:

Հայրենիք վերադառնալէն ետք, բացի դպրոցահասակ բոլոր երեխաներէն, ոմանք եւ ընդգրկուեցան կազմակերպուած դասընթացքին, որուն շնորհիւ արեւելահայերէն չիմացողները կարճ ժամանակամիջոցին սորվեցան արտայայտուիլ, կարդալ ու գրել, յատկապէս 1964 թ. Հայրենիք վերադարձածները:

Այնուամենայնիւ, հազարաւոր հայրենադարձներ, յատկապէս հիւսիսային Սուրիայէն եկած, անձնուր աշխատանք ծաւալեցին հանրապետութեան «կոլտնտեսային» դաշտերու մէջ: Անոնք դարձան գիւղատնտեսութեան առաջաւոր, բարձր բերքի վարպետներ, նշանաւոր խաղողագործներ եւ ծխախոտագործներ: Բազմաթիւ հայրենադարձ կիներ ծառայեցին դպրոցներու եւ ինստիտուտներու մէջ, մանաւանդ օտար լեզուներու ուղղութեամբ: Ինչպէս օրինակ օտար լեզուներու ինստիտուտի դասախօսներէն Փ. Նարգադեան Սուրիայէն, ֆրանսերէնի դասատու էր 26 կոմիսարներու անուան դպրոցին մէջ:

1 **Սուրբանան-Ոսկերիչեան Մ.**, 1964 թ. հայրենադարձներէն իր ամուսնոյն եւ չորս երեխաներուն հետ: Ուսումը կատարելագործած է Երեւանի Արեւելագիտական ինստիտուտի մէջ: Աշխատած է որպէս մանկավարժ Աբովեանի թիւ 1 դպրոցը, 23 տարի:

2 ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 32, թ. 10:

Երեւանի Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի մէջ կ'աշխատէին տարբեր մասնագիտութիւններու գծով հայրենադարձ դասախօսներ: Յիշատակութեան արժանի է Անժէլ Քիրքճեանը, որ ստացած էր բանասիրական գիտութիւններու թեկնածուի կոչում:

Ս. Մ. Կիրովի անուան գործարանի տարրալուծարանի մէջ կ'աշխատէին չորս հայրենադարձ կիներ, որոնցմէ Տ. Եագուպեանը՝ Սուրիայէն, Հայրենիք հաստատուելով կը լծուի աշխատանքի, իսկ քոյրը՝ Ա. Եագուպեան Հայկական ԽՍՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի մեթենագրուի էւ միաժամանակ ուսանողուի օտար լեզուներու անգլերէն ինստիտուտի:

Գիտութեան բնագաւառէն ներս եւս հայրենադարձները կ'ունենան իրենց ներդրումը: Անոնցմէ շատեր կ'աշխատին կենսաբանական եւ գիւղատնտեսական գիտութիւններու բաժամունքներէն ներս: Սուրիայէն Վ. Սեգսեւեանը՝ մանրակենսաբանութեան, Գ. Գասպարեանը՝ փիլիսոփայութեան եւ Ն. Թրեանը՝ տնտեսութեան բնագաւառէն ներս:

Ճարտարապետութեան բնագաւառէն ներս եւս հայրենադարձները բերած են իրենց նպաստը (Ե. Բեդեւեանը Սուրիայէն): Արդիւնաբերութեան խոշոր ձեռնարկութիւններու մէջ իրենց ներդրումը ունեցած են՝ Սուրիայէն մուսատաղցի Վ. Լուրճեանը, Դամասկոսէն՝ Յ. Եփրեմեանը, Ձերժիսկու անուան գործարանի աշխատակից, Հալէպէն Ն. Կոճոյեանը, Երեւանի էլեկտրոլուսատրաման սարքաւորումներու գործարանի աշխատակից: Կոլտնտեսութեան մէջ՝ Ա. Խտրեանը: Յիշատակութեան արժանի է բժշկական գիտութիւններու թեկնածու, սրտաբանութեան եւ սրտի վիրահատութեան ինստիտուտի վիրահատութեան բաժնի վարիչ Գ. Տէր Յովհաննեսեանը:

Արուեստի բնագաւառէն ներս եւս հայրենադարձները ունեցած են իրենց ներդրումը եւ կամ հայրենի հողին վրայ ստեղծագործելով՝ դարձած են հանրայայտ արուեստագետներ:

1947 թ., Հայաստանի խորհրդային կերպարուեստագետներու միութեան կազմակերպութեամբ հայրենադարձ արուեստագետներու գործերու ցուցահանդէսը գեղեցիկ նախաձեռնութիւն էր՝ հայրենի հասարակութեան ծանօթացնելու հայրենադարձ արուեստագետներն ու անոնց ստեղծագործութիւնները: Մասնակցողներէն Յ. Կալենցը, Ա. Պարոնեանը (յետագային Արմինէ Կալենց), Յ. Ասատրեանը աչքի կ'իյնային իրենց ստեղծագործութիւններով: Արուեստի բնագաւառէն ներս, աւելի ուշ, իր ներդրումը պիտի ունենար, արուեստաբան Շահէն Խաչատրեանը: Ը. Խաչատրեան պատանի տարիքին, 1946 թ. իր ծնողքին հետ ներգաղթած է Հայաստան: Բարձրագոյն կրթութիւն ստանալով՝

3 ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 31, թ. 10:

4 Նոյն տեղը: Տե՛ս նաեւ ֆ. 426, ց. 1, գ. 3786, թ. 20, 31, 44:



այսօր որպես արուեստաբան իր ներդրումը ունի Հայրենիքին:

Խորհրդային Հայաստանի գրական անդաստանեն ներս եւս իրենց պատուաւոր տեղը կ'ունենան հայրենադարձ գրողները: Անոնք Հայրենիքի հողին վրայ բնականօրէն կ'ապրին մեծ հոգեփոխութիւն, ոգետրութիւն եւ այդ բոլորը, տպատրութիւններն ու հիացմունքը, կը դրսետրութիւն առաջին ստեղծագործութիւններուն մէջ: Սուրիայէն Ս. Ալաճաճեան եւ Ա. Թերզեան հանրածանօթ անուններ կը դառնան գրական անդաստանէն ներս: Վերջինս Հայրենիքի մէջ լոյս կ'ընծայէ իր անդրանիկ բանաստեղծական ժողովածուն՝ «Արեւելք» խորագիրով<sup>5</sup>:

Բացի վերոյիշեալներէն, Սփիւռքէն Հայաստան կը ներգաղթեն ֆիզիքական եւ մտաւոր աշխատանքի մասնագիտութիւններ ունեցող հայրենադարձներ՝ քարտաշներ, հիւաներ, մանող-գործողներ, կօշկակարներ, դերձակներ, մեքենագործներ, մետաղագործներ, այգեգործներ եւ այլն: Գիտութեան, լուսատրութեան, արուեստներու բնագաւառի մէջ հայրենադարձը նշանակալից դիրքեր գրաւեց եւ գործեց Հայրենիքի բարօրութեան համար:

Ներգաղթի կարետրագոյն բարիքներէն մէկը այն էր, որ հայրենադարձ երիտասարդները լայն հնարատրութիւն ստացան մայրենի լեզուով կրթութիւն ստանալու, Խորհրդային Հայաստանի դպրոցներէն եւ բարձրագոյն ուսումնական հաստատութիւններէն ներս:

1964 թ. հայրենադարձներէն էր նաեւ Ե. Մելքոնեանը (Գամիշլիէն), որ ուսումը ստանալով Անթիլիասի դպրեւանքէն՝ կը ներգաղթէ Հայրենիք: Մ. Ոսկերիչեանի տեղեկութիւններուն համաձայն՝ Երուանդ, Պաթում հասնելուն պէս, պատմուճանը կը հանէ եւ ապա այդպէս կը մտնէ Երեւան: Երեւանի Համալսարանի մէջ անմիջապէս կ'ընդունուի բանասիրականի երկրորդ լսարանի ուսանող: Վերջին շրջաններուն ան կը նշանակուի Հայաստանի դեսպան Լիբանանի մէջ:

1946 թուականի Հալէպի ներգաղթողներէն էին նաեւ Հայաստանի Հանրապետութեան առաջին նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի ծնողները: Ան ընտանիքի հետ տեղափոխուած է Երեւան, ուր 1968 թ. աւարտած է ԵՊՆ-ի բանասիրական ֆակուլտետի արեւելագիտութեան բաժինը՝ արաբերէն լեզու եւ գրականութիւն մասնագիտութեամբ: Ասպիրանտական շրջանը անցուցած է Լենինկրատ, 1972 թ. Լենինկրատի համալսարանի մէջ պաշտպանած է թեկնածուական, իսկ 1987 թ. Նոյն համալսարանի մէջ՝ դոկտորական ատենախօսութիւնը, ստացած է բանասիրական գիտութիւններու դոկտորի գիտական աստիճան<sup>6</sup>:

Հայրենադարձներէն շուրջ 6 հազար հոգի կը ստանար կենսաթոշակ, իսկ

5 ՀԱԱ, ֆ. 426, ց. 1, գ. 3786, թ. 47:

6 [www.dasaran.am/apps/wiki/view/id/4156](http://www.dasaran.am/apps/wiki/view/id/4156):

հազար բազմավաստակ մայրեր՝ նպաստ<sup>7</sup>:

Հայրենադարձուող ընտանիքները բնակութիւն կը հաստատեն Լենինականի, Կիրովականի, Հրազդանի, Էջմիածինի, Աշտարակի, Հոկտեմբերեանի, Իջեանի, Արովեանի, Չարենցաւանի, Դիլիջանի եւ Վետիի շրջաններուն մէջ: Անոնք որոշ ժամանակ անց կը յարմարին երկրի պայմաններուն եւ իրենց ներդրումը կը կատարեն տարբեր բնագաւառներէն ներս: Անոնց կողմէ ուղարկուած նամակները (յատկապէս 1946 թ. ներգաղթողներու), որոնք տեղ գտած են մամուլի մէջ, ընդհանրապէս կը խօսին ուրախ եւ հանգստաւետ կեանքի մասին: Բայց պէտք է խոստովանիլ, թէ անոնցմէ ոչ բոլորը համակերպուած էին այդ կեանքին: Սակայն պարտադրաբար դրական կ'արտայայտուէին իրենց հայրենակիցներուն ուղարկած նամակներուն մէջ, որովհետեւ տեղական իշխանութեան կողմէ նամակները գրաքննութեան կ'ենթարկուէին:

7 ՀԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 32, թ. 4:



## ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ՍՈՒՐԻԱՆԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ



### 1. ԴՊՐՈՑՆԵՐ (Կրթական մարզ)

Յետեղեռնեան առաջին տարիներուն ջարդէն մազապործ վերապրող սերունդի մեծ զանգուածը հաստատուելով Սուրիոյ տարածքին, իր աղքատ ու թշուառ օրերուն մայրենի լեզուի իմացութիւնն ու անաղարտ պահելը համարեց հայեցի դաստիարակութեան եւ անոր ճամբով ազգային ինքնութիւնը վառ պահող միակ ուղին: Թէեւ շրջապատի այլասերող եւ ապագայնացնող բազմաթիւ վտանգներուն դէմ հայ մարդը Սուրիոյ մէջ եւս բախտեցաւ իր ազգային ինքնութիւնը կորսնցնելու եւ ձուլուելու վտանգին, սակայն չայ եկեղեցոյ եւ հասարակական կրթական պահպանել հոգետր կեանքի ու մշակոյթի ասանդները:

Ինչպէս Սփիւռքի, այնպէս ալ Սուրիոյ մէջ տասնամեակներ շարունակ հայ դպրոցի կարեւորագոյն դերը եղաւ հայոց լեզուն՝ հաղորդակցութեան, դաստիարակութեան եւ տրամաբանութեան բնական ու ճկուն միջոց դարձնել: Չայ եկեղեցին հայ Դպրոցի կողքին կանգնած դիմագրաւեց դարու մարտահրաւիրները:

Սուրիահայերը, դասուելով երկրի ազգային փոքրամասնութիւններու շարքին, վայելեցին Սուրիոյ պետութեան եւ տեղացի ժողովուրդին հիւրընկալութիւնը, յարգանքն ու վստահութիւնը, իսկ կրթական ոլորտէն ներս՝ որոշ առանձնաշնորհումներ, ի տարբերութիւն ազգային միւս փոքրամասնութիւններուն, այն ալ՝ սեփական դպրոց ունենալու հանգամանքը եւ հայերէն լեզուն որպէս ծիսական լեզու ուսուցանելու թոյլտուութիւնը:

Անկասկած, որ իրաքանչիւր երկիրի մէջ այս հարցը տարբեր կերպ կ'ըն-



թանար: Մերձատր Արեւելքի շարք մը երկիրներու մէջ յաջորդաբար տասնեակ դպրոցներ բացուեցան եւ սկսան իրենց գործունէութեան:

Սփիւռքի մէջ ազգային դպրոցի կազմակերպման եւ գործունէութեան առաւել վառ օրինակը հանդիսացաւ Նաեւ Սուրիոյ հայ համայնքը, որ թէ՛ կրթական ու մշակութային եւ թէ՛ հասարակական-քաղաքական գործունէութեամբ առանձնայատուկ համակրանքի արժանացաւ եւ իր ուրոյն տեղը զբաղեցուց տեղի բնակչութեան կողմէ: Ի զուր չէ, որ տասնեակ տարիներ համարուեցաւ ազգապահպանման գլխատր օճախ, մշակութային եւ հասարակական խոշորագոյն կեդրոն:

Սուրիոյ հայկական կրթօճախները ի սկզբանէ ձեւաւորուելով, կազմաւորուելով եւ ընթանալով օտար միջավայրի մէջ՝ ոչ միայն դարձան գիտութեան եւ կրթութեան դարբնոց, այլեւ հնարաւորութիւն ստեղծեցին զգալիօրէն բարձրացնել աշակերտութեան հանրակրթական մակարդակը եւ հնարաւորին չափով պահպանել հայու ազգային ինքնագիտակցութիւնը:

Արդէն, 1924-1925 թթ. Հալեպի մէջ գործող 19-ը հայկական դպրոցներէն 10-ը կը պատկանէին հայ առաքելական, 5 հայ անտարանական եւ 4 հայ կաթողիկէ համայնքներուն<sup>1</sup>: Անոնք կը հովանաւորուէին հայրենակցական միութիւններու կողմէ եւ կամ կազմակերպուած էին համայնքային հիմունքներով<sup>2</sup>, այսինքն՝ թեմերու հովանաւորութիւնը վայելող դպրոցներ:

Մինչեւ 1940 թուական, բացի Հալեպէն, Սուրիոյ հիւսիսային եւ հիւսիս-արեւելեան գաւառներուն եւ յատկապէս Գամիշլիի շրջակայքը 25-էն աւելի աւաններու մէջ, գոյութիւն ունէին ծխական դպրոցներ: Անոնք ընդհանրապէս խեղճ եւ անմխիթար վիճակի մէջ կը գտնուէին. «Շրջաններու կատարածը աւելի մեծ զոհողութիւն մը կը կազմէ նկատի առած, որ այդ շրջաններու վարժարաններէն քիչեր են, որ կարգով լման նախակրթարաններ են եւ մեծ մասը 2-3 եւ առաւելագոյնը 4 կարգով դպրոցներ են»:

1944 թ. տուեալներով, Բերիոյ թեմը ուներ՝

16 Ազգային վարժարաններ (նախակրթարան)	4.791 աշակերտներով
13 մանկապարտեզ	2.179 հոգի

Միայն Հալեպի եւ շրջակայքի հայ աշակերտութեան թիւը կը հաշուէր 9.000, որոնց 5.000-ը՝ Ազգային վարժարաններուն, 2.000-ը՝ կաթողիկէ եւ 1.500-ը՝

1 Թովմուզյան Ն. Խ., Սիրիայի եւ Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986, էջ 273:

2 Թովմուզյան Ն. Խ., նշ. աշխ., էջ 274-276:

3 «Արեւելք», օրաթերթ, թիւ 153, 20 Դեկտեմբեր 1946, Հալեպ:

անտարանական վարժարաններուն մէջ<sup>4</sup>:

Բերիոյ թեմի 1944-1945 թթ. վիճակագրութեան համաձայն<sup>5</sup>

Բերիոյ թեմը ուներ դպրոց	Հալեպ	թեմի միա համայնքներուն	աշակերտ	մանչ	աղջիկ	պաշտօնէութիւն
36	12	24	7.798	4221	3577	292

1944 թ. կրթական տարեշրջանին հայ առաքելական եկեղեցւոյ՝ Բերիոյ եւ Դամասկոսի թեմերու պիտոճէն կը հաշուէր 356.850 սուրիական ոսկի: Հայ կաթողիկէ եւ հայ անտարանական եկեղեցւոյ պիտոճէի հետ գումարը կը կազմէր 400.000 սուրիական ոսկի<sup>6</sup>:

Բերիոյ թեմը ուներ	դպրոց	աշակերտ	ուսուցիչ-ուսուցչուհիներով
1945-1946 թթ.	39	8.093	314 7
1946-1947 թթ.	41 ազգային վարժարաններ	6.560	8

Հալեպ հրատարակուող «Արեւելք» օրաթերթի 1946 թ. թուահամարներէն «Կրթական կեանքը Հալեպի մէջ» խորագիրը կրող յօդուածը կը յիշատակէ, որ վերոյիշեալ թուականներուն Բերիոյ թեմը ունեցած է.

Բերիոյ թեմը ուներ	դպրոց	Հալեպ		շրջանները	
1946					
	42	13		29	
		8 ազգային	5 միութենական	28 ազգային	1 միութենական

Ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ քննարկուող ժամանակաշրջանին ամբողջ Սուրիոյ տարածքին կը գործէին առաքելական համայնքի 55 վարժարաններ (Ազգային եւ միութենական), հայ կաթողիկէ՝ 5 եւ հայ անտարանական՝ 7 վարժարան<sup>8</sup>:

Քառասունական թուականներու երկրորդ կեսը Մերձատր Արեւելքի, յատկապէս Սուրիոյ պարագային, կ'անցնի բաւականին լարուած քաղաքական վերիվայրումներով: Արեւելքի մէջ ազգային-ազատագրական պայքարը ֆրանսական մանդատի (հոգատար իշխանութիւններու) դէմ, հակաֆաշիստական ուժերու յաղթանակը Բ. Աշխարհամարտի տարիներուն եւ հայրենական մեծ

4 «Հասկ», ամսագիր, Մայիս-Յունիս, 1944, Անթիլիաս, Լիբանան, էջ 76-80:

5 «Հասկ», Յունուար-Փետրուար, 1945, Լիբանան, էջ 32:

6 Եղիայեան Բ., Սերունդի մը դաստիարակութիւնը, Անթիլիաս, 1962, էջ 120:

7 «Արեւելք», թիւ 153, 20 Դեկտեմբեր 1946, Հալեպ: Տես նաեւ Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ (1914-1972), Անթիլիաս, 1975, էջ 588:

8 «Արեւելք», տարեգիրք, 1948, Հալեպ, էջ 157-158:

9 Թովմուզյան Ն. Խ., նշ. աշխ., էջ 278:



42-32

ԳՐԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐՈՒՄԸ ԳՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՈՒԹՅԱՆ  
1942-43 և 1943-44 թվականներին

1.- ԳՐԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՄԸ	Պարզիկ սակար.		Պարզիկ օրից.		Պարզիկ թիվը		Պարզիկ թիվը	
	942/43	943/44	942/43	943/44	942/43	943/44	942/43	943/44
1/ Հայկազեան	745	837	26	28	17 000	27 412.-		
2/ Մահազեան	340	422	15	15	7 600	11 200.-		
3/ Մեսրոպեան	296	381	10	10	3 435	6 100.-		
4/ Արամեան	68	57	2	3	640	1 200.-		
5/ Կիլիկեան	323	233	12	6	9 024	6 380.-		
6/ Վարդանեան	275	315	10	11	2 045	3 500.-		
7/ Գերմանիկեան	100	109	4	4	785	1 175.-		
Գումար-	2147	2344	79	77	40 529	56 967.-		
2.- ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՄԸ								
1/ Երթասիրաց	639	631	21	24	12 500	22 000.-		
2/ Կիլիկեան, Պիսի	683	662	22	25	11 416	19 835.-		
3/ Յուսեփեան	429	520	19	19	9 563	16 680.-		
4/ Կիլիկեան, Մէյսա	280	300	8	9	2 470	5 350.-		
5/ Արմէնեան, Ե. Մ.	86	90	3	4	875	1 555.-		
Գումար-	2117	2203	73	80	36 824	45 420.-		
3.- ԹԵՄԱՆԵՆ ՎԱՐՈՒՄԸ								
1/ Ազազ	223	230	9	10	3 275	3 855.-		
2/ Արիս	135	120	4	5	2 000	4 510.-		
3/ Արա-թուսար	211	158	8	7	2 700	6 628.-		
4/ Այն-էլ-Արուս	52	50	2	2	750	1 200.-		
5/ Ամուս	37	33	1	1	400	800.-		
6/ Գամիշլի	298	370	10	12	4 495	14 765.-		
7/ Գարսուրան	155	166	4	9	805	3 500.-		
8/ Եղուսիյէ	70	65	2	3	354	1 000.-		
9/ Թէլ-Արիս	95	80	3	3	800	1 600.-		
10/ Թէլ-Քոչէթ	32	33	1	2	270	840.-		
11/ Թէլ-Արազ	51	40	2	2	765	960.-		
12/ Լաթարիա	220	228	10	11	4 100	6 080.-		
13/ Թարթուս	40	30	2	2	600	1 313.-		
14/ Հասիլէ	105	64	4	4	2 000	3 000.-		
15/ Տարալուս	166	139	6	7	1 500	3 200.-		
16/ Ռուս-էլ-Այն	72	83	3	3	1 195	2 500.-		
17/ Տէյր-էզ-գոր	104	115	4	5	1 600	2 530.-		
18/ Տէրալուսիյէ	48	32	2	1	575	1 400.-		
19/ Ռազազ	62	82	3	4	1 100	2 020.-		
20/ Էլսազ	219	219	11	11	3 000	5 000.-		
21/ Ղրնէմիյէ	30	-	1	-	300	-		
22/ Տէրիթ	40	-	1	-	630	-		
23/ Գուր-էլ-Քիթ	30	-	1	-	300	-		
24/ Տուս	-	29	-	1	-	1 360.-		
25/ Վուսուսիէ	-	30	-	1	-	700.-		
26/ Տէլիթ-Հիս	-	31	-	2	-	800.-		
Գումար-	2485	2490	94	108	33574	69 370.-		

151/

ՏԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՐԿՈՒԹՅԱՆ ԲԵՐԻՈՑ ԹԵՄԱՆ  
Քսակութիւն

Կարգաթիւ	Վայրը	1945			
		Քսակութեան թիւը	Տնունդներ	Ամուսնութիւններ	
1.-	Ք Ա Լ Ը Գ	50 043	840	219	328
2.-	Ազէզ	1 176	46	6	18
3.-	Արիս	526	18	5	11
4.-	Տարալուս	980	20	3	18
5.-	Այն-էլ-Արուս	256	10	1	7
6.-	Ռազազ	311	3	1	4
7.-	Թէլ-Արիս	561	22	2	9
8.-	Այն-էլ-Արազ	1 225	22	3	13
9.-	Լաթարիա	1 334	16	3	6
10.-	Էլսազ	1 381	20	6	8
11.-	Գարսուրան	953	15	6	6
12.-	Թարթուս	113	2	-	-
13.-	Տարալուսիյէ	451	12	3	8
14.-	Տիւր-էլ-Տըր	125	1	-	1
15.-	Ընկզիկ	75	1	-	-
16.-	Արամ	206	5	1	2
17.-	Գամիշլի	7 624	227	27	74
18.-	Գուրալուս	47	3	-	6
19.-	Թէլ Քոչէթ	75	8	-	-
20.-	Թէլ Արազ	255	11	-	2
21.-	Հասիլէ	362	31	-	7
22.-	Տէյր-Քոր	255	19	2	5
23.-	Ռուս-էլ-Այն	302	5	-	-
24.-	Տէրալուսիյէ	254	10	-	-
25.-	Ամուս	107	9	3	2
26.-	Տէրիթ	273	11	-	6
27.-	Գ ա ղ	50	-	-	-
28.-	Մէնգիթ	170	-	-	-
29.-	Այն-Արիս	70	-	-	-
30.-	Մէյսան էրալուս	57	-	-	-
31.-	Ղրնէմիյէ	121	2	-	-
Գումար		69 738	1384	291	539

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Բերիոյ թեմի արխիւ, հաւաքածոյ 3, ցուցակ 1, թղթածրար 45, թերթ 57:

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Բերիոյ թեմի արխիւ, հաւաքածոյ 3, ցուցակ 1, թղթածրար 45, թերթ 54:



38  
52

ՏՈՐՈՆԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԵՐՈՑ ԵՄԻՆ  
1944 - 1945 տարեշրջանի կրթական ամսերը

Քիւ	Գործող անունն ու վայրը	Աշակերտութիւնը զառանգելու թիւը						Գործող Պ. Սակի
		Մանչ	Սղիկ	Գումար	Եր. Կիւ	Գումար	Պ. Սակի	
1.-	Հայկազեան	412	430	842	10	22	32	48300
2.-	Կրթասիրաց	336	306	642	8	15	23	27200
3.-	Մասակեան	201	206	407	6	10	16	18500
4.-	Ջաւարեան	276	260	536	10	12	22	24300
5.-	Կիւլաէնկեան	181	143	323	3	6	9	11800
6.-	Արամեան	47	33	80	2	2	4	3673
7.-	Մեսրոպեան	226	237	463	3	9	12	11500
8.-	Պերմանիկեան	62	77	139	4	4	4	2500
9.-	Արմենեան, Ե. Մազուն	43	50	93	4	4	4	2150
10.-	Վարդանեան	193	167	360	2	10	12	7150
11.-	Կիլիկեան, Սիսի	378	357	735	13	17	30	28837
12.-	Կիլիկեան, Մէլաս	219	191	410	3	8	11	9850
13.-	Ռուսումնասիրաց	...	...	...	...	...	...	...
14.-	Մասակեան	2574	2456	5030	60	119	179	195760
15.-	Արամեան	122	113	235	6	5	11	5600
16.-	Արթիմեան	96	72	168	4	3	7	5200
17.-	Նուգարեան	128	89	217	4	3	7	7700
18.-	Ազգային	41	25	66	1	1	2	2500
19.-	Ազգային	30	19	49	1	1	1	700
20.-	Վերածնունդ	247	89	336	5	5	10	14000
21.-	Մեսրոպեան	55	35	90	3	1	4	1900
22.-	Մեսրոպեան	67	56	123	2	3	5	2100
23.-	Ազգային	...	...	...	...	...	...	...
24.-	Նորէնեան	63	40	93	1	1	2	2200
25.-	Ազգային	34	21	55	2	2	2	2000
26.-	Ազգային	17	16	33	1	1	1	700
27.-	Մ. Յակոբեանց	17	10	27	1	1	2	1800
28.-	Մեսրոպեան	122	111	233	4	6	10	9500
29.-	Միացեալ	45	55	100	4	2	6	5000
30.-	Ազգային	128	89	217	5	5	10	8000
31.-	Մեսրոպեան	30	20	50	2	2	2	2500
32.-	Ազգային	...	...	...	...	...	...	...
33.-	Ազգային	62	8	70	1	1	2	2800
34.-	Նուգարեան	67	53	120	4	2	6	5800
35.-	Մասակեան	53	29	82	1	2	3	2750
36.-	Ռուսումնասիրաց	57	53	110	2	3	5	3800
37.-	Ազգային	102	102	204	5	6	11	5800
38.-	Ազգային	25	5	30	1	1	1	880
39.-	Ազգային	34	6	40	1	1	1	990
40.-	Ազգային	...	...	...	...	...	...	...
41.-	Ազգային	...	...	...	...	...	...	...
42.-	Ազգային	...	...	...	...	...	...	...
Գումար		4221	3877	7798	116	176	292	287550

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Բերիոյ թեմի արխիւ, հաւաքածոյ 3, ցուցակ 1, թղթածրար 45, թերթ 55:

53 39

ՏՈՐՈՆԻՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԲԵՐՈՑ ԵՄԻՆ  
1944-45 Վերականգնողական ամսերը

Քիւ	Գործող անունն ու վայրը	Աշակերտութիւնը զառանգելու թիւը						Գործող Պ. Սակի	
		Մանչ	Սղիկ	Գումար	Եր. Կիւ	Գումար	Պ. Սակի		
1.-	Հայկազեան	282	297	418	805	10	21	31	50496
2.-	Նուգարեան	333	303	626	9	14	23	11	71700
3.-	Մասակեան	229	224	453	10	11	21	11	25455
4.-	Ջաւարեան	263	261	524	8	11	19	11	11722
5.-	Կիւլաէնկեան	204	146	350	3	6	9	6	3540
6.-	Արամեան	31	41	72	2	2	4	4	1800
7.-	Մեսրոպեան	269	260	515	5	11	16	16	18800
8.-	Պերմանիկեան	69	65	134	4	4	4	4	3300
9.-	Արմենեան, Ե. Մազուն	52	47	100	1	3	4	4	3483
10.-	Վարդանեան	126	117	233	3	8	11	11	7473
11.-	Կիլիկեան, Միսի	378	358	736	13	17	30	30	30000
12.-	Կիլիկեան, Մէլաս	244	236	500	3	8	11	11	10000
13.-	Ռուսումնասիրաց	282	272	554	7	12	19	19	19600
14.-	Մասակեան	2574	2456	5030	60	119	179	179	240337
15.-	Արամեան	122	113	235	6	5	11	11	7600
16.-	Արթիմեան	96	72	168	4	3	7	7	3400
17.-	Նուգարեան	128	89	217	4	3	7	7	7000
18.-	Ազգային	41	25	66	1	1	2	2	2818
19.-	Ազգային	30	19	49	1	1	1	1	800
20.-	Վերածնունդ	247	89	336	5	5	10	10	21880
21.-	Մեսրոպեան	55	35	90	3	1	4	4	1750
22.-	Մեսրոպեան	67	56	123	2	3	5	5	3200
23.-	Ազգային	...	...	...	...	...	...	...	1062
24.-	Նորէնեան	63	40	93	1	1	2	2	3800
25.-	Ազգային	34	21	55	2	2	2	2	1000
26.-	Ազգային	17	16	33	1	1	1	1	1276
27.-	Մ. Յակոբեանց	17	10	27	1	1	2	2	1200
28.-	Մեսրոպեան	122	111	233	4	6	10	10	8900
29.-	Միացեալ	45	55	100	4	2	6	6	3200
30.-	Ազգային	128	89	217	5	5	10	10	5090
31.-	Մեսրոպեան	30	20	50	2	2	2	2	2100
32.-	Ազգային	...	...	...	...	...	...	...	1350
33.-	Ազգային	62	8	70	1	1	2	2	2700
34.-	Նուգարեան	67	53	120	4	2	6	6	3800
35.-	Մասակեան	53	29	82	1	2	3	3	2750
36.-	Ռուսումնասիրաց	57	53	110	2	3	5	5	3800
37.-	Ազգային	102	102	204	5	6	11	11	5800
38.-	Ազգային	25	5	30	1	1	1	1	880
39.-	Ազգային	34	6	40	1	1	1	1	990
40.-	Ազգային	...	...	...	...	...	...	...	...
41.-	Ազգային	...	...	...	...	...	...	...	...
42.-	Ազգային	...	...	...	...	...	...	...	...
Գումար		4221	3877	7798	116	176	292	287550	

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն, Բերիոյ թեմի արխիւ, հաւաքածոյ 3, ցուցակ 1, թղթածրար 45, թերթ 56:



պատերազմի ասարտը իրենց արձագանգը կը գտնեն հայ համայնքներու ընկերա-քաղաքական եւ տնտեսական կեանքին մէջ: Կարելոր բարեփոխումներ կ'իրականացուին նաեւ ազգային-մշակութային կեանքին մէջ:

Սակայն համայնքի տեղաշարժերու, պառակտումներու դարմանումի եւ նիւթական միջոցներու տնտեսումի անհրաժեշտութեան հետեւանքով, ժամանակի ընթացքին թեմի դպրոցներէն շատեր կը փակուին, իսկ ուրիշներ կորիզ կը հանդիսանան ներկայի գործող վարժարաններուն:

Այս բոլորէն բացի, կար օտար վարժարաններ յաճախող աշակերտութեան հարցը, որ զօտ տնտեսական էր եւ թեմի ազգայինները իրենց կարելին կ'ընէին հայ պատանին ներգրաւելու հայկական դպրոցէն ներս, սակայն ի տարբերութիւն այլ համայնքային վարժարաններուն, թեմի ազգային վարժարաններու նիւթական հասոյթը կը գոյանար մեծ մասամբ աշակերտութեան կրթաթոշակէն, հայրենակցական միութիւններու տարեկան նպաստներէն եւ կարգ մը բարերարներու նիւթաբարոյական օժանդակութիւններէն: «Նազարատր պզտիկներ կը յաճախէն օտար վարժարաններ, որովհետեւ վճարելու բացարձակապէս ի վիճակի չեն, իսկ մեր ազգային վարժարաններու հոգաբարձութիւնը այնքան ծանրաբեռնուած է նիւթական մտահոգութիւններով, որով հակառակ իրենց բարեացակամութեան, չեն կրնար ատելի թիով ձրի աշակերտներ ընդունիլ: Օտար վարժարանները հասկնալի նկատառումներով ձրի աշակերտներ կ'ընդունին մեր համայնքէն (առաքելական - Ա. Ֆ.), որովհետեւ զանազան աղբիւրներէ գումարներ կը ստանան»<sup>10</sup>:

Մինչեւ քառասունական թուականներու կէտը Սուրիոյ հայկական վարժարաններու ուսումնակրթական ծրագրի մէջ առաւել տեղ յատկացուած էր հայոց լեզուի եւ հայագիտական առարկաներու ասանդման: Արաբերէն լեզուի ուսուցումը հայկական կրթօճախներու մէջ նախնական էր եւ ոչ պարտադիր: Հայագիտական առարկաներու ցուցակին մաս կը կազմէին հայոց պատմութիւնը, Հայաստանի աշխարհագրութիւնը, եկեղեցւոյ պատմութիւնը, ուսողութիւնը (մաթեմատիկա) ու այլ նիւթեր:

Բայց 1945-1946 թթ. սահմանուած նոր օրէնքը կը շեշտէր արաբերէն լեզուի ուսուցման եւ ընդհանրացման կարեւորութիւնը մասնաւոր դպրոցներու մէջ: Օրէնքը կը միտէր համայնքային դպրոցներու վերահսկողութեան ու տնօրինումին: «Կրթական նախարարութիւնը որոշած է ուսումնական, առողջապահական եւ մանկավարժական հսկողութեան տակ առնել բոլոր մասնաւոր դպրոցները, կրթական քննիչները պետական վարժարաններու նման քննութիւն պիտի անցընեն վերոյիշեալ վարժարաններու մէջ»<sup>11</sup>: Սահմանուած օրէնքով պետական պաշտօններէն եւ համալսարանական կրթութենէն կը

<sup>10</sup> ԲԹ ԱԱԱ, դարան Բ., գ. 62, «Կրթական համապատկեր Բերիոյ թեմին»:

<sup>11</sup> «Արեւելք», թիւ 92, 10 Հոկտեմբեր 1946, Հալէպ:

զրկուին բոլոր անոնք, որոնք վկայուած են օտար եւ մասնաւոր վարժարաններու մէջ»<sup>12</sup>: «Համալսարանական թեքնիք ուսման պայմանը արաբական պաքալորիայի պահանջն էր, ինչ որ կը պահանջէր հայկական դպրոցներու ուսման ծրագրի հիմնական փոփոխութիւն»:

Հակառակ ստեղծուած իրավիճակին՝ քառասունականներու վերջը կառավարութիւնը անյապաղ միջոցներ կը ձեռնարկէ հայ համայնքի դպրոցներու բարելաման համար. «Սուրիոյ Կրթական նախարարութիւնը, բացի ուսուցիչներէ, մեր վարժարաններուն կը յատկացնէ տարեկան որոշ գումար՝ կրթական նպաստ: Վերջացող տարեշրջանին Հալէպի եւ շրջաններու մեր 45 վարժարաններէն 35-ին կառավարութիւնը յատկացուցած էր 16.500 սուրիական ոսկի գումար մը»<sup>13</sup>:

Այսպիսով, 1940-ական թթ. երկրորդ կէտէն սկսեալ համայնքի կրթական կեանքին մէջ կարելոր փոփոխութիւններ տեղի կ'ունենան: Դպրոցի այսպիսի ղեկավարումը պիտի ստիպէր կամ հնարատրութիւն պիտի տար հայկական ազգային վարժարաններու ուսման համակարգը պատշաճեցնել տուեալ ժամանակի պահանջներուն, եւ հայ երեխաներուն ջամբել այնպիսի կրթութիւն եւ դաստիարակութիւն, որոնցմով պիտի պահպանէին ազգային ինքնագիտակցութիւնը՝ միեւնոյն ժամանակ պատրաստ ըլլային գործունէութիւն ծաւալելու Սուրիոյ մէջ, որպէս լիիրա քաղաքացիներ:

Ուրեմն, նախակրթարաններէն ներս յատուկ դասաժամեր պէտք է տրամադրուին արաբերէն լեզուի եւ արաբերէնով ասանդուելիք առարկաներուն: Սակայն արաբերէն լեզուն պաշտօնականացնելու առաջին իսկ օրէն հայ դպրոցը չէր կրնար արաբերէնը դիտել սոսկ լեզու, այլ պէտք էր հայ ուսանողին ծանօթացնել երկրի պատմութիւնն ու մշակոյթը, որոնցմով կարելի պիտի ըլլար հայ-արաբ ազգային լեզուական դժուարանցանելի պատուարը յաղթահարել: Այս առումով, Սուրիոյ կառավարութիւնը անյապաղ միջոցներ կը ձեռնարկէ հայ համայնքի դպրոցներուն նիւթական եւ բարոյական (արաբերէն լեզուի դասատուներ յատկացնել) օժանդակութիւն ցուցաբերելու:

Տիրող պայմաններուն առջնթեր կը սկսին գործել բազմաթիւ նախակրթարաններ, միջնակարգ եւ մշակութային այլ կառոյցներ: Այսպիսով, անհրաժեշտութիւն կը դառնայ հայկական ազգային վարժարաններու միասնական մէկ ծրագիր ունենալը, որով պիտի պահպանուէր հայ ասանդական կրթական համակարգն ու գործելու եղանակը: Նպատակի իրականացման համար հարկ էր միասնական կրթական եւ դաստիարակչական կանոնագիր-

<sup>12</sup> «Արեւելք», թիւ 334, 24 Յունիս 1947, Հալէպ:

<sup>13</sup> ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 69, թ. 6 («Տեղեկագիր», Սուրիահայ կրթական կեանքի մասին 1955 թ.-էն 1956 թ. դպրոցական տարեշրջանին): Նաեւ «Արեւելք», թիւ 3, 25 Յունիս 1946, Հալէպ: «Հայաստանի կոչնակ», ամսագիր, թիւ 37, 1948, Նիւ Եորք, էջ 880:



ծրագիր: Այդպիսի ծրագրի մը ստեղծման անհրաժեշտությունը հասունցած էր նախ եւ առաջ այն պատճառով, որ համայնքի ղեկավարներն ունայն Սուրիան չէին դիտեր որպէս ժամանակաւոր հանգրուան, այլ երկրորդ հայրենիք, ուր պէտք էր մշտական բնակություն հաստատելին: Միասնական կանոնագիր-ծրագրի ստեղծման պատճառներէն մէկը հանդիսացաւ նաեւ 1946 թ. Սուրիոյ նոր պետական կրթական ծրագրի հրապարակումը: Սուրիոյ կրթական հաստատությունները այդ թուականէն, աստիճանաբար սկսած էին ձեռնարկել երկրի պետական կրթական ծրագրի կիրառման:

Սակայն ստեղծուած նոր ուսումնական ծրագիրը ուներ որոշ թերություններ, որոնք բացասաբար պիտի անդրադառնային հայ երիտասարդության յետագայ ուսուցման վրայ: Սուրիոյ պետական կրթական ծրագիրը շատ դանդաղ կը ներմուծուէր հայկական դպրոցներ: Ուշադրությունը կեդրոնացուցած էին օտար լեզուներու, իսկ արաբերէն լեզուն, հակառակ նոր կրթական ծրագրին, պարտադիր էր բոլոր հայկական վարժարաններու համար եւ դասաւանդումը կը կատարուէր մակերեսօրէն: Փաստօրէն ստեղծուած էր այնպիսի իրավիճակ, ուր հայ երիտասարդը անելի լաւ սկսած էր տիրապետել ֆրանսերէն եւ անգլերէն լեզուներուն, քան արաբերէնին: Այդ պիտի ստիպէր ներկայացուցիչներուն՝ ուսումնառությունը կատարելագործելու համար մեկնիլ Եւրոպա կամ ԱՄՆ, ինչ որ բացասաբար կ'անդրադառնար Սուրիոյ եւ տեղական, եւ համայնքային կենսի բարգաւաճման:

Ուսումնակրթական հիմնախնդիրներու առաջադրանքով Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան հովանաւորութեամբ եւ նախաձեռնութեամբ 19 Սեպտեմբեր 1946 թ. պաշտօնական բացում կը կատարուի «Ուսուցչական Առաջին համագումար»-ին: Այդ մտայնացումն էր ՆՍՕՏՏ Գարեգին Ա. կաթողիկոսին (Յովսէփեանցին): Ան 26 Յունիս 1946 թուականի շրջաբերականով թեմական առաջնորդներուն կը ծանուցէր «Առժամեայ Կեդրոնական Ուսումնական Խորհուրդ» մը յառաջացնելու մասին՝ թեմերէն ներս որպէս կրթական հարցեր համակարգող մարմին: Խորհուրդը նկատի առնելով տարածաշրջանի պայմաններն ու կացությունը՝ 20 Յուլիսին կը փարի աշխատանքի, որոնցմէ կարեւորագոյններն էին՝

\*«Սուրիոյ եւ Լիբանանի ազատագրեալ պետութեանց կրթական նոր քաղաքականությունն եւ պահանջները.

\*Ներգաղթի հետեւանքով ստեղծուած եւ ստեղծուելիք փոխանցման շրջանը.

\*Թեմերու մէջ դեռ որոշ չափով տիրող ապակեդրոնացման վիճակը եւ ընդհանուր կրթական ծրագրի մը եւ կազմական կանոնագրի պակասը:

\*Ազգային Կեդրոնական վարչութեան նոր կացութեան հանդէպ բռնած ընթացքը»<sup>14</sup>:

Ութ նիստերու ընթացքին քննարկուած բազմապիսի հարցերուն շեշտը առաւել չափով դրուեցաւ «նոր ծրագրի կազմութեան միջոցին մասնաւոր հոգածութեան առարկայ դարձնել ծրագրին ազգային եւ կրօնական մասը, թէ նոր սերունդները պէտք է դաստիարակել պետականութիւն ունեցող ժողովուրդի մը հոգեբանութեամբ, որովհետեւ նոր անկիւնադարձի մը առջեւ կը գտնուինք»<sup>15</sup>:

Համագումարը կ'անդրադառնայ Սփիւռքի հայ ուսուցիչի դերին եւ հեղինակութեան, մատուցած ծառայություններուն, անոր անբաւարար վարձատրութեան, ապագային սպառնացող նիւթական անապահովութեան ու թշուառութեան. կը շեշտէ անհրաժեշտութիւնը հանգստեան թոշակի կամ առնուազն խնայողական սնտուկի նախագիծի կանոնագրութիւն մը, զոր պատրաստած էր կաթողիկոսարանը եւ որ գործադրութեան պիտի դրուէր 1 Հոկտեմբեր 1946-էն սկսեալ: Սակայն յիշենք, որ հալէպահայ Ուսուցչաց միութիւնը հաստատած էր նման ձեռնարկ մը 1943-էն սկսեալ:

Այդ համագումարի լոյսին տակ, 1946 թ. Դեկտեմբերին Բերիոյ թեմի Ազգային իշխանութիւնը դպրոցներու տնօրէններու հետ խորհրդակցաբար կը վերամշակէն կրօնի, հայերէնի, թուաբանութեան, ազգային եւ ընդհանուր պատմութեան, աշխարհագրութեան ծրագիրները: Այս կը միտէր ծանրաբեռնուած ծրագիրէն դուրս բերել աշակերտութիւնը, «ուժ տալ ամենէն կարեւոր առարկաներուն, որոնք կ'ապահովեն երկու նպատակ՝ պահպանում ազգային դիմագծութեան եւ մանուկներու պատրաստութիւնը գործնական կենսի»<sup>16</sup>, որովհետեւ ուսանողութեան մեծ մասը նախակրթարանի ընթացքը ասարտել էտք, հնարաւորութիւն չունենալով երկրորդական ուսման հետեւելու, կ'անցնէին գործնական կենսի (արհեստագործութեան -Ա. Ֆ.): Ժողովը առաջնահերթ կը համարէր հայերէն լեզուի, պատմութեան, կրօնական գիտելիքներու, արաբերէն լեզուի եւ թուաբանութեան ուսուցումը:

Ժողովը իր օրակարգերուն մէջ տեղ տալով «օտար լեզուներու ուսուցման», կը քննարկէ ու կարեւորութեամբ կը շեշտէ արաբերէն լեզուի ուսուցումն ու իմացութիւնը. «Նախակրթարանի Ա. կարգէն սկսած շաբաթական 6 պահով, այսինքն՝ ամենօրեայ դասաւանդութեամբ: Եթէ չըլլար պետութեան պահանջը բաւարարելու պարագան, նաեւ այս լեզուի ուսուցումը կարելի է սկսիլ Դ. դասարանէն, որովհետեւ ինչպէս փորձը ցոյց տուած է, նախնական դասարաններու մէջ պզտիկները չեն կրնար բաւարար չափով օգտուիլ լեզուներու ուսուցումէն»<sup>17</sup>:

1946 թ. Լիբանանի հայ ազգային վարժարաններու ուսումնական խորհուրդը կը հրատարակէ «Կանոնագիր Լիբանանի ազգային վարժարանաց»: Անմիջապէս մէկ տարի անց, 1947 թ., Անթիլիասի Կիլիկիոյ կաթողիկոսութեան առ-

15 «Հասկ», Նոյն տեղը, էջ 295:

16 «Արեւելք», թիւ 151, 18 Դեկտեմբեր 1946, չափաւ, էջ Բ.:

17 Նոյն տեղը:

14 «Հասկ», ԺԵ. տարի, թիւ 9-10, Սեպտեմբեր-Հոկտեմբեր, 1946, Լիբանան, էջ 290-291:



ժամայ կեդրոնական ուսումնական խորհուրդը կը հրատարակէ «Կազմական եւ ներքին կանոնագիր Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու ազգային վարժարաններու» եւ «Կրթական ծրագիր Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու ազգային վարժարաններու»<sup>18</sup>, զորս կը վաերացնէ եւ Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու կրթական համագումարը, եւ ազգային կեդրոնական վարչութիւնն ու կաթողիկոսը:

Կանոնագիրի նպատակն էր՝

1. «Ճշդել այն մարմիններու իրաւունքներն ու պարտականութիւնները, որոնք պէտք է վերհսկէին երեխաներու դաստիարակութեան:

2. Ճշդել այն պարտաւորութիւնները եւ պարտականութիւնները, որոնցմով իրարու հետ կապուած էին վարժարաններու ուսուցչական կազմը, տնօրէնը եւ աշակերտութիւնը:

3. Ճշդել վարժարաններու ընդհանուր եւ ներքին կառուցուածքը»<sup>19</sup>:

Կրթական ծրագիրի նպատակն էր միօրինակութիւն մտցնել վարժարաններէն ներս դասաւանդուող առարկաներու միջեւ, որպէսզի աշակերտներուն հաւասարապէս օրինաւոր գիտելիքներ տեղաբաշխուէին:

Այսպիսով, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերու ազգային վարժարանները եւ առհասարակ անոր ազգային կրթական գործը կաթողիկոսութեան կեդրոնական ուսումնական խորհուրդին իրաւասութեամբ պիտի գործէր. խորհուրդը կ'ընտրուէր եւ կը կազմուէր կաթողիկոսութեան Ազգային կեդրոնական վարչութեան կողմէ: Վերջինս իր օգնականները ունէր՝ թեմերու ուսումնական խորհուրդներէն մէկական ներկայացուցիչներ եւ թեմական կրթական քննիչներ: Կեդրոնական ուսումնական խորհուրդը կրթական գործերով ամմիջական կապ կը հաստատէ թեմական ուսումնական խորհուրդներուն հետ, որոնք կրթական եւ դպրոցական հարցերով պէտք է գործակցէին թաղական խորհուրդներու, կրթական քննիչներու եւ տնօրէններու հետ: Այդ համագործակցութիւնը թոյլ կու տար անելի բարձր մակարդակով կազմակերպել վարժարաններու գործունէութիւնը:

Թեմական ուսումնական խորհուրդներու պարտականութիւնները եւ իրաւունքները բաւականին բազմաձաւալ էին: Նշուած զանազան պարտականութեանց կողքին, կապ կը հաստատէին այլ թեմական ուսումնական խորհուրդներուն հետ, ինչպէս նաեւ կը հարթէին այն տարաձայնութիւնները, որոնք կը ծագէին տնօրէնի, հոգաբարձութեան, կրթական քննիչի<sup>20</sup>, ուսուցչական

18 Բերիոյ թեմի ազգային վարժարաններու «Կազմական եւ ներքին կանոնագիր»-ը կը վաերացուի Բերիոյ թեմի պատկառելի քաղաքական ժողովի կողմէ եւ լոյս կը տեսնէ 1950 թ.:  
19 «Կազմական եւ ներքին կանոնագիր Բերիոյ թեմի ազգային վարժարաններու», Հալէպ, 1950, էջ 3-10:

20 Կրթական քննիչը ազգային առաջնորդարանի կողմէ ուսումնական հարցերու պատասխանատու անձն է եւ համարատու է վերին իշխանութեան: Քննիչի պարտականութիւնն է

կազմի եւ վարչական այլ մարմիններու միջեւ:

Թեմական ուսումնական խորհուրդներուն հետ միասին կը գործէին թաղային խորհուրդներ, որոնց հիմնական պարտականութիւններն էին թաղային կամ ծխական վարժարաններու հաստատումը, ինչպէս նաեւ այդ վարժարաններու վերահսկումը, որոնց համար նպատակայարմար չէր կազմել յատուկ հոգաբարձութիւն: Հոգաբարձութիւնը կ'ընտրուէր իւրաքանչիւր դպրոցի համար եւ պատասխանատու էր վարժարանի կրթական, դրամական (նիւթական) եւ վարչական հեզասահ ընթացքին: Խորհուրդը իրաւասու էր տնօրէնին հետ աշխատանքի հրաւիրել ուսուցչական կազմը եւ այլն:

Թեմական ուսումնական խորհուրդի աշխատանքը թեթեւցնելու եւ վարժարաններու հետ անմիջական կապ հաստատելու համար իւրաքանչիւր թեմ պէտք է ունենար մէկ կամ երկու կրթական քննիչ, որ աշխատանքի կը հրաւիրուէր թեմի քաղաքական ժողովի համաձայնութեամբ<sup>21</sup>: Բացի կրթական քննիչէն, դպրոցի գործունէութիւնը հսկելու եւ անոր աշխատանքներուն ճիշդ ուղղութիւն տալու համար կը նշանակուէր պատասխանատու տնօրէն: Տնօրէնը սովորաբար թեմի Առաջնորդը կամ զինք փոխարինող քահանան էր, որ կը նշանակուէր կառավարութեան համաձայնութեամբ:

Ազգային վարժարաններու գլխաւոր խնդիրներէն էր նաեւ մանկավարժական որակեալ անձերու (քատրերու) բացակայութիւնը: Այդ պատճառով թեմի Ուսումնական խորհուրդը խիստ ուշադրութիւն կը դարձնէ ուսուցիչներու մասնագիտական պատրաստութեան<sup>22</sup>:

Այնուամենայնիւ, սուրիահայ համայնքը կ'աշխատէր պահպանել գործող դպրոցները եւ ուսումնական ծրագիրներու համար նիւթական օժանդակութիւն յատկացնել՝ տրամադրելով մեծ գումարներ:

Հարկ է յիշել, որ մինչեւ 1939 թ. Սուրիոյ հայկական դպրոցներու մեծագոյն մասը քառամեայ կամ տարրական նախակրթարաններ էին: Չկային վեցամեայ նախակրթարաններ: Պետութեան կողմէ ընդունուած կրթական նոր ծրագիրով երեխաներու կրթութիւնը կը սկսէր մանկապարտէզէն, որմէ ետք նախակրթարան կը շարունակէին վեցամեայ ծրագիրով. ընթացքը կ'աւարտէին «սերթիֆիքա»-ի (վկայագիր) քննութիւններով: Աշակերտը այդ քննութիւնները յանձնելով իրաւունք կ'ունենար կրթութիւնը շարունակելու մինչեւ պրովէի (9-րդ կարգի) ասարտական քննութիւն:

Աւելի ուշ պիտի ստեղծուէին ութամեայ կամ բարձրագոյն հաստատութիւններ,

Նպատակն ուսումնակրթական խնդիրներուն՝ միացեալ կրթական ծրագրի գործադրութեան, ուսուցիչներու որակաւորման հարցերուն եւ այլն: Դժբախտաբար, այսօր այդ պաշտօնը կը վարեն պետութեան կողմէ նշանակուած անձեր: Տե՛ս «Կազմական եւ ներքին կանոնագիր Բերիոյ թեմի ազգային վարժարաններու», Հալէպ, 1950, էջ 8-9:

21 Նոյն տեղը, էջ 3-10:

22 Նոյն տեղը, էջ 10-18:



որոնց կողքին պիտի գործէին մանկապարտեզներ՝ քառամեայ ծրագիրով<sup>23</sup>։  
Սակայն ոչ բոլոր հայկական դպրոցները կը հետեւէին այս ծրագրին։ Կային վարժարաններ, որոնք կը կիրարկէին ֆրանսական կրթական ծրագիրը։ Ֆրանսական պետական ծրագրի կիրառումով երկսեռ աշակերտութիւնը նախակրթարանը կ'աւարտէր «սերթֆիքա»-ի քննութիւնով, որ տեղի կ'ունենար բարձր «կոմիսարութեան» հովանաւորութեամբ եւ խիստ հսկողութեամբ։ Յիսունական թուականներու աւարտին կը փոխարինուի արաբական «սերթֆիքա»-ով, եւ 1959-էն ետք այդ օրէնքը կը վերանայ։

Քառասունական թուականներու երկրորդ կիսուն, հրատապ հարց կը համարուէր ազգային երկրորդական վարժարան ունենալու խնդիրը<sup>24</sup>։ Ֆրանսական վարժարաններու փակումով, ուր կը յաճախէին հարիւրաւոր հայ ուսանողներ, մեծ թիւով թեկնածուներ թերաւարտ կը մնան։ Քայլեր կը ձեռնարկուին երկրորդական վարժարանի մը պահանջքը լրացնելու համար, բայց «մոռացութեան տրուեցաւ հարցը»։

Այս գործին խթանող ուժը կը հանդիսանայ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանը իր իմաստուն եւ շրջահայեաց առաջնորդի՝ Տ. Զարեհ Ծ. Վրդ. Փայասլեանի շնորհիւ (յետագային Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ), որ երկար բանակցութիւններէ, խորհրդածութենէ ու լուրջ աշխատանքէ ետք, 1947 թ. համայնքը կ'օժտէ միջնակարգ-երկրորդական վարժարանով, որ կ'անուանուի Ազգային Քարէն Եփփէ Ճեմարան՝ ի երախտագիտութիւն տանիմարքացի միսիոնարուի օր. Քարէն Եփփէի։ Այս կը նշանակէր, որ յետայսու հայ առաքելական եկեղեցոյ զաւակները, ազգային եւ պետական դաստիարակութիւն պիտի ստանային նոյն յարկին տակ, այլ խօսքով՝ անոնք կը ձերբազատէին օտար վարժարաններ յաճախելէ կամ օտար ափեր ճամբորդելէ։ Նետզիտէտ

23 **Թովուգյան Ն. Խ.**, նշ. աշխ., էջ 281։

24 Նալեպի (հիւսիսային Սուրիոյ) մէջ կը գործէին Ամերիկեան աղջկանց բարձրագոյն վարժարանն (1922-1936 թթ.) ու հայ աստարանական մանչերու բարձրագոյն վարժարանը (1923-1926 թթ.)։ Վերջինը 1927-1928 թթ.-էն ետք պիտի ճանչցուէր «Նալեպ Գոլէճ» (Aleppo Collage)։ 1933 թ. Ամերիկեան աղջկանց բարձրագոյն վարժարանը կը սկսի գործակցիլ Նալեպ Գոլէճին հետ։ Միացեալ հաստատութիւնը պիտի ծառայէր Սուրիոյ ողջ հայութեան՝ «լուսատրելով սուրիահայերու հորիզոնը»։ Պատմական տունալներու համաձայն, մինչեւ «1962 թ., այդ կառոյցէն ներս կը դասաւանդուէր հայերէն լեզու»։ (**Չոլաքեան Յ.**, Ալեքիփո Գոլէճ, «Գեղարդ» Ե. գիրք, Նալեպ, 1996, էջ 356-364։ Նաեւ **Նոյնի**, Ութսունամեակ Նալեպի Ազգային Սահակեան վարժարանի 1927-2007, Նալեպ, 2007, էջ 23-25)։ Այս մասին անդրադարձած է նաեւ **Գարճեան Վեր. Յ. Լ.**, «Գեղարդ», Ե. գիրք, 1996, Նալեպ, էջ 365-369։ Ան «Յուշեր՝ Ալեքիփո Գոլէճի ներքին կեանքէն» իր յօդուածին մէջ հետեւեալ կը գրէ. «Նայերէն լեզուն եւ գրականութիւնը պարտադիր էր բոլոր հայերուն համար մինչեւ ֆրեշմեն կարգ, շաբաթական երեք պահի դրութեամբ։ Նայերէնը զարգացնելու լայն առիթներ կը ներկայացնէին բառագիտութեան, քերականութեան, շարադրութեան, արտասանութեան, տարի մը գրաբարի եւ երկու տարի մատենագիտութեան պատմութեան դասեր» («Գեղարդ» Ե. գիրք, Նալեպ, 1996, էջ 368։ **Չոլաքեան Յ.**, 1923-2013 Տարեգրութիւն Նայ աստարանական Բեթել վարժարանի, Նալեպ, 2016, էջ 232)։



Ազգային Քարէն Եփփէ Ճեմարան 1950-1960 թթ. - Նալեպ։



աշակերտության թուաճին համաձայն, համայնքները մեծ գումարներ կը յատկացնեն տարեց - տարի աճող պիտոճեն ծածկելու, հակառակ որ կրթական յարկերը մատնուած էին տնտեսական տագնապի: «Սուրիոյ հայ բոլոր վարժարանները բաց պահեցին իրենց դռները պատերազմի տարիներուն, թէւ 1939-1941 թթ. կրթական այդ յարկերը տնտեսական տագնապի մատնուեցան: Ժողովուրդը դրամ չունէր, կեանքի սղութիւնը կը սպառնար, երբ դաշնակիցները մուտք գտած չէին Սուրիա»<sup>25</sup>:

Յաջորդաբար, 1952 թ. ՀԲԸՄ-ի նախաձեռնութեամբ իրականութիւն կը դառնայ Լազար Նաճարեան Գալուստ Կիլպէնկեան կեդրոնական երկսեռ վարժարանը: 1956-1957 տարեշրջանին կ'օժտուի միջնակարգ, իսկ 1959-1960 թթ.՝ երկրորդական բաժիններով<sup>26</sup>:

1960-1961 թթ. Հալէպի մէջ հիմը կը դրուի Կիլիկեան Ճեմարանի, որ հայկական չորս երկրորդական վարժարաններէն մէկն է Ներկայիս (չորրորդը՝ Կրթասիրաց Սարգիս Չեմպերճեան երկրորդական վարժարան): Հազիւ ինքզինք գտած՝ պիտի փորձէր իր ուսանողութեան ձայնը լսելի դարձնել «Կայծեր» պարբերաթերթով, որուն պիտի անդրադառնամ յետագային:

Սուրիոյ մէջ գործող վարժարաններու պիտոճէն կը կազմուէր ուսման վարձքէն, միութիւններու եւ առանձին անհատներու նուիրատուութիւններէն: Համայնքներուն պատկանող վարժարանները օգնութիւն կը ստանային նաեւ համայնքային վարչական մարմիններու կողմէ:

1949 թ., Նորանկախ Սուրիոյ կառավարութիւնը կրթական ծրագիրը վերատեսութեան ենթարկելով՝ որոշ փոփոխութիւններ կը կատարէ, որոնցմէ կարեւորագոյններէն էր «պետական պաքալորիայի ծրագիր»-ը: Հալէպի կրթական տնօրէնութիւնը 19 Մարտ 1949 թուակիր եւ 6975120 թիւ երկտողով կառավարական եւ մասնաւոր դպրոցներու տեսչութեանց ուշադրութեան կը յանձնէ կրթական նախարարութեան հրատարակած մէկ որոշումը, որով կ'արգիւտէր «Էլ Շախսիէթ Էլ թարիխիէ» (Պատմական անձնաւորութիւններ) անունով արաբերէն գիրքի գործածութիւնը դպրոցէն ներս: Այս հրամանագիրով Կրթական նախարարութիւնը կ'ուզէր վերացնել այն ատելութիւնը, որ ծնունդ առած էր համայնքի զաւակներու տարբեր խաւերու միջեւ, ուր տեղ գտած էին նաեւ պատմական ոչ ճշգրիտ տուեալներ, ինչ որ չէր նպաստէր ուսումնակրթական ծրագիրին, ազգային դաստիարակութեան դիմագիծի պահպանման<sup>27</sup>:

Սակայն Բերիոյ թեմի Ուսումնական խորհուրդը երկար ճանապարհ անցնելով՝ կը շարունակէ ի գործ դնել ֆրանսական ծրագիրը<sup>28</sup>, որովհետեւ պետա-

25 «Հայաստանի կոչնակ», թիւ 50, 1945, Նիւ Եորք, էջ 1164:

26 **Պերդոտեան Լ.**, ՀԲԸ Միութեան Լազար-Նաճարեան-Գալուստ Կիլպէնկեան կեդրոնական երկսեռ վարժարան 1954-1993, Հալէպ, «Գեղարդ», Ե. գիրք, Հալէպ, 1996, էջ 386-394:

27 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 70:

28 «Ֆրանսական գիտական պաքալորիան երկու աստիճաններ ունէր՝ առաջինը, որ կը

կան պաքալորիայի ծրագիրին անհաղորդ ըլլալով կրնար անոր կիրառումը դժուարութիւններ յարուցել:

1950-1960-ական թթ. ազգային կրթական հաստատութիւնները կրկին կը դիմագրաւեն Նոր դժուարութիւններ:

1950 թ., կրթական Նոր մշակուած ծրագիրով կ'աւելնան արաբերէնի պահերու եւ արաբերէնով դասաւանդող դասանիւթերու թիւերը: Թեմի Առաջնորդը 14 Հոկտեմբեր 1950 թ. վարժարաններու տնօրէններուն ուղղած իր շրջաբերականին մէջ հետեւեալը կը թելադրէ. «...կը խնդրենք յատուկ ուշադրութիւն դարձնել վերի կէտերուն, եւ ընդհանրապէս աչալուրջ ըլլալ, որ մեր տղաքը սիրեն այս գեղեցիկ լեզուն, ոչ միայն օգտակար քաղաքացիներ ըլլալու համար այս երկրին, այլ եւ յառաջիկային ամէլ լաւ ճանչնալու եւ սիրելու համար արաբական դարատր մշակոյթն ու արաբ ազնիւ ժողովուրդը»<sup>29</sup>: Սակայն արաբերէն լեզուի անբարար ուսուցիչներու պատճառով հայ դպրոցը չէր կրնար այդ պայմանները լրացնել:

1952 թ. Մարտ 17-ին Սուրիոյ զինուորական Նոր իշխանութիւնը կը հրապարակէ նախապէս պատրաստուած կանոնադրական հրամանագիր մը՝ յատուկ մասնաւոր եւ համայնքային վարժարաններու ներկայացուցիչներուն, որ կը մտահոգէր ղեկավարութիւնը<sup>30</sup>: Այս կանոնագրութեամբ կը ջնջուէր՝

«1. Համայնքներու վարժարաններ բանալու եւ ունենալու իրաւունքը:

տրուէր 11-րդ կարգի ասարտին (փրեմիէր փարթի). երկրորդը, որ կը տրուէր 12-րդ կարգի ասարտին (տօզիմ փարթի): Երկուքն ալ կը տրուէին յետ պետական քննութիւններուն: Ֆրանսական ծրագիրով առաջնային լեզուն ֆրանսերէնն էր: Աւանդուող առարկաները կ'անցնէին ֆրանսերէն լեզուով: Իսկ արաբերէնը կը տրուէր սոսկ լեզու՝ շաբաթական ութ պահով»: Տէն **Չոլաքեան Յ.**, Յուշամատեան Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի, էջ 72-74 եւ 113: «Կրթական Մասրիֆը (Կրթական Գերատեսչութիւնը) տարուէ տարի ամէլ յաճախ կը հետաքրքրուի դպրոցներով, կրթական ծրագիրներով, առողջապահութեամբ, ուսուցչական կազմերու որակով: Դպրոց կ'այցելէն տարբեր բնագաւառներու քննիչներ, կը մտնեն դասարաններ»: Տէն **Նոյնի**, 1923-2013 Տարեգրութիւն Հայ ամետարանական Բեթել վարժարանի, Հալէպ, 2016, էջ 229, 231:

29 **Չոլաքեան Յ.**, Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի 1927-2007, էջ 221: «Ուսուցման նիւթերու մէջ տեղի ունեցած նորութիւնը հետեւեալն էր՝

ա-Շաբաթական 5-6 պահ արաբերէն, բոլոր դասարաններուն համար:

բ-Գ.-Ձ. կարգերուն հայերէն թուաբանութեան հետ դասաւանդել նաեւ շաբաթական մէկ պահ թուաբանութիւն՝ արաբերէնով:

գ-Ե.-Ձ. կարգերուն մէջ շաբաթական մէկ պահ Սուրիոյ պատմութիւն եւ մէկ պահ Սուրիոյ աշխարհագրութիւն» (**Չոլաքեան Յ.**, Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի 1927-2007, Նոյն տեղը):

30 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 71, 7 Մայիս 1953 թուակիր նամակի արաբերէն պատճեն, առաջուած կրթութեան նախարարութեան կողմէ: «Նորանկախ երկիրը կ'ուզէր ազգային դաստիարակութիւնը հունի մէջ դնել երկրի եւ պետական, եւ մասնաւոր դպրոցներուն մէջ: Պետական լեզուն արաբերէնն էր, հետեւաբար ուսման լեզուն պէտք է արաբերէն ըլլար, Նոյնպէս եւ դպրոցական բոլոր դիւանական թուղթերը պէտք է արաբերէն ըլլային»: (**Չոլաքեան Յ.**, 1923-2013 Տարեգրութիւն Հայ ամետարանական Բեթել վարժարանի, էջ 249):



2. Մեր լեզուն (հայերենը) կը նկատուի օտար լեզու եւ կը պարտադրուի, որ շարքաբանական չորս պահ միայն դրուի դասացոյցներու մէջ:

3. Կը պահանջուի, որ մասնաւոր վարժարաններու տնօրէնները ունենան առնուազն արաբական երկրորդական կրթութեան վկայական»<sup>31</sup>:

Սահմանուած օրէնքը կը միտէր որոշ սահմանափակումներով համայնքային վարժարաններու փակում, երկսեռ կրթութեան արգիւում, դասանիւթերու ճշդում եւ արաբերէն լեզուի պարտադիր ուսուցում: Կ'արտօնուէր օտար լեզուի դասատրման դրութիւն. Չոլաքեան կը գրէ. «Պետական նոր օրէնքով անհատներու եւ համայնքներու դպրոցները կ'ենթարկուին որոշ դժուարութեան եւ որոնց յաղթահարելը եւ կամ իրականացնելը մասամբ անկարելի ըլլալով գոցուելու վտանգին ենթակայ էին դարձեր»<sup>32</sup>:

Այնուամենայնիւ, պետական շրջանակներու մօտ տարուած աշխատանքներու շնորհիւ, 1952 թ. ամրան, թիւ 175 հրամանագիր օրէնքին համաձայն, Սուրիոյ մեր վարժարանները նոր արտօնագիր կը ստանան: Նոր կանոնադրութեամբ Հալէպի հայ առաքելական համայնքի 15 վարժարաններէն 11-ի պատասխանատու արտօնատեր կը հանդիսանայ Բերիոյ թեմի Առաջնորդը, որպէս ներքին տնօրէն (սեփականատէր): Մ'նացեալ չորս վարժարաններու երկուքին արտօնատէրը` ՀԲԸ Միութիւնը, իսկ երկուքինը` Կիլիկիանը<sup>33</sup>: Նաեւ «այս հրամանագիրի մէջ յօդուածի համաձայն, հայերէնը օտար լեզու չէր նկատուեր, այլ տեղւոյն մէջ համայնքի գործնական լեզուն, որով կ'առջօթէն անոնք»<sup>34</sup>:

Այսպիսով, Սուրիոյ Արաբական Հանրապետութեան Նախագահի 30 6 1954, թիւ 190 օրէնքի հրամանագիրով կը հաստատուի, որ կրօնը, որպէս դասասանդուող առարկայ մաս կը կազմէր պետական ընդհանուր քննութիւններուն: Այս առնչութեամբ հրամանագիրը կը բովանդակէր`

- Ներկայացնել ծրագիր կանոնագիր.
- Ուսանողներուն եւ աշակերտներուն պարտատրիչ կերպով հետետութիւնը կրօնագիտութեան.
- Կրօնի դասաւանդման յատուկ ուսուցչական կազմի անուանացանկի ներկայացում, նաեւ պետական քննութեան սրբագրութեան մասնակցութեան<sup>35</sup>.
- Տրամադրութիւնը գործադրելու համար` 1955-1956 կրթական տարեշրջանէն սկսեալ<sup>36</sup>:

31 «Ազդակ», թիւ 7104, 20 Յունուար 1956, Պէյրութ:  
 32 **Չոլաքեան Յ.**, Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի, էջ 236:  
 33 Նոյն տեղը: Տէս նաեւ **Նոյնի**, Յուշամատեն Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի, էջ 99:  
 34 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 69, թ. 2 («Տեղեկագիր», Նշ. աշխ.):  
 35 Ազգային Առաջնորդարանի կողմէ նախարարութեան կ'ողարկուին տնօրէն եւ պատասխանատու ուսուցիչներու անուններն ու կենսագրականները: Ուստի Կրթական Նախարարութեան 28 Յունիս 1954 թուակիր էր թիւ 1010/4 հրահանգով Հալէպի Կրթական տնօրէնութեան` 6 Յունիս 1954 թուակիր էր թիւ 9154 պաշտօնագիրով աշխատելու իրատնք կը տրուի անոնց (տէս ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գործ 69):  
 36 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 71, հրամանագիր` Սուրիական հանրապետութեան կրթական նախարարութիւն թիւ 1430(21-9-1955) -էջ- 5-):

Մասնաւոր վարժարաններու կացութեան շուրջ կրթութեան նախարարութիւնը թիւ 216(էջ 7), թուակիր 4 Փետրուար 1956 համարակալ նամակով «առժամապէս թոյլատու եղած է, որ մասնաւոր վարժարաններու տնօրէնները վարեն վարժարանի տնօրէնութիւնը, առանց ամբողջացնելու 17 Փետրուար 1952 թ. հրատարակած 175-րդ հրամանագիրի պայմանագիրը, որպէսզի յետագային պահանջուած վկայականներով տնօրէններ գտնուին եւ անոնց յանձնուին վարժարաններու տնօրէնութիւնը: Առժամապէս ճշդուած թոյլտուութիւնը չի նշանակէր, որ պատասխանատուները անտեսեն օրէնքի տրամադրութիւնը: Մանաւանդ համայնքներու եւ միութեան պատասխանատուները: Պէտք է, որ պայմաններ ամբողջացնող անհատներ գտնուին 175-րդ հրամանագիրի տրամադրութեանց համաձայն: Այն մասնաւոր վարժարանները, որոնք յառաջիկայ ամրան ընթացքին պայմանները ամբողջացնող նոր տնօրէններ չեն գտներ, այդ վարժարանները պիտի փակուին: (ստորագրութիւն` Կրթութեան Նախարար Մեմուն Քզպարի)»<sup>37</sup>:

Նոր արտօնագիրի հրապարակումէն ետք, թեմի Առաջնորդը պաշտօնական շրջաբերականով հետեւեալը կը յանձնարարէ վարժարաններու հոգաբարձութեան. «Արդէն 10 Յուլիսի թիւ 47 մեր շրջաբերականով հաղորդած էինք Ձեզի շարքաբանական դասերու բաշխման ցուցակը: Անշուշտ ստացած էք թարգմանութեան արաբերէն բնագիրը: Կարեւորութեամբ կը յանձնարարենք թիւ 175-րդ հրամանագիրը, ինչպէս նաեւ այս փոփոխութիւնները եւ մեր կողմէ ղրկուած դասապահերու ցուցակը նկատի ունենալով եւ ըստ այնմ պատրաստել յառաջիկայ դպրոցական տարուան Ձեր ծրագիրը»<sup>38</sup>:

Սակայն, կրթական ծրագիրի բարելաւումը անբաւարար կը համարուի, քանի որ համայնքէն ներս ուսուցչութիւնը դարձած էր անցանկալի ասպարէզ, չկար համապատասխան վարձատրութիւն եւ միաժամանակ զգալի էր մասնագետ ուսուցիչներու կարիքը եւ «վարժարաններու մակարդակի բարելաւումը» կ'իրականանար, երբ ուսուցչական ասպարէզը հրապուրիչ դառնար համայնքի զաւակներուն եւ վարձատրութիւն կատարուէր ըստ արժանւոյն: Այս առաջադրանքէն թելադրուած, թեմի Ազգային իշխանութիւնը, Սրբազան Հօր հովանաւորութեամբ, խորհրդակցական նիստ կը գումարէ, ուսուցիչներու եւ տնօրէններու դասակարգման ծրագիր մը կը բանաձեւէ ու կը վաւերացնէ, որմէ ետք կը յղէ վարժարաններու հոգաբարձութեան<sup>39</sup>: Վերջիսներս իրենց կարգին կը փորձեն

37 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 71, Սուրիական Հանրապետութեան Կրթական տնօրէնութիւն` մասնաւոր վարժարաններու կացութեան շուրջ (հայերէն-արաբերէն): Տէս նաեւ **Չոլաքեան Յ.**, 1923-2013 Տարեգրութիւն Հայ անտարանական Բեթէլ վարժարանի, էջ 281:  
 38 **Չոլաքեան Յ.**, Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի 1927-2007, էջ 237: Տէս **Նոյնի**, 1923-2013 Տարեգրութիւն Հայ անտարանական Բեթէլ վարժարանի, էջ 251-253:  
 39 Այդ ծրագիրին համաձայն, ուսուցիչներուն դասակարգումը եղած է հետեւեալ ձեով.  
 -Ա. կարգ. հայագիտական բարձրագոյն վարժարաններ շրջանաւարտները կամ ֆրան-



չթերանալ պետական ծրագիրներն ու հրահանգները կատարելու, որովհետև պետական վերահսկողությունը կը կատարուէր քննիչներու միջոցով, որոնք պարբերաբար կ'անցելէին վարժարաններ՝ հետամուտ ըլլալով ծրագիրներու գործադրութեան:

1952 թ. հրապարակուած թիւ 175 յայտնի կանոնագիրէն ետք համայնքի պատասխանատուները կը մտածեն հրաժարիլ ֆրանսական ծրագիրէն եւ քայլեր ձեռնարկել՝ որդեգրելու սուրիական պաքալորիայի ծրագիրը:

1953 թ. կը սկսին գործադրել պետական կրթական (պաքալորիայի) ծրագիրը, միաժամանակ «ի զօրու պահելով ֆրանսական ծրագիրը այն կարգերուն համար, որոնք այդ ծրագիրով սկսած էին ուսանիլ»<sup>40</sup>: Այսպիսով, պետական ծրագիրով ընթացող դասարաններու բոլոր նիւթերը պիտի աւանդուէին արաբերէն լեզուով: Իսկ ֆրանսերէնը պիտի դասուէր օտար լեզուներու կարգին եւ դասաւանդուէր շաբաթական չորս պահով միայն: «Բայց նկատի ունենալով օրէնքի մէկ տրամադրութիւնը՝ որուն համաձայն օտար լեզուի պարագային կարելի է ընտրութիւն ընել ֆրանսերէնի եւ անգլերէնի միջեւ»<sup>41</sup>:

Պետական կրթական ծրագրի իրագործումով եւ արաբերէն լեզուով դասաւանդուող առարկաներու դասապահերու յաւելումով, հետզհետէ պիտի նահանջէր հայերէնն ու պիտի նուազէր հայերէնով աւանդուելիք առարկաներուն՝ հայերէնի, հայոց պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան եւ կրօնի դասաժամերն ու քանակը. «Ե. կարգի արաբերէն լեզուով աւանդուող դասերու 17 պահը կը բարձրացնէ 24-ի»<sup>42</sup>:

Արդ, Հալէպէն դուրս Բերիոյ եւ Դամասկոսի թեմերուն մէջ բացի յարանուանական վարժարաններէն գոյութիւն ունէին 29 դպրոցներ, որոնց 23-ին արտօնատէրը թեմի առաջնորդն էր: Դամասկոսի երկու վարժարաններու (Թարգմանչաց եւ Սահակեան) արտօնատէրը՝ Շաւարշ վրդ.-ն էր (Եպիսկոպոս): Իսկ միւս չորսի՝ (Տերպետիէի Կիլիկեան, Արաբ Փունարի՝ Նալպանտեան, Քեսապի՝

սական քլաստ տը մաթեմաթիկի եւ քլաս տը ֆիլոզոֆիի շրջանաւարտներ:

-Բ. կարգ. հայագիտական վարժարաններու ոչ-հայագիտական (ինչպէս առեւտրական) ճիւղերէն շրջանաւարտները, ֆրանսական պաքալորիայի փրէմիէր փարթի վկայական ունեցողները, ամերիկեան կամ անգլիական վարժարաններէ սոֆումոր շրջանաւարտները եւ կամ համապատասխան այլ աստիճանի վկայական ունեցող ուսուցչական թեկնածուները:

-Գ. կարգ. պրովէ կամ համապատասխան կրթութիւն ունեցող թեկնածուները:

-Դ. կարգ. նախակրթարանաւարտ կամ սերթֆիթա ունեցող թեկնածուները: Համապատասխան ծրագիր մը նախատեսուած է նաեւ տնօրէններու համար՝ համաձայն գործի բնոյթի հիման վրայ: Տէն **Չոլաքեան Յ.**, Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի, էջ 242-243:

40 Տէն **Չոլաքեան Յ.**, Յուշամատեան Քարէն Եփփէ Ազգային ճեմարանի, էջ 113-114: Պետական կրթական ծրագրի իրագործման գծով. տէն նաեւ **Նոյնի**, Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի, էջ 248:

41 Նոյն տեղը:

42 **Նոյնի**, Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի, էջ 248-249 եւ 307:

Սահակեան եւ Գարատուրանի՝ Սահակեանը) սեփականատէրը Բարեգործականն էր: Կաթողիկէ վարժարաններու արտօնատէրը՝ հայ կաթողիկէ համայնքի հոգեւոր պետը, իսկ անտարանականներունը՝ Հալէպի պատուելին<sup>43</sup>:

Նշուած ժամանակաշրջանին՝ 1955-1956 տարեշրջանին, հայ առաքելական համայնքի Հալէպի եւ շրջաններու մէջ ազգային առաջնորդարանի ենթակայ 34 վարժարաններու աշակերտութեան թիւն էր 6.453, իսկ պիտճէն կը կազմէր 520.150 սուրիական ոսկի: Հալէպի եւ շրջաններու մէջ առաջնորդարանէն անկախ 11 վարժարանները ունէին 2.084 աշակերտ, որոնց պիտճէն կը կազմէր 131.400 սուրիական ոսկի (**տէն աղիսակ 1-2-3**):

### Ա. 1955 թուականին Հալէպի մէջ, Բերիոյ թեմի առաջնորդարանին ենթակայ վարժարաններ.

#### Աղիսակ 1<sup>44</sup>

վարժարանին անունը	վայրը	աշակերտութեան թիւ	ուսուցչաց թիւը	պիտճէ սուր. ոսկի.
Ազգ. Քարէն Եփփէ ճեմարան	Հալէպ	230	22	98.000
Ազգ. Հայկազեան վարժարան	Հալէպ	715	36	75.000
Ազգ. Սահակեան վարժարան	Հալէպ	657	22	41.000
Զաւարեան վարժարան	Հալէպ	474	23	34.000
Կրթասիրաց վարժարան	Հալէպ	412	22	38.000
Մեսրոպեան վարժարան	Հալէպ	381	16	25.000
Կիլպէնկեան վարժարան	Հալէպ	159	8	11.000
Ուսումնասիրաց- Լեւոնեան	Հալէպ	281	17	21.000
Վարդանեան	Հալէպ	381	15	12.200
Արամեան վարժարան	Հալէպ	50	4	3.600
Գերմանիկեան վարժարան	Հալէպ	190	9	7.500
գումար		3.930	194	368.000

43 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 71, Սուրիական Հանրապետութեան Կրթական տնօրէնութիւն՝ մասնատր վարժարաններու կազմութեան շուրջ. Նոյն տեղը, թ. 3: Տէն նաեւ «Ազգակ», թիւ 7104, 20 Յունուար 1956, Պէյրութ:

44 ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գ. 71, թ. 5:



**Բ. 1955 թուականին շրջաններու մէջ, Բերիոյ թեմի առաջնորդարանի ենթակայ վարժարաններ.**

**Աղիւսակ 2<sup>45</sup>**

Սահակեան	Ազեգ	10	6	5.500
Արամեան	Աֆրին	25	2	1.000
Մերոպեան	Ճարապլուս	64	5	3.000
Վարդանեան վարժարան	Ճարապլուս	60	6	3.890
Խրիմեան վարժարան	Արաբ- Փունար	75	6	4.200
Վերածնունդ վաժարան	Եագուպիէ	72	3	4.400
Խորէնեան վարժարան	Թէլ-Ապիատ	110	4	4.200
Ազգային վարժարան	Գամիշլի	790	27	42.000
Ազգային վարժարան	Հասիչէ	81	6	6.800
Ազգային վարժարան	Տէյր- Զօր	43	5	3.000
Ազգային վարժարան	Տէրիք	78	4	4.200
Ազգային վարժարան	Տէրպէսիէ	34	2	3.400
Ազգային վարժարան	Բագգա	84	6	5.000
Ազգային վարժարան	Ռաս Ու Այն	67	4	2.700
Ազգային վարժարան	Ամուտա	46	4	3.500
Ս. Յակոբեանց վարժարան	Լաթաքիա	172	14	12.000
Ուսումնասիրաց վարժարան	Քեսապ	82	9	4.600
Միացեալ վարժարան	Գարատուրան	21	2	1.000
Նուպարեան վարժարան	Թարթուս	35	1	1.500
Միացեալ վարժարան	Դամասկոս	197	13	17.460
Զաւարեան վարժարան	Դամասկոս	165	8	11.000
Սահակեան վարժարան	Հոմս	82	9	6.600
Ազգային վարժարան	Թէլ-Պրագ	20	1	1.200
<b>գումար</b>		<b>2.413</b>	<b>147</b>	<b>152.150</b>

45 Նոյն տեղը:

**Գ. 1955 թուականին Հալէպի եւ շրջաններու մէջ, առաջնորդարանէն անկախ վարժարաններ.**

**Աղիւսակ 3<sup>46</sup>**

Կիլիկեան Երկսեռ վարժարան	Հալէպ	500	20	33.000
Կիլիկեան, Մէյտան	Հալէպ	410	12	20.000
Արմէնեան, Մէյտան	Հալէպ	210	9	10.000
Արմէնեան, Շէյս Մագսուտ	Հալէպ	125	7	6.800
Լազար Նաճարեան Կեդր. վրժն.	Հալէպ	331	17	30.000
Նալպանտեան վարժարան	Արաբ-բունար	110	4	4.800
Կիլիկեան վարժարան	Տէրպէսիէ	43	5	7.000
Մերոպեան վարժարան	Գարատուրան	18	1	800
Սահակեան վարժարան	Քեսապ	13	2	2.200
Թարգմանչաց վարժարան	Դամասկոս	260	11	10.800
Սահակեան վարժարան	Դամասկոս	64	7	6.000
<b>գումար</b>		<b>2.084</b>	<b>95</b>	<b>131.400</b>

Բացի Հալէպի թեմի վարժարաններէն, կային նաեւ հայ կաթողիկէ եւ հայ աւետարանական յարանուանական զանազան վարժարաններ: Հալէպի մէջ, հայ կաթողիկէները ունէին աղջկանց չորս վարժարաններ, մանչերու՝ երկու, ինչպէս նաեւ Մխիթարեան հաստատութիւնը: Մասնաւոր երկրորդական կրթութեան համար հայ տղոցմէ ոմանք կը յաճախէին զանազան օտար եւ պետական վարժարաններ: Անոնց թիւը Հալէպի եւ շրջաններու մէջ կը հաշուէր 4.700 աշակերտ<sup>47</sup>:

Այնուամենայնիւ, յիսունական թուականներու կիսուն տիրող տնտեսական եւ յատկապէս քաղաքական անկայուն իրավիճակի հետեանքով սկիզբ առած արտագաղթը, յատկապէս մեծ թիւով Երիտասարդներու՝ դէպի Արեւմտեան Եւրոպա եւ Միացեալ Նահանգներ, կը մտահոգէր մտաւորականները, քանզի կատարուածը «այլասերման եւ ուժացման վտանգ էր»: Հայ Երիտասարդները կը հեռանային ոչ թէ արարահայութենէ, այլ՝ հայկականութենէ: Հակառակ կատարուած զոհողութիւններուն՝ երեւոյթը կը շարունակուի 1960-ական թուականներէն ետք եւս:

Արտագաղթի հիմնական պատճառներէն էր նաեւ Սուրիա-Եգիպտոս Միացեալ Արաբական Հանրապետութեան օրերուն կառավարութեան կողմէ

46 Նոյն տեղը:

47 Նոյն տեղը:



առաքրուած 11 Յուլիս 1959 թուականի եւ թիւ 933/7 շրջաբերականով սահմանափակումը մասնատոր ոչ պաշտօնական վարժարաններու ինքնակամ գործունէութեան<sup>48</sup>: Մասնատոր դպրոց ըսելով՝ ան կը հասկնար այն բոլոր «ոչ կառավարական հաստատութիւնները, որոնք ամբողջովին եւ կամ մասնակի ձեւով կը զբաղին ուսմամբ եւ կրթութեամբ, կը պատրաստեն ազատ ասպարէզներու եւ կամ կը զբաղին որեւէ տեսակի ընդհանուր կրթութեան գծով, առանց նկատի ունենալու հաստատութեան տիրոջ ազգութիւնը եւ կամ կազմակերպութիւնը, որուն կապուած է հաստատութիւնը»<sup>49</sup>:

Կրօնաբարոյական<sup>50</sup>, ազգային դիմագիծ վտանգող շրջաբերականը նոր առաջադրանքի առջեւ դնելով համայնքի ներկայացուցիչները, յարմար կը նկատեն բանակցութիւններ սկսիլ պետական մարմիններու հետ: Ժողովը կը յանգի յատուկ ուսումնասիրութեան, որով կը նախատեսուի հայ դպրոցներու յատուկ ծրագիրի պատրաստութիւն<sup>51</sup>: Վեցամեայ ծրագիրով նախակրթարաններու համար կ'արտօնուի «կրօնագիտութիւնը իբրեւ հայ եկեղեցւոյ ծիսական լեզու եւ դասաւանդուի հայերէն լեզուով»<sup>52</sup>:

48 11 Մարտ 1959, թիւ 20 որոշումնագիրով կը հրահանգուի թիւ 160 օրէնքի մասին, որ թիւ (993/7) շրջաբերականով կը տեղեկացնէր մասնատոր վարժարաններու պատասխանատու մարմիններուն պետական ծրագիրի իրագործումը, եւ ընդհանրացումը ոչ պաշտօնական վարժարաններուն: Միաժամանակ կը թոյլատրուի մասնատոր ծրագիրի կազմութեան 25 առ հարիւր փոփոխութեամբ, պայմանաւ որ բացառիկ ծրագիրը պիտի վայելէր Կրթական նախարարութեան վաւերացումը: Ուստի հարկ էր պատրաստել եւ ներկայացնել (ծրագիրը - Ա.Ֆ.) 25 Յուլիս 1959 թ., որմէ ետք այդ ծրագիրը որեւէ փոփոխութեան ենթակայ չէր: Շրջաբերականը կը շեշտէր նաեւ, որ «արաբերէն լեզուով պարտատրիչ կերպով դասաւանդելի են կրօն, արաբերէն լեզու, արաբական աշխարհի պատմութիւնը, աշխարհագրութիւնը եւ քաղաքական կրթութիւնը»: Տէն նաեւ: **Չոլաքեան Յ.**, 1923-2013 Տարեգրութիւն Հայ Եւրոպական Բեթել վարժարանի, էջ 291-292:

49 ԲԹ ԱԱԱ, դարան Բ., գ. 50: Խորհրդակցական ժողովէն ետք, յարմար կը նկատեն Սրբազան հօր կողմէ, որպէս համայնքի արտօնատէրը, պատասխան նամակով հանդէս գալ: Նամակին մէջ կը շեշտուի, որ «Հայ վարժարանները հետեւած են ու պիտի հետեւին պետական ծրագիրին եւ թէ հայերէն լեզուն օտար լեզու չի նկատուիր, մենք պիտի շարունակենք հայերէնով դասաւանդել, ըստ առաջնոյն, բոլոր այն նիւթերը, զորս հայերէնով կը դասաւանդենք, համաձայն 29 7 1952 թուականի եւ թիւ 2451/7 նախարարական հրահանգներուն»: Նաեւ «հայ եկեղեցւոյ կրօնագիտութիւնը, մեր ծեսերուն համաձայն, կը դասաւանդենք հայերէն լեզուով: Կը նկատենք, որ ձեր հաղորդագրութեան մէջ կրօնը արաբերէնով դասաւանդելու յիշատակութիւնը, հայ եկեղեցւոյ կրօնի ուսուցումին հետ կապ չունի» (տէն ԲԹ ԱԱԱ, դարան Դ., գործ 72): Բանակցութիւններու ընթացքին նախարարը «բարեացակամ գտնուելով որոշ առաւելութիւններ կը խոստանայ օրէնքի սահմաններուն մէջ: Հայոց պատմութիւն եւ Հայաստանի աշխարհագրութիւն նիւթերը կ'արտօնուին "հայ մշակոյթի դասեր" անունին տակ»: (**Չոլաքեան Յ.**, Յուշամատեն Զարէն Եփփէ Ազգային Ճեմարանի, էջ 179):

50 Որոշումնագիրը չէր միտեր բացարձակ արաբերէն լեզուի ուսուցումը, իբրեւ սոսկ լեզու, այլ կը շեշտէր դասանիւթերու արաբերէն լեզուով պարտատրիչ դասաւանդումը:

51 **Չոլաքեան Յ.**, նշ. աշխ., էջ 179:

52 1959 Յուլիս 29 թուականի եւ 2451 / 7 նախարարական հրահանգով կ'արտօնուի հայերէն լեզուով կրօնի ուսուցումը, իբրեւ ծիսական լեզու: Տէն **Չոլաքեան Յ.**, նոյն տեղը: **Նոյնի**, 1923-2013 Տարեգրութիւն Հայ Եւրոպական Բեթել վարժարանի, էջ 288:



Մարաշի Ազգային Մեսրոպեան վարժարան /Նախակրթարան/- Հալէպ:



Մարաշի Ազգային Մեսրոպեան վարժարան /մանկապարտէզ/- Հալէպ:







Ագգային Զաարեան վարժարան-  
շալէպ:



Ագգային Սահակեան վարժարան-  
շալէպ:





ՄԵՇԿԱՆԻ (ՆՈՐ ԳԻՂԻ) ԿԻՒԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ /ԵՐԿՍԵՈ/ ԽԱՐԱՎ-ԱՐԵՎԵԼԵԱՆ ԸՎԿԱՏՈՆԵՐ-ՀԱԼԷԱ:



ՏԱՈՒԽԻԻ ՀԱՅ ԱՆՍՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԿՍԵՈ ՎԱՐԺԱՐԱՆ-ՀԱԼԷԱ:



ԲԱՂԱՔԻ ԿԻՒԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՂՋԿԱՆՑ ԲԺԺԻՆ-ՀԱԼԷԱ:





Քաղաքի Կիլիկեան վարժարանի մանչերու բաժին - Նալեպ:



Քաղաքի Կիլիկեան վարժարանի մանչերու բաժին - Նալեպ:



Հայ Անետարանական Բեթել վարժարան- Նալեպ:



Ուսումնասիրաց-Միացեալ վարժարանի նոր շէնքը- Քեսապ:





Քեսապի Ոստանաստիճաց երկրորդական վարժարանի շենքը 1927 թ.:



Քեսապի Կաթողիկե վարժարան, 1927 թ.:



Րազգայի Ազգային Նուպարեան վարժարան/ հիմնադրուած 1924 թ./:






Վերածնունդ վարժարան, Եազուպիե /հիմնադրուած 1929 թ./:

1963-1964 թթ. կրթական նախարարութիւնը անգամ մը եւս շրջաբերականով կը հաստատեր, թէ հայերէն լեզուի ուսուցումը չէր արգիլուած, սակայն «հայ մշակոյթի անուան տակ ուսուցիչները այլ նպատակներ կը հետապնդէին, միաժամանակ չգործածելով արաբերէն ծրագիրը»: Այս մասին Չոլաքեան կը գրէ. «Մեր դպրոցները կը հետեւէին պետական ծրագիրին, բայց անկէ դուրս կ'աշխատէին ազգային ծրագիր մըն ալ գործադրել՝ առանց դոյզն չափով իսկ հաստութեան մէջ իյնալու պետական ծրագիրին հետ»<sup>53</sup>: Ասկէ կարելի է հետեւեցնել, որ Սուրիոյ կրթական նախարարութիւնը կը ձգտեր կրթօճախներու պետականացման:

1967 թ. կիսուն, կրթական տնօրէնութիւնը յանձնարարագիրեր կ'ուղարկէ բոլոր դպրոցներու տնօրէններուն՝ «պահանջելով կրթական նախարարութեան նախօրօք հրապարակուած օրէնքին կարգ մը տրամադրութիւններուն անյապաղ իրագործումը»: Նոր յանձնարարագիրերով կը միտէին «միօրինակութիւն հաստատել մասնաւոր եւ պետական դպրոցներուն միջեւ ուսումնական ծրագրի, ժամանակացոյցի, պաշտօնէութեան որակի, մակարդակի, վարձատրութեան եւ այլ կրթական երեւոյթներու տեսակետէն»<sup>54</sup>: Առաքուած յանձնարարագիրով Կրթական նախարարութիւնը կը հաստատէր պետական տնօրէններու նշանակումը սեփականատէր տնօրէնութեան կողմէն եւ հայերէն լեզուի դասապահներու առաւել նուազումը<sup>55</sup>: Յատուկ հրամանագիրով կը թելադրուէր մասնաւոր դպրոցներու անուանական փոփոխութիւն (**Տէս աղիսակները յաւելուած բաժինով, 304-305**):

Վերոյիշեալ հրամանագիրի պատշաճ բանաձեւը կը սահմանէր շաբաթական 40 պահ՝ հայոց լեզուի եւ կրօնագիտութեան դասաւանդումը նախակրթարանի, իսկ 24 պահ երկրորդականի: Իւրաքանչիւրին նախատեսուած էր չորս պահ հայերէն եւ երկուքը՝ կրօնի համար: «Օրէնքին տրամադրութեամբ հայկական վարժարաններէն շատ մը ուսուցիչ-ուսուցչուհիներ ստիպուած պիտի ըլլային լքել իրենց պաշտօնը պետական միջնակարգ, երկրորդական եւ համալսարանական կրթական նախարարութեան կողմէ վաւերացուած վկայագիր ունեցած չըլլալուն համար»<sup>56</sup>:

1967 թ. Թեմական (Տնօրէն) հորհուրդի եւ յառաջդիմական ճակատի միջնորդութեամբ կրօնը կը ճանչցուի որպէս պարտադիր առարկայ, բայց հայոց



53 Տէս Չոլաքեան Յ., նշ. աշխ., էջ 203: Նոյնի, Ութսունամեակ Հայկաի Ազգային Սահակեան վարժարանի 1927-2007, էջ 307: Նոյնի, 1923-2013 Տարեգրութիւն Հայ աստարանական Բեթել վարժարանի, էջ 306-307:

54 Չոլաքեան Յ., Յուշամատեան Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի, էջ 230: Նոյնի, Ութսունամեակ Հայկաի Ազգային Սահակեան վարժարանի, էջ 329:

55 «Ձարթօնք», թիւ 8970, 22 Հոկտեմբեր 1967, Պէյրութ (թիւ 127 օրէնք-հրամանագիր՝ «մերսում»-ի (հրամանագիրի), հրապարակումը նոր իրաւակարգի առաջ դրաւ հայկական դպրոցներու պետերը):

56 Տէս Չոլաքեան Յ., Յուշամատեան Քարէն Եփփէ Ազգային Ճեմարանի, նոյն տեղը:



լեզուն մինչեւ օրս նման ճանաչում չունի. «վերջապես թեմական խորհուրդի եւ յառաջդիմականները կազմուած պատուիրականութիւնը Դամասկոսի մէջ հանդիպում ունեցան կրթական նախարարութեան հետ. արդիւնքը եղաւ այն, որ ազգային եւ հայկական ոչ ազգային վարժարաններու դռները բաց մնացին: Իսկ կաթողիկէ համայնքը մերժելով ենթարկուիլ պետական որոշումներուն, դպրոցները գրաւուեցան պետութեան կողմէ, աշակերտները ցրուեցան: Միայն 1973 թ. արտօնուեցաւ վերաբացումը: Մեր կրթական օճախներու պետականացումը ոչ մէկ վատ անդրադարձ ունեցաւ համայնքի կեանքի վրայ: Պետութեան կողմէ սահմանուած պետական տնօրէնները դարձան մեր բարեկամները: Սկսան համերաշխութեամբ գործել մեզի հետ, մեր կառոյցներէն ներս: Այլ խօսքով՝ մեր սեփականութիւնը մեզի մնաց, մեզի ենթակայ»<sup>57</sup>: Ինչպէս նաեւ «Տնօրէն խորհուրդը Սրբազանի նախագահութեամբ կը յաջողի կրթական տնօրէնութեան ընդունելի համարել տալ հայերէնի եւ կրօնի ուսուցչուհիներու հետեւեալ պարագաները՝

-Անթիլիասի եւ Երուսաղէմի ընծայարաններէն ու Մելգոնեան կրթական հաստատութենէն շրջանաւարտներ կամ նոյնիսկ թերաւարտներ Առաջնորդ չօր վկայութեամբ ու յանձնարարականով պիտի կարենան ազգային վարժարաններուն մէջ հայերէն եւ կրօնք դասաւանդել:

-Երկար տարիներու հայերէնի եւ կրօնքի դասատուներ, որոնք փորձառութիւն ունին ուսուցանելու, Սրբազան հօր յանձնարարականին վրայ նկատի պիտի առնուին կրթական տնօրէնութեան կողմէ»<sup>58</sup>:

1967 թ. օրէնք-իրամանագիրի հրապարակումով, ոչ հայկական դպրոցներու ղեկավարներու ըմբոստութիւնը յոյժ վտանգաւոր կացութիւն կը ստեղծէ, որ կը յանգի պետական հրամանագիրով շարք մը վարժարաններու փակման: Այդպիսին էր հայ կաթողիկէ համայնքի վարժարաններու պարագան: Սակայն շնորհիւ կանխատեսուած պետական տրամադրութիւններու՝ առաքելական եկեղեցւոյ վարժարանները գերծ մնացին փակման հրամանագիրէն եւ շարունակեցին իրենց ընթացքը:

Հայ առաքելական համայնքի տնօրէն խորհուրդը ճիշդ գնահատելով կացութիւնը կը վերաբանայ թեմի դպրոցները: Այդպէս եղաւ նաեւ հայ աւետարանական համայնքի դպրոցներու հետ «կառավարութիւնը ընթացք տուած է հայերէն լեզուի եւ հայերէն լեզուով դասաւանդութեանց ու սահմանումներ ճշդած պետական տնօրէններու եւ վարժարաններու իրաստեղծութիւնն միջեւ, ուստի՝ որոշուած է վերաբանալ Հալէպի եւ շրջաններու բոլոր հայկական

57 *Քեհեանեան Տէր Ա. աագ քիւյ.*, Յուշեր (անտիպ), Հալէպ, 1999 թ.:

58 Տե՛ս *Չոլաքեան Յ.*, նշ. աշխ., էջ 230: *Նոյնի*, Ութսունամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի 1927-2007, էջ 329:

դպրոցները»<sup>59</sup>:

Առաջնորդարանի իրաւաբան Գրիգոր Էպիղաթեան խօսելով այս բարեփոխումներուն մասին կ'ըսէ. «Ձեռք բերուեցաւ աւելին. 1953-էն ի վեր, մասնաւոր վարժարաններու մասին հրատարակուած բոլոր օրէնքները անտեսած էին հայկական վարժարաններու ինքնուրոյն հանգամանքը եւ զանոնք դասած էին մասնաւոր վարժարաններու պիտակին տակ, շահադիտական նպատակով հիմնուած եւ օտար միսիոնարական առաքելութիւններու կողմէ ղեկավարուող վարժարաններու շարքին: Ազգային իշխանութեան դիմումին վրայ, հայկական վարժարանները ճանչցուեցան իբրեւ առանձին, ինքնուրոյն հանգամանք ունեցող կրթական հաստատութիւններ»<sup>60</sup>:

Այսպիսով, կրթական նախարարութիւնը պատասխանատու էր դպրոցներու ուսումնադաստիարակչական ողջ ծրագիրի հետապնդման ու հսկողութեան: Ազգային իշխանութեան կողմէ նշանակուած հայ տնօրէնը յաջս պետութեան կոչուեցաւ «սեփականատէր» կամ «սեփականատիրոջ ներկայացուցիչ»: Թեմական խորհուրդները իրենց վրայ վերցուցին վարժարաններու նիւթական ապահովումն ու ամրապնդումը, դպրոցական նոր շէնքի կառուցման բոլոր հոգերը: Բայց սեփականատիրական իրաւունքի տեսակէտէ վարժարանները համայնքի ազգային հիմնարկներն էին:

Հրապարակուած մասնաւոր հրահանգով՝ կրթական նախարարութիւնը կը թելադրէր նաեւ փոխել մասնաւոր դպրոցներու անունները: Անուանափոխութեան հրահանգը եւս սերտելու որոշ իրաւունքներ վերապահելու եւ միջոցներ որոնելու համար, Բերիոյ թեմի կողմէ ստեղծուած յանձնախումբը առաջնորդական տեղապահ Տ. Ատոմ քահանայ Քեհեանեանի նախագահութեամբ նպատակաշարմար կը համարէ «պահել հայկական անունները, պահելու համար դպրոցին հայկական դիմագիծը, որ օգտակար էր նաեւ պետութեան, ժողովուրդին մէջ աւելի վստահութիւն ստեղծելու համար պետութեան հանդէպ»<sup>61</sup>:

Սակայն պետական ծրագիրի ներմուծումն ու որդեգրումը ունեցաւ դրական եւ բացասական անդրադարձ: Սահմանուած կարգափոխութեան օրէնքով ուսանողութեան միտքին մէջ կ'արմատանար, թէ առաջնակարգ կարեւորութիւն

59 Տե՛ս *Չոլաքեան Յ.*, Յուշամատեն Քարեն Եփփէ Ազգային Ճեմարանի, էջ 329: Չոլաքեան կը գրէ, որ «Դժբախտաբար մեզի յայտնի չէ, թէ Սուրիոյ Հայ Աւետարանական համայնքը ինչ բանակցութիւններ ունեցաւ մէկ կողմէ պետական շրջանակներու եւ միւս կողմէ քրիստոնէայ միւս համայնքներուն ու յատկապէս Բերիոյ թեմի Ազգ. Առաջնորդարանի հետ»: տե՛ս *Նոյնի*, 1923-2013 Տարեգրութիւն Հայ աւետարանական Բեթլ վարժարանի, էջ 332:

60 «Ձարթօնք», 22 Նոյեմբեր 1967, թիւ 8970, Պէյրութ (թիւ 127 օրէնք-իրամանագիր՝ «մեր-սում»-ի, հրապարակումը նոր իրաւակարգի առաջ դրաւ հայկական դպրոցներու պետութեան): Նաեւ *Չոլաքեան Յ.*, Յուշամատեն Քարեն Եփփէ Ազգային Ճեմարանի, էջ 231: *Նոյնի*, 1923-2013 Տարեգրութիւն Հայ աւետարանական Բեթլ վարժարանի, էջ 328-332:

61 Տե՛ս *Չոլաքեան Յ.*, նոյն տեղը:



ներկայացնող լեզուն արաբերենն է, որ կ'իրացնեին ամեն գնով<sup>62</sup>:

Արդարեւ, պետական կրթական համակարգի սահմանած օրէնքներուն համաձայն հայկական վարժարանները յետագայ տարիներուն (1968-էն ետք) կը ստանան նաեւ որոշ արտօնութիւններ.

-Արաբերէն վիճակացոյցներու կողքին կ'արտօնուին տալ հայերէն վիճակացոյցներ:

-Հայերէնի եւ կրօնի տարիներու աւանդ ունեցող դասատուներուն կրթական տնօրէնութեան կողմէ արտօնութիւնը կը տրուէր շարունակել իրենց աշխատանքը միայն Սրբազան Տօր յանձնարարականի հիման վրայ եւ այլն<sup>63</sup>:

1968 թ. մեր դպրոցներուն կրթական տնօրէնին կողմէ կ'արտօնուէր՝

«-Քննութիւնները ընել դպրոցներու կողմէ որոշուած դասացոյցի համաձայն եւ ոչ անպայման պետական դպրոցներուն հետ:

-Մանկապարտէզները կրնային գործել, բայց պէտք է փակուէին կէսօրէ ետք:

-Մեր դպրոցներուն կ'արտօնուէր ամառական միջոցառումներուն արաբերէն վկայականներու կողքին տալ նաեւ հայերէնը:

-Դպրոցներու միջոցառումներուն կատարուած բացման եւ փակման խօսքերը միայն կատարել արաբերէն լեզուով<sup>64</sup>:

Զգալի փոփոխութիւններ կատարուած են նաեւ հայկական վարժարանները դասաւանդող ուսուցիչներու կրթական մակարդակին: 1960-1970 թթ. ուսումնական տարեշրջաններուն դասաւանդող ուսուցիչներու 10 առ հարիւրը ունեցած են համալսարանական կրթութիւն: 11 առ հարիւրը՝ պետական պաշալորիայի, 15 առ հարիւրը՝ պետական պրովէ: Մնացած 40 առ հարիւրը՝ միջնակարգ եւ նախակրթարանի վկայականներ: Սակայն 1980-ական թուականներուն սահմանուած օրէնքին համաձայն, նուազագոյնը պետական պաշալորիայի վկայական: Իսկ ներկայիս տարրական դպրոց պաշտօնավարելու համար անհրաժեշտ է համալսարանական վկայական:

Հոսկ, Սուրիոյ բոլոր վարժարաններէն ներս, առանց յարանուանական կամ կուսակցական խտրականութեան տեղի կ'ունենային մշակութային միջոցառումներ (պետական եւ ազգային), որոնք կոչուած էին պահպանելու հայերու, յատկապէս աճող սերունդի ազգային նկարագիրը: Այսպէս տարբեր մրցոյթներ հայոց լեզուի եւ հայ ժողովուրդի պատմութեան վերաբերեալ, նաեւ հանդի-

պումներ Հայաստանէն ժամանած հիւրերու հետ, եւ այլն:

1966-1967 թթ. Սուրիոյ հայկական ընդհանուր վարժարաններու թիւն էր 59, որոնցմէ 32-ը՝ առաքելական վարժարաններ (9.533 աշակերտ, 345 հայ ուսուցիչ, 173 ոչ հայ ուսուցիչ), 17-ը՝ կաթողիկէ (7.113 աշակերտ, 167 հայ ուսուցիչ, 165 ոչ հայ ուսուցիչ), 10-ը՝ անտարանական (1.294 աշակերտ, 56 հայ ուսուցիչ, 18 ոչ հայ ուսուցիչ). ընդամենը՝ 17.940 աշակերտ (568 հայ ուսուցիչ եւ 356 ոչ հայ ուսուցիչ)<sup>65</sup>:

Պէտք է նշել, որ Սուրիոյ հանրակրթական վարժարանները իրենց ծագման օրէն օգտուած են ներքին ինքնավարութեան իրաւունքէն: Այդ կ'արտայայտուէր անով, որ հայկական վարժարանները առաջնորդուած էին սեփական ուսումնական ծրագիրով, իսկ ուսուցման հիմքը եղած է հայոց լեզուն:

Վարժարանները կառուցուած ու պահպանուած էին ծխականներու միջոցներով եւ կը հանդիսանային համայնքի սեփականութիւնը ի դէմս տեղական մարմիններուն: Անոնց ղեկավարութիւնը կ'իրագործէր դպրոցական հոգաբարձութիւնը, որ կ'ընտրուէր թեմական կամ համայնքի խորհուրդի կողմէ:

Սուրիական սահմանադրութիւնը, թէեւ սահմանափակ ձեւով երաշխատր կը հանդիսանար ազգային վարժարաններու գոյութեան՝ վերականգնելով համայնքի իրաւունքները վարժարաններու վերաբերեալ, սակայն տարրական ու երկրորդական վարժարաններու մէջ սուրիական կրթական նախարարութեան ծրագիրի ներմուծմամբ ուսուցման հիմքը կը դառնար պետականը եւ լեզուն՝ արաբերէնը: Ծրագիրէն դուրս կը մնար հայերէն լեզուի եւ կրօնի ուսուցումը, մինչեւ 1967 թ.: Այդ երկուքը, այսպիսով, կը մտնէր ոչ պարտադրականներու շարքը:

Այնուամենայնիւ, Սուրիոյ հայկական՝ ազգային եւ մասնատր վարժարանները կը կիրառէն ու կ'ենթարկուին Սուրիոյ կրթութեան նախարարութեան կողմէ հրապարակուած հրամանագիրներուն: Բայց հայապահպանման որպէս կառույցներ՝ կ'առաջնորդուին կուսակցական պատկանելիութեան իրենց գաղափարական առաջադրանքներով:

Յաւելուած բաժինին մէջ կը ներկայացնենք 1959 թուականին Բերիոյ թեմի Ազգային Առաջնորդարանի կողմէ Հալէպի Գիտութեան եւ կրթութեան տնօրէնութեան ղրկուած 26 Օգոստոս 1959 համարակալ նամակի պատճենները, որ կը տեղեկացուին՝ վարժարանի անունը, վայրը, տնօրէններու անուններն (ու ծառայութեան տարիները): (Որոշումագիր՝ համար 1379, թուակիր 18 Օգոստոս 1953, թ. 289):

Ստորեւ կը ներկայացնենք Սուրիոյ հայկական վարժարաններու պատկերը 1966-1967 թթ. քաղուած՝ «Ջարթօնք» օրաթերթի 22 Հոկտեմբեր 1967 թ. համարէն:

65 «Ջարթօնք», թիւ 8970, 22 Հոկտեմբեր 1967, Պէյրութ:

62 **Նոյնի**, նշ. աշխ., էջ 152, 204 եւ 234: Տե՛ս նաեւ **Հարությունյայն Ն.**, Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Երևան, 2002, էջ 226-227:

63 **Չոլաքեան Յ.**, Յուշամատեն Թարէն Եփփէ Ազգային Ճեմարանի, էջ 231; **Նոյնի**, Ուսումնամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի 1927-2007, էջ 330-331; **Նոյնի**, 1923-2013 Տարեգրութիւն Հայ անտարանական Բեթէլ վարժարանի, էջ 333:

64 **Նոյնի**, Յուշամատեն Թարէն Եփփէ Ազգային Ճեմարանի, էջ 234: **Նոյնի**, Ուսումնամեակ Հալէպի Ազգային Սահակեան վարժարանի 1927-2007, էջ 332:



ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ (1966-1967 թթ.)

Վարժարանի անուն	Յարանուանություն	Աշակերտ	Ուսուցիչներ		Բաղ	Ընդամենը
			հայ	Ոչ հայ		
Լազար Կոնյանի - Գալուստ	առաքելական	990	30	27	Ազիզ	Հայկ
Կիլիկեան Երկրորդական						
Հոփիսիմ (Սրբոսի Հոփիսիմ)	կաթողիկե	75	4	1	Ազիզ	Հայկ
Կիլիկեան վարժարան	առաքելական	216	9	-	Սուլեյմանի	Հայկ
Հայ Անտարական	առաքելական	80	3	2	Էշրեֆի	Հայկ
Էմմանուէլ վարժարան						
Թեր-Սեթ Դամ-Պայեան վարժարան	կաթողիկե	1920	31	44	Սուլեյմանի	Հայկ
Մետրոպոլիտ վարժարան	առաքելական	372	9	4	Լոր Գիւլ	Հայկ
Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարան	կաթողիկե	630		24	Թիլի	Հայկ
Ջուարթնոց վարժարան	կաթողիկե	164		-	Լոր Գիւլ	Հայկ
Անարատ Յրութեան	կաթողիկե	374		19	Թիլի	Հայկ
Քոյրերու վարժարան						
Հայ Անտարական	առաքելական	243		2	Ազիզ	Հայկ
Էմմանուէլ վարժարան						
Վարդանեան վարժարան	առաքելական	190		3	Էշրեֆի	Հայկ
Կիլիկեան ճեմարան	առաքելական	630		34	Հարթ Միսի	Հայկ
Գերմանիկեան վարժարան	առաքելական	146		2	Նեյլիկ	Հայկ
Հայ Անտարական	առաքելական	433		5	Ճապրի	Հայկ
Բեթել վարժարան						
Ազգ. Հայկազեան վարժարան	առաքելական	799		4	Սալիպե	Հայկ
Սրբոսի Թերեզա	կաթողիկե	170		4	Ազիզ	Հայկ
Յովսէփեան վարժարան	կաթողիկե	120		1	Նեյլիկ	Հայկ
Կիլիկեան վարժարան	առաքելական	368		5	Լոր Գիւլ	Հայկ
Քարեն Եփիմ Ազգ. ճեմարան	առաքելական	553		19	Լոր Գիւլ	Հայկ
Սրբոց Վարդանանց վարժարան	կաթողիկե	531		5	Լոր Գիւլ	Հայկ
Կենաց վարժարան	առաքելական	178		3	Նեիլ	Հայկ
Միսիթարեան	կաթողիկե	612		10	Սուլեյմանի	Հայկ
Երկրորդական վարժարան						
Սրամեան վարժարան	առաքելական	42		1	Ասորոց Քեմի	Հայկ
Կրթասիրաց վարժարան	առաքելական	492		6	Սոքաք Արալի	Հայկ
Մեդրակ Մետրոպոլիտ-Սրմեան վարժարան	առաքելական	170		4	Ճեպել Սեիտ	Հայկ
Սահակեան վարժարան	առաքելական	663		5	Լոր Գիւլ	Հայկ
Ջաարեան Ազգ. վարժարան	առաքելական	601		2	Լոր Գիւլ	Հայկ
Սահակեան վարժարան	առաքելական	175		2	Մազրա	Դամասկոս
Ջաարեան վարժարան	առաքելական	170		4	Պապ Թումա	Դամասկոս
Հայ Անտարական վարժարան	առաքելական	186		4	Միտիթ Փաշա	Դամասկոս
Կաթողիկե Առջկանց վարժարան	կաթողիկե	268		4	Պապ Թումա	Դամասկոս
Հայ Կաթողիկե Ալիշան վարժարան	կաթողիկե	175		2	Պապ Թումա	Դամասկոս
Թարգմանչաց վարժարան	առաքելական	353		11	Պապ Շարի	Դամասկոս
Ազգ. Միացեալ վարժարան	առաքելական	137		3	Հարթ էլ Շարֆ	Դամասկոս
Ազգ. Եփրատ վարժարան	առաքելական	1099		14	-	Գամիշլի
Ս. Յովսէփ վարժարան մանչերու	կաթողիկե	289		7	-	Գամիշլի
Միացեալ վարժարան	առաքելական	785		14	-	Հասիլ
Վերածնունդ վարժարան	առաքելական	78		1	-	Եագրապի
Ազգ. Նահատակաց վարժարան	առաքելական	107		1	-	Ռաս Ու Սն
Ազգային վարժարան	առաքելական	139		4	-	Հասիլ
Հայ Ազգ. Երկսեռ վարժարան	առաքելական	30		-	-	Յեր Ջօր
Ազգ. Մանկեան վարժարան	առաքելական	68		2	-	Նոնա
Ազգ. վարժարան	առաքելական	81		1	-	Ամուտա
Հայ Անտ. վարժարան	առաքելական	30		-	-	Գարստուրան
Ազգ. վարժարան	առաքելական	70		1	-	Տերիք

Վարժարանի անուն	Յարանուանություն	Աշակերտ	Ուսուցիչներ		Բաղ	Ընդամենը
			հայ	Ոչ հայ		
Անտիս Սարաֆեան վարժարան	առաքելական	83		3	-	Այն էլ Արուս
Սրբոսի Թերեզա	կաթողիկե	240		5	-	Տերապի
Հայ Կաթողիկե Միացեալ վարժարան	կաթողիկե	110		2	-	Ճարակուս
Ուսումնասիրաց Միացեալ վարժարան	առաքելական	159		-	-	Քեսապ
Ս. Գրիգոր Լուսավորիչ վարժարան	կաթողիկե	50		2	-	Քեսապ
Ս. Յովսէփ Առջկանց վարժարան	կաթողիկե	600		21	Լոր Թաղ	Գամիշլի
Ս. Յակոբեան Ազգ. Երկսեռ վարժարան	կաթողիկե	220		6	-	Լաթաքիա
Անտ. Նահատակաց վարժարան	առաքելական	87		2	-	Քեսապ
Ազգ. Խորենեան վարժարան	առաքելական	97		1	-	Թէլ Ապիատ
Ազգ. Միացեալ վարժարան	առաքելական	26		1	-	Գարստուրան
Անտ. Նահատակաց վարժարան	առաքելական	11		-	-	Պաղ Ճարակ
Նուպարեան վարժարան	առաքելական	209		2	-	Ռաքա
Անտ. Նահատակաց վարժարան	առաքելական	25		-	-	Քեթրիմ
Անտ. Նահատակաց վարժարան	առաքելական	21		-	-	Էրի Օրուկ



### բ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Հայ դպրոցի կողքին մեծ էր դերը Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցույ Կիրակնօրեայ դպրոցին<sup>1</sup>, այդ հոգեւոր միօրեայ-կիրակնօրեայ հաստատութեան, որով պիտի համալրուէր հայ մանուկին հայեցի ու կրօնաբարոյական դաստիարակութիւնը, որովհետեւ անցեալին հայրենի բնագաւառներուն մէջ էւս լայն տեղ տրուած էր կրօնական դաստիարակութեան:

Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Բ. ծերունագարոյ Հայրապետը Կիլիկիոյ թեմերուն մէջ կիրակնօրեայ դպրոց հիմնադրելու սկզբնական փորձը կատարած է Հալեպի Առաջնորդարանին յարակից Հայկազեան վարժարանի մէջ, որ առաջին կիրակնօրեայ դպրոցը ըլլալով կը սկսի գործել 1923 թ. մինչեւ 1927 թ.<sup>2</sup>:

1 Մայիս 1929 թ., Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ՝ Սահակ Բ. կաթողիկոս պաշտօնական նամակով կը տեղեկացնէ Բերիոյ թեմի Առաջնորդ՝ Արտաւազ ծ. վրդ. Սիւրմէանին, որ Սուրիոյ մէջ կիրակնօրեայ դպրոցներ հաստատելու համար նորանշանակ վարիչ տնօրէն ու մանկավարժ՝ պր. Լեւոն Զէնեան պիտի ժամանէ Հալեպ թեմի կազմակերպչական աշխատանքները սկսելու՝ վեցամսեայ մանկավարժական եւ հոգեբանական դասընթացը կատարելով ուսուցիչներ պատրաստել:

1929 թ. աշնան պաշտօնապէս բացուած էր կիրակնօրեայ դպրոցը Հալեպի Ազգային Առաջնորդարանի մօտ, մանկապարտեզի սրահին մէջ, Սալիպէ՝<sup>3</sup>:

1 Սերտելով Բերիոյ հայոց թեմի ազգային առաջնորդարանի արխիւները՝ ի յայտ եկաւ 17 Մայիս 1926 թուակիր նամակ մը: Բովանդակութենէն պարզուեցաւ, թէ 1921 թ. վերջերը Հալեպի մէջ գոյութիւն ունեցած է Կիրակնօրեայ դպրոց մը, որ պաշտօնապէս սկսած է գործել 1922 թ. Փետրուարէն, Ազգային Առաջնորդարանի եւ Կրօնական ժողովի թուակիր նամակ-արտօնագիրով, ուր կ'արտօնուէր բանալ «Կիրակնօրեայ մանկանց դպրոց մը, որուն համար կը տրամադրուէր եկեղեցույ շրջափակը, մանկապարտեզի սրահը առտունները 1,30 ժամ»: Դպրոցի ատենապետը եղած է Լեւոն Պատթարճեան: Ան Գերպ. Տ. Արտաւազ ծ. վրդ. Սիւրմէանի, 17 Մայիս 1926 թ., ուղղած նամակով կը յայտնէ, որ «Կիրակնօրեայ դպրոցս մօտաւորապէս հինգ տարիներու մօտ կը շարունակէ (մօտաւորապէս) 250-300 երկսեռ մանուկներով» (ԲԹ ԱԱԱ, Քաղաքական ժողովի ատենագրութեան տետրակ, 29 Յունիս 1925-էն 3 Յունիս 1927):

2 «Մեծի Տանն Կիլիկիոյ Սահակ Բ. ծերունագարոյ Հայրապետը Կիլիկիան թեմերուն մէջ Կիրակնօրեայ դպրոց հիմնադրելու սկզբնական փորձը կատարած էր Հալեպի առաջնորդարանին յարակից Հայկազեան վարժարանի մէջ, որ առաջին կիրակնօրեայ դպրոցը ըլլալով կը սկսի գործել 1923 թ. մինչեւ 1927 թ.»: Տես Մարիա Տիգրանեան, «Բերիոյ հայոց թեմի Կիրակնօրեայ դպրոցներու պատմութիւն», էջ 11, անտիպ:

3 Կիրակնօրեայ դպրոցներու համատեղ գործունէութեան համար աթոռակից Բարզէն կաթողիկոսի եւ պր. Լեւոն Զէնեանի կողմէ համադրուած եւ մշակուած 34 յօդուածներէ բաղկացած Կանոնագիրը, Վեհափառ Հայրապետի 1 Փետրուար 1931 թ. թուակիր վաւերաթուղթով, կը դրկուի Կիլիկիոյ կաթողիկոսութեան բոլոր թեմերուն: Կանոնագիրի երրորդ յօդուածը յստակօրէն կը բանաձեւէր «Կիրակնօրեայ դպրոցներու նպատակ»-ը: Կիրակնօրեայ դպրոցի դասաւանդութեանց կիրարկումը տեղի կ'ունենայ երկու բաժիններով՝ լսարանային եւ դասարանային բաժիններ:

1 Մայիս 1929 թ., Բերիոյ թեմի Առաջնորդ Արտաւազ ծ. վրդ. Սիւրմէան կը յառաջացնէ մաս-

Կիրակնօրեայ դպրոցի դասաւանդութեանց կիրարկումը տեղի կ'ունենայ երկու բաժիններով՝ լսարանային եւ դասարանային բաժիններ<sup>4</sup>:

Բացի Հալեպէն, կիրակնօրեայ դպրոցի հաստատումը անհրաժեշտութիւն դարձաւ ողջ Սուրիոյ տարածքին՝ գաղթականներու ազգային ու կրթական կեանքը՝ առաւել անմխիթար, անկազմակերպ ըլլալուն պատճառով, միաժամանակ որպէսզի հայ մանուկը զերծ պահէին օտար վարժարաններ յաճախելէ:

Այսպէս, 5 Նոյեմբեր 1930 թ. կիրակնօրեայ դպրոց կը բացուի Աֆրինի մէջ: Գլրոզ Խանի Հայ Եկեղեցասիրաց Եղբայրակցութեան առաջարկով Նոյեմբեր-Նոյեմբեր 1930 թ. Գլրոզ Խանի մէջ: Նոյն թուականին՝ Համայի մէջ, ուր կ'ապրէր 40 հայ ընտանիք, որ ուներ փոքրիկ վարժարան մը 32 հայ երկսեռ մանուկներով: 1931 թ. սկիզբը՝ Ազեզի մէջ, Իսկ Ապրիլին՝ Սելմիէի մէջ: 1931 թ. Յունիս՝ Ճարապլուսի կիրակնօրեայ դպրոցը:

27 Նոյեմբեր 1931 թ. Խաղ. Եպիսկոպոս Աջապահեանի առաջարկով, պր. Լեւոն Զէնեանի աջակցութեամբ կիրակնօրեայ դպրոց կը բացուի Դամասկոսի մէջ, Իսկ Նոյեմբերին Եագուպիէի քահանայ հօր ջանքերով, Եագուպիէն կ'օժտուի կիրակնօրեայ դպրոցով եւ կը սկսի գործել իր շուրջ համախմբելով 100 երկսեռ մանուկներ:

1931 թ., կիրակնօրեայ դպրոցներ կը սկսին գործել Հալեպ քաղաքի այլ թաղամասերուն՝ Հալեպի Մէյտան (Նոր Գիւղ) թաղամասին մէջ: Յաջորդաբար՝ Հոմսի, Աֆրինի, Պէյլանի եւ Տեր Զօրի մէջ: Խորհուրդը Նոյնպէս բեղուն կազմակերպչական աշխատանք կը տանի: 1933 թ. Ալեքսանդրէի Մերձաւոր Արեւելքի Հայ Երիտասարդաց Միութեան եւ Հայ Եկեղեցասիրաց Եղբայրութեան պահանջներով եւ Տեր Ներսէս աւագ քինյ. Թաւուզճեանին օժանդակութեամբ, Նոյեմբերին շրջանը կ'օժտուի կիրակնօրեայ դպրոցով:

Թէեւ Սուրիոյ տարածքին հետզհետէ կը սկսին գործել կիրակնօրեայ դպրոցներ, սակայն կարգ մը հայաբնակ վայրերու մէջ հայը կ'ապրէր անմխիթար կեանքով: Անոնք չունէին դպրոց եւ նոյնիսկ այցելու հոգեւոր հովիւ՝ հօտը հով-

Նաւոր յանձնաժողով մը, որ կը բաղկանայ 2 հոգեւորականէ (Եկեղեցականէ) եւ 3 Եկեղեցաւեր աշխարհականներէ, որոնք թեմական Առաջնորդ հօր նախագահութեամբ եւ տիար Զէնեանի հետ համագործակցաբար պիտի աշխատէին սերունդներու կրօնաբարոյական դաստիարակութեամբ: Նորակազմ յանձնաժողովը կը կոչուի Կրօնական Դաստիարակութեան Խորհուրդ: Առաջին Խորհուրդի կազմն էր՝ Արժ. Տ. Ներսէս Ա. քինյ. Թաւուզճեան Արժ. Տ. Սկրտիչ քինյ. Մուրատեան Տիար Սեդրաք Մաթոսեան Տիար Ճորճ (Գեորգ) Ֆէթթէլեան Տիար Յակոբ Գարամանուկեան 1929 թ., Հալեպի մէջ կը բացուի երկրորդ դպրոցը՝ Սուլեյմանիէի Լիկայի շէնքին մէջ: 4 «Նոր Դրագարկ», տարեգիրք, շէԿԴ, ԺԴ. տարի. թիւ 6-7, 1997, Անթիլիաս-Լիբանան, էջ 90-91:



ուելու եւ մխիթարելու: Ուստի, չալէպի շրջակայ տարածքներուն մէջ կիրակ- նօրեայ դպրոցներու կարիքն ու պահանջը զգալի դարձած էր: Թեմի Ազգային Իշխանութիւնն ու Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը մտահոգուած 28 Յուլիս 1933 թուակիր Նամակով, Զէնեանին կը փոխանցեն ամառնային դպրոց բանալու անհրաժեշտութեան մասին՝ Պապի, Մունպուճի, Աֆրինի, Աթըզի, Սելեմիէի, Համայի եւ Ճարապլուսի մէջ, երեք շաբթուան տեւողութեամբ, Նոյնիսկ մէկ պաշտօնեայով:

Կը մշակուի ծրագիր կանոնագիր<sup>5</sup>:

5 «Ծրագիր-Կանոնագիր Կիրակնօրեայ վարժարաններու 1929 թ.».

Հայկական կիրակնօրեայ վարժարանաց նպատակն է դպրոցական երկ- սեռ մանուկներու ներշնչել քրիստոնեական կրօնի եւ հայ եկեղեցոյ սէրն ու անոնց մէջ այդ ուղղութեամբ անհատականութիւն զարգացնել եւ իբրեւ հայ քրիստոնեայ ապրիլ ու ծառայելու գիտակցութիւն մշակել:

Միջոցներ.- ամեն Կիրակի դասախօսելու համար թէ քաղաքի եւ թէ քեմբի մէջ վարժարան բանալ:

Ընդունելութիւն աշակերտաց.- 5-12 տարեկան երկսեռ հայ մանուկներ կ'ընտրուին իբրեւ ուսանող: Ուսումը ձրի է, սակայն զանազան ծախսերու համար կամաւոր նուէրներ կ'ընդունին:

Աշակերտութիւնը երեք բաժանում պիտի ունենայ՝

ա.- 5-7 տարեկաններու համար

բ.- 8-10 տարեկաններու համար

գ.- 11-12 տարեկաններու համար

Վարչութիւն.- Սոյն վարժարանները վարելու համար կրօնական ժողովը ընտրուած է երեք հոգիէ բաղկացած վարիչ մարմին մը պիտի ըլլայ, 6 ամիսը անգամ մը համարատուութիւն պարտի կրօնական ժողովը:

Պաշտօն եւ պարտականութիւն վարիչ մարմնոյ.-

ա.- Ընտրել ուսուցիչ-ուսուցչուհիները:

բ.- Վարժարանի համար պէտք եղած պատկերներ եւ առարկաներ գնել:

գ.- Նսկել ծրագրին ըստ կարելոյն, բարոք եւ անթերի գործադրութեան:

դ.- Հոգալ վարժարանին տնտեսութիւնը եւ բացի կամաւոր նուէրներ ընձեռնելէ առաջ ջանալ նաեւ համակիրներ գտնել վարժարանիս նիւթական պէտքերուն բաւարարութիւն տալու համար:

Ուսուցչական կազմ.-

ա.- Ուսուցիչները երկսեռ պիտի ըլլան եւ գէթ Նախակրթական ուսում ստացած:

բ.- Հայ եկեղեցոյ զաւակ, մաքուր բարոյականի տէր եւ քրիստոնեական կեանք ապրող եւ եկեղեցի յաճախող, խոստովանուող եւ հաղորդուող անձեր պիտի ըլլան:

գ.- Անթոշակ աշխատելու անձնատրութիւն պիտի ունենան:

Դասաւանդութիւն.- Ամեն Կիրակի ժամը ..... պիտի տեւէ դպրոցը:

Դասաւանդուելիք դասերը պիտի ըլլան.-

Հին եւ Նոր Կտակարանէ նշանաւոր դէմքեր եւ դէպքեր եւ առակներ հայ եկեղեցոյ եւ ազգային դէպքեր:

Հայ եկեղեցոյ տօներն, տաղաարները, ծեսերն ու ծիսական արարողութեանց վրայ ծանօ- թութիւն առարկայաբար: Մանկական երգեր եւ հոգեւոր երգեցողութիւն յարմարագոյնները:

Աղօթք՝ ժամերգութենէ, ապաշխարութեան շարականներէ եւ սաղմոսներէ ընտրանքօք: Եկեղեցոյ խորհուրդները, Հաւատամքը եւ հետեւողութեամբ Նարպէ Սրբազանի կրթական քրիստոնեութիւն: Ուսուցիչներուն ամիսը անգամ մը իրենց ասանդելիք դասերուն եւ ուսուցման մեթոտներու վրայօք մասնագիտական դասախօսութիւն պիտի ըլլայ ձեռնհասներու կողմէ:

1931 թ. Հոկտեմբեր-Դեկտեմբեր ամիսներուն կատարուած վիճակագրութեան համաձայն, հայ ժողովուրդի թիւը կարգ մը շրջաններու մէջ հետեւեալ պատկերը կը ներկայացներ:

Շրջանը	արական	իգական	գումար
Ազեզ	600	820	1.420
Ճարապլուս	450	276	726
Արաբ- Փունար	550	500	1.050
Հասիչէ	100	96	196

Իսկ ուսանողներու թիւը՝

Շրջանը	մանչ	աղջիկ	գումար
Ազեզ	130	90	220
Ճարապլուս	91	59	150
Արաբ- Փունար	98	68	166
Հասիչէ	26	14	40

1931 թ. կը հիմնուի Հայաստանեայց Եկեղեցոյ կիրակնօրեայ դպրոցներու Շրջանաւարտից Միութիւնը: Կիրակնօրեան, որ շուրջ 500 աշակերտներ ուներ, բայց չունէր յատուկ կեդրոն եւ կը գործէր Ազգ. Առաջնորդարանի կից Ս. Քառաս- նից եւ Ս. Աստուածածին Եկեղեցիներու շրջափակին մէջ:

Խորհուրդի շնորհիւ, կը բացուի Տաւուտիէի կիրակնօրեայ դպրոցը: 1937 թ. Յուլիսի վերջը Մէլտանի Կիլիկեան վարժարանի եւ Կրթասիրաց աղջկանց բաժնի շէնքերուն մէջ կը սկսին գործել ամառնային վարժարանները մէկ ամսուան տեւողութեամբ (մինչեւ Օգոստոսի վերջը): Վերոյիշեալ երկու դպրոց- ներու տեսչական պաշտօնները կը յանձնուին պր. Արմէն Տէր Պետրոսեանին (քաղաքի բաժին) եւ պր. Յակոբ Ներսոյեանին (Մէլտանի բաժին):

1938 թ. Յուլիսին, Լ. Զէնեան չալէպ կը ժամանէ Նոր տարեշրջանի ամառնային վարժարաններու կազմակերպման եւ բացման գործով զբաղելու համար: 1938 թ. ամրան Լ. Զէնեանի հսկողութեամբ Սուրիոյ տարբեր շրջաններու մէջ կը բացուին ամառնային դպրոցներ: Դպրեվանքի ուսանողներէն եօթը հոգի իրենց մասնակցութիւնը կը բերեն այս գործին: չալէպի ամառնային վարժարան կը յաճախեն 250 աշակերտներ: Դպրոցի տեսչութեան պաշտօնը կը ստանձնէ դպրեվանքի շրջանաւարտներէն պր. Արմէն Տէր Պետրոսեանը՝ ունենալով խումբ մը օգնականուհիներ, տեւողութիւնը՝ չորս շաբաթ:

1938 թ. Յուլիս 12-ի կը բացուի Հոմսի ամառնային վարժարանը եւ կը տեւէ

Վարչութեան մարմնոյ միջոցով ուսուցիչներու համար գիրքեր հայթայթել: Տէն ԲՅ ԱԱԱ, Դիւան, Կիրակնօրեայ վարժարաններու թղթածրար (յետայսու՝ ԿՎԹ), անստորագիր, 1929:



մինչև Օգոստոս 28, 65 աշակերտներով: Իսկ Ճարապլուսի մէջ Սիմոն Հովիւեանի գլխաւորութեամբ կը բացուի ամառնային վարժարանը 1 Օգոստոսէն մինչև 5 Սեպտեմբեր՝ 70 աշակերտներով:

10 Յուլիս 1940 թ. կը սկսի Կրօնական դաստիարակութեան Դ. խորհուրդի նստաշրջանը: Հալեպի՝ Սէպիլ եւ Գերմանիկ շրջաններուն մէջ կը բացուին կիրակնօրեայ դպրոցներ:

7 Ապրիլ 1941 թ. Լ. Զենեանի փոխարէն վարիչ տնօրէնի պաշտօնը Ազգային ժողովի որոշումով կը փոխանցուի հոգշ. Տ. Խորէն վրդ. Բարոյեանին (նշանակովի), իսկ Բարոյեանին քարտուղար կը նշանակուի բարշ. Արմէն սարկաւազը<sup>6</sup>:

1942 թ. Սուրիոյ կիրակնօրեայ դպրոցներու պատկերը հետեւեալն էր՝<sup>7</sup>

ԴՊՐՈՑ	ՈՒՍՈՒՑԻՉ	ԱՇԱԿԵՐՏ
Հալեպ (Կեդրոն)	20	250
Տաւուսիէ	9	175
Նոր Գիւղ	20	350
Գերմանիկ (Մէյտան)	5	160
Սէպիլ	8	75
Տէր Զօր	5	30
Ազէզ	5	90
Հոմա	4	80
Եագուպիէ	3	40
Սելէմիէ	1	35
Համա	-	-
Աֆրին	3	50

1942 թ. Հայաստանեայց Եկեղեցւոյ Կրօնական դաստիարակութեան խորհուրդի 15 Օգոստոս 1942 թուակիր նամակին համաձայն, Բերիոյ թեմի Կրօնական ժողովը իր Ը. Նիստին, 30 Սեպտեմբեր 1942 թ., կը քննարկէ եւ անհրաժեշտ կը գտնէ քահանահայրերու ներկայութիւնն ու այցելութիւնը կառոյցէն ներս:

1943 տարեշրջանին Հալեպի մէջ վերստին կը բացուին կիրակնօրեայի ամառնային վարժարաններու դռները, երեսուն օր, օրական 3-4 ժամ տեւողութեամբ: Ամառնային վարժարաններ կը կազմակերպուին նաեւ հետեւեալ վայրերու մէջ՝

ա-Հալեպ- Կիլիկեան, Վարդանեան (Տաւուսիէ) եւ Ս. Գեորգ (Մէյտան) վար-

6 «Հասկ», Ժ. տարի, թիւ 3-4 Մարտ-Ապրիլ 1941, Լիբանան, էջ 52:  
7 «Հասկ», ԺԱ. տարի, թիւ 3-4, Մարտ-Ապրիլ 1942, Լիբանան, էջ 61:

ժարաններուն մէջ:

բ-Դամասկոսի մէջ տասը տարիներ առաջ հաստատուած կիրակնօրեայ դպրոցը կը վերածնի Կաթողիկոսական փոխանորդ Տ. Եփրեմ արք. քանքերով: Սրբազանը ինք կը ստանձնէ բարձրագոյն կարգերու եկեղեցական գիտելիքներու ուսուցումը<sup>8</sup>:

գ-Հալեպի Նոր Գիւղի կիրակնօրեայ դպրոցի վարչութիւնը 16 Յուլիս 1945 թ. երկու ամսուան տեւողութեամբ կը կազմակերպէ ամառնային վարժարան Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ, ամէն օր ժամը 8-11 բացի Շաբաթ եւ Կիրակի օրերը: Նաեւ կը հաստատէ կամաւոր նուիրատուութեան դրութիւնը<sup>9</sup>:

8 «Հասկ», ԺԲ. տարի, թիւ 1-2, Յունուար-Փետրուար 1943, Լիբանան, էջ 192:  
9 ԲԹ ԱԱԱ, ԿՎԹ, 4 Յուլիս 1945 թուակիր նամակ:



#### Գ. ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆԸ 1945-1950 թթ.

1945 թ. Սուրիոյ հայաբնակ վայրերու, Հալեպի շրջակայքը եւ Ազգի, Աֆրիսի, Կեմրիկի, Տէր Զօրի, Եագուպիէի եւ այլ վայրերու մէջ կային կիրակնօրեայ դպրոցներ: Դամասկոսի եւ Հոմսի մէջ կը գործէին մինչեւ տեղւոյն հոգեւոր հովիտին հեռանալը: Սելեւիէ գիւղն է միայն, որ կը պահէ իր դպրոցը<sup>1</sup>:

1946 թուականին Ներգաղթի ակտիսը մեծ խանդավառութիւն ստեղծած էր սփիւռքահայուն: Ան դարատր չայրենիքը տեսնելու մարմաջէն կը տառապէր եւ հիա հասած էր այն պայծառ օրը, ուր Մայր շայրենիքը գրկաբաց պիտի հիւրընկալէր սփռուած իր զաւակները: Չայը սրտի ձայնին անսալով՝ նաեւ զոհ պիտի երթար կատարուած սաղորանքներուն եւ թելով ու վաճառելով իր տունն ու հողը պիտի սպասէր կարաւաններու երթին: Չտեսեանքը ծանր էր: Պիտի պարպուէին գիւղեր, պիտի փակուէին դպրոցներ, ու տանուտէր հայը պիտի դառնար վարձակալ:

Ուստի, 22 Օգոստոս 1947 թ. Լ. Զէնեան նամակով պատուարժան Բերիոյ թեմի խորհուրդէն կը խնդրէ Ազգի, Աֆրիսի, Ճարապլուսի, Տէր Զօրի, Հասիչէի եւ Արաբ Փունարի փակուած կիրակնօրեայ դպրոցներու վերաբացումն ու կը շեշտէ՝ Նոր դպրոցներու կազմակերպութեան խնդիրին կարեւորութիւնը. կ'առաջարկէ, որ խորհուրդին յառաջիկայ օրակարգերուն նկատի առնուի: Նաեւ ուշադրութեան կը յանձնէ այն միտքը, որ այնտեղ, ուր տակաւին հայ եկեղեցիներ ու դպրոցներ կը գործեն, բաղձալի է նաեւ կիրակնօրեայ դպրոցներ, նոյնիսկ այն շրջաններուն մէջ, ուր հայերու թիւը նուազած էր Ներգաղթի պատճառով:

Լ. Զէնեան 16 Դեկտեմբեր 1947 թուակիր նամակով կը տեղեկացնէ Բերիոյ թեմի պատուարժան խորհուրդին, որ կանոնագիրի համաձայն մէկ տարուան համար հարկ է նշանակել ներքին տեսուչ մը Հալեպի եւ թեմերու կիրակնօրեայ դպրոցներու համար: Կը նշանակուի պր. Ներսոյեանը: Ներսոյեան կը նկատուի չալեպի կիրակնօրեայ դպրոցներու ընդհանուր տեսուչ, «որպէսզի ամէն կիրակի կարենայ այցելել զանոնք՝ առանց կապուած ըլլալու յատուկ կամ մասնատր դպրոցի մը»: Նաեւ Ներսոյեանին պիտի յանձնուի թղթակցութիւն վարելու գործը, մանրամասնութիւններով զբաղելու պաշտօնը, նաեւ «եթէ ուզուի ժողովներու ատենագրութիւնը պատրաստելու, գանձապահի հաշիւները պահելու գործերը»:

Ապրիլ 1948 թ. Գեորգ Ներսոյեան այցելելով Հալեպի շրջակայքը գործող

կիրակնօրեայ դպրոցները կը յորդորէ տարուած աշխատանքը եւ կը շեշտէ կիրակնօրեայի անհրաժեշտութիւնը: Ան իր շրջագայութեան ընթացքին կ'այցելէ յատկապէս Ազգ, Լաթաքիա, Եագուպիէ, Ճարապլուս, Արաբ Փունար եւ Ճեզիրէ, ուր ժամանակին կար երկու կիրակնօրեայ, մէկը՝ Գամիշլի, միւսը՝ Հասիչէ:

Սոյն թուականին Հալեպի հինգ կիրակնօրեայ դպրոցներու տեսուչները օգտուելով նախապէս գոյութիւն ունեցող ներքին կանոնագիրներէն՝ կը պատրաստեն ներփակ ներքին կանոնագիր:

1948 թ. միայն Հալեպ ունէր հինգ կիրակնօրեայ դպրոց՝ Կեդրոն, Տաւուսիէ, Նոր Գիւղ, Սեպիլ եւ Գերմանիկ:

Շուրջ քսանամեայ գործունեութիւն ծաւալած Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կիրակնօրեայ դպրոցը, բացի Սուրիայէն կը գործէր Լիբանանի, Կիպրոսի եւ այլուր, բայց չունէր իր հիմնը՝ քայլերգը: Կաթողիկոսութիւնը նկատուելով կիրակնօրեայ դպրոցներու յատուկ քայլերգի մը անհրաժեշտութիւնը յարմար մրցում մը կը նախաձեռնէ. այս ծրագիրին համար կ'ապահովեն 50 տղար լաւագոյն քայլերգը յօրինողին, որուն ընտրութիւնը պիտի կատարէր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Ա.-ին կողմէ՝ նշանակուած յանձնախումբը: Ընդառաջելով սոյն մրցումին իր մասնակցութիւնը կը բերէ 19 հոգի, որոնցմէ՝ առաջին կը հանդիսանայ Կարապետ Փափագեանը, որ դարձեւանքին քահանայից լսարանէն էր<sup>2</sup>:

8 Յուլիս 1949 թ. Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետ՝ ՆՍՕՏՏ Գարեգին Ա. Կաթողիկոս հովուապետական այցելութեամբ կը ժամանէ Հալեպ: Ան հանդիպում կ'ունենայ Հալեպի չորս կիրակնօրեայ դպրոցներու աշակերտութեան, ուսուցիչներու եւ ծնողներու հետ, որոնք հաւաքուած էին Ս. Քառասնից Մանկանց եկեղեցու մէջ:

Բերիոյ թեմի Առաջնորդ եւ Կրօնական Դաստիարակութեան խորհուրդի նախագահ Տ. Զարեհ եպս.-ի նախագահութեամբ, Կեդրոն-Սալիպէ վարչութեան կազմակերպութեամբ, Հայաստանեայց Եկեղեցու կիրակնօրեայ դպրոցներու հիմնարկութեան քսանամեակի տօնակատարութիւն տեղի կ'ունենայ 6 Մայիս 1951 թ. Կրթասիրաց վարժարանի աղջկանց բաժնի բակին մէջ: Հանդիսութեան մասնակցելու Հալեպ կը ժամանէ Հայաստանեայց Եկեղեցու կիրակնօրեայ դպրոցներու ընդհանուր վարիչ տնօրէն Լ. Զէնեան, ան հանրութեան կը փոխանցէ կիրակնօրեայ դպրոցներու պատմականը «Քսան տարի առաջ» վերնագիրով<sup>3</sup>:

1 «Հասկ», ԺԴ. տարի, թիւ 11-12, Նոյեմբեր-Դեկտեմբեր 1945, Լիբանան, էջ 224:

2 ԲԹ ԱՍԱ, Դիւան, ԿԿԻԹ, 16 Դեկտեմբեր 1947 թուակիր նամակ:

3 «Հասկ», ԺԸ. տարի, թիւ 12, Դեկտեմբեր 1949, Լիբանան, էջ 369:

4 «Հասկ», Ի. տարի, թիւ 6, Յուլիս, 1951, Լիբանան, էջ 197-198:



1950 թ. Անթիլիասի մէջ կը հիմնուի Հայ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու Օժանդակ Միութիւնը (ՀԵԿԴՕՄ): 25 Ապրիլ 1950 թ., Մեծի Տանն Կիլիկիոյ երանաշնորհ Տ. Գարեգին Ա. Կաթողիկոսի թիւ 2979 սրբատառ կոնդակով պաշտօնապէս կը վաւերացուի<sup>5</sup>:

Հալէպի մէջ տոյն կազմակերպութեան առաջին հասարկոյթը տեղի կ'ունենայ 26 Օգոստոս 1951 թ. Ազգ. Մանկապարտէզի սրահին մէջ, ներկայութեամբ Հալէպի հինգ կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչաց կազմերու, շրջանաւարտներու եւ համակիրներու: 18 Մայիս 1952 թ., Ազգ. Մանկապարտէզի սրահին մէջ տեղի կ'ունենայ ՀԵԿԴՕՄ անդրանիկ վարչութեան ընտրութիւնը, ներկայութեամբ արժ. Տ. Կարապետ քնյ. Նալպաստեանի եւ 36 երկսեռ անդամներու: Վարչութիւնը իր Բ. եւ Գ. Նիստերուն, մշակուած ծրագիր-կանոնագրի համաձայն, կ'ընտրէ՝ թատերական, մարզական, ընկերային, գրական-կրթական յանձնախումբեր:

8 Փետրուար 1953 թ. մեծ գրագէտ եւ բանաստեղծ Արշակ Զօպանեան կ'այցելէ Կեդրոն բաժնի կիրակնօրեայ դպրոցը: Ան հանդիպում կ'ունենայ վարչութեան, ուսուցիչներու եւ աշակերտութեան հետ, կը գնահատէ ու կը յորդորէ զանոնք:

Մինչեւ վաթսունական թուականներ Կիրակնօրեայ դպրոցներ գոյութիւն ունեցած են Հալէպ Կեդրոն (Սալիպէ), Հալէպ Մէլտան (Նոր Գիւղ), Տաւուտիէ, Գերմանիկ, Սէպիլ, Շէյխ Մագսուտ, Դամասկոս, Հոմա, Համա, Ճարապլուս, Տէր Զօր, Արաբ Փունար, Ազէզ, Աֆրին, Թարթուս, Լաթաքիա, Քեսապ, Ճէզիրէ (Գամիշլի, Հասիչէ), Եագուպիէ եւ այլ շրջաններ, որոնք ժամանակի ընթացքին դադարած էին գործել:

1960-ական թուականներու հայրենադարձութեան, ներքաղաքական պայքարի եւ երկրէն ներս տիրող որոշ սահմանափակումներու պատճառով, շրջաններու փոքր ասաններու հայութիւնը պարբերաբար գաղթելով դէպի մեծ քաղաքներ եւ դէպի այլ տարածքներ, պիտի փակուէին կարգ մը շրջաններու կիրակնօրեայ դպրոցները եւ աշակերտութեան թիւի, եւ մասնագէտ ուսուցիչներու նուազումի պատճառով:

## Դ. ԹԱՏԵՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Թատերական արուեստը սուրիահայոց կեանքէն ներս աշխուժացած է քաւերորդ դարու սկիզբը, յատկապէս համայնքի կազմութեան օրերուն եւ այնպիսի միջավայրի մէջ, ուր կը պահպանուէին անցեալի ասանդոյթները եւ կը նշուէին պատմական կարեւոր տարեդարձներ:

Սակայն պէտք է ըսել, որ սուրիահայ, յատկապէս հալէպահայ թատերական կեանքի ուսումնասիրութիւնը հետազօտողներու տեսադաշտէն դուրս մնացած է: Հայ թատրոնի պատմութիւնն անգամ անտեղեակ մնացած է թատերական գործունեութեան փաստին: Բազմաթիւ յօդուածներ հանդէս եկած են, բայց մինչեւ օրս գիտական առումով ոչ մէկ ամբողջական ուսումնասիրութիւն կատարուած է:

Համայնքի թատերական շարժման անքակտելի մաս կազմած են դպրոցական թատրոնը, անհատական նախաձեռնութիւնները եւ շրջիկ խումբերու այցը: Դպրոցներու ղեկավարները կը ձգտէին երեխաները դաստիարակել հայրենասիրական ոգիով: Դպրոցական միջոցառումները ըլլալով եկամտաբեր, մեծ հոգատարութեամբ նախաձեռնուած են եւ որոնց մաս կազմած են հոգաբարձութիւնները, ազգայիններն ու ուսուցչական կազմերը եւ:

«ԱՆԴՐԱՆԻԿ» թատերախումբը, որուն հիմնադրութեան ակունքները կը հասնին մինչեւ 1921 թուականը, իր ելոյթները կը ներկայացներ «Տաւուտիէի» հիւրանիւն մէջ:

1935 թ. «Անդրանիկ»-ին կը միանայ ժամանակի հալէպահայ նշանաւոր դերասաններէն Վարդան Պարիկեանը եւ կը դառնայ խումբի հիմնական ղեկավարը: Այս շրջանի թատերախումբի խաղացանկին վրայ կը տեսնենք «Մաճունը Լայլա»-ն (խելագար Լէյլան), «Համլէթ»-ը, ինչպէս նաեւ՝ «Վարդանանք»-ը: Խումբին բեմադրիչ Վարդան Պարիկեանի կողքին կը տեսնենք նաեւ Աւետիս Էքմէքճեանը<sup>2</sup>:

Երկար դադարէ մը ետք Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը կը վերականգնէ իր թատերախումբը եւ 1977 թ. զայն դարձեալ կը կոչէ «Անդրանիկ»:

Տարբեր թուականներուն Հալէպ պարբերաբար այցելած են՝ կովկասահայ, իզմիրահայ, պոլսահայ եւ եգիպտահայ թատերախումբեր: Այցելու թատերախումբերէն՝ «Վերածնունդ» եւ Պոլսոյ Ա. Մատաթեանցի «Մելփոմէ»-ն, որոնց միացած է համայնքի հարազատ զաւակ Տ. Աճեմեանը: Վերջինիս շնորհիւ է, որ

5 Քաղուած «Մեր Կեանք» տեղեկատու, Հայաստանեայց եկեղեցւոյ կիրակնօրեայ դպրոցներու, Դ. տարի, 1953, Անթիլիաս-Լիբանան, թիւ 5 (տեղեկագիր ՀԵԿԴՕՄ Օժանդակ միութեան, 1 Յունիս 1952- 1 Փետրուար 1953 տեղեկագիրէն):

1 **Թորանեան Թորոս**, Ակնարկ սուրիահայ թատերական պատմութեան եւ դերասան Բարսեղ Արովեանի յուշերը, Պէրոթ, 1973, էջ 27-37:

2 **Թորանեան Թորոս**, նշ. աշխ., էջ 27-31:



քսանական թուականներուն ծնունդ կ'առնեն «չայ երիտասարդաց միութիւն»-ն ու «Հալէպի ամաթետրոններու տրամաթիք» Աճեմեանի սեփական թատերախումբերը<sup>3</sup>:

1920-1950 թթ. համայնքին մէջ կը նշմարուի սեփական թատրոն ստեղծելու միտումը. կ'ուրուագծուին թատերական արուեստի զարգացման ուղիները: Պատմական ճակատագիրի բերումով հայ թատերական կեանքը Պոլիսէն կը տեղափոխուի այլ համայնքներ: Ինչպէս Լիբանան, այնպէս ալ Հալէպ կը ժամանեն նշանաւոր դերասաններ՝ կովկասահայ Բ. Աբովեան, Մ. Կոստանեան, պոլսահայ Ե. Չափրաստ, Վարդ Պատրիկ, Օ. Գալֆայեան, Պ. Թումպուլեան, Ա. Մատաթեան, Մ. Մարութեան եւ ուրիշներ, որոնք իրենց դերասանական արուեստով պիտի ծաղկեցնէին հալէպահայ թատերաբեմերը<sup>4</sup>. «Հալէպը այն օրերուն օթեանն էր դերասանախումբերու, որոնք ամիսներով հոն կը մնային»: «...Մշակութային եռուն կաթսայ մըն էր անիկա կեանքի բոլոր մարզերու մէջ: Պոլիսը Հալէպ փոխադրուած էր: Կար զարթօնք ու շարժում»<sup>5</sup>:

«ԶԱԻԱՐԵԱՆ» թատերախումբը, որուն թատերական գործունեութիւնը սկսած էր 1936 թ., իր խաղացանկերով կը համարուէր համայնքի ամենէն հին եւ երկարակեաց թատերախումբերէն: Ան ընդմիջումներով կը շարունակէ իր երթը:

«Զաւարեան» թատերախումբի գործունեութիւնը կարելի է բաժնել երկու հիմնական շրջաններու: Թատերախումբի հիմնադրումէն մինչեւ 1970 թուականը կը սեպուի առաջին շրջան: Թատերախումբը ունեցած է 10 տարուան ընդհատում: Իր գոյութիւնը պահելու համար թատերախումբը փորձած է 10 տարուան ընթացքին քանիցս հանդիսատեսին ներկայացնել իր խաղացանկէն հին գործեր:

Բարսեղ Աբովեանը, Գրիգոր եւ Ռուբէն Պարսումեանները, այդ շրջանին թատերախումբի հիմնական բեմադրիչ-դերասանները կը հանդիսանան: Անոնք անխոնջ աշխատանքով կը նուիրուին եւ արժանավայել կերպով կը դրսեւորեն իրենք զիրենք:

Բ. Աշխարհամարտէն առաջ հալէպահայ համայնքէն ներս կը գործէին նաեւ Համազգային հայ կրթական ու հրատարակչական ընկերակցութեան եւ ՀԵԸ-ի թատերախումբերը: Կարճ կ'ըլլայ առաջինի կեանքը, բայց եւ այնպէս անդամները ՆՄԸՄ-ի եւ ՆՈՄ-ի հետ համագործակցաբար կը փորձեն շարունակել մշակութային գործունեութիւնը: ՀԵԸ-ի թատերախումբը, հանդէս եկած է «Սունդուկեան» անուամբ, դերուսոյց Գ. Մելքոնեանի գլխավորութեամբ: ՀԵԸ-ի

թատերախումբը, պատասխանատու մարմիններու գործնական օժանդակութեամբ, վերելք կ'ապրի եւ կը ստանայ սեփական դիմագիծ: Քառասունական թուականներուն ՀԵԸ-ի թատերախումբը իր գործնական աջակցութիւնը կ'ընձեռե օրիորդաց վարչութեան<sup>6</sup>: Միաժամանակ կ'օժանդակեն Հալէպ այցելող բազմաթիւ դերասաններու, ինչպէս՝ Եղուարդ Չափրաստի<sup>7</sup>, Բարսեղ Աբովեանի<sup>8</sup>, Արփիար Վարդեանի<sup>9</sup>, Աշոտ Մատաթեանցի<sup>10</sup> եւ Մանուէլ Մարութեանի<sup>11</sup>: Մարութեանի եւ Համազգայինի տղոց աջակցութեամբ կը հիմնուի «Տրամաթիք սթիւտիոյի» մը: Յետագային (50-ական թուականներուն) կը կազմեն թատերախումբ մը «Համազգայինի Թատերասերներ»<sup>12</sup> անունով, որ կը գործէ Համազգային Մշակութային Միութեան հովանիին տակ, այսինքն՝ «ՀԵՄ»-ի անուն տակ կը վարէին թատերական գործունեութիւն:

Թատերասերները իրենց գործունեութիւնը կը սկսին 50-ական թուականներուն: 1950-էն մինչեւ 1980-ական թուականները, անոնք կը բեմադրեն տասնեակ մը համաշխարհային գրականութենէն եւ հայկական թեմայով գործեր: Կ'աշխատակցին տարբեր բեմադրիչներու հետ, ինչպէս Սարգիս Քոչեանի, Նազարէթ Քեօրիկեանի, Գուրգէն Գույումճեանի, Զաւէն Սապունճեանի, Պետրոս Քելէշեանի, Ճորճ Վանլեանի եւ Պէյրութեան հիւրաբար ժամանած Վարուժան Խտըշեանի: Խտըշեանի բեմադրութեամբ կը բեմականացուին Սունդուկեանի «Պէպօ»-ն (1975 թ.) եւ Լեւոն Շանթի «Եսի Մարդը» (1976 թ.):

Տարագիր հայոց օրուան հոգեբէն դուրս բերելու միտումով լայն տեղ տրուած էր զաւէշտին, որպէս թատերական սեռ: Սակայն պետք է ըսել, որ անոր ետին թաքնուած էր առաւել չափով համայնքի կեանքի տխուր, անախորժ ու խոցելի կողմեր: Զաւէշտը պիտի հանդիսանար հալէպահայ թատերական աշխուժացման մեծագոյն ազդակներէն:

6 Նոյն տեղը, էջ 68:

7 Հայ թատրոնի վերակազմութեան գործին մէջ առաջնակարգ տեղ ունեցած է: 1928-ին Պոլսոյ մէջ կը հիմնէ Հայ Տրամաթիք թատերախումբը, ապա Պէյրութ անցնելով կը կազմէ Թատերախորաց միութիւնը եւ կ'ունենայ իր նշանաւոր ներկայացումները Պէյրութի եւ Հալէպի մէջ, ինչպէս՝ «Յո երթաս», «Պատուի համար», «Քնաշրջիկը» եւ «Տիւրան տիւրան»...:

8 Հալէպահայութեան ծանօթ է իր «Աշուղ Ղարիպ»-ով, «Պէպօ»-ով եւ «Շողորթը»-ով, «Բանաստեղծ ընտանիք»-ով...:

9 Եգիպտոսէն Հալէպ անցնելով կը ներկայացնէ «Պաղտասար աղբար», «Պէպէքս» եւ «Տիւրան տիւրան»...:

10 Պոլսահայ Վերժին Տեմիրճեանի հետ Հալէպի մէջ կը ներկայացնէ «Փողոցի աղջիկը», «Վարձապետին աղջիկը» եւ «Վաղահասը»...:

11 Նշանաւոր դերասան, բեմադրիչ եւ դերուսոյց. Հալէպի մէջ կը կազմէ իր սթիւտիոն եւ Թատերական երիտասարդներու միութիւնը, ՀԵՄ-ի տղոց հետ կը ներկայացնէ «Օթելլօ», «Կոմիտաս» եւ «Գորդաւոր»...:

12 **Սապունճեան Զ.**, Համազգային հայ մշակութային ու կրթական ընկերակցութեան Հալէպի մասնաճիւղի կէս դարու պատմութիւն, «Գեղարդ», Գ. գիրք, Հալէպ, 1985, էջ 469:

3 «Գանձասար» պաշտօնաթերթ, բացառիկ թիւ, 1995, Հալէպ, էջ 17-18:

4 Նոյն տեղը:

5 «Նոր Ապրիլ» պարբերաթերթ, Ա. տարի, թիւ 3, 1980, Հալէպ, էջ 58:



Էականը թատրոնի բնոյթը չէր, այլ այն զարմանալի յամառ նկարագիրը, որով ոչ միայն գրագետ մարդիկ, այլև կիսագրագետ բանուորներ, արհեստաւորներ կը դիմէին դէպի թատրոն: Այլ խօսքով՝ այս շրջանի թատրոնը կը բնորոշուէր ոչ մասնագիտացուած մակարդակի թատերական ուժերով: Պարզապէս այնտեղ գերակշռողը սիրողական արուեստն էր: Դերասանները, մեծաւ մասամբ, ծանօթ ըլլալով թատերական վերիվայրումներուն կը փորձէին թատրոնի ճանապարհով ծաղկեցնել եւ հարստացնել սուրիահայ թատերական կեանքը:

Թատերասրահներու չգոյութեան պատճառով թատերական ներկայացումները կը կազմակերպուէին թիթեղապատ գաղթականական թաղամասերու, խեղճուկ կացարաններու, մինչեւ անգամ Ամերիկեան Նպաստամատոյց ընկերութեան որբանոցներու մէջ: Այսպիսով կարելի է բացատրել, որ թատրոնը որքան ներթափանցած էր սփիւռքահայու կենցաղին մէջ:

Քառասունականի երկրորդ կիսուն երկրէն եւ յատկապէս համայնքի լարուած իրավիճակը պիտի ազդէր արուեստի բոլոր ճիւղերու վրայ: Թէեւ կային զարգացման նախադրեալներ, բայց եւ այնպէս ժամանակաւոր կը նահանջէ: Այնուամենայնիւ, 1948 թ. Մ. Մարութեանի չալէպ ժամանումով վերելք կ'արձանագրէ ու կ'աշխուսեանայ շԵՄ-ի թատերական կեանքը: Համազգայինի քանքերով կը հիմնուի «Տրամաթիք սթիւտիոյ», որուն անդամները կորիզը պիտի կազմէին համազգայինի թատերասերներու խումբին «Համազգային թատերասերներ» անունով<sup>13</sup>: Յետագային վերոյիշեալ թատերախումբէն ծնունդ պիտի առնէին ներկայիս չալէպի մէջ գործող «Լ. Շանթ» եւ «Զաւարեան» թատերախումբերը:

Տուեալներու համաձայն կը յիշատակուի, թէ համայնքէն ներս երիտասարդ թատերասերները կազմուած պատանիներու թատրոն ալ գործած է:

1951 թ., առաջին անգամ չալէպ կը ժամանեն Համազգայինի Պէյրութի թատերասերները, որոնք յաջորդական ելոյթներով իրենց մասնակցութիւնը կը բերեն հալէպահայ թատերական կեանքին՝ բեմադրիչ Գ. Իփէկեանի եւ դերասան Ճ. Սարգիսեանի շնորհիւ:

Թէքէան Մշակութային Միութեան, հիմնադրուած 1955 թ., առաջին թատերական ներկայացումը 1958 թուականին էր, այսինքն՝ Միութեան հիմնադրութենէն 4 տարի ետք միայն: Առաջին անգամ կը ներկայացնէ օփերէթ «Աշուղ Ղարիպ»-ը 1959 թ., բեմադրութեամբ Նահապետ Նարկիզեանի, իսկ երաժշտական ղեկավարութիւնը կը ստանձնէ խմբավար Անդրանիկ Կիրակոսեանը:

13 «Գանձասար», բացառիկ թիւ, 1995, չալէպ, էջ 19:

Թէքէան Միութեան թատերախումբի խաղացանկին մէջ կը նկատենք 8 գործեր, որոնք ներկայացուած են 1959-էն մինչեւ 1987 ժամանակահատուածին: Խումբը իր ներկայացումներուն մեծ մասի ղեկավարութիւնը վստահած է Նահապետ Նարկիզեանին: Թէքէան մշակութային միութեան նախաձեռնութեամբ եւ հրաւիրով պարբերաբար թատերախումբեր կը հրաւիրուին Պէյրութէն եւ հայրենիքէն, Պէյրութէն՝ Փափագեան թատերախումբը իր «Կասկածը կնոջ մտքին մէջ» Գ. Սաթամեանի բեմադրութեամբ:

Արդէն, 60-ական թուականներուն որոշ միութիւններ ունէին իրենց թատերախումբերը, ուր բոլոր վարչական հարցերը կը լուծուէին տուեալ միութեան կողմէ: Այս երեւոյթը առաւելաբար կը շեշտուի 70-ական թուականներուն: Այդ թուականէն ետք այլեւս շատ նուազ կը հանդիպինք անձնական միջոցներով հիմնուած թատերախումբերուն կամ այցելու դերասաններուն:

Այնուամենայնիւ, անձնական թատրոն պահելու փորձերը չէին դադրած: Առաջինը Ռուբէն Պարսումեանի 1969 թ. հիմնած «Յակոբ Պարոնեան» թատերախումբը: Պարսումեան հաւանաբար հմայուող մը եղած ըլլալով Պարոնեանի տաղանդին թատերախումբը կոչած էր անոր անունով. հակառակ թատերախումբի կարճատեւ կեանքին, երեք ներկայացումներէն երկուքը Պարոնեանի գործերէն էին:

«Ատամաբոյժն Արեւելեան» 2 անգամ, 1970 թ. եւ 1978 թ.:
«Պաղտասար Աղբար», 1971 թ.:
«Ակամայ Բժշկը» այս մէկը միայն՝ Մոլիէր, 1972 թ.:

«Յակոբ Պարոնեան» թատերախումբը գոյատեւած է խումբի նիւթական միջոցներով:

Գերմանիկ Վասպուրական թատերախումբը, որ կոչուած էր «Վասպուրական», կազմուած էր խումբ մը մարաշցի տղոցմէ: չալէպահայ դերասաններէն Վահէ Սամուլեանի համաձայն, մարաշցի թատերասեր տղաքը, ինչպէս Մարաշի մէջ, այնպէս ալ չալէպ հաստատուելէն ետք շարունակած են իրենց ներկայացումները: Թատերախումբը սկզբնական շրջանին ասանդութիւն դարձուցած էր «Վարդանանք»-ի խաղարկութիւնը: Այդ թուականներուն անոնք ներկայացուցած են նաեւ «Սանդուխտ կոյսը», «Անին ծախուեցաւ»:

Համայնքի աշխույժ թատերախումբերէն է «Ադամեան»-ը: Հայ երիտասարդաց Ընկերակցութեան հովանաւորութիւնը վայելող այս թատերախումբը իր «Պետրոս Ադամեան» անուանումը կը ստանայ 1961 թ.: Սակայն մինչեւ 1961 թուականը կար թատերախումբ մը, որ կը գործէր միութեան հովանիին տակ: Ներգաղթի



օրերուն չէՇ-ի թատերախումբը կը ներկայացնէ երկու գործ՝ «Տասումը» և «Ներգաղթը»<sup>14</sup>: Ներգաղթի տրամադրութիւններով տոգորուած հալէպահայ հասարակութիւնը բազմիցս կը խնդրէ երկու ներկայացումներուն կրկնութիւնը: Իզական սեռի անհրաժեշտութիւնը տազնապէցուցած էր թատերախումբերը: Այդ թուականներուն չէՇ-ի հովանիին տակ կազմուած ու կը գործէր Օրիորդաց վարչութիւն մը, որուն անդամները կը բեմադրեն երկու գործեր՝ «Երկու քոյրեր»-ը եւ «Որբուհին»<sup>15</sup>:

1960 թ. չէՇ-ի վարչութիւնը կը մտածէ մնայուն թատերախումբ ունենալու մասին: Կ'առաջացնէ յանձնախումբ մը՝ զբաղելու թատերական հարցերով՝ զխնաւորութեամբ Պետրոս Քէլէշեանի: Թատրոնը կ'անուանեն «Պետրոս Աղամեան»՝ ի յիշատակ անմահն դերասանին: Թատերախումբը կը շարունակէ իր գործունէութիւնը մինչեւ 1970 թ.:

1966-1969 թթ. ժամանակահատուածին չէՇ ունեցած է նաեւ աշակերտական թատերախումբ՝ ղեկավարութեամբ Վահէ Սամուելեանի: Իսկ 1972 թ. «Աղամեան»-ը առաջին անգամ ըլլալով չալէպի մէջ կը նախաձեռնէ մանկապատանեկան թատրոնի ստեղծման: Եւ զարմանալի չի թուիր, այդ թուականէն մինչեւ օրս թատերախումբի տարեկան ծրագրին մէջ մանկապատանեկան ներկայացումներու առկայութիւնը:

1960-ական թուականներուն սուրիական թատրոնը սկսած էր վերելք ապրիլ: չայ թատերասեր հասարակութիւնը Սուրիոյ մէջ մասնագէտներու պահանջը կը զգայ թատերական արուեստը հայ հանրութեան աւելի բարձր մակարդակով ներկայացնելու: Այդ բացը սկզբնական շրջանին կը լրացնէ Գրիգոր Քէլէշեանը: Իր ժամանումով, 1970 թ., թատրոնը սիրողականէն հետզհետէ քայլ մը առաջ անցնելով՝ կը մօտենար մասնագիտականին. այսպիսով «Աղամեան» թատերախումբը կը թեակոխէ նոր եւ կարեւոր շրջան մը: չէՇ-ի պատասխանատուները թատերախումբին կը տրամադրեն միութեան շէնքին մէջ գտնուող ընդարձակ սենեակ մը, որպէս թատերախումբի հաւաքավայր: «Աղամեան»-ը կը սկսի գործունէութեան «ոսկեայ» շրջան մը: 15 տարիներու ընթացքին անոնք կը ներկայացնեն աւելի քան 25 գործեր՝ հալէպահայ հանդիսատեսին բերելով նոր բեմական ճաշակ եւ գեղարուեստական ըմբռնում:

1970 թ., Քէլէշեանի անդրանիկ աշխատանքը կ'ըլլայ «Անոյշ»-ի բեմադրութիւնը՝ կազմակերպութեամբ 9 միութիւններու: Օփերայի բեմականացումը նուիրուած էր Յ. Թումանեանի ծննդեան 100-ամեակի առթիւ: «Անոյշ»-ի բեմա-

14 **Սվաճեան Վ.**, Ուրուագիծ չալէպի չէՇ-ի թատերական շարժումի, «Նոր Ապրիլ», պարբերաթերթ, Ա. տարի, թիւ 3, 1980, չալէպ, էջ 61:  
15 Նոյն տեղը:

կանացումը մեծ արձագանք կ'ունենայ համայնքէն ներս: Ընչ միայն սփիւռքեան, հայրենի, այլեւ արաբական թերթերը կ'անդրադառնան: Սուրիացի արաբ թատերագիր Ռալիտ Իխլասի, «Անոյշ»-ի եւ բեմադրիչի մասին այսպէս կ'արտայայտուի. «Անոյշ օփերան կը համարուի առաջինը իր տեսակով մեր երկրէն ներս: Եւ ան պիտի ըլլայ սկիզբը նոյնանման այլ աշխատանքներու, որոնք պիտի գրաւէին մեր համակրանքն ու սէրը այսպիսի հաւաքական արուեստի մը: Մենք փոքր այդ թատերաբեմին վրայ, զոր կը ծառայէր միայն փոքր թատերական ներկայացումներու, տեսանք իսկական արուեստը, 80 հոգիներու մասնակցութեամբ, զոր կը ղեկավարէր տաղանդաւոր բեմադրիչ Գ. Քէլէշեանը»<sup>16</sup>:

Փորձառու արուեստագէտներու առկայութիւնը կրնար թատերական կեանքի լիարժէք սկիզբ դառնալ:

1969 թուականին Գ. Քէլէշեանը չայրենիքէն վերադառնալով չալէպ՝ հայկական թատերախումբերու կողքին կը բեմադրէ ու կը ղեկավարէ նաեւ արաբական թատերախումբեր, ինչպէս չալէպի «Ազգային թատրոն»-ը<sup>17</sup>: Սուրիական արաբական թատրոնի տարբերութեան մէջ իր դրոշմը պիտի ունենար վաստակաւոր բեմադրիչը:

Չալէպահայ թատերական գործունէութեան առընթեր բեմականացուած են «Վարդանանք», «Պաղտասար աղբար», «Աշխարհի դատաստանը», «Մեծպատի մուրացկանները», «Պատուի համար», «Քորրատո»-ն, «Ազահ»-ը, «Ինկած բերդի իշխանուհին», «Խաչագողի յիշատակարան»-ը, «Արցունքի հովիտ»-ը, «Վարժապետին աղջիկ»-ը, «Նամուս»-ը, «Աղջիկտես»-ը, «Արեւելեան ատամաբոյժ»-ը եւ այլն:

Այստեղ կարեւորենք այն հանգամանքը, որ մինչ այդ թուականը սուրիահայ թատրոնը ունեցած է միակողմանի առաջընթաց: Մշակութային առումով, հայարաբ թատերական մերձեցումը ընդամենը քանի մը տասնեակ տարիներու կէտք ունեցած է: Սփիւռքի կազմութեան առաջին օրերէն մինչեւ յիսունական թուականները սուրիահայերը ապրած են ներփակ կեանքով: Անոնք երկրի հաատարիմ քաղաքացիներ ըլլալով՝ իրենց մասնակցութիւնը բերած են երկրի զարգացան գրեթէ բոլոր ոլորտներուն, սակայն որպէս ամենդասակ, իրենց լեզուին ու մշակոյթին ձուլման վտանգէն զերծ մնալու մտահոգութեամբ, միշտ ալ վարած են չէզոք քաղաքականութիւն եւ ապրած են ներփակ կեանքով: Անոնք կենցաղային հարցերով չեն նախընտրած շփուիլ տեղացիներու հետ: Ասոր գլխաւոր պատճառներէն մէկը արաբերէն լեզուի ոչ իմացութիւնն էր: Սակայն կար այլ կարեւոր հիմնատրուում, ուր տեղական թատրոնը կը թաւալէր

16 حريمه «الجمهورية» عام 1970، العدد 1529، ص 16  
17 محمد هلال دملخي، مسرح حلب في مئة عام، حلب 2000، ص 135



իր համեստ պայմաններու մէջ: Չունենալով կատարողական մակարդակով մասնաւոր գրչութիւն, հայը չմտածեց ներգրաւուիլ անոր մէջ:

Յիսունական թուականներու կիսուն եւ անկէ ետք իշխանութեան ու տեղացի ժողովուրդին ներշնչած ապահովութեան շնորհիւ եւ վայելելով համահասարակ քաղաքացիական իրաւունքները՝ վստահութիւն ներշնչեցին եւ նպաստեցին յարաբերութեան սերտացման<sup>18</sup>: Առաջին հերթին սերտացման խթան հանդիսացաւ թարգմանական գրականութեան ճամբով հայ-արաբ գրական գոհարներ ներկայացնելը միմեանց:

Այնուամենայնիւ, սուրիահայ թատերական կեանքի վերելքն ու զարգացումը կարելի է համարել վաթսունականի աւարտը: Սակայն մասնագիտացած բեմադրիչ-դերասանի մուտքը եւ իրարայաջորդ մասնագէտներու առկայութիւնը թէեւ կրցաւ բարձրացնել հանդիսատեսի ճաշակը՝ ձգտելով դէպի աւելի լաւ, սակայն միւս կողմէ բախում տեղի ունեցաւ սիրողական եւ մասնագիտական առումով գրեթէ մշակոյթի բոլոր բնագաւառներէն ներս:

Այս շրջանին հալեպահայ բեմին վրայ ներկայացուած են տասնեակ համաշխարհային եւ հայկական թեմաներով թատերախաղեր: Հայ հեղինակներուն մէջ տիրող Յակոբ Պարոնեանն է գրեթէ իր բոլոր կատակերգութիւններով: Իսկ համաշխարհային հեղինակներէն այս ժամանակահատուածին բազմիցս ներկայացուած են Շէյքսպիրի եւ Մոլիերի գործերը:

Տիրող դժուարին պայմաններուն մէջ, երբ չկային պահանջուած հնարարութիւնները, ներկայացուած են նաեւ օփերաներ, ինչպէս «Աշուղ Ղարիպ»-ը, «Լէպլէպիճի չօրօր աղա»-ն եւ «Անոյշ»-ը:

18 «Գեղարդ», Զ. գիրք, Հայէպ, 2000, էջ 216:

## Ե. ԳՐԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Սփիւռքի գրականութիւնը եւ անցաւ զարգացման ուրոյն ուղի. ան կապուած էր հայ ժողովուրդի աշխարհասփիւռ հատուածին կեանքի իւրայատուկ ընթացքին հետ: Յետեղեռնեան ժամանակաշրջանին գրական շարժման առաջ կանգնեցան մեծ դժուարութիւններ:

Ազգապահպանման մեծ լծակը՝ մամուլն ու գրականութիւնը, նորէն դարձան ժողովուրդի տրամադրութիւններուն ու պատմական տենչերու արտայայտիչը: Սակայն Սփիւռքի գրականութիւնը չունեցաւ զարգացման բնականոն ճանապարհ: Արտասահմանի հայութեան անջատուածութիւնը մեծ չափով արգելակեց կապ ստեղծել գրականութեան եւ ընթերցողին միջեւ: Գիրքերը տպագրուեցան փոքր տպաքանակով եւ տարածուեցան մեծ մասամբ մէկ համայնքի սահմաններու մէջ: Տարագրուած հայ գրողին համար անհասանելի երազ էր միայն ստեղծագործական աշխատանքով ապրիլ: Ան պէտք էր որբւէ ձեռով հոգար իր ապրուստը եւ վերջը զբաղէր գրականութեամբ: Առաւել՝ կար տպագրութեան հարցը: Գրողը պատրաստ գործի համար պէտք էր միջոցներ որոնէր դիրութեամբ տպուելու: Այլ խօսքով՝ նիւթական աջակցութեան բացակայութիւնն էր:

Հայ ժողովուրդի պատմական ճակատագիրի երկկողմանի լուծումը, բնականաբար, իր դրոշմը պիտի ձգէր անոր գրականութեան, երկու հատուածներու ճակատագիրի վրայ: Արտահալած արեւմտահայութիւնը իրեն հետ տարաւ հայրենիքի սերն ու կարօտը, նաեւ վերադարձի յոյսը: Հայ գիւղացիին, արիւտաւորի եւ առեւտրական դասին հետ երկիրէն հեռացաւ մեր մտաւորականութիւնը: Եթէ առաջինները չկրցան իրենց հետ փոխադրել հայրենի հողը, ապա վերջինները իրենց հետ փոխադրեցին մեր նախնիներու աւանդը՝ ազգային մշակոյթը: Աշխարհական թէ եկեղեցական՝ իրենց ապաստանած վայրերու մէջ հաստատեցին տպարան, մամուլ, եկեղեցի, դպրոց, ակումբ եւ գրադարան. ունեցան ազգային գործունէութիւն, մամուլով, բեմով եւ հրատարակութիւններով:

Բայց պատմական հողի վրայ աննախընթաց զարգացում ապրեցաւ խորհրդահայ գրականութիւնը՝ խորանալով դասական գրականութեան հարուստ փորձերուն ու փառահեղ ասանդութիւններուն մէջ:

Սկզբնական շրջանին կը թուէր, թէ Սփիւռքի պայմաններու մէջ անկարելի պիտի ըլլար գրական անդաստան ստեղծելը: Բայց սփիւռքահայ գրականու-



թիւնը ստեղծուեցաւ շնորհիւ վերապրող գրողներու անձնագրի, հերոսական ջանքերով եւ դարձաւ հայ գրականութեան պատմութեան անբաժան մէկ մասը:

Սփիւռքի տարածքին վերապրող հայը ո՛չ միայն ֆիզիքական գոյութիւն էր, այլ անոր մէջ վառ էր հոգեւոր կեանքը շարունակելու տենչը: Անսփոփ վշտի ծանրութիւնը զինք մղեց դէպի ազգային մշակոյթի վերազարթօնքին, որով պայմանաւորուած էր հաւատք՝ ապրելու եւ գոյատեւելու: Հայութեան բեկորները զարմանալի գորովանքով կառչեցան իրենց հնամենի մշակոյթին եւ ստեղծեցին Նորը, որուն վիճակուեցաւ աւելին, քան ան կրնար կատարել կեանքի բնականոն պայմաններու մէջ:

Իրաքանչիւր հայ համայնքի գրական, մշակութային գործունէութիւնը ազդուեցաւ իր ապրած երկրի տնտեսաքաղաքական, ընկերային եւ մշակութային մթնոլորտէն: Սփիւռքահայ գրողը հաղորդուեցաւ թէ՛ իր շրջապատին եւ թէ՛ համաշխարհային տազնապներուն: Բայց եւ այնպէս անոր գլխաւոր նիւթը եղաւ հայ մարդու հոգեկերտուածքի արտացոլումը գրականութեան մէջ: Բայց եթէ զայն ընդհանուր յայտարարի վերածենք, պիտի ըսենք ներշնչումի աղբիւրները Նոյնն էին՝ հայրենի յիշատակներ, պատմական պրպտումներ, ոգեկոչում անցեալի դէմքերուն եւ դէպքերու, ուսումնասիրութիւններ ժամանակակից դէմքերու եւ անոնց գործերուն, նաեւ անձնական յոյզերու եւ ապրումներուն: Սակայն այնտեղ կը պակսէր հասարակաց այն յարացոյցը, որով գործէին բոլոր սրտերը, հանդերձելու եւ արգասաւորելու հայ միտքը, հոգին, այսինքն՝ մշակոյթը: Այլ խօսքով՝ սփիւռքահայ գրականութիւնը գաղափարական եւ գեղարուեստական տեսակէտէ չներկայացուց միասնական ամբողջականութիւն: Յաճախ բախուեցաւ հակադիր գաղափարներու եւ հայեացքներու:

Ինչպէս գիտենք, գրական շարժումը սկիզբ առաւ ֆրանսահայ համայնքէն ներս, իր շարքերուն առանձնացնելով այնպիսի առաջատար մտածողներ Շահան Շահնուր, Վազգէն Շուշանեան եւ ուրիշներ: Գրական Նոր շարժման ալիքը հետզհետէ գրական դաշտ պիտի ստեղծէր հայկական միւս համայնքներուն մէջ:

Սուրիոյ հայ համայնքի մշակոյթի կեդրոնը կը հանդիսանար Հալէպը: Հնամենի այս վայրը անցեալին կաթողիկոսանիստ եւ Ա. Աշխարհամարտէն ետք դարձաւ Մերձատր Արեւելքի ամենէն հայաշատ կեդրոնը:

Լոյս տեսած խմորատիպ էջերու կողքին Հալէպի երբեմնի առաջնորդ Տ. Արտաւազդ արք. Սիրմէան հալէպահայ գրական անդամատանը կը հարստացնէ՝

իրատարակելով հայ ձեռագիրներու Նուիրուած հատորներ, «Հալէպի Հայոց Պատմութիւն»-ը, «Տաթե» տարեցոյցը:

Այնուամենայնիւ, հակառակ որ Սփիւռքի այս հատուածի որբանոցներուն մէջ հասակ առին յայտնի մտաւորականներ, սակայն 1930-ական թուականներէն ետք միայն Նոր կերպարանք ստացաւ գրական աշխարհը: Գրական մարզի մէջ կարելի չեղաւ նշանակալի գործունէութիւն արձանագրել՝ բացի Ա. Շաքլեանի բանաստեղծութիւններէն ու պատմութեան գրքերէն: «Ամեն պարագայի, սուրիահայ գրական միջավայրը սանկ ընդհանուր, թանձրացեալ, շօշափելի կերպարանք մը չունի տակաւին՝ զիծի երանգներու անհրաժեշտ վերհպումներով: Այսուհանդերձ բաւական տուեալներ կան ու բաւական զօրատր տուեալներ՝ սուրիահայ գրականութիւն մը իրականութիւն ընելու լիովին ընդունակ»:

Յետպատերազմեան տարիներուն (Բ. Աշխարհամարտէն ետք - Ա.Ֆ.) սերտ կապեր ստեղծուեցան Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ: Այս հանգամանքը վճռական նշանակութիւն ունեցաւ գրականութեան մասնաւորապէս բանաստեղծութեան համար, ուր լայն արձագանգ գտաւ հայոց հայրենիքը իր լուսատր ներկայով: Սակայն հայրենիքի նշանակութիւնը չսահմանափակուեցաւ հայրենիքի թեմայով: Հայաստանը թէ՛ եւ հեռու, բայց հայրենի հող էր, որուն նշանակութիւնը, ըմբռնումը Նոր շունչ հաղորդեց Սփիւռքի երախայրիք բանաստեղծութեան:

Առաջին կամ միջին սերունդի գրողներու գործերը առաւել բեղմնատրուեցան յետպատերազմեան տարիներուն՝ 1945-1985 թթ.: Արեւմտահայ գրականութեան լաւագոյն ասանդներով յագեցած փորձը փոխարինուեցաւ Նորով: Հին կարօտին տուին առաւել խոր եւ Նոր ուղղութիւն: Նոր կարօտի ներկայացուցիչները դարձան Վ. Մավեան, Ա. Դարեան, Ս. Վահագն, Ս. Փանոսեան, Մ. Տէր Ստեփանեան, Ա. Շիրակ եւ շատ ուրիշներ: Բացի այդ, Բ. Աշխարհամարտի առաջին տարիներուն զուգադիպած ներգաղթի ալեկոծումներէն ետք Հայրենիք բերաւ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ հասակ առած ու մանաւանդ Նոր սերունդի շնորհալի բանաստեղծներ ու արձակագիրներ, ինչպիսիքն էին՝ Ա. Շաքլեան, Ս. Ալաճաճեան, Ա. Թերզեան, Գ. Քէշիշեան, Ա. Արման, Շ. Վարսեան, Գ. Գիւլեան, Ս. Եափունճեան, Գ. Սիսվան, Պ. Շահպազ, Ա. Ալիքեան, որոնց յետագային միացան ուրիշներ<sup>2</sup>: Այսինքն՝ բանաստեղծ-արձակագիրներու ամբողջ սերունդ մը, որոնցմէ շատերը քաջ ծանօթ են բոլորին:

1 «Ազդակ շաբաթօրեակ», թիւ 183, 5 Սեպտեմբեր 1974, Պէյրութ:

2 **Սեան Գ.**, Սփիւռքահայ գրականութեան պատմութեան ուղղագծեր (1946-1985), Երևան, 1997, էջ 11, 61-62:



1946 թ. հայրենադարձության զանգուածային շարժման մասին յատուկ դիրքորոշումներ ունեցան նաև գրողները: Հայրենադարձության թեմայով տեղ գտած տարբեր մեկնաբանություններով գործերը բաական մեծ ծառայ կազմեցին, յատկապես Բ. Աշխարհամարտի յաջորդող երկու տասնամեակներուն, ի յայտ բերելով բազմաթիւ շնորհաշատ արձակագիրներ ու բանաստեղծներ: Նշենք՝ Մ. Տէր Ստեփանեան, Ս. Փանոսեան, Ա. Թերզեան, Ս. Ալաճաճեան, Ա. Ծառուկեան եւ ուրիշներ:

Հայրենիք-Սփիւռք կապերը սփիւռքահայ գրողներու եւ արուեստագէտներու համար ընձեռեցին հայրենի հողը անձամբ տեսնելու, զգալու կարելիութիւնը:

Քառասունական թուականներու վերջը տեղի կ'ունենայ արաբական գրատր մշակոյթի հաղորդման առաջին փորձերը: Հայ մտաւորականները իրենց առաջին փորձերը կը սկսին «Ապու Ալա»-ով: Այդ հասկնալի էր, որովհետեւ Մաարին հայ ժողովուրդի սրտամօտ անուն էր՝ շնորհիւ Աւետիք Իսահակեանի բանաստեղծութեան: Մաարին էտք սուրիահայ եւ լիբանանահայ գրական մամուլի էջերուն լոյս կը տեսնեն արաբական գրականութեան հին շրջանի կապուած ժողովրդական հեքիաթներ, բարոյալիր պատմութիւններ, ինչպէս նաև իսլամական կրօնի հետ առնչուող շարք մը նիւթեր, «Մուհամմետ Մարգարէի կեանքն ու գործը» եւ միջնադարեան կեանքէն շարք մը դրուագներ:

Յայտնենք, որ 1920-1940 թթ., սակաւաթիւ էին արաբերէն լեզուի գիտակ հայ մտաւորականները:

1940 թ. Հալէպի մէջ լուրջ քայլեր կը կատարուին հայ գրականութիւնը արաբներուն ծանօթացնելու ուղղութեամբ: Այս առումով մեծ երախտիք ունի հալէպցի Նիզար Խալիլին: Ան սուրիական գրականութեան արդի դէմքերէն է: Նիզար Խալիլի հայ եւ արաբ ժողովուրդի գրական կապերը աշխուժացնելու առաքելութեամբ նախ կը սկսի արաբական գրականութենէն պատմութիւններ թարգմանել հայերէնի: Նաև Հալէպի «Արեւելք» օրաթերթի եւ «Երկիր» հանդէսի էջերուն պաբերաբար հանդէս կու գայ արաբ գրողներու մասին ինքնուրոյն յօդուածներով: Հիմնական նպատակը կ'ըլլայ հայ ընթերցողին մօտ արաբական գրականութեան նկատմամբ հետաքրքրութիւնը խորացնել: Այս առաջադրանքէն մեկնելով՝ իր ուշադրութիւնը առաջին հերթին կը կեդրոնացնէ այն գրողներու վրայ, որոնց կեանքն ու գործը այս կամ այն կերպով կ'առնչուի հայ ժողովուրդի պատմական ճակատագրին հետ:

Սուրիոյ ազգային ազատագրական շարժումներու հզօր վերելքի տարիներուն հասակ կ'առնէ արաբ գրողներու սերունդ մը, որուն վիճակուած էր նոր էջ

բանալ արաբական գրականութեան մէջ: Համայնքային իշխանութեան դէմ պայքարի գեղարուեստական դրսետումն էջն էր: Այս ուղղութեամբ իրենց ուշադրութիւնը կը սեւեռեն Սուրիոյ եւ Լիբանանի: Անկասկած, այս երետոյթը չէր կրնար դուրս մնալ հայ արձակագիրներու տեսադաշտէն:

Յիսունական թուականներուն Նազար Նազարեան կը թարգմանէ Մուհամմետ Սըղքիի «Էշ» վէպը եւ Եուսէֆ Ըտրիսէն «Վասն ապրուստի» պատմութիւնը: Թարգմանութեամբ գործերը արաբ գիւղացիի ընկերային ահաւոր վիճակի հազարաւոր պատկերացումներն էին, որոնք հայ բնակչութեան առաջ պիտի բանային արաբ քաղաքաբնակ ազգաբնակչութեան կեանքի դժոխային պայմանները<sup>3</sup>:

Հայ մտաւորականութեան կողմէ յատուկ ուշադրութեան կ'արժանանայ յեղափոխաշունչ քերթուածները: Այս առնչութեամբ թարգմանութիւններ կը կատարուին սուրիացի Շաուքի Պաղտատիէն՝ «Ռաժա Հասան», «Երբ կը տեսնեմ», Ահմետ Սուլէյման Ահմետէն՝ «Երգ նուիրուած ընկերներու», Սալէհ Ճաուտաթէն, Ահմետ Ֆահմիէն եւ այլն:

Ինչպէս նշեցինք, Սփիւռքահայ բոլոր գրողներու ստեղծագործական տեսադաշտի հիմնական թեմաները կ'ընդգրկէին հայ գաղթականներու առաջին շրջանի դժոխային նոր ու տարբեր պայմանները, անապատի արհաւիրքէն փրկուած պատանիներու այլասերումը օտար ոստաններու մէջ: Որպէս բնորոշ օրինակ կարելի է յիշատակել սուրիահայ տաղանդաւոր արձակագիր Ս. Փանոսեանի «Որ մրրկաւ էին զատուած» վէպը: Հայ եւ արաբ բարեկամութեան սրտառուչ դրուագ մըն է, ուր կը խօսուի երկու ժողովուրդներու դառն ճակատագիրը բնորոշող թշնամիի՝ թուրք ջարդարարներու դէմ համատեղ պայքարի անհրաժեշտութեան մասին: Այլ տարբերակ մըն էր Մ. Տէր Ստեփանեանի պատմութիւնը, որու թեման սուրիացի ժողովուրդի պայքարն էր իր ազգային գերիշխանութեան, տնտեսական անկախութեան եւ վերելքին համար, ուր արաբներու եւ հայերու միջեւ «ցեղի, կրօնքի, ավանդույթներուն եւ նախապաշարումներու ստեղծած խտրութեանց բոլոր պատվարները կ'իլլէին, կը քանդվէին մեկ անգամէն»<sup>4</sup>:

3 **Նաճարյան Ե. Ն.**, Արաբ ժողովրդի հակաիմպերիալիստական պայքարի արտացոլումը սիրիահայ եւ լիբանանահայ գրողների գործերում, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 9, 1967, Երևան, էջ 62-64: Տես նաև **Ֆիշենկճեան Ա.**, Հայ-արաբական մշակութային առնչութիւնները 1946-1970-ական թուականներուն, «Գանձասար», բացառիկ թիւ, 2002, Հալէպ, էջ 75-76:

4 **Նաճարյան Ե. Ն.**, Հայ-արաբական մշակութային կապերը (Սիրիա, Լիբանան) 1945-1970 թթ., Մերձավոր եւ Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ հ. 6, Արաբական երկրներ, Երևան,



Սուրիոյ եւ Լիբանանի հայկական համայնքներու համար աննախընթաց հայ-արաբական միասնութիւնը ունեցաւ ազգային-քաղաքական շատ մեծ նշանակութիւն. իրողութիւն մը, որ բաւականաչափ լուսաբանուած է մամուլի եւ առանձին աշխատութիւններու մէջ: Այդ միասնութիւնը սակայն, առաւել նշանակութիւն ունեցաւ նաեւ Սուրիոյ եւ Լիբանանի հայ գրականութեան համար ընդհանրապէս եւ հայ-արաբական մտաւոր-մշակութային կապերու հունաւորման համար մասնաւորապէս:

Նշենք նաեւ, որ արաբներու պայքարը օտար իշխանութիւններու դէմ եւ այդ պայքարի արաբ հերոսներու սխրագործութիւնները տեղ կը գտնեն նաեւ սուրիահայ գրողներու արձակ գործերուն մէջ: Այլ խօսքով՝ արաբ մարտնչող յեղափոխականի կերպարը Սուրիոյ եւ Լիբանանի հայկական արձակ գրութեան մէջ դարձած էր առանցքային:

1956 թ. Նիզար Խալիլին հրատարակութեան կը յանձնէ Գրիգոր Զօհրապի «Երջանիկ Մահը»<sup>5</sup>, որուն պիտի յաջորդէին Րաֆֆին, Յ. Թումանեանէն շարք մը պատմուածքներ ու հեքիաթներ<sup>6</sup>: 1961 թ., Խալիլի կը թարգմանէ Յ. Շիրազի «Սիամանթօ եւ Խջեզարե» գործը, իսկ 1962 թ. վերամշակելով կը հրատարակէ «Սիամանթոյի եւ Խջեզարէի սիրոյ պատմութիւն» խորագրով<sup>7</sup>: 1963 թ. ընթերցողին կը ներկայացնէ կատարեալ գործ մը՝ Յ. Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկաններ» հանճարեղ գործի թարգմանութիւնը: Խալիլի խորապէս թափանցելով գործի խորքին՝ կ'ըսէ. «Մեծապատիվ մուրացկանները իրենց թեմայով մի ժողովուրդի, մի տեղի և մի ժամանակի համար բնորոշ չեն: Նրանց հերոսներին կարելի է հանդիպել ամեն տեղ և ամեն ժամանակ, միայն անունները փոխելով»<sup>8</sup>:

1970-ական թուականներէն ետք հայ-արաբ փոխներգործութիւնը մշակոյթի տարբեր բնագաւառներէն ներս պիտի թեւակոխէր նոր փուլ, արձանագրելով նորանոր յաջողութիւններ:

## Գ. ՍՈՒՐԻԱԶԱՅ ՄԱՍՈՒԼ

Սփիւռքահայ մամուլը մեր ազգային մտահոգութիւններու արծարծման եւ անոնց ծառայող ձեռնարկ մը եղաւ: Ան արտայայտիչը դարձաւ հաւաքակա-նութեան իրագործումներուն, իղձերուն, մտահոգութիւններուն ու նուաճումներուն:

Վերապրող զանգուածներուն գաղափարական ու մշակութային աիշ ներարկելու միտումով, զանոնք հաղորդակից դարձուց շրջապատի եւ աշխարհի տարածքին ծնունդ առնող գաղափարական ու մտաւոր նորագոյն այն հոսանքներուն, որոնք այս կամ այն չափով նպաստեցին մեր ազգային ընդհանրական նպատակները առաջնորդող ուղիներու լուսաւորման՝ նոր լոյսով:

Իր որակով ու արտայայտութեամբ եղաւ հարազատ ձայնը ազգային, քաղաքական, ընկերային, գրական եւ հոգեբանական այն պայմաններուն, որոնց մէջ ապրեցաւ Սփիւռքը Ա. Աշխարհամարտէն ետք:

Սուրիահայ մամուլը առնչուած համայնքի պատմութեան հետ՝ ազգային, մշակութային դիմագիծի պահպանման ու զարգացման ամրապինդ ենթահողը պատրաստեց: Առօրեայ ընթերցումներու մնայուն ազդակը ըլլալու եւ առաջադրանքներ իրագործելու բանալին: Ազդակներ, որոնք որոշ դեր ունեցան մարդու անհատականութեան ձեւաւորման: Սոսկ լուրեր փոխանցելու սահմաններէն դուրս գալով՝ հիմնական դեր խաղաց հայ մարդու ընդհանուր աշխարհահայեացքի ձեւաւորման ու բիրտեղացման:

1918-1946 թթ. Սուրիոյ եւ Լիբանանի մէջ լոյս տեսած էին անլիք քան յիսուն հայ պարբերականներ՝ օրաթերթ, երկօրեայ, եռօրեայ, շաբաթաթերթ, ամսագիր, տարեգիրք եւ այլն, որոնք տնտեսական, գաղափարական, քաղաքական, գրական, երգիծական եւ կրօնաբարոյական թեքումով էին:

«Սուրիահայ հրատարակչական ընկերութեան» կողմէ, 6 Յուլիս 1927 թ. լոյս տեսած «Եփրատ» օրաթերթը մինչեւ փակումը՝ 1949 թ. եղած է ՌԱԿ-ի օրկանը: Շուրջ քառորդ դարու սուրիահայ համայնքի ազգային, քաղաքական ու մշակութային կեանքի պատմութիւնը, ի մասնաւորի տարագրեալ հայ գաղթականներու, որբերու տեղաւորման, ինչպէս նաեւ վերակազմուող համայնքի յուզող հարցերու վերաբերեալ նիւթեր, որոնք համայնքի այդ ժամանակաշրջանը ուսումնասիրողին նիւթ հայթայթեցին:

Յանդուզն քայլ մըն էր «Նայիրի»-ի հրատարակութիւնը 1941 թ. Հալեպի մէջ: Իբր պարբերագիրք գրականութեան եւ արուեստի՝ լոյս տեսաւ 1941 թ. Նոյեմբերին, մինչեւ 1942 թ.: Ընդամիջումով, 1945-էն ետք ամսագիրը կը տպուի համա-

1974, էջ 286: Տե՛ս նաեւ **Ֆիշենկճեան Ա.**, նշ. աշխ., էջ 77:

5 **Նաջարյան Ե. Ն.**, - Հայ-արաբական մշակութային կապերը, էջ 308:

6 Նոյն տեղը:

7 Նոյն տեղը, էջ 308-309:

8 Նոյն տեղը, էջ 310-311: **Ֆիշենկճեան Ա.**, նշ. աշխ., էջ 78:



նուն տպարանէն ներս, որու տէրն ու տնօրէնը Անդրանիկ Ծառուկեանն էր: Ա. Ծառուկեանի «Նայիրի»-ն սփիւռքեան տարածքին ո՛ր միայն նպաստեց գրականութեան ծաղկումի ու զարգացումի, այլեւ յաջողեցաւ դէպի իրեն հրաւիրել նոր սերունդի արժէքատու գրողներ, համախմբել տարբեր գաղափարի, տարբեր հոսանքի պատկանող եւ յաճախ իրարամերժ տարրեր: Առիթ ընծայեց նաեւ նորահաս սկսնակ գրողներուն համախմբումին, որոնք իրենց գրական առաջին փորձերը կատարած էին արտասահմանի այլ թերթերուն մէջ:

ԸՅԴ-ն եւս համայնքի կազմութեան օրերուն փորձեր կատարած էր առանձին օրկանի մը ստեղծման: 1946 թ. ներգաղթի առաջին կարաւանի երթին հետ՝ 23 Յունիս 1946 թ., Հալէպ լոյս կը տեսնէ «Արեւելք»-ի առաջին համարը մինչեւ 8 Մարտ 1963 թ.: Չորս էջերով 60 x 70 ծաւալով, շրջան մըն ալ՝ կէս ծաւալով, 35x60 (2 էջ): 1946 Նոյեմբեր 3-էն սկսեալ միայն կիրակնօրեայ թիւերը կը ստանան նախկին ծաւալը: Իսկ 1954 թ. 6 էջերով՝ 60x70 ս.մ.: Սուրիոյ շրջանի ըՅԴ օրկանն էր: Ազգային, հասարակական, գրական եւ մեծ մասամբ քաղաքական բնոյթ կրող օրաթերթ էր: 1946-էն մինչեւ 1959 թ. արտօնատէրն ու պատասխանատու տնօրէնն էր Հրաչ Փափագեան, իսկ մահէն ետք. 1960 թ.-էն 1963 թ. արտօնատէր դարձաւ Քեսապէն՝ բժ. Աւետիս Ինճէճիկեան, իսկ պատասխանատու տնօրէն՝ Նշանակուեցաւ Ներսէս Յ. Պարսումեան: Սկիզբի շրջանին (1946-1947 թթ.) խմբագիրն էր Անդրանիկ Ծառուկեան՝ իրեն օգնական ունենալով Օննիկ Թոփուզեան, Միհրան Ներարտեան, Գեորգ Աճեմեան եւ Օննիկ Մելիքսէթեան, իբրեւ վարչական պատասխանատու տնօրէն: 1948-1956 թթ. թերթին գլխավոր խմբագիրն էր Մինաս Թեյլեյեան: 1957 թ. խմբագրապետն էր Միհրան Ներարտեան, 1958 թ. Գեորգ Տոնապետեան. իսկ մինչեւ 1963 թ. Երուանդ Մոնոֆարեան: Գլխավոր խմբագիրներու կողքին կար խմբագիրներու փաղանգ մը՝ Արփիար Գարամանլեան, Վ. Տէր Գեորգեան, Վ. Պարոն (Վահան Պարոնեան), Զաւէն Սապունճեան, Վարդգէս Փափագեան, Պետրոս Հաճեան, Նշան Իսրայէլեան (Սարգիսեան): Վարչական պատասխանատուներ եղած են Օննիկ Մելիքսէթեան, Մ. Ներարտեան եւ Լուսեր Մասպանաճեան:

Հալէպի չՄԸՄ-ի վարչութիւնը «Արեւելք» օրաթերթի վարչութեան հետ գործակցաբար կը իրատարակէ մարզական շաբաթաթերթ մը՝ «Արեւելք Մարզաշխարհ» անունով՝ 30 Յունիս 1957-էն 1963 Մարտ 8-ը, խմբագրութեամբ՝ Զաւէն

1 Ա. տարի, թիւ 1-էն մինչեւ 12, որ կը համապատասխանէ 9 Յուլիս 1946: **Պարիկեան Ն. եւ Վարժապետեան Յ.**, Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու. չԲԸՄ մատենագիտական յանձնախումբ, Հալէպ, 1973, էջ 149:

Սապունճեանի, վարչական պատասխանատու Լուսեր Մասպանաճեանի<sup>2</sup>: Սուրիահայ մամուլի մարզական միակ ներկայացուցիչը, որ կրցաւ շուրջ 7 տարի իր գոյութիւնը պահել շնորհիւ իր խմբագիրներէն՝ Զ. Սապունճեանի մարզական հետաքրքրութիւններուն:

1954 թ. Յունուար 1-էն սկսեալ մինչեւ Մայիս 1 թերթը լոյս տեսած է 6 էջով: 1956 թ. օրաթերթի կողքին լոյս կը տեսնէ «Արեւելք»-ի պատանեկան յաւելումը՝ «Վահագն» անունով: 1948 թ. լոյս տեսած է «Արեւելք տարեգիրքը», միայն մէկ թիւ: 1961 թ. 12 Օգոստոսէն մինչեւ Նոյեմբերի վերջը թերթը դադրած է լոյս տեսնելէ ակամայ պատճառներով...: Սակայն վերջը սկսած է վերահրատարակուիլ մինչեւ 1963 թ. Մարտ 8-ը<sup>3</sup>: 1946 թ.-էն 1948 թ. թերթը տպուած է Անդրանիկ Ծառուկեանի տպ. «Նայիրի»-ի մէջ (հոգեւոր): 1948-1951 թթ. թերթը տպուած է Մուհամմետ Թլասի տպ. «Շէպէպ»-ի (Երիտասարդ)-ի մէջ, իսկ 1951 թ.-էն 1963 թ.՝ իր սեփական համանուն տպարանին մէջ (Սալիպէ):

«Արեւելք»-ը առաջին օրէն ունեցած է իր թերթօնը, ուր տեղ գտած են հայ դասական գրողներու եւ միջազգային գրականութենէն թարգմանական գործերը: Ունեցած է նաեւ «Հայկական իրաւունք»-ի չՄԸՄ-ի միջ մասնաճիւղային խաղերու 30-ամեակի եւ ըՅԴ 60-ամեակի» նուիրուած բացառիկներ: Օրաթերթը իր ուղին ճշդած էր առաջին թիւի խմբագրականին մէջ «Հաւատարիմ անցեալին» խորագիրով<sup>4</sup>: Հակառակ թուղթի, տառատեսակներու, ընդմիջումներուն՝ թերթը իրատարակուած է կանոնաւորապէս եւ մաքուր տպագրութեամբ:

Երկրորդ գլխավոր օրաթերթն է «Սուրիա»-ն անկախ օրաթերթ, ժողովրդական լրագիր, Հալէպ 1946 թ. Յունիս 17-էն 1960 չնկտմբեր 1: Արտօնատէր եւ տնօրէնը եղած է Յովհաննէս Եազըճեան. խմբագրապետ՝ Մատթէոս Երէցեան (1946-1947 թթ.):

2 Աշխատակիցներ՝ Սամուէլ Մկրտիչեան, Մելիք (Մելքոն Թերճանեան), Պարգէս Միսիրեան, Հրաչ Չալեան, Արա Գասպարեան եւ այլն, իսկ արտասահմանի միւս համայնքներէն՝ Գրիգոր Նիզիպեան (Եգիպտոս), Ժողէֆ Նալպանտեան եւ Յովհաննէս Շահինեան (Լիբանան), Լեւոն Բէշիշեան (ԱՄՆ, Նիւ Եորք) եւ ուրիշներ: Յիշենք նաեւ «Արեւելք» օրաթերթին արտասահմանէն աշխատակցած են՝ Ա. Լէյլեանի (Մովսէս Տէր Գալուստեան) եւ Նիկոլ Աղբալեան (Լիբանան), Ֆրանսայէն՝ Հրանդ Սամուէլեան, Շաւարշ Նարդունի, Նշան Պէշիկթաշլեան, Ռուբէն Տ. Միւնասեան, Երուսաղէմէն՝ Յ. Օշական, Եգիպտոսէն՝ Գաբրիէլ Լազեան, բժ. Երուանդ Խաթանասեան, Գուրգէն Մխիթարեան, Բ. Թաշճեան. կրկին Լիբանանէն՝ Սիմոն Վրացեան, Մուշեղ Իշխան, բժ. Յ. Ոսկունի, Արամ Սահակեան, իսկ Հալէպէն՝ բժ. Յ. Տէր Ղազարեան, Կարապետ Իվալէյեան, Պարգէս Միսիրեան, Մկրտիչ աագ քինյ. Մուրատեան եւ ուրիշներ. Տէն «Գանձասար» շաբաթաթերթ, Բերիոյ թեմի պաշտօնաթերթ, Դ. տարի, թիւ 15, 1994, Հալէպ, էջ 12:

3 Տէն «Գանձասար», նոյն տեղը:

4 Տէն **Միւնասեան Ա.**, Հայ պարբերական մամուլի նորայայտ անուններ, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Թ., Պէրթոլ, 1981, էջ 217:



1949-1950 թթ. որոշ շրջան մը օրաթերթը լոյս տեսած է «Նոր Սուրիա» անունով: «Սուրիա» բնոյթով եղած է անկախ լրագիր, «Խաղաղութեան կողմնակիցներու» արձագանգը հանդիսացած է 1950-1951 թթ.<sup>5</sup>: Պր. Յովհաննէս Զառիկեանի յայտնած տեղեկութիւններու համաձայն, «օրաթերթը լոյս կը տեսնէր արտօնատիրոջ՝ Յ. Եազըճեանի անձնական միջոցներով, սակայն մամուլ չունէր, իսկ գիրերն ալ հին էին: Տպարանի տառերու եւ ուրիշ դժուարութիւններու պատճառով թերթը երբեմն կարճ ընդհատումներ ունեցած է, բան մը, որ մամուլի օրէնքով կը վտանգուէր թերթի արտօնագիրը: Եւ ճիշդ 1952 թ. վերջաւորութեան թերթի հրատարակութիւնը կ'ընդհատուի երեք ամիս»<sup>6</sup>: Խումբ մը գրասէր երիտասարդներ կանխելու համար այդ վտանգը կը համաձայնին պր. Եազըճեանի հետ, կը ստանձնեն թերթի հրատարակութիւնը շուրջ 6 ամիս: Յիշեալ երիտասարդներէն մէկը գրող-մտաւորական Անդրանիկ Նաճարեանն էր, «Շիրագ»-ի տպարանատէրը, որ սիրայօժար կը տրամադրէ տպարանի իր գրասենեակը՝ խմբագրական աշխատանքներու համար<sup>7</sup>:

«Սուրիա» օրաթերթը ունեցած է խմբագիրներ<sup>8</sup>: Պարիկեան կը յայտնէ, որ Սուրիա-Եգիպտոս միացումէն տարի մը ետք Եազըճեան թերթը կը փոխադրէ Լաթաքիա եւ կը հրատարակէ արաբերէն լեզուով «Սովթ Էլ Պիլետ» (Հայրենիքի ձայն) անունով. մինչեւ 1963 Յունուարի վերջը: Փետրուարի 3-ին կը վերադառնայ Հալէպ վերահրատարակելու «Սուրիա» օրաթերթը, արաբերէն եւ հայերէն բաժիններով, սակայն չ'իրականանար, որովհետեւ 1963 թ. Մարտ 7-ին ուրիշներու կարգին ան ալ կը փակուի: Դժբախտաբար, թերթի զանազան խմբագիրներու գոյութիւնը պատճառ դարձան, որ ան մէկ գաղափարական ուղղութիւն չունենայ:

Հետաքրքրական է նշել, որ թերթերը յաճախ բուռն պայքար մղած են իրարու դէմ՝ առաջնորդուած իրենց գաղափարական ուղղութիւններէն, յատկապէս ներգաղթի օրերուն: Նոր սերունդի գրողները որդեգրած էին երկու քաղաքական

5 **Չղաքեան Յ.**, Հալէպահայ պարբերական մամուլի նկարագրութիւն, Հալէպ, 1978, էջ 8:

6 Նոյն տեղը, էջ 9:

7 Նոյն տեղը:

8 Յիշենք ժամանակագրական կարգով՝ 1947-1948 թթ. Ֆերուզ Խանգատեան /1948-1950 թթ./, Յարութիւն Տէր Ղազարեան. Յովհաննէս Եազըճեան մէկ տարի, Տիգրան Կիլիզեան /1953-1954 թթ./ եւ Արամ Շորվօղեան: Օգնական խմբագիրներ ալ ունեցած է՝ Մարտիրոս Գուշագճեան, Եղիա Նաճարեան, Կարօ Սարաֆեան, Հայկ Պարիկեան եւ Պ. Ապաճեան: Անկանոն չափերով լոյս տեսած է եւ տարբեր տպարաններէ ներս՝ տպարան «Ալ-Մաարէֆ», տպարան «Անի», տպարան «Նայիրի» եւ վերջապէս՝ տպարան «Ալ-Վազըֆ»: Աշխատակիցներէն՝ Անդրանիկ Նաճարեան, իրաւաբան Ռուբէն Պօղոսեան, Վահէ Գերմանիկեան, Հայկ Գոյումճեան, Յ. Զառիկեան եւ Տիգրան Կիլիզեան, Բիզանդ Մինասեան, Արամ Գիտակից, Հայկ Պարիկեան, Լեւոն Վարդան, Մարտիրոս Գուշագճեան եւ ուրիշներ:

հակադիր ուղղութիւն՝ Խորհրդային Հայաստանի թեր ու դէմ: Այսպիսով հայ մամուլի էջերէն որոշ ժամանակ դուրս մնացին գրական լեզուական-բանասիրական եւ առիասարակ մշակութային-իմացական հարցերը:

1948 թ. Սուրիոյ եւ Լիբանանի հայ գրողներու միութեան նախաձեռնութեամբ Մերձատր Արեւելքի հայ գրողներու համախմբումի ընթացքին, գրական սեռերու, թատրոնի կողքին հայ մամուլի բնոյթի, դիմագրաւած դժուարութիւններու վերաբերեալ հարցեր քննարկուեցան Սփիւռքի մտաւորականներու կողմէ<sup>9</sup>:

Այս շրջանի երրորդ օրաթերթը եղած է «Նոր Սերունդ»-ը: Օրաթերթը ունեցած է կարճատեւ կէտեր: Ա. թիւը լոյս տեսած է 1951 թ. Յունուար 2-ին եւ դադարած 1953 թ. սկիզբը: Եղած է անկախ օրաթերթ: Արտօնատէրը եւ պատասխանատու տնօրէն՝ Անդրէաս Տէր Ղազարեան, իսկ խմբագրապետ՝ Յարութիւն Տէր Ղազարեան: Խմբագրական կազմ՝ Հրանդ Մուրատ, Ֆերուզ Խանգատեան եւ Ա. Էքմէքճեան<sup>10</sup>: Իր ծնունդէն մինչեւ 1951 թ.-ի վերջը լոյս տեսած է տպ. «Անի», ապա՝ տպ. «Էլ Վազըֆ»-էն (Ժամանակ): Ընդհանրապէս բովանդակած է քաղաքական լուրեր եւ արտատպումներ: «Նոր Սերունդ»-ի դադարելէն մէկ տարի ետք՝ 1954 թ. Յ. Տէր Ղազարեան կը վերստանձնէ «Սուրիա» օրաթերթի հրատարակութիւնը 1954-1960 թթ.<sup>11</sup>:

Ուսուցչաց միութեան կողմէ նաեւ լոյս տեսած է մանկապատանեկան միակ պարբերականը՝ «Բուրաստան» խորագիրով:

1949 թ. «Եփրատ» թերթի դադարումէն ետք «Արեւելք» օրաթերթն ու Յովհաննէս Եազըճեանի «Սուրիա» օրաթերթերը կը դառնան սուրիահայութեան միակ բանբերները:

Քառասունական թուականներու կեսերուն Սուրիոյ անկախութեան համար մղուած պայքարի օրերուն, հակառակ երկիրէն ներս տիրող անախորժ դէպքերուն, համայնքը մշակութային գետնի վրայ նոր նուաճումներ կ'արձանագրէ, կ'աշխուժանայ. այս ընթացքին ծնունդ կ'առնեն ոչ միայն կազմակերպութիւններ, այլ նաեւ անոնց ձայնը հասարակութեան լսելի դարձնող պարբերականներ եւ տեղի կ'ունենան հրապարակային ելոյթներ:

Իսկ դպրոցական եւ միութենական պարբերականներու հրապարակ գալը կը բացատրուի անով, որ 1949-1954 ժամանակահատուածին բացի ռազմական

9 «Նայիրի», ամսագիր գրականութեան եւ արուեստի, Դ. տարի, թիւ 7-8, 1948, Հալէպ, էջ 628-638:

10 Սկզբնական շրջանին թերթին սատարած են նիւթապէս եւ բարոյապէս Աւետիս Էքմէքճեան եւ Հրանդ Մուրատ:

11 **Պարիկեան Ն. եւ Վարժապետեան Յ.**, նշ. աշխ., էջ 147:



յեղաշրջումներէն, քաղաքական անբարենպաստ պայմաններէն, կ'արգիլուին հայերէն թերթերու եւ պարբերականներու հրատարակութիւնները: Աւելին, կ'արգիլուին հայերէնով կատարուող դպրոցական միջոցառումներ եւ կը սահմանափակուին հայերէն լեզուի դասաժամերը:

Այս շրջանին հակառակ տիրող իրավիճակին լոյս կը տեսնեն հետեւեալ պարբերականները՝

**«Դէպի Երկիր»** - Պարբերագիրք գրականութեան եւ արուեստի: Նրատ. Սովետական Հայաստանի հետ մշակութային կապի հալելպահայ ընկերակցութեան: 1945 Մարտէն 1949. ընդմիջում 1948 թ.: Պատասխանատու խմբագիրներ՝ Անդրանիկ Նաճարեան 1945-1947 թթ., Մարտիրոս Գուշագճեան, Թորոս Թորանեան 1949 թ.: Իսկ խմբագրական կազմ՝ Պետրոս Պարգեի (Փայասլեան) եւ Յակոբ Ալեքսանեան: Ունեցած է մէկ բացառիկ թիւ: Պարբերագիրքը բաժին յատկացուցած է հայրենի գրողներուն<sup>12</sup>:

1956 թ. «Երկիր» պարբերաթերթը կարելի է բնական շարունակութիւնը նկատել «Դէպի Երկիր»-ի. տպագրութիւնը տպ. «Սեւան», տպ. «Տէր Սահակեան» եւ 1949 թ.՝ տպ. «Անի»: Գլխաւոր աշխատակիցներէն՝ Զարեհ Մելքոնեան, Սիմոն Սիմոնեան, Եղուարդ Պոյաճեան, Հայկ Պարիկեան, Վահէ Վահեան, Բիւզանդ Եղիայեան եւ ուրիշներ:

**«Սեւան»** - Պարբերագիրք գրականութեան եւ արուեստի: Նրատ. Հալելպահայ Ուսուցչական միութեան Սեւան հրատարակչական մարմինի 1946 թ.: Գլխաւոր խմբագիր՝ Սիմոն Սիմոնեան<sup>13</sup>: Սիմոնեան քաջալերուած միութեան սեփական տպարանով՝ տպ. «Սեւան» եւ գրական աւագ գործիչներու աշխատակցութեան խոստումով, հրապարակ կ'ելլէ, բայց դժբախտաբար երկար կեանք չէր վիճակուած. լոյս կը տեսնէ երկու թիւ միայն: Հոն տեղ գտած են գրական, բանասիրական, մատենագիտական եւ լեզուաբանական յօդուածներ: Ա. Ս. Խաչատուրեան կը յայտնէ, որ «պէտք է սրբագրել պարբերագիրք գրականութեան եւ արուեստի» պիտակը փոխարինելով «պարբերագիրք հայ մշակոյթի» խորագիրով<sup>14</sup>:

**«Նոր Մարաշ»** - Գրական, մշակութային, մարզական պարբերագիրք.

12 Նոյնի, էջ 205:

13 Ա. Տէր Խաչատուրեան կը յայտնէ, թէ պաշտօնապէս պարբերագիրքին վրայ խմբագրի անուն չէ յիշատակուած, բայց որոշ չէ, որ Ա. Սիմոնեանն է:

14 Աշխատակիցներու փաղակ մը ունեցած է Սուրիայէն, Լիբանանէն, Եգիպտոսէն, Պաղեստինէն եւ Պոլիսէն. յիշատակենք՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Ա. կաթողիկոս Յովսէփեանց, Վահան Թեքեան, Վահէ Վահեան, Յակոբ Օշական, Նիկոլ Աղբալեան, Հայր Ներսէս Ակիսեան, բժ. Յ. Տ. Ղազարեան, Մարի Աթմաճեան, Անդրանիկ Ծառուկեան, Միքայէլ Կիւրճեան, Շաարշ Նարդունի, Շահան Ռ. Պէրպէրեան, Տ. Արտաւազդ արք. Սիւրմէան, Արիս Շաքլեան, Հրաչեայ Աճառեան, Եղիա Քասունի եւ ուրիշներ:

հրատ. Մարաշի հայրենակցական միութեան վարչութեան<sup>15</sup>: Հիմնադիրներ՝ Նուպար Փարթամեան, Պօղոս Պալատունի եւ Յակոբ Տէկիրմէնճեան. իսկ գլխաւոր խմբագիրներ՝ վերոյիշեալ անձիք, առաւել եւս Լեւոն Պիլեզիքեան եւ Պետրոս Պարգեի: Խմբագրական կազմին մաս կազմած են Յարութիւն Պարտիզպանեան, Տիգրան Կիլիզեան, Նշան Շահէն եւ ուրիշներ: Պարբերաթերթը լոյս տեսած է 1946 թ. Յունիսէն մինչեւ 1961 թ. Օգոստոս, Հալելպ.: Տպագրութիւնը տարբեր ժամանակներուն կատարուած է մէկէ աւելի տպարաններու մէջ<sup>16</sup>:

**«Շարժում»**-ը պարբերաթերթն էր Սովետական Հայաստանի հետ մշակութային կապի Հալելպահայ ընկերակցութեան կից ընկերային սեկցիայի. Հալելպ 1947 թ.: Խմբագիրը՝ Մարտիրոս Գուշագճեան: Գրամեքենագրուած բարակ թուղթի վրայ, կողքին վրայ պարբերաթերթին անունը՝ ձեռագիր:

Այնուամենայնիւ հրապարակուող թերթերը մեծ մասամբ նկատի ունէին երիտասարդ եւ հասուն ընթերցող հասարակութիւնը: Հայ պատանիին ու պարմանուիին համար ոչինչ կը հրամցուէր՝ անոնց մէջ զօրացնելու ընթերցանութեան սերն ու ճաշակը, եւ ահաւասիկ այս առաջադրանքէն թելադրուած Հալելպահայ Ուսուցչական միութեան հրատարակութեամբ կեանքի կը կոչուէր «Բուրաստան» մանկապատանեկան պարբերաթերթը, որ կարելի է համարել սուրիահայ մամուլի միակ մանկապատանեկան թերթը:

**«Բուրաստան»** - Երկամսեայ, (1950-1958 թթ.), Հալելպ, գլխաւոր խմբագիրները՝ Գրիգոր Պողարեան, Հայկ Պարիկեան եւ Ռուբէն Տիրարեան, ինչպէս նաեւ 1953-1954 թթ.: Յարութիւն Տէր Ղազարեան: Վարչական կազմը՝ Յարութիւն Պարտիզպանեան, Կարապետ Ճուհարեան, Յակոբ Գույումճեան եւ ուրիշներ: Ամէն տարի լոյս կը տեսնէր 6 պրակ. ընդամենը՝ 51 պրակ: Տպագրութիւնը՝ տպ. «Նայիրի» (1950-1954 թթ.), տպ. «Անի» (1955-1958 թթ.), իսկ Գ. պրակը՝ տպ. «Հալելպ» 1957 թ.: Բուրաստանի նպատակը եղած է օգտակար նիւթ հայթայթել դպրոցական աշակերտներուն<sup>17</sup>:

ՀՅԴ Քրիստափոր պատանեկան միութեան կողմէ 1949-1961 թթ. լոյս տեսած է «Յեղափոխական ալպոմ» պարբերաթերթը: Թերթը 7-րդ թիւէն ետք կը դառնայ խմբագիրին՝ գծագրիչ Աւոյի (Աւետիս Թումայեան) սեփականութիւնը: Իրաքանչիւր շարք ունեցած է 12 թիւ՝ պատմական, ազատագրական նիւթերով անդակաւ: 1961 թ.-էն ետք պարբերաբար հրատարակուած է Լիբանան:

15 Շրջան մը լոյս տեսած է Մարաշի հայրենակցական վերաշինաց միութեան հրատարակութեամբ:

16 Տե՛ս **Պարիկեան Ն. եւ Վարժապետեան Յ.**, Նշ. աշխ., էջ 205:

17 Նոյն տեղը, էջ 184.



Այս շրջանի կրօնական բնոյթ ունեցող կամ կրօնադաւանական թերթիկներն՝

**«ԽԱՅՋՈՒՄ»** - 1946-1949, պարբերաբերթ, օրկան ձայ Աւետարանական Բեթել բարձրագոյն վարժարանի աշակերտական միութեան: Լոյս տեսած է 8 թիւ խմբագիր՝ Մեսրոպ Գերմանիկեան:

**«Աւետարանիչ»** - չալէպ, կրօնական ամսաթերթիկ, 1949-1962 թթ. Մարտ-Ապրիլ: Միիրան Մինասեան տեսած ըլլալով այս թերթը հետեւեալը կը յայտնէ. «Մինչեւ 1950 Յուլիսի թիւը, տպարանի անուն չի յիշատակուիր. նոյն թուականի Օգոստոսի թիւին եւ յաջորդող թիւերուն՝ տպ. «Մարանաթա» չալէպ, Սուրիա: 1954 թ. Նոյեմբերի թիւին ու յաջորդող թիւերուն մէջ կը հանդիպինք հետեւեալ գրութեան՝ «Աւետարանիչ» թերթիկէն անելի ցրուել ուզողները թող դիմեն համանուն թերթի հրատարակչին հետեւեալ հասցեով՝ վեր. Ս. Շանլեան, Բասատենա, Գալիֆոնիա»<sup>18</sup>: Կենթադրուի, թէ այս թերթիկը նոյն տարիներուն Նիւ Եորքի մէջ հրատարակուող նոյնանուն ամսաթերթիկին արտատպումն է:

Վերոյիշեալ ցանկը ամբողջական չեմ համարեր, փորձած ենք յիշատակել կարեւորագոյնները, սակայն ասոնց կողքին կարելի է թուարկել այլ պարբերաթերթեր, շաբաթաթերթեր ու ամսաթերթեր՝

**«Քրիստափոր»** շաբաթաթերթը 1946 թ., չալէպ:

**«Չալէպի Բարեգործականի մեծ ու պզտիկ տղուկները»**, պարբերաթերթ 1949-1952 թթ. նախաձեռնութեամբ Չալէպի ՀԲԸՄ-ի իրաւ անդամներուն. խմբագիր՝ Մատթոս Երեցեան: Հրատարակութեան նպատակը հետեւեալ ձեւով կ'արտայայտուի «Ո՛չ այս պրակը, ո՛չ ալ յաջորդները ՀԲԸՄ-ի դէմ չեն պայքարիր: Պայքարը ուղղուած է Բարեգործականը իրենց խանութին հետ շփոթողներու դէմ: Պայքարողներուն միակ փափաքն է Միութեան գործերը տեսնել կարող եւ մաքուր ձեռքերու մէջ»<sup>19</sup>: Լոյս տեսած է 14 պրակ:

**«Չայկազն»** - Աշակերտական պարբերաթերթ Ազգային Չայկազեան երկսեռ վարժարանի, Չալէպ. 1946 թ., Ա. տարի տպ. «Սեան»:

**«Տեղեկատու»** - Չայկական բարեգործական ընդհանուր միութեան, Չալէպ, 1950-1951 թթ., արձագանգը՝ միութեան մշակութային կեանքին:

Ս. Վարդան դպրոցի «Աւարայր» աշակերտական թերթը 1950-1951 թթ. եւ Բեթել եկեղեցւոյ քրիստոնէական Ջանից միութեան «Մշակոյթ» պարբերաթերթը 1952-1953 թթ., Չալէպ:

**«Բամբիռ»** - Պարբերաթերթ, Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանի (ԱՔԵՃ)

18 Մինասեան Ա., ձայ պարբերական մամուլի նորայայտ անուններ, 1981, էջ 297:

19 Պարիկեան Ն., Վարժապետեան Յ., նշ., աշխ., էջ 183:

ուսանողութեան: 1953 թ. Յունիսէն մինչեւ 1957 թ. Մայիս: Ա. թիւը խմորատիպ, կողքը՝ տպագիր: Պատասխանատու ուսուցիչ՝ Մինաս Թէօլեօլեան, խմբագրական կազմը աշակերտական խմբակներ: Բովանդակած՝ գրական, ուսումնասիրական-բանասիրական, թարգմանական փորձեր եւ ճեմարանականի կեանք: Կը թուենք այն աշխատակիցներու անունները, որոնք Ճեմարանը աւարտելէ ետք շարունակած են գրական-խմբագրական աշխատանք կամ առանձին գիրքով հանդէս եկած՝ Երուանդ Փամպուբեան, Ռիթա Որբերեան, Երուանդ Տեմիրճեան, Յակոբ Պալեան, Յասմիկ Նաճարեան, Արմէն Տօնոյեան, Եղուարդ Բատոյեան, Յասմիկ Տեմիրճեան եւ ուրիշներ:

«Բամբիռ»-էն մէկ տարի ետք՝ 1958 թ. լոյս պիտի տեսնէր «Պարման»-ը, որուն պիտի յաջորդէր «Ծիլեր» ուսանողական պարբերաթերթը:

ԱՔԵՃ Ը. կարգի աշակերտութեան նախաձեռնութեամբ նոր պարբերաթերթ «Պարման»-ը լոյս կը տեսնէ ընդամենը 2 թիւ եւ կը դադրի նոյն տարուան Ապրիլին. մեքենագիր է, բայց կողքը տպագիր, 28 էջ: Աշակերտներու կողքին աշխատակցած են ուսուցիչներ Գեորգ Տօնապետեան, Արեգ Տիրազան եւ Գեր. Տ. Ղեւոնդ արք. Զէպէլեան:

1961 թ. լոյս կը տեսնէ ԱՔԵՃ-ի ուսանողական այլ պարբերաթերթ մը «Ծիլեր» խորագիրով. ձեռնարկ՝ ԺԲ. կարգի: Այս պիտի տեսնէր մինչեւ 1964 թ.: Այս շրջանի պատասխանատու ուսուցիչ եղած է հայերէնաւանդ բազմավաստակ ուսուցիչ պր. Մկրտիչ Մկրտիչեանը: Ընդմիջումով 1971 թ.-էն ետք կը վերահրատարակուի՝ դառնալով Ճեմարանի ուսանողութեան պարբերաթերթը, մինչեւ 2017 թ. լոյս կը տեսնէ: Պատասխանատու ուսուցիչները եղած են Տ. Օշական վրդ. Զօյնյեան (անելի ուշ՝ Առաջնորդ Ծոցի երկիրներու), 1972-1974 թթ.<sup>20</sup>: Խաչիկ Շահինեան (1974-1975 թթ.), Շանթ Կիրակոսեան (1975-1976 թթ.), իսկ 1976-էն մինչեւ 2000 թուական՝ Յակոբ Զոլաքեան<sup>21</sup>: Մեքենագրուած, իսկ կողքերը՝ տպագիր: Գլխաւոր աշխատակիցներէն՝ Մովսէս Պչաքճեան, Գրիգոր Շահինեան, Վազգէն Ալեքսանեան եւ Սիլվա Պեքեարեան:

1961 թ. Ա. թիւի խմբագրականին մէջ կը կարդանք հետեւեալը. «Կ'ուզենք համեստ ուժերով նետել պատասխանատու այս քայլը նպատակ ունենալով ստեղծել շարժում մը եւ ձեւով մը գրական ու հոգեկան կենսունակութիւն ներմուծել մեր դասական դարձած կեանքէն ներս: Մեր սրտին խօսող ձեռնարկ մը

20 Յետագային Միացեալ Նահանգներու Արեւելեան թեմի առաջնորդ Օշական արք. Զոյնյեան:

21 2000 թուականէն ետք՝ Լալա Մինասեան, Լենա Նազարեան, Անի Ֆիշելկճեան, Մարիա Գարիլիէան, Զեփիտ Պապիկեան եւ ուրիշներ:



կը նկատենք ներկայ հանդեսը, որ պիտի ըլլայ ցոլացումը մեր ուսանողական յոյզերուն եւ ապրումներուն...»: Աշակերտական շարադրանքի կողքին պարբերաթերթը կը բովանդակէ արձակ եւ չափածոյ փորձեր, արաբական գրականութենէն թարգմանութիւններ, թարգմանական փորձեր, ինչպէս նաեւ «Արձագանգ Ճեմարանէն» նկարագարող բաժինը: Ան յաճախ տեղ տուած է նաեւ շրջանաւարտներու:

Իսկ «Ծիւեր» խորագիրի մասին՝ «Ծիւերը ապագայ տունկին, ծառին նախակարապետներն են, որոնք հին, մարմարեայ սիւնի մը փարած կը մագլցին վեր: Սիւնը նախկին մեր փառքն է, որ հիմա ջարդուած, գլխատուած է, բայց ներշնչումի, վերապրուստի խորան եղած է դարերէ ի վեր: Ծիւերը ճղճիմ, բայց խիզախ, վերանորոգուած սերունդին մաքառումը կը խորհրդանշեն»: Ընդհանրապէս լոյս տեսած է տարեկան երկու թիւ:

Եւ վերջապէս **«Մարտակոչ»** - Թոռուցիկ թերթ, մեքենագիր բազմագրուած, 1951-1952 թթ. լոյս տեսած է Հալէպ, Պարոյր Երեցեանի խմբագրութեամբ: Ժիրայր Դանիէլեան կը յիշատակէ թէ՛ «Մարտակոչ»-ի Ա. թիւը լոյս տեսած է 1934 թ. Յունիսին Պէյրութ, Յարութիւն Մատեանի խմբագրութեամբ<sup>22</sup>:

Ինչպէս նախօրօք նշեցինք, 1953 թ.-ին երկրէն ներս սահմանուած օրէնքներուն պատճառով կ'արգելափակուի ոչ միայն մշակութային կեանքի գործունէութիւնը, այլեւ վտանգ կը սպառնայ հայերէն լեզուի ուսուցման, որովհետեւ արաբերէնէն բացի միւս բոլոր լեզուները «օտար լեզու» կը հռչակուին<sup>23</sup>: Սակայն 1955 թ. հրապարակուած հրամանագիրով կը թոյլատրուի կարգ մը թերթերու հրատարակութիւնը:

1958 թ.-1961 թթ. եւ 1963 թ., երբ պետական հրամանագիրով կը դադրին բոլոր թերթերը, երկրէն ներս մէկ պետական թերթ հրատարակելու միտումով, համայնքը չ'ունենար իր օրաթերթը. հայ հասարակութիւնը իր մտաւոր սնունդը կը ստանայ Լիբանանի հայ օրաթերթերու միջոցով՝ «Ազդակ», «Ջարթօնք», «Արարատ»: Սակայն Լիբանանի հայկական մամուլը, որ սկսած էր փոխարինել տեղականին, վաթսունական թուականներուն երկրորդ կիսուն կ'արգիլուի մուտքը Սուրիա: Աշխատանք կը տարուի ներքին ձեռնարկներու: Նախակրթարաններն ու երկրորդական վարժարանները պարբերաբար կը հրատարակեն աշակերտական կեանքը ցոլացնող գրութիւններ: Այդ պարբերականները

22 Նոյն տեղը, էջ 193:

23 Այս օրէնքը կը հրատարակուի 1955 թ. Սուրիոյ նախագահ (բանակի զօրավար) զօր. Չիշքիի իշխանութեան օրով: Թիւ 175 օրէնքի վրայ յաւելում մը կը կատարուի. ըստ որուն, կրօնական համայնքներու ինքնորոյն լեզուները «օտար լեզու» չ'են նկատուեր Սուրիոյ մէջ:

եղան այն դաշտը, ուր բազմաթիւ գրողներ գրական առաջին նախափորձերը կատարեցին<sup>24</sup>, մինչեւ 1991 թ. «Գանձասար» շաբաթաթերթի հրատարակումը: Այս շրջանի օրաթերթերու կողքին հետզհետէ կը ծլին ու կը ծաղկին պարբերականներ՝ մշակութային, կրօնական բնոյթի, աշակերտական թերթիկներ եւ գաղափարական, ուր զարկ պիտի տրուէր գրականութեան փթթումին, ըլլային անոնք գրական ստեղծագործութիւններ, փորձեր, արտատպումներ եւ, ինչու չէ, թարգմանութիւններ, որովհետեւ գրականութեան եւ գեղարուեստի ուճացման ամէլի ձեռնտու հրատարակութեան կարիքը կար: Եւ կարծեք բարի նախանձէ մղուած կը սկսին զանազան հանդեսներ լոյս տեսնել:

Այս շրջանին «Արեւելք» ու «Սուրիա» օրաթերթը կը շարունակէին լոյս տեսնել, ինչպէս նաեւ կարգ մը պաշտօնաթերթեր ու պարբերագիրքեր: Կրկնութենէ խուսափելու համար անհարժեշտ կը նկատեմ անդրադառնալ միայն այս շրջանի նոր հրատարակութիւններուն:

**«Յուշարձան Մուսա Լեբան»** - Գրական, տեղեկագրական պարբերական 1955 թ., 1 թիւ, Մարտիրոս Գուշաքճեանի խմբագրութեամբ:

**«Բարձուք»** - Տարեգիրքը ՀԲԸ Միութեան Լ. Նաճարեան Գ. Կիւլպէնկեան կեդրոնական վարժարանի հրատ., Հալէպ, 1958-1971 թթ.:

**«Ծիւեր»** պարբերաթերթը ունեցած է բացառիկ թիւ նուիրուած երջանկայիշատակ Զարեհ Ա. կաթողիկոսին. (Բ. տարի, Գ. թիւ, Մայիս 1963 թ.), Յակոբ Պարոնեանի, Մ. Մաշտոցի, Մատթէոս Զարիֆեանի եւ Սայաթ Նովայի ծննդեան 250-ամեակին առթիւ:

ՀԲԸՄ-ի Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան հրատարակութեամբ 1961 թ. լոյս կը տեսնէ **«ՆԵՇ-Ի Զայն»**՝ Զատիկ Գուշեանի խմբագրութեամբ, օգնական խմբագիրներ՝ Յակոբ Միքայէլեան, Օննիկ Համալեան, Լեւոն Զէնեան: Ունեցած է 2 թիւ. Նոյն թուականին դադրած է: Բովանդակած է գրական փորձեր, ընկերակցութեան եւ ուսանողական բաժինի այլազան տեղեկատուութիւններ:

Հայ Կաթողիկէ առաջնորդարանի պարբերաթերթը, որ սկսած է լոյս տեսնել 1952 թ. արաբերէն լեզուով, 1960 թ. Փետրուարէն սկսեալ լոյս տեսած է հայերէն լեզուով:

**«Պարբերաթերթ Հայ Կաթողիկէ Առաջնորդարանի»** - Կրօնական, յարանուանական, ազգային, գրական, կրթական եւ գեղարուեստական. 1960-1970 թթ. Փետրուար (վերջի թիւը՝ Փետրուար 4). կարճ ընդմիջումէ ետք՝ վերա-

24 Ձեռագիր եւ տպագիր թերթերէն ու պաշտօնաթերթերէն՝ «Սուրիական մամուլ», «Կեանք», «Փարոս», «Քրիստափոր», «Քրիստոնեայ գործատր», «Մենք», «Մուրճ» եւ այլն: Հալէպի գրական որակատր հանդէսներէն են նաեւ «Դէպի Երկիր», «Սեան», «Մշակոյթ»:



հրատարակուած է 1971 թ. Դեկտեմբերին սկսեալ:

«**Հայ Ծերանոց**» պարբերաթերթ:

«**Վերելք**» - Պարբերագիրք, գրական շրջանակի կրտսերաց բաժին, Հալեպ 1957 թ., Ա. պրակ, նոր շրջան 32 էջ, խմբագիր՝ Լուսֆի Թապագեան. մէկ թիւ: «Վերելք»-ը 1955 թ.-էն լոյս տեսած է, իբրեւ պատի թերթ: Թիւերու քանակը չէ յիշատակուած:

«**Ցանք**» - Պարբերաթերթ, հրատարակութիւն Հայ Աւետարանական Էմմանուէլ կիրակնօրեայ դպրոցի շրջանաւարտներուն. մեքենագիր. բազմագրուած, Հալեպ, 1961 թ.՝ մէկ թիւ<sup>25</sup>:

1960-1961 թթ. Հալեպի մէջ հիմնուած Կիլիկեան Ճեմարանը եւս կը փորձէ իր ուսանողութեան ձայնը լսելի դարձնել «Կայծեր» պարբերաթերթով, որուն մասին պիտի անդրադառնամ յետագային:

1963 թ. կառավարական հրամանագիրով, պետական պաշտօնական մէկ թերթ լոյս տեսնելու միտումով, համայնքը կը զրկուի ոչ միայն օրաթերթերէ կամ այլ պարբերականներէ, այլ անոնց հետ կը կորսնցնէ մեծ թիւով մտաւորական խաւ մը, որոնք կը հեռանան՝ օտար կամարներու տակ իրենց բախտը որոնելու:

1967 թ. վտանգուած էր հայ ազգային կեանքը: Կար հայերէն լեզուի վերացման ու հայկական դպրոցներու պետականացման հարցը, որուն կ'անելնար արաբ իարայէլեան պատերազմը: Լեզուի հարցով բանակցութիւններու արդիւնքը դրական ըլլալով՝ կ'արտօնուի հայ տնօրէնի առկայութիւնն ու լեզուի ուսուցումը<sup>26</sup>:

Այս թուականներէն ետք սուրիահայ մամուլը տակաւ կը կորսնցնէ իր փայլքը. շատ մը թերթեր կը դադրին. հրապարակը գրեթէ կ'ամայնանայ<sup>27</sup>:

25 Տե՛ս «Հայկագեան հայագիտական հանդէս», հ. Ե. Պէյրութ, 1974, էջ 271:

26 Սուրիոյ պետութեան կողմէ հայ ժողովուրդը ճանչցուած էր հայ եկեղեցւոյ գաւազ (ոչ ազգային խմբաւորում) եւ եկեղեցին Աստուծոյ տունը ըլլալով՝ հայը պետք է աղօթէր հայերէն լեզուով, այնպէս ինչպէս արաբը՝ արաբերէնով: Նոյն թուականին կը պատրաստուին կրօնի դասագիրքեր, բայց հայերէն լեզուի ուսուցումը կ'արտօնուի «Լուրա Թաքսի» (ծիսական լեզու) անունով:

27 1970 թուականի վերջերը է 80-ական թուականներուն նոր թափ մը զգալի կը դառնար, որ խարխափումներով պիտի շարունակուէր մինչեւ մեր օրերը:

«Արեւելք մարզաշխարհ»-ի դպրեւէն ետք լոյս կը տեսնէ ՀՄԸՄ-ի 8-րդ խումբի «Սկաւտտին ձայնը» խմորատիպ երկշաբաթաթերթը, Հալեպ 1965 թ. Յունուար 1-էն- Մայիս 15: Պատասխանատու խմբագիր՝ Վարուժան Հանեսեան: Կողքը տպագրուած: Չոլաքեան կը յիշատակէ, որ նախ լոյս տեսած է իբրեւ պատի թերթ, 3 թիւ միայն:

## Է. ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Համայնքի կազմութեան օրերուն դպրոցներէն ներս աշակերտական թատրոններուն կողքին սկսած էին գործել աշակերտական երգչախումբեր, որովհետեւ երգը «նոգեկան կեանքի, յոյզերի եւ ապրումների արտայայտութեան եւ հասկացողութեան լաւագոյն միջոցներից մէկը, խօսքի կամ լեզուի կողքին. ... Եթէ երգն ինքն ըստ ինքեան հոգին ազնուացնող եւ կազդուող յատկութիւններով մի գանձ է ազգային մշակոյթի եւ ժողովրդական բազմութեան գեղարուեստական դաստիարակութեան համար՝ երգչախումբերի կազմութիւնն ու մարզանքը մի դպրոց է խմբի անդամների համար բազմաթիւ կողմերով...: Խմբի անդամների մէջ զարթնում է սէր եւ գիտակցութիւն դէպի հայրենին եւ ազգայինը, որ օրինութիւն է յատկապէս մեր հեռաւոր գաղութների համար». այսպէս բնութագրած է Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս ՆՍՕՏՏ Գարեգին Ա. Կաթողիկոսը<sup>1</sup>:

1930-40-ական թուականներուն չե՛՛Ը-ի Հալեպի մասնաճիւղը՝ սկաւտական, թատերական, գրական յանձնախումբերու կողքին կը կազմակերպէ երգչախումբի եւ նուագախումբի դասընթացքներ, ինչպէս նաեւ՝ քառաձայն երգչախումբ:

1951 թ. Հալեպի մէջ կը գործէ նաեւ «Շողակաթ» երգչախումբը, որ մաս կը կազմէր Հալեպի Ս. Քառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ Դպրաց դասի վարչութեան: Յետագային՝ 1968-1988, երգչախումբը պաշտօնապէս «Ջուարթնոց» անուանուելով կը հովանաւորուի Բերիոյ հայոց թեմի Ազգ. Առաջնորդարանի կողմէ՝ արձանագրելով կազմակերպչական եւ կատարողական նուաճումներ: 1973 թ. խումբը կը ղեկավարուի հալեպահայ յայտնի ջութակահար Վաչէ Երամեանի կողմէ<sup>2</sup>: «Ջուարթնոց» երգչախումբը իր երգացանկին մէջ բացի հայերէնէ կը ներառէ նաեւ արաբերէն երգերու բազմաձայն երգեցողութիւնը, որ կ'ամ-

1 «Հասկ», ԶԵ. տարի, թիւ 12, 1946, Լիբանան:

2 Նոյն աշխատութիւն, էջ 72-75: 1988-էն սկսեալ Համազգայինի Սուրիոյ Բ. Պատգամատարական ժողովի (Յուլիս 1988) որոշմամբ, «Ջուարթնոց» երգչախումբը կը դառնայ Համազգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութեան միատրններէն: Տարիներու ընթացքին երգչախումբը ունեցած է անելի քան 200 պաշտօնական համերգներ՝ Հալեպի, Դամասկոսի, Պէյրութի, Լաթաքիոյ, Քեսապի եւ Գամիշլիի մէջ, հանդիսատեսներուն մատուցելով հայ երաժշտութեան բազմաբնոյթ լարերը: Ներկայացուցած է անելի քան 1000 հայ եւ օտար դասական եւ ժողովրդական երգեր: Օտար եւ հայ մամուլը լայնօրէն անդրադարձած է «Ջուարթնոց» երգչախումբի մատուցած կատարողական արուեստին եւ գնահատած:

55 տարիներու ընթացքին երգչախումբը ղեկավարած են հայրենի թէ տեղացի արիեստավարժ խմբավարներ, ինչպէս՝ Գեորգ Գանտախարեան, Տ. Կոմիտաս ծ. վրդ. Օհանեան, Պօղոս Ապաճեան, անելի ուշ (1980-ական թուականներէն ետք) Խրդէն Մէլխանեան, Սեդրակ Երկանեան, Ռուբէն Ալթունեան, Ռուբէն Սվաճեան, Կարէն Սարգսեան եւ Ամանուէլ Վարսեան:



րապնդէ հայ եւ արաբ դարաւոր բարեկամութեան մշակութային կապերը: Կեդրոնական հեռատեսիլի կայանը գնահատելով այս նախաձեռնութիւնը՝ երգչախումբի երգերէն մաս մը արձանագրած է եւ զետեղած իր արխիւներուն մէջ: Հալէպի «Ձուարթնոց» երգչախումբի կամարին ներքոյ ի յայտ եկած են տաղանդաւոր մեներգողներ, որոնք երգչախումբէն ներս գործօն դեր ունեցած են եւ շարունակած իրենց ուսումը չայրենիքի մէջ՝ նուաճելով բարձր բեմեր:

Երգչախումբի պատասխանատուներն ու անձնակազմը անվերապահ աշխատանք տարած են, որպէսզի երգչախումբը իր մասնակցութեամբ առաւել փայլք տայ Սուրիոյ պետական թէ ազգային տօներու նուիրուած հանդիսութեանց յայտագիրին, միաժամանակ հայ երգն ու երաժշտութիւնը ծանօթացնէ ոչ միայն սուրիահայութեան, այլ նաեւ արաբ եւ օտար հասարակութեան:

1953 թ., Ժիրայր Իսկէնեանի խմբավարութեամբ եւ տեղական վարչութեան կազմակերպութեամբ կեանքի կը կոչուի մինչ օրս ընկերակցութեան պարծանք «Սպենդիարեան» երգչախումբը:

Իսկ 1955 թ. «Ասլամագեան» անուան քառեակը, որ պիտի գոյատեւէր մինչեւ 1965 թ.: 1963 թ. ընկերակցութիւնը հինգ հոգիէ բաղկացած էստրատային նուագախումբ մը կ'ունենայ «The Young Stars» անունով: Նուագախումբը հանդէս կու գայ հրապարակային եւ ներքին ելոյթներով:

Դամասկոսի մէջ նախապատերազմեան (խօսքը Բ. Աշխարհամարտի մասին է) շրջանին գործած է «Յառաջդիմասէր» միութիւնը, կարգ մը ազգայիններու մասնակցութեամբ: Ունեցած է «Հայ Գուսան» երգչախումբը, երաժիշտ Գ. Պոյաճեանի ղեկավարութեամբ: Սակայն 25 Մարտ 1952 թ. կը հիմնուի Դամասկոսի Համազգայինի մասնաճիւղը՝ շնորհիւ Տ. Գալըպճեանի: Մասնաճիւղը ունեցած է աշխոյժ գործունեութիւն: Վարչութիւնը չկարենալով ապահովել պետական ճանաչում կ'որդեգրէ նախկին՝ «Յառաջդիմասէր» անունը: Միութիւնը 1953 թ. պետականօրէն կը ճանչցուի «Ճեմիէ Թերազգի Սազաֆի» անունով: Նոյն թուականին կը վաերացուի ծրագիր կանոնագիրը:

1959 թ. միութիւնը զարկ կու տայ թատերական կեանքին: 1967 թ. Միացեալ վարժարանի շրջանաւարտից միութեան հետ կ'առաջացնեն Համազգայինի Լեւոն Շանթ թատերախումբը, ղեկավարութեամբ բեմադրիչ Վ. Մելքոնեանի:

Արդարեւ, Սուրիոյ հայ համայնքէն ներս հետզհետէ ծնունդ պիտի առնէին միութենական եւ յարանուանական երիտասարդական եւ մանկապատանեկան երգչախումբեր:

## Ը. ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

### 1. ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԲԸՄ)

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը (յետայսու՝ ՀԲԸՄ) «Բարեգործական»-ը, Սփիւռքի նիւթապէս ամենահարուստ կազմակերպութիւններէն է եւ իր նշանակալից դերը ունեցած է եւ մինչ օրս ունի կարգ մը այլ կազմակերպութիւններու կողքին, Սփիւռքի համայնքներու ձեւաւորման մէջ՝ հայ գաղթականներուն տեղաւորման, վերաբնակեցման եւ որբախնամ գործունեութեամբ, ինչպէս նաեւ բազմահազար հայորդիներու՝ որբանոցներու, այրիանոցներու, արհեստանոցներու եւ խնամատարական բազմաթիւ կայանատեղիներու մէջ գործի հայթայթումով:


Միութիւնը մասնաճիւղեր ունեցած է Հալէպի, Դամասկոսի, Լաթաքիոյ եւ Ալեքսանտրէթի մէջ:

Սփիւռքի կազմաւորման օրերուն եւ յատկապէս երեսունական թուականներուն, երբ արդէն փակուած էր որբանոցներու մեծ մասը, ՀԲԸՄ-ը կարեւորեց ինքնութեան եւ հոգեմտաւոր ժառանգութեան պահպանումը, վերամշակեց ծրագիրները եւ որդեգրած իր նոր ռազմավարութեան առանցքը դարձուց՝ գործունեութեամբ նեցուկ կանգնիլ կրթական, մշակութային եւ բարեսիրական հաստատութիւններուն (կառոյցներուն):

Այս իմաստով 1932 թ. -էն ետք գաղթախնամ գործունեութեան կողքին նպաստեց կրթական գործին: Սակայն 1939 թ. Ալեքսանտրէթի սանճագի հարցը պիտի ստիպէր, որ միութիւնը ժամանակաւոր յետաձգէր իր ազգամշակութային գործունեութիւնը եւ կրկին լծուէր գաղթականներու հիւրընկալման եւ տեղաւորման աշխատանքին՝ Սուրիա, Լիբանան եւ այլուր: Ան արձագանգելով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ հայ կաթողիկէ Պատրիարքին կը ձեռնարկէ համազգային հանգանակութիւնը՝ օժանդակութիւն սանճագի գաղթականներուն:

«Բարեգործական» միութիւնը մասնաճիւղերու կողքին ունեցած է իր կողմէ հովանաւորուող դպրոցներ եւ մարզական միութիւններ, առողջապահութեան վերահսկող խումբ: Նիւթական օժանդակութիւնը կը ստանար կեդրոնէն, որ կը գտնուէր Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ: Այդ հանգամանքը նկատի ունենալով ՀԻՍՆ ժողկոմխորհի առընթեր ներգաղթի կոմիտէն, 1945 թ. Դեկտեմբեր 25-ին կը դիմէ ՀԲԸՄ-ի Նիւ Եորքի կեդրոնական եւ Փարիզի երուպական վարչութիւններուն եւ կ'առաջարկէ գործօն մասնակցութիւն ցուցաբերել զանգ-





Լազար Նաճարեան Գալուստ Կիլիկեան երկրորդական ճեմարան 1950-1952 թթ.- շալէպ:

ուածային հայրենադարձութեան իրականացման գործին<sup>1</sup>:

Արդէն 1945 թ. կազմուած էր Սուրիոյ շրջանակային յանձնաժողովը՝ կեդրոններէն ներս միութենական գործունեութիւնը աւելի ծաւալուն եւ արդիւնաւետ դարձնելու նպատակով<sup>2</sup>:

16 Մարտ 1946 թ. ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութիւնը կը հրատարակէ կոչ-շրջաբերական՝ ներգաղթի օգտին մէկ միլիոն տոլար հանգանակութիւն սկսելու առաջարկութեամբ: Անմիջապէս Սուրիոյ եւ Լիբանանի մէջ կը կազմակերպուին համազգային հանգանակութիւն՝ հովանատրութեամբ ՆՍՕՏՏ Գարեգին Ա. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, ՀԲԸՄ-ի եւ ներգաղթի տեղական կոմիտէներէն<sup>3</sup>:

Մինչեւ 1946 թ.-ի ներգաղթը, ՀԲԸՄ-ը ունեցած է Սուրիոյ մէջ շուրջ 40 մասնաճիւղ: Մինչեւ 1951 թ. իր գործունեութիւնը կը կատարէր Հայ երիտասարդաց ընկերակցութեան արտօնութեամբ: Նոյն տարուան 20 Սեպտեմբերին շալէպի Նահանգապետութենէն արտօնութիւն կը ստանայ անկախ գործելու: Իսկ 24 Ապրիլ 1960 թ., թիւ 93 պետական օրէնքով եւ 418 որոշումագիրով ՀԲԸՄ-ը կը դառնայ սուրիահայատակ արտօնեալ միութիւն<sup>4</sup>:

Բարեգործականի սուրիական բաժանմունքի հովանիին տակ կ'աշխատէին կրթութեան եւ առողջապահութեան յանձնաժողովներ: Առողջապահական մարզէն ներս կատարած է ծաւալուն գործունեութիւն: Սուրիոյ եւ Լիբանանի մէջ առաջացուցած է վեց առողջապահական դարմանատուններ, իսկ Սուրիոյ տարածքին՝ շալէպի եւ Գամիշլիի<sup>5</sup>:

Համայնքի կազմութեան օրերուն ղեկավարներու բազմաբնոյթ գործունեութեան կողքին, մեծ եղած է բարեգործականի նպաստը կրթական հաստատութիւններուն՝ համայնքի կրթական մշակներուն, կարիքաւոր աշակերտներուն եւ այլ աշխատանքներ օժանդակելու վերաբերեալ: Կրթական հարցերու առումով Ազգային Առաջնորդարանի հետ համագործակցաբար նպաստած են համայնքի կրթական կեանքի վերելքին:

Սակայն քառասունական թուականներու երկրորդ կեսէն սկսեալ վարժարանները կը դիմագրաւեն նիւթական եւ բարոյական լուրջ դժուարութիւններ: Բ. Աշխարհամարտը, 1946 թ. ներգաղթը եւ երկրի քաղաքական ու հասարակական-տնտեսական վիճակը իր բացասական անդրադարձը կ'ունենայ համայնքի հայ հասարակական կեանքին, որուն հետեւանքը պիտի ըլլար անա-

1 «Եփրատ», թիւ 2607, 1946, շալէպ: **Մելիքսեթյան Ն. Ու.**, Հայրենիք-Սփյուռք առնչութիւնները եւ հայրենադարձութիւնը, էջ 207: Տէն Նաեւ «Հայաստանի կոչնակ», թիւ 11, Նիւ Եորք, 1946, էջ 256:

2 «Գեղարդ», Ա. գիրք, շալէպ, 1975, էջ 476:

3 **Մելիքսեթյան, Ն. Ու.**, Նշ. աշխ., էջ 208:

4 «Գեղարդ», Ա. գիրք, շալէպ, 1975, էջ 481-482:

5 «Հայաստանի կոչնակ», թիւ 39, Նիւ Եորք, 1948, էջ 926:



խորժովին, անհանդուրժողականություն եւ այլն: Ազգային Առաջնորդարանի եւ Բարեգործականի յարաբերությունները կը յայտնուին ոչ բարուք վիճակի մէջ: Միութիւնը չի նպաստեր Ազգային Առաջնորդարանի հովանիի տակ գտնուող վարժարաններուն: Կը ձեռնարկէ Հալէպի եւ արուարձաններու մէջ դպրոցաշինութեան: Կ'ուզէ որոշ շրջաններ ենթարկել իրեն: Վարժարաններ կը բացուին, նոյնիսկ փոքրաթիւ, 40-50 տուն հայութիւն ունեցող շրջաններուն մէջ, ուր ի սկզբանէ արդէն գոյութեան կոչուած էին ծխական դպրոցներ<sup>6</sup>:

ՀԲԸՄ-ը Սուրիոյ մէջ ունեցած նպաստընկալ եւ հովանաւորեալ վարժարաններէն բացի, դպրոցներու ցանցին բարելաւման առնչութեամբ կազմակերպած է հանգանակութիւն, որուն կարեւորագոյն արդիւնքներէն հանդիսացած է Հալէպի մէջ Միութեան հովանաւորութեամբ առաջին երկրորդական վարժարանի հիմնումը, որ իրականութիւն կը դառնայ 1952 թուականին, որուն պաշտօնական բացումը տեղի կ'ունենայ 1954 թ.: Դպրոցը կը կոչուի Լազար Նաճարեան Գալուստ Կիւլպէնկեան, որովհետեւ «գումարը գոյացաւ ծերունազարդ բարերար Լազար Նաճարեանի նուիրած 20.000 տոլարին վրայ աւելցնելով, Միութեան Նիւ Եորքի տիկնանց Կեդր. յանձնախումբի հաւաքած 13.000 տոլարը»<sup>7</sup>: 1960 թ. աշակերտութեան թիւն էր 669-ը<sup>8</sup>:

Հալէպի Երկրորդական վարժարանի հիմնումէն մէկ տարի անց՝ 1955-1956 թթ. Դամասկոսի մէջ իրականութիւն կը դառնայ Միութեան Կիւլպէնկեան Կիւլպէնկեան Յառաջապահ վարժարանը, համանուն հիմնարկութեան կողմէ եւ կը դառնայ ՀԲԸՄ-ի սեփականութիւնը<sup>9</sup>:

1953 թ. կը ստանձնէ Հալէպի Աճուրլուք թաղամասի Արմէնեան վարժարանի խնամակալութիւնը. ան նպատակադրած էր վերակառուցել, սակայն պետական արգելքով չ'իրականանար: Նոյն թուականին միութեան սեփականութիւնը կը դառնայ Հալէպի Շէյխ Մագսուտ արուարձանի մէջ 1937 թ.-էն գործող Նոյնանուն Արմէնեան դպրոցը: 1957 թ. կը յաջողի կառուցել վարժարանի նոր սեփական շէնքը եւ կը վերանուանուի Սեդրակ Մեսրոպեան վարժարան: Յետագայ տարիներուն տեղի հայերու արուարձանէն տեղափոխուելու հետեանքով, 1978-1979 թթ. վերջնականապէս կը փակուի նախակրթարանը<sup>10</sup>:

1953-1954 թթ. ՀԲԸ Միութեան սեփականութիւնը կը դառնան Տերպէսիէ Կի-

6 ՍՕ Խաչի Կեդրոնական վարչութեան 1930-1933 թուականներու տեղեկագիրներու եւ նամակներու տետրակ, «Տեղեկագիր Ամերիկայի ՀԿ Խաչի, 14 Սեպտեմբեր 1933 թուականի համարակալած. թ. 157 (1,2,3,4):

7 **Մելքոնյան Է. Լ.**, Հայկական բարեգործական ընդհանուր միութեան պատմություն, Երևան, 2005, էջ 431:

8 Նոյն տեղը:

9 «Օշական» պարբերաթերթ, ԺԲ. տարի, թիւ 1-2 (35-36), 1989, Հալէպ, էջ 46-47: **Մելքոնյան Է. Լ.**, Նշ. աշխ., էջ 432:

10 **Մելքոնյան Է. Լ.**, Նշ. աշխ., էջ 432-433:

լիկեան (1967 թ. կը փակուի) եւ 1956 թ. Արաբ Փունար (ծանօթ է Նաեւ Այն ալ-Արաբ եւ Գուպանի անուններով) գիւղաքաղաքի մէջ գործող հայկական վարժարանները<sup>11</sup>: Վերջինս 1958 թ. կ'անուանուի ՀԲԸՄ-ի Աւետիս Սարաֆեան Նախակրթարան: 1975 թ. կը փակուի հայաշակերտներու թիւի նօսրացման պատճառով:

Սեփական եւ նպաստընկալ վարժարաններու, որոնց թիւը կը հասնէր 49-ի, կողքին ուներ հովանաւորեալ վարժարաններ, որոնք կը տնօրինուէին Միութեան տեղական մարմիններու կողմէ, բայց ոմանց «պաշտօնատեղը տեղի Ազգային Իշխանութիւնն էր»<sup>12</sup>:

1975-1976 տարեշրջանին կարգ մը վարժարաններու փակման պատճառով միութեան նպաստընկալ վարժարաններու թիւը կը հասնի 17-ի<sup>13</sup>:

Միութիւնը Սուրիոյ տարածքին կը գործէր իր մասնաժողովով, տիկնանց յանձնախումբերով եւ այլ խմբակներով, որոնք կը զբաղէին մշակութային գործունէութեամբ: Միութեան ձեռնարկներէն մէկը՝ Սարեան նկարչական ակադեմիայի հաստատումն էր 1955 թ., փրոֆ. Զ. Գաբլանի ղեկավարութեամբ եւ ակնարդժ Ռ. Ճպեճեանի նախաձեռնութեամբ: Միութիւնը կը նախաձեռնէ հրատարակչատան եւ մատենագիտական գործունէութեան:

Դամասկոսի մէջ եւս կ'ունենայ մշակութային շրջանակ: 1975 թ. կը հաշուէր 6 մասնաճիւղ:

## 2. ՍՈՒՐԻԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԽԱՉ (ՍՕԽ)

1919 թ. Սեպտեմբերին Հալէպի մէջ ծնունդ առած Հալէպի Հայ Կարմիր Խաչը, Ամերիկայի Կեդրոնական վարչութեան առաջարկին ընդառաջելով, իր լիազօրի՝ Խաչիկ Քարուկեանի շնորհիւ 1929 թ. մասնաճիւղեր կը հիմնէ Սուրիոյ հայաբնակ վայրերուն մէջ՝ կեդրոն ունենալով Հալէպը: Կեդրոններ հաստատելով կը միտէր նպաստել տարագիր հայութեան բազմազան կարիքներուն, յատկապէս այն շրջաններուն մէջ, որոնց վիճակը «կարօտ եւ անմխիթար պատկեր մը կը ներկայացներ»: «Սուրիոյ Շրջանը կազմակերպուիլ սկսաւ 1929 թ. Յունիսէն, այնուհետեւ կազմակերպական ցանցը շարունակուելով՝ տարածուեցաւ գրեթէ բոլոր հայաբնակ վայրերուն մէջ: Շրջանային վարչութիւնը Հալէպի մէջ է եւ մասնաճիւղերը՝ Անտիոքէն մինչեւ Տէր Զօր շարժուն կէտանք մը ստեղ-

11 1959 թ. կը փակուի Ճարապլուսի Վարդանեանը, 1960 թ.՝ Քեսապինը: 1966 թ. Գարատորանինը եւ Տերպէսիէինը: Իսկ 1975 թ.՝ (Այն ալ-Արաբ)ի Արաբ Փունար Աւետիս Սարաֆեան վարժարանը:

12 «Գեղարդ», Ա. գիրք, Հալէպ, 1975, էջ 484: Տե՛ս նաեւ՝ վարժարաններու ցուցակը՝ «Գեղարդ», Ե. գիրք, Հալէպ, 1996, էջ 352-353:

13 «Գեղարդ», Ա. գիրք, Հալէպ, 1975, էջ 484:





Հալեպի Հայ Ազգային Կարմիր խաչի դարմանատուն- Սուլեյմանի:

ծած են գաղութներուն մէջ»<sup>14</sup>:

1929 թ. Հայ Կարմիր խաչի մասնաճիւղեր արդէն կային` Քեսապի, Անտիոքի, Ծարապլուսի, Արաբ Փունարի, Թէլ Ապիատի, Բագգայի, Տեր Զօրի, Գամիշլիի, Ռաս Ու Այնի, Հասիչէի, Գրոզ Խանի, Լաթաքիոյ, Եօղուն-Օլուգի, Պիթիասի (Սուեիա), Հայաշէնի, Գարատուրանի եւ Հալեպի մէջ:

Սուրիահայ Օգնութեան Խաչը պետականօրէն գործելու արտօնութիւն եւ վաւերացում ստացած է ֆրանսական մանդատի կողմէ եւ այդ օրերուն: Կազմակերպութեան նպատակը սկզբնական շրջանին եղած է` մասնաճիւղեր յառաջացնել, պատգամաւորական ժողով գումարել, գործունէութեան ուղեգիծ մշակել, տեղական հասոյթներով նպաստել առողջապահական գործին, իսկ արտասահմանեան օժանդակութիւններ յատկացնել գլխաւորաբար երկու կարեւոր ձեռնարկի`

1- Կրթական

2- Որբահաւաքման գործին.- Որբ-որբուհիներու բարոյական հսկողութեան եւ ձուլման դէմ պայքարի աշխատանքները: Որբահաւաքման գործը, նոյնպէս կենսական խնդիր էր, շատ աշխատանք եւ նիւթական լայն միջոցներ կը պահանջէին:

14 Ալպոմ, Հայ Կարմիր խաչի, Պոստոն, 1930, էջ 16:

Բացի քաղաքներէն, գիւղական շրջաններուն մէջ մասնաւորաբար, գաղթականները տեղաւորելու, պահելու համար անհրաժեշտ էր նիւթական աջակցութիւն, այլապէս տեղական միջոցներով անհնար էր փրկել կացութիւնը:

ՍՕԽ-ի Կ. վարչութիւնը (Շրջանային վարչութիւն) Սուրիոյ համատարած հոգերով ծանրաբեռնուած, բացի Հալեպէն, մտահոգ էր նաեւ Սուրիոյ շրջաններու հայաբնակ աւաններու առողջապահական, մանաւանդ կրթական եւ այլ հիմնահարցերով: Վարչականները չկարենալով հասնիլ Սուրիոյ հիւսիս-արեւելեան հայաբնակ վայրերու դպրոցներու կարիքներուն, ամ այդ կ'որոշէն բանակցիլ Հալեպի ՀԲԸՄ-ի մասնաճիւղի հետ եւ ընդհանուր հասկացողութեան գալ միացեալ ջանքերով շրջանի դպրոցներու նպաստի գործը ամուր հիմերու վրայ դնելու համար:

Կրթական գործին ամընթեր անհրաժեշտ էր մարդուժի պատրաստութիւնը, որ ներգրաւուած էր ՍՕԽ-ի Շրջանային (Կեդրոնական) վարչութեան ծրագիրին մէջ:

ՍՕԽ-ի Շրջանային վարչութիւնը քաջատեղեակ էր իր շրջաններու ուսումնակրթական կարիքներուն նաեւ: Շրջաններու վարժարանները մեծ մասամբ ծխական էին եւ առաւելագոյնը` նախակրթարաններ: Բարձրագոյն կրթութեան հաստատութիւններ կը պակսէին: Շրջանի դպրոցներուն ուսուցիչներ եւ մտատրական երիտասարդներ պատրաստելու միտումով, Շրջանային վարչութիւնը կը ծրագրէ «Գիւղերէն բերել աշակերտներ, որոնք վերջացնելով իրենց գիւղի դպրոցը եւ հնարաւորութիւն չունենալով ճեմարան երթալու. պիտի գան այնտեղի նախակրթարաններու վերջին բարձրագոյն կարգերուն հետեւելու»<sup>15</sup>: Անոնց կեցութեան համար պիտի տրամադրուէր Հալեպի Ազգային Պատասպարանը: Ծրագիրը իրականութիւն կը դառնայ եւ 1935 թ. տուեալներով զանազան գիւղերէն միայն ութ ընդունակ աշակերտներ կը յաջողին բերել, որոնք ասարտել էտք պիտի վերադառնային իրենց գիւղերը` ուսուցչութեամբ զբաղելու:

Կանացի այս կազմակերպութիւնը իր կազմութենէն դիմագրաւած բազմաթիւ խոչընդոտներու ամընթեր, իր գործունէութեան ծիրէն ներս յատուկ տեղ յատկացուցած էր Ա. Աշխարհամարտէն ճողոպրած մեծաթիւ գաղթականներու տեղաւորման, ապրուստի տարրական միջոցներ ստեղծելու, հիւանդներու եւ տարեցներու հոգատարութեան գործը կանոնաւորելու, կրթական հաստատութիւններ ստեղծելու, կրթանպաստներ յատկացնելու, ուսուցիչ, բժիշկներ, հիւանդապահուիչներ ամաքելու գործով: Այս հսկայ աշխատանքի թիկունքին կանգնած էր Ամերիկայի ՀԿԽ-ի Կեդրոնական վարչութիւնը իր նիւթական աջակցութեամբ եւ իր թելադրականներով:

15 Ֆիշեկճեան Ա., Յուշամատեան սուրիահայ օգնութեան խաչի 1919-2009, Հալեպ, 2010, էջ 86:



Սուրիահայ Օգնության Խաչը, տարուէ տարի յարաճուն վերելք ու համակրանք ապրեցաւ<sup>16</sup>: Գրեթէ բոլոր շրջաններուն մէջ, ուր հայութիւն գոյութիւն ունէր, այնտեղ կարելի եղած էր հիմնել Օգնության Խաչի մասնաճիւղ, ո՛չ միայն Սուրիոյ եւ Լիբանանի խոշոր քաղաքներուն, այլեւ ասաններուն ու գիւղերուն մէջ:

Առողջապահական մարզին մէջ վարչութիւնը կապ հաստատած է զանազան կազմակերպութիւններու եւ հիւանդանոցներու հետ:

1935 թ. ՍՕԽ-ի կեդրոնական վարչութիւնը ունէր 22 մասնաճիւղ, հետեւեալ վայրերու մէջ.<sup>17</sup>

վայր	անդամ	վայր	անդամ	վայր	անդամ
Թրիփոլի	69	Քեսապ	121	Տէրիք	28
Պէրոպ	350	Սուետիա	68	Հոմս	32
Բազգա	25	Լաթաքիա	46	Գարատուրան	41
Հասիչէ	10	Լաթաքիա (Արծուիկ)	43	Դամակոս	114
Ռաս Ռւ Այն	21	Անտիոք	52	Հալէպ	250
Տէր Ջօր	50	Գամիշլի	195	Նոր Գիւղ	75
Արաբ Փունար	29	Գուպր Պիթ	42		
Ճարապլուս	27	Այն Տիվար	20	Ընդամենը	1,708

Չուտ կանացի կազմակերպութիւն մը ըլլալով, 1934-էն Շրջանային (Կեդրոնական) վարչութեան նախաձեռնութեամբ, Սուրիոյ զանազան շրջաններուն մէջ յառաջացած էին արենուշական (արծուիկներու) շարքեր: Հալէպի, Նոր Գիւղի, Լաթաքիոյ, Պիթիասի: Վարչութեան նպատակն էր փոքր հասակէն անհատներ պատրաստել Օգնության Խաչի շարքերը համալրելու:

Արծուիկներու կանոնագրի պահանջը զգալի դարձած էր եւ ըստ այրմ կը պատրաստուի կանոնագիր մը՝ զայն յարմարեցնելով Ամերիկայի արծուիկներու ծրագրին:

1938 թ. աւարտին Սուրիոյ եւ Լիբանանի մասնաճիւղերու թուաճը Նոր առա-

16 1930-1939 տարիները ՍՕԽ-ի կազմաւորման, բարգաւաճման ու վերելքի տարիներն էին: Սակայն 1939 թ. Բ. Աշխարհամարտը եւ Ալեքսանտրէի սանճագի խնդիրը պիտի կասեցնէին ամէն աշխատանք: Նոր պատերազմ, ծանր տագնապ, զրկանք, գերիներ: Ֆրանսա, Յունաստան եւ Պալեստինէր դարձած էին պատերազմի դաշտ: Ողջ աշխարհի նայրածքը ուղղուած էր դէպի Ամերիկա Հայ Կարմիր Խաչին օգնության ակնկալիքներով՝ սնունդ, դեղորայք, հագուստ եւ այլ մթերքներ: Հակառակ հաղորդակցութեան չգոյութեան եւ բազմաթիւ դժուարութիւններուն, բախտեց ամէն դուռ եւ ի վերջոյ յաջողեցաւ անհրաժեշտ օգնութիւն առաքել սղէտեալ վայրերը, ինչպէս նաեւ Սուրիա, Լիբանան, Իրաք, Ֆրանսա եւ Պարսկաստան, որովհետեւ կը հաւատարի կազմակերպութեան սրբազան առաքելութեան: Բայց կարօտեալներուն պահանջը այնքան շատ էր, որ կարելի չէր ՀԿ Խաչի սովորական հասոյթներով յազգենել ստեղծուած իրավիճակը: Այս առումով ՀԿԽ-ի Կեդրոնական վարչութիւնը կեդրոնէն ներս կը նախաձեռնէ հանդերձահաւաքի եւ հանգանակութեան:

17 Ֆիշենկէան Ա., Նշ. աշխ., էջ 89:

ջադրութեան առաջ պիտի դնէր ՍՕԽ-ի Շրջանային վարչութիւնը: Ուստի նպատակայարմար պիտի ըլլար բաժնել Սուրիոյ եւ Լիբանանի մասնաճիւղերը առանձին Շրջանային վարչութիւններու:

Բացի նիւթական դժուարութենէն, կար այլ հարց մը եւ: Ֆրանքի տարապայման արժեզրկումով արհեստաւոր եւ գործաւոր դասակարգը անտանելի կացութեան մատնուած էր: Կենսամթերքի համեմատական սղութեան դէմ աշխատավարձերը չնչին էին, այնպէս որ հայ ծնողքը ի վիճակի չէր իր զաւակին ուսման ծախսերը հոգալու. այսպիսով դպրոցները մատնուած էին նիւթական տագնապի: Այս մեկնակէտէն առաջնորդուելով՝ Կեդրոնական վարչութիւնը կարեւոր կը նկատէ յաւելեալ օժանդակութիւններ մատուցել բոլոր վարժարաններուն: Աւելին, այս իրավիճակէն օգտուելով ՀԲԸ Միութիւնը իր նիւթական միջոցները ի սպաս կը դնէ նպաստելու կրթական գործին, փոխարէնը պահանջելով՝ «ա - շոգաբարձութիւնը, կամ դպրոցը յանձնառու պէտք է ըլլան տարեկան որոշ գումար մը հայթայթելու եւ զայն յանձնելու Բարեգործականին»: Այս գումարը, ըստ տեղւոյն վճարելու կարողութեան, դպրոցի տարեկան նախահաշիվին կէտը եւ կամ թէ քիչ մ'աւելի պակասը կը բաւէ: Այս տեղ նշանակելի սա կէտը կայ որ՝ ինք, Բարեգործականը իր նպաստը տրամադրելու տեղ, դպրոցի վարչութեանց, հոգաբարձութիւններուն հաշուին որ գումարներ մէջտեղ պիտի բերեն եւ տրամադրեն, յանձնեն Բարեգործականին, որ մնայ կրթական գործին եւ ուղղակի եւ անմիջական վարիչ մարմինը եւ դպրոցները իր ձեռքին տակ մտնեն: Իսկ ժողովուրդը, տեղական մարմինները, հոգաբարձութիւն եւ այլն, մնան երկրորդական, այսինքն՝ օժանդակողի դերին մէջ:

բ - Բարեգործականը յանձն պիտի առնէ ընել դպրոցի ամբողջ ծախսը եւ իր ուզածին պէս եւ ամբողջութեամբ պիտի լրացնէ պիտոճէին պակասը:

գ - Ան, ինք ուղղակի պիտի նշանակէ ուսուցչական կազմը: Այս ձեռով, շատ որոշ կերպով եւ անգամ մըն ալ կը հասկցուի, որ իր ձեռքերուն մէջ պիտի առնէ դպրոցներուն ամբողջ ղեկը:

դ - Դպրոց գտնուած վայրը, գիւղ կամ քաղաք, պէտք է կազմուի ՀԲԸՄ-ի մասնաճիւղ եւ ուժեղանայ ան հետզհետէ: Եւ այդ տեղերու մէջ դպրոց բաց մնալու եւ յարատեւելու համար, ո՛չ մէկ հակառակութիւն գոյութիւն պիտի չունենայ Բարեգործականի եւ անոր ձեռնարկին շուրջ»<sup>18</sup>: Այս պայմանները անախորժ կացութեան ծնունդ պիտի տային եւ առաւել սրէին յարաբերութիւնները Նոյնիսկ հասարակութեանց միջեւ:

1930-1939 թթ. բաւական երկար ժամանակ էր ՀԿԽ-ի սփիւռքեան շրջանի մասնաճիւղերու կազմաւորման, բարգաւաճման ու վերելքին: Մինչեւ 1939 թ.

18 ՍՕԽ-ի Կեդրոնական վարչութեան 1930-1933 թուականներու տեղեկագիրներու եւ մամուլ-ներու տետրակ, «Տեղեկագիր Ամերիկայի ՀԿԽ-ի», 14 Սեպտեմբեր 1933 թուականի համարակալուած, թ. 157 /2/:





Արաբ Փունարի Աւետիս Սարաֆեան վարժարան:

վերջը, կառավարութեան կողմէ ՍՕԽ-ի արտօնուած էր գործելու միայն չալէպ քաղաքէն ներս: Նոգատար իշխանութեան յանձնակատարի, օտար կազմակերպութեանց գործունէութեան եւ արտօնութեան վերաբերեալ (թիւ 369 LR) պաշտօնագիրի պահանջին համաձայն Կեդրոնական վարչութիւնը ՍՕԽ-ի ընդհանուր Սուրիոյ համար վաւերացումը եւ ազատօրէն գործելու արտօնութիւնը ձեռք բերելու համար, անհրաժեշտ դիմումագիր կը ներկայացնէ պատկան իշխանութեանց<sup>19</sup>:

1940 թ. մասնաճիւղերն էին՝ չալէպ, Նոր Գիւղ, Չասիչէ, Թէլ Ապիատ, Այն Արուս, Գամիշլի, Գուպր պիթ, Տերիք, Ճարապլուս, Րազգա, Նոմս, Դամասկոս, Սոււտիա, Լաթաքիա, Գարատուրան եւ Քեսապ: Նոյն շրջանին կը կազմուի չալէպի Սէպիլ շրջանի մասնաճիւղը, կը վերակազմուին Գամիշլիի, Չասիչէի, Այն Տիվարի եւ Արաբ Փունարի մասնաճիւղերը, ինչպէս նաեւ Տեր Զօրի, Գերմանիկի (Չալէպ) եւ Տերպէսիէի:

Այս շրջանին Շրջանային վարչութիւնը կ'իրականացնէ արծուիկներու շարքերու վերակազմութիւնը եւ անոնց ծրագիրի մշակման համար յանձնախումբ մը կ'առաջացնէ: Շրջանային վարչութիւնը նկատելով, որ ժամանակին սկսած

19 ՍՕԽ-ի Կեդրոնական վարչութեան 1938-1940 թուականներու տեղեկագիրներու եւ նամակներու տետրակ, «Տեղեկագիր Ամերիկայի շ. Կ. Խաչի», 15 Մարտ 1940 թուականի համարակալուած, թ. 372 /2/. տես նաեւ **Ֆիշենկեան Ա.**, Նշ. աշխ., էջ 126-127:

(1935 թ.) արծուիկներու միութեան գործը բաւական երկար ընդհատումէ ետք այլեւս տեսակ մը անմիջական եւ պարտադիր անհրաժեշտութիւն կը դառնար, կ'որոշէ առաւել գործնական եւ առողջ ու օրուան պահանջներուն համապատասխանեցնող ծրագիրով մը վերակազմել «մեր փոքրիկ աղջիկները ֆիզիքապէս, բարոյապէս եւ ազգային հայեցի նկարագիրով մը պատրաստելու համար»<sup>20</sup>:

Կրթական բնագաւառէն ներս, նախակրթարաններու բարձրագոյն կարգի աշակերտներու միջեւ կազմակերպած է գրական մրցանակ:

ՍՕԽ-ի մասնաճիւղերէն բացի, արծուիկներու կազմակերպութիւնն ալ որոշ վայրերու մէջ կ'արձանագրէ թուականաճ: Արծուիկներու կազմակերպութիւնները տեղական մասնաճիւղերու կողմէ նշանակուած «Արծուիկներու Խորհուրդ»-ով կը ղեկավարուէին: 1946 թ. Սուրիոյ տարածքին ՍՕԽ-ի մասնաճիւղերը մեծ մասամբ օժտուած էին արծուիկներու խումբերով:

Խրախուսիչ երեսոյթ էր նաեւ ՍՕԽ-ի օժանդակութիւնը դասագիրքերու պատրաստութեան եւ հրատարակութեան գործին: Շրջանային վարչութիւնը Բերիոյ թեմի Ոստանական խորհուրդի հետ խորհրդակցաբար հնարաւոր կը դարձնէ Նոր դասագիրքերու պատրաստութիւնն ու հրատարակութիւնը՝ քաջալերելու համար հայ հեղինակները՝ դասագիրքերու պատրաստութեան կենսական հարցին մէջ եւ դիրացնելու համար այդ գործին տպագրութիւնը: ՍՕԽ-ի Շրջանային վարչութեան բարերար աջակցութեամբ լոյս կը տեսնէ Չայոց Պատմութիւն (Արմէն Անոյշի) եւ «Շողական» (Մինաս Թեօլէլեանի) ընթերցարանները:

Նայ Օգնութեան Միութեան 26-րդ Պատգամաւորական ժողովը կ'որոշէ «գոյացնել բացառիկ գումար մը կամ հայթայթել ներգաղթողներուն համար հանդերձեղէն կամ դեղօրայք»<sup>21</sup>, եւ մասնաճիւղերու ներկայացուցիչներուն ու անդամ-անդամուհիներուն կը յանձնարարէ համակիրներուն ուժ տալ «Ներգաղթի համար ձեռնարկուած մէկ միլիոն տոլարի հանգանակութեան, որ սկսած էր չԲԸ Միութեան նախաձեռնութեամբ»<sup>22</sup>:

Շրջանային վարչութեան մեծագոյն գործը կ'ըլլայ ներգաղթի առթիւ յառաջացած կարգ մը դժուարութիւններու յարթահարումը: Ներգաղթը եւ տնտեսական ընդհանուր տագնապը այդ շրջանին պատճառ պիտի դառնային, որ բազմաթիւ չքաւոր ընտանիքներ հարկադրուէին իրենց զաւակներու կրթութեան գործը ընդհատելու: Նայաստան մեկնելու հրահանգ ստացող, գործ ու բնակարան հաշուէյարդարի ենթարկող հարիւրաւոր ընտանիքներ, մնացած էին իրենց հակերուն վրայ, տեւական ձգձգումներուն եւ կազմակերպական ձախա-

20 **Ֆիշենկեան Ա.**, Նշ. աշխ., էջ 137:

21 Նոյն տեղը, էջ 149-150:

22 Նոյն տեղը, էջ 150:



երուրթեանց պատճառով: Անոնք նիւթապէս կթուտեցան՝ իբր հետեւանք անգործութեան եւ ձեռնթափութիւններուն: 19 Յունիս 1946 թ. տուեալներով «Սուրիոյ եւ Լիբանանի հայութեան ինստուն առ հարիւրը արդէն արձանագրուած էր, շուրջ 140-150 հազար անձ»<sup>23</sup>: Սակայն հայութիւնը առաջին յուսախաբութիւնը կ'ապրի, երբ Ներգաղթի կոմիտէի ներկայացուցիչը կը յայտարարէ, թէ այս շրջաններէն պիտի ներգաղթեն 1947 թ. սկիզբը: Անգործութիւնը անողոք կերպով ճնշած էր հայ գանգուածները, մասնաւոր երբ շոգեկառքի ընկերութիւնը կը սկսի Նօսրացնել աշխատատեղերուն եւ պաշտօնեաներուն թիւը:

Այդ շրջանին մասնաճիւղերը հետեւեալ պատկերը կը պարզէին.<sup>24</sup>

Վայր	անդամ	Վայր	անդամ	Վայր	անդամ
Հալէպ	320	Գարատուրան	30	Ռաս Ռլլ Այն	31
Նոր Գիւղ	222	Թէլ Ապիատ	35	Տէրպէսիէ	26
Դամասկոս	300	Ճարապլուս	58	Գամիշլի	207
Հոմս	85	Արաբ Փունար	117	Տէր Զօր	65
Լաթաքիա	57	Թէլ Ապիատ	31	Հասիյէ	10
Քեսապ	120	Այն Արուս	17	Ղնդիանուր	1,731

Իսկ արծուիկներու թուական պատկերը հետեւեալն էր՝ <sup>25</sup>

մասնաճիւղ	անդամ	մասնաճիւղ	անդամ	մասնաճիւղ	անդամ
Հալէպ	160	Հոմս	30	Գարատուրան	16
Նոր Գիւղ	120	Լաթաքիա	40		
Դամասկոս	50	Քեսապ	90	Ղնդիանուր	506

Նոր Գիւղի մէջ կը հիմնուի ՍՕԽ-ի մնայուն դարմանատունը՝ 1947 թ.:

Սակայն մինչեւ 1947 թ. Բերիոյ թեմը, որ կը հաշուէր 50-60 հազար հայ<sup>26</sup>, չունէր երկրորդական վարժարան եւ տարեկան հարիւրաւոր շրջանաւարտներ իրենց միջնակարգ-երկրորդական ուսումը կը շարունակէին «այլ երկնակամարներու տակ» եւ դէպի Լիբանան կամ Կիպրոս: 26 Հոկտեմբեր 1947 թ., դժուարին պայմաններու մէջ Ճեմարանի հանդիսաւոր բացումը աշխարհիկ եւ հոգեւոր անձանց ներկայութեամբ տարիներու առաջադրանք էր կ'իրականանար, որուն նուիրեալները ունէին այն հաւատքն ու համոզումը, որ այս կառոյցով պիտի խափանէին ուժացման չարիքը եւ Նոր սերունդի երկրորդական կրթութիւնը պիտի պայմանաւորէին հայեցի դրոշմով ու ազգաշունչ դաստիարակութեամբ: Այլ խօսքով՝ Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի գոյութիւնը պայմանաւորուած էր

23 Նոյն տեղը:  
24 Նոյն տեղը, էջ 151:  
25 Նոյն տեղը:  
26 Նոյն տեղը, էջ 152:

ուսումնակրթական եւ յաստիարակչական առաքելութեամբ:

Այս յոյժ կարեւոր ձեռնարկի մասին, իր բոլոր մանրամասնութիւններով ՍՕԽ-ի Շրջանային վարչութիւնը կը տեղեկագրէ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան խնդրելով, որ ուսումնակրթական այս հաստատութիւնը յատուկ գուրգուրանքի ու խնամքի առարկան դառնայ. «Տարիներէ ի վեր, ազգային մտածում եւ հայ մտաւոր ձգտումն ունեցող հաւաքականութիւններու իտեալը եղած է այս հոծ գաղութին մէջ ունենալ երկրորդական վարժարան մը: Նկատուած է, որ մեր մանուկներու բաւական մէկ մասը նախակրթարանները անարտելի յետոյ իր ուսումը շարունակելու տենչով կ'իյնայ օտար շրջանակներու մէջ ու հոն իր ունեցած հայկական պաշարը աղճատուելով կը դառնայ անդէմ եւ ոչ օգտակար տարր: Անհրաժեշտ էր միջոցը մտածել եւ ունենալ դպրոց մը, որ այդ բացը գոցել կարենար եւ ուսումնատենչ հայ տղան իր ուսումը շարունակելու համար փոխանակ օտարի այլասերող հաստատութեանց դիմելու, դիմել իր հարազատին, ուր ամենէն առաջ պիտի կատարելագործէր իր հայկականութիւնը: Եւ ահա երրորդ տարին էր, որ այդ անհրաժեշտութիւնը դարձած էր իրականութիւն եւ հալէպահայութիւնը ունեցած իր ճեմարանը»<sup>27</sup>:

\* \* \*

1948 թ. սկիզբ առած էր Արաբ-Իսրայէլեան պատերազմը: Սուրիան եւ ընդհանրապէս արաբական աշխարհը տազնապի մատնուած էին: Դէպքերու հետեւանքով արաբ գաղթականներու հոսքը սկսած էր դէպի Սուրիա եւ Լիբանան: Արաբական երկիրներու պետութիւնները, բարեգործական կազմակերպութիւններն ու հաստատութիւնները իրենց կարելի միջոցներով սատար հանդիսացան արաբ գաղթականներուն: ՍՕԽ-ը եւս անմասն չմնաց եւ նիւթաբարոյական օժանդակութեամբ նպաստեց ու ձեռք երկարեց արաբ եղբայրներուն: Բարեսիրական այս գործը մեծ տպաւորութիւն ձգեց պետական եւ բարեսիրական շրջանակներուն մէջ, որոնք յատուկ գրութիւններով իրենց երախտագիտութիւնը արտայայտեցին: Օժանդակած են նաեւ «Պաղեստինի գաղթականներուն՝ ճեմակեղէն, սիկարթ, շաքար եւ կաթ բաժնելով»<sup>28</sup>:

Պետականութենէ զուրկ եւ այլասերող օտար հորիզոններուն տակ հայ մանուկի հայեցի դաստիարակութիւնը նկատուելով հայապահպանման էական ազդակ՝ ՍՕԽ-ը քաջալերած է գաւառներէն եկող աշակերտութիւնը եւ նախկին պատսպարանի շէնքէն անջատ, վարձած է ուրիշ տուն մը եւ վերածած է ուսանողներու տան, ուր կը պատսպարուէին Ազգային Քարէն Եփփէ Ճեմարան յաճախող շրջաններէն եկող ուսանողները: Որպէս կրթական գործ առանձին յիշատակութեան արժանի է Պատսպարանի անջատ գործունէութիւնը: Պա-

27 Նոյն տեղը, էջ 152:  
28 Նոյն տեղը, էջ 153,155:



տսպարանը, որ Հալեպ մասնաճիղի հոգատարության ներքոյ կը գտնուէր, հոն կը պատսպարուէին գաւառներէն եկած դպրոցական, արհեստի հետեւող աշակերտներ, որք եւ այրի սպասուիներու փոքրիկներ: Ընդհանուր թիւը 70-ի կը հասնէր, որոնց 60-ը դպրոցականներ էին, 3-ը՝ արհեստատուներ, 7-ը՝ անչափահաս փոքրիկներ:

Գամիշլիի մէջ հիմնելիք Ոսանողական տունը, որ կարգ մը արգելիչ պատճառներով կարելի չէր եղած հիմնել, 1940-ական թուականներուն վերջը երկար խորհրդածութիւններէն եւ քննութիւններէն ետք, վարչութիւնը կ'որոշէ փորձառական շրջան մը անցընել վարձու երեք սենեականոց տան մէջ: Գործի յաջողութենէն ու բաւարար թիւով ուսանողներ ունենալէ ետք, կը մտածէ յարմարագոյն վայրի մը մէջ հիմնել սեփական Ոսանողական տունը:

1930-1950 տարիները կազմակերպութեան համար եղան ոչ միայն ծնունդի, այլեւ կազմակերպական, կազմակերպչական ու տարածման դժուարին տարիներ:

1953 թ. Սեպտեմբեր ամսուն հրապարակուած պետական նոր օրէնքով կը ջնջուէին Սուրիոյ մէջ գործող բարեսիրական բոլոր միութիւններու արտօնութիւնները եւ կը հրահանգուէր նոր արտօնութեան համար դիմում կատարել պատկան իշխանութեան<sup>29</sup>: Այս առնչութեամբ 17 Փետրուար 1954 թ. խորհրդակցական ժողով մը տեղի կ'ունենայ, ուր կը հնչեն երեք տարբեր միտքեր՝ առանց վերջնական եզրակացութեան յանգելու: Առաջարկուած միտքերը հետեւեալներն էին.

ա.- ՍՕԽ-ի վաւերացման համար դիմում կատարել ու աշխատիլ զայն վաւերացնել իր ներկայ ձեւով (Հալեպ կեդրոն՝ իր շրջանի մասնաճիղերով):

բ.- Սուրիոյ նահանգային բաժանումի թիւերով: Իւրաքանչիւր «մուսաֆազային» (նահանգի) շրջանին համար առանձին արտօնագիրերով եւ առանձին դիմումներով:


գ.- Սուրիոյ մէջ գործող մեծ ու փոքր բոլոր մասնաճիղերը աշխատիլ առանձին-առանձին վաւերացնել տալ եւ իւրաքանչիւրին անջատ դիմումները կատարել իրենց շրջաններուն մէջ:

Սակայն առաջադրուած ամէն հարց ու տեսակէտ ունէր իրեն յատուկ անպատեհութիւնն ու դժուարութիւնը: Յետ խորհրդակցութեան, կ'որոշուի Սուրիոյ չորս նահանգներու նահանգապետներուն խնդրագիր ներկայացնել եւ ՍՕԽ-ի նոր վաւերացում ձեռք բերել չորս քաղաքներու՝ Հալեպի, Դամասկոսի, Լաթաքիոյ եւ Գամիշլիի համար:

4 Մայիս 1955 թուակիր հրամանագիրով եւ «Մա'արէֆ»-ի թիւ 4552 պաշտօնագիրով Սուրիոյ Կրթութեան Տնօրէնութիւնը կը հրահանգէ գումարել ՍՕԽ-ի ընդ-

29 Այլ խօսքով, պետական նոր օրէնքով աշխատանքէ դադարած պիտի ըլլային բոլոր այն միութիւնները, որոնք մինչեւ 12 Մարտ 1954 թ. ճանաչման նոր առաջարկ չէին ներկայացուցած:

Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի- Հասիչէ:



ՆՍՕՏՏ  
Խորէն Ա. Վեհափառ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ- Անթիլիաս

Հասիչէի Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցոյ նորակառոյց զանգակատանը բացման առթիւ նուէր ի յիշատակ անմոռացութեան:

Ի դիմաց թաղականութեան

Ա. դպիր  
---Երեցեան

Ա. պետ  
Շ. Թումիկեան

27 10 1963



հանուր ժողով է քննարկել վարչություն մը՝ իր «Մա'արիֆ»-ի ներկայացուցիչի ներկայությամբ:

Գամիշլիի պետական վաւերացումի ճշգրիտ անունն է «ալ-Սալիպ լի-  
հյանէթ ալ-Արմէն - Սուրիա ֆի Գամիշլի» (الصليب لإعانة الأيمن في القامشلي):

1958 թ. պետական նոր օրէնքի հիման վրայ միութիւններուն կը թելադրուէր վերատեսութեան ենթարկել իրենց ծրագիրները եւ պատշաճեցնել նոր կանոն-  
ներուն:

1960 թ. Բազգան կը դառնայ առանձին նահանգ («մուհաֆազա»): Բազգայէն  
ետը կարիքը կը զգացուի Հոմսի մասնաճիւղի պետական վաւերացումին: Դա-  
մասկոսի մասնաճիւղը թիւ 132 եւ 12 Դեկտեմբեր 1959 թ. արտօնագիրով կ'ան-  
ուանուի «ճամիէթ ալ-Սալիպ լի-հյանէթ ալ-Արմէն պի Տիմաշկ» جمعية الصليب لإعانة  
الأيمن بدمشق:

Լաթաքիոյ մասնաճիւղը 5.5.1955 թ. եւ թիւը՝ 1021 արտօնագիրով կ'անուանուի  
«ճամիէթ ալ Սալիպ լի-հյանէթ ալ-Արմէն - Սուրիա ալ լազիկիէ» جمعية الصليب لإعانة  
الأيمن اللاذقية:

Վաթսունական թուականներուն տեղական՝ քաղաքական, ընկերային ու  
հասարակական վերիվայրումներն ու ներքաղաքական խռովութիւնները ծանր  
կացութեան կը մատնեն սուրիահայ համայնքը, առաւել ճնշիչ ու անապահով  
կը դարձնէ կեանքը հայ ժողովուրդին: Հետեանքը կ'ըլլայ մեծ թիւով ազգային-  
ներու արտագաղթը դէպի Լիբանան, Երոպա եւ Ամերիկա: Այլ խօսքով՝ հա-  
մայնքի երեւելիներէն ոմանք պարտադրուած կը լքեն Հալէպ եւ ապաստան  
կ'որոնեն այլ երկնակամարներու տակ:

1960-1970 թթ. պետական սահմանափակումներու հետեանքով, կազմա-  
կերպութիւններէն ոմանք դադրած էին գործել պետական ճանաչում չունե-  
նալուն պատճառով, իսկ այլ կազմակերպութիւններ ալ միաւորուելով՝ կը կրէին  
այլ անուններ: ՍՕԽ-ը եւս բաւարարուած էր իր ներքին կեանքով: Հետզհետէ  
դանդաղած ու սառած էին մասնաճիւղերու վարչութեանց յարաբերութիւնները  
Շրջանային վարչութեան հետ եւ մնացած էր միայն բարոյական անուանական  
կապ մը, իսկ յաշտ պետութեան ոչ մէկ վարչութիւն իր սահմանային շրջանէն  
դուրս կրնար կապ հաստատել այլ շրջանի վարչութեան հետ:

Եօթանասունական թուականներու երկրորդ կիսուն երկրէն ներս թէեւ կա-  
ցութիւնը փոխուած էր, բայց միութեան իրավիճակը պիտի շարունակուէր մինչեւ  
համազաղութային առումով ՆՕՄ-ի ծնունդը, որ յանձին Կեդրոնական վարչու-  
թեան իր կարելիութիւնները սպաս դնելով պիտի օժանդակէր ՍՕԽ-ի վերա-  
կանգնումին՝ համաձայն ՆՕՄ-ի կանոնագրային սահմանումին եւ տրամադ-  
րութեանց:

### 3. ՆԱԼԵՊԻ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄԱՐԱՆԸ ԵՒ ՔԵՍԱՊԻ ԿԱԶԴՈՒՐՄԱՆ ԿԱՅԱՆԸ

Պատասպարանի շէնքի հարցը մղձաւանջ էր Շրջանային եւ Քաղաքի մասնա-  
ճիւղի վարչութեանց<sup>30</sup>: 1 Մայիս 1965 թ., Բերիոյ թեմի Առաջնորդ Տ. Ղեւոնդ արք.  
Զեպէյեանի առաջնորդութեամբ եւ տիար Ներսոյեանի ընկերակցութեամբ,  
պատասպարան կ'այցելէ Լիզպոնէն Կիլպէնկեան հիմնարկութեան ներկայացու-  
ցիչ տիար Միհրան Մավրեանը: 26-30 Յունիս 1965 թ. Տիթրոյիթի մէջ գումարուած  
ՆՕՄ-ի 45-րդ պատգամաւորական ժողովը, 1965-1966 տարեշրջանին պատասպա-  
րանի նոր շէնքի գնման կը քուէարկէ 5000 տոլար: 1965 թ. վերջը պատասպարանի  
նոր շէնքի խնդիրը նոր փուլ կը թեւակոխէ<sup>31</sup>:

1965 թ. Դեկտեմբերին, օր. Լէյլա Գարակէօզեան իր պատրաստակամութիւնը  
կը յայտնէ պատասպարանի նոր շէնքի գնման եւ կը տրամադրէ 10.000 տոլար:  
1967 թ. Ապրիլին կը սկսի տան շինութիւնը (նորոգութիւնը)<sup>32</sup>:

1967 թ. Օգոստոսին կը սկսի փոխադրութիւնը: Պաշտօնական բացումը տեղի  
կ'ունենայ 4 Դեկտեմբեր 1967 թ., Սրբազան Հօր Նախագահութեամբ, ներկայու-  
թեամբ Կրօնական ժողովի երկու քահանաներու, ազգային մարմիններու դի-  
ւանի ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ տէր եւ տիկ. Գ. Ներսոյեանի՝ ներկա-  
յացուցիչ Գարակէօզեան հիմնարկութեան<sup>33</sup>:

Օգնութեան խաչը կ'օժտուի նաեւ Կազդորման կայանով Քեսապի մէջ, որու  
պաշտօնական բացումը տեղի կ'ունենայ 1968 թ. Օգոստոսի 25-ին թեմի Առաջ-  
նորդ Տ. Տաթեւ վրդ. Սարգիսեանի հովանաւորութեամբ<sup>34</sup>:

30 Պատասպարանը, ՍՕԽ-ի Հալէպ Քաղաքի մասնաճիւղի վարչութեան յանձնուած է 1940-  
ական թուականներուն: Պատասպարանի ներքին կեանքը կանոնաւոր եղած է, իսկ պատս-  
պարեւներուն թիւը՝ անկայուն, բայց 50-ը չէ անցած՝ տեղի չգոյութեան պատճառով: Պա-  
տասպարանը, որ սկզբնական շրջանին որբանոց մըն էր, 1950-ական թուականներուն կը  
դառնայ Ուսանողական տուն: 1951 թ. հոն կը պատասպարուէին գաւառներէն եկած դպրոցական  
աշակերտներ, արհեստի հետեւող աշակերտներ եւ որբ ու այրի սպասուիներու փոքրիկներ:  
Սակայն Պատասպարանի շէնքը շատ հին էր, եւ սուրիական պետութեան կողմէ չէր թոյլատր-  
ուած նորոգութիւն կատարել: 1954-1955 թթ. կառոյցը վտանգուած էր եւ անել կացութեան մատ-  
նած էր զոյգ վարչութիւնները: Տե՛ս **Ֆիշէնկեան Ա.**, նշ. աշխ., էջ 157, 206-207:

31 Տե՛ս Նոյն տեղը, էջ 223:  
32 Նոյն տեղը, էջ 228:  
33 Նոյն տեղը, էջ 229-230:  
34 Նոյն տեղը, էջ 231-232:



#### 4. ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒՓԻՆ (ՀՄՇՄ)

Համայնքի մշակութային, բարեսիրական եւ կազմակերպական կեանքի մէջ իւրայատուկ տեղ ունեցած է եւս մարզական շարժումը: Ան իր առաջին քայլերը առած է գաղթակայաններու, թաղային ու ծխական դպրոցներու յարկին տակ: «Առողջ մարմին, առողջ միտք» նշանաբանի ներքոյ ան կրցած է իր շուրջ համախմբել հասարակութեան տարբեր տարիքի, հայեացքի, դասակարգի անձեր, թրծել զանոնք ու պատրաստել վաղուան առողջ մարդը իր հայեցի դաստիարակութեամբ եւ նուիրումով:

Մարզական կազմակերպութիւններու մէջ առաւելապէս հրապուրիչ եւ ընդունուած եղած են սպորտի հետեւեալ ձեւերը՝ ոտնագնդակ, «պասքէթպոլ», սեղանի թենիս, հեծելաքշաւ, երբեմն նաեւ՝ թէթեւ ատլետիկան:

Սուրիոյ մէջ մարզական քանի մը կազմակերպութիւններէն երկու հիմնականներն էին՝ Հայ մարմնամարզական ընդհանուր միութիւն (ՀՄՇՄ) եւ Հայ մարմնակրթական միութիւն (ՀՄՄ):

1919-էն Սփիւռքի մէջ գործող Հայ մարմնակրթական ընդհանուր միութիւնը (ՀՄՇՄ), 1939-1940 թուականներուն Սուրիոյ տարածքին մասնաճիւղեր ունէր՝<sup>35</sup>

Վայր	հիմնադրութեան թուական	Վայր	հիմնադրութեան թուական	Վայր	հիմնադրութեան թուական
Հալէպ	Նոյեմբեր 1925	Հոմս	1932	Տէրիք	(1938)
Դամասկոս	Օգոստոս 1925	Թէլ Ապիատ	1932	Տէրսիլի	1936
Լաթաքիա	1926	Ճարապոս	1930, 1934,	Գամիշլի	1931, 1938
Գրոզ Խան	1931	Արաբ Փունար	1935	Տէր Զօր	1937
Անտիոք	1932	Ազեզ	(1934),	Հասիլէ	1934, 1939
Ալեքսանտրէք	1932	Ռաս Ուլ Այն	1935		2

1939 թ., Ալեքսանտրէթի սանճագի Թուրքիոյ կցումով, Սուրիոյ հիւսիս-արեւմտեան շրջանի մասնաճիւղերը՝ Գրոզ Խանի, Ալեքսանտրէթի եւ Անտիոքի ՀՄՇՄ-ի անդամները պարտադրուած կը լքեն շրջանը եւ դիմելով արտագաղթի՝ կը հաստատուին Սուրիոյ եւ Լիբանանի զանազան քաղաքներուն մէջ, որոնք իրենց կարգին մաս կը կազմեն տեղւոյն մասնաճիւղերուն:

Յետպատերազմեան շրջանին՝ 1945-1946 տարիներուն (խօսքը Բ. Աշխարհամարտի մասին է - Ա.Ֆ.) Սուրիոյ շրջանի ՀՄՇՄ-ի մասնաճիւղերու գործունէութեան ընթացքը ամբողջութեամբ կը փոխուի: Սուրիոյ հայաշատ գիւղերուն եւ գիւղաքաղաքներուն մէջ՝ Պանիաս, Րազգա, Թէլ Պրագ, Ամուտա, կը յառաջանան

35 Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան Հալէպի (1925 թ. -Նոյեմբեր) մասնաճիւղը ստեղծուած է Համազասպ, Կայծակ եւ Տալուրիկ միութիւններու միաձուլումով: Իսկ Դամասկոսի մասնաճիւղը՝ (1925 թ. Օգոստոս), Շանթ, Արծիւ եւ Մասիս խումբերէն:  
36 «Գեղարդ», Դ. գիրք, Հալէպ, 1991, էջ 101:

նոր մասնաճիւղեր, մինչդեռ 1946-էն ետք պիտի փակուէին Արաբ Փունարի, Տէրպէսի, Թէլ Ապիատի, Թէլ Հալըքի, Տէրիքի, Թէլ Պրագի եւ Տէր Զօրի մասնաճիւղերը<sup>37</sup>: Ըլլալով մարզական միութիւն՝ սպորտի կողքին իր մէջ կը համապարփակէ արիական խումբեր մարմնական եւ մտաւոր դաստիարակութիւն ջամբելու միտումով:

Մասնաճիւղերու գործը համակարգելու եւ համատեղ գործունէութիւն ծաւելելու առաջադրանքով, 1929 թ. գումարուած Սուրիոյ եւ Լիբանանի ներկայացուցչական անդրանիկ ժողովին կեանքի կը կոչուի ՀՄՇՄ-ի «Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանային վարչութիւն»-ը: 1937 թ. Պաղեստինի եւ 1946 թ. Անդրյորդանանեան վարչութեանց միացումով կ'առաջանայ «Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի եւ Անդրյորդանանի Շրջանային Վարչութիւն»՝ կազմին մէջ ներառնելով տուեալ երկիրներու մասնաճիւղերու ներկայացուցիչները<sup>38</sup>:

Վաթսունական թուականին, ԺԵ. ներկայացուցչական ժողովին կը վերանուանուի «Մերձաւոր Արեւելքի Շրջանային վարչութիւն», իսկ 1971 թ.՝ ՀՄՇՄ-ի Շրջանային վարչութիւն<sup>39</sup>:

Շրջանային վարչութիւնը մասնաճիւղերէն ներս սկաուտական շարժում ստեղծելու եւ կարող խմբապետներ պատրաստելու միտումով, 1940 թ. Դեկտեմբերին կայացած Զ. պատգամաւորական ժողովի որոշումով կ'առաջացնէ նշանակովի Շրջանային Սկաուտական շարժում<sup>40</sup>:

Դամասկոսը, որ ՀՄՇՄ-ի Սուրիոյ շրջանի երիցագոյն մասնաճիւղն էր, 1940-ական թուականներուն պատերազմի յարուցած դժուարութիւններուն հետեւանքով եւ անդամներուն շրջանէն հեռանալուն պատճառով, ֆուլթպոլի խումբը կը տկարանայ եւ կը փորձեն Լիբանանէն հրաւիրել ֆուլթպոլիստներ, սակայն կը հանդիպին խոչընդոտներու:

Մասնաճիւղը 1940-1942 տարիներուն նոր յաջողութիւններ չ'արձանագրեր: Բայց տարի մը ետք՝ 1943 թ., Սուրիոյ անջատումով ֆրանսական հոգատարութենէն եւ անկախացումով ու նոր օրինականացումներու պատշաճեցումով նոր նուաճումներ կ'արձանագրէ:

1948 թ. կ'օժտուի պասքէթպոլի տղոց եւ աղջկանց կազմերով, իսկ 1950 թ.՝ մասնաճիւղը արդէն ունէր՝ ֆուլթպոլի, պասքէթպոլի, վոլիպոլի եւ փինկ փոնկի խումբեր:

1950-ական թուականներու սկիզբը, պետութեան կողմէ մարզական ակումբ-

37 **Թորիկեան Բ.**, Պատմութիւն հայ մարմնակրթական ընդհանուր միութիւն 1940-1974, հ. Բ., Պէյրութ, 1999, էջ 367-393:  
38 **Թորիկեան Բ.**, նշ., աշխ., էջ 331:  
39 Նոյն տեղը:  
40 Նոյն տեղը, էջ 367, 369:



ներու սահմանափակման հարցը մեծ տաղտուկ կը ստեղծէ համայնքի կեանքէն ներս: Համայնքի առաջնորդներն ու ազգային պատասխանատու մարդիկ կը դիմեն բոլոր միջոցներու պետական նոր վաւերացումի ձեռքբերման համար: Պետական մակարդակով բանակցութիւնները ետք միայն կը յաջողին իրականացնել պետական արտօնագիրի վաւերացում D\3764 թուահամարով: 1954 թ. մասնաճիւղի պետական ճանաչման արտօնագիրը անգամ մը եւս փոփոխութեան կ'ենթարկուի, 24 Նոյեմբեր 1954 թ., թիւ 1682 համարով:

Բոլոր մասնաճիւղերն ալ ունեցած են կեդրոնատեղիներ: 1958 թ. ունենալով մնայուն կեդրոն՝ Դամասկոսի մասնաճիւղի վարչութեան կողքին կ'առաջանան մարզական՝ ֆութպոլի, պասքէթպոլի, վոլիպոլի, փինկ փոնկի, հեծելարշաւի օժանդակ յանձնախումբեր:

1931 թ. սկսած մասնաճիւղի սկաուտական գործունեութիւնը իրարայաջորդ սկաուտական խորհուրդներու կողմէ կը շարունակուի նոյն թափով:

Սուրիոյ գլխաւոր մասնաճիւղը՝ Հալէպը, շրջանցելով քառասունական թուականներուն ստեղծուած քաղաքական ու տնտեսական անբարենպաստ պայմանները, շարունակած է կազմակերպչական, մարզական եւ սկաուտական գործունեութիւնը: 1940 թ. կը հաշուէր 550 անդամ:

1940-1949 թուականներուն մասնաճիւղի ֆութպոլի խումբը դարձած է Սուրիոյ ախոյեան:

1942 թ. զօրավար Շարլ Տը Կոլի՝ Հալէպի Նոր Գիւղ շրջանի այցելութեան առթիւ մասնաճիւղը յատուկ դաշտահանդէս կը կազմակերպէ:

1941 թ. ունեցած է 600 անդամ: 1949 թ. մասնաճիւղը հիւրընկալած է միջ մասնաճիւղային ողոմպիական խաղեր: Մասնաճիւղի նուաճումներէն էր մարմնամշակ Լեւոն Նիմիտեանի մասնակցութիւնը Լոնտոնի մէջ կայացած մարմնամշակներու միջազգային մրցոյթին:

1952 թ. Սուրիոյ բոլոր մարզական ու մշակութային միութիւններու առաջ կը դրուի նոր խնդիր: ՀՄԸՄ-ի Սուրիոյ բոլոր մասնաճիւղերը իրենց գործունեութիւնը պետական նոր օրէնքներուն համապատասխան դասաւորումի ենթարկելու դժուարութեան առաջ կանգնած էր: Այս հարցը լուծելով մասնաճիւղը հարկ կը համարէ արաբերէն լեզուով ժողովական արձանագրութիւններ պահել, որուն համար վարչական կազմերէն ներս կ'որոշէ ստեղծել «արաբերէնի քարտուղար»:

1957 թ., պետական նոր վաւերացումով մասնաճիւղը կը կոչուի «Նէտի Սուրի Րիատի» (Սուրիական մարզական ակումբ): Ունէր 880 անդամ (100 օժանդակ, 330 մարզիկ, 300 սկաուտ եւ 150 գայլիկ): Մասնաճիւղէն ներս գործած են ֆութպոլի 8 երկրորդական խումբեր՝ Սկաուտ Պատուոյ Առաջին, Նաւասարդ, Անդրանիկ, Համազասպ, Վրէժ, Մուրատ, Շաւարշ Քրիսեան եւ Քեռի, որոնք կը կազմակերպէին ՀՄԸՄ-ի «Վահան»-ի տարեկան մրցաշարը:

Վաթսունական թուականներու սկիզբը Սուրիոյ քաղաքական իրավիճակի բարդացման պատճառով մասնաճիւղը կը բաւարարուի ընթացիկ աշխատանքներով եւ իր մասնակցութիւնը կը բերէ միայն պետական դաշնութեան ծրագիրին մասնակցելով:

Հալէպի սկաուտական բաժինը ի սկզբանէ յառաջդիմութիւն արձանագրած է: 1944 թ. շարքերը կը համալրուին՝ գայլիկ, սկաուտ եւ երէցներու բաժիններով ու կը կազմակերպուի տարազներու ճոխ մթերանոց: Անդամներու թիւի ստուարացման շնորհիւ մասնաճիւղը կ'օժտուի Քաղաքի եւ Նոր Գիւղի բաժիններով, ինչպէս նաեւ սկաուտական նուագախումբով, որոնք 1946 թ., Սուրիոյ Արաբական Հանրապետութեան Նախագահի այցելութեան առթիւ կազմակերպուած տողանցքին իրենց մասնակցութիւնը կը բերեն: 1950 թ. Ապրիլին Սկաուտական շարժման հիմնադիր զօրավար՝ Պէյտըն Փաուըլի ներկայացուցիչ զնդապետ Ուիլսըն կ'այցելէ Հալէպ, որուն պատուին կազմակերպուած բանակումին Հալէպի մասնաճիւղը կ'արժանանայ լաւագոյն խումբի տիտղոսին:

Ազգապատկան հողաշերտ մը ապահովելու համար երկար բանակցութիւններէ ետք միայն, 1957 թ. կը յաջողի տարածքը ունենալ, որուն իրաւատէրը Ազգային Առաջնորդարանն էր:

1940-ական թուականներուն կը վերաշխուժանայ Լաթաքիոյ մասնաճիւղի՝ մարզական, սկաուտական գործունեութիւնը: 1950 թ. մասնաճիւղը ունէր 120 անդամ՝ 10 գայլիկ, 30 սկաուտ, 25 մարզիկ, 55 օժանդակ:

1951 թ. պետական սահամափակման պատճառով կ'անուանուի «Նէտի Սուրի Րիատի», իսկ 1953 թ. ձեռք կը բերէ պետական նոր արտօնագիր՝ 15 Յուլիս 1953 թ. թուակիր 01226 հրամանագիրով եւ կը ճանչցուի «Նէտի Շարք ալ-Րիատի» անունով, պետութեան մօտ ներկայացուցիչ կը նշանակուի բժ. Մելքոն Էպլի-դաթեանը: Շուրջ մէկ տասնամեակ, 1957-1967 թթ. մասնաճիւղը կ'ունենայ բեղուն գործունեութիւն՝ հակառակ տիրող կացութեան: Սակայն 1967 թ. արաբ-իսրայէլեան պատերազմը պատճառ պիտի դառնար մասնաճիւղի անդամներու նուազեցման, գործի հանդէպ հետաքրքրութեան պակասի եւ պետական նպաստի դադարեցումին:

1968 թ. մասնաճիւղը կը հաշուէր 100 անդամ. Սկաուտական խումբ չունէր:

Բ. Աշխարհամարտի սկիզբը դադրած էր նաեւ Նոմսի մասնաճիւղի գործունեութիւնը: 1944 թ. կը վերաշխուժանայ շնորհիւ ֆութպոլի եւ սկաուտական խումբերուն: Սակայն երկրի անձուկ պայմաններն ու պետական նոր արտօնագիրի վաւերացման գործընթացը, վեց ամիսով մասնաճիւղը պիտի դադարէր գործելէն: 1955 թ. նոր արտօնագիրով մասնաճիւղը կը կոչուի «Նէտի Նըճմէ Րիատի»:



1957 թ. քարիտի ընկերության շումսեն Պանիաս փոխադրուելով մասնաճիղի չՄՄՄ-ականներեն շատեր կը լքեն քաղաքը եւ Պանիաս փոխադրուելով՝ Նոր կեանք կը սկսին այնտեղ:

1958-1961 թթ., Սուրիա-Եգիպտոս Միացեալ Արաբական Նանրապետութեան տարիներուն, մասնաճիղը Նոր արգելներու առաջ կը կանգնի եւ անոր գոյութիւնը կը դառնայ սոսկ անուանական:

Սուրիոյ հիախս-արեւելեան կողմը գտնուող Ճէզիրէ անունով տարածքը երկրի կարեւորագոյն նահանգներեն էր: Այդտեղ 1933 թ. հիմնադրուած էր Գամիշլիի մասնաճիղը եւ պաշտօնապէս վաւերացուած՝ 1939 թ.: 1946 թ. կ'ունենայ իր սեփական ակումբը: Սակայն մեծ դժուարութեամբ ձեռք կը բերէ պետական վաւերացում: Մասնաճիղը կրթական նախարարութենէն 21 Յուլիս 1957 թ. թուակիր թիւ 794 արտօնագիրով կ'անուանուի «Նէտի Գամիշլի Րիատի»: Նաղորդուած տեղեկութիւններուն համաձայն, 1957 թ. մասնաճիղի թուական պատկերը հետեւեալն էր՝ 60 սկաւտ, 25 մարզիկ եւ 142 օժանդակ անդամ. ընդամենը 227 անդամ: Մասնաճիղը կիրառած մարզական զանազան ճիւղերու կողքին կը զարգացնէ նաեւ թատերական գործունէութիւնը՝ թատերախաղեր ներկայացնելով:

1963 թ. Գամիշլիի մասնաճիղը կը միացուի («Նէտի (ակումբ) Արապին») եւ որպէս մէկ կազմակերպութիւն կը գործեն «Նէտի Թալիա» անուան տակ: Իսկ սկաւտական բաժինը վարժարանի թաղականութեան հովանաւորութեան տակ կը գործէ իբրեւ Ազգային վարժարանի ենթակայ միաւոր<sup>41</sup>:

Ռաս Ուլ Այնի մասնաճիղը 1940-1947 թուականներուն սկիզբը պատերազմի եւ 1946 թ. ներգաղթի պատճառով ոչ մէկ գործունէութիւն կ'արձանագրէ: 1947 թ.-էն ետք կը գործէ որպէս «Նէտի Ալաապ Րիատի» անունով: Յետագայ տարիներուն կ'արձանագրէ անդամներու թուական աճ, բայց չի կրնար իրականացնել ակումբի շինութեան ծրագիրը:

1961 թ. մասնաճիղի գործունէութիւնը կը դադրի:

Հասիչէի չՄՄՄ-ի մասնաճիղը եւս կ'ազդուի երկրեն ներս տիրող իրավիճակէն: Հազի վերակազմակերպուած՝ 1948 թ. կը ծրագրէ ակումբի շինութեան: Ստացած հողաշերտին վրայ շինարարական աշխատանքը կիսաարտ կը մնայ: 1951 թ. պետութեան կողմէ քայլեր կը ձեռնարկուին կառուցել սեփականացնելու, բայց Հալէպի վարչութեան շնորհիւ կ'արձագանգեն՝ Շրջանային վարչութիւնը, Հալէպի ՍՕԽ-ի եւ չՄՄՄ-ի մասնաճիղերը:

Պետական սահմանած օրէնքին համաձայն Հասիչէի մասնաճիղը կը վերանուանուի «Նէտի Քաուքապ»-ի (մուլրակի ակումբ): 1955 թ. մարզական

բաժնի կողքին կ'աշխուժանայ սկաւտական կազմի գործունէութիւնը:

1961 թ. եւ հայ անդամներուն պակասը, եւ քաղաքականօրէն մարզական ակումբներուն պարտադրուած օրէնքը պիտի կասեցնէր մասնաճիղի գործունէութիւնը:

Երեսունական թուականներուն կազմուած Ճարապլուսի մասնաճիղը միայն 1949 թ. կը վերագտնէ ինքզինք: Սակայն յաջող կերպով գործը չի կրնար առաջ տանիլ եւ 1956 թ. կը դադրի գոյութիւն ունենալէ:

Ազգի մասնաճիղը եւս քառասունական թուականներուն սկիզբը կազմալուծուած էր: 1944 թ. մասնաճիղը վերականգնելու ճիգերը ապարդիւն կը դառնան, բայց Սկաւտական շարժումը թուական աճ կ'արձանագրէ: Իսկ 1957 թ. մասնաճիղը կը դադրի գործելէն<sup>42</sup>:

Արաբ Փունարի մասնաճիղը պետական արգելքով ժամանակատրապէս փակ կը մնայ: 1946 թ. ֆութպոլի խումբին կողքին կ'օժտուի սկաւտական շարքով: 1951 թ. Սուրիոյ չՄՄՄ-ի Շրջանային վարչութիւնը կը վաւերացնէ Նորընտիր վարչութիւնը եւ պետական արտօնագիրով մասնաճիղը կ'անուանուի «Նէտի Այն ալ-Արաբ»: Մարզական գործունէութեան առընթեր մասնաճիղը կը նախաձեռնէ նաեւ ազգային եւ մշակութային գործունէութիւն:

Պանիասաբնակ խումբ մը երիտասարդներու նախաձեռնութեամբ 26 Նոյեմբեր 1951 թ. Պանիասի մէջ կեանքի կը կոչուի մարզական միութիւն եւ ֆութպոլի խումբ մը: չՄՄՄ-ի Շրջանային վարչութեան կողմէ պաշտօնապէս կը վաւերացուի 1952 թ. Ապրիլին եւ կը դառնայ մասնաճիղերէն մէկը: Նոյն թուականին մասնաճիղը կը ստանայ պետական վաւերացում թիւ 2911, 28 Օգոստոս 1952 թուակիր հրամանագիրով՝ կ'անուանուի «Նէտի Սուրի Լիալաապ Րիատի»: Պանիասի մէջ գործող միակ հայ կազմակերպութեան գործը կը դադրի 1957 թ. քաղաքական եւ այլ պատճառներով:

չՄՄՄ-ը ունեցած է ընդհանուր ծրագիր-կանոնագիր: Բացի սկաւտական ու մարզական գործունէութենէն, միութիւնը 1946 թ. Հալէպի մէջ հրատարակած է «Հայ Սկաւտիս» գիրքը: 1957 թ.-էն մինչեւ 1963 թ. Մարտ լոյս ընծայած է «Արեւիք մարզաշխարհ», որպէս շաբաթական յաւելում «Արեւիք» օրաթերթին Զաւէն Սապունճեանի պատասխանատու խմբագրութեամբ:

1 Յունուար 1965 թ. Հալէպի մէջ կը հրատարակուի «Սկաւտիս ձայնը» երկշաբաթաթերթը<sup>43</sup>:

41 Թորիկեան Բ., նշ. աշխ., էջ 202:

42 Նոյն տեղը, էջ 208:

43 Նոյն տեղը, էջ 223, 392:



**ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՈՒՔԱԼՆԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՀՄՇՄ-Ի (1958 թ. ՏԱՐԵՇՐՁԱՆԻՆ)**

Մասնաճիղ Ստրիա	Մարզիկ	Սկաուտ	Գայլիկ	Արենոյշ	Օժանդակ անդամ	ԸՆդի. թիւ
Ամուտա	37	-	-	-	-	37
Արաբ Փունար	46	-	-	-	76	122
Գամիշլի	75	125	25	56	105	386
Դամասկոս	98	47	32	-	68	245
Թէլ Ապիատ	26	25	9	-	15	75
Թէլ Պրագ	12	-	-	-	6	18
Լաթաքիա	110	-	-	-	60	170
Հալէպ	560	300	150	-	100	1.110
Հասիչէ	42	18	12	-	18	90
Հոմս	31	-	-	-	26	57
Տէր Ջօր	13	25	-	-	12	50
Տէրիք	13	25	-	-	30	68
Տէրպէսիէ	24	-	-	-	15	39
Բագաա	15	15	-	-	20	50
Ռաս Ռվ Այն	29	12	14	16	5	76
ԸՆդի. գումար	1.131	592	242	72	556	2.593

**5. ՀԱՅ ՄԱՐՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ<sup>44</sup> (ՀՄՄ)**

Հիմնադրուած է 1920-1921 թթ. եւ անուանուած «Արարատ», հիմնական նպատակը եղած է հայրենասէր անձեր պատրաստել հայրենիքի համար: Միութիւնը ֆրանսական հոգատար իշխանութեան (մանդատի) տարիներուն խիստ հալածանքներու կ'ենթարկուի, բայց եւ այնպէս 1928 թ. կ'ունենայ իր մասնաճիղը Դամասկոսի մէջ՝ «Տալտրիկ» Հայ մարմնամարզական միութիւն անունով: 1935 թ. երեք միութիւններու համախմբումով կը վերանուանուի ՀՄՄ: Հնչակեաններու հովանաւորութիւնը վայելող մարզական միութիւնը ունեցած է ոտնազնդակի եւ պասքեթպոլի խումբեր, սկաուտական կազմակերպութիւն: Սերտ եղած են կապերը Հայաստանի հետ:

44 Արիւններու անհասանելիութեան պատճառով չենք կրցած ամբողջական համարել:

**6. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ (ՀՆԿՄԸ)**

1930 թ. կիսուն արդէն կազմուած էր Համազգայինի Հալէպի մասնաճիղը (Փետրուար), Ն. Աղբալեանի թելադրութեամբ: Ան Հալէպի մէջ կը կատարէ հրապարակային բանախօսութիւններ, որոնց ընթացքին հալէպահայութեան կը պարզէ Նոր ընկերութեան նպատակը, կատարուելիք կազմակերպչական աշխատանքն ու գործելաձեւի եղանակը: Կը կատարէ մասնաւոր խորհրդակցութիւններ Հալէպի Հայ Երիտասարդաց Միութեան (ՀԵՄ, հիմնուած՝ 1926 թ.) ղեկավարներուն հետ՝ պարարտ հող ստեղծելով Համազգայինի:

Ն. Աղբալեան Հալէպէն դարձին Կեդրոնական վարչութեան տուած իր զեկոյցով հալէպահայութեան ջերմ ընդունելութիւնը եւ անոնց պատրաստակամութիւնը կը յայտնէ՝ օժանդակելու Համազգայինի առաքելութեան:

1930-ական թուականներուն դրամատիրական երկիրները կ'ապրին համաշխարհային տնտեսական ճգնաժամ: Այս իրավիճակը սուր բնոյթ կը ստանայ 30-ականի աւարտին եւ պատճառ կը դառնայ Բ. Աշխարհամարտի բռնկումին: Արդիւնաբերութիւնը, որ տնտեսութեան կարեւոր բնագաւառներէն մէկն էր, առաւել հարուած կը ստանայ այն երկիրներու մէջ, որոնք կ'ապրէին ֆրանսական մանդատի տակ:

1933 թ.-էն մինչեւ 1945 թ. Համազգայինի մշակութային գործունեութիւնը կանգ կ'առնէ: Բայց եւ այնպէս կարգ մը համազգայնականներ երբեմն առանձին, երբեմն ալ ՀԵՄ-ի, ՀՈՄ-ի (Հալէպահայ Ուսանողական Միութիւն) եւ ՀՄԸՄ-ի հետ համագործակցաբար կը կազմակերպեն աննախընթաց ձեռնարկներ, յատկապէս Անդրանիկ Ծառուկեանի եւ Եղուարդ Տասնապետեանի ջանքերով<sup>45</sup>:

1941-1943 թթ. Անդրանիկ Ծառուկեան կը կազմակերպէ «Մտքի երեկոներ»: 1943 թ. Եղուարդ Տասնապետեան իր բանախօսութիւններով հանդէս կու գայ հալէպահայ հասարակութեան: 1946 թ. Համազգայինի անդամները իրենց մասնակցութիւնը կը բերեն Սայաթ-Նովայի նուիրուած տօնակատարութեան՝ գեղարուեստական բաժինով: Նոյն տարուան Մայիսի 1-ին Համազգայինի տղաքը կը կազմակերպեն Յակոբ Օշականի գրական գործունեութեան 40-ամեակի յրբեւե՛նական հանդիսութիւնը՝ նախաձեռնութեամբ Ազգ. իշխանութեան եւ նախագահութեամբ Տ. Զարեհ ծ. վրդ.-ին (յետագային՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս)<sup>46</sup>:

Քննարկուող ժամանակահատուածի երկրորդ կիսուն, հալէպահայ թատե-

45 **Սապունճեան Զ.**, Համազգային հայ մշակութային ու կրթական ընկերակցութեան Հալէպի մասնաճիղի կէս դարու պատմութիւն, «Գեղարդ», Գ. գիրք, Հալէպ, 1985, էջ 468:

46 **Սապունճեան Զ.**, Նոյն տեղը:



րական կեանքը կ'աշխուժանար: Թատերական աշխուժացման առաել իրենց մասնակցությունը կը բերեն Համազգայինի անդամները:

Յիսուսական թուականներու սկիզբը փորձեր կը կատարուին Համազգայինը վերակազմելու, որ 1954 թ. յաջողութեամբ կը պսակուին: Առաջին գործը կ'ըլլայ կազմակերպչական աշխատանք տանիլ. կը վերսկսի անդամահաւաքը: Կ'անդամակցին Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի եւ Ազգ. վարժարաններու ուսուցչական կազմերը, Հալէպահայ Ուսանողական Միութեան (ՀՈՄ) եւ Համազգայինի Նախկին անդամները, մեծ մասամբ՝ արուեստասէր եւ գրասէր հասարակութիւնը<sup>47</sup>:

Դժբախտաբար, օրուան տիրող քաղաքական պայմանները անգամ մը եւս կու գան Համազգայինի եռուն գործունէութիւնը խափանելու: Վերջապէս, 1959 թ. կը վերակազմուի Համազգայինը եւ անգամ մը եւս զարկ կը տրուի մշակութային գործունէութեան<sup>48</sup>:

1960 թ. սկիզբը հալէպահայ Ուսանողական Միութեան (ՀՈՄ) հետ միասնաբար կը կազմեն երգչախումբ մը, որ յաջող ելոյթներ կ'ունենայ Հալէպի եւ Պէյրութի մէջ ղեկավարութեամբ Ռաֆֆի Սվաճեանի: Կը կազմակերպեն գրական եւ թատերական երեկոներ, ուր քննարկումներով եւ դասախօսութիւններով հանդէս կու գան գրական վաստակ ունեցող մտաւորականներ: 1960 թ. վերջաւորութեան կը վերակազմուի Համազգայինի Հալէպի թատերախումբը եւ կ'ունենայ իր յաջող ելոյթները<sup>49</sup>:

1960 թ. շնկտեմբերին վերակազմուած Համազգայինի Հալէպի մասնաճիւղի յաջորդ վարչութիւնը կը կազմուի կրկին Պարգեւ Միսիրեանի ատենապետութեամբ: Այս վարչութիւնը, հաւատարիմ Համազգայինի առաքելութեան, Նախորդներու Նման կը ծրագրէ մշակութային աշխատանքներու:

Երաժշտասէր համազգայնականներու համեստ ու ջերմ փափաքին համաձայն 1962 թ. Յովիսին Նորընտիր վարչութեան առաջին գործը կ'ըլլայ իրականացնել եւ ստեղծել մնայուն երգչախումբ մը, ղեկավարութեամբ Գեորգ Գանտահարեանի: Նոյն տարին Համազգայինի Սուրիոյ շրջանը կ'ունենայ իր վերամշակելու կանոնագիրը: Կը բարելաւուի մասնաճիւղի վիճակը՝ անդամներուն թիւը 70-էն - 145-ի բարձրանալով:

Այս շրջանի վարչութեան կազմակերպչական ամենէն յատկանշական աշխատանքներէն էր Հայ Գիրի ու Դպրութեան հիմնադիրի՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600-ամեակին նուիրուած տօնակատարութիւնը, որուն համար

47 Նոյն տեղը, էջ 469:

48 Նոյն տեղը, էջ 470:

49 Նոյն տեղը, էջ 471:

Մեծի Տանն Կիլիկիոյ միաբաններէն Տ. Արտաւազդ վրդ. Թրթռեանը (յետագային՝ արքեպիսոպոս) կը հրաւիրուի որպէս բանախօս: Նոյն շրջանին կը կազմակերպուի երաժշտական եւ թատերական մտքի երեկոներ, ընկերային հաւաքոյթներ եւ այլ բնագաւառներէ ներս կը տանին կազմակերպչական աշխատանքներ:

1964 թ. Նոյեմբերի Նորընտիր վարչութեան գլխաւոր նուաճումներէն էր կահաւորել տուն-կեդրոնատեղի «Մարտիկեան» սրահը եւ վերակազմել Հալէպահայ Ուսանողական Միութիւնը, որ 1966 թ. պիտի անցնէր Համազգայինի հովանիին տակ: Նոյն թուականին կը վերամշակուի Համազգայինի Սուրիոյ շրջանի կանոնագիրը<sup>50</sup>:

Ողջ վաթսուսական թուականներուն մթազնած էր Սուրիոյ երկինքը: Ստեղծուած քաղաքական, տնտեսական եւ ընկերային հարցերը անբարենպաստ պայմաններ ստեղծած էին կրթական եւ մշակութային ոլորտներէ ներս: Բայց եւ այնպէս 10 Դեկտեմբեր 1967 թ. կեանքի կոչուած Համազգայինի վերակազմելու վարչութիւնը կը յաջողի յառաջացնել Համազգայինի երգի ու պարի նոր խումբ մը՝ զեղարուեստական ղեկավարութեամբ Յովսէփ Նաճարեանի: Խումբը ելոյթներ կ'ունենայ Սուրիոյ զանազան շրջաններուն մէջ ի նպաստ Պաղեստինի ազատագրական շարժման<sup>51</sup>:

1950-ականի վերջի եւ 1960-ական թուականներուն Հալէպի մէջ նկարչութեան հանդէպ լայն հետաքրքրութիւն մը սկսած էր ձեւաւորուիլ հետզհետէ: Արդէն, 1955 թ. -էն սկսեալ կը գործէր «Սարեան» ակադեմիան (նկարչական արուեստանոցը), որով շնորհալի երեխաներու համար յոյժ կարեւոր դարձած էր գծագրական արուեստանոցի գոյութիւնը:

Համազգայինը եւս առաջնահերթ նկատելով մանկապատանիներու զեղարուեստական կրթութեան անհրաժեշտութիւնը եւ զեղարուեստի վարժարան մը հիմնելու տեսլականով՝ իր շուրջ կը հաւաքէ արուեստասէր անդամներն ու համակիրները եւ ծրագիրը կ'իրականացուի:

1970 թ. հիմը կը դրուի կերպարուեստի ակադեմիային, ղեկավարութեամբ Սուրէն Երեցեանի «Մարտիկեան» սրահին մէջ: 1976 թ. արուեստանոցը կը փոխադրուի «Տիգրանեան» շէնք (Նոր գիւղ), Զաւեն Պարտազճեանի ղեկավարութեամբ<sup>52</sup>:

Դամասկոսի «Լ. Շանթ» մասնաճիւղը հիմնուած է 1952 թ., կը հաշուէր 197 անդամ: Մասնաճիւղը իր անդամներուն հետ համատեղ տարած է մշակութային

50 Սապունճեան Զ., Նշ. աշխ., էջ 473:

51 Նոյն տեղը:

52 Նոյն տեղը, էջ 474:



աշխատանք: Արդիւնաւետ գործունեութեան կողքին յառաջացուցած էր յանձնախումբեր, որոնք իրենց կարգին մինչ օրս ուշագրաւ դեր կը կատարեն վարչութեան կողքին: «Լ. Շանթ» մասնաճիւղը կը գործէ հայկական ակումբէն ներս եւ ունի պետական ճանաչում:

Համալսարանականներու յանձնախումբի կողքին գործած են նաեւ երիտասարդական, երգչախումբի, թատերական եւ արխիւային յանձնախումբեր, որոնք իրենց մասնակցութիւնը բերած են ձեռնարկներու յաջողութեան եւ կազմակերպած՝ դասախօսական եւ գեղարուեստական երեկոներ: Մասնաճիւղը կազմակերպած է Մարտ 8-ի յեղափոխութեան տարեդարձին նուիրուած հանդիսութիւններ, Թարգմանչաց եւ Վարդանանց տօներու, Ապրիլ 24-ի եւ Մայիս 28-ի նուիրուած հրապարակային ձեռնարկներ, թատերական ներկայացումներ, դասախօսական երեկոներ, երգահանդեսներ, զծագրութեան դասընթացքներ եւ ցուցահանդեսներ:

Պետականօրէն վաւերացուած միութիւն ըլլալու հանգամանքը ունենալով՝ յարատեւ կապի մէջ եղած է ընկերային հարցերու եւ աշխատանքի նախարարութեան հետ: Գումարած է պետական ժողովներ եւ իր գործունեութեան պատկերը ցոլացուցած արաբական մամուլի միջոցով: Ապահոված է քոյր միութիւններու ձեռնարկներու պետական արտօնագիրերը: Օժանդակած է Ազգային Միացեալ վարժարանին՝ յատկացնելով տարեկան իր կրթանպաստը: Համագործակցաբար համայնքի քոյր միութիւններուն կազմակերպած է տօնական օրերու յատուկ խրախճանքներ:

Հայ Երիտասարդաց Միութիւնը (ՉԵՄ), Համազգայինի Սուրիոյ շրջանի Պատգամաւորական Բ. ժողովի (Յուլիս 1988 թ.) որոշմամբ 1989-ին կ'անցնի Համազգայինի հովանաւորութեան տակ:

Չ.Ե.Մ.-ի վարչութիւնը գործած է Թիլէլի պատմական ակումբէն ներս: Ունի պետական ճանաչում եւ կ'ապահովէ Համազգայինի եւ քոյր միութեանց կազմակերպութեամբ կայացած ձեռնարկներու արտօնագիրները:

Մասնաճիւղը գործունեութիւնը կը շարունակէ շնորհիւ իր՝ գրական, տիկնանց, ընկերային, կեդրոնատեղիի, «Ռազմիկ» մանկապատանեկան թատերախումբի յանձնախումբերուն:

Լաթաքիոյ «Վ. Նաասարդեան» մասնաճիւղը հիմնուած է 1930-ական թուականներու կէտերուն: Մասնաճիւղը պետական արտօնագիրով 26 Դեկտեմբեր 1965 թ., /834/ թուահամարով պաշտօնապէս կը ճանչցուի եւ կը հրապարակուի Սուրիոյ պետական պաշտօնաթերթի թիւ 3, 20 Յունուար 1966 թ. համարին<sup>53</sup>:

53 Տեղեկագիր Համազգայինի Լաթաքիոյ մասնաճիւղին, «Համազգայինը Լաթաքիոյ մէջ», 31-8-1965, Լաթաքիա, էջ 1:

Մասնաճիւղի վարչութիւնները ունեցած են աշխոյժ գործունեութիւն: Կազմակերպած են դասախօսական երեկոներ, գիրքերու ցուցահանդեսներ, դաշնամուրի դասընթացքներ, թատերական ներկայացումներ, ընկերային հաւաքներ: Հիւրընկալած են Հալէպի «Զուարթնոց» երգչախումբը, «Սարդարապատ» պարախումբը, «Զաւարեան» թատերախումբը եւ այլազան հայրենի արուեստի խումբեր, արուեստագետներ եւ հայրենի մտաւորականներ: Մասնակցութիւն բերած են ազգային թէ պետական տօներու նուիրուած հրապարակային հանդիսութեանց, համայնքի կազմակերպած այլազան տօնակատարութիւններուն ու սգահանդեսներուն: Յաջողութեամբ իրագործած է հայերէն լեզուի դասընթացք՝ տարրական մակարդակով: Իրագործած է միջնակարգի աշակերտութեան յատուկ անգլերէն լեզուի եւ ընկերային գիտութիւններու ուսուցման դասընթացքներ մասնագետ ուսուցիչներու կողմէ:

Գամիշլիի Համազգայինի «Ա. Ահարոնեան» մասնաճիւղը հիմնուած է 1978 թ.: Կը գործէ ՆՄԸՄ-ի ակումբէն ներս՝ գործակցելով տեղւոյն Թաղական խորհուրդին եւ հոգաբարձութեան հետ: Իր 92 անդամներով տարած է արդիւնաւետ աշխատանք, գրադարանի, դաստիարակչական եւ ընկերային յանձնախումբերու միահամուռ ջանքերով: Աւելի ուշ պիտի հիմնուէր Քեսապի «Չ. Օհանջանեան» մասնաճիւղը 1988 թ.:

### 7. ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ (ՆԵՐ)

Ամերիկեան Նպաստամատոյցի որոշումով ու առաջարկով, 1930 թ. Լիկայի ընդհ. ղեկավարութիւնն ու խնամակալութիւնը յանձնուած էր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս ՆՍՕՏՏ Բաբգէն Կիլիսեբեան արժեւորելով եւ կարեւորելով երիտասարդութեան դերը Սփիւռքի մէջ եւ անոնց հնարատր պայմաններ ստեղծելու մտադրութեամբ, 1 Յունիս 1931 թ. գումարուած ժողովի ընթացքին կը վերանուանէ Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն:

ՆԵՐ-ի Հալէպի առաջին գործադիր մարմինը կը կազմուի 1932 թ. Դեկտեմբերի 18-ին նախագահութեամբ Բերիոյ թեմի առաջնորդ՝ Տ. Արտաւազդ եպս. Սիրմեանի: Սակայն Էդուարդ Մելքոնեան իր գիրքին մէջ Հալէպի ՆԵՐ-ի կազմութեան թուականը կը յիշատակէ 1931 Օգոստոս ամիսը. «1931 թ. օգոստոսին Հալէպում կազմվեց Գործադիր մարմին՝ Սիրիայի տարածքում ՆԵՐ-ի մասնաճյուղերի գործունեությունը վարելու նպատակով»<sup>54</sup>: Մեծ հաւանականութեամբ

54 Տես Մելքոնյան Է. Լ., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն ՀԲԸՄ, Երևան, 2005, էջ 387:



ՀԵԸ-ը Հալեպի կուսակալութեան կողմէ ազատ գործելու իրատունք ստանալէ ետք միայն, որ Նոյն թուականի Նոյեմբերին էր, պաշտօնական բնոյթ կրեց եւ սկսաւ ազատ գործել<sup>55</sup>:

1933 թ., ՀԲԸՄ-ը ընդառաջելով Վեհափառի կոչին կը հովանաւորէ երիտաւարդ կազմակերպութիւնը եւ կ'օժանդակէ նիւթապէս եւ բարոյապէս:

Յաջորդաբար ՀԵԸ-ի մասնաճիւղեր կեանքի կը կոչուին այն շրջաններուն մէջ, ուր կային ՀԲԸՄիութեան կառոյցներ՝ դպրոց կամ մասնաճիւղ: Այսպէս՝ Ալեքսանտրէթի սանճագ (1931-1932 թ.), Արաբ Փունար (1932 թ.), Ճարապլուս (1934 թ.), Ազէզ (1937 թ.), Աֆրին (1938 թ.), Այն Արուս (1937 թ.), Ինչպէս նաեւ Հասիչէի (Հասաբէի), Հոմսի, Թէլ Ապիատի (քառասունական թուականներուն), Րազգայի, Տէր Զօրի, Եագուպիէի եւ Քեսապի:

Բ. Աշխարհամարտի սկիզբը կը բռնագրաւուի Դամասկոսի մասնաճիւղի «Անդրանիկ» ակումբը՝ ընկերակցութիւնը զրկելով իր կեդրոնէն:

1950 թ., Ներգաղթի եւ Սուրիոյ մէջ տիրող անկայուն քաղաքականութեան պատճառով Ընկերակցութեան մասնաճիւղերու թիւը կը սահմանափակուէր տասնմէկով՝ հազար անդամներով: Փոխարէնը ծնունդ կ'առնէն Նորերը՝ Տէրպէսիէ (1955 թ.), Լաթաքիա (1956 թ.), Գամիշլի (1961 թ.):

Ընկերակցութիւնը ունեցած է կազմակերպչական, մարզական եւ մշակութային յանձնախումբեր, որոնցմով իրագործած է իր գործունէութիւնը: Գումարած է ներկայացուցչական ժողովներ նպատակ ունենալով ծրագրուած, համատեղ ու համադրուած աշխատանք՝ մասնաճիւղերու միջեւ:

1931 թ. յառաջացուցած է մարզական խումբեր՝ կարելորելով մարզական շարժումը եւ 1931-1932 թթ. կազմած է ոտնագնդակի, ձեռնագնդակի եւ «վոլեպոլի» արական խումբեր: Իսկ 1950-1960-ական թուականներուն՝ ոտնագնդակի, ձեռնագնդակի եւ «վոլեպոլի» երկսեռ խումբեր, որոնք մեծ ժողովրդականութիւն վայելած են ոչ միայն Սուրիոյ, այլեւ՝ Լիբանանի մէջ:

1955 թ. ՀԵԸ-ի մարզական շարժումը պետական արտօնագիրով կը ճանչցուի եւ կը սկսի գործել, որպէս «Նէտի Մաշալ» «Ձախ մարզական միութիւն»<sup>56</sup>:

1972 թուականին հրապարակուած թիւ 38 նախագահական հրամանագիրով

55 Կաթողիկոսութեան լիազօր ներկայացուցիչ-վարիչ Լեւոն Զէնեան կը վերամշակէ ՀԵԸ-ի կանոնագրութիւնը Հալեպի ներկայացուցիչներու հետ եւ 1932 թ., արաբերէն եւ ֆրանսերէն տարբերակներով կը ներկայացուի պետական իշխանութեան ի վաւերացում: Սուրիական իշխանութեան վաւերացումով ու ճանաչումով, կ'արտօնուի ազատ գործել Հալեպի կուսակալութեան թիւ 4345 եւ 17 Նոյեմբեր 1932 թուակիր հրամանագիրով: 6 Ապրիլ 1954 թ., յատուկ Նոր կանոնադրութեան համաձայն, Դամասկոսի Նահանգապետարանը թիւ 2656 հրամանագիրով գայն կը ճանչնայ «Ճամիիյէ ալ-Շապապ ալ-Արմանի» անունով:

56 Յուշամատենան հայ երիտասարդաց ընկերակցութեան 1930-2010, կազմութիւնն ու հիմնադրութիւնը, 80 Ամեակ, Հալեպ 2010, էջ 196:

կը սահմանափակուի մարզական միութիւններու գործունէութիւնը՝ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան տարածքին մարզական կեանքն ու շարժումը կանոնաւորելու եւ կազմակերպելու նպատակով: 1975 թ. Հալեպի «Գերմանիկ Վասպուրական» եւ «ՀԵԸ»-ի համատեղ գործունէութեամբ պետականօրէն կը ճանչցուի «Նէտի Ուրուպէ»<sup>57</sup>:

ՀԵԸ-ը իր յարկին ներքոյ յաջողած էր կեանքի կոչել սկաուտական շարժումը 1944 թ. երկարատեւ փորձերէ ետք: Սկզբնական շրջանին սկաուտական շարժումը գործած է խմբապետական կազմերով: Կ'ենթադրուի, թէ Ընկերակցութեան առաջին Սկաուտական խորհուրդը կազմուած է շարժման ստեղծման առաջին օրերուն, սակայն 1947 թ. ներգաղթի օրերուն կարգ մը պատասխանատու մարմիններու մեկնումով ընկերակցութիւնը անդամներու եւ ղեկավար մարմիններու նահանջ արձանագրած է: Այս ընթացքին խումբի ղեկավարութիւնը կը յանձնէն սկաուտապետ Լեւոն Աբգարեանին մինչեւ 1953 թուական, երբ սուրիական վարչակարգի փոփոխութեան հետեւանքով, պետական հրամանագիրով պիտի լուծարուէին Սուրիոյ տարածքին գործող բոլոր սկաուտական խումբերը: Կը վերակազմուի 1961 թ.: 1962 թ. պետական Նոր արտօնագիրով կը գործէ 22 վաշտ անունով: 1963 թ. Ընկերակցութեան գործադիր մարմինը կը ձեռնարկէ Արեւուշական շարժման կազմութեան: Սկիզբը կ'ունենայ առանձին խորհուրդ, աւելի ուշ սկաուտներու հետ կը կազմեն միացեալ խորհուրդ:

1966 թ. ընկերակցութիւնը կ'ապրի իր ամենէն աշխոյժ շրջանը եւ սկաուտական շարժման վերակազմաւորման ընթացքին կը ստեղծուի գայլիկներու առանձին համակարգ՝ յանձին եղբ. Պետրոս Տարագճեանին: Յաջորդաբար կ'ունենայ քթելլաներ<sup>58</sup>: Պատմութիւնը կը վկայէ, որ արծուիկներու առանձին միաւոր չէ կրցած ունենալ: Բայց 1980-էն ետք անոր գոյութիւնը իրականութիւն պիտի դառնար, որովհետեւ իգական սեռի մասնակցութիւնն ու գործունէութիւնը անհրաժեշտ նկատուած էր հիմնադրութեան օրերուն, եւ 1937 թ. ընկերակցութիւնը Հալեպի մէջ յառաջացուցած է Օրիորդաց բաժին մը: Հակառակ անոնց ունեցած գործօն մասնակցութեան ինչ ինչ պատճառներով առանձին յանձնախումբով չէ գործած, այլ՝ տարբեր յանձնախումբերու մէջ: 1971 թ. կը կազմուի տիկնանց ընկերային յանձնախումբը, որ ընդմիջումներով ութսունական թուականներուն կը վերակազմուի եւ կը վերանուանուի «Տիկնանց յանձնախումբ»<sup>59</sup>:

Ըլլալով Երիտասարդական Ընկերակցութիւն եւ հաւատարիմ մնալով իր առաքելութեան ու գաղափարական սկզբունքներուն՝ իր նպաստը կը բերէ

57 Նոյն տեղը, էջ 197:

58 Աքթելլան գայլիկներուն ընդհանուր պատասխանատուն է:

59 Յուշամատենան հայ երիտասարդաց ընկերակցութեան, Նշ. աշխ. էջ 186-187:



Նաեւ մշակութային ոլորտէն ներս:

Մշակութային բնագաւառէն ներս յառաջացուցած է Նաեւ թատերական, գրական եւ ուսանողական յանձնախումբեր:

1958 թ. միւս բարեսիրական եւ մշակութային միութիւններու նման շԵԸ-ն ալ ենթակայ կ'ըլլայ Ընկերային շարքերու եւ Աշխատանքի Նախարարութեան. անոր թիւ 93 հրամանագիրով, 7 Փետրուար 1960 թ. թիւ 301 թուակիր հրամանագիրով պաշտօնապէս կը ճանչցուի «Ճամիյէ ալ -Շապապ ալ-Արմանի» անուտով: Ունեցած է տարբեր ժողովատեղեր:

## 8. ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ՆՍՄ)

Նոր Սերունդ մշակութային միութիւնը ստեղծուած է 1925 թ., «Կիլիկեցիներու հայրենակցական միութիւն» անունով: Միութիւնը կը համարուէր չալէպի ամենաժողովրդական առաջադէմ ու հայրենասէր կազմակերպութիւններէն մէկը: 1959 թ. «Կիլիկեան հայրենակցական միութիւնը» կը լուծարուի Սուրիական Արաբական շանրապետութեան կառավարութեան կողմէ՝ համայնավարական քարոզչութեամբ զբաղելու մեղադրանքով: Սակայն երկրի քաղաքական փոփոխութիւններէն ետք «Նոր սերունդ» միութիւնը 1960 թ. կրկին պաշտօնապէս կը ճանչցուի տեղական իշխանութիւններու կողմէ<sup>60</sup>: Միութիւնը կ'իրականացնէր մշակութային, լուստարակցական աշխատանք: Չնչակեան կազմակերպութիւնն էր Սուրիոյ «Կիլիկեան մշակութային միութիւն»-ը: Միութեան հետ կապուած էր Նաեւ «Նայ մարմնակրթական միութիւն» կազմակերպութիւնը:

## 9. ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ (ԱՄՄ)

Սուրիոյ Ազգային մշակութային միութիւնը կազմակերպուած էր 1955 թ. համայնավարներու Նախաձեռնութեամբ: ՍԱՀ-ի կառավարութեան կողմէ պաշտօնապէս ճանչցուած: Այսպէս միութեան կազմակերպչական ու ուղղորդման ուժը հայ համայնավարներն էին մինչեւ 1960 թ.: Սակայն տեղական իշխանութիւններու կողմէ համայնավարներու հետապնդումի պատճառով, միութիւնը զգալիօրէն կը կրճատէ իր աշխատանքը եւ 1964 թ. ի վիճակի չ'ըլլար Նախկին ուժեղ աշխատանքը կատարելու: Միութեան շուրջ համախմբուած էին

<sup>60</sup> ՆԱԱ, ֆ. 875, ց. 1, գ. 6, թ. 8:

չալէպի առաջադէմ մտաւորականութեան զգալի մասը: Միութեան կից կը գործէր «Գրական շրջանակ»: Կը կազմակերպէին դասախօսութիւններ եւ յօբելեանական երեկոներ:

## 10. ՈՒՐՖԱՅԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ՄԻՈՒԹԻՒՆ

Չալէպահայ յառաջդիմական ամենագործօն կազմակերպութիւններէն էր Նաեւ Ուրֆայի Վերածնունդ միութիւնը՝ իմաստաւորուած 1921 թ. «Ուրֆացիներու երիտասարդ միութիւն» անունով: Սկզբնական շրջանին զուտ քաղաքացիական բնոյթ կրող համախումբ մը եղած է, գաղափարական հոսանքէ անկախ: Հիմնական նպատակը՝ գործ հայթայթելով նպաստել տարագիր հայոց եւ ապաստան տալ որբերու: 1943 թ. դաշնակցականներու եւ յառաջդիմականներու միջեւ ստեղծուած տարակարծութիւններու պատճառով, վերջինս ծնունդ կու տայ «Ուրֆայի երիտասարդ յառաջդիմական միութիւն» կազմակերպութեան: 1957 թ. սուրիական պետութեան կողմէ պաշտօնապէս կը վաւերացուի «Ուրֆայի վերածնունդ միութիւն» անունին տակ<sup>61</sup>:

1946-1947 թթ. գործօն մասնակցութեամբ հանդէս կու գայ ներգաղթի կազմակերպչական աշխատանքներուն: Առաջադրանքը եղած է, մասնատարաբար, հայ-արաբ մշակութային մերձեցումը:

<sup>61</sup> ՆԱԱ, ֆ. 875, ց. 2, գ. 578, թ. 34-35: Տես Նաեւ **Սահակեան Ա.**, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Պէյրութ, 1955, էջ 1253-1274:



## թ. ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ԵՒ ՅԱՐԱՆՈՒՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արեւմտահայաստանի վիճակուած ողբերգութիւնը սփիւռքահայութեան առաջ անհետաձգելի պահանջ կ'առաջադրէր բնականաբար, ոչ միայն պահել նախորդ շրջանի մշակութային եւ հայրենակցական միութիւնները, այլեւ ստեղծել նորերը, որոնց առաջ ծառայած խնդիրները շատ անելի բարդ էին ու դժուար:

Նախքան Ա. Աշխարհամարտը, հայկական գաղթօճախներու մէջ գոյութիւն ունէին հայրենակցական միութիւններ, որոնց հիմնական նպատակն էր օգնել իրենց գիւղի, քաղաքի կամ գաւառի կրթամշակութային գործին: Սակայն անկէ ետք, յատկապէս Կիլիկիոյ վերջնական պարպումով, հայրենակցական միութիւններու առաջ ծառայած նպատակը կ'ըլլայ այն, որ փրկուած որբերու եւ այրիներու ապրուստը հայթայթելու ազնիւ գործին նպաստելու համար՝ հնարատր միջոցներ տրամադրեն: Անոնց նպատակն էր համախմբել աշխարհով մէկ ցրուած հայերը, օժանդակել անոնց կարիքներուն եւ առաւել չափով զարկ տալ հայապահպան գործին: Այս իմաստով համայնքի ձեւաւորման օրերուն, այսինքն՝ քսանական թուականներու առաջին կիսուն, պատահական երեւոյթ չէր հայրենակցական միութիւններու նախաձեռնութեամբ եւ համայնքային հիմունքներով կազմակերպուած կրթօճախներ, որոնք երկար կեանք չունեցան:

Հալէպ համախմբուած գաղթականներու մէջ քսանակով ստուար թիւ կը կազմէին այնթապցիները, քիլիսցիները, մարաշցիները, խարբերդցիները եւ եղեսիպցիները (ուրֆացիները): Բացի այդ, այնտեղ համախմբուած էին, թէեւ ոչ ստուար թիւով, Արեւմտեան Հայաստանի 32 գաւառներէ հայրենակիցներ:

Սուրիոյ յատկապէս Հալէպի մէջ գոյութիւն ունեցող գործող հայրենակցական միութիւններուն նպատակը եղած է միայն օգնել իրենց կարիքատր հայրենակիցներուն. երեւոյթ մը, որ մինչեւ օրս կարծէք կը տիրէ համայնքներու հայրենակցական միութիւններէն ներս: Անոնք սկզբնական շրջանին հեռու էին ազգային կուսակցութիւններու վերահսկողութենէն: Սակայն անելի ուժ ո՛ր միայն հայրենակցական, այլեւ մշակութային միութիւնները առաւել կամ նուազ չափով պիտի գտնուէին այս կամ այն կուսակցութեան վերահսկողութեան ներքոյ:

Հալէպի յառաջդիմական հայրենակցական միութիւններէն էին արաբկիրցի-

ներու, քիլիսցիներու, խարբերդցիներու, բալուցիներու, մալաթիացիներու եւ մարաշցիներու համախմբումները: Բացի մարաշցիներէն՝ միւսները գործնակաւ նօրէն կամ գործունէութիւն չէն ունեցած եւ կամ ալ՝ շատ կարճ:

Մարաշի հայրենակցական միութիւնը հիմնուած է 1921 թ., վերակազմուած՝ 1934 թ. Մարաշի վերաշինաց հայրենակցական միութիւն<sup>3</sup> անունով: 1946 թ. աշխոյժ գործունէութեամբ հանդէս կու գայ ներգաղթի գործին: 1945-1960 թթ. կանոնաւորապէս կը հրատարակէ միութեան «Նոր Մարաշ» պաշտօնաթերթը:

Յառաջդիմական կողմնորոշում ունեցող համախմբում մըն էր նաեւ Հալէպի Սեբաստիոյ վերաշինաց միութիւնը<sup>4</sup> (հիմնուած՝ 1919 թ., Նիւ Եորք): Հալէպի մասնաճիւղը՝ 25 Յուլիս 1921 թ., գորգի արհեստանոց մը հիմնելու առաջադրանքով, կեդրոնէն կը ստանայ թելադրութիւններ: Կ'առաջացնէ գործադիր յանձնախումբ մը, որ բազմաթիւ դժուարութիւններէ ետք կը ստանայ իր յաջող ընթացքը: Գործարանի կեանքը երկար չի տւեր, 1929 թ., Ամերիկայի տնտեսական տագնապի եւ Հալէպի մէջ տիրող սեբաստացիներու միջեւ անհամաձայնութեան պատճառով:

1936 թ. (Մայիսի 30-31) Նիւ Եորքի մէջ «Այգ» եւ «Վերաշինաց» միութիւններու միացումով կը կազմակերպուի Համասեբաստահայ վերաշինաց միութիւնը, որու հիմնական նպատակ կ'ըլլայ զարկ տալ Նոր Սեբաստիոյ շինարարութեան, օժանդակել ներգաղթի աշխատանքներուն եւ օգնել կարիքատր իրենց հայրենակիցներուն: Վաթսունական թուականներու սկիզբը միութիւնը կազմալուծուած վիճակ կ'ունենայ: 1967 թ. Փետրուարին կը վերակազմուի Հալէպի Համասեբաստահայ վերաշինաց միութիւն<sup>5</sup>: Մասնաճիւղը սերտ կապեր կը հաստատէ կեդրոնին հետ՝ տեղեակ պահելով համայնքի եւ մասնաճիւղի գործունէութեան մասին<sup>6</sup>:

Հայրենակցական միութիւնները մեծ գնահատանքի արժանի գործ կատարած են նաեւ՝ հրատարակելով իրենց հայրենի գաւառներու, քաղաքներու եւ գիւղերու պատմութիւնը: Անոնց կատարած դրական աշխատանքները պէտք է համարել, ի գին մեծ զոհողութիւններու, ստեղծուած եւ տարիներ շարունակ

3 1946 թ. Յուլիսին «Մարաշի հայրենակցական վերաշինաց» միութեան Հալէպի վարչութիւնը, կը դիմէ Ամերիկայի կեդրոնական վարչութեան՝ խնդրելով առնուազն երկու հարիւր տոլարի առաքում հայրենակիցներու պէտքերու յատկացնելու համար:

4 Նպատակը ըլլալով վերաշինութիւն, հարկ չէր համարէր մասնակցիլ կուսակցական եւ քաղաքական բնոյթ կրող ձեռնարկներուն եւ հանգանակութեան տես, ՀԱԱ, ֆ. 439, ց. 3, գ. 78, թ. 1:

5 ՀԱԱ, ֆ. 439, ց. 3, գ. 79, թ. 8-10: Եւ Նոյն տեղը, թ. 10 (շրջերես):

6 ՀԱԱ, ֆ. 439, ց. 3, գ. 84, թ. 6:

7 Պէտք է ըսել, որ ներկայիս Հալէպի մէջ չի գործեր Սեբաստիոյ հայրենակցական միութիւն:

1 **Թովուզյան Ն.**, Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօճախների պատմություն (1841-1946), էջ 273:

2 **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ, էջ 249:



պահպանուող տպագիր պարբերականները:

Ինչպես հայրենակցական, այնպես ալ մշակութային միութիւնները, որոնք ունեցան իրենց պարբերական մամուլը, ակումբները եւ այլ հարստութիւններ, շնորհակալ աշխատանք կատարեցին մշակութային ամանդներու պահպանման եւ սփիւռքահայութիւնը ձուլման վտանգէն զերծ պահելու համար:

Սփիւռքահայ համայնքներու ձեւաւորման օրերուն իրենց ուրոյն տեղը ունեցան ոչ միայն կրթական մշակները, արուեստագէտները, մշակոյթի գործիչներն ու ազգայինները, այլեւ շայ Եկեղեցւոյ սփիւռքեան թեմերու առաջնորդները, որոնք իշխանութեան առաջ ներկայացուցին հայ համայնքի շահերը:

Այսպիսով, 1920-1930-ական թուականներուն գոյութիւն ունեցող միութիւններու կողքին ծնունդ կ'առնէն նոր միութիւններ, որոնք ժամանակաւոր կեանք ունենալով հանդերձ՝ կը տանին նպատակասլաց գործունեութիւն ոչ միայն խաղաղ պայմաններու տակ, այլ՝ արտասովոր:

Սուրիոյ հայ համայնքի մշակոյթի ձեւաւորման ու վերելքի համար առաւել արդիւնաւետ եղան քառասունական թուականները: Երկրամասի քաղաքական եւ մշակութային կեանքին մէջ առաջատար դեր կատարեցին կրթօճախները, հոգեւոր կեդրոնները, քաղաքական, մշակութային եւ այլ լուսատուչական կեդրոններ:

Ինչպէս այլ համայնքներուն, այնպէս ալ Հալէպի մէջ յաջորդաբար կը կատարեն ընկերային եւ միութենական աշխոյժ գործունեութիւն: Իրարու ետեւ ծնունդ կ'առնէն նորաստեղծ այլազան կազմակերպութիւններ<sup>8</sup>:

Ռամկավարներու հովանաւորութեամբ կը գործէ Թեքէեան մշակութային միութեան Հալէպի (Սուրիոյ) մասնաճիւղը: Պետական ճանաչում կ'ունենայ 1955 թ.: Կը կազմուի տեղական վարչութիւն, տիկնանց, երիտասարդաց, ուսանողական, պատանեկան վարչութիւններ եւ գրական, երաժշտական եւ թատերական յանձնախումբեր:

Մեծ էր թիւը կանանց կազմակերպութիւններուն, ուր հայ կինը եւս իր ներդրումը ունեցաւ՝ կատարած իրեն անվարձահատոյց ծառայութեամբ: Հալէպի դպրոցասէր կանանց միութիւնը ստանձնած էր ինչակէտան կուսակցութեան կողմէ հովանաւորուող դպրոցները՝ անոնց օգնելու նիւթական միջոցներ ձեռնարկելու գործին, կազմակերպելու նաեւ մշակութային եւ հայրենասիրական միջոցառումներ:

Նոյնպիսի կանանց կազմակերպութիւն էր Սուրիահայ օգնութեան խաչը

(տե՛ս ՍՕԽ-ի բաժինը):

Ոչ պակաս գործունեութիւն ծաւալած էր Հալէպի շայ ազգային կարմիր խաչը (հիմնուած՝ Հալէպ, 1925 թ.), որու նպատակն էր օգնել տեղահանուած ժողովուրդին նիւթապէս եւ բարոյապէս: 1954 թ. գործունեութիւն կը յանձնուի ՀԲԸՄ-ին: 1977 թ. կը դադրի<sup>9</sup>:

Սփիւռքահայութեան շրջանակներուն լայն ճանաչում գտած էր նաեւ աշխարհի նիւթապէս ամենաուժեղ բարեգործական միութիւններէն մէկը՝ Գալուստ Կիլպէնկէան հիմնարկութիւնը, որ հիմնադրուած էր 1956 թ.: Հիմնարկութեան հիմնական նպատակներէն էր հայ ուսանողներու կրթաթոշակներ հաստատել: Պէտք է ըսել, որ վերջին տասնամեակին իր նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը ցուցաբերեց առաւել դպրոցաշինութեան՝ Սուրիոյ կարգ մը վայրերէ ներս:

Ստեղծուած մշակութային եւ հայրենակցական ընկերութիւններուն մեծ մասը կարճատեւ կեանք կ'ունենան: Իսկ մնացեալը գնահատելի դեր կը կատարեն Սուրիոյ հայ համայնքի մշակութային վերելքին:

Դամասկոսի ՅՅԴ Սուրիահայ երիտասարդական միութիւնը եւ «Ռոստոմ» Պատանեկան միութիւնը (ՌՊՄ) Սփիւռքի ամենահին կազմակերպութիւններէն է (հիմնուած 1922 թ.): 1961 թ. ՍԵՄ եւ ՌՊՄ քաղաքական աննպաստ պայմաններու պատճառով կը դադրին գործել: 1972 թ. կը վերակազմուի «Համազգային կրտսերաց միութիւն» անունով: 1979 թ. իւրաքանչիւր կը դառնայ առանձին միութիւն:

1966 թ. Համազգային շայ Կրթական Մշակութային Միութիւնը կը հովանաւորէ վերակազմեալ Հալէպահայ Ուսանողական միութիւնը: Տարի մը ետք կ'առաջացնէ երգի ու պարի խումբ:

Հալէպի մէջ գործող մարզական միութիւններէն էր («Գերմանիկ Վասպուրական») մարզական միութիւնը եւ ուրիշներ:

Շայ ուսուցիչներու մտաւոր, բարոյական եւ տնտեսական վիճակը բարելաւելու միտումով, 1938 թ. կը հիմնուի «Հալէպահայ ուսուցչական միութիւն»-ը, որ պիտի տեսէր մինչեւ 1957 թ.: Միութիւնը անգնահատելի դեր կ'ունենայ համայնքէն ներս իր կազմակերպած մանկավարժական դասախօսաշարքերով, գրադարանով եւ մանաւանդ՝ հրատարակած «Բուրաստան» պարբերաթերթով:

Հալէպահայ Ուսուցչական միութեան նախաձեռնութեամբ հրատարակուած է արաբերէն լեզուով ընթերցանութեան, պատմութեան եւ աշխարհագրութեան

8 Տե՛ս այս գիրքի Առաջին գլխու, էջ 45-47:

9 «Գեղարդ», Ե. գիրք, Հալէպ, 1996, էջ 425-426:



դասագիրքեր նախակրթարաններու աշակերտութեանց: Գործունեութեան ծիրէն ներս էր նաեւ «Պատանեկան հեքիաթներու» շարքը եւ այլն:

Դամասկոսահայ խումբ մը ուսանողներու ջանքերով, 1966 թ. կը հիմնադրուի Հայ համալսարանականերու միութիւնը իր մասնաճիւղերով: Միութեան նպատակը եղած է միատրել տարբեր կուսակցութիւններու պատկանող ուսումնառու երիտասարդութիւնը՝ ընդգրկելով զանոնք համատեղ եւ արդիւնաւետ աշխատանքի<sup>10</sup>:

Հայ կաթողիկէ Քոյրեր կազմակերպութիւնը կը վայելէր Դամասկոսի հայ կաթողիկէ համայնքի հովանաւորութիւնը, ուր ընդհանրապէս կը դաստիարակուէին համայնքի մանուկ սերունդի իգական սեռի ներկայացուցիչները<sup>11</sup>: Մատաղ սերունդի գաղափարական մշակման համար կը ստեղծուի Հալէպի ուսանողներու միութիւնը: Ան պաշտօնապէս պետական ճանաչում չէ ունեցած եւ գործած է Համազգայինի անուան տակ:

Այս ժամանակահատուածի մշակութային միութիւններու գործունեութեան առանցքը կ'ըլլայ կազմակերպուած միջոցառումներու ճանապարհով ամրապնդել ու ընդլայնել հայ եւ արաբ ժողովուրդներու միջեւ մշակութային կապերը, հնարաւոր միջոցներ ստեղծել նպաստելու երկու ժողովուրդներու մշակութային արժէքներու փոխձանօթացման:

10 ՀԱԱ, ֆ. 875, ց. 16, գ. 170, թ. 28-29:

11 Նոյն տեղը, էջ 28:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Սուրիոյ հայ համայնքը Սփիւռքի ամենահին համայնքներէն է: Հայերը Սուրիոյ մէջ բնակութիւն հաստատած են հին ժամանակներէ ի վեր (մ. թ. ա. Բ.- Ա. դարերէն). այդ պայմանաւորուած էր քաղաքական հանգամանքով եւ առեւտրատնտեսական կապերով: Յետագայ դարերուն հայերը տարբեր հանգամանքներու բերումով՝ քաղաքական, տնտեսական, մշակութային առումներով, տեղափոխուած եւ կամ արտագաղթած են Սուրիա, յատկապէս՝ երկրի հիւսիսային շրջանները եւ այնտեղ բնակութիւն հաստատած:

Նախաեղեռնեան շրջանին Սուրիոյ մէջ կային հայերով բնակուած բազմաթիւ բնակավայրեր: Անոնք մեծ մասամբ կ'ապրէին Ալեքսանտրէթի սանճագի շարք մը գաւառներու, Քեսապի, Լաթաքիոյ շրջանի գիւղերու, նաեւ Դամասկոսի եւ Հալէպի մէջ:

1915 թ., ապա նաեւ 1922 թ. Կիլիկիայէն զգալի թիւով հայեր կը հաստատուին Սուրիոյ մէջ: Այսպիսով, Սուրիոյ հայ համայնքը կը համալրուի 1915 թ. հայոց ցեղասպանութենէն ետք: Սուրիոյ տարածքը ծանօթ ըլլալով անոնց որպէս բնակավայր՝ առաջին տարիներուն Սուրիան կը համարէին ժամանակատար հանգրուան (ապաստանավայր), ուրկէ կ'ընային տեղափոխուիլ առաւել յարմարաւետ այլ վայրեր շարք մը գործօններու պատճառով՝ կրօնական, լեզուական, մշակութային եւ այլն:

Կիլիկիոյ վերջին պարպումին հետեանքով, հայ գաղթականները հարկադրուած էին հաշտուիլ այնտեղ հաստատուելու իրականութեան հետ, իսկ Նշուած գործօններն ալ պարզապէս նպաստեցին հայ տարագիրներու ցեղային եւ մշակութային ինքնութեան պահպանումին: Հայերը ժամանակի ընթացքին ինքնակազմակերպուելով, յարմարեցան Սուրիոյ հասարակական կեանքին, ցեղասպանութեան ընթացքին, եւ անկէ ետք ալ հայերու նկատմամբ արաբներու ցուցաբերած վերաբերմունքն ալ նպաստեց երկու ժողովուրդներու յարաբերութեան սերտացումին: Հայերը աստիճանաբար վերաճելով՝ դարձան կազմակերպուած ու կենսունակ համայնք, որ կը ձգտէր պահպանել իր ազգային ինք-



կը տարբերէին արտասահմանի երկիրներէն: Ներգաղթ կազմակերպող պաշտօնական ներկայացուցիչներու եւ ներգաղթի կոմիտէներու գործն էր, անկասկած, տեղեակ պահել տեղական օրէնքներու, ընկերային կարգ ու սարքին, որպէսզի առիթ չտային ամենափոքր դժգոհութիւններու եւ իշխանութիւնները կարելիութիւն ունենային մեծ բազմութիւն հոն փոխադրել:

Այստեղ կ'ուզեմ կարեւորել, թէ ներգաղթի իրականացումը ամենէն առաջ կախում ունէր արտաքին ազդակներէն, գլխաւորապէս Խորհրդային Միութենէն, որ ստանձնած էր բազմութիւններու տեղաւորման հարցը:

1920-ական թուականներէն Խորհրդային չայաստանը սկսած էր ներգաղթ կազմակերպել: Այդ ներգաղթը կը վերաբերէր Սփիւռքի մէջ անօթեան մնացած, խեղճ ու կրակ հայ տարրին, որ ինքնուրոյն չէր կրնար ապրիլ: Այդ վիճակի էին, յատկապէս Մերձատր Արեւելքի եւ Յունաստանի հայերը:

Ներգաղթի նախ ոգեւորութիւնը, բայց առաւել՝ աղմուկն ու իրարանցումը դժուարացուց թէ՛ մեկնողներուն եւ թէ՛ մնացողներուն կացութիւնը: Սակայն մեր ազգային քաղաքականութեան առանցքը պիտի ըլլար ներդաշնակել տարբեր պայմաններու մէջ գտնուած երկու հատուածներու շահերը՝ առանց միմեանց խանգարելու: Անկասկած որ, ներգաղթի հիմնական նպատակը ազգահաւաքումն ու ազգապահպանումն էր: Բայց այդպէս ալ չէղաւ, որովհետեւ ազգային կուսակցութիւնները եկեղեցոյ իշխանութեան ձգտելու մարմաշով անհանդուրժող վարքագիծ որդեգրեցին, նոյնիսկ այն օրերուն, երբ Հայրենիք-Սփիւռք առաջին անգամ ըլլալով «միասնակամ» ձեռնարկած էին Մեծ Եղեռնի Յիսնամեակի ոգեկոչումը 1965 թուին: Այստեղ նկատի պէտք է առնել սերնդափոխութեան գործօնը: Եղեռնէն վերապրող սերունդի մեծ մասը առջաւետ հեռացած էր: Երկրի տարաբնոյթ պատճառներու հետեանքով Սուրիայէն հեռացած էր մտաւորականութեան ազդու հատուածը: Համայնքի առջեւ ծառայած այլ հրամայականներ կը դժուարացնէին կազմակերպական, կազմակերպչական, միութենական եւ այլ ոլորտներու ձեռնարկումները, որոնց լուծումը կախեալ էր ներհամայնքային փոխհամագործակցութենէն:

Այս բոլորի որպէս հետեանք, 1960-ական թուականներուն Սուրիոյ հայ բնակչութեան թիւի նուազումը պայմանաւորուած էր նաեւ տեղի ընկերային, տնտեսական եւ քաղաքական զանազան գործօններով: Երկիրին մէջ շարունակուող պետական սահմանափակումները, տնտեսական լճացումը, քաղաքական անկայունութիւնը, կրթական համակարգի կտրուկ փոփոխութիւնը եւ

յստակ հեռանկարի բացակայութիւնը, ինչպէս նաեւ ազգային փոքրամասնութիւններու նկատմամբ տեղական իշխանութեանց վերաբերմունքը, նախադրեալներ ստեղծեցին, որուն իբրեւ հետեանք համայնքի զաւակներու զգալի մասը հեռացաւ Սուրիայէն՝ մշտական բնակութիւն հաստատելով Ֆրանսա, ԱՄՆ, Գանատա, Լատինական Ամերիկային երկիրներ եւ Աստրալիա: Իսկ ոմանք ալ՝ դէպի Լիբանան, Քուէթ, Լիպիա, եւ Արաբական Արեւելքի ուրիշ երկիրներ:

Ուսումնասիրելով այս ժամանակահատուածի անցուդարձերը՝ եկած ենք այն եզրակացութեան, որ արտագաղթի երետոյթը յատուկ չէր սոսկ հայկական շրջանակներուն, այլ ստացած էր ընդհանուր բնոյթ, այլ խօսքով՝ տեղացիները եւ սկսած էին արտագաղթի դիմել՝ մշտական բնակութիւն հաստատելու Լիբանան եւ Լատինական Ամերիկայի երկիրներ:



Արաբերէն անուանումը	Վայրը
الثانوية الأرمينية	Հալէպ-Նոր Գիւղ
هايكازيان للبنين	Հալէպ-Սալիպէ
هايكازيان للبنات	Հալէպ-Սալիպէ
روضة هايكازيان	Հալէպ-Սալիպէ
اسحاقيان	Հալէպ-Նոր Գիւղ
مسروبيان	Հալէպ-Աճուրլուք
وارطانيان	Հալէպ-Sաուտիէ
اراميان	Հալէպ-Սուրիան
كبريتاسيراس	Հալէպ-Ալ-Ուաքիլիէ
كبريتاسيراس	Հալէպ-Ջոքաք Ալ Արպայիւն
زاواريان	Հալէպ-Նոր Գիւղ
اوسومناسيراس	Հալէպ Շապուրա
اوسومناسيراس	Հալէպ Շապուրա
كبريتانكيان	Հալէպ-Չեօլիկ
كلبيكيان	Հալէպ-Սուլեյմանիէ
مسروبيان	Ճարապլուս
اسحاقيان	Ագեզ
اراميان	Աֆրիս
خريبيان	Արաբ-Փունար
فيرازونوت	Եագուպիէ
<b>թերթ 290</b>	Լաթաքիոյ Նահանգ
مدرسة القديس يعقوب	Լաթաքիա
مدرسة نوباريان	Թարթուս
اوسومناسيراس	Քեսապ
مدرسة الاخاء الأرمينية	Գարատուրան
<b>թերթ 288</b>	Ճէզիրէի Նահանգ
مدرسة الارمن في الشامشلي	Գամիշլի
مدرسة الارمن في الحسكة	Հասիչէ
مدرسة مسروبيان	Ռաս Ռւ Այն
مدرسة الارمن	Տէրիք
مدرسة الارمن	Տէրպէսիէ
مدرسة الارمن	Ամուտա
<b>թերթ 278</b>	Դամասկոս
مدرسة الاخاء الأرمينية	Դամասկոս- ԱլՍալիհիէ, Շարաֆ Թաղ
مدرسة زاواريان	Դամասկոս
<b>թերթ 289</b>	Ալ Ֆուրաթ Նահանգ
مدرسة الارمن	Տէրք-Ջօր
مدرسة خورينيان	Թէլ-Ապիատ
مدرسة نوباريان	Րազգա
<b>թերթ 291</b>	Հոմա Նահանգ
مدرسة ساهاكيان	Հոմա

Տնօրէնի անուն	Վարժարանի անունը (հայերէն)
Ստեփան Գարամարտեան	Ազգ. Զարէն Եփփիէ Ճեմարան
Փիլիպոս Դերձակեան	Ազգ. Հայկազեան վարժարան (Տղոց)
Հայկոսի Ադամեան	Ազգ. Հայկազեան վարժարան (Աղջկանց)
Նուարդ Սիմոն Արսլանեան	Ազգ. Հայկազեան վարժարան (ՄՆԿ.)
Էդուարդ Էլոյեան	Ազգ. Սահակեան վարժարան
Յարութիւն Պարտիզպանեան	Մետրոպէան վարժարան
S. Եղիշէ քինյ. Փանոսեան	Վարդանեան վարժարան
Զապէլ Ահարոնեան	Արամեան վարժարան
Արմէն Տէր Պետրոսեան	Կրթասիրաց վարժարան
Թրոանտա( Արիանոյշ) Էլէյճեան	Կրթասիրաց վարժարան
Երուանդ( Առաքել) Տեմիրճեան	Զաարեան վարժարան
Սարգիս Պալապանեան	Ոսումնասիրաց-Լեւոնեան
Սարգիս Գոչեան (Խոճայեան) օգն. տն.	Ոսումնասիրաց-Լեւոնեան
Արփիմէ Սամուէլեան	Գերմանիկեան վարժարան
Սոնա Բալուբեան	Կիլպէնիկեան վարժարան
Յարութիւն Նիկողոսեան	Մետրոպէան
Սարգիս Ղազարեան	Սահակեան
Միհրան Քէշիշեան	Արամեան
S. Հմայեակ քինյ. Միլոյեան	Խրիմեան վարժարան
Ապտ Ալլահ Ուանուսի որդի (Սաատոր)	Վերածնունդ վարժարան
Արամ Տլի Սարգիսեան	Յակոբեանց վարժարան
Վարդանոյշ Գիզիրեան	Նուպարեան վարժարան
բժ. Աւետիս Ինճէճիկեան	Ոսումնասիրաց վարժարան
Եսայի Մանճիկեան	Միացեալ վարժարան
Կարապետ Պետրոսեան	Ազգային վարժարան
Գեորգ Գարաթղանեան	Ազգային վարժարան
Ծերուն Գարապաճաքեան	Ազգային վարժարան
Սարգիս Ադամեան	Ազգային վարժարան
Սարգիս Յակոբեան	Ազգային վարժարան
Յովհաննէս Կարապետեան	Ազգային վարժարան
Տիգրան Գալպեան	Միացեալ հայկական վարժարան
Սարգիս Պէքարեան	Զաարեան վարժարան
Անժէլ Տէր Սարգիսեան (Սարգիսի դուստրը)	Ազգային վարժարան
Գեորգ Գազանճեան	Խորէնեան վարժարան
Յարութիւն Ստեփանեան	Ազգային վարժարան
S. Եզնիկ քինյ. Տէր Յակոբեան	Սահակեան վարժարան



# ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՍԿՋԲՆԱԴԲԻՒՐՆԵՐՈՒ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

## 1. Արխիվային նիւթեր

### 1.1 Հայաստանի ազգային արխիվ (այսուհետեւ` ՆԱԱ)

Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտե` ֆոնտ 875 ցուցակ 1, գործ 31, թերթ 10; գ. 32, թ. 4, 10; գ. 6., թ. 2, 3, 8; Ֆ. 875, ց. 2, գ. 575, թ. 2, 40; գ. 578, թ.34, 35; գ. 585, թ. 13; գ. 592, թ. 41; գ. 201, թ. 39; գ. 586, թ. 18, Ֆ. 875, ց. 16, գ. 170, թ. 6, 25, 28, 29:

ՀՀ արտաքին գործերի նախարարություն ֆոնտ 326, ց. 1, գ. 104, թ. 1, 2, 3, 7, 8, 17, 18, 19; գ. 147, թ. 17; գ. 149, թ. 3, 13, 17, 20, 21, 27, 28; գ. 196, թ. 1; գ. 283, թ. 4, 5; գ. 342, թ. 1, 2, 6, 12; գ. 441, թ. 1, 3; Ց. 2, գ. 75, թ. 8, 22, 25, 26, 27, 35, 36, 37:

ֆոնտ 409, ց. 1, գ. 4763:

ֆոնտ 426, ց. 1, գ. 3956, թ. 1, 4: գ. 3786, թ. 20, 31, 44, 47:

ֆոնտ 439, ց. 3, գ. 78, թ. 1; գ. 79, թ. 8-10 եւ 10 (շրջերես):

### 1.2 Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն Արխիվատուն Բերիոյ թեմի (ՄՏԿԿԱ ԲԹ)

Հաւաքածոյ 3, ցուցակ 1, թղթածրար (թ.) 43; 45; 55; 58; 59; 82; 106:

### 1.3 Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի արխիվ (ԲԹ ԱԱԱ)

Դարան Բ., գործ 50: 55; 62, Դարան Դ., գործ 25; 26; 67; 69; 70; 71; 72; 87, Դարան Զ., գ. 41:

### 1.4 Գամիշլիի Առաջնորդական Փոխանորդարանի ատենագրութեան Ա. տոմար, Բերիոյ թեմի առաջնորդարանի դիւան:

### 1.5 Սուրիահայ օգնութեան խաչի արխիվ (ՍՕԽ)

#### Հայ կարմիր խաչի Հալէպի մասնաճիւղի արխիվ

Հայ Կարմիր խաչի Հալէպի մասնաճիւղ, նամակներու եւ տեղեկագիրներու տոմար (1 12 1919 - 7 6 1922); (6 12 1922 - 15 1 1925):

Հայ Կարմիր խաչի Հալէպի մասնաճիւղ, նամակներու թղթածրար (1919; 1920; 1921; 1922; 1924; 1925; 1926; 1927; 1929):

Հայ Ազգային Կարմիր խաչի Հալէպի մասնաճիւղ, նամակներու թղթածրար (1925-1929):

Հայ Կարմիր խաչի Լաթաքիոյ մասնաճիւղ, (ապա` ՍՕԽաչի) ատենագրութիւն (27

7 1927 - 28 11 1965):

Հայ Կարմիր խաչի Լաթաքիոյ մասնաճիւղի նամակներու թղթածրար (1927-1928):

#### ՍՕ Խաչի կեդրոնական վարչութեան արխիվ

Սուրիահայ Օգնութեան խաչի Կեդրոնական վարչութեան նամակներու եւ տեղեկագիրներու տոմար` (18 4 1930 - 11 10 1933); (17 10 1933 - 13 2 1936); (18 2 1936 - 9 4 1938); (4 5 1938 - 5 9 1940):

#### ՍՕ Խաչի Շրջանային վարչութեան արխիվ

Սուրիահայ Օգնութեան խաչի Շրջանային վարչութեան ատենագրութիւն` (10 1 1939 - 26 11 1947); (28 1 1948 - 9 6 1953); (19 6 1953 - 21 6 1961); (30 1 1962 - 19 10 1965); (11 4 1967 - 15 11 1968); (23 3 1969 - 29 9 1970); (6 10 1970 - 10 11 1971):

Սուրիահայ Օգնութեան խաչի Շրջանային Վարչութեան նամակներու թղթածրար (20 6 1950 - 4 11 1950); (28 11 1950 - 3 11 1951); (7 11 1951 - 20 5 1952); (20 2 1953 - 7 3 1954); (20 5 1956 - 21 1 1957):

Սուրիահայ Օգնութեան խաչի Շրջանային վարչութեան պատգամաւորական ժողովներու եւ խորհրդաժողովներու նիւթաբարոյական տեղեկագիրներ:

ՍՕ Խաչի մասնաճիւղերու եւ արծուիկներու ատենագրութիւններ եւ նամակներ:

ՍՕ Խաչի Տեղական մասնաճիւղի ատենագրութիւն (18 3 1965 - 9 5 1968):

ՍՕ Խաչի Նոր Գիւղի մասնաճիւղի ատենագրութիւն (8 6 1948 - 5 5 1950); (9 7 1950 - 23 2 1958):

ՍՕ Խաչի Նոր Գիւղի արծուիկներու խորհուրդի ատենագրութիւն (12 5 1943 - 16 5 1945); (1 4 1950 - 31 3 1952); (3 3 1957 - 11 5 1960):

ՍՕ Խաչի Սուէտայի (Ճէպէլ Տրուզ) մասնաճիւղի ատենագրութիւն (24 4 1938 - 8 7 1945):

ՍՕ Խաչի Քեսապի մասնաճիւղի ատենագրութիւն (3 8 1958 - 20 12 1964):

ՍՕ Խաչի Տեղական մասնաճիւղի նամակներու թղթածրար:

ՍՕ Խաչի Նոր Գիւղի մասնաճիւղի նամակներու թղթածրար:

ՍՕ Խաչի Քեսապի մասնաճիւղի նամակներու թղթածրար (1940-1984):

ՍՕ Խաչի Սուէտայի (Ճէպէլ Տրուզ) նամակներու թղթածրար:

ՍՕ Խաչի Դամասկոսի մասնաճիւղի նամակներու թղթածրար:

ՍՕ Խաչի Տէրպէսիէի մասնաճիւղի նամակներու թղթածրար:

ՍՕ Խաչի Թէլ Ապիատի մասնաճիւղի նամակներու թղթածրար:

ՍՕ Խաչի Լաթաքիոյ մասնաճիւղի նամակներու թղթածրար:

ՍՕ Խաչի Այն Էլ Արապ մասնաճիւղի նամակներու թղթածրար:

ՍՕ Խաչի Գամիշլիի մասնաճիւղի նամակներու թղթածրար:

ՍՕ Խաչի Ճարապլոսի մասնաճիւղի նամակներու թղթածրար:

ՍՕ Խաչի Արաբ Փունարի մասնաճիւղի նամակներու թղթածրար:



ՍՕ Խաչի Բազգայի մասնաճիղի նամակներու թղթածրար:  
 ՍՕ Խաչի Տեր Զօրի մասնաճիղի նամակներու թղթածրար:  
 ՍՕ Խաչի Հոմսի մասնաճիղի նամակներու թղթածրար:  
 ՍՕ Խաչի Այն Արուսի մասնաճիղի նամակներու թղթածրար:  
 ՍՕ Խաչի Ռաս Ուլ Այնի մասնաճիղի նամակներու թղթածրար:  
 ՍՕ Խաչի Թէլ Պրագի մասնաճիղի նամակներու թղթածրար:

**1.6 ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ**

**ՍՕ Խաչի Շրջանային Վարչութիւն**

Տեղեկագիր Սուրիահայ Օգնութեան Խաչի Կեդրոնական վարչութեան եւ մասնաճիղերու, 10 Մայիս 1937 - 31 Դեկտեմբեր 1938 (Ներկայացուած Ե. Պատգամաւորական ժողովին):

ՍՕ Խաչի Զ. Շրջանային Պատգամաւորական ժողովի ատենագրութիւն, 3 Ապրիլ 1940:

ՍՕ Խաչի Ը. Շրջանային Պատգամաւորական ժողովի ատենագրութիւն, 14 Սեպտեմբեր 1944:

Զեկուցում Մասնաճիղերու (Ը. Պատգամաւորական ժողովի), 1944:

Տեղեկագիր ՍՕ Խաչի Շրջանային վարչութեան, 1944 - 1945:

ՍՕ Խաչի Թ. Շրջանային Պատգամաւորական ժողովի ատենագրութիւն, 14-15 Յուլիս 1946:

Երկամեայ Գործունէութեան Տեղեկագիր ՍՕ Խաչի Շրջանային վարչութեան, 15 Յուլիս 1946 - 31 Մարտ 1948:

Երկամեայ Գործունէութեան Տեղեկագիր ՍՕ Խաչի Շրջանային Վարչութեան, 14 Մայիս 1948 - 26 Մայիս 1950:

Երկամեայ Գործունէութեան Տեղեկագիր ՍՕ Խաչի Շրջանային Վարչութեան, 2 Յունիս 1950 - 22 Մայիս 1952:

Միամեայ Գործունէութեան Տեղեկագիր ՍՕ Խաչի Շրջանային վարչութեան, 28 Մայիս 1952 - 10 Յունիս 1953:

Ամփոփ Տեղեկագիր ՍՕ Խաչի Շրջանային Պատգամաւորական ժողովի, 27 Հոկտեմբեր 1962:

**1.7 Մասնաճիղեր, միաւորներ եւ յանձնախումբեր**

Երկամեայ Տեղեկագիր ՍՕ Խաչի Հալէպի մասնաճիղի վարչութեան, (1 12 1944 - 30 6 1946):

Միամեայ Տեղեկագիր ՍՕ Խաչի Նոր Գիւղի մասնաճիղի վարչութեան, (24 4 1940):

Երկամեայ Տեղեկագիր ՍՕ Խաչի Նոր Գիւղի մասնաճիղի վարչութեան, (15 6 1940

- 15 7 1942):

Երկամեայ Տեղեկագիր ՍՕ Խաչի Նոր Գիւղի մասնաճիղի վարչութեան, (31 7 1960 - 23 7 1961):

Երկամեայ Տեղեկագիր ՍՕ Խաչի Հոմսի մասնաճիղի վարչութեան, (1 9 1944 - 30 4 1946):

**2. Տպագիր աղբիւրներ (հայերէն)**

2.1 Աղաւնունի Մկրտիչ Եպիսկոպոս, Միաբանք եւ այցելութիւն հայ Երուսաղէմ, Երուսաղէմ, 1929, 544 էջ:

2.2 Գեորգեան Հ. (Հացիկեան), Կեանքիս պատկերազարդ ժապաւենը, ինքնակենսագրութիւն, Հալէպ, 1983, 225 էջ:

2.3 «Կազմական եւ ներքին կանոնագիր Բերիոյ թեմի ազգային վարժարաններու», Հալէպ, 1950, 46 էջ:

2.4 Ճեպեճեան Ռ., Ինքնակենսագրութիւն, յուշեր եւ գործունէութիւն, Հալէպ, 1999, 518 էջ:

2.5 Յարութունյան Գ., Կյանքը եւ գործունէությունը, կազմողներ Միկոյան Ն., Ավետիսյան Հ., Երևան, 2000, 350 էջ:

2.6 Ներսէսեան Զ., Եւ կեանքը շարունակեց իր ճամբան, Անտիպ կենսագրութիւն Խաչէր Ներսէսեանի (մեքենագիր), Հալէպ, 1998:

2.7 «Սեբեոսի Եպիսկոպոսի Պատմություն», Երևան, 1939, 216 էջ:

2.8 Սիւրմեան Ա. արք., Պատմութիւն Հալէպի Հայոց, Խ. Ա., Հալէպ 1940, 1093 էջ:

2.9 Սիւրմեան Ա. արք., Պատմութիւն Հալէպի Հայոց, Խ. Գ., Փարիզ, 1950, 966 էջ:

2.10 Ֆապրիքաճեան Լ. Ս., Կարաւանը մահուան ճանապարհին, Պէրոյթ, 1985, 182 էջ:

**3. ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

Հայերէն

3.1 Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Խ. Ա., Երևան, 1964, 486 էջ:

3.2 Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ գաղթականության, Խ. Ա., Գահիրէ, 1941, 722 էջ:

3.3 Աճառյան Հ., Հայոց գրերը, Երևան, 1968, 402 էջ:

3.4 Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, 766 էջ:

3.5 Անդրեասյան Ա., Համազգային առաքելություն 1906-1981, Ա.Մ.Ն., 1981, 130 էջ:

3.6 Բարխուդարյան Վ. Բ., Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1967, 498 էջ:

3.7 Բայրամյան Ա. Ա., Ալեքսանդրեոսի սանջաքի հարցը և միջազգային դիվա-



- Նագիտությունը (1936-1939), Երևան, 1998, 212 էջ:
- 3.8 Բայբերդյան Վ., Օսմանեան կայսրության պատմություն, Երևան, 2011, էջ 202:
- 3.9 Գալուստեան Գ., Մարաշ, Նիւ Եորք, 1988, 988 էջ:
- 3.10 Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, մշակութային կյանքի ուրվագիծ, Երևան, 1962, 248 էջ:
- 3.11 Գիւզալեան Գ., Պատմութիւն հայ կրթական եւ հրատարակչական համազգային ընկերութեան, Համազգայինի եւ Նշան Փալանճեան ճեմարանի ամեակ, 1929-1954, Պէյրութ, 1954, 252 էջ:
- 3.12 Դալլաքյան Կ. Լ., Սփյուռքահայ առաջդիմական կազմակերպությունները խաղաղության և դեմոկրատիայի համար մղվող պայքարում, Երևան, 1968, 42 էջ:
- 3.13 Դալլաքյան Կ. Լ., Հայ սփյուռքի պատմություն, Երևան, 1999, 319 էջ:
- 3.14 Դալլաքյան Կ. Լ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն, (1921-1940), գիրք առաջին, Երևան, 1999, 308 էջ:
- 3.15 Դալլաքյան Կ. Լ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն, գիրք երկրորդ, 1930-ականների վերջերից 1990-ականների սկիզբը, Երևան 2007, 503 էջ:
- 3.16 Դար մը պատմութիւն, Հայ բարեգործական ընդհանուր միութիւն, հատոր առաջին, 1906-1940, Գահիրէ - Փարիզ, Նիւ Եորք, 2006, 268 էջ:
- 3.17 Դար մը պատմութիւն, Հայ բարեգործական ընդհանուր միութիւն, հատոր երկրորդ, 1941-2006, Գահիրէ - Փարիզ, Նիւ Եորք, 2006, 456 (186 էջ):
- 3.18 Եազըճեան Գ., Սփիւռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները Խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի), Երևան, 2016, 352 էջ):
- 3.19 Եղիայեան Բ., Սերունդի մը դաստիարակութիւնը, Անթիլիաս, 1962, 450 էջ:
- 3.20 Եղիայեան Բ. Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1914-1972, Անթիլիաս, 1975, 946 էջ:
- 3.21 Թադէոսյան Ա. Ե., Դամասկոսյան դատավարության հետքերով, Երևան, 1968, 130 էջ:
- 3.22 Թեմիրեան Ա. Ս., Ն. Յ. Դաշնակցութիւն, Բեզար Նաասարդեան, Սովետական Հայաստան, Պէյրութ, 1967, 279 էջ:
- 3.23 Թորանեան Թ., Ակնարկ սուրիահայ թատերական պատմութեան եւ դերասան Բարսեղ Արովեանի յուշերը, Պէյրութ, 1973, 215 էջ:
- 3.24 Թորանեան Թ., Մարաշի ազգ. Մեսրոպեան կեդր. երկսեռ վարժարան, Հալէպ, 1988, 128 էջ:
- 3.25 Թորիկեան Բ., Պատմութիւն հայ մարմնակրթական ընդհանուր միութեան, հատոր երկրորդ, 1940-1974, Պէյրութ, 1999, 411 էջ:
- 3.26 Թովուզյան Ն. Խ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952),

- Երևան, 1978, էջ 250:
- 3.27 Թովուզյան Ն. Խ., Հայերի մասնակցությունը Սիրիայի և Լիբանանի ազգային ազատագրական և դեմոկրատական շարժումներին, Երևան 1968, 199 էջ:
- 3.28 Թովուզյան Ն. Խ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986, 371 էջ:
- 3.29 Խորշոռյան Լ. Ա., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից Էտապում, Երևան, 1964, 470 էջ:
- 3.30 Կարապետյան Ռ. Կ., Սիրիա-ամերիկյան յարաբերությունները (1967-1996), Երևան, 2000, 199 էջ:
- 3.31 Կարապետյան Ռ. Կ., Արաբական երկիրների նոր և նորագույն պատմություն, Երևան, 2003, 408 էջ:
- 3.32 Կիրակոսյան Զ., Հակոբյան Ն., Դաշնակները իմպերիալիզմի գործակալներն են Մերձավոր Արևելքի երկրներում, Երևան 1960, 58 էջ:
- 3.33 Համազասպյան Վ., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը, Երևան, 2001, 303 էջ:
- 3.34 Հայ գաղթավայրերի պատմություն, հ. Բ., Երևան, 2003, 520 էջ:
- 3.35 Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967), Երևան, 1970, 623 էջ:
- 3.36 Հայ ժողովուրդի պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 8, Երևան, 1970, 580 էջ:
- 3.37 Ղազարեան Ս., Հայկական փոքր գաղութներ Ազեգ, ԱՖրին, Արաբ Փունար, Պէյրութ, 1965, 261 էջ:
- 3.38 Ղանալանյան Տ., Սփյուռքի ներքին տեղաշարժերը, 1950-1980-ական թուականներին, Երևան, 2016, 164 էջ:
- 3.39 Մանասերյան Ռ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևատանի դեմ մ.թ.ա. 94-64 թթ., Երևան, 1987, 248 էջ:
- 3.40 Մարտիրոսյան Ռ., Դաշնակցության հակաժողովրդական գործակցությունը երկրորդ համաշխարհային տարիներին, Երևան, 1986, 140 էջ:
- 3.41 Մելիքսեթյան Ն. Ու., Հայրենիք-սփյուռք առնչությունները և հայրենադարձություն, Երևան, 1985, 475 էջ:
- 3.42 Մելքոնեան Է. Լ., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Երևան, 2005, 582 էջ:
- 3.43 Մելքոնյան Զ., ԽՍՀՄ-Թուրքիա հարաբերությունները. հայկական հարցը, Սևծովյան նեղուցների խնդիրը և դաշնակից պետությունները (1945-1947) Երևան, 2013, 240 էջ:
- 3.44 Հարությունյան Ն., Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Երևան, 2002, 301 էջ:
- 3.45 Հովհաննիսյան Ն. Հ., Սարգսյան Ն. Ս., Սիրիան անկախության համար մղված



- պայքարում (1917-1946), Երևան, 1975, 319 էջ:
- 3.46 Հովհաննիսյան Ն. Ն., Ազգային-ազատագրական պայքարը Լիբանանում (1939-1958), Երևան, 1967, 331 էջ:
- 3.47 Հովհաննիսյան Ն. Կ., Արաբական երկիրների պատմություն, IV, անկախության և ինքնիշխանության դարաշրջան 1958-2005թթ. Երևան, 2007, 767 էջ:
- 3.48 Յուզամատեան Հայ Երիտասարդաց ընկերակցութեան 1931-2011, 80 Ամեակ, Հալէպ, 2011, 320 էջ: (կազմութիւնն ու հիմնադրութիւնը Յակոբ Միքայէլեան):
- 3.49 Յուզամատեան Ն.Մ.Մ.-ի 1918-1958, Պէյրութ, 1958. Աշխատասիրեց Ներսէս աբեղայ Բաղտիկեան, 370 էջ:
- 3.50 Չոլաքեան Յ., Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը, Անթիլիաս, 2006, 257 էջ:
- 3.51 Չոլաքեան Յ., Հալէպահայ պարբերական մամուլի համառօտ նկարագրութիւն (մեքենագրուած), Հալէպ, 1978, 64 էջ:
- 3.52 Չոլաքեան Յ., Յուզամատեան Քարէն Եփփէ ազգային ճեմարանի, Հալէպ, 1997, 761 էջ:
- 3.53 Չոլաքեան Յ., Ութսունամեակ Հալէպի ազգային Սահակեան վարժարանի, Հալէպ, 2007, 606 էջ:
- 3.54 Չոլաքեան Յ., Տարեգրութիւն Հայ աւետարանական Բեթէլ վարժարանի (1923-2013), Պէյրութ, 2016, 660 էջ:
- 3.55 Չոլաքեան Յ., Քեսապ, Կ. Ա., Հալէպ, 1995, 571 էջ:
- 3.56 Չոլաքեան Յ., Քարէն Եփփէ Հայ գողգոթային եւ վերածնունդին հետ, Հալէպ, 2001, 168 էջ:
- 3.57 Պարիկեան Հ. եւ Վարժապետեան Յ., Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու, Հալէպ, 1973, 264 էջ:
- 3.58 Պարսումեան Գ., Պատմութիւն Այնթապի Յ. Յ. Դաշնակցութեան (1898-1922), Հալէպ, 1957, 341 էջ:
- 3.59 Պարսումեան Գ. Յ., Քսանամեակ Զաւարեան կրթական միութեան եւ վարժարանի, Հալէպ, 1956, 140 էջ:
- 3.60 Պերպլերեան Հ. եւ Ներսէսեան Խ, աւագ քինյ., Յուզամատեան Քիլիսի Հայոց, Պէյրութ, 1969, 665 էջ:
- 3.61 Սահակեան Ա., Դիւցազնական Ուրֆան եւ իր հայրորդիները, Պէյրութ, 1955, 1368 էջ:
- 3.62 Սեւան Գ., Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1946-1985), Երևան 1997, 367 էջ:
- 3.63 Սիմոնյան Ն., Դաշնակցությունը հակակոմունիզմի ծառայության մեջ, Երևան, 1966, 144 էջ:

- 3.64 Սիմոնեան Ն., Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, 1968, 672 էջ:
- 3.65 Սամսոնյան Հայկ, Բանակի դերը Սիրիայի քաղաքական կյանքում, ռազմական հեղաշրջումների ֆենոմենը, Երևան, 2013, 269 էջ:
- 3.66 Տեմիրճեան Վ. Եպս., Գաւազանագիրք, Լիբանանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, Կ. Ա., Անթիլիաս, 1980, 510 էջ:
- 3.67 Տունկեան Գ., Նիւթեր Լաթաքիոյ եւ շրջակայքի հայ ազգաբնակչութեան պատմութեան, Հալէպ, 1983, 61 էջ:
- 3.68 Թեհեանեան Ա. աւագ քինյ., Կարմուճ, Հալէպ 1990, 70 էջ:
- 3.69 Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համանքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2011, 154 էջ:
- 3.70 Ֆիշենկճեան Ա., Յուզամատեան սուրիահայ օգնութեան խաչի 1919-2009, Հալէպ, 2010, 440 էջ:

**Արաբերէն**

- 3.71 السيد اديب. ارمينيا في التاريخ العربي. 1972  
Ալ-Սայէտ Ետիպ, Արմինիա ֆի ալ-թարիխ ալ-արաբի
- 3.72 د. العيطه احمد عدنان. ازمه الاسكندرون. عصبه الابم دمشق. 2000  
Դոկտ. Ալաթիա Ահմատ Ատնան, Ազմէդ Ալիսկանտարուն, իսմադ ալումամ
- 3.73 الاستاذ الطبيب الكيالي طه اسحاق. تاريخ الطب و الاطباء في حلب و اطباء الاسنان والصيداله. الجزء الاول. حلب. 1999  
Ալ-ուսթաճ աթթապիպ ալքայիալի թահ սասուակ, թարիխ աթթըպ ուալաթիպպա ֆի հալպա ուաթիպա ալասնան ուալսայատիլա, ալճիճը ալաուալ, Հալէպ, 1999:
- 3.74 المستشار فؤاد حسن حافظ. تاريخ الشعب الازمني منذ البدايه حتى اليوم. القايره 1981.  
Ալմուսդաշար Հասան Հաֆէճ Ֆուատ, թարիխ ալշասապ ալ-արմանի մունզու ալ-պիտայա հադդա ալեում, Կահիրա, 1986:
- 3.75 د. كشيبيان الكسندر. كفتاح الازمن من اجل عروبته لواء الاسكندريه. حلب. 2000  
Բժ. Քէշիշեան Ալեքսանտր, քիֆահ ալ-արման մին աճըլ ուրուպթ լիուա ալ Խսկանտարուն, Հալէպ, 2000:
- 3.76 د. كشيبيان الكسندر. صفحات وناقيه من جريده « التقدم» الخليليه عن الاحوال الازميه و العربيه في الدوله العثمانيه و البلاد الشاميه. حلب. 1991  
Բժ. Քէշիշեան Ալեքսանտր, սաֆահադ ուասաիկիէ մին ճարիտթ Ալ Թակատտոմ ալ-հալպաիէ ան ալ-ահուալ ալ-արմանիէ ու ալ-արապիէ ֆի ալ-դաուլադ ալ-օսմանիէ ու ալ-պիլադ ալշամիէ, Հալէպ, 1996:
- 3.77 ديب فرح الله. في البدايه حتى التهجير محطات تاريخيه في نضال الشعب الازمني. الخلقه الادبيه الازميه اللبنانيه (7). بيروت. 1993.  
Ֆարաճ ալլահ Տիպ, ֆի ալ-պիտայա հադդա ալ-թահիճի թարիխիէ ֆի նիտալ ալ-շասօ ալ-արմանի, ալ-հալպակա ալ-ատապիէ ալ-արմանիէ ալ-լուպնանիէ (3), Պէյրութ, 1993:



- 3.78 زهر الدين صالح الصداقه العربيه الارمنيه المصير المشترك. بيروت 1994  
Սալեի Զահր ալ-Տին, ալ-սատակա ալ-արապիե ալ-ալմանիե ալ-մասիր ալ-մուշթարաք, Պէյրուֆ, 1994:
- 3.79 اريسيان تورا. غوائل الارمن في الفكر السوري. دمشق. 2002  
Արիսիան Նորա, Ղաուաւէ ալ-արման ֆի ալ-ֆիզըր ալ-Սուրի, Տիմաշկ, 2002:
- 3.80 عزازيان هوري. نبذه تاريخه موجزه عن الجاليات الارمنيه في البلاد العربيه سوريه لبنان. العراق فلسطين. الاردن و مصر. حلب. 1993  
Ազազեան Հուրի, Նապազ թարիխիե մուճագա ասն ալ-ճալիեթ ալ-արմանիե ֆի ալ-պիլատ ալ-արապիե Սուրիա, Լիպնան, ալ-Իրաք, Ֆլաթթին, ալ-Օրտոն, Մասըր, Հալէպ, 1993:
- 3.81 بايراميان اليشان. قضية لواء اللاسكندرون والدبلوماسية الدولية (1931-1939م). ترجمة هرانت حبشيان. دمشق. 1993  
Պայրամեան Ալիշան, Կատիեղ Լիոա Իսկանտարուն ու ալ-տիպլոմասիե ալ-տուալիե (1939-1936 թթ.), թարճումադ Հրանդ Հապէշեան, Տիմաշկ, 1993:
- 3.82 دملخي محمد هلال. مسرح حلب في مئة عام. حلب. 2000  
Տամլախի Մուհամմատ Հիլալ, մասրահ Հալլապ ֆի միադ ամ, Հալէպ, 2000:
- 3.83 الطبري ابو جعفر محمد بن جرير تاريخ الطبري. تاريخ الرسل والملوك. تحقيق محمد ابو الفضل ابراهيم دارالمعارف بمصر. الجزء التاسع. 1918م  
Ալ-Թապարի, Ապու ճաաֆար Մուհամմատ պին ճարիր, Թարիխ ալ-Թապարի, թարիխ ալ-րըսու ու ալ-մըլուք, թահկիկ Մուհամմետ ապու ալ-Ֆատըլ իպրահիմ տար ալ-մաարեֆ պի Մասըր, ալ-ճիզըր ալ-թասեղ, 1968:
- 3.84 حافظ. المستشار فؤاد حسن. تاريخ الشعب الارمني منذ البداية حتى اليوم. القاهرة. 1981  
Հաֆէզ, Ֆուատ Հասան ալ-Մուսաշար, թարիխ ալ-շաապ ալ-արմանի մունճու ալ-պիտայա հադդա ալ-եոմ, ալ-Կահիրա, 1986:
- 3.85 لوسيان بيتراون. حافظ الاسد. مسيرة مناضل. الطبعة الثالثة. 1994  
Լուսիան Պիդըրլան, Հաֆէզ ալ-Ասատ. մասիրեղ մունատէլ, ալ-թապաա ալ-սալիսա, 1994:
- 3.86 اغلاق ميشيل. في سميل البعث. بيروت. 1989  
Աֆլակ Միշէլ, ֆի սապիլ ալ-պաաս, Պէյրուֆ, 1959:

**Անգլերեն**

- 3.87 Hitti P., K., History of Syria, including Lebanon and Palestine, New Jersey, USA, 2004, 29.
- 3.88 Fawcett L., International Relations Of The Middle East, Third Edition, Oxford University Press 2013, 123 pages.
- 3.89 Pierret T., Religion and state in Syria, The sunni ulama under the Ba'th, Cambridge University Press, New York, 2013, 275 pages.
- 3.90 Van Dam N., The struggle for power in Syria, politics and society under Asad and the

Ba'th party, Tauris I.B., London 2011, 272 pages.

**4. ԅՕԴՈՒԱԾՆԵՐ**

- 4.1 Ադդարեան Ա., Նիւթեր` Հալէպի ՆՄԸՄ-ի պատմութեան համար, «Օշական», ԺԱ. տարի, թիւ 12 (3334), Հալէպ, 1988:
- 4.2 Ազեզեան Ն., Բերիոյ թեմը, «Հասկ», ամսագիր, Լիբանան, Ապրիլ 1996:
- 4.3 Ազեզեան Ն., Հայերը Սուրիոյ մէջ, Ա. մաս (Պատմական համառօտ ակնարկ), Բ. մաս. Բերիոյ թեմը եւ եկեղեցիները, «Հասկ» Հայագիտական տարեգիրք, Նոր շրջան, Թ. տարի, Անթիլիաս-Լիբանան, 1997-2001:
- 4.4 ԱՆստորագիր, Սուրիական Նամականի, «Հայաստանի կոչնակ», Լ. տարի, թիւ 25, Նիւ Եորք 1930:
- 4.5 Առաքելյան Ն., Հայրենադարձ հայերի ժամանումը Բաթում-Երևան, «Սովետական Հայաստան», ամսագիր, թիւ 7(25), Երևան, 1947:
- 4.6 Բադալյան Ա., Հալէպի հայ համայնքը 1964-1985, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 1, Երեւան, 2009: (24-Յուլիս- 1964 թ.)
- 4.7 Բադալյան Ա., (23 Նոյտեմբեր 1968) Հալէպում ԽՍՀՄ-ի գլխավոր հյուպատոսության տեղեկանքը հալէպահայ համայնքի մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», N 2, Երևան, 2009:
- 4.8 Բադալյան Ա., Սիրիայում ԽՍՀՄ-ի դեսպանատան տեղեկանքը Սիրիահայ գաղթօջախի մասին, Նոյտեմբեր 17- 1963 թ. (Դամասկոս), «Բանբեր Հայաստանի արխիվների», N 2, Երևան, 2009 (ռուսերէն):
- 4.9 Գասպարյան Ս., Սկիւտըքահայ մշակութային և հայրենակցական միությունները արդի շրջանում, «Պատմաբանասիրական հանդէս», N 3 (50), Երևան, 1970:
- 4.10 Գեղորգյան Ա., Էջեր հայրենադարձության պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվների», թիւ 2, Երևան, 1969:
- 4.11 Գուշակ, Կեանքը Սուրիոյ մէջ, «Հայաստանի կոչնակ», թիւ 19, Նիւ Եորք, 1937:
- 4.12 Դանիէլեան Ժ., Հայ պարբերական մամուլի Նորայայտ անուններ, «Հայկազեան հայագիտական հանդէս», Կ. Զ., Պէյրուֆ, 1977-1978:
- 4.13 Դրամբյան Ռ., Հայրենադարձ հայ նկարիչների ստեղծագործության ցուցահանդէսը, «Սովետական Հայաստան», ամսագիր, թիւ 8 (26), Երևան, 1947:
- 4.14 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Ա. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 27, Նիւ Եորք, 1948, թիւ 27:
- 4.15 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Բ. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 28, Նիւ Եորք, 1948:
- 4.16 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Գ. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 29, Նիւ Եորք, 1948:



- 4.17 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Դ. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 30, Նիւ Եորք, 1948:
- 4.18 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Ե. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 31, Նիւ Եորք, 1948:
- 4.19 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Զ. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 32, Նիւ Եորք, 1948:
- 4.20 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Է. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 35, Նիւ Եորք, 1948:
- 4.21 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Ը. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 36, Նիւ Եորք, 1948:
- 4.22 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Թ. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 37, Նիւ Եորք, 1948:
- 4.23 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, Ժ. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 38, Նիւ Եորք, 1948:
- 4.24 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, ԺԱ. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 39, Նիւ Եորք, 1948:
- 4.25 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, ԺԲ. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 40, Նիւ Եորք, 1948:
- 4.26 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, ԺԳ. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 43, Նիւ Եորք, 1948:
- 4.27 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ ԺԴ. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 47, Նիւ Եորք, 1948:
- 4.28 Եղիայեան Բ., Հայերը Սուրիոյ եւ Լիբանանի մէջ ԺԵ. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 48, Նիւ Եորք, 1948:
- 4.29 Զօրեան Աբիլ եւ Հալլաճեան Մանուէլ, Հայ դէմքեր եւ դէպքեր Հալեպի ելեկտրականութեան հաստատութեան մէջ, «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Գ. գիրք, Հալեպ, 1985:
- 4.30 Թեօլեօլեան Մ., Մամուլը Սփիւռքի մէջ, «Նայիրի», ամսագիր գրականութեան եւ արուեստի, Դ. տարի, թիւ 78, Հալեպ, 1948:
- 4.31 Թոփճեան Յ., Հայութիւնը Սուրիոյ մէջ, Ա. մաս, «Հայաստանի կոչնակ», թիւ 24, Նիւ Եորք, 1928:
- 4.32 Թոփուզյան Հ., Հայ աշխատատեղի մասնակցութիւնը Սիրիայի եւ Լիբանանի Ազգային-դեմոկրատական շարժումներին 1947-1952, «Արևելագիտական ժողովածո», հ. Բ., Երևան, 1964:
- 4.33 Թոփուզյան Հ. Խ., Լիբանանի արաբ եւ հայ աշխատատեղի համատեղ պայքարը աշխատանքային կողմերի համար 1945-1946թթ., «Մերձավոր եւ միջին

- արևելքի երկրներ եւ ժողովուրդներ», հ. Գ., Երևան, 1967:
- 4.34 Լեւոն Վարդան, Մուսա Լերան երկրորդ արտագաղթը, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ը., Պէյրութ, 1980:
- 4.35 Մանասյան Գ., Հայրենադարձ անգրագետ հայերի ուսումը, «Սովետական Հայաստան», ամսագիր, թիւ 6 (24), Երևան, 1947:
- 4.36 Մելիքսեթյան Հ. Ու., Սփյուռքահայերի ներգաղթը Սովետական Հայաստան (1921-1925), «Պատմաբանասիրական հանդէս», N 2 (13), Երևան, 1961:
- 4.37 Մելիքսեթյան Հ. Ու., Սփյուռքահայերի հայրենադարձութիւնը (1962-1982), «Լրաբեր հասարակական գիտությունների», N 7 (487), Երևան, 1983:
- 4.38 Մելքոնյան Բ., Սփյուռքահայութիւնը եւ հայկական հարցի լուծման խնդիրը (1945-1947 թթ.), «Պատմաբանասիրական հանդէս», N 2, Երևան, 2010:
- 4.39 Մինասեան Մ., Հայ պարբերական մամուլի նորայայտ անուններ, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Թ., Պէյրութ, 1981:
- 4.40 Միրիաթեան Պ. արք., Հալեպի հայ կաթողիկէ թեմը երէկ եւ այսօր, «Պարբերաթերթ», հայ կաթողիկէ առաջնորդարանի, Հալեպ, 1993:
- 4.41 Միքայէլեան Յ., Հայ-արաբ գործակցութիւնը թատերական մարզին, «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Զ. գիրք, Հալեպ, 2000:
- 4.42 Մուրատյան Ս. Մ., Սիրիական Բուրժուազիայի հայկական հատուածի դիրքերը երկրի Եկոնոմիկայում (1945-60ական թվականներ), «Լրաբեր հասարակական գիտությունների», N 10 (574), Երևան, 1990:
- 4.43 Մովսիսյան Ա., Ինչպէս են սովորում հայրենադարձ երեխաները, «Սովետական Հայաստան», ամսագիր, թիւ 6 (24), Երևան, 1947:
- 4.44 Մսըրէան Զ., Թուրքիոյ ներքին գաւառներու հայոց պարտադիր արտագաղթը, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Գ., Պէյրութ, 1972:
- 4.45 Մսըրէան Զ., Սփիւռքահայ դիքորոշումներ` Համաշխարհային Բ. պատերազմի սկզբնատրութեան (1939-1940), «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Ը., Պէյրութ, 1980:
- 4.46 Մսըրէան Զ., Համաշխարհային երկրորդ պատերազմի վախճանը եւ հայերը, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԺԳ., Պէյրութ, 1993:
- 4.47 Նազարյան Գ., Սիրիայի եւ Լիբանանի հայերը, «Սովետական Հայաստան», ամսագիր, թիւ 89 (1415), Օգոստոս-Սեպտեմբեր, Երևան, 1946:
- 4.48 Նազարեան Ս., Սուրիական երկաթուղագիծը եւ հայոց նպաստը անոր վերելքին, «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Գ. գիրք, Հալեպ, 1985:
- 4.49 Նաթանեան Մ., Լեզուական հարցը Սուրիոյ մէջ եւ հայերէնի ապագան, «Սիոն», թիւ 5-6, Մայիս-Յունիս, Երուսաղէմ, 1942:
- 4.50 Նաճարյան Ե. Հ., Հայ-արաբական մշակութային կապերը (Սիրիա, Լիբանան)



1945-70 թթ., «Մերձավոր և միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», հ. Զ., Արաբական երկրներ, Երևան, 1974:

4.51 Նաճարյան Ե. Ն., Արաբ ժողովրդի հակաիմպերիալիստական պայքարի արտացոլումը սիրիահայ և լիբանանահայ գրողների գործերում, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 9 (292), Երևան, 1967:

4.52 Սաղաթելյան Ի., 1946-1948 թթ. Հայրենադարձությունը և հայ շեղափոխական Դաշնակցությունը 1946-1948 թթ. «Հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրները այսօր» համահայկական գիտաժողով զեկուցումների ժողովածու, Երևան, 2008:

4.53 Սամսոնյան Հայկ, Հայ ռազմական գործիչների դերը սիրիական բանակում (1946-1970 թթ.), «Մերձավոր Արևելքի պատմություն, քաղաքականություն, մշակույթ», հոդուածների ժողովածու, Երևան, 2009:

4.54 Սապունճեան Զ., Հալեպի առաջին թերթերը եւ հալեպահայ առաջին լրագրողները, «Հասկ», ամսագիր, ԾԴ. տարի, թիւ 89, Պէյրուֆ, 1985:

4.55 Սապունճեան Զ., Համազգային հայ մշակութային ու կրթական ընկերակցութեան Հալեպի մասնաճիւղի կէս դարու պատմութիւն, «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Գ. գիրք, Հալեպ, 1985:

4.56 Սարգսյան Ն. Ս., Սիրիայի սոցիալ-տնտեսական դրությունը ֆրանսական մանդատային ռեժիմի տարիներին (1920-1936թթ.), «Մերձավոր և միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. Գ., Երևան, 1967:

4.57 Սարգսյան Ն. Ս., Սովետա-սիրիական տնտեսական ու տեխնիկական համագործակցությունը (1955-1970), «Մերձավոր և միջին արևելքի երկրներ ու ժողովուրդներ», հ. Զ., Երևան 1974:

4.58 Սարգսյան Ն. ՆԿԿ գործունեությունը սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման և Նրանց սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու ուղղությամբ (1946-1948), «Լրաբեր հասարակական գիտությունների», N 8 (488), Երևան, 1983:

4.59 Սեդրակեան Յ. քինյ., Շառոյեան Լ., Ակնարկ ` Հալեպի հայկական վարժարաններու պատմութեան, «Օշական», ԺԱ. տարի, թիւ 12 (3334), Հալեպ, 1988:

4.60 Սուրիահայ լրագրութիւնը, «Բազմավեպ», թիւ 10, Վենետիկ, 1926:

4.61 Սվաճեան Վ., Ուրուագիծ Հալեպի չԵԸ-ի թատերական շարժումի, «Նոր Ապրիլ», Ա. տարի, թիւ 3, Հալեպ, 1980:

4.62 Վիրաբյան Ա., 1946-1948 թթ. Մեծ Հայրենադարձությունը. Հիմնահարցեր և խնդիրներ. «Հայրենադարձությունը և դրա դասերը. Հայրենադարձության հիմնախնդիրները այսօր» համահայկական գիտաժողով զեկուցումների ժողովածու, Երևան, 2008:

4.63 Տեր Խաչատուրեան Ա., Սուրիահայ մամուլի պատմութիւն, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. Գ., Պէյրուֆ, 1972:

4.64 ՓիրԲուդաղովա Է., Քաղաքական եւ սոցիալտնտեսական վերափոխումները Սիրիայում (1962-1970 թթ.), «Մերձավոր և միջին արևելքի երկրներ ու ժողովուրդներ», հ. Թ., Երևան. էջ 27:

4.65 Քէշիշեան Վ., Գորգագործութիւնը Սուրիոյ մէջ, «Գեղարդ», Զ. գիրք, Հալեպ, 2000:

4.60 Օրջանեան Մ. Քինյ., Սուրիա-Լիբանան, Դամասկոս, Հալեպ, Պէյրուֆ, Ա. մաս, «Հայաստանի կոչնակ», ԼԷ. տարի, թիւ 34, Նիւ Եորք, 1937:

4.66 Օրջանեան Մ. քինյ., Սուրիա-Լիբանան, Դամասկոս, Հալեպ, Պէյրուֆ, Բ. մաս, «Հայաստանի կոչնակ», ԼԷ. տարի, թիւ 35, Նիւ Եորք, 1937:

4.67 Ֆիշենկճեան Ա., Հայ-արաբական մշակութային առնչութիւնները 1946-1970-ական թուականներուն, «Գանձասար» բացառիկ, Հալեպ, 2002:

4.68 Ֆիշենկճեան Ա., Գամիշլիի հայ գաղութին կազմաւորումը, «Շալիղ» Ա. Ե. ճեմարանի պարբերաթերթ, Գ. տարի, Հալեպ, 2002:

4.69 Ֆիշենկճեան Ա., Սիրիահայերի ներգաղթը Խորհրդային Հայաստան (1960-ական թվականներ), «Բանբեր Հայաստանի արխիւների», N 2 (102), Երևան, 2003:

4.70 Ֆիշենկճեան Ա., Սիրիահայ կրթական հաստատությունները 1920-1980 թթ., «Կանթեղ» գիտական հոդուածների ժողովածու, N 1, Երևան, 2003:

4.71 Ֆիշենկճեան Ա., Սիրիահայ գաղթօճախը Բ. Աշխարհամարտից հետո 1940-1970-ական թթ., «Կանթեղ» գիտական հոդուածների ժողովածու, N 3, Երևան, 2003:

4.72 Ֆիշենկճեան Ա., Արտաազգ արք. Սիւրմեան Առաջնորդ Բերիոյ թեմի, «Շալիղ» Դ. տարի, Հալեպ, 2004:

4.73 Ֆիշենկճեան Ա., Ճարապլուս (Սկիզբէն ` 1920-էն մինչեւ յիսունական թթ.), «Շալիղ» Ե. տարի, Հալեպ, 2005:

4.74 Ֆիշենկճեան Ա., Սուրիահայ օգնութեան խաչի գործունեութիւնը Սուրիոյ տարածքին 1929-1930 թուականներուն, «Երթ», սուրիահայ տարեգիրք, հ. 2., Հալեպ, 2006:

4.75 Ֆիշենկճեան Ա., Հայերու հոսքը դէպի Սուրիոյ հիւսիս արեւելեան շրջանները ` ԹԵԼ ՊՐԱԳ (Ա.) (սկիզբէն մինչեւ 1938 թ., «Տաթես», հայագիտական տարեգիրք, հ. Ա., Հալեպ, 2008:



**5. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ****Տարեգիրք:****Հայերեն**

- 5.1 «Ամենուն տարեգիրք», Պեյրուֆ, 1953, 1959:  
 5.2 «Արեւելք», տարեգիրք, Հալեպ, 1948:  
 5.3 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Ա. գիրք, Հալեպ, 1975:  
 5.4 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Բ. գիրք, Հալեպ, 1976-1978:  
 5.5 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Գ. գիրք, Հալեպ, 1985:  
 5.6 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Դ. գիրք, Հալեպ, 1991:  
 5.7 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Ե. գիրք, Հալեպ, 1996:  
 5.8 «Գեղարդ», սուրիահայ տարեգիրք, Զ. գիրք, Հալեպ, 2000:  
 5.9 «Դամասկահայ ամենուն տարեգիրք», Դամասկոս, 1958:  
 5.11 «Նոր Դրագարկ» տարեգիրք, Լիբանան, 1997:  
 5.10 «Տաթես», Գրական, բանասիրական եւ կրօնական տաերցոյց, Հալեպ, 1925-1930:

**Արաբերեն**

- 5.12 كيجارت. النشرة السنوية الكتاب السادس. حلب ٢٠٠٢

**բ. Ամսագրեր****Հայերեն**

- 5.13 «Բագին», Պեյրուֆ, 1964, թիւ 4:  
 5.14 «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 1930, թիւ 9; 1945, թիւ 50; 1946, թիւ 11; 1948, թիւ 39:  
 5.15 «Հասկ», պաշտօնական ամսագիր կաթողիկոսութիւն Հայոց Մեծի տանն Կիլիկիոյ, 2000:  
 5.16 «Նոր Ապրիլ», Հալեպ, 1980:  
 5.17 «Պարբերաթերթ», պարբերաթերթ Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի, Հալեպ, 1980  
 5.18 «Սիոն», Երուսաղէմ, 1942:  
 5.19 «Սովետական Հայաստան», Երեւան, 1946, թիւ 14, 15, 16: 1947, թիւ 7:

**Արաբերեն**

- 5.20 مجلة الغد. دمشق. العدد ٢٧. ١٩٩١

**գ. Թերթեր (օրաթերթ, շաբաթաթերթ, երկշաբաթաթերթ)****Հայերեն**

- 5.21 «Ազդակ», Պեյրուֆ, 1945-1948:  
 5.22 «Ազդակ շաբաթօրեակ», Պեյրուֆ, 1945-1947, 1950, 1962, 1974, 2016:  
 5.23 «Ազդարար», Պեյրուֆ, 1948:  
 5.24 «Արարատ», Պեյրուֆ, 1946, 1956:  
 5.25 «Արեւ», Գահիրե, 1984:  
 5.26 «Արեւելք», Հալեպ, 1946-1961:  
 5.27 «Գանձասար», շաբաթաթերթ, Դ. տարի, Հալեպ, 1995-2000:  
 5.28 «Եփրատ», Հալեպ, 1929-1949:  
 5.29 «Զարթօնք», Պեյրուֆ, 1946, 1962-1967:  
 5.30 «Սուրիա», Հալեպ, 1946-1960:  
 5.31 «Սովետական Հայաստան», Երեւան, 1946-1948:

**Արաբերեն**

- 5.32 47 العدد 1959. الجريدة الرسمية. عام  
 5.33 18 العدد 1960. الجريدة الرسمية. عام  
 5.34 11-٤٨ العدد ٢٠٠٢. عام ٢٠٠٢. العدد ٢١٢٧. ١٩٧٢. عام ١٥٢٩. العدد ١٩٧٠. عام ١٥٢٥. العدد ١٤٣٣. ١٥١٣. ١٤٣٤. ١٥٧٠. ١٧٣٤. عام ١٩٢٧. العدد ٢٨٠٠. عام ١٩٢٨. العدد ٢٨٧٥. ٢٩٨٦. عام ١٩٣٠. العدد ٣٥٣٧. عام ١٩٣٨. العدد ٥١٠٨. ٥١١١. ٥١١٩.  
 5.36 ٢٥٥٨ العدد ١٩٧١. دمشق. عام ١٩٧١. الجريدة «البعث».

**6. ԿԱՅՔԷԶԵՐ**

- 6.1 <http://www.hayernaysor.am/cl/archives/115317>  
 6.2 <http://www.aztagdaily.com/archives/292771>  
 6.3 <http://www.aztagdaily.com/archives/44040>  
 6.4 <http://www.dasaran.am/apps/wiki/view/id/4156>  
 6.5 <http://Syrianleaders.com/peresidents/92/>  
 6.6 [http://www.kurdistanabinxete.com/Bajaren\\_kurdistana\\_Binxete/Bajare\\_Qamishlo.htm](http://www.kurdistanabinxete.com/Bajaren_kurdistana_Binxete/Bajare_Qamishlo.htm)



## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

## Ա.

Աբրահամեան Աշոտ 47, 144  
 Աբովեան Բարսեղ 236, 312  
 Ազկիլեան, Գ. 130  
 Ադամեան Հայկուհի 307  
 Ադամեան Յ. 130  
 Ադամեան Սարգիս 307  
 Ադամեան Պետրոս 239  
 Ալաճաճեան Ս. 141, 182, 245  
 Ալ-Աթասիի Հաշիմ /Հաշեմ Ալ-Աթասի/ 32, 86  
 Ալ-Այուպի Աթա Մուհամմատ 31  
 Ալ-Ասատ Հաֆեզ 18, 19, 64, 111, 316  
 Ալ-Ջաաիմ Հուսնի 85, 86, 88  
 Ալ-Շերիֆ Իհսան պեյ 43  
 Ալեքսանեան Յակոբ 127, 254  
 Ալեքսանեան Վազգէն 257  
 Ալթունեան Ասատուր 18, 132, 133  
 Ալթունեան Է. 132  
 Ալթունեան Թաթուլ 137  
 Ալթունեան Ճ. 132  
 Ալթունեան Ռուբէն 261  
 Ալիքեան Ա. 245  
 Ահարոնեան Զապէլ 307  
 Ահարոնով Ռուբէն 163  
 Աիմետ Սուլեյման Աիմետ 247  
 Աղպաշեան Յովհաննէս  
 Աճեմեան Գեորգ 250  
 Աճեմեան Վահան 124  
 Աճեմեան Տ. 235, 236  
 Ամալեան Յակոբ 131  
 Այվազեան Գրիգոր եպս. 73  
 Անոյշ Արմէն 273  
 Անտոնեան Պարգեւ 132  
 Աշճեան Մեսրոպ արք. 63  
 Ապտ ալ-Նասեր Քամալ 101  
 Աջապահեան Խաղ արք. 227  
 Ասլանեան Երուանդ 131  
 Ասիլեան Եփրեմ արք. Տոհմունի 65  
 Արապեան Աւետիս 51

Արման Ա. 245  
 Արսլան Զ. 132  
 Արսլանեան Աւետիս 50  
 Արսլանեան Կարապետ 127  
 Արսլանեան Ֆրետ 91, 105  
 Արսլանեան Նուարդ Սիմոն 307  
 Աւօ Աւետիս Թումայեան 255

## Բ.

Բալուլեան Սոնա 307  
 Բալուլեան Ստեփան 51  
 Բայրամեան Ա. 12, 33, 311  
 Բապուճեան Պ. 129  
 Բատոյեան Եղուարդ 257  
 Բարխուդարեան Վ. Բ. 9, 311  
 Բարոյեան Խորեն /Ծ./ վրդ. 44, 70, 71, 84, 230  
 Բեդիկեան Ազատ 125  
 Բորեան Գ. 141

## Գ.

Գաբրիւս Զ. 130, 267  
 Գաբրիէլեան Մարիա 131, 257  
 Գագանճեան Գեորգ 307  
 Գալենտեր Սուրեն 131, 234  
 Գալեմքերեան Ժ. 130  
 Գալըպճեան Տիգրան 262  
 Գալֆայեան Օ. 236  
 Գանպերեան Գ. 130  
 Գանտահարեան Գեորգ 261  
 Գաշըզճեան Մկրտիչ 127  
 Գապագեան 116  
 Գասպարեան Արա 251  
 Գասպարեան Գաբրիէլ Ծ. վրդ. 18  
 Գասպարեան Գասպար 132, 181  
 Գասպարեան Ս. 25  
 Գարակէօզեան Արշակ 151  
 Գարակէօզեան Լէյլա 279  
 Գարակէօզեան Հաւուրդտ 74  
 Գարակիլկեան Լեւոն 127

Գարամանլեան Արփիար 250  
 Գարամանուկեան Արամ 48, 49, 91, 101  
 Գարամանուկեան Ն. 129  
 Գարամանուկեան Շահէ 49  
 Գարամանուկեան Յակոբ 227  
 Գարամարտեան Ստեփան 307  
 Գարայեան Գառնիկ 127  
 Գարայեան Ժողէֆ 132  
 Գարապաճաքեան Ծերուն 307  
 Գարաօղլանեան Գեորգ 307  
 Գարճեան Յովհաննէս վեր. 74, 198  
 Գեորգեան Հ. 151, 169,  
 Գեորգեան Կ. 59, 107  
 Գիգիբեան Վարդանոյշ 307  
 Գիլկեան Գ. 245  
 Գոյումճեան Գուրգէն 237  
 Գոյումճեան Հայկ 252  
 Գոյումճեան Շաարշ վրդ. / եպս./ 65, 66, 67  
 Գոյումճեան Յակոբ 255  
 Գունտաքճեան Մարտիրոս 127  
 Գուշակչի Անթուան 51  
 Գուշակչի Հիքմէթ 51  
 Գուշեան Զատիկ 259  
 Գուշազճեան Մարտիրոս 252, 254, 255  
 Գրիգորեան Համբարձում 127

## Դ.

Դալլաքեան Կ. 25, 45, 91, 105, 116, 136  
 Դանիէլեան Ժիրայր 258  
 Դարաղուպեան Լեւոն 51  
 Դարեան Ա. 245  
 Դերձակեան Փիլիպոս 307

## Ե.

Եագուպեան Ա. 129, 181  
 Եագուպեան Հայկ 127  
 Եագուպեան Նազարէթ 42, 91, 129, 130  
 Եագուպեան Ստեփան 51  
 Եագուպեան Յակոբ 51  
 Եագուպեան Տ. 181  
 Եազըճեան Գեորգ

Եազըճեան Յովհաննէս 251, 252, 253, 312  
 Եաղաբղեան Կարապետ 124, 131  
 Եափուճեան Ս. 245  
 Եղիայեան Բիզանդ 27, 254  
 Եսայեան Յարութիւն քին. 12  
 Երանոսեան Լեւոն 51  
 Երանոսեան, Ճանիկ 132  
 Երեցեան Մատթէոս 251, 256  
 Երեցեան Պարոյր 258  
 Երեցեան Սուրեն 289  
 Երիցեան Աբրահամ 132  
 Երիցեան Գեղամ 127  
 Եիւզպաշեան Յակոբ 127  
 Եփրեմեան Յ. 181  
 Եփփէ Քարէն 64, 90, 198, 288, 314

## Զ.

Զառիկեան Յովհաննէս 252  
 Զարոբեան Եակով 136, 137  
 Զէյթունցեան Յակոբ 131  
 Զէյթունցեան Արամ 131  
 Զէնեան Լեւոն 226, 227, 259, 292  
 Զօհրապ Գրիգոր 248  
 Զոհրապեան Կիւրեղ եպս. 73  
 Զողպի Ֆարէս պեյ 45  
 Զուղպի Մամտուհ 176  
 Զօրեան Արիկ 127, 318

## Է.

Էայեքեան Գեորգ եպս. 72  
 Էլէյճեան Թրուանտա( Սիրանոյշ) 307  
 Էլոյեան Էղուարդ 307  
 Էպիլիզաթեան Գրիգոր 91, 92, 105, 221  
 Էպիլիզաթեան Մելքոն 92  
 Էքմէքճեան Ա. 124, 253

## Թ.

Թազպազեան Ա. Սապէթ 42  
 Թարաճեան Նատիմ 51  
 Թաուզճեան Ներսէս Ա. քին. 227  
 Թերզեան Ա. 245, 246



Թերճանեան Մ. 251  
 Թեօլեօլեան Մինաս 250, 257, 318  
 Թիւթիւնճեան Խ. 104, 116, 131  
 Թիւմպալեան Երուանդ 131  
 Թիւյսիւզեան 116,  
 Թրթռեան Արտաւազդ վրդ. 289  
 Թորանեան Թորոս 235, 312  
 Թովուզեան Ն. Խ. 13, 17, 23  
 Թովուզեան Օննիկ 250  
 Թովսմանեան Խաչիկ 132  
 Թովսմանեան Մանուկ 132  
 Թումանեան Յ. 240, 248  
 Թումպուլեան Պ. 236  
 Թրեան Ն. 181  
 Թօփճեան Եղբայրք 129  
 Թօփճեան Նուպար 132

**Ի.**

Ինճեան Ստեփան 127  
 Ինճեճիկեան Բժ. Աւետիս 250  
 Իսահակեան Աւետիք 246  
 Իսկէնեան Ժիրայր 262  
 Իսրայելեան Նշան Սարգիսեան 250  
 Իփէկեան Գ. 238

**Լ.**

Լայրեան Գեորգ եպս. 72  
 Լուրեճեան Վ. 181

**Խ.**

Խալիլ Նիզար 141, 246, 248  
 Խաթիպ Պահիճ 39  
 Խանզատեան Ֆերուզ 252, 253  
 Խաչատուրեան Ահարոն 132  
 Խաչատուրեան Ն. 156, 162, 163  
 Խաչատուրեան Յակոբ 132  
 Խաչատուրեան Յասմիկ 51  
 Խաչատուրեան Մ. 131  
 Խաչատուրեան Շահէն 181  
 Խապայեան Սահակ Բ. կթղ. 64  
 Խուրշուդեան Լ. 24, 118  
 Խտրեան Ա. 181

**Մ.**

Մառուկեան Ա. 116, 246, 250, 254, 287

**Կ.**

Կակաճեան Դաւիթ 126  
 Կարապետեան Յովհաննէս 307  
 Կարպուզեան Ա. 130  
 Կարպուզեան Ե. 130  
 Կարպուզեան Կ. 133  
 Կեպէնլեան Սեդրակ 118  
 Կեօվչէնեան Արամ 131  
 Կիտանեան Յարութիւն 127  
 Կիրակոսեան Անդրանիկ 238  
 Կիրակոսեան Զ. 26  
 Կիրակոսեան Շանթ 257  
 Կիրով Ս. Մ. 181  
 Կիլիսէրեան Բարգէն /կթղկ./ 291  
 Կիլիսէրեան Ն.  
 Կոճոյեան Ն. 181  
 Կոստանեան Մ. 236  
 Կոստանեան Յովհաննէս 127  
 Կուտիշինեան Սմբատ 51

**Ն.**

Նաճեան Պետրոս 250  
 Նամպլեան Օննիկ 259  
 Ներարտեան Միհրան 66, 250  
 Նրեթանի Մ. 124, 125  
 Նրեշտակեան Բժ. Յովհաննէս 127  
 Նինտոյեան Գրիգոր 50  
 Նիննաուի Սամի 86, 87

**Ճ.**

Ճապիր Սաստ Ալլահ 42  
 Ճաուտաթ Սալէի 247  
 Ճեպեճեան Աւետիս 133  
 Ճեպեճեան Ռոպէր 21, 47, 133, 134, 139, 267, 311  
 Ճէրեճեան Գնէլ վրդ. /յետագային արք./ 64  
 Ճէրեճեանի Տարօն վրդ. 68  
 Ճուհարեան Կարապետ 255

**Մ.**

Մազեան Համբարձում 127  
 Մազլումեան Արմէն 18, 176  
 Մազլումեան Գեորգ 131  
 Մալեզեան Վ. 151,  
 Մալճեան Վ. 125  
 Մալոյեան Նրանդ պէյ 49, 72, 101  
 Մակարեան Կարինէ 17, 18, 20  
 Մահսէրէճեան 131  
 Մանասեան Ռուբէն արք. 65  
 Մանկալօ Ե. 18  
 Մանճիկեան Եսայի 307  
 Մանուէլեան Ադամ 46,  
 Մանուէլեան Կորին եպս. 68  
 Մանուկեան 131  
 Մասպանաճեան Լուսեր 250, 251  
 Մավրեան Միհրան 279  
 Մավեան Վ. 245  
 Մատաթեան Աշոտ 235, 236, 237  
 Մատէան Յարութիւն 166, 258  
 Մարաճեան Թ. 169  
 Մարութեան Մանուէլ 236, 237, 238  
 Մարտիրոսեան Ա. 139  
 Մարտիրոսեան Վարդգէս 127  
 Մելիքսէթեան Ն. 23  
 Մելիքսէթեան Օննիկ 250  
 Մելքոնեան Գ. 236  
 Մելքոնեան Դ. 129  
 Մելքոնեան Ե. 182  
 Մելքոնեան Զարեհ 254  
 Մելքոնեան Էդուարդ Լ. 27, 291  
 Մելքոնեան Մ. 18  
 Մելքոնեան Վ. 262  
 Մէյնազարեան Մ. 130  
 Մէհտէրեան Նանրի 127  
 Միասնիկեան Ալեքսանդր 116  
 Մինասեան Արամ 131  
 Մինասեան Բիւզանդ 252  
 Մինասեան Լալա 257  
 Մինասեան Միհրան 256, 343  
 Մինոյեան Տ. Նմայեակ քինյ. 307  
 Միսիրեանի Պարգեւ 251, 288  
 Միքայելեան Ճորճ 129, 130

Միքայելեան Յակոբ 259, 314, 319  
 Մկրտիչեան Մկրտիչ 257  
 Մկրտիչեան Սամուէլ 251  
 Մոնֆարեան Երուանդ 250  
 Մուրատ Նրանդ 253  
 Մարըլեան Յ. Վ. 130  
 Մարլեան 124

**Յ.**

Յակոբեան Ն. 26  
 Յակոբեան Սարգիս 307  
 Յարութիւնեան Գ. 149, 160, 169  
 Յարութիւնեան Ն. 156, 162  
 Յարութիւնեան Նազիկ 26  
 Յովհաննէսեան Նշան 46  
 Յովհաննիսեան Նիկողայ 26  
 Յովնանեան Ֆիլիպ 132, 133  
 Յովսէփեան Գարեգին Ա. կթղ. 65

**Ն.**

Նազգաշեան Յ. 125  
 Նազարեան Գ. 153, 154  
 Նազարեան Լենա 257  
 Նազարեան Մկրտիչ 51  
 Նազարեան Նազար 51, 124, 247  
 Նազարեան Սուրէն 124, 127, 319  
 Նալճեան Կարապետ 127  
 Նալպանտեան Կարապետ քինյ. 234  
 Նաճարեան Անդրանիկ 252, 254  
 Նաճարեան Եղիա 252  
 Նաճարեան Յասմիկ 257  
 Նաճարեան Յովսէփ 289  
 Նաճարեան Տ. 129  
 Նանագիլեան Ա. 177  
 Նարկիզեան Նահապետ 238, 239  
 Նաւասարդեան Բեգլար 104, 312  
 Նաւասարդեան Վահան 52, 53  
 Ներսէսեան 124  
 Ներսոյեան Գեորգ 232, 279  
 Ներսոյեան Յակոբ 229, 279  
 Նիկողոսեան 131  
 Նիրփէթլեան Ֆրանսուա 127



**Շ.**

Շահինեան Գրիգոր **257**  
 Շահինեան Խաչիկ **257**  
 Շահինեան Յովհաննէս **251**  
 Շահնուր Շահան **244**  
 Շահպազ Պ. **245**  
 Շառոյեան Արթին **126**  
 Շառոյեան Լեւոն **320**  
 Շարայեան Կ. **131**  
 Շաքլեան Արիս **169, 245, 254**  
 Շիրազ Յ. **248**  
 Շիրակ Ա. **245**  
 Շիրաճեան Ահարոն վեր. **18**  
 Շուշանեան Կարօ **51**  
 Շուշանեան Վազգէն **244**

**Ռ.**

Ռսկանեան Ճանիկ **131**  
 Ռսկերիչեան Մ. **180, 182**  
 Ռսկերիչեան Յ. **180**  
 Ռրբերեան Յարութիւն **124**  
 Ռրբերեան Ռիթա **257**  
 Ռանուսի որդի Ապտ ալ-լահ  
 (Ասատուր) **307**  
 Ռուօնեան Ա. **125**  
 Ռւրֆայեան Տաճատ ծ. վրդ. **71**

**Չ.**

Չագլանեան Յովհաննէս **131**  
 Չագըրեան Պետրոս **132**  
 Չափրաստ Եղուարդ **236, 237**  
 Չերչեան Յակոբ **132**  
 Չեպլեյեան Ղետնդ արք. **63, 257, 279**  
 Չետերեան Ա. **130**  
 Չեօրեքճեան Գեորգ Զ. կթդ. **66**  
 Չոլաքեան Յակոբ **73, 198, 314**  
 Չոլոյեան Յ. Օշական վրդ. **64, 257**

**Պ.**

Պազեան Վազգէն փաշայ **51**  
 Պալատունի Պօղոս **255**  
 Պալեան Ա. **130**  
 Պալեան Յակոբ **257**

Պալապանեան Սարգիս **307**  
 Պաղտասարեան Լեւոն **127**  
 Պաղտասարեան Յ. **141**  
 Պաղտատի Շաուքի **247**  
 Պայրամեան Ժողէֆ **49, 316**  
 Պապեան Կորինս վրդ. **71**  
 Պապիկեան Ժ. **132**  
 Պապիկեան Զեփիւր **257**  
 Պապոյեան Գ. **129**  
 Պասմաճեան Թորոս **18**  
 Պատրիկ Վարդ **236**  
 Պարգեւ Պետրոս (Փայասլեան) **254, 255**  
 Պարիկեան Հայկ **127, 252, 254, 314**  
 Պարիկեան Վարդան **235**  
 Պարոնեան Ադամ **127, 181**  
 Պարոն Վ. Վահան Պարոնեան. **250**  
 Պարսամեան Արամ **132**  
 Պարսումեան Ե. **133**  
 Պարսումեան Ներսէս **Յ. 250**  
 Պարսումեան Ռուբէն **123, 236, 239**  
 Պարսումեան Գրիգոր **314**  
 Պարտիզպանեան Յարութիւն  
 Պարտազճեան Զաւէն **289**  
 Պետրոսեան Ասիա **51**  
 Պետրոսեան Կարապետ **307**  
 Պերպերեան Շահան Ռ. **254**  
 Պերպերեան Պետրոս վրդ. **71**  
 Պերպերեան Վահան վրդ. **68**  
 Պեքարեան Սարգիս **307**  
 Պեքեարեան Սիլվա **257**  
 Պեքերճեան Պ. Գ. **169**  
 Պեօճիպեան Ֆրանսուա **127**  
 Պիլեզիքեան Լեւոն **255**  
 Պիլեմճեան Զ. **125**  
 Պիթար Սալա(հ)յն **92, 177**  
 Պողարեան Գրիգոր **255**  
 Պոյաճեան **131**  
 Պոյաճեան Եղուարդ **254**  
 Պչաքճեան Մովսէս **257**  
 Պօղոսեան Եղբայրք **129**  
 Պօղոսեան Ռուբէն **252**

**Ռ.**

Ռագըճեան Կարապետ **127**  
 Ռշտունի Տ. **18**

**Ս.**

Սալաթեան Մովսէս **42, 91**  
 Սալաթեան Վոհամշապուհ (Աֆրամ)  
**49, 129**  
 Սաթամեան Գ. **239**  
 Սարրաճի Ապտէլ Համիտ **103**  
 Սամուելեան Արփիլէ **307**  
 Սամուելեան Հրանդ **251**  
 Սամուելեան Վահէ **239, 240**  
 Սանոսեան **125, 131**  
 Սապունճեան Զաւէն **51, 237, 251, 285**  
 Սապունճեան Սերոբ **127**  
 Սարաճեան Պետրոս արք. **35**  
 Սարաֆ Արշակ **51**  
 Սարաֆեան Աւետիս **267**  
 Սարաֆեան Կարօ **252**  
 Սարգիսեան Ճ. **238**  
 Սարգիսեան Տաթևի վրդ. **64, 279**  
 Սեգսենեան Վ. **181**  
 Սեդրակեան Հ. **150, 162, 166**  
 Սէլեան **132**  
 Սէմէրճեան **124**  
 Սէյրանեան Հրանդ **132**  
 Սըտքի Մովսամբետ  
 Սիմոնեան Հ. **24, 103**  
 Սիմոնեան Սիմոն **254**  
 Սիսվան Գ. **245**  
 Սիւրիթեան Մ. **129**  
 Սիւրմեան Արտաազդ արք. **21, 36, 226, 244, 254**  
 Սվաճեան Ռաֆֆի **288**  
 Սվաճեան Ռուբէն **261**  
 Ստալին **136, 145, 160**  
 Ստեփանեան Յարութիւն **307**  
 Սրապեան Ճորճ **127**

**Վ.**

Վահագն Մ. **245**  
 Վահեան Վահէ **163, 254**

Վանլեան Ճորճ **237**

Վանլեան Շարլ **127**  
 Վարդեան Արփիար **237**  
 Վարդանեան Գրիգոր **51**  
 Վարսեան Շ. **245**

**Տ.**

Տայեան Ալպետոս **132**  
 Տապալադ Յովհաննէս **123**  
 Տասնապետեան Եղուարդ **287**  
 Տէկիմունճեան Յակոբ **255**  
 Տէմիրճեան Ա. **126**  
 Տէմիրճեան Երուանդ (Առաքել) **307**  
 Տէմիրճեան Մ. **129**  
 Տէմիրճեան Յասմիկ **257**  
 Տէմիրճեան Վարդան եպս. **35**  
 Տէմիրճեան Վերծին **237**  
 Տէվէճեան Հրանդ **46, 146, 147, 156, 169**  
 Տէր Գեորգեան Ժ. **110**  
 Տէր Գեորգեան Վ. **250**  
 Տէր Ղազարեան Յարութիւն **18, 132, 251, 252, 253, 255**  
 Տէր Ղազարեան Անդրեաս **253**  
 Տէր Մեսրոպեան Ս. **130**  
 Տէր Մեսրոպեան Տ. **130**  
 Տէր Յակոբեան Տ. Եզնիկ քինյ. **307**  
 Տէր Պետրոսեան Արմէն **182, 229**  
 Տէր Սարգիսեան Անժէլ **307**  
 Տէր Ստեփանեան Մ. **245, 246, 247**  
 Տէր Վարդանեան Լ. **129**  
 Տէրունեան Սմբատ **163**  
 Տեքպէզեան Գառնիկ **127**  
 Տը Կոլի Շարլ **40, 282**  
 Տը Մարթէլին **31, 32**  
 Տիրացուեան Զաւէն **127**  
 Տիլենճի Ճ. **18**  
 Տիմիճեան Միշէլ **132**  
 Տիրազան Արեգ **257**  
 Տիրարեան Ռուբէն **92, 255**  
 Տիլ Սարգիսեան Արամ **307**  
 Տոլպագեան Հմայեակ **127, 329**  
 Տօնապետեան Գեորգ **250, 257**



Տօնիկեան Խ. 130  
Տօնոյեան Արմէն 257  
Տօնոյեան Մկրտիչ 127

**Ր.**

Րաֆֆի 248

**Փ.**

Փայանճեան Նշան 124, 312  
Փամպուրեան Երուանդ 257,  
Փայասլեան Զարեհ վրդ. Զարեհ եպս.  
36, 44, 62, 71, 198  
Փանոսեան Ամբատ 14, 245, 246  
Փանոսեան Տ. Եղիշէ քինյ. 307  
Փարթամեան Նուպար 255  
Փափազեան Կարապետ 233  
Փափազեան Հրաչ 42, 91, 250  
Փափազեան Վարդգէս 250  
Փեհլեանեան Գ. 177

**Ք.**

Քասիս Գրիգոր 132, 140  
Քարուկեան Խաչիկ 267  
Քելխան Ռ. 129  
Քզպարի Մեմուն 203  
Քէլլեան Ա. 125  
Քէհեանեան Ատոմ Ա. քին. 64  
Քէշիշեան Գրիգոր 245  
Քէշիշեան Լեւոն 251  
Քէշիշեան Միհրան 307  
Քիլեճեան Ալպէո 50  
Քիրիշեան Յ. 130  
Քլիմով 156, 162  
Քոչեան (Խոճայեան) Սարգիս 237  
Քուաթլին Շիւքրի 42, 85, 93, 140  
Քուտսի Նազեմ 129

**Ֆ.**

Ֆաթհալլահ Մ. 51, 130  
Ֆահմի Ահմէտ 247  
Ֆապրիքաճեան Լեւոն 132  
Ֆէթթեյեան (Ֆէթթէլ ճորճ) 131  
Ֆիշենկճեան Անի 257, 342

Ֆրսթրգճեան Արթուր 127  
Ֆրստրգճեան Շահնուր 127

**ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ****Ա**

Ագեգ / Ազազ 12, 35, 37, 38, 60, 61, 76, 77, 86, 89, 94, 96, 97, 98, 99, 164, 170, 188, 189, 190, 191, 206, 227, 229, 230, 232, 233, 234, 280, 285, 292, 306  
Աթրգ 37, 38, 228  
Ալեքսանտրէթի սանճագ 12, 30, 32, 33, 34, 37, 38, 73, 76, 77, 83, 91, 118, 263, 270, 280, 292, 301  
Աճուրլուք 266, 306  
Ամերիկա / ԱՄՆ / 14, 33, 46, 84, 92, 100, 103, 110, 112, 162, 167, 168, 172, 194, 251, 263, 266, 267, 269, 270, 271, 272, 278, 297, 305  
Ամրի / ալ- Ամրի / 70, 94, 98, 99  
Ամուտա 16, 35, 36, 37, 38, 60, 63, 76, 77, 86, 94, 96, 97, 98, 99, 153, 188, 189, 190, 191, 206, 224, 280, 286, 306  
Այն էլ Արուս / Այն ալ-Արուս / 35, 37, 38, 60, 76, 77, 94, 96, 97, 98, 99, 153, 188, 189, 190, 274  
Այնթապ / Այնթէպ / 11, 48, 50, 73, 124  
Այնտիվար 35, 37, 38, 76, 77, 96, 97, 98, 99, 189, 270  
Անգլիա 39, 40, 41, 50, 83  
Անթիլիաս 13, 35, 63, 66, 111, 118, 137, 144, 147, 182, 195, 220, 234, 277  
Անտիոք 10, 11, 12, 14, 33, 34, 35, 132, 267, 268, 270, 280  
Ապու Ճալալ 69, 70  
Ապտալ շէոյիկ 37, 38, 76, 77  
Աուճա 69, 70  
Արաբ Փունար / Արաբ- Քունար, Այն էլ Արապ / 35, 37, 38, 60, 76, 77, 86, 89, 94, 96, 97, 98, 99, 153, 170, 188, 189, 190, 191, 205, 206, 207, 225, 229, 232, 233, 234, 267, 268, 270, 272, 274, 280, 281, 285, 286, 292, 306  
Արամօ 36, 76, 77, 153  
Արեւմտեան Նայաստան 13, 16, 45, 68, 112, 296  
Աստրալիա 110, 172, 305

Աֆրին 10, 33, 37, 38, 60, 63, 76, 77, 86, 89, 94, 96, 97, 98, 99, 165, 169, 170, 188, 189, 190, 191, 206, 227, 228, 230, 232, 234, 292, 306

**Բ**

Բալու 17  
Բաղէշ 17  
Բարձր Ճէգիր 73

**Գ**

Գամիշլի 16, 17, 18, 20, 35, 36, 37, 38, 47, 59, 60, 68, 70, 71, 73, 76, 77, 85, 89, 94, 96, 97, 98, 99, 105, 117, 119, 128, 136, 153, 161, 177, 178, 179, 182, 186, 188, 189, 190, 191, 206, 224, 233, 261, 265, 268, 270, 272, 274, 276, 278, 280, 286, 306  
Գանատա 109, 110, 172, 179, 305  
Գարամանիէ 16  
Գարատուրան 60, 61, 76, 77, 94, 96, 97, 98, 99, 188, 189, 190, 191, 205, 206, 207, 224, 268, 270, 272, 274, 306  
Գերմանիա 34, 39  
Գերմանիկէ 230, 233, 234, 239, 293, 299, Գրգրլճա / Թրգրլճա / 47, 69, 70  
Գնայիտ / Դրնէիտ-Դնէիտ / 14, 62, 76, 77  
Գըրգ Խան 34, 37, 38, 73, 118, 227, 268, 280  
Գուպր պիթ 37, 38, 76, 77, 94, 96, 97, 98, 99, 188, 189, 270, 272

**Դ**

Դամասկոս / Տամասկոս / 11, 13, 14, 15, 30, 31, 34, 35, 36, 42, 44, 46, 48, 50, 53, 57, 59, 64, 65, 66, 67, 68, 71, 72, 73, 74, 86, 87, 91, 93, 95, 104, 105, 106, 110, 112, 117, 118, 119, 122, 123, 124, 126, 128, 130, 132, 134, 135, 136, 140, 141, 150, 151, 152, 153, 156, 162, 163, 167, 169, 170, 176, 179, 181, 187, 204, 205, 206, 207, 220, 224, 227, 231, 232, 234, 261, 262, 263, 266, 267, 270, 272, 274, 276, 280, 281, 282, 286, 289, 292,



299, 300, 301, 306

**Ե**

Եագուպիտ 14, 36, 37, 38, 60, 62, 76, 77, 94, 96, 97, 98, 99, 140, 188, 189, 190, 191, 206, 218, 224, 227, 230, 232, 233, 234, 292, 306

Երեան 3, 46, 47, 49, 90, 110, 124, 137, 139, 141, 154, 156, 158, 159, 163, 167, 173, 180, 181, 182, 342, 343  
Եղուն-Օլուզ 268**Զ**Զահլէ 171  
Զանտա 69  
Զէյթուն 11  
Զմմառ 72, 73  
Զոքաք ալ-Արապային 224, 306**Է**Էգրա 95  
Էշտֆիէ 74  
Էքիզ Օլուզ 225**Ը**

Ընկզիկ /Ընկեզիկ/ 36, 94, 96, 97, 98, 99, 189

**Թ**Թարթափ 69, 70, 79, 190, 191  
Թարթուս 34, 60, 72, 94, 96, 97, 98, 99, 188, 189, 190, 191, 206, 234, 306  
Թիլէ 224, 290  
Թինա 37, 38, 76, 77, 86  
Թէլ Այիտ 69  
Թէլ Ապիաթ / Թէլ Ապիատ/ 36, 37, 38, 60, 76, 77, 79, 89, 94, 96, 97, 98, 99, 188, 189, 190, 191, 206, 225, 274, 280, 281, 286, 292, 306  
Թէլ Պրագ / Թէլ Պրաք/ 36, 37, 38, 47, 60, 63, 70, 76, 77, 86, 94, 96, 97, 98, 99, 188, 189, 190, 191, 206, 280, 281, 286  
Թէլ Սեմէն 37, 38  
Թէլ Սեմիր 70Թէլ Քեօչք /Թէլ Քեօչկ/ 47, 60, 70, 76, 77, 86, 127, 153, 188, 189, 190, 191  
Թլտամ / Թէլ Թոմ/ 69, 70  
Թուրքիա 16, 52, 115, 144, 149  
Թրիփոլի 13, 157, 171, 270**Ի**Իսկէնտերուն 12, 13  
Իտլիպ 11, 72, 84,  
Իրաք 16, 68, 107, 108, 121, 153, 270  
Իքիախըր 94, 97**Լ**Լաթաքիա 14, 32, 34, 35, 36, 50, 59, 60, 78, 79, 86, 105, 117, 128, 130, 132, 133, 136, 165, 175, 176, 177, 179, 206, 233, 234, 252, 261, 263, 268, 270, 272, 274, 278, 283, 290, 292, 301  
Լիբանան 11, 13, 14, 15, 23, 26, 27, 29, 30, 33, 34, 39, 40, 41, 42, 45, 46, 47, 48, 54, 55, 59, 74, 83, 84, 86, 87, 89, 90, 100, 105, 107, 113, 117, 126, 128, 129, 130, 132, 134, 139, 140, 143, 146, 147, 148, 150, 151, 152, 153, 155, 156, 158, 160, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 182, 194, 195, 233, 236, 245, 246, 247, 248, 249, 251, 253, 254, 255, 258, 263, 265, 270, 271, 274, 278, 280, 281, 292, 305, 342**Խ**Խարբերդ 17  
Խորհրդային Հայաստան 6, 46, 47, 92, 102, 104, 109, 114, 116, 117, 134, 135, 138, 139, 140, 143, 144, 146, 147, 151, 157, 159, 162, 165, 172, 173, 175, 176, 177, 182, 253, 303, 304  
Խորհրդային Միութիւն 6, 19, 93, 135, 136, 140, 179**Ծ**

Ծոցի երկիրներ 257

**Կ**Կեմրիկ/Կեմրիկ/ 94, 96, 97, 98, 99, 232  
Կիլիկիա 11, 12, 13, 33, 75, 112, 226, 301**Հ**Հալէպ 10, 11, 12, 13, 14, 16, 17, 18, 20, 21, 26, 30, 31, 32, 34, 35, 36, 37, 38, 39, 42, 43, 44, 45, 46, 48, 49, 50, 51, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 63, 64, 71, 72, 73, 74, 75, 76, 77, 78, 84, 86, 90, 91, 93, 95, 96, 100, 102, 104, 105, 107, 108, 109, 110, 111, 112, 113, 114, 116, 117, 118, 119, 120, 122, 123, 124, 125, 126, 127, 128, 130, 131, 132, 133, 134, 136, 137, 139, 141, 147, 150, 152, 153, 157, 161, 162, 163, 166, 167, 168, 169, 172, 173, 176, 177, 179, 181, 182, 186, 187, 193, 198, 199, 200, 202, 204, 205, 206, 207, 209, 210, 211, 212, 213, 214, 215, 220, 223, 226, 227, 228, 229, 230, 231, 232, 233, 234, 235, 236, 237, 238, 239, 240, 241, 244, 245, 246, 249, 250, 251, 252, 255, 256, 258, 259, 260, 261, 262, 263, 264, 265, 266, 267, 268, 269, 270, 272, 274, 276, 278, 279, 280, 282, 283, 284, 285, 287, 288, 289, 291, 292, 293, 294, 295, 296, 297, 298, 299, 300, 301, 302  
Հալսի 69  
Հաճըն 11  
Համա 11, 14, 34, 37, 38, 50, 64, 72, 73, 77, 86, 95  
Համամ 37, 38  
Հայաշէն 37, 38, 76, 77, 95, 268,  
Հայաստան 6, 10, 11, 13, 16, 21, 25, 68, 92, 101, 102, 104, 109, 110, 112, 114, 116, 119, 137, 138, 139, 140  
Հայրենիք 6, 19, 21, 41, 44, 46, 70, 71, 89, 105, 109, 112, 114, 115, 124, 134, 136, 137, 138, 139, 141, 144, 145, 146, 147, 148, 149, 150, 152, 153, 154, 155, 156, 157, 159, 160, 161, 162, 163, 165, 166, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 179, 180, 181, 182, 194, 232, 239, 241, 243, 245, 246, 252, 262, 286, 300, 302, 304  
Հաուրան 15, 16, 45, 64, 67, 95  
Հասան Պէյ 11

Հասան Պէյ 11

Հասիչէ /Հասաքէ/ 16, 37, 38, 59, 60, 63, 71, 76, 77, 89, 96, 97, 98, 99, 153, 176, 180, 188, 189, 190, 191, 206, 224, 229, 232, 233, 234, 268, 270, 272, 274, 277, 280, 284, 286, 292, 306  
Հարթ Էլ Շարֆ 224  
Հարեմ /Հարիմ/ 11, 12  
Հարթ Սիսի 60, 61, 188, 190, 224  
Հարպա 47  
Հեքքո 70  
Հէլիսք /Հէլիկ, Հէլլիկ/ 60, 72, 224, 306  
Հըլքո /Հէլքո, Հէլիքո, Հէլլիքո/ 69, 188, 190, 191  
Հըլէիէ 69, 70  
Հըմէրա 69, 70  
Հիմօ 69, 70, 188, 190, 191  
Հոմս 14, 31, 34, 35, 37, 38, 49, 50, 51, 64, 67, 72, 74, 76, 77, 86, 95, 117, 119, 122, 123, 128, 132, 150, 162, 163, 164, 206, 224, 227, 229, 230, 232, 234, 270, 272, 274, 278, 283, 284, 286, 292, 306  
Հիախային Սուրիա 14, 180**Ղ**Ղըզըճաղ / Ղըզըճա / 69, 70  
Ղընէմի 14, 36, 60, 63, 188, 189  
Ղընէիտ տէն Գնայիտ**Ճ**Ճապրիէ 224  
Ճաղճաղ գետ 17  
Ճարապլուս 35, 36, 37, 38, 47, 60, 63, 73, 76, 77, 86, 94, 153, 188, 189, 190, 191, 225, 227, 228, 229, 230, 232, 233, 234, 267, 268, 270, 272, 274, 285, 292  
Ճէզիրէ 17, 44, 63, 68, 70, 71, 84, 90, 93, 104, 122, 127, 147, 150, 153, 167, 169, 177, 233, 234, 284  
Ճէպէլ Մուսա /Մուսա Տաղ/ 14, 34  
Ճէպէլ Սաման 11  
Ճէպէլ Սէյտ տէն Շէյխ Մագսուտ Ճէնտերես 94, 97



Ճեպել Տրուզ 15, 30, 32, 64, 95

Ճըմաքե 69, 70

Ճընետիե (մեծ) 69, 70, 171

Ճընետիե (փոքր) 69, 70

Ճըսր Շուղուր /Ճիսր Շուղուր/ 11, 37, 38,

62, 76, 77, 96, 97, 98, 99, 189, 190, 191

Ճուլֆա 159

Ճուխա 60, 69, 188, 190

## Մ

Մաարա 11

Մանթար 34

Մասհատա 69, 70

Մեծ Բրիտանիա 41, 83, 85

Մենպիճ (Մենպիճ, Մունպուն) 11, 12, 37,

38, 73, 76, 77, 86, 153, 189, 228

Մերձատր /եի Միջին Արեւելք/ 9, 24, 39,

87, 88, 90, 92, 100, 110, 112, 117, 129, 137,

143, 186, 187, 227, 244, 253, 281, 304

Մէյտան 188, 190, 191, 213, 227, 229, 230,

234

Մէյտան էքպեզ 36, 37, 38, 76, 77, 86, 94,

96, 97, 98, 99, 189

Մէրքեզ գազա 11

Միտիէթ Փաշա 224

Մլուքսարա / Մլուք Սարայ/ 47, 69, 70

Մծբին 17

## Յ

Յունաստան 146, 164, 167, 304

## Ն

Նարկիզլիկ 37, 38, 76, 77

Նէիէլ 224

Նիւ Եորք 49, 151, 251, 256, 263, 266, 297

Նոր Գիւղ 58, 113, 118, 141, 158, 213, 224,

227, 230, 231, 233, 234, 270, 272, 274, 282,

283, 289, 306

## Շ

Շամասիե 69, 70

Շապուրա 61, 306

Շարէն 11

Շէյաճիլ

Շէյխաճիլ 69, 70

Շէյխ Մագսուտ /Շէյխ Մաքսուտ/ 60,

72, 188, 190, 191, 224, 234, 266

## Ո

Ուաքիլիե /Վաքիլիե/ 60, 61,

Ուրթուրթիե տեն Վուսուկուտ 69, 70

## Չ

Չաթալ Թէփիե 37, 38, 86

Չըրգո 69, 70

Չոլախսան 94

Չորք Մարզպան 11

## Պ

Պաթում 158, 159, 162, 164, 175, 180, 182

Պալքան 270

Պաղճաղազ 225

Պանիաս 14, 98, 99, 280, 284, 285

Պապ 11, 12, 37, 38, 73, 76, 77, 86, 96, 97,

98, 99, 153, 189, 228

Պապ Թումա 224

Պապ Շարքի 224

Պարսկաստան 270

Պաքու 159

Պէլյան 12, 14, 33, 34, 37, 38, 227

Պէրոյթ 237, 238, 239, 258, 261, 270

Պիթիաս 268, 270

Պշերիկ 16, 17

Պոստըն /Պոսթըն, Պոստոն/ 268

## Ռ

Ռաս Էլ Այն (Ռաս Ուլ Այն) 11, 16, 34, 35,

36, 37, 38, 59, 60, 70, 71, 76, 77, 94, 96, 97,

98, 99, 153, 188, 189, 190, 191, 206, 224,

268, 270, 274, 280, 284, 306

## Ս

Սալիպե 60, 224, 226, 233, 234, 251, 306

Սալխաթ 95

Սաֆիքա Ամրի 69

Սելեմիե 37, 38, 95

Սըլա-մալէք 69, 70

Սովետական Հայաստան 22, 46, 47,

118, 138, 139, 145, 149, 150, 154, 172, 255

Սովուզ Օլուզ 37, 38

Սովուզ Սու 37, 38

Սուլէյմանիե 72, 224, 227, 268, 306

Սոււտիա 35, 268, 270, 272

Սուրիա /Սիրիա/ 6, 10, 11, 12, 13, 14, 15,

16, 17, 18, 19, 21, 22, 23, 29, 30, 32, 33, 34,

39, 40, 41, 44, 47, 50, 52, 81, 83, 84, 85,

86, 87, 91, 92, 93, 100, 103, 107, 108, 109,

111, 120, 121, 122, 123, 124, 125, 126, 132, 134,

135, 136, 138, 140, 145, 146, 153, 156, 157,

158, 159, 160, 162, 164, 165, 166, 167, 168,

169, 170, 171, 172, 174, 175, 176, 179, 180,

181, 193, 200, 207, 233, 251, 252, 253, 254,

256, 258, 259, 263, 270, 275, 278, 284, 291,

301, 303, 304, 305, 342

Սիրիան /Սուրիան թաղամաս/ 74,

306

Սփիրոք 19, 21, 22, 23, 24, 25, 27, 52, 53,

109, 110, 112, 114, 116, 119, 134, 136, 137, 138,

139, 144, 148, 149, 151, 152, 154, 155, 158,

173, 174, 175, 182, 185, 186, 195, 241, 243,

244, 245, 246, 249, 253, 263, 280, 291,

299, 301, 304

## Վ

Վանիկ 37, 38, 70,

Վուր-Վուր / Վատ- Վատ,

Վուսուկուտիե, Ուրթուրթիե/ 47, 69, 70,

188, 190, 191

## Տ

Տարաա 16, 49

Տալաուիե 69, 70

Տայո /Տէյո/ 69, 70

Տարոսեան 17

Տավուսիե /Տաուսիե, Էշրէֆիե/ 60, 61,

191, 224, 230, 306

Տերպետիե 36, 37, 38, 60, 63, 70, 76, 77,

94, 96, 97, 98, 99, 86, 153, 180, 188, 189,

190, 191, 205, 206, 207, 225, 266, 267, 272,

274, 280, 286, 306

Տերիք/ Տերիկ, Տերիկ/ 36, 37, 38, 63, 76,

78, 94, 96, 97, 98, 99, 153, 188, 189, 190,

191, 206, 224, 306

Տեր Զօր 37, 38, 60, 76, 77, 94, 96, 97, 98,

99, 188, 189, 190, 206, 224, 230, 270, 274,

280, 286, 306

Տիգրանակերտ 17, 18

Տըլպանա / Տուպ-պանա-

Տապանա / 69, 70

## Ր

Րազգա 36, 37, 38, 51, 59, 60, 70, 72, 76,

77, 94, 96, 97, 98, 99, 136, 177, 188, 189,

190, 191, 206, 217, 225, 268, 270, 272, 278,

280, 286, 292, 306

Րաճօ/ Րէճօ/ 37, 38, 76, 77, 94, 96, 97,

98, 99

Րիհանիե 37, 38

## Փ

Փարիզ 32, 48, 151, 263

## Ք

Քեսապ 7, 14, 34, 35, 36, 37, 38, 59, 60, 63,

72, 73, 74, 76, 77, 90, 94, 96, 97, 98, 99,

130, 153, 163, 165, 167, 169, 170, 188, 189,

190, 191, 205, 206, 207, 215, 216, 224, 234,

250, 261, 267, 268, 270, 272, 274, 279, 291,

292, 301, 306

Քտօրքիմա է 74, 225

Քիլիս 11, 314

Քուէթ 305

Քունէթրա 50

## Ֆ

Ֆրանսա 12, 14, 15, 30, 31, 32, 34, 39, 40,

41, 42, 43, 48, 68, 90, 110, 120, 167, 270,

305



## THE HISTORY OF ARMENIAN COMMUNITY IN SYRIA (1946-1970 YEARS)

### (SUMMARY)

The Armenian community of Syria is one of the oldest Armenian communities in the Diaspora. Armenians have settled in Syria since pre-Christian times 2<sup>nd</sup> & 1<sup>st</sup> centuries BC. This was the result of political circumstances and accentuated by trade-economic ties.

Later in history, Armenians moved & settled in Syria & particularly in the northern regions. These movements were also caused by political, economic and cultural motivations.

Prior to the Genocide, there were many settlements inhabited by Armenians in Syria. They lived in a number of regions of the Alexandrian Peninsula, Kessab, in the villages of Latakia as well as in Damascus and Aleppo. In 1915, and then in 1922, a considerable number of Armenians from Cilicia settled in Syria. Thus, the Armenian community of Syria grew greatly as a result of the 1915 Armenian Genocide. In the early years in Syria, the country was supposed to be a temporary residence while considering more favorable places to move to having in mind religious, linguistic, cultural goals.

As a result of the depopulation of Cilicia, Armenian refugees were forced to reconcile with the reality, and these factors simply helped preserve the Armenian national and cultural identity. The Armenians in the course of time self-organized, adapted to the social life of Syria, the process of the genocide, and then the attitude of the Arabs towards Armenians also contributed to the strengthening of the relationship between the two nations. The Armenians gradually developed into an organized and vibrant community that sought to preserve its national identity. Along with the process of community building, the Armenian citizen, as well as the citizen of that country, had the obligation to provide humanitarian aid to the country and people he was hosting.

From the 1920, Armenians mostly settled in Aleppo and other cities and towns. These Armenians came from different regions and had a variety of linguistic and cultural traditions.

Under these circumstances, the Syrian-Armenian school system, for about two

or three decades did not spare any effort in spreading a common language to the different segments of the community.

We consider it necessary to say that the main problem and concern of the community is the Armenian school. Thus moved by the above goal, all the supreme bodies of all three religious congregations, did their best to make the Armenian school in step with the times as well as conforming to the demands of time and the host country.

Relations between Armenians and Arabs, in particular, have a character of cooperation. It was anchored by certain prerequisites and principles, thanks to which the Armenian element appreciated the Arab people's orientation to the most tragic period of Armenian history. In the of Arab countries, Armenians found their second homeland. Armenians became the true citizens of Arab countries, they put their talents and creativity in favor of the political, economic and cultural revival of those countries. Armenians became legitimate citizens of Syria, occupied certain positions in different spheres of the country.

Based on the collaborative effort of such political, legal, economic and moral-humanitarian principles, the joint venture between Armenians and Arabs was also shown in cooperation with the army (army formation).

In the years of the French mandate, the small number of Armenians in Syria was traditionally engaged in trades and business. In the rural regions, they cultivated the land. In the years of independence, favorable conditions are created for the activities of foreign entrepreneurs. Large Armenian entrepreneurs are part of the companies created by their Arab partners in Syria. However, Armenian entrepreneurs representing a minority, should have always adapted to the current political powers-to-be.

Thus, during World War II and thereafter, specifically the Syrian industry had a revival. The Arab people, having received its independence, demanded the lifting of the feudal system, resolving land issue and raising the living and cultural standards of the populace. In addition to all this, the members of the community were standing behind with the full support and guidance of their leaders. Unfortunately, everything was not founded on the right foundations, outside forces tried to hinder the achievements gained by the price of blood. As a result, the sons of the community and the local youth left the rural regions for the cities,



followed by waves of migrations.

Nevertheless, 1945-1958 became years of change for the government of Syria. Moreover, Syria was politically weakened, especially in the period from 1958 to 1961 (Unification with Egypt). This phenomenon has greatly influenced not only the political, but also the economic and social spheres of the Syrian-Armenian community.

1963 was a turning point in Syria's inner-political life. As a result of the March 8 coup, the "Baath" (Arab Social Revival) party was the ruling power in the country. On February 23, 1966, just three years later, the "left" wing of the party, after a bloody inter-party struggle, came out victorious against the right and Abdel Nasser. A law on state control over the economy was proclaimed. It was during this period that rich and wealthy Syrians, as well as the majority Syrian-Armenians, left Syria.

It was a different case, the situation of the repatriation. The social and economical structures in the Soviet Union and Soviet Armenia were different than those in the free world. It was the duty of the Repatriation Committees and representatives to inform the populace about the social and local rules, so as not to create dissatisfaction and be able to move more people to repatriate.

Here I would like to emphasize that the repatriation was primarily dependent on external actors, primarily from the Soviet Union, who had taken the responsibility of settling the repatriates.

From the 1920 Soviet Armenia started repatriating. This repatriation was intended for the poor, the homeless, unemployed who could not survive independently. Such were the Armenians from the Middle-East & Greece. The enthusiasm of repatriation and specially the chaos and the uproar made it difficult, both for those who repatriated and those who did not. But the core of our national policy would be harmonizing the interests of the two segments, without interfering with one another. Undoubtedly, the main goal of the repatriation was gathering Armenians and preserving their national identity. But this did not become reality, because the national political powers pursuing to gain religious authority, did not accept each other even during the 50<sup>th</sup> anniversary of the Genocide Commemoration in 1965 when the Homeland and the Diaspora for the first time united for the commemoration. Here, the factor of the changing of the

generational guard should be taken into consideration. Most of the Genocide survivors were gone. As a result of the diverse political situation in the country, a large segment of the intellectuals left Syria. Other problems the community faced, being organizational, community and other issue whose resolution depended on intercommunal co-operation.

As a result, the numerical decline of Armenians in Syria, was the result of local social, economic and political factors.

The ongoing governmental restrictions in the country, economic stagnation, political instability, drastic change in the education system, and the absence of clear outlook, as well as local authorities, attitudes, towards national minorities have created the prerequisites for which a significant part of the community's children has left Syria, establishing permanent residences in France, US, Canada, Latin America and Australia. Some even settled in Lebanon, Kuwait, Libya, as well as other Arab countries.

Studying the events of this period, we conclude that the phenomenon of emigration was not specific to the Armenian circles, but was general in nature. Non Armenians also began to emigrate to Lebanon and Latin American countries.



## تاريخ الجالية الارمنية في سورية

(١٩٤٦-١٩٧٠م)

### (الخلاصة)

تعتبر الجالية الأرمنية في سورية واحدة من أقدم الجاليات في الشتات ويرجع وجودها الى الأزمنة الغابرة الى القرن الأول قبل الميلاد منذ عهد الملك الأرمني ديكران الكبير اذ كانت مرهونة بالظروف السياسية والعلاقات التجارية والاقتصادية.

وفقا للمعلومات التاريخية تعود هجرة الأرمن الاولى الى سورية للقرن السادس الميلادي ابان الفتوحات العربية لسورية وقد وصلت تلك الى ذروتها ايام الخلافة الأموية حيث كان الأمراء الأرمن يقومون بزيارات دائمة الى دمشق عاصمة الأمويين. حيث كانت المدن السورية مراكز تجارية مزدهرة وعالمية اثناء الحكم العربي ومرتبطة مع مدن أرمنيا بطرق تجارية عدة حيث كانت العلاقات التجارية بين الشعبين العربي والأرمني متطورة وقد استمرت حتى بعد سقوط الخلافة العربية وبذلك ازداد عدد الأرمن في سورية.

نتيجة لظروف مختلفة سياسية واقتصادية وثقافية انتقل وهاجر الأرمن الى سورية و استوطنوا في المناطق الشمالية من البلاد وخاصة في لواء اسكندرون وكسب واللاذقية ودمشق وحلب ومناطق اخرى .

وقد زاد توطن الأرمن في سورية عبر الهجرات الأرمنية الكبرى لسورية عقب الاضطهادات العثمانية للأرمن في تركيا خلال سنوات ١٨٧٦ و ١٨٩٥ و ١٩٠٩ ميلادية . وكان العدد الأكبر اثر المذابح الكبرى وسياسة البطش والابادة والتهجير القسري التي مارستها الدولة العثمانية في عام ١٩١٥ وعام ١٩٢٢ بحق الشعب الارمني المسالم.

وقد بلغ عددهم في سورية ولبنان في تلك الفترة ١٢٥ الف ارمني تقريبا منهم ٧٥ الفا تمركزوا في مدينة حلب وضواحيها استنادا لمصادر أرمنية . اعتبر اللاجئين الأرمن في بادئ الامر سورية مأوى مؤقتا ويفكرون بالانتقال الى اماكن اخرى اكثر ملاءمة نتيجة لعدد من العوامل دينية ولغوية وثقافية الخ. ولما وجدوا في سورية الأمن والعطف والرعاية بما شعروا بالاستقرار والطمأنينة والسلام انطلقوا الى العمل طلبا للرزق والعيش الكريم طالما تآبى عليهم نفوسهم ان يكونوا عالة على الاخرين وبالتالي اندمجوا في المجتمع الذي حلوا فيه مواطنين رافضين العيش بمعزل عنه وبذلك اصبحوا خيطا في نسيجه الاجتماعي وجزءا لا يتجزأ من نسيجه الوطني.

قام الأرمن بأدخال مهن وحرف وفنون مختلفة الى سورية لم تكن موجودة قبلا بالرغم من وجود عدد من المهن اليدوية وبعض الحرف والمهن البسيطة . كما شاركوا ايضا في تنشيط حركة الطباعة والصحافة في حلب وذلك بتأسيس مطابع وبعض الصحف.

وفي الحياة البرلمانية بذلوا قصارى جهدهم لبناء الجسر بين الشعب والهيئات الحكومية. اما على

الصعيد العسكري فكانت مشاركتهم من خلال عدة شخصيات عسكرية نذكر منها آرام قره مانوكيان وهرانت مالويان وجوزيف بايراميان والخ ...

وفي نفس السياق شارك الارمن بالدفاع عن سورية خلال فترة الاستقلال . فقد جلى وفاء الأرمن لسورية من خلال انضمامهم للجيش السوري ومشاركتهم في مسيرة الاستقلال والسلام.

هكذا فقد ساهم الارمن في دعم العرب السوريين في كافة الميادين لبناء الدولة السورية وخاصة في تطوير الحياة الثقافية في البلاد (من مدارس وجمعيات ثقافية واهلية ورياضية ) بالرغم من هجرة بعض الأرمن الى وطن الاجداد ارمنيا.

كانت سنوات الخمسينيات ومنتصف الستينيات زمن التغييرات في الانظمة القومية في سورية حيث كانت تتميز سورية بنهضة سياسية وافكار ايدولوجية متناقضة ولا سيما فترة الوحدة مع مصر في عام ١٩٥٨ الى عام ١٩٦١ وقد اثر ذلك الوضع سلبا على المجالات السياسية والاقتصادية والاجتماعية في المجتمع السوري ونتيجة لذلك بدأت واشتدت الهجرة من سورية الى فرنسا والولايات المتحدة الامريكية وكندا وامريكا اللاتينية واستراليا وبعضها الى لبنان والكويت وليبيا ودول اخرى في العالم العربي.

ومن خلال دراسة أحداث هذه الفترة توصلنا الى استنتاج مفاده ان ظاهرة الهجرة ليست خاصة بالاوساط الارمنية فحسب بل السكان المحليين ايضا بدأوا بالهجرة الى لبنان والى امريكا اللاتينية.

د. اني فشنكجيان





## ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ

Ծնած է Հալեպ (Սուրիա): Նախնական կրթությունը ստացած է Հալեպի ՆԲՇՄ-ի Լազար Նաճարեան-Գալուստ Կիլպենկեան Երկրորդական վարժարանէն: Միջնակարգ եւ Երկրորդականը՝ Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանէն:

1981-1991 թթ. ուսուցչական պաշտօն վարած է Հալեպի Ազգ. Մեսրոպեան վարժարանէն /Նախակրթարան/ եւ 1994-2014 թթ.՝ Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանէն ներս, որպէս հայերէնաւանդ ուսուցչուհի /միջնակարգ-երկրորդական/:

1991-1994 թթ. մեկնած է Լիբանան եւ հետեւած Պէյրութի Համազգային Հայագիտական Բարձրագոյն հիմնարկի եռամեայ դասընթացքներուն (պատմագիտական բաժանմունք):

1997-1998 թթ. ուսումը կատարելագործած է Երեւանի Պետական Համալսարանէն ներս եւ 1998-ին արժանացած Դիպլոմին (աւարտաճառի նիւթ՝ «Սուրիահայ մամուլը 1920-էն-1980-ական թուականներուն» անտիպ):

1996-2003, 2004-2014 թթ. հայոց պատմութեան դասատու Համազգային Հալեպի Հայագիտական ուսումնարանի:

2004 թ. արժանացած է պատմական գիտություններու թեկնածուի կոչումին /ատենախօսութեան թեման՝ Սուրիոյ հայ համայնքը 1946-1971 թթ./:

Ներկայիս կ'ապրի Երեւան: Կը պաշտօնավարէ Մայր Աթոռ Ս. Էջմիածինի Գեորգեան Հոգեւոր Ճեմարանի եւ Սեւանի Վազգէնեան Հոգեւոր դպրանոցի մէջ: Նաեւ որպէս գիտաշխատող՝ ՀՀ ԳԱԱ ՊԻ Սփիւռքի եւ գաղթօճաներու բաժնի:

## ԳՈՐԾԵՐ

\*Յուշամատեան սուրիահայ օգնութեան խաչի 1919-2009, Հալեպ, 2010, 440 էջ:

\*Գրական արեւմտահայերէնի պատմութեան ուսումնասիրութիւն /համահեղինակ/ Երեւան, 2016:

\* Արեւմտահայերէնի արդի վիճակը հայկական գաղթօճախներում (Արեւմտեան Եւրոպա), /համահեղինակ/, Երեւան, 2017:

\*Յօդուածներ ստորագրած է՝ «Կանթեղ» գիտական հոդուածների ժողովածու, Երեւան, 2003, թիւ 1; 2003, թիւ 3: Հալեպի հայ Ծերանոց պարբերականի 2003 թ. բացառիկ: «Շաւիղ» Ա. Բ. Ե. Ճեմարանի պարբերաթերթ, Գ. տարի, Հալեպ, 2002; Դ. տարի, 2004; Ե. տարի, 2005: «Երթ» սուրիահայ տարեգիրք, Բ. հատոր, Հալեպ, 2006: «Տաթեւ» հայագիտական տարեգիրք, Ա. հատոր, Հալեպ, 2008, «Բանբեր Հայաստանի արխիւների», N 2 (102), Երեւան, 2003; N 2 (106), 2005: «Պատմաբանասիրական Հանդես» 2017 թ., «Հանդէս Ամսօրեայ», 2018:

-«Գանձասար» շաբաթաթերթի եւ բացառիկներուն /2017-ին Նաեւ/.

- Երեւանի "Մոմիկ" Մշակութային միութեան «Հայ Արվեստ»-ին:

2017 թ. ՀՀ ԳԱԱ ՊԻ գիտխորհուրդի որոշումով երաշխաւորուած եւ տպագրութեան յանձնուած է «Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը 1946-1970 թթ.» մենագրութիւնը:

## ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Նկարները տրամադրելու համար շնորհակալութիւն կը յայտնենք՝ պատմական գիտություններու դոկտոր Յակոբ Չոլաքեանին՝ պատմաբանասէր Միհրան Մինասեանին՝ տիկին Լուիզա Խապայեան-Ճեպեճեանին՝ տէր եւ տիկին Պերճ եւ Զարմիկ Պողիկեաններուն բժ. Ռոպերթ Սիլահեանին:







THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF HISTORY

ANI AVETIS FISHENKJIAN

THE HISTORY OF  
ARMENIAN COMMUNITY IN SYRIA  
(1946-1970) YEARS

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКА АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСТОРИИ

АНИ АВИТИСОВНА ФИШЕНКЧЬЯН

ИСТОРИЯ АРМЯНСКОЙ  
ОБЩИНЫ В СИРИИ  
(1946-1970 гг.)

Ձեռագրում եւ էջադրում՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՏՕԼՄԱՃԵԱՆԻ  
Շապիկի ձեռագրում՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՏՕԼՄԱՃԵԱՆԻ  
Համակարգչային շարուածք՝ ԱՆԻ ՖԻՇԵՆԿՉԵԱՆԻ  
Չափ՝ 24 x 17 սմ. - Տպագրական մամուլ՝ 43 - 344 էջ  
Տպաքանակ՝ 200 օրինակ

ISBN 978-9939-0-2676-3



9 789939 026763



ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Մայր-Նովա 24, (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ info@asoghik.am